4967
22
G 93

ԵՐԿՐՈՐԴ
ՄԱՍՆ
ՆՈՐ
ԿՏԱԿԱԲՐՈՒԹԻՒՆ

ՏԵՂՒՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ
ՔՐԻՍՏՈՍԻ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ Ի 1961 Թ.

Ի լեռնոտանի Ալաւերդւոյ վանքին մէջ՝
ի յոլովելն, ի Յովհաննու
Յոյսաթոռլինեցւոյ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ի ՋՄՈՒԻՒՈՒՆԻՍ
Ի Տպարանի կոլեկտոյս կաթողիկէից:
1842

БИБЛІОТЕКА
Арм. Вагаршап. О-ва въ Ростовѣ

ՑԱՆԿ

	Եր֊
Ընտարան ըստ Մատթէոսի . .	1
Ընտարան ըստ Մարկոսի . .	80
Ընտարան ըստ Ղուկասու . .	130
Ընտարան ըստ Յովհաննու . .	215
Առաքելոց Գործքերը . . .	277
Պօղոս Առաքեալին Թուղթը առ Հռով֊ մայեցիս	357
,, Ա. Կորնթացիս Առաջին .	392
,, Ա. Կորնթացիս Երկրորդ .	426
,, Ա. Գաղատացիս . : .	450
,, Ա. Եփեսացիս . . .	462
,, Ա. փիլիպեցիս . . .	474
,, Ա. Կողոսացիս	483
,, Ա. Թեսաղոնիկեցիս Առաջին .	492
,, Ա. Թեսաղոնիկեցիս Երկրորդ .	500
,, Ա. Տիմոթէոս Առաջին . .	505
,, Ա. Տիմոթէոս Երկրորդ . .	515
,, Ա. Տիտոս	523
,, Ա. փիլիմոն	528
,, Ա. Եբրայեցիս . . .	531
Ընդհանրական Թուղթ Յակոբոս .	557
Առաջին Ընդհանրական Թուղթ Պետրոսի	567
Երկրորդ Ընդհանրական Թուղթ Պետրոսի	577
Առաջին Ընդհանրական Թուղթ Յովհաննու	584
Երկրորդ Ընդհանրական Թուղթ Յովհան֊ նու	594
Երրորդ Ընդհանրական Թուղթ Յովհան֊ նու	596
Ընդհանրական Թուղթ Յուդայի .	598
Յայտնութիւն Յովհաննու . . .	601



ԳՈՐԾՔԵԼՈՅ

ԳԼՈՒԽ Ա։

1 Զառաջին պատմութիւնը որ ըրի՛ ով Թէոփիլէ, ան
Յամէն բաներուն վրայ՝ որ Յիսուս սկըսաց ընել
2 և սորվեցուցանել, մինչև Հոգւոյն Սրբոյ ձեռքովը
առաքեալներուն պատուէր տալու օրը՝ որոնք որ
3 ընտրեր էր, ու Հաստատեաւ։ Որ անոնց ինքզինքը ցուցուց կենդանի իր չարչարանքներէն ետև՝ շատ հրաշքներով, քառասուն օր անոնց երևնալով, ու Աստուծոյ թագաւորութեանը վրայ խօսելով։ 4 Եւ անոնց հետ ժկտեղ հաց կերած ատենը՝ կապրպարդըէր իրենց որ Երուսաղէմէն չելլեն՝ հապա սպասեն Հօրը խոստումնըին՝ որ 5 ան ինծմէ լսեցիք ըսեր։ Ինչու որ Յովհաննէս ջուրով մկրտեց, բայց դուք ասկէց շատ օրեր 6 չանցած Հոգին Սուրբով պիտի մկրտվիք։ Ուստոնք ալ եկան կըհարցունէին իրեն՝ ու կըսէին, Տէր՝ Իսրայէլի թագաւորութիւնը հիմայ աս ժամանակս պիտի հաստատես։ 7 Բայց անոնց, Ձեզ ժամերը և ժամանակները գիտնալը ձեր բանը չէ, որ անոնք Հայրը իր իշխանութեան մէջը 8 դրաւ. միայն թէ Հոգին Սուրբին ձեր վրայ եկած ատենը զօրութիւն պիտի առնէք, ու ինծի համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմին մէջը՝

և բոլոր Հրէաստանի՝ ու Յամարիայի մէջը՝ և մին-
չև երկրիս ծայրերը : Եւ աս բաները որ ըսաւ՝ 9
երբոր անոնք կը նայէին , Համբարձաւ , ու մէկ
ամպ մը անկաւ անոնց աչքերն առնեց : Եւ երբոր 10
դեռ աչքերնին անկած դէպի երկինքը կը նայէին
անոր երթալուն վրայ՝ ահաւասիկ երկու մարդ երե-
ցան իրենց ձերմակ հագուստով , որոնք նաև ը- 11
սին . Ով Գալիլեացի մարդիկ՝ ինչո՞ւ կայներ դէ-
պի երկինքը կը նայիք . աս Յիսուսը՝ որ ձեզմէն
երկինքը Համբարձաւ , ասանկ պիտի գայ ինչպես
որ անիկա տեսաք երկինքը երթալ : Ետնատներ 12
Ձիթենեաց լսած լեռնէն Երուսաղէմ՝ դարձան ,
որ շաբաթի օրվան ճամբու չափ մօտ է Երուսա-
ղէմի : Եւ երբոր հասան , եղան վերնատու- 13
նը , ուր որ կ՚ելնէին բնակարանն էր , Պետրոսը և
Յակոբոսը՝ Յովհաննէս և Անդրէասը , Փիլիպպոս
և Թովմասը , Բարթողիմէոս և Մատթէոսը ,
Յակոբոս Ալփէոսեանը ու Շմաւոն Նախանձա-
յողը՝ և Յուդա Յակոբեանը : Ասոնք ամէնը 14
միաբանութեամբ միշտ աղօթք կընէին կիներուն
հետը , ու Յիսուսի մայրը Մարիամին՝ և անոր
եղբայրներուն հետ մէկտեղ :
Եւ ան օրերը Պետրոս եղբայրներուն մէջը ե- 15
լաւ՝ ու ըսաւ . (և հոն հարիւր քսան անունի չափ
բազմութիւն կար .) Արդիկ եղբայրներ՝ պէտք 16
է որ գրվածքը կատարվէր , որ առաջուց Հոգին
Սուրբ Դաւիթին բերնովը ըսաւ Յուդային հա-
մար՝ որ ան Յիսուսը բռնողներուն առաջնորդ ե-
ղաւ . ինչու որ անիկա մեզի հետ էր մեր Տամյան- 17
քին մէջը , և աս պաշտամունքին ան ալ բաժին
ունէր : Ասկից անիրաւ վարձքով գեղ մը ունե- 18
ցաւ նէեն , և ուռնցած մէջքն ձղքվելցաւ , ու
բոլոր իր փորը դուրս թափվեցաւ : Ու Երուսա- 19
ղէմ բնակողներուն ամէնուն յայտնի եղաւ . մին-
չև որ իրենց լեզուովը ան գեղին անունը Ակեղ-
դամա կանչեցին , որ ըսել է Արիւնի գեղ : Ին- 20

չու որ գրված է Սաղմոսներուն գիրքին մէջը. Ընոր բնակարանը աւերակ թող ըլլայ, ու մարդ չըլլայ որ անոր մէջը բնակի, և անոր պաշտօնը
21 ուրիշը թող առնէ: Ուրեմն պէտք է որ՝ ասոնց մարդիկներէն որ մեր հետը եղան ան բոլոր ատենը,
22 որ Տէր Յիսուս մէջերնիս մտաւ ու ելաւ. Յովհաննէսին մկրտութենէն սկսած՝ մինչև ան օրը որ մեզմէ համբարձաւ. ասոնցմէ մէկը մեզի հետ
23 վկայ ըլլայ անոր յարութեանը: Եւ երկու հոգի ընտրեցին, Յովսէփը՝ որուն Բարսաբա կըկանչէին, որ Յուստոս ալ կըսվէր. ու Մատաթիան:
24 Եւ աղօթք ընելով ըսին. Դուն ո՛վ Տէր՝ որ ամէնուն սիրտը գիտես, ասոնց երկուքէն մէկը՝ որն որ
25 ընտրեցիր նէ, մեզի յայտնէ. որ աս պաշտօնիս և առաքելութեան վիճակը առնէ, որ անկէց Յուդան ինկաւ գնա՛ իր տեղը երթալու:
26 Եւ անոնց վիճակները տըվին, ու վիճակը Մատաթիային ելաւ. և ան տասներկու առաքելոց հետը սեպվեցաւ:

ԴԱՆ. Ը:

1 Եւ Պենտէկոստէին օրերը լըրննալու ատենը՝
2 ամէնն ալ միաբան մէյտեղ էին: Ու յանկարծակի երկինքէն ձայն մը եղաւ՝ սաստիկ հովի մը պէս եկած, որ բոլոր տունը լեցուց ուր որ
3 նստեր էին: Եւ բաժնըված լեզուներ երևցան իրենց որպէս թէ կրակէ, ու ամէն մէկուն վրայ
4 նստաւ: Եւ ամէնքն ալ Հոգւով Սրբով լեցվեցան, ու սկըսեցին ուրիշ լեզուներով խօսիլ. ինչպէս որ Հոգին իրենց խօսել կուտար: Ու Երուսաղէմի մէջն ալ Հրէաներ կըբնակէին՝ աստուածավախ մարդիկներ երկինքին տակը եղած բոլոր
6 ազգերէն: Եւ երբոր աս ձայնը եղաւ՝ բազմութիւնը մէյտեղ եկան ու դիզվեցան. ինչու որ կըլսէին որ անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը-
7 խօսէին: Ամէնքն ալ կըսքանչանային ու կըզար-

մանային և մեկըմիւսու կըսէին . Ձի որ աշա ա-
սոնք ամէնն ալ որ կրնօսրն Գալիլեացի են . և 8
ի՞նչպէս կը լսենք զոր մենք ամէն մէկս մեր լեզուովը՝
որ անոր մէջը ծնած ենք : Պարթեւներ ու Մարքեր 9
և Ելամացիներ , և անոնք որ Միջագետքը կըբո-
նակին՝ Հրէաստանի մէջ՝ և Կապադովկիոյ մէջ՝ Պոն-
տոսի մէջ՝ և Ասիայի մէջ՝ Փռիւգիայի մէջ՝ և 10
Պամփիլիայի մէջ՝ Եգիպտոսի մէջ՝ և Լիբիացի-
ներուն կողմերը , անոնք որ Կիւրենացիներուն
հետ՝ և անոնք որ օտարական Հռոմայեցիներ :
Հրէաներ ու անոնց գարձածները , Կրետացիներ 11
և Արաբացիներ՝ կըլսենք անոնց որ մեր լեզուներ-
ովը կրնօսրն Աստուծոյ մեծամեծ բաները : Կըս- 12
քանչանային ամէնն ալ զարմանալով՝ և իրարու
կըսէին , Ի՞նչ պիտի ըլլայ աս : Իւ կէսերնին 13
ծաղր ընելով կըսէին , Թէ Անոնք նոր գինիով
լեցուեր են :

Եւթ Պետրոս տասնմէկներուն հետ կեցաւ , 14
ձայնը վերցուց՝ ու խօսեցաւ անոնց . Իւդ Հրէ-
աստանցի մարդիկներ՝ և դուք ամէնդ որ Երու-
սաղէմ կըբնակիք , աս ձեզի յայտնի ըլլայ , ու
ականջ դրէք իմ խօսքերուս : Ձի Թէ ինչպէս որ 15
դուք կրկարծէք , ասոնք Հարբած են . ինչու որ
դեռ իրեքն է ժամը աս օրուան : Հապա աս ա- 16
բանն է , որ Յովել մարգարէին ձեռքովը ըս-
վեցաւ : Եւ պիտի ըլլայ որ ասկէ ետև վերջին օ- 17
րերը՝ կըսէ Աստուած , իմ Հոգիէս բոլոր մարմ-
իններուն վրայ պիտի լեցունեմ , ու ձեր տղաքը
և ձեր աղջիկները պիտի մարգարէանան , ու ձեր
երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնան , և
ձեր ծերերը երազներ պիտի տեսնան : Եւ իմ 18
ծառաներուս վրայ ու իմ աղախիններուս վրայ
ան օրերը իմ Հոգիէս պիտի լեցունեմ՝ և պիտի
մարգարէանան : Ու վերը երկինքը նշաններ պիտի 19
ցուցընեմ , ու վարը երկիրը նշաններ՝ արիւն և
կրակ և մուխի փոթորիկ : Արեւը խաւար պիտի 20

դառնայ , և լուսինը՝ արիւն , Տէրոյը մեծ ու և-
21 ւելի օրը գալ չեկած ։ Եւ պիտի ըլլայ որ՝ ամէն
ով որ Յաստուծոյ անունը կանչէ նէ , պիտի փրկը-
22 վի ։ Ով Իսրայէլացի մարդիկ՝ լսեցէք ասոնց խօսքե-
րը ։ Յիսուս Նազովրեցին՝ Յաստուծմէ ձեզի ցուց-
ւած մարդ մը զօրութիւնով ու նշաններով և
հրաշքներով , որ Յաստուած անոր ձեռքովը ըրաւ
23 ձեր մէջը . ինչպէս որ դուք ալ գիտէք ։ Անիկա՝
Յաստուծոյ խորհուրդովը և առաջուց գիտնալովը
տաճնուած ըլլալով , անօրէններուն ձեռքովը
24 մահնրւած՝ փայտի վրայ գամելով սպաննեցիք . որ
անիկա Յաստուած յարուց՝ մահուան ցաւերը քա-
կելով . ոլովհետև հնար չէր որ ինքը անկէց
25 բռնուէր ։ Վասին ալ անոր համար կըսէ , Ե-
ռայուց առէն առեն Տէրը կրտեսնայի իմ առ-
26 ջևէս , որ իմ աջ կողմն է , որ ես չի սասանիմ . ա-
նոր համար ուրախ եղաւ իմ սիրտս և իմ լեզուս
ցնծացաւ ըրաւ , ու իմ մարմինս ալ յոյսով հան-
27 գիստ պիտի մնայ ։ Ինչու որ իմ անձս գժոխքին
մէջը չի պիտի թողուս . և քու Սուրբիդ ապական
28 նուիրիւն տեսնալ չի պիտի տաս ։ Կեանքին ճամ-
բաները ինծի ճանչցուցիր . քու երեսիդ ուրա-
խութիւնովը անուշութիւնով զիս լեցուցիր ։
29 Սարդիկ եղբայրներ՝ պէտք է որ համարձակ
զուրցեմ ձեզի Վասիւն նահապետին համար , որ
մեռաւ ու թաղուեցաւ , և անոր գերեզմանը մինչև
30 աս օրս մեր մէջն է ։ Ինչու որ մարգարէ էր և գի-
տէր՝ թէ Յաստուած երդումով երդում ըրաւ ի-
րեն , որ իր փորին պտուղէն իր աթոռը նստե-
31 ցունէ . ինքը առաջուցմէ գիտնալով խօսեցաւ
Քրիստոսի յարութիւնին համար , թէ անոր հո-
գին գժոխքը չի մնաց , և անոր մարմինը ապական-
32 նութիւն չի տեսաւ ։ Այս Յիսուսը Յաստուած յա-
33 րուց , որ անոր մեկը ամենքս ալ վկայ ենք ։ Յա-
ստուծոյ աջ ձեռքովը բարձրբնալով , Հոգւոյն
Սրբոյ խոստումնիքը հօրմէն առնելով՝ տարածեց

ասիկա , որ գուբ կրսեհնաք և կըլսեքկոր : Ինչ- 34
չու որ Պաւիթի երկինքը չելաւ , Բայց բուն ինքը
կըսէ . Տէրը իմ Տէրոջս ըսաւ , իմ աջ կողմիս
նստէ . մինչև որ քու թշնամիներդ քու ոտքիդ կո- 35
խելիք գնեմ : Ուստի՝ բոլոր Իսրայէլի տունը 36
ճշմարիտ թող գիտնայ , որ Յիսուսը որ դուք
խաչեցիք :

Ու ասոր լսեցին՝ իրենց սիրտերնուն մէջը զար- 37
նըվեցան , և ըսին Պետրոսին ու մնացեալ առա-
քեալներուն , Արդիկ եղբայրներ՝ ի՞նչ ընենք :
Ըսաւ անոնց Պետրոս . Ապաշխարեցէք՝ ու ձեզմէ 38
ամէն մէկերնիդ Յիսուս
Քրիստոսի անունովը՝ մեղաց թողութեան հա-
մար , և Հոգւոյն Սրբոյ աւետիսը պիտի ընդու-
նիք : Ինչու որ ասոր խոստմունքը ձեզի է՝ ու ձեր 39
որդոցը , և ամէն հեռու եղողներուն՝ որոնք որ
մեր Տէր Յիսուածը պիտի կանչէ : Եւ ուրիշ շատ 40
խօսքերով վկայութիւն կըբերէր , ու կըսորդորէր
անոնք՝ և կըսէր . Ձեզ ծռած ազգէն ինքզինքիդ
խալըսեցէք : Ուստի որ սրտանց ընդունեցով անոր 41
խօսքերը՝ մկրտուեցան . և այն օրը իրենք հաշար
հոգիի չափ եվեցան : Եւ միշտ առաքելոց վարդա- 42
պետութեանը նուիէ էին , և ընկերութեանը , ու
հաց կոտրելուն , և աղօթքին :

Եւ ամէն մարդու վրայ ահ ու դող եկաւ . շատ 43
նշաններ և հրաշքներ առաքելոց ձեռքովը կըգոր-
ծըվէին : Հաւատացեալներըը մէկտեղ էին , 44
և ամէն բաներնին հասարակի կը : Ու ստաց- 45
ուածքնին և ունեցած բաներնին կըծախէին՝ ու
կըբաժնէին անիկա ամէնուն , որուն որ ինչ բան
պէտք ըլլար : Ամէն օր կանո-ւս տաճարը կեր- 46
թային մէկտեղ , և տունը հացը կըկոտրէին , ու
կերակուրնին կուտէին ուրախութիւնով և մաք-
րիտ սրտով : Աստուած կօրհնէին , և բոլոր ժո- 47
ղովուրդին առջևն ալ շահելի էին . ու Տէրը օրէ
օր եկեղեցիներ ան փրկըվածներուն վրայ :

ԴԱՆ · Գ ։

1 Պետրոս ու Յովհաննէս իններորդ ժամուն աղօթ-
2 քի տանը տաճարը կ'երթային ։ Եւ իր մօրը
փորէն կաղ ծնած մարդ մը կար , որ անիկա ամէն
օր կը վերցուն էին տաճարին դռանը քով կը դնէ-
ին՝ որ Գեղեցիկ դուռ կ'ըսուի , տաճարը մտնող-
3 ներէն ողորմութիւն ուզելու համար ։ Անիկա
տեսնելով Պետրոսը և Յովհաննէսը՝ որ տաճարը
կը մտնային , կաղաչէր ողորմութիւն առնելու ։
4 Պետրոս Յովհաննէսին հետ ուշադիր անոր նայե-
5 ցաւ՝ և ըսաւ , Մեզի նայէ . Ան ալ դէպի անոնց
դարձաւ , ու կրնաւար անոնցմէ բան մը առնելու ։
6 Պետրոս ատ ոսաւ . Ոսկի և արծաթ չունիմ , հա-
պա ինչ որ ունիմ նէ՝ ան քեզի տամ . Յիսուս
Քրիստոսի Նազովրեցիին անունովը ելիր ու քա-
7 լէ ։ Եւ անոր աջ ձեռքէն բռնեց՝ ինքը վերցուց ,
8 և ջուտ մը անոր ծունկերը ու ոտքերը ամրացան ։
Ան ցատկեց՝ ու սկսաւ քալել , և անոնց հետ
տաճարը մտաւ . կը քալէր ու կը ցատքռտէր , և
9 Աստուած կօրհնէր ։ Ու բոլոր ժողովուրդը տես-
սաւ անիկա , որ կը քալէր և Աստուած կօրհնէր .
10 և կը ճանչնային անիկա թէ աս էր , որ ողորմու-
թեան համար տաճարին Գեղեցիկ դռանը
քով կ'նստեր . ու զարմանքով լեցան ան եղած
հրաշքին վրայ ։

11 Եւ անիկա որ դեռ Պետրոսը և Յովհաննէսը
բռներ էր , բոլոր ժողովուրդը զարմացած վազե-
ցին անոնց քովը ան սրահին մէջը , որ Սողոմոնինը
12 կ'ըսվէր ։ Պետրոս երբոր տեսաւ՝ պատասխան տը-
ւաւ ժողովուրդին , Ով Իսրայէլացի մարդիկ՝
ինչո՞ւ զարմացեր էք ասոր վրայ , կամ մեր վրայ
ինչո՞ւ ապշեր կ'նայիք , որպէս թէ մենք մեր ան-
ձին զօրութիւնովը կամ կարողութիւնովը ատոր
13 քալել տրվինք ։ Աբրահամին Աստուածը ու Սա-

Հակին Աստուածը և Յակոբին Աստուածը՝ մեր
Հարերուս Աստուածը իր Որդին Յիսուսը փա-
ռաւորեց , որ անոր դուք մատնեցիք , և ուրա-
ցաք Պիղատոսին առկէ՝ երբոր ինքը վճռեց որ
Թող տայ : Ձայց դուք ան Սուրբը և Արդարը 14
ուրացաք . ու մնաղապատ մարդ մը ուղեցիք որ
ձեզի շնորհէ : Եւ կեանց Առաջնորդը սպաննե- 15
ցիք . որ անկիա Աստուած մեռելներէն յարուց ,
որուն բուն մենք վկայ ենք : Եւ անոր անունին 16
Հաւատքովը , անոր անունը Հաստատեց ասկիա՝
որ դուք կըտեսնաք ու գիտէք . և ան Հաւատքը
որ անով է աս առողջութիւնը անոր տուաւ ձեր
ամենուն առկէ : Եւ հիմայ եղբայրնե՛ր գիտեմ 17
որ չի գիտնալով ըրիք , ինծոր որ ձեր իշխաններն
ալ : Ձայց Աստուած՝ ինչպէս որ առաջուց բոլոր 18
մարգարէներուն ձեռքովը զըրցեց իրեն Քրիս-
տոսին չարչարվելը , անանկ ալ կատարեց : Ուս- 19
ա՛ի զղջացէք ու դարձի եկէք , որ մեղքերնիդ ջնջը-
վի . որ Հանգստանալու առեններըն դան Տէրոջը և- 20
րեսէն , և առաքմանէ ձեզի Համար առՀանված
Յիսուս Քրիստոսը Թրկէ : Որ անկիա պէտք է որ 21
երկինքը ընդունի մինչև ան ատեները՝ որ ամէն
բան Հաստատվի . որոնց Համար Աստուած իր սուրբ
մարգարէներուն բերնովը խոսեցաւ : Մովսէս մեր 22
Տօրենուս ըսաւ , թէ Ձեր Տէր Աստուածը ձեզի
մէկ մարգարէ մը պիտի Հանէ ձեր եղբայրներէն՝
ինծի պէս , անոր մսկի ըրէք ամէն կերպիւ ինչ որ
ձեզի խոսի նէ : Եւ պիտի ըլլայ՝ որ ամէն հոգի որ 23
ան մարգարէին մսկի չընէ , ժողովուրդին մէջէն
պիտի կորսըվի : Ու բոլոր մարգարէները՝ որ Սա- 24
մուէլէն մինչև հիմայ Եկան , խոսեցան և պատմեցին
աս օրերուս Համար : Դուք էք ան մարգարէներուն 25
որդիքը՝ և ան ուխտին որ Աստուած մեր Տօրեր-
նուս Հետ ուխտ դրաւ , և ըսաւ Աբրահամին .
Քեզ զաւակովդ պիտի օրՀնվին երկրի բոլոր
ազգերը : Աստուած իր Որդին առաջ ձեզի յա- 26

բուց , ու խրկեց անիկա ձեզ օրհնելու , որ դուք ամէնքդ ձեր չարութիւններէն դառնաք ։

ԳԼ · Դ։

1 Ձեր երբոր անոնք ժողովուրդին հետը կը խօսէ-
ին , քահանայապետները ու տաճարին իշխան-
ները՝ և Սադուկեցիները անոնց վրայ հասան ,
2 սաստիկ բարկացած՝ որ անոնք ժողովուրդը կը սոր-
վեցունէին , և Յիսուսի ձեռքովը մեռելներուն
3 յարութիւնը կը քարոզէին ։ Ձեռքերնին զարկին
անոնց , ու բանտը դրին անոնք մինչև հետևի օրը ,
4 ինչու որ իրիկուն էր ։ Բայց ան խօսքը լսողներէն
շատերը հաւատացին , ու մարդոց համրանքը հինգ
հազարի չափ եղաւ ։
5 Եւ եղաւ որ հետևի օրը անոնք ժողովե-
ցին իշխանները ու երէցները և կարապետները
6 Երուսաղէմի մէջ · ու Աննա քահանայապետը՝ և
Կայափան՝ ու Յովհաննէսը՝ և Աղէքսանդրոսը , և
7 ան ամէնքը որ քահանայի ցեղէն էին ։ Եւ անոնք
մէջերնին կայնեցուցած՝ կը հարցունէին , Ի՞նչ
զօրութիւնով կամ ի՞նչ անունով դուք դուք աս
8 բանը ։ Ինատանը Պետրոս Հոգւով Սրբով լեց-
ուած՝ ըսաւ անոնց · Ա՛վ ժողովուրդին իշխանները
9 և Իսրայէլի ծերերը · Թէ որ արժան է մեզ դա-
տել այսօր տկար մարդու մը բարիք ընելու հա-
10 մար , որ անով ասիկա բժշկուեցաւ · Յայտնի ըլ-
լայ ձեզի ամէնուդ , ու բոլոր Իսրայէլի ժողովուր-
դին , որ Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անու-
նովը՝ որ անիկա դուք խաչեցիք , որ Աստուած ա-
նիկա մեռելներէն յարուց , ահա անով ասիկա
11 ձեր առջևը ըմբնցած կեցեր է ։ Անիկ է ան
քարը ձեզմէ շինողներէդ անարգուած , որ ան-
12 կիւնի գլուխ եղաւ · և ուրիշ մէկով մը փրկու-
թիւն չի կայ · ինչու որ՝ անկէ ի զատ ուրիշ ա-
նուն մը չի կայ երկինքի տակը մարդուս տրուած ,
13 որ անով կարող ըլլանք փրկուիլ ։ Պետրոսին ու

Յօհաննէսին համարձակութիւնը նայելով , և ի-
մանալով որ տգէտ ու առանց ուսման մարդիկ են ,
կը զարմանային , որ կրճանչային անոնք՝ թէ Յի-
սուսի հետ էին . և ան բժշկված մարդն ալ կը 14
տեսնային որ անոնց հետ կայներ էր , ու բան մը
չէին կրնար ըսել : Եւ երբոր հրաման ըրին ա- 15
նոնց առանձին դուրս ելլել , իրարու հետ խոր-
հուրդ ըրին , և ըսին . Ի՞նչ ընենք աս մարդոցը 16
ինչու որ յայտնց ձեռքովը մեծ հրաշք մը եղաւ ,
ՈՒ Երուսաղէմի մէջ բնակողներուն բոլորին
յայտնի է , և մենք չենք կրնար ուրանալ : Ա՛ՀայՏ 17
թէ ժողովուրդին մէջ էվելօք չի տարածվելուն
համար՝ վախ տանք անոնց , որ ան անուններով
մէ յայտ չըլլայ որ մարդու բան խօսին : Ու կան- 18
չեցին անոնք՝ պատուէր տըվին որ ամենևին չի խօ-
սին և չի սորվեցունեն Յիսուսի անունովը : Պայց 19
Պետրոս ու Յօհաննէս պատասխան տըվին՝ և ը-
սին անոնց , Լաւ որ Աստուծոյ առջևը ուղիղ է որ
Աստուածմէ էվելի ձեզի մտիկ ընենք , դուք դա-
տաստանը ըրէք : Պայց մենք ան որ տեսանք ու 20
լսեցինք՝ չենք կրնար չի խօսիլ : Անոնք վախ տա- 21
լով թող տըվին զերծնեք , ու բան մը չի գտան որ
ինչպէս անոնք պատժեն ժողովուրդին համար .
ինչու որ ամէնն ալ Աստուած կըփառաւորէին և-
ղած բանին համար : Վ ան ղն ան մարդը քառա- 22
սուն տարվընէ էվելի էր , որուն վրայ աս բժշկու-
թեան հրաշքը եղաւ :

Եւ անկէց որ արձըկվեցան՝ իրենցիներուն քովը 23
եկան , ու պատմեցին բոլոր ինչ որ քահանայա-
պետները և երէցները իրենց ըսին : Անոնք ալ որ 24
լսեցին՝ ձայներնին Աստուծոյ վերցուցին՝ և ըսին .
Պուն ոմՀ Աստուած՝ որ երկինքը ու երկիրը և
ծովը ու բոլոր մէջն եղածները ըսիր . և քու ծա- 25
ոայիդ մեր Տօրը Պաւիթին բերնովը՝ Սուրբ
Հոգիին ձեռքովը խօսեցար , Ինչու հեթանոսները
տակնուվրայ եղան , ու ժողովուրդները փուճ բա-

26 ներ մտմտացին. երկրի թագաւորները դէմ կե-
ցան, և իշխանները մէյտեղ ժողվվեցան Տէրո-
27 ջը համար՝ և իր Օծեալին համար: Իրաւ ըն է
աս քաղաքին մէջը ժողվվեցան քու սուրբ Որդ-
ւոյդ Յիսուսին վրայ՝ որ ան դուն օծեցիր, Հե-
րովդէսը՝ և Պոնտոս Պիղատոսը՝ հեթանոսներով
28 ու Իսրայէլի ժողովուրդներովը, ընել՝ ինչ որ
քու ձեռքդ և կամքդ սահմանեց առաջուց որ ըլլայ:
29 Եւ հիմայ Տէր՝ նայէ անոնց սպառնալից վախերուն, ու
շնորհէ քու ծառաներուդ որ բոլոր համարձակու-
30 թիւնով քու բանըդ խօսինք. քու ձեռքդ երկըն-
ցունելով բժշկելու, ու նշաններ և հրաշքներ
ըլլալու, քու սուրբ Որդւոյդ Յիսուսի անունո-
31 վը: Եւ երբոր անոնք աղօթք կընէին՝ ան տեղը
ուր ժողվված էին, շարժեցաւ, և ամէնքը Հոգ-
ւով Սրբով լեցվեցան, ու Աստուծոյ խօսքը հա-
մարձակ կըխօսէին:
32 Եւ հաւատացեալներուն բազմութիւնը մէկ
սիրտ ու մէկ անձ էին. և անոնցմէ մէկը չէր ըսեր
իր բաներուն համար թէ իրենն է, հապա՝ բոլոր
33 իրենց բաները հասարակի էր: Եւ շատ զօրու-
թիւնով առաքեալները վկայութիւն կուտային
Տէր Յիսուս Քրիստոսի յարութեանը համար,
և անոնց ամէնուն վրայ մեծ մեծ շնորհքներ կայ-
34 ին: Եւ անոնցմէ մէկը կարօտութիւն չունէր.
ինչու որ անոնք՝ որ գեղերու ու տուներու Տէր
էին՝ կըծախէին, և ծախվածներուն գինը կըբերէ-
35 ին, առաքեալներուն ոտքը կըդնէին, և ամէն մար-
դու կըբաժնէին՝ ինչ որ մէկուն պէտք ըլլար:
36 Յովսէփ՝ որ առաքեալներէն Բառնաբաս ըսվե-
ցաւ, (որ կըթարգմանվի՝ Մխիթարութեան որ-
37 դի,) Ղեւտացի էր, ազգով Կիպրոսցի. անիկա մէկ
գեղ մը ունէր, ծախեց ու դինը բերաւ առա-
Ե քեալներուն ոտքը դրաւ: Բայց մէկ մարդ մը Ան-
նիա անունով իր կնկանը Սափիրայէին հետ մէյտեղ
2 ագարակ մը ծախեց. և անոր գինէն խոռեց, որ

կնիկն ալ գիտէր , ու մէկ բաժինը բերաւ առաքեալներուն ոտքը դրաւ : Պետրոս , Ա՛նա- 3
նիա՛ , ինչո՞ւ Սատանան քու սիրտդ լեցուց , որ դուն Հոգւոյն Սրբոյ սուտ խօսիս , ու գնդին գինէն խո- 4
նես . քանի որ ան կեցեր էր նէ՝ քուկդ չէր մի . ու ծախուելեան նէ՝ քու իշխանութիւնդ չէր մի . ին- 5
չո՞ւ քու սրտիդ մէջ ասը դրեր . չէ թէ մարդո՛ւ հապա Աստուծոյ սուտ խօսեցար : Եւ Ա՛նա- 6
նիա ասը խօսքերը որ լսեց՝ ինկաւ , ու հոգին հա- 7
նեց . և մեծ վախ ինկաւ ամէնուն վրայ՝ որ ան լսեցին : Կորիճները ոտքի վրայ եղան , ու պատնե- 8
ցին անիկա , և տարին թաղեցին : Եւ երբոր իրիկ ժամի չափ վրան անցաւ , անոր կնիկն ալ չէր գի- 9
տեր ինչ որ եղեր էր՝ ներս մտաւ : Պատասխան տուաւ անոր Պետրոս՝ և ըսաւ . Ըսէ դուն ինծի , ան գործը այնքան գինո՞վ մի ծախեցիք . ան ալ ը- սաւ . Այո՛ այնքան : Ու Պետրոս ըսաւ անոր , Ա՛ռ ի՞նչ է՝ որ դուք մէյտեղ եկաք Տէրոջը Հո- գին փորձելու . ահա ան ոտքերը որ քուկին երկդ թաղեցին՝ դռանը դռովն են , քեզ ալ դուրս պիտի հանեն : Եւ նոյն կէտին ինկաւ անոր ոտքը , ու հոգին հանեց . կորիճները ներս մտան՝ անիկա մեռած գտան , ու հանեցին իր երկանը քովը թա- ղեցին : Եւ մեծ վախ եկաւ բոլոր եկեղեցիին վրայ և ամէնուն վրայ՝ որ ան լսեցին :

Ու առաքեալներուն ձեռքովը շատ նշաններ և հրաշքներ կը լլային ժողովուրդին մէջ , և ամէնը մէյտեղ Սողոմոնի սրահին մէջն էին : Ու մէկալ- ներէն մէկը չէր համարձակեր անոնց մօտենալ . հապա ժողովուրդը կը մեծարեր անոնք . (և հա- ւատացեալները խիստ շատ կ՚աճէին Տէրոջը՝ շատ երիկ մարդ ու կնիկ մարդ) անանկ որ՝ հի- ւանդները քաց փողոցները կը հանէին և իրենց պատգարակովը ու անկողինովը կը դնէին , որ Պետրոս անցնելու ըլլայ նէ՝ գոնէ անոր շուքը ա- նոնց մէկին վրայ հասնի : Ու քովի քաղաքներէն

բազմութիւնը Երուսաղէմ կըժողվվէր , հիւանդները և պիղծ դևերէն չարչըրկվածները կըբերէին , որոնք ամէնքն ալ կըբժշկվըվէին ։
17 Ոտ ելաւ քահանայապետը՝ և բոլոր իր հետը եղողները , ու Սադուկեցոց աղանդաւորները՝ նա-
18խանձով լեցված . Ու առաքեալներուն ձեռք զարկին , և յայտնի բանտը դրին անոնք ։ Եայց
19Տէրոջը հրեշտակը գիշերով բանտին դուռները բացաւ , ու դուրս հանելով անոնք՝ ըսաւ ։ Գա-
20ցէք տաճարը կեցէք՝ ու ժողովուրդին խօսեցէք
21ամս կենաց բոլոր խօսքերը ։ Եւ երբոր ասոնք լսեցին՝ տաճարը մտան առտուընց , ու կըսորվեցուցին . քահանայապետը եկաւ ու իր հետը եղողները՝ ժողովքը մէկտեղ կանչեցին , ու Իսրայէլի որդւոց բոլոր ծերակոյտը . և Յոպէ խրկեցին բան-
22տը՝ որ անոնք բերեն ։ Ու երբոր սպասաւորնեը եկան՝ անոնք բանտին մէջը չի գտան նէ , ետ
23դարձան պատմեցին , և ըսին ։ Թէ՝ Բանտը ամէն զգուշութիւնով գոց գտանք , ու պահապանները որ դռանը քով կեցեր էին ։ բացինք և ներսը
24մարդ չի գտանք ։ Երբոր աս բանները լսեցին տաճարին իշխանները ու քահանայապետները՝ կըզարմանային անոնց համար՝ Թէ ի՞նչ պիտի ըլլայ
25ան ։ Եւ մէկը եկաւ պատմեց անոնց՝ Թէ Ահա այն մարդիկը որ բանտը դրիք , տաճարը կեցէր են և
26ժողովուրդը կըսորվեցունէնկոր ։ Ընտեսը իշխանը սպասաւորներուն հետ մէկտեղ գնաց ա-
նոնք բերաւ առանց բռնութեան . Ինչու որ ժողո-
27վուրդէն կըվախնային որ չի քարկոծվին ։ Ու բերին անոնք առեանը կայնեցուցին . քահանայա-
28պետը անոնց հարցուց , և ըսաւ ։ Ո՞նէք ձեզի ա-պըսպրելով չապըսպրեցի՞նք մի , որ ան անու-նով չի սորվեցունէք . և ահա Երուսաղէմը ձեր ուսմունքովը լեցուցիք , և ան մարդուն արիւնը մեր վրայ կուզէքկոր ձգել ։
29 Պատասխան տուին Պետրոս ու առաքեալները՝

ՀԱՅԿ ԳԱՐԵԳԻՆ ՊՈՂՈՍԵԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՍԻՍ

և ըսին . Ուսուցի՛չ Աստուծոյ հնազանդիլ պէտք
է քան թէ մարդու : Ի՛ր հօրերնուս Աստուածը 30
Յիսուսը յարուց , որ անկիա դուք փայտէն կա-
խած սպաննեցիք : Ընկիա Աստուած իր աջ ձեռ- 31
քովը Առաջնորդ ու Փրկիչ ընելով բարձրացուց ,
Իսրայէլին ապաշխարութիւն՝ և մեղաց թողու-
թիւն տալու : Եւ մենք ասոնց վկաներն 32
ենք , ու Հոգին Սուրբը՝ որուն Աստուած ի-
րեն հնազանդ եղողներուն տուաւ : Ընոնք ալ 33
երբոր լսեցին՝ էլլելք կատղեցան , ու կրմտրտայ-
ին որ զանոնք մեռցունեն :

Ըն տաեանին մէջ փարիսեցի մը ոտքի վրայ ե- 34
լաւ՝ որուն անունը Գամաղիէլ էր , օրինաց վար-
դապետ մը՝ բոլոր ժողովուրդին մէջ պատուաւոր
մէկը . հրաման ըրաւ որ՝ քիչ մը ան մարդիկը
դուրս տանին : Եւ ըսաւ անոնց , Իսրայէլացի՛ք 35
մարդիկ՝ դուք ձեզի զգուշացէք ասոնց մարդոցը վրայ-
ով որ ինչ պէտք է ընել : Ես օրերէս առաջ 36
Թէվդասը եկաւ , իրեն համար ըսելով՝ Թէ ինքը
մեկն է , որ Հարիւրքսով չորս Հազարի չափ մար-
դիկ իրեն յարեցան . որ ինքը ըսպաննըվեցաւ ,
և ան ամէնքն ալ որ իրեն հետ մէկ եղեր էին՝
ջակվեցան , ու ոչինչ եղան : Ընոր ետևէն 37
Յուդա Գալիլեացին եկաւ աշխարհագիր եղած
օրերը , և շատ ժողովուրդ իր կողմը ձգեց . ան
ալ կորսըվեցաւ , և ամէնքն ալ որ իրեն հնա-
զանդեր էին՝ ցիրուցան եղան : Եւ հիմայ ձեզի 38
կըսեմ , Ըս մարդոցմէն մէկ դի կեցէք , ու թող
տըվէք զիրենք . ինչու որ՝ եթէ ատ խորհուրդը
կամ գործը մարդոցմէ է նէ կըքակվի . հապա թէ 39
որ Աստուծմէ է չէք կրնար ատոնք քակել , չըլ-
այ թէ Աստուծոյ դէմ կռիւ ընող գտնըվիք :
Հաւնեցան անոր . ու առաքեալները կանչելին 40
ծեծեցին , և ապրապրեցին որ մէկ յայլ Յիսուսի
անունովը չի խօսին , ու անոնք ետ տըվին : Ը- 41
նոնք ալ ատեանին դիմացէն խնդալով գացին .

ինչու որ Տէրոջը անունին համար արժանի եղան
42 անարգելվելու : Եւ ամէն օր տաճարը ու տուներ
չէին դադարեր Յիսուս Քրիստոսը քարոզելէն և
սովետացնելէն :

ԳԼՈՒԽ Զ :

1 Եւ ան օրերը աշակերտները որ շատցան՝ Յոյ-
ներուն կողմէն տրտունջ մը եղաւ Եբրայե-
ցիներուն վրայ . ինչու որ իրենց օրգևարէները
ամէն օրուան Եբախ-րէ ծառայութեան մէջ բանի
2 տեղ չէին սեպվեր : Տասներկուքները կանչեցին
աշակերտներուն բազմութիւնը՝ և ըսին . Չդէկ
բան չէ որ մենք Աստուծոյ խօսքը ձգենք , ու սե-
3 ղաններուն ծառայենք : Եղբայրներ՝ ձեր մէջէն
եօթը հոգի ընտրեցէք՝ Բարի վկայուած՝ Հոգւով
Սրբով և իմաստութիւնով լեցուն , որ անոնք աս
4 գործին վրայ դնենք . ու մենք աղօթքի և պաշտա-
5 մունքի ու խօսելու եռանդն ըլլանք : Եւ ան խօսքը
բոլոր բազմութեան առջեւը աղէկ երեցաւ , ու
ընտրեցին Ստեփաննոսը՝ հաւատքով և Հոգւով
Սրբով լեցուն մարդ մը , ու Փիլեպպոսը , և Պրո-
քորոսը , ու Նիկանորը , և Տիմոնասն , ու
Պարմենաս , և Նիկողայոս նորահաւատ Ընտիոք-
6 ցին : Անոնք առաքեալներուն առջեւը կայնեցուցին ,
և աղօթք ընելով ձեռքերնին անոնց վրայ դրին :
7 Ու Աստուծոյ խօսքը կաճէր , և աշակերտներուն
համրանքը խիստ կը շատնար Երուսաղէմին մէջ .
ու քահանաներէն խիստ շատերը հաւատքի կը-
հնազանդէին :

8 Ստեփաննոսը շնորհքով ու զօրութիւնով լե-
ցած մարդ մը , մեծ հրաշքներ և նշաններ կընէր
9 ժողովուրդին մէջ : Ոմանք ան ժողովարանէն՝ որ
Լիբերտացոց ժողովարան կըսուէր , ու Կիւրենացոց՝
և Ղևքսանդրացոց , և անոնք որ Կիլիկիայէն ու
Ասիայէն էին , եկան Ստեփաննոսին հետը վիճաբա-
10 նութիւն ընելու . և չէին կրնար դէմ դնել

անոր խնաստութեանը ու հոգիին , որ անով ինքը
կը խօսէր : Ասացեր քանի մը մարդ գրգռեցին , որ 11
բանն , թէ Աստուած մեզ խօսեցաւ ու Մովսէսին ու
խօսեր կրնաս Մովսէսին ու Աստուծոյ դէմ : Եւ 12
շարժեցին ժողովուրդը՝ ու ծերերը՝ և կարդացող
ները , ու վրան հասան զինքը բռնելին՝ և տանան
տարին : Եւ սուտ վկաներ կայնեցուցին՝ որ կըսէ 13
ին , Այս մարդը չի դադարիր հայհոյական բաներ
խօսելէն սուրբ տեղին և օրէնքին դէմ : Լսեցինք 14
տանկէ որ կըսէր , թէ Յիսուս Նազովրեցին ինքը
աս տեղը պիտի քակէ , ու պիտի փոխէ Մովսէսին
մեզի տուած օրէնքը : Եւ տեսանը նստողներուն 15
ամէնը իրեն որ նայեցան՝ անոր երեսը հրեշտակի ե
րեսի պէս տեսան : Քահանայապետը ըսաւ , Թէ Ի 2
րաւցունէատ ատանկ է մի : Ինն ալ ըսաւ ,
Ա՛ստրիկ եղբայրներ՝ ու հայրեր՝ լսեցի մտիկ ը
րէք . Փառաց Աստուածը մեր հօրը Աբրահամին
երեւցաւ , քանի որ ան միջագետն էր , դեռ անիկա
Խառանի մէջ չի բնակեցուցած : և ըսաւ անոր : 3
Ելիր քու երկրէդ և քու ազգէդ , ու եկոր ան եր
կիրը՝ որ ես քեզի պիտի ցուցընեմ : Անտեսը 4
Քաղդէացոց երկրէն ելաւ՝ Խառանը բնակեցաւ ,
և անկէց՝ իր հօրը մեռնելէն ետև փոխեց , ու
օտարականի պէս աս երկիրը բնակեցուց անիկա ,
ուր որ դուք հիմայ բնակեր էք : Եւ ասոր մէջը՝ 5
իրեն ժառանգութիւն չի տուաւ , ոչ ալ ոտքի
քայլ մը տեղ , բայց խոսք տուաւ՝ որ ասիկա իրեն
տայ բնակելու . և իրմէ ետև՝ իր զաւկին , երբոր
դեռ ինքը որդի չունէր : Աստանկ խօսեցաւ Աս 6
տուած՝ Թէ Անոր զաւակը օտար երկիրը պան
դուխտ պիտի ըլլայ , ու պիտի ծառայեցունեն ա
նիկա՝ և չարչարեն չորս հարիւր տարի : Եւ ան 7
ազգը՝ որուն որ պիտի ծառայեն , ես պիտի դա
տեմ , ըսաւ Աստուած . և անկէ ետև պիտի ելլան՝
ու աս տեղը իս պաշտեն : Եւ անոր թլփատու 8
թեան ուխտ տուաւ . ու երբոր Աբրահամ Իսահա

կը ծնաւ , և թլփատեց անիկա ուԹ օրէն · Սահակն ալ՝ Յակոբը , Յակոբն ալ տասներկու նա-
9հապետները : Եւ նահապետները Յովսէփին վրայ նախանձելով՝ Եգիպտոս ծախեցին · բայց
10Աստուած անոր հետն էր : Ու փրկեց անիկա իր ամէն նեղուԹիւններէն , և անոր շնորհք ու իմաստուԹիւն տըւաւ Եգիպտացոց Փարաւոն Թագաւորին դիմացը · ու ան զինքը կառավար դրաւ
11Եգիպտացոց վրայ՝ և իր բոլոր տանը : Եւ սով մը եկաւ Եգիպտոսի բոլոր երկիրը՝ ու Քանանի մէջ մեծ նեղուԹիւն , և մեր Հայրերը ուտելիք
12չէին գտնար : Բայց Յակոբ երբոր լսեց՝ ԹէԵգիպտոս ուտելիք կըգտնըվիկոր , առջի անգամին
13մեր Հայրերը խրկեց : Եւ երկրորդ անգամին Յովսէփ իր եղբայրներուն ճանչվորուԹիւն տըւաւ , ու իր ազգը Փարաւոնին յայտնի եղաւ :
14Յովսէփ խրկեց ու կանչեց իր Հայրը Յակոբը՝ և բոլոր տունուտեղը , եօԹանասուն և հինգ Հոգի :
15Ու Յակոբ Եգիպտոս իջաւ՝ և մեռաւ , ինքը՝ և
16մեր Հայրերը : Ու տարվեցան Սիւքէմի Երկիրը , և ան քարայրին մէջը դրվեցան , որնոր Աբրահամ արծաԹի գնով առեր էր Եմովրի զաւկներէն՝
17Սիւքէմի մէջ : Երբոր խոստմունքին ատենը մօտեցաւ , որ Աստուած Աբրահամին խոստացեր էր , ժողովուրդը աճեցաւ՝ և էվելօք շատցաւ Ե-
18գիպտոսին մէջ · մինչև որ Եգիպտոսին մէջ ուրիշ Թագաւոր մը եկաւ՝ որ Յովսէփը չէր ճանչ-
19նար : Անիկա հնարք բանեցուց մեր ազգին վրայ՝ ու չարչարեց մեր Հայրերը , անոնց տղաքը գեՁ-
20ռգելով որ չապրին : Ան ժամանակին Մովսէս ալ ծնաւ , և Աստուծոյ առջևը գեղեցիկ մըն էր ,
21որ իր Հօրը տունը մեծցաւ իրեք ամիս : Եւ երբոր անիկա նետեցին՝ Փարաւոնին աղջիկը անիկա
22վերցուց , և իրեն որդեգիրի տեղ մեծցուց : Ու Մովսէս Եգիպտացոց բոլոր իմաստուԹիւնովը վարժըվեցաւ , և ինքը զօրաւոր էր իր խօսքերովը

ու գործքերովը : Երբոր իր քառասուն տարեկան 23
ժամանակը լեցվեցաւ նէ , իր սիրտը ինկաւ իր
եղբայրներուն՝ Իսրայէլի զաւկներուն քով պը-
տըտիլ : Ու Իսրայէլացիներէն մէկը զրկանքի ե- 24
կած տեսնալով՝ դժարն եկաւ , և զրկվածին ոխը
առաւ՝ ան Եգիպտացին սպաննելով : Կըմտածէր 25
որ իր եղբայրները իմանան՝ թէ Աստուած իր ձեռ-
քովը իրենց ազատութիւն պիտի տայ , բայց անոնք
չիմացան : Եւ ետևի օրը անոնց դիմացն ելաւ՝ եր- 26
բոր կըկռուէինկոր , ու խաղաղութիւն ընելու
յորդորեց անոնք , ըսաւ . Ա՛րդիկ՝ դուք եղբայր-
ներ էք , ինչո՞ւ մէկըզմէկ կըզրկէք : Բայց ան՝ որ 27
ընկերին զրկում կընէր , ետ հրեց զինքը՝ և ը-
սաւ , Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր
դրաւ : Ի՞ս ալ մի սպաննել կուզես , ինտոր որ 28
երէկ Եգիպտացին սպաննեցիր : Ա՛ռվսէս ալ աս 29
խօսքերէն փախաւ , ու Ա՛ադիամու երկիրը օտա-
րական եղաւ , ուր որ ինքը երկու որդի ծնաւ :
Եւ երբոր քառասուն տարի լմընցաւ՝ Տէրոջը հրեշ- 30
տակը Սինա լեռան անապատին մէջը կրակի բոցին
մէջ մորենիին մէջէն երևցաւ իրեն : Ա՛ռվսէս ալ 31
երբոր տեսաւ՝ զարմացաւ ան տեսիլքին վրայ . ու
երբոր մօտեցաւ աղէկ մը նայելու , Տէրոջը ձայնը
եկաւ , որ ևսէր : Ես եմ քու հայրերուդ Աս- 32
տուածը , Աբրահամին ու Սահակին և Յակոբին
Աստուածը . Ա՛ռվսէս ալ վախով բռնըված չէր
համարձակէր նայելու : Ու Տէրը ըսաւ իրեն . 33
Քակէ ոտքիդ կօշիկները , ինչու որ ատ տեղը՝ որ
դուն կայներ ես , սուրբ երկիր է : Աղէկ տեսայ 34
իմ ժողովուրդիս չարչարանքը Եգիպտոսի
մէջ , ու լսեցի անոնց հառաչանքին , և իջայ ա-
նոնք ազատելու . ուստի եկոր քեզ Եգիպտոս պի-
տի խրկեմ : Ըն Ա՛ռվսէսը որ ուրացան և կըսէին՝ 35
Ո՞վ քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր դրաւ ,
Աստուած անիկա իշխան ու փրկիչ խրկեց ան
հրեշտակին ձեռքովը՝ որ մորենիին մէջը իրեն ե-

36 րևցաւ : Ընիկա հանեց անոնք նշաններ և հրաշք-
ներ ընելով Եգիպտացոց երկիրը ու Կարմիր ծո-
37 վը , և անապատին մէջը քառսուն տարի : Ես
Մովսէսն է՝ որ ըսաւ Իսրայէլի որդւոցը . Ձեր
Տէր Ըստուածը ձեզի մէկ մարգարէ մը պիտի հա-
նէ ձեր եղբայրներէն ինծի պէս , անոր մտիկ ը-
38 րէք : Ասիկա ան է որ անապատը եկեղեցիին մէջ
էր հրեշտակին հետը , որ Սինա լեռան մէջ խօսակ-
ցեցաւ իրեն հետ՝ ու մեր հայրերուն հետ . որ
39 կեանք տրվող հրամաններ առաւ մեզի տալու : Ո-
րուն մեր հայրերը չուզեցին հնազանդ ըլլալ . հա-
պա մէկ դի ձգեցին , և իրենց սրտերովը Եգիպտոս
40 դարձան : Եւ ըսին Ահարոնին , Մեզի աստ-
ուածներ շինէ՝ որ մեր առջևէն երթան . ինչու որ
ան Մովսէսը՝ որ մեզ Եգիպտացոց երկիրէն հա-
41 նեց , չենք գիտեր ի՞նչ եղաւ իրեն : Եւ ան օրե-
րը հորթ մը շինեցին , ու կուռքերուն զոհ մատու-
ցին , և կուրախանային իրենց ձեռքին գործքե-
42 րուն վրայ : Ըստուած ալ երես դարձուց , ու
թողուց իրենց որ երկինքի զօրութիւնը պաշտեն .
ինչպէս որ գրված է մարգարէներուն գիրքին մէջ՝
Հառսուն տարի ինծի զոհեր ու պատարագներ
մատուցիք անապատին մէջը ո՛վ Իսրայէլի տունը :
43 Եւ Մողքին խորանը առիք , և Հեռմիա
աստուածին աստղը , ան պատկերները որ շինեցիք
անոնց երկրպագութիւն ընելու . ու ես ալ ձեզ
44 Բաբիլոնէն անդին պիտի տանիմ : Վկայութեան
խորանը անապատին մէջ մեր հայրերուն հետն
էր , ինչպէս հրաման ըրաւ ան՝ որ Մովսէսին հետ
կը խօսէր , որ անիկա տեսած օրինակին պէս շինէ :
45 Որ անիկա մեր հայրերն ալ Յեսուին հետը առին
բերին ան ազգերուն տեղվանքը , որոնք Ըստուած
վռնտեց մեր հայրերուն դիմացեն մինչև Դաւիթ
46 թին օրերը . որ ան Ըստուծոյ առջևը շնորհք
գտաւ , և ուզեց որ Յակոբին Ըստուածոյն բնա-
47 կարան մը գտնայ : Հայց Սողոմոն անոր տուն մը

չինեց ։ Սակայն չէ թէ Խարձրեսոլը ձեռքով չին- 48
ված տաճարներու մէջ կըբնակի . Տապա ինչպես
որ մարգարէն կըսէ . Երկինքը իմ աթոռս է , ու 49
երկիրը՝ իմ ոտքիս դնելու տեղը . ան ի՞նչ տուն
է որ շինեցիք ինծի , կըսէկոր Տէրը . կամ՝ ան
ի՞նչ տեղ է ուր պիտի հանգչիմ ես . չէ՞ որ աս 50
ամէնը իմ ձեռքս շիներ է ։ Ա՛վ պինտ գլուխներ՝ 51
ու սիրտով և ականջով չի թլփատվածներ . դուք
ամէն ժամ Հոգւոյն Սրբոյ հակառակ կըկենաք ,
ինչպէս որ ձեր Հայրերը՝ անանկ ալ դուք ։ Ո՞ր- 52
գարէներէն ո՞ր մէկը չի հալածեցին ձեր Հայրերը ,
ու սպաննեցին անոնք՝ որ առաջուց պատմեցին ան
Արդարին գալուն համար , որ դուք հիմայ անոր
մատնողները և սպաննողները եղաք . դուք որ օ- 53
րէնք առիք հրեշտակներուն հրամանով՝ և չի
պահեցիք ։

Եւ երբոր աս բաները լսեցին՝ սիրտերնուն մէջ 54
կըմատղէին , ու ակռաներնին անոր վրայ կըկըճռը-
ցնէին ։ Հայց ինքը Հոգւով Սրբով լեցված էր , 55
երկինքը նայեցաւ՝ և Աստուծոյ փառքը տեսաւ ,
ու Յիսուսն ալ՝ որ Աստուծոյ աջ կողմը կայներ
էր , և ըսաւ . Ահա կըտեսնամ որ երկինքը բաց-
ված , ու Որդին մարդոյ որ Աստուծոյ աջ կողմը
կայներ է ։ Ո՛եծ ձայնով կանչ վըռտելով ականջ- 56
ներնին գոցեցին , և ամէնքը մէկէն վազեցին անոր
վրայ ։ Ու քաղքէն դուրս հանելով կըքարկոծէ- 57
ին զինքը , և վկաները իրենց լաթերը պահ կըդը-
նէին երիտասարդի մը ոտքի քով , որ Սաւուղ
կըսվէր ։ Եւ կըքարկոծէին Ստեփաննոսը , որ կա- 58
ղեթէր ու կըսէր , Տէր Յիսուս ընդունէ իմ հո-
գիս ։ Ծնկան վրայ եկաւ և բարձր ձայնով կանչ- 59
եց , Տէր՝ ասիկա անոնց մեղք մի՛ սեպեր . ու երբ-
որ աս բսաւ՝ քնացաւ . և Ստեփանոս անհիա սպան-
նողներուն հետ կաքը մէկ էր ։

ԳԼՈՒԽ Ը ։

1 Եւ ան օրը մեծ հալածում եղաւ եկեղեցիին
վրայ Երուսաղէմին մէջ , և ամէնքն ալ ցիր-
ուեցան եղան Հրէաստանի գեղերը ու Սամարիա՝
2առաքեալներէն ի զատ : Եւ աստուածավախ մար-
դիկ Ստեփաննոսը վերցուցին , և անոր վրայ մեծ
3ողբ ըրին : Նայց Սողոս եկեղեցիին շատ վնաս
կուտար , տունէ տուն կրմտնար , երիկ մարդ ու
կնիկ մարդ կրքաշէր՝ բանտը դնել կուտար :
4 Եւ ան ցիրուցան եղածները կրպտրտէին՝ ու
5խօսքը կրքարոզէին : Փիլիպպոս ալ Սամարացոց
քաղաքը իջնալով՝ Քրիստոսը կրքարոզէր անոնց :
6Ժողովուրդները ամէնը մէկէն Փիլիպպոսի բսած-
ներուն ականջ կրդնէին , անոր ըրած նշանները
7լսելով և տեսնալով : Ինչու որ շատերը որ պիղծ
դևերէն բռնըված էին՝ մեծ ձայնով կրկանչուր-
8տէին ելլելով ու կրելային : Հաւատ ալ անդամա-
լոյծներ և կաղեր կրբժշկըվէին . ու մեծ ուրախու-
9թիւն եղաւ ան քաղքին մէջը : Նայց Սիմոն ա-
նունով մարդ մը՝ որ առաջուց ան քաղքին մէջն
էր , մոգութիւն կրնէր՝ ու Սամարացոց ազգը կը-
զարմացունէր , անանկ ըսելով իրեն համար թէ
10մէկ մեծ մըն է : Որ անոր կրնայէին ամէնքն ալ
պզտիկէն մինչև մեծերնին . և կրսէին , Այսկա
11Աստուծոյ մեծ ըսած զօրութիւնն է : Հաւատ ը-
մանկներէն կանարդուհիներով անոնք զար-
12մացունելուն համար՝ իրեն կրնայէին : Նայց եր-
բոր Փիլիպպոսին հաւատացին՝ որ Աստուծոյ թա-
գաւորութեանը ու Յիսուս Քրիստոսի անունը
վրայ կրքարոզէր , կրմկրտվէին ամէնքն ալ էրիկ
13մարդիկ ու կնիկ մարդիկ : Եւ Սիմոն ինքն ալ
հաւատաց , ու մկրտվելով միշտ Փիլիպպոսին հետն
էր՝ տեսնալով ան նշանները և մեծ զօրութիւն-
14ները որ կրլլային , կրզարմանար : Որ առաջ առա-

քահանեքը՝ որ Երուսաղէմի մէջ , երբոր լսեցին թէ Սամարիա ալ Աստուծոյ խօսքը ընդունեցեր , Պետրոսը ու Յովհաննէսը անոնց խրկեցին : Որոնք 15
իջան՝ աղօթք ըրին անոնց վրայ , որ Հոգին Սուրբը առնեն . (ինչու որ մինչև անոնք դեռ ա- 16
նոնց մէկուն վրայ իջած չէր , հապա միայն Տէր Յիսուսի անունովը մկրտված էին .) անոնք 17
ձեռքերնին դրին անոնց վրայ՝ ու Հոգին Սուրբը առնէին : Երբոր տեսաւ Սիմոն՝ թէ առաքեալ- 18
ները ձեռք վրայ դնելով՝ Հոգին Սուրբը կըտրին- կոր , անոնց ոսկի բերաւ և ըսաւ : Իշխէ ալ ասո- 19
իշխանութիւնը տրվէք՝ որ որու վրայ ձեռք դնեմ նէ՝ անիկա Հոգին Սուրբը առնէ . Բայց Պետրոս ըսաւ անոր . Քու արծաթդ քեզի հետ թող կոր- 20
զուի . ընչու որ Աստուծոյ պարգեւը կարծեցիր թէ ոսկով պիտի առնես : Դուն ասոր բանին մէջը 21
մասն ու բաժին չունիս . ինչու որ քու սիրտդ Աս- տուծոյ առջև շիտակ չէ : Դուն ասոր քու- 22
րութենեդ զեղջ եկոր , ու Տէրոջը աղաչէ . գուա- ցէ թողութիւն ըլլայ քեզի քու սրտիդ դէշ խոր- հուրդներէն : Ինչու որ ես քեզ մաղձի լեղու- 23
թեան մէջ՝ և անիրաւութեան կապերու մէջ կը- տեսնամկոր : Սիմոն պատասխան տըւաւ՝ և ըսաւ . 24
Դուք ինծի համար աղաչանք ըրէք Տէրոջը , որ ոտ ձեր բսածներէն իմ վրաս բան մը չի գայ : Ընծք ալ վկայութիւն տալով՝ Աստուծոյ խօսքը 25
պատմեցին , ու դարձան Երուսաղէմ . և Սամա- րացոց շատ գեղերուն մէջը աւետարանը կըքարո- զէին :

Տէրոջը հրեշտակը Փիլիպպոսին խօսեցաւ և 26
ըսաւ . Ելիր ու գնա դէպի հարաւային կող- մը՝ ան ճամբան , որ Երուսաղէմէն Գազա կիջ- ներվի , որ ասանաւատ տեղ մըն է : Ընկ ալ եղաւ 27
գնաց . և ահա Եթովպացի մարդ մը զօրաւոր ներքինի մը Եթովպացոց Կանդակէ անուն թա- գուհիին , որ ինքը անոր բոլոր գանձերուն վրայ

էր · որ Երուսաղէմ եկեր էր երկրպագութիւն
28 ընելու · և անկէ ետ դարձած ու իր կառքը նըս-
29 տած՝ Եսայի մարգարէն կ՚կարդարկոր ։ Հոգին
Ա֊ըծ ըսաւ փիլիպպոսին · Մոտ գնա , և ամ-
30 կառքին մօտեցիր ։ Փիլիպպոս ալ առաջ վազեց՝
մտիկ կ՚ընէր որ Եսայի մարգարէն կ՚կարդայ , և
31 ըսաւ · Կարգացածդդ կ՚հասկընանակոր մի ։ Ան
ալ ըսաւ , Ինտո՞ր կրնամ , թէ որ մէկը ինծի չ՚
առաջնորդէ նէ · ու աղաչեց փիլիպպոսին՝ որ ելլայ
32 իր հետը նստի ։ Եւ ան գիրքին մէջը կարդացած
գլուխը ան էր · Ոչխարի մը պէս մորթելու տար-
վեցաւ , ու մատնած գառնուկի մը պէս ինքը խուզո-
33 ղին առջեւ՝ անանկ իր բերանը չի բանար ։ Իր
խոնարհութեան իր դատաստանը վերցրվեցաւ ·
և անոր ցեղը ո՞վ պիտի պատմէ · ինչու որ անոր
34 կեանքը երկրէն վերցրվեցաւ ։ Ներքինին պա-
տասխան տըւաւ փիլիպպոսին և ըսաւ , Կաղաչեմ
քեզի · մարգարէն որի՞ համար կրսէ աս · իրե՞ն
35 համար՝ թէ ուրիշի մը համար ։ Փիլիպպոս իր
բերանը բացաւ , և աս գիրքէն սկսելով Յիսուս
36 Քրիստոսը քարոզեց ։ Երբոր երթալով ճամբան կեր-
թային՝ ջուրի մը քով եկան , ու ըսաւ ներքի-
նին · Ահա ջուր՝ ալ ինչ բան խս կարգիլէ մկրը-
37 տըվելէն ։ Եւ ան ըսաւ անոր · Թէ որ քու բոլոր
սրտովդ կ՚հաւատաս նէ , կարելի է · անկէ պա-
տասխան տըւաւ՝ և ըսաւ · Կ՚հաւատամ որ Յիսուս
38 Քրիստոսը Որդի Աստուծոյ է ։ Ու հրաման ը-
ըսաւ որ կառքը կայնեցունեն · և երկուքն ալ ջու-
րը իջան փիլիպպոսը և ներքինին , ու մկրտեց ա-
39 նինիկա ։ Եւ երբոր ջուրէն դուրս ելան՝ Հոգին
Աստըծոյ ներքինին վրայ եկաւ · ու Տէրոջը հրեշ-
տակը փիլիպպոսը առնէց վերցուց , և ալ ներքինին
անիկա չի տեսաւ · ու իր ճամբան կերթար ուրա-
40 խութիւնով ։ Բայց փիլիպպոս Ազոտոսին մէջը
գտնըվեցաւ · ու պըտրտելով բոլոր քաղաքներուն
աւետարան կը քարոզէր , մինչև որ ինքը Կեսարիա
եկաւ ։

ԳԼՈՒԽ Ա

1 Հայց Յովսէ տակաւին սպառնալիքով և սպան-
նելու մտքով լցված Տէրոջը աշակերտներուն
դէմ, քահանայապետին գնաց· անկէց թուղթեր
2 ուզեց Դամասկոս ժողովարաններուը պաշնէլու, որ
ով որ ան ճամբուն հետևող գտնալու ըլլայ նէ՝
էրիկ մարդ կամ կնիկ մարդ, կապած Երուսաղէմ
3 բերէ: Ու երթալուատենը Դամասկոսին որ մօ-
տիկցաւ՝ յանկարծ իր բոլորտիքը երկինքէն լոյս
4 մը շող շըղաց· և ինքը գետինը ինկաւ· ու ձայն
մը լսեց որ կըսէր իրեն, Սաւուղ Սաւուղ՝ ինչու
5 իս կը հալածեսկոր: Եւ ան ըսաւ, Դուն ով ես
Տէր· ան ալ ըսաւ, Ես Յիսուսն եմ՝ որ դուն
կը հալածեսկոր· կայծր բան է քեզի խթանին դէ-
6 մը ոտք զարնել: Ու դողդըղալով և շուարելը կըս-
7 րելով ըսաւ· Տէր՝ ինչ կուզես ընել: Եւ
Տէրը ըսաւ անոր· Ելապա ոտքի վրայ կայնէ, ու
քաղաքը մտիր, և քեզի պիտի զուրցըվի ինչ որ
պէտք է քեզի ընել· բայց ան մարդիկը որ իր հե-
տը կերթային, մունջ եղեր կեցեր էին· ձայնը
միայն կըլսէին՝ բայց բան մը չէին տեսներ: Ելաւ
8 Սաւուղ գետինէն, ու աչքերը բաց ալկը չէր տես-
նար· անոր ձեռքէն բռնեցին՝ Դամասկոս խօթե-
ցին: Եւ հոն իրեք օր կեցաւ՝ ու չէր տեսնար·
9 և ոչ կերաւ՝ և ոչ խըմեց: Եւ Ընանիա անու-
10 նով մէկ աշակերտ մը կար Դամասկոսի մէջ· Տէ-
րը տեսիլքի մէջ անոր ըսաւ, Ընանիա· ան ալ
ըսաւ, Տէր՝ ահա հոս եմ: Տէրն ալ ըսաւ անոր,
11 Ոտքի վրայ կայնէ՝ ու գնա՝ ան փողոցը՝ որ Ուղիղ
կըսվի· և հոն Յուդային տունը՝ փնտռէ Սաւոս
անունով Տարսոնացի մը, որ ինքը դեռ աղօթք
12 կընէկոր: Ու տեսիլքին մէջ մէկ մարդ մը տեսած
է Ընանիա անունով՝ ներս մտած, և ձեռքը իր
13 վրան դրած, որ տեսնայ· Ընանիան ալ պատաս-

խան տալաւ , Տէր՝ շատերէն լսեցի ան մարդուն
համար , որ ամէն չարիքներ ըրաւ քու սուրբերուդ
14Երուսաղէմի մէջ . և հոս ալ քահանայապետներն
ըն իշխանութիւն ունի կապելու ան ամէնը , որ
15քու անունդ կրկարդան : Տէրը իրեն ըսաւ ,
Գնա դուն , ինչու որ անիկա ինծի ընտիր աման
մըն է , իմ անունս կրելու հեթանոսներուն ու
16թագաւորներուն և Իսրայէլի որդոցը առջև : Ո-
րովհետև ես իրեն պիտի ցուցնեմ որչափ պէտք
է իրեն՝ իմ անունիս համար նեղութիւն քաշել :
17Ընթացաւ ալ գնաց՝ և ան տունը մտաւ , ու ձեռ-
քը անոր վրայ դրաւ՝ ըսաւ . Սաւուղ եղբայր՝ վիր
նայէ . իս Տէրը լսեցի , ան Յիսուսը՝ որ ճամբան
քեզի երևցաւ երբոր կուգայիր , որ դուն տես-
18նաս ու Հոգւով Սրբով լեցվիս : Եւ շուտ մը ի-
րեն աչքերէն կրճեպներու պէս բաներ իյնան .
19տեսաւ՝ ու եղաւ մկրտվեցաւ . և կերակուր ա-
ռաւ՝ ուժը վրան եկաւ . ու քանի մը օր Դամաս-
կոսի մէջ աշակերտներուն հետը կեցաւ :
20 Եւ շուտ մը ժողովարաններուն մէջ Յիսուսը
21քարոզեց , Թէ Ինիկա Աստուծոյ Որդին է : Ա-
մէնքն ալ որ կլսէին զարմացեր էին , և կըսէին .
Այսիկա ան չէ՞ , որ Երուսաղէմի մէջ կըկործանէր
անոնք՝ որ Յիսուսի անունը կուտային . և հոս ալ
ան բաներն համար եկած էր , որ անոնք կապած
22քահանայապետներուն տանի : Ինչ Սօղոս ալ
հզվելի կըզօրանար՝ և կըշլթէր ան Հրէաները ,
որ Դամասկոսի մէջ կըբնակէին , ու մտիքնին կը-
23խօթէր Թէ Քրիստոսը ասիկա է : Երբոր շատ
օրեր վրայ անցան , Հրէաները մտիքտացին անի-
24կա սպաննել : Սօղոս իմացաւ անոնց հնարքը .
ինչու որ ցորեկ ու գիշեր դուռերը կըսպասէին ,
25որ անիկա սպաննեն : Եւ աշակերտները գիշերով
ինքը առին՝ պատէն կախած սաւառով վար իջե-
ցուցին :
26 Երբոր Սօղոս Երուսաղէմ եկաւ , աշակերտ ,

ներուն հետը ըլլալու ետևէ էր · բայց ամէնքն ալ կըվախնային անկէց , չէին հաւատար՝ Թէ ինքը ա-
շակերտ էր : Բայց Խառնաբաս անկիա առաւ՝ ա- 27
ռաքեալներուն տարաւ , ու պատմեց անոնց՝ Թէ
ինսոր ճամբուն վրայ Տէրը տեսաւ , ու որ անոր
հետը խօսեցաւ , և որ Դամասկոսին մէջը համար-
ձակ քարոզեց Յիսուսի անունովը : Ու Երուսա- 28
զէմի մէջ անոնց հետ կըմանար ու կելլար , Տէրո-
ջը անունովը համարձակ խօսելով : Յոյներուն 29
դէմ կրկխօսէր՝ և վիճաբանութիւն կընէր · անոնք
ալ կըմտրմտային որ անկիա սպաննեն : Ու եղ- 30
բայրները որ իմացան՝ ինքը Կեսարիա իջուցին , և
Տարսոն խրկեցին անկիա :

Ու եկեղեցին բոլոր Հրէաստանի և Սամարի- 31
այի ու Գալիլեայի մէջ խաղաղութիւն ունեցաւ ,
շինութիւն առնելով և Տէրոջը երկիւղին հետը
երթալով · ու Հոգւոյն Սրբոյ մխիթարութիւ-
նովը կըշատնար :

Եւ եղաւ որ՝ երբոր Պետրոս ամէն բե՞ կըպը- 32
տրաէր , ինքը Ասրբերուն քովն ալ իջաւ , որոնք
Լիւդիա կըբնակէին : Եւ հոն մէկ մարդ մը գտաւ , 33
որուն անունը Էնեաս էր , ութը տարիվընէ հետէ
անդամալոյծ մահիճը դրված էր : Եւ բսաւ անոր 34
Պետրոս · Էնեա՛ Յիսուս Քրիստոս Տէրը քեզ
կըբժշկէ · ելի՛ր և դուն ինքիրմէդ քու անկողինդ
թօշնիլտէ · ան ալ շուտ մը եղաւ : Ու Լիւդիայի 35
և Սարովնայի մէջ բնակողները ամէնը անկիա
տեսան , ու իրենք Տէրոջը դարձան : Եւ Յոպ- 36
պէի մէջ աշակերտ նուած կնիկ մը կար՝ անունը
Տաբիթա , (որ Թարգմանելով՝ Փոքրիկ այծ կըս-
վի ·) ասիկա բարի գործքերով ու ողորմութիւն-
ներով լեցված էր , որ ինքը կընէր : Եւ եղաւ 37
որ՝ ան օրերը ինքը հիւանդցաւ ու մեռաւ · լուացին
անկիա՝ և վերի խուցը դրին : Ու Լիւդիա Յոպ- 38
պէին մօտ ըլլալով՝ աշակերտները լսեցին Թէ
Պետրոս հոն է , իրեն երկու մարդ խրկեցին ա-

39 ղաչելու , որ չուշանայ իրենց գալու : Պետրոս ալ
ելաւ անոնց հետը եկաւ . երբոր եկաւ՝ վերի խուց
ը հանեցին անիկա , և բոլոր որբևարիները իր
բոլորտիքը կայներ էին՝ կուլային , ու կըցուցընէ-
ին բոլոր ան լաթերը և հագուստները՝ որչափ որ
40 իրենց կընէր ան Դոբրիկ այծը : Պետրոսն ալ ա-
մէնքը դուրս հանեց՝ ծունկի վրայ եկաւ աղօթք
ըրաւ , ու դէպ՝ ի մարմինը դարձաւ՝ և ըսաւ , Տա-
բիթա՝ Տէր Յիսուս Քրիստոսի անունովը ելլէր
կայնէ . ան ալ իր աչվընները բացաւ , ու Պետրո-
41 սը որ տեսաւ՝ ելաւ շիտակ մը նստաւ : Ինքն ալ
ձեռքը անոր տուաւ՝ և կայնեցուց անիկա . կանչեց
նէրս սուրբերը ու որբևարիները , առջևնին դրաւ
42 կայնեցուց անիկա : Եւ բոլոր Յոպպէին մէջ ի-
43 մացվեցաւ , ու շատերը Տէրոջը հաւատացին : Եւ
եղաւ որ ինքը շատ օրեր Յոպպէ կեցաւ՝ մէկ Սի-
մոն Կաշի բանողի մը քով :

ԳԼՈՒԽ Ժ։

1 Կեսարիայի մէջ մէկ մարդ մը կար՝ Կոռնելիոս
անուն , հարիւրապետ էր ան գունդին՝ որ Ի-
2 տալացի գունդ կըսվէր . բարեպաշտ և աստուա-
ծավախ իր բոլոր տունովը . ժողովուրդին շատ ո-
ղորմութիւններ կընէր , և ամէն իժէր Աստուծոյ
3 աղօթք կընէր : Անիկա օրվան ժամը իննին ատե-
նը տեսիլքին մէջ Աստուծոյ հրեշտակը յայտնի
տեսաւ , որ իր քովը մտաւ՝ և իրեն կըսէր , Կոռ-
4 նելիոս : Ան ալ անոր նայեցաւ՝ խիստ վախցաւ
ու ըսաւ , Ո՞նչ է Տէր . ան ալ անոր ըսաւ ,
Քու աղօթքդ և ողորմութիւններդ Աստուծոյ
5 առջևը ելան յիշվեցան : Ուստի Յոպպէն մարդիկ
6 խրկէ , ու կանչէ Սիմոնը՝ որ Պետրոս կըսվի . ին-
քը մէկ Սիմոն կաշի բանողի մը քով մտած է , որ
7 անոր տունը ծովին մօտ է : Եւ երբոր գնաց ան
հրեշտակը՝ որ իր հետը կըխօսէր , իր ծառաներէն
երկուքը կանչեց , ու իր սպասաւորներէն ալ մէկ

քարեպաշտ զինուոր մը , և բոլորը անոնց պատ- 8
մելով՝ Յոպպէ իրկեց անոնք :

Ու հետևի օրը անոնք որ կերթային , և քաղա- 9
քին մօտեցան , Պետրոս ժամը վեցին տաներները
տանիսը ելաւ աղօթք ընելու : Ընթեցաւ՝ և կու- 10
զէր հաց ուտել . անոնք ալ երբոր կըպատրաս-
տէին՝ իրեն վրայ մէկ ափշութիւն մը եկաւ . և 11
տեսաւ երկինքը բացված՝ ու չորս ծոթէն կախված
մէկ ման մը մեծ սաւանի մը պէս , որ իջաւ ներս-
տաւ դետինին վրայ . անոր մէջը կար բոլոր չորքո- 12
տանիները՝ և երկրի սողուննները , ու երկինքի
թռչունները : Եւ երկինքէն իրեն ձայն մը եկաւ , 13
Ելլիր Պետրոս մորթէ ու կեր : Պետրոս ալ ը- 14
սաւ , Չէ՛ր լինի Տէր . ինչու որ ես ամենևին
խառնակ ու պիղծ բան կերած չեմ : Դարձեալ մէ- 15
մալ ձայն եկաւ իրեն , Ընչ որ Աստուած սրբա-
ցուց՝ դուն պիղծ մի՛ սեպեր : Այսկա իրեք հեղ 16
եղաւ՝ և ամանը երկինքը վերցաւ : Ու Պետրոս 17
երբոր իր միտքին մէջ կըզարմանար թէ ինչ պի-
տի բլլայ ան իր տեսած տեսիլքը , ահա Կոռ-
նելիոսէն ղրկըված մարդիկը Սիմոնին տունը հար-
ցուցին , ու դռանը առջևը կայնեցան . կանչեցին 18
և կըհարցունէին , թէ Սիմոնը՝ որ Պետրոս կըս-
ւի , հոս մտած է մի : Եւ երբոր Պետրոս ան տե- 19
սիլքին վրայով կըմտածէր , Հոգին Աստուած ըսաւ
իրեն . Ահա քանի մը մարդիկ քեզ կըփնտռեն-
կոր : Ուստի ելլիր իջիր , և անոնց հետը գնա ա- 20
ռանց խղճմտանք ընելու . ինչու որ ես իրկեցի ա-
նոնք : Պետրոս ալ երբոր անոնց իջաւ՝ ըսաւ , 21
Ահա ես եմ որ դուք կըփնտռէքկոր . ի՞նչ բան
կայ որ անոր համար դուք եկաք : Անոնք ալ ը- 22
սին . Կոռնելիոս հարիւրապետը՝ արդար և աստ-
ուածավախ մարդ , բոլոր Հրէից ազգէն քաջի վը-
կայված՝ սուրբ հրեշտակէ մը հրաման առաւ , որ
քեզ իրեն տունը կանչէ՝ և քու խօսքերդ լսէ :
Ներս կանչեց անոնք՝ և իր քովը կեցուց . 23

Եւ եւեւի օրը Պետրոս
ելաւ՝ անոնց հետը գնաց, և քանի մըն ալ ան
24 եղբայրներէն որ Յոպպէ էին՝ իր հետ եկան։ Ու
եւեւի օրը Կեսարիա մտան. Կոռնելիոսն ալ իր
ազգականները և մտերիմ բարեկամները կանչած՝
25 անոնց կըսպասէր. Ու եղաւ որ երբ Պետրոս ներս
մտաւ, Կոռնելիոս իր դիմացն ելաւ, անոր ոտ-
26 քը իյնալով երկրպագութիւն կընէր։ Պետրոս
ալ անիկա կանգնեցուց՝ և ըսաւ, Ելիր կայնէ.
27 ես ալ մեկ մարդ մըն եմ։ Ու իրեն հետը խօսելով
ներս մտաւ. ու հոն շատերը ժողվուած գտաւ։
28 Եւ ըսաւ անոնց. Դուք ձեզմէն գիտէք թէ՝ ինչ-
պէս անվայել է որ մեկ Հրէայ մարդ մը այլազգի
մը դպչի՝ կամ մօտենայ. բայց Աստուած ինծի
ցուցուց որ մարդիկներէն մեկը խառնակ կամ
29 պիղծ չըսեմ։ Անոր համար ես ալ որ կանչուե-
ցայ՝ առանց խօսք մը դէմ բերելու եկայ. բայց
հիմայ կըհարցընեմ, Ինչ բանի համար իս
30 կանչեցիք։ Կոռնելիոս ալ ըսաւ. Չորս օր առաջ՝
երբոր աս ատենս ժամը իննին իմին տանս մէջ ա-
ղօթք կընէի, մէյմալ ճերմակ լաթերով մարդ
31 մը եկաւ կայնեցաւ առջեւս՝ և ըսաւ, Կոռնելիոս՝
քու աղօթքդ լսուեցաւ, և քու ողորմութիւններդ
32 Աստուծոյ առջեւը յիշուեցան։ Ուստի Յոպպէն
մարդիկ խրկէ, ու կանչէ Սիմոնը՝ որ Պետրոս
կըսուի, որ ան ծովին մօտ մեկ Սիմոն կաշի բանո-
ղի մը տունը մտած է. որ ան գայ, ու խօսի քու
33 հետդ։ Ես ալ արտօրնօք քեզի խրկեցի, աղէկ
ըրիր դուն որ եկար. հիմայ մենք ամէնքս Աստու-
ծոյ առջեւը կեցեր ենք լսելու ան ամէնը, որ Տէրը
քեզի հրամայեր է։
34 Պետրոս իր բերանը բացաւ՝ և ըսաւ. Ա՛շմա-
րիտ կիմանամ՝ որ Աստուծոյ քովը աչառութիւն
35 չի կայ. հապա ամէն ազգի մէջ՝ ան որ անկեց կը-
վախնայ, ու արդարութիւն կըգործէ, ինքը կըն-
36 դունի անիկա։ Ան խօսքը որ Իսրայէլի որդոցը

խրկեց Աստուած խաղաղութիւն քարոզելու Յիսուսի Քրիստոսի ձեռքովը, (ասիկա է ամէնուն
Տէրը) դուք ձեզմէն գիտէք ան խօսքը որ բոլոր 37
Հրէաստանի մէջը եղաւ Գալիլեայէն սկսած ան
մկրտութենէն ետև՝ որ Յովհաննէս քարոզեց:
Յիսուսը որ Նազարէթէն էր՝ որ Աստուած անի- 38
կա օծեց Հոգւով Սրբով և զօրութիւնով, որ
պըտըտեցաւ բարիք ընելու, ու Սատանայէն բո-
լոր բռնըվածները բժշկելու. որովհետև Աստուած
իրեն հետն էր: Եւ մենք վկայ ենք ան ամէն բանե- 39
րուն՝ ինչ որ ըրաւ Հրէաստանի երկրին մէջ ու
Երուսաղէմի մէջ. որ ինքը փայտէն կախած սպան-
նեցին ալ: Աստուած անիկա երրորդ օրը յա- 40
րուց, և յայտնի ըրաւ անիկա. (չէ թէ բոլոր 41
ժողովուրդին, հապա մեզի՝ առաջուց Աստուծմէ
վկայ ըլլալու ընտրըվածներուս. որ մենք իրեն
հետ կերանք և խմեցինք ալ) իր մեռելներէն յա-
րութիւն առնելէն ետքը: Եւ ինքը պատըպարտեց 42
մեզի՝ որ ժողովուրդին քարոզենք ու վկայութիւն
տանք, թէ՝ Անիկա է Աստուծոյ սահմանած կեն-
դանիներուն և մեռելներուն դատաւորը: Անոր 43
բոլոր մարգարէները վկայ են՝ թէ ամէն իրեն հա-
ւատացողները իր անունովը մեղաց թողութիւն
կառնեն:

Ու Պետրոս երբոր աս խօսքերը կըխօսէր՝ Հո- 44
գին Սուրբ հանգչեցաւ ամէնուն վրայ, որոնք որ
ան խօսքը կըլսէին: Թլփատվածներէն Հաւա- 45
տացեալները ալ՝ որոնք Պետրոսին հետը եկած
էին, զարմացան՝ որ հեթանոսներուն վրայ ալ
Հոգւոյն Սրբոյ պարգևները կըլեցվին: Ինչու 46
որ կըլսէին անոնցմէ որ ուրիշ լեզուներով կըխո-
սէին, և Աստուած կըփառաւորէին: Անատեն 47
Պետրոս պատասխան տուաւ, Ո՞վ ջուր կրնայ քա-
րը արգիլել որ ասոնք չմկրտվին. որոնք Հո- 48
գին Սուրբն ալ ընդունեցին մեզի պէս: Ու հրա-
ման ըրաւ անոնց՝ որ Յիսուս Քրիստոսի անունո-

վը Մկրտվին · անատնը իրեն աղաչեցին որ քանի մը օր հոն մնայ ։

ԳԼ · ԺԱ ։

1 Առաքեալները և եղբայրները որ Հրէաստանի
կողմերն էին , լսեցին թէ հեթանոսներուն
2 Աստուծոյ խօսքը ընդուներ են ։ Ասոր
երբոր Պետրոս Երուսաղէմ եկաւ , թլփատուած-
ներէն նեղը հաւատացեալները իրմէն կրնդդճա-
3 Հարէին · և կըսէին թէ Անթլփատ մարդոց քովը
4 մտաւ՝ և անոնց հետ կերաւ ։ Պետրոս ալ սկսեցաւ
5 բանը կարգով պատմել անոնց , ու ըսաւ · Ես
Յոպպէ քաղաքը աղօթք կընէի՝ ու ապշութիւնով
տեսիլք մը տեսայ · մկ՝ սաման մը մեծ սաւանի պէս՝
չորս ծոպերէն երկինքէն կախուած իջաւ , ու մին-
6 չև ինծի հասաւ ։ Ուշ վրայ աչք տնկեր կընայ-
էի , ու տեսայ երկրի չորքոտանիները և գազան-
7 ները՝ ու սողունները և երկնից թռչունները ։ Եւ
ձայն մը լսեցի որ կըսէր ինծի , Ելիր Պետրոս՝
8 մորթէ ու կեր ։ Ասոր ես ըսի , Ո՛չ՝ Տէր ·
ինչու որ խառնակ կամ պիղծ բան մը ամենևին
9 մտած չէ իմ բերանս ։ Պատասխան տուաւ ինծի
երկրորդ անգամ ան ձայնը երկինքէն · Ուն որ
10 Աստուած սրբացուց՝ դուն խառնակ մի սեպեր ։
Ա՛յս իրեք անգամ եղաւ , ու նորէն բոլորը երկին-
11 քը վերցաւ ։ Եւ ահա՛յնհետև երեք մարդիկ
Կեսարիայէն ինծի խրկուած՝ եկած իմ եղած տա-
12 նըս առջևը կեցան ։ Հոգին ալ ինծի ըսաւ որ՝ ա-
նոնց հետը երթամ՝ և ամենևին տարակոյս չընեմ ·
ասոնք վեց եղբայրներն ալ ինծի հետ եկան , ու մը-
13 տան ան մարդուն տունը ։ Ան ան մեզի պատմեց՝
ինչպէս իր տանը մէջ հրեշտակը տեսաւ , որ կայ-
ներ էր՝ և իրեն կըսէր · Ա՛ռաքել խրկէ Յոպպէ՝ ու
14 կանչէ Սիմոնը՝ որ Պետրոս կըսուի · որ ան քեզի
խօսքեր պիտի խօսի , որ անով փրկուիս դուն՝ և
15 քու բոլոր տունդ ։ Եւ երբոր սկսեցի խօսիլ՝

Հոգին Սուրբը անոնց վրայ եկաւ , ինչպէս որ ա-
ռաջուց մեր վրայ : Ա՛ի՛տքս բերի Տէրոջը խօսքը՝ 16
որ կըսէր , Յովհաննէս ջուրով մկրտեց , բայց
դուք Հոգւով Սրբով պիտի մկրտուիք : Ուստի 17
թէ որ ան հաւասարապէս շնորհքը Աստուած անոնց
տուաւ՝ ինչպէս որ մեզի , երբոր Տէր Յիսուս
Քրիստոսի հաւատացին . ես ինչպէ՞ս կրնայի Աստու-
ծոյ դէմ դնել : Ան որ լսեցին՝ ձայներնին կարե- 18
ցին , ու կըփառաւորէին Աստուած և կըսէին .
Ինանկ է նէ Աստուած հեթանոսներուն ալ կե-
նաց համար ապաշխարութիւն տուաւ :

Ու Առաքեալներն ու վրայով եկած նեղութեանէն 19
ցիրուցան եղածները մինչև Փիւնիկէ ու Կիպրոս
և Անտիոքիա հասան . մէկու մը բան չէին խօսեր ,
միայն թէ Հրէաներուն : Անոնց մէկ քանիներն 20
էին Կիպրացի և Կիւրենացի մարդիկ՝ որոնք եր-
թոր Անտիոք մտան , Յոյներուն հետ կըխօսէին՝
Տէր Յիսուսը քարոզելով : Ու Տէրոջը ձեռքը 21
անոնց հետ էր , և հաւատացողներուն բազմու-
թիւնը Տէրոջը դարձաւ : Այս բանը անոնց վրայով 22
Երուսաղէմի եկեղեցիին ականջը հասաւ . ու
Բառնաբասը մինչև Անտիոք խրկեցին . որ երբոր 23
եկաւ՝ և Աստուծոյ շնորհքը տեսաւ , ուրախա-
ցաւ . ու կըսդրդռէր ամէնքն ալ՝ որ յօժար սիր-
տով Տէրոջը հետ կապված մնան : Որովհետև ինք 24
մարդ էր լի Սրբով՝
և հաւատքով լեցուն . ու Տէրոջը շատ ժողովուրդ
եվելցաւ : Եարը Բառնաբաս Տարսոն երթալ՝ Սօ- 25
ղոսը փնտրելու , և անիկա գտնալով Անտիոք
բերաւ : Ու եղաւ որ անոնք լման տարի մը եկե- 26
ղեցիին հետը ժող վրայեցան և շատ ժողովուրդ
սորվեցուցին . ու պիտի առաջ Անտիոքի մէջ ա-
շակերտները Քրիստոնեայ անուանեցին :

Ն օրերը Երուսաղէմէն մարգարէներ իջան 27
Անտիոք : Անոնց ՚ի մէկը Ագաբոս անունով եր՝ 28
խնացուց Հոգիին շնորհիւնովը , թէ մեկ մեծ սով

մը պիտի ըլլայ բոլոր աշխարհ. որ կազատիսին
29 ատենը եղաւ ։ Բայց ասպետները խօսք դրին՝
որ իրենցմէ ամէն մէկը ոչխարի որ կրնար , Հրէ-
աստանի մէջ ընկոզ եղեայրներուն կարօտու-
30 թիւնը խրկեն . որ ըսին ալ . երէցներուն խրկե-
լով Յառնաթասին և Սողոսին ձեռքովը ։

ԳԼ · ԺԲ ։

1 Ե ն ատենները Հրովդես թագաւոր ձեռք ձգեց
2 եկեղեցիէն Ջի քանիները չարչարելու ։ Եւ
Յակոբոսը Յօհաննէսին եղբայրը Թուրով սպան-
3 նեց ։ Տեսաց որ Հրեաներուն ուզածն է , ա-
նոր վրայ Պետրոսն ալ բռնեց ։ (ու բաղարջակե-
4 րին օրերն էին) անիկա երբոր բռնեց՝ բանտը ղը-
րաւ , և չորս չորսական զինուորներու ձեռքը տը-
ւաւ որ պահեն անիկա . և կուզէր զատիկէն ետեւ
5 Ժողովուրդին հանել անիկա ։ Ուստի Պետրոս
բանտին մէջը պահված էր , բայց անդադար եկե-
ղեցին աղօթք կըներ Աստուծոյ անոր համար ։
6 Հրովդես երբոր ուզեց անիկա բերել , ան գի-
շերը Պետրոս երկու զինուորներու մէջ կըքնա-
նար՝ երկու շղթայներով կապված , ու պա-
հապանները դուռնը առջև բանտը կըպահպանէ-
7 ին ։ Եւ ահա Տէրոջը հրեշտակը նկաւ վրան կայ-
նեցաւ . ու տանը մէջ լոյս մը ծագեց , ու Պետ-
րոսին կողը հնտեց՝ արթընցուց անիկա և ըսաւ ,
Հրատով ելլէր . ու շղթաները իր ձեռքէն վար
8 իյնան ։ Եւ հրեշտակը ըսաւ անոր . կապէ գօ-
տիդ , ու հողաթափներդ ոտքդ հագիր . ան ալ
անանկ ըրաւ . և ըսաւ անոր , Թաթիրդ վրադ առ՝
9 ու եկուր իմ ետեւէս ։ Ան ալ ելաւ ետեւէն կեր-
թար , և չէր գիտեր թէ ան հրեշտակէն եղած
բանը իրաւ է մի . ինչու որ կըսեպէր թէ երազ
10 կըտեսնայկոր ։ Եւ երբոր անոնք առաջին ու երկ-
րորդ գիշերապահները անցան , եկան մինչև
երկաթի դուռը , որ քաղաքին մէջը կըչանէր . որ

ան ինքներէնը բացվեցաւ անոնց , և առնէց մտան
մէկ փողոց մը անցան · հրեշտակն ալ չուտ մը իր-
մէն զատվեցաւ : Պետրոսն ալ երբոր ինքզինքին 11
եկաւ՝ ըսաւ . Հիմայ ճշմարիտ գիտեմ , որ Տէրը
իր հրեշտակը խրկեց՝ և ազատեց իս Հերովդէսին
ձեռքէն , ու Հրէից ժողովուրդին բոլոր սպասած
բաներէն : Ու մտմտալով եկաւ Մարկոս բսված 12
Յովհաննէսին մօրը Մարիամին տունը , ուր տեղ
շատերը ժող վված էին և աղօթք կընէին : Ու 13
տանը դուռը որ բացվեց՝ մէկ աղախին մը գնաց ա-
կանջ դնելու . որ անոր ձայնը Հռոդէէ էր :
Ու երբոր Պետրոսին ձայնը ճանչցաւ , ուրախու- 14
թենէն դուռը չի բացաւ՝ նէրս վազից պատմեց
թէ , Պետրոս դուռը կայներ է : Իսոնք ալ բսին 15
անոր , խենդեցար . բայց ինքը էվելըք ոսք կըկո-
խէր որ՝ անոնկ է . անոնք ալ կրսէին , Նոր հր-
րեշտակը պիտի ըլլայ : Հայց Պետրոս անդադար 16
կրշարէր . երբոր բացին՝ զինքը տեսան , և զար-
մացան : Հայց ան ձեռքով կրցուցքներէր անոնց՝ որ 17
մունճ կենան , ու պատմեց ինչպես որ Տէրը զին-
քը բանտէն հանեց , և բսաւ . Իսկ ա պատմեցէք
Յակոբին և եղբայրներուն . ու ելաւ ուրիշ տեղ
գնաց : Եւ երբոր առտու եղաւ՝ մեծ իրարանցում 18
մը կար զինուորներուն մէջը թէ՝ ինչ եղաւ արա-
դեօք Պետրոսը : Հերովդէս ալ երբոր ուզեց ա- 19
նիկա՝ և չի գտաւ , պահապանները քննելով՝ հր-
աման ըրաւ որ սպաննըվին . ինքն ալ Հրէաս-
տանէն Կեսարիա իջաւ , և հոն կրկենար :
Ու Հերովդէս խիստ սրդոդած էր Տիւրացիներ- 20
ուն և Սիդոնացիներուն հետ . անոնք ալ բոլո-
րը մէկտեղ իրեն եկան , ու Հռաստոս թագաւո-
րին սենեկապետին խօսք առնելով՝ հաշտու-
թիւն կուզէին . ինչու որ իրենց երկիրը անոր տէ-
րութենէն ապրուստ կառնէր : Ու՝ էկ նեւելի օր 21
մը Հերովդէս թագաւորական լաթերը հագեր ու
առեանը նստեր էր , և անոնց առնառաքանչիւն

22 կրներ ։ Հողովուրդներն ալ կրկանչէին թէ Ա-
23 տիկա Աստուծոյ ձա՛յն է ու չէ թէ մարդու ։ Եւ
շուտ մը Տէրոջը հրեշտակը զինքը զարկաւ , անոր
համար որ՝ Աստուծոյ փառք չի տուաւ , և որդ-
նալից եղաւ սատկեցաւ ։
24 Ու Աստուծոյ խօսքը կաճէր և կը շատնար ։
25 Barnabas ու Սաղոս Երուսաղէմէն դարձան եր-
բոր կրնան յանձնելէն պաշտօնը ըմբնցուցին , իրենց
հետը առած Յովհաննէսն ալ , որ Մարկոս կըսուէր ։

ԺԳ ։ ԺԴ ։

1 Ե Նտիորը եղած եկեղեցին քանի մը մարգարէներ
և վարդապետներ կային , Barnabas , ու
Շմաւոնը՝ որ Նիւգեր կըսուէր , և Ղուկիոս
Կիւրենացին , ու Մանայենը՝ Հերովդէս չորրոր-
2 դապետին ծիծաղը որդին , և Սաղոս ։ Երբոր ա-
տոնք Տէրոջը պաշտամունքին մէջ կին՝ և ծոմ կը-
բռնէին , Հոգին Սուրբ ըսաւ . Զատեցէք ինծի
Barnabas և Սաղոսը ան գործին համար , որուն
3 ես կանչեր եմ զատնք ։ Անոնք ծոմ բռնելով
և աղօթք ընելով ձեռք դրին անոնց վրայ ու
խրկեցին ։
4 Անոնք ալ Հոգին Սուրբէն խրկուած՝ Սելևկիա
5 իջան , ու անկէց նաւով Կիպրոս գացին ։ Եւ
Սալամիս որ հասան Հրէից ժողովարաններուն
մէջ Աստուծոյ խօսքը կը քարոզէին . ու Յովհաննէս
6 ալ իրենց սպասաւոր ունէին ։ Պետրանելով ան
բոլոր կղզին մինչև Պափոս , գտան մոգ մարդ
մը սուտ մարգարէ Հրէայ մը , որուն անունը
7 Barկիսուս էր ։ Ան ինքը բդեշխին փոխանորդին
հետն էր , որ խելքէր Սէրգիոս Պօղոս , խնամատուն
մարդ մը ։ որ ասիկա Barnabasին և Սաղոսին
8 կաղաչէր , կուզէր Աստուծոյ խօսքը լսել ։ Անոնց
դէմ դրաւ Ելիմաս ան մոգը , (ինչու որ ասանկ
կը թարգմանվի անոր անունը) որ կու զէր բդեշխին
9 փոխանորդը հաւատքէն ետ դարձունել ։ Հայց

Սողոս՝ (որ Պօղոս ալ կ՚ըսէ) Հոգւով Սրբով
լեցեալ՝ դէպ ի անոր նայեցաւ , և ըսաւ . Ով ա- 10
մէն կերպ խաբեբայութիւնով ու խորամանկու-
թիւնով լեցեալ Սատանայի որդի՛ թշնամի բոլոր
արդարութեան , չե՞ս մի դադրիր Տէրոջը շիտակ
ճամբաները ծռեցնելէն : Եւ ալ ահա՛ Տէրոջը ձեռքը 11
քու վրադ է , ու կրնր պիտի ըլլաս տեսնես մի արեւը
չի տեսնալու , և ան կէսին իրեն վրայ մէնուշ ու
խաւար մը իջաւ , և կրպրտրտէր առաջնորդ մը
կըմնտրռէր : Նաեւ երբ էջխին փոխանորդը աս 12
եղած բանները որ տեսաւ՝ հաւատաց , զարմանալով
Տէրոջը վարդապետութեանը վրայ :
Եւ Պօղոս և իր ընկերները Պափոսէն եկան , 13
եկան Պամիփիւլիայի Պերգէն . Յովաննէս անոնց-
մէ զատնցաւ՝ Երուսաղէմ դարձաւ : Ինքնիք ալ 14
Պերգէն գացին՝ եկան Պիսիդիայի Անտիոքը , և
շաբաթն օրը ժողովարանը մտան՝ նստան : Եւ 15
օրէնքները և մարգարէները կարդացվելէն ետև՝
ժողովրդապետները ղրկեցին իրենց և ըսին ,
Այրդիկ եղբայրնե՛ր՝ թէ որ դուք ժողովուրդին
յորդորանք տալու խօսքեր ունիք նէ՝ խօսեցէք :
Անոր վրայ կայնեցաւ Պօղոս , ձեռքը շարժեց և 16
ըսաւ . Ով Իսրայէլացի մարդիկ՝ և աստուածա-
վախներ , մտիկ ըրէք : Ես Իսրայէլի ժողովուր- 17
դիս Աստուածը՝ մեր հայրերնիս ընտրեց , ու ժո-
ղովուրդը բարձրըցուց եգիպտացւոց երկրին մէջ
օտարութեան ատենը , և բարձր թեւով անոնք
անկէ հանեց : Եւ քառասուն տարուան ժամանակի 18
չափ անապատին մէջը կերակրեց անոնք : Եւ յ9
Քանանի երկիրը եօթը ազգ քակեց , անոնց եր-
կիրը իրենց տալու որ ժառանգեն : Եւ անկէ և 20
տև չորս հարիւր հիսուն տարիի չափ դատաւոր-
ներ տալու անոնց մինչև Սամուէլ մարգարէն :
Եւ ետքը թագաւոր ուզեցին , և Աստուած Սիսին 21
որդին Սաւուղը տալու իրենց Բենիամինի ցեղէն
մարդ մը , քառասուն տարի : Եւ երբոր անիկա 22

փախեց՝ Դաւիթը հանեց իրենց թագաւոր, և
անոր վրայ վկայելով՝ ըսաւ. Ցեսսէին որդին
Դաւիթը գայ իմ սրտիս պէս մարդ, որ իմ բո-
23 լոր կամքս պիտի կատարէ։ Ասոր ցեղէն Աստուած
իր խոստումներին պէս Իսրայէլին Փրկիչ մը հանեց՝
24 Յիսուս. ինչպէս որ առաջ Յովհաննէս բոլոր
Իսրայէլի ժողովրդոյդ ապաշխարութեան մկրտու-
25 թիւնը քարոզեց, անոր գալէն մտածելէն առաջ։
Եւ երբոր Յովհաննէս իր ընթացքը լմնցուց,
ըսաւ. Ո՞վ կրնաք ինծի համար, որ ըլլամ.
ես անիկա չեմ. հապա ան ահա իմ ետեւէս կուգ-
26 ակոր, որ ես արժանի չեմ անոր ոտքին կօշիկ-
ները քակելու։ Արդիւնք եղբայրներ՝ Աբրահամի
ցեղին որդիքը, ու անոնք որ ձեր մէջը աստուա-
ծավախ են, ձեզի այս փրկութեան խօսքը խրկը-
27 ւեցաւ։ Հայց Երուսաղէմի բնակողները և անոնց
իշխանները չի ճանչցան անիկա՝ ու մարգարէնե-
րուն զուրցածները, որ ամէն շաբաթ օրերը կը-
կարդային՝ կատարեցին, վճիռը դատապարտելով
28 և մէկ մահուան պատճառ մըն ալ չի գտնելով՝
29 Պիղատոսէն ուզին սպաննել անիկա։ Ու երբ
բոլոր բաները լմնցուցին որ անոր համար գրված
30 էր, փայտէն վար իջուցին՝ գերեզմանը դրին։ Հայց
Աստուած անիկա յարուցց մեռելներէն. որ ինքը
31 շատ օրերով երևցաւ անոնց, որ իր հետը Գա-
լիլեացին Երուսաղէմ ելեր էին. որոնք հիմայ ա-
32 նոր վկաներն են ժողովուրդին դիմացը։ Մենք
ալ ձեզի աւետիս կուտանք այն խոստումը որ
33 հայրերնուս եղած էր։ Որ անիկա Աստուած մեր
վրայ կատարեց՝ որ անոնց զաւկըներն ենք, Յի-
սուսը յարուցանելով. ինչպէս որ երկրորդ սաղ-
մոսին մէջն ալ գրված է, Դուն իմ որդիս ես,
34 ես քեզ այսօր ծնայ։ Եւ որ անիկա մեռելներէն
յարուց, ու մէյմալ ապականութիւն չի պիտի
տեսնայ. ասանկ կըսէ, Թէ Վէրգի պիտի տամ
Դաւիթին հաւատարիմ սուրբ խոստումները.

Ընդ համար ուրիշ տեղ մըն ալ կըսէ , Պիտի 35
Թող չի տան՝ որ քու Սուրբդ ապականութիւն
տեսնայ : Բայց Դաւիթ իր ազգին մէջը ծառայու- 36
թիւն ըրաւ , և Աստուծոյ կամքովը մեռաւ , ու
իր հայրերուն քովը դրվեցաւ , և ապականութիւն
տեսաւ : Բայց անիկա որ Աստուած յարուց՝ ա- 37
պականութիւն չի տեսաւ : Ձայնիկ ըլլայ ձեզի 38
մարդիկ եղբայրներ , որ ասով ձեզի մեղաց թո-
ղութիւն կըքարոզվի : Եւ ան ամէն բաներէն որ 39
Մովսէսին օրէնքովը չի կրցիք արդարանալ , ա-
սով՝ ամէն մով որ հաւատայ , կարդարանայ :
Զգոյշ կեցիք , որ չըլլայ թէ ձեր վրայ գայ ան որ 40
մարգարէներուն մէջ ըսված է : Նայեցէք արհա- 41
մարհողներ՝ և զարմացէք , ու ոչընչացէք . ինչու-
որ գործ մը պիտի ընեմ ձեր օրերը , գործ մը՝ որ
անոր չի պիտի հաւատաք , թէ որ մէկը ձեզի պատ-
մէ :

Ու երբոր անկէց դուրս ելան՝ կաղաչէին որ 42
մէկալ շաբաթն ալ նոյն խօսքերը իրենց խօսին :
Եւ ժողովուրդը երբոր արձակեցաւ՝ ան Հրէա- 43
ներէն ու նորահաւատ աստուածապաշտներէն
շատերը Պօղոսին և Բառնաբասին ետևէն կեր-
թային . որոնք կրխօսէին անոնց հետը ու կրսո-
դրէին անոնք , որ միշտ Աստուծոյ շնորհքին մէ-
ջը կենան մնան : Եւ մէկալ շաբաթը որ եկաւ , 44
սկզբ թէ բոլոր քաղաքը ժող վըվեցաւ Աստուծոյ
խօսքը լսելու : Հրէաները երբոր տեսան ան բազ- 45
մութիւնը , նախանձով լեցվեցան , ու Պօղոսի
դէմ կըդնէին՝ հայհոյութիւն ը-
նելով : Ընդհակառակը Պօղոս և Բառնաբաս համար- 46
ձակութիւն մը ընելով՝ ըսին . Նախ ձեզի պէտք
էր Աստուծոյ խօսքը խօսիլ . բայց որովհետև դուք
անիկա մէկդի կրձգէքկոր , ու ինքզինքնիդ յա-
ւիտենական կենացը արժանի չէք սեպներկոր , ա-
հա մենք հեթանոսներուն կրդառնանք : Ինչու- 47
որ ասանկ պատուիրեց մեզի Տէրը . Քեզ հեթա-

նոսներուն լոյս դրի , որ դուն փրկուելեան պատ-
48ճառ ըլլաս մինչև երկրի ծայրը ։ Ես որ լսեցին
հեթանոսները՝ ուրախ կըլլային , և Աստուծոյ
խօսքը կըփառաւորէին . ու հաւատքի եկան անոնք
49որ յաւիտենական կենաց սահմանուած էին ։ Եւ
Տէրոջ խօսքը բոլոր գաւառը կըտարածվէր ։
50Հայց Հրէաները իրար անցուցին բարեպաշտ աղ-
նիւ կիներըը ու քաղաքին մեծերը . և Պօղոսին
ու Բառնաբասին վրայ հալածանք հանելով՝ ա-
51նոնք իրենց սահմաններէն դուրս ըրին ։ Իրենք
ալ ոտքերնուն փոշին անոնց վրայ թօթվելով՝ Ի-
52կոնիոն եկան ։ Ու աշակերտները ուրախութեա-
նով և Հոգւով Սրբով կըլեցվէին ։

ԳԻ · Ի՛Գ ։

1 Ե՛ւ եղաւ որ Իկոնիոնի մէջ անոնք միևտեղ
Հրէաներուն ժողովարանը մտան . ու անանկ
խօսեցան , մինչև որ հաւատաց շատ Հրէաներ և
2Յոյներ հաւատացին ։ Հայց անհաւատ Հրէաները
ոտք հանեցին՝ ու չար բաներ ձգեցին հեթանոս-
3ներուն սիրտը ան եղբայրներուն դէմ ։ Շատ
ատեն կըպարտուէին՝ Տէրոջը վրայ համարձակելով
որ վկայութիւն տուաւ իր շնորհքի խօսքերուն
նշաններ ու հրաշքներ ընել տալով անոնց ձեռ-
4քովը ։ Ու քաղաքին բազմութեանը մէջ բաժան-
մունք մը եղաւ . ոմանք Հրէաներուն կողմը և
5դան , ոմանք ալ առաքեալներուն ։ Երբոր հե-
թանոսները և Հրէաները իրենց իշխաններովը
վրանին վազեցին՝ անոնց նախատելու ու քարկոծե-
6լու , իրենք իմանալով և իկայոնացող քաղաքները
փախան՝ և Լիստրա ու Դերբէ՝ և ան գաւառին
բոլորտիքը , ու հոն աւետարանը կըքարոզէին ։
7 Եւ մէկ Լիստրացի մարդ մը նստեր էր՝ ոտքերովը
տկար , մօրը փորէն կաղ ծնած , որ բնաւ քալած
8չէր ։ Այսկա Պօղոսին խօսքերը մտիկ կընէր . որ
ինքն ալ նայեցաւ անոր՝ և տեսաւ որ բըրնտանալու

հաւատաք ունի , ամուր ձայնով մը ըսաւ , Մ՚եր 9
Տէր Յիսուս Քրիստոսի անունովը կրսեմ քեզի՝
Ելիր կայնէ շիտակ ոտքիդ վրայ . ան ալ կրվազ-
վռզէր ու կերթար : Եւ ժողովուրդները Պօղո- 10
սին ըրածը տեսնալով՝ ձայներնին վերուցին ու
Լիկաոնարէն ըսին . Աստուածները մարդու նը-
մանութիւնով մեզի իջեր են : Ու Բառնաբասին 11
Պիոս կրկանչէին , և Պօղոսին Հերմէս . ինչու որ
ասիկա էր գլխաւոր խօսողը : Պիոսին քուրմն ալ 12
որ քաղքին առջևը կրկեցար , ցուլեր և պսակներ
հասցուց դուռը բազմութիւնովը մկսեցաւ , կուզեր
որ զոհ ընէ : Բառնաբաս ու Պօղոս առաքեալներն 13
ալ երբոր լսեցին , իրենց լաթերը պատռելով՝
դուրս վազեցին բազմութեան մէջէն . կրկանչէին ,
ու կըսէին . Ա՚րդիկ՝ ատ ինչ կընէքկոր . մենք 14
ալ ձեզի պէս կիրք ունեցող մարդիկ ենք , ու ձե-
տարանը կրքարոզենք ձեզի՝ որ ատանկ փուճ բա-
ներէն կեղծանի Աստուծոյն դառնաք , որ ինքը
ըսաւ երկինքը և երկիրը՝ ու ծովը , և բոլոր ա-
նոնց մէջի եղածները : Որ անցած դարերուն մէջ 15
թող տըւաւ ամէն ազգերուն իրենց ճամբաները
երթալ : Այսու ամենայնիւ ինքզինքը առանց 16
վկայութիւնի չի թողուց , բարերարութիւնով
երկինքէն ձեզի անձրևներ՝ և պտղաբեր եղանակ-
ներ տալով , կերակուրներով ու ուրախութիւ-
նով ձեր սիրտերը լեցուն ելով : Ու ասանկ բսե- 17
լով՝ հազիւ կրցան ժողովուրդները դադրեցնել ,
որ իրենց զոհ չընեն , հապա ամէն մկկը երթան
տեղերնին :

Եւ իրենց պատրաստած ու սորվեցուցած տաներ՝ 18
Անտիոքէն և Իկոնիոնէն եկան Հասան Հբեսնե-
րը . և իրենք որ համարձակ վիճաբանութիւն կը-
նէին՝ ժողովուրդները խաբեբրեցին անոնցմկ մկ ղի
կենալ . ու կրսեին , թէ՝ Աստուած մկ ճշմարիտ բան
մը չեն ըսեր , հապա բոլոր զուրցածնին սուտ է .
և Պօղոսը քարկոծելով քաղքէն դուրս քաշեցին ,

19 ու անիկա մեռած կըկարծէին : Եւ աշակերտները
երբոր իր գովը բոլըրվեցան , եկաւ քաղաքը մը-
տաւ · ու ետևի օրը Բառնաբասին հետ մեկտեղ
20 Դերբէ եկաւ : Ան քաղաքին մէջը աւետարանը
քարոզելով , և շատերը աշակերտ ընելով՝
Լիւստրա , ու Իկոնիան և Անտիոքիա դարձան ·
21 աշակերտներուն սիրտը հաստատելով և յորդո-
րելով՝ որ հաստատ մնան հաւատքի մէջ · և որ՝
շատ նեղութիւններով պէտք է մեզի Աստուծոյ
22 թագաւորութիւնը մտնալ : Անոնց ամէն մէկ ե-
կեղեցիներուն երէցներ ձեռնադրեցին · աղօթք ը-
նելով ու ծոմ բռնելով Տէրոջը յանձնեցին ա-
23 նոնք , որուն որ հաւատացեր էին : Եւ Պիսիդի-
24 պային մէջէն պտըտելով՝ եկան Պամփիլիա : Պեր-
գէնի մէջն ալ Տէրոջը խօսքը խօսելէնետև՝ իջան
25 դէպի Աթալիա : Անկէց ալ նաւով Անտիոք գա-
ցին , ուսկից որ Աստուծոյ շնորհքին յանձնըված
26 էին ան գործին համար որ կատարեցին : Երբոր
եկան՝ եկեղեցին մէկտեղ ժողվեցին , պատմեցին
որչափ բան Աստուած ըրեր էր իրենց · և որ՝ հե-
27 թանոսներուն հաւատքի դուռ բացեր էր : Ո՞ հան
շատ ժամանակ աշակերտներուն հետը կեցան :

ԻԱ · ԺԵ ։

1 Եւ մէկ քանիները Հրէաստանէն իջած՝ եղբայր-
ներուն կըսորվեցնէին ու՝ թէ որ Մովսէ-
սի օրինացը պէս չի թլփատվիք նէ , չէք կրնար
2 փրկվիլ : Ուստի Պօղոս և Բառնաբաս անոնց
դէմ շատ մը հակառակութիւն ու վէճ ընէլէն
ետքը , վճռեցին որ՝ Պօղոսը ու Բառնաբասը և
մէկքանիներն ալ անոնցմէ Երուսաղէմ երթան ա-
ռաքեալներուն ու երէցներուն այս վէճին համար :
3 Անոնք ալ եկեղեցիէն ճամբայ դրված՝ կըպտըտ-
ուէին Փիւնիկէ և Սամարիա , հեթանոսներուն
դարձի գալը կըպատմէին , և մեծ խնդում կուտային
4 բոլոր եղբայրներուն : Եւ երբոր Երուսաղէմ

Հասան՝ եկեղեցիէն ու առաքեալներէն և երէցնե-
րէն ընդունվեցան . և պատմեցին որչափ բան որ
Աստուած իրենց հետը բրած էր : Փարիսեցւոց 5
աղանդէն հաւատացեալներէն ոմանք ելան ու կը-
սէին թէ՝ Պէտք է թլփատել անոնք , և ապրսպը-
րել որ Մովսէսի օրէնքը պահեն :

Եւ ժողվվեցան առաքեալները ու երէցները աս 6
բանս տեսնալու համար : Եւ շատ վիճաբանու- 7
թիւն ըլլալէն ետև՝ Պետրոս ոտքի վրայ ելաւ , ու
ըսաւ անոնց . Արդիկ եղբայրներ՝ դուք ձեզմէ
գիտէք որ շատ օրերէն առաջ ձեր մէջէն Աստ-
ուած կ՚ընտրեց , որ իմ բերնովս հեթանոսները
աւետարանի խօսքին լսեն և հաւատան : Եւ ան 8
Սրտագէտ Աստուածը վկայեց անոնց վրայ՝ Հո-
գին Սուրբը տալով անոնց , ինչպէս որ մեզի . ու 9
մեկ տարբերութիւն մը չըրաւ անոնց և մեր մէջը ,
հաւատքով մաքրելով անոնց սիրտը : Ուստի ին- 10
չո՞ Աստուած կը փորձէք , աշակերտներուն վիզը
անանկ լուծ մը դնելով , որ անիկա ո՛չ մեր հայ-
րերը՝ ո՛չ ալ մենք կրցանք վերցնել : Հապ Տէր 11
Յիսուս Քրիստոսի շնորհքովը կը հաւատանք որ
կրփրկվինք , ասանկ ալ անոնք :

Ողջ ժողովուրդը լուռ կեցաւ , և մեկ կընչ- 12
ին Բառնաբասին ու Պողոսի պատմածներուն ,
որ Աստուած ինչ նշաններ ու հրաշքներ ըրեր է
հեթանոսներուն մէջ անոնց ձեռքովը : Եւ անոնք 13
խօսքերնին կտրելէն ետև՝ Յակոբոս պատասխան
տուաւ՝ ու ըսաւ , Արդիկ եղբայրներ՝ ինծի
մեկ ըրէք . Հ Սիմեոն պատմեց , թէ Ինչպէս ա- 14
ռաջուց Աստուած տես եկաւ , որ հեթանոսներէն
ժողովուրդ առնէ իր անունին համար : Եւ ասոր 15
մարգարէներուն խօսքերն ալ կըմիաբանին . ինչ-
պես որ գրված է . Ետքէ ետև պիտի դառնամ , 16
ու Դաւթին փլված բնակարանը պիտի շինեմ .
և անոր կործանածը նորէն պիտի շինեմ՝ և կա-
նեցունեմ անիկա . որ մնացած մարդիկը Տէրը 17

փնտրեն , և բոլոր հեթանոսները որոնց վրայ որ
իմ անունս գրված է , կրօք Տէրը · որ ինքը աս
18ամէն բաները կընէ , Յայտնի է Տէրոջը իր գործ-
19քերը աշխարհիս սկիզբէն հետէ : Ասոր համար ես
ալ իրաւունք կըսեպեմ՝ նեղութիւն չի տալ ա-
նոնց որ հեթանոսներէն Աստուծոյ կըդառնան :
20Հապա թուղթ մը տալ անոնց կուռքի կերակուր-
ներէն եւ քաշվելու՝ և պոռնկութիւն գործելէն՝
21ու մեռած բաներէն՝ և արիւնէն : Ինչու որ
Մովսէս ալ առջի նախնիքներէն հետէ ամէն քա-
ղաքի մէջ գիներ քարոզողները ունի՝ և ժողով-
բաններուն մէջ ամէն շաբաթ օր կըկարդացվի :
22 Ընտեները առաքեալներուն և երէցներուն բոլոր
եկեղեցիին աղէկ երևցաւ որ՝ իրենցմէ քանի մը
հոգի ընտրած Անտիոք խրկեն Պօղոսին ու Բառ-
նաբասին հետ Յուդան՝ Բարսաբա ըսվածը , և
23Շիղան , աս գլխաւոր մարդիկը · եղբայրներուն
աս բաները գրելով անոնց ձեռքովը · առաքեալներ
ու երէցներ և եղբայրներ՝ Անտիոքի ու Սիւրիայի
և Կիլիկեայի մէջի հեթանոսներէն եղած եղ-
24բայրներուդ ողջոյն : Որովհետև լսեցինք որ՝ ո-
մանք իրէ մեր կողմանէ ձեզ իրար անցուցեր
էին խօսքերով՝ ձեր անձերը խախտելով , ըսելով
ԸՆԴ ՊԷՏ Է ԹլփատվիլՔ՝ ու օրէնքը պահել · որ
25անոնց մենք ասանկ հրաման չըրինք : Ան եղի միա-
բան ժող վըճռածներնուս աղէկ երևցաւ , որ ընտ-
րըված մարդիկ խրկենք ձեզի Բառնաբաս և Պօ-
26ղոս մեր սիրելիներուն հետը · անանկ մարդիկ՝ ո-
րոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունին հա-
27մար իրենց անձերնին մատնեցին : Ուստի խրկե-
ցինք Յուդան և Շիղան , որ իրենք ալ բերնով
28նոյն բանը չէղի զուըցեն : Ինչու որ՝ աղէկ երևցաւ
Հոգին Սուրբին ու մեզի ալ՝ ձեր վրայ էվել բեռ
չի դնել , միայն թէ աս հարկաւորներէս ի զատ ,
29որ ետ կենաք կուռքերուն զոհվածը ՈՒԽԼԵՆ՝ և
արիւնէն՝ ու խըղըվածէն , և պոռնկութիւն

ընելէն · որ աս բաներէն ինքզինքնիդ պահե-
լովին՝ աղէկ պիտի ընէք · Ողջ եղէք :
Անոնք ալ ճամբայ ելած՝ իջան Անտիոք , և 30
ժողովուրդը մէկտեղ ժողվելով թուղթը տրվին :
Եւ երբոր կարդացին՝ ուրախացան ան մխիթա- 31
րական բանին վրայ : Յուդան ու Շ Իլան՝ որ ի- 32
րենք մարգարէ ալ էին , շատ խօսքերով մխիթա-
րեցին եղբայրները՝ և հաստատեցին : Եւ ատեն 33
մը հոն կենալէնետև՝ եղբայրները խաղաղա-
թեամբ ճամբու դրին դէպի առաքեալներուն :
Բայց Շ Իլային աղէկ երևցաւ հոն մնալ : Պօղո- 34
սը ու Բառնաբասն ալ Անտիոքին մէջը կըպըտը- 35
տէին Աստուծոյ խօսքը սորվեցնելու ու քարո-
զելու , և շատերն ալ հետերնին :
Եւ քանի մը օրերէն ետքը Պօղոս Բառնաբասին 36
ըսաւ . Դառնանք և նորէն պըտըտինք եղբայրնե-
րուն քովը ամէն մէկ քաղաքները , ուր որ Տէրոջը
խօսքը քարոզեցինք , թէ անոնք ի՞նչ բըռ-
նած են : Բառնաբաս կուզեր որ Յ՝ովհաննէսն ալ 37
առնեն , որ Մ՝արկոս կըսվէր · բայց Պօղոս կա- 38
շաչէր որ Պամփիւլիայի մէջ իրենցմէ զատվողը՝
ու իրենց հետը գործի չեկողը հետերնին չառնեն :
Եւ Բէրնաբէն կռիւ մը եղաւ՝ մինչև որ անոնք 39
մէկզմէկէ զատվեցան · Բառնաբաս Մ՝արկոսը
առաւ՝ նաւով կ՝իյլորս գնաց : Պօղոսն ալ Շ Իլա- 40
ան ընտրեց՝ եղաւ , եղբայրներէն Աստուծոյ
շնորհացը ցանձնըվելով : Եւ Ասորիներուն ու 41
Կիլիկեցիներուն կողմերը կըպըտրտէր , և կըշհաս-
տատէր եկեղեցիները :

ԳԼ · ԺՕ ։

Ակաւ Պերբէ ու Իւստրա հասաւ . և ահա 1
հոն աշակերտ մը կար Տիմոթէոս անուն , որ
հաւատացեալ Հրէայ կնոջ մը զաւակ էր , և
հայրը՝ Հեթանոս : Որ ասիկա Իւստրացի ու Ի- 2
կոնացի եղբայրներէն ալ Բաբէ վկայված էր : Պօ- 3

դոս ուղեց ասիկա իր հետը տանել , և առաւ
թլփատեց անիկա ան տեղվանքը եղած Հրեանե-
րուն համար . ինչու որ ամէնքն ալ գիտէին անոր
4 Հայրը՝ որ Յունաստան էր : Երբոր ալ քաղաքներէն
կանցնէին , Երուսաղէմ եղած առաքեալներէն ու
երէցներէն ապրսպրըված հրամանները կաւան-
5 դէին անոնց որ պահեն : Եկեղեցիները ալ հա-
ւատքի մէջ կըհաստատվէին , և օրէ օր անոնց
համրանքը կէվելնար :
6 Եւ Փռիւգիա ու Գաղատացոց կողմերը պըտը-
տեցան՝ Հոգին Սուրբէն արգիլվելով որ Ասիոյ
7 Խօսքը Ասիային մէջը խօսին : Հայց Միսիա
այի քովերը որ եկան՝ կուզէին դէպի Բիւթանիա
երթալ . և Յիսուսի Հոգին թող չի տուաւ ի-
8 րենց : Եւ Միսիայէն անցան՝ Տրովադա իջան :
9 Եւ հոն գիշերը Պօղոսին տեսիլք մը երևցաւ .
Մակեդոնացի մարդ մը կայներ կաղաչէր իրեն՝
10 ու կըսէր . Մակեդոնիա անցիր , մեզի օգնէ : Եւ
երբոր ան տեսիլքը տեսաւ՝ շուտ մը ուզեցինք
Մակեդոնիա ելլալ , հասկընալով որ Տէրը մեզ
կըհրաւիրէ աւետարան քարոզել անոնց :
11 Եւ Տրովադայէն ելանք՝ շիտակ Սամոթ-
րակէ գացինք , ու վաղվան օրը Նոր քաղաքը .
12 ու անկէց ալ Փիլիպպուսը , որ է Մակեդոնացոց
վիճակին առաջին քաղաքը՝ գաղթականներուն
մէկ երկիրը . Կողովնիա ըսված . և ան քաղքին
մէջ քանի մը օրեր կանկ առինք մենք : Հա-
13 բաթն օրը քաղաքէն դուրս ելանք՝ գետին եզեր-
քը , ուր որ սովորութիւն ունէին աղօթք ընե-
լու . ու նստեցանք ժող վըված կնքտոցր հետ կը-
14 խօսէինք : Եւ Լիդիա անուն կնիկ մը ծիրանի բան
ծախող՝ Թիւատիր քաղաքէն Աստուծմէ վախցող
մէկ մը , մտիկ կընէր . որ անոր սիրտը Տէրը բա-
ցաւ՝ Պօղոսին ըսածներուն խելքը պահելու :
15 Եւ երբոր ինքը՝ և իր տունը մկրտվեցաւ , կա-
ղաչէր ու կըսէր . Թէ որ իս Տէրոջը հաւատացեալ

լը կրսեպէք նէ՝ իմ տունս մտէք բնակեցէք . և բոնեց տարաւ մեզ :

Եւ եղաւ որ երբ մենք աղօթքի կերթայինք՝ 16 մեզի մէկ աղախին մը պատահեցաւ , որ Ա՛պոլոնի դևը ինքը բոներ էր . որ կախարդութիւնովը իր տէրմանքներուն շատ վաստակ կբերէր : Ա՛սիկ 17 կա Պօղոսին և մեր ետևէն էյնալով կըգոռար՝ ու կըսէր . Ա՛ս մարդիկը Ք՛արձրեալ Ա՛ստուծոյ ծառաներն են , որ ձեզի փրկութեան ճամբան կըքարոզեն : Եւ ասա բանը շատ օրեր կընէր . Պօղոս 18 բարկանալով՝ դարձաւ ու ըսաւ ան դևին , Ի՛սուս Ք՛րիստոսի անունովը հրաման կուտամ քեզի , Ելիր ատկէց . և նոյն ժամին եղաւ դևը : Երբոր 19 տեսան անոր տէրմանքը՝ որ իրենց վաստակին յոյսը կտրեցաւ , Պօղոսը ու Շ՛իղան առին՝ ա՛տեանը քաշեցին իշխաններուն առջև : Եւ տարին 20 անոնք զօրագլուխներուն քովը՝ ըսին , Ա՛ս մարդիկները մեր քաղաքը իրար կանցուցնեն կոր . իրենք Հ՛րէայ են , և մեզի օրէնքներ կըսորվեցունեն՝ որ 21 արժան չէ մեզի ընդունել , ո՛չ ալ բնել . ինչու որ Հ՛ռոմէացի են ք : Եւ բազմութիւնը անոնց 22 վրայ դիմվեցան . զօրագլուխներն ալ իրենց լաթերը պատառեցին , և հրաման ըրին որ ծեծ զարնեն . և շատ վէրքեր դնելով անոնց վրայ՝ բանտը 23 ձգեցին , պատուիրելով բանտապետին որ զգուշութեամբ պահէ անոնք : Ան ալ ասանկ հրաման 24 որ առաւ՝ անոնք ներսի բանտը դրաւ , և ոտքերնին ալ փայտի մէջ ամրցուց :

Եւ կէս գիշերին Պօղոս ու Շ՛իղա աղօթք 25 կընէին և Ա՛ստուած կօրհնէին , ու բանտարգեալներն ալ մտիկ կընէին իրենց : Եւ յանկար- 26 ծակի մեծ շարժ մը եղաւ , անանկ որ բանտին հիմները դընտցին . և ան կէտին ամէն դուռները բացվեցան , ու ամէնուն կապերը արձկվեցան : Ա՛նտապետը երբոր արթնցաւ՝ և բանտին դուռ- 27 ները բացված տեսաւ , թուրը քաշեց՝ և կուզէր

ինքզինքը սպաննել , կըկարծէը որ կապտածնե-
28րը փախեր են : Պօղոս ալ ամուր ձայնով կանչեց
ու ըսաւ . Դուն քու անձիդ վնաս մը մի՛ ըներ .
29ինչու որ ամէնքս ալ հոս ենք : Ա՛րագ մը ուզեց
և ներս վազեց , ու զարհուրելով Պօղոսին և
30Շ ղոային առջեւը ինկաւ . և անոնք դուրս բերե-
լով ըսաւ . Պարոններ՝ ինծի ի՛նչ պէտք է ընել
31որ փրկըվիմ : Անոնք ալ ըսին . Հաւատա՛ Տէր
Յիսուս Քրիստոսի , ու պիտի փրկըվիս դուն՝ և
32քու բոլոր տունդ : Եւ Տէրոջը խօսքը խօսեցան
անոր , ու ան ամէնուն՝ որ իր տունին մէջն էին :
33Եւ առաւ անոնք գիշերուան նոյն ժամուն՝ խոցելը-
նին լըւաց , և շուտ մը մկրտեցաւ ինքը ու բոլոր
34իրենները : Եւ անոնք իր տունը տարաւ , անոնց
առջեւը սեղան դրաւ , և բոլոր տունովը ուրախ
35եղաւ՝ Հաւատացեալ : Եւ երբոր առտու
եղաւ , զօրապետները խրկեցին սպասաւորները՝
36ու ըսին . Ըրձըկէ առ մարդիկը : Ռանտապետն
ալ ան խօսքը Պօղոսին պատմեց , Թէ զօրագլուխ-
ները խրկեցին որ արձըկվիք . ուստի ելէք և խա-
37դաղութեամբ գացէք : Պայց Պօղոս ըսաւ անոնց .
Մ՚եզի յայտնապես ծեծելով՝ որ Հռովմայեցի
անմեղ մարդիկ ենք , բանտը ղրկին , ու հիմայ
գաղտնի մի կրՀանեն մեզ . աստուկ չէ , Հապա
38թող բուն իրենք գան մեզ Հանեն : Եւ սպասա-
ւորները պատմեցին զօրագլուխներուն ան խօս-
քերը . երբոր լսեցին Թէ Հռովմայեցի են՝ խիստ
39վախցան , ու եկան աղաչեցին անոնց : Եւ երբոր
դուրս Հանեցին՝ աղաչեցին անոնց որ ան քաղաքէն
40երթան : Անոնք ալ բանտէն ելան Լիւդիային
տունը մտան , ու եղբայրները տեսան՝ մխիթա-
րեցին անոնք , և գացին :

ԳԼ. ԺԲ։

1 Եւ Ամփիպողիսէն ու Պողընիայէն պըտըռտելով՝
Թեսաղոնիկէ եկան , ուր որ Հրէաները ժո-

ղովարան մը ունէին : Պօղոս ալ սովորութեանը 2
պէս անոնց քովը մտաւ , և իրեք շաբաթ օր խօսե-
ցաւ անոնց հետ գիրքերէն : Կբանար և աւդև- 3
նէին կըդնէր ԹԷ , Պէտք էր Քրիստոսի չարչար-
վիլ ու մեռնիլներէն յարութիւն առնել , և ԹԷ
Յիսուսը Քրիստոսն է , որ ես ձեզի կըպատմեմ :
Եւ անոնցմէ ոմանք հաւատացին , ու Պօղոսին և 4
Հ Իղային հետ միացան . բայց բարեպաշտ Յոյ-
ներէն խիստ շատ կար , և գլխաւոր կնքոջմէ ալ
քիչ չէ : Հայց Հրէաները նախանձեցան , և քա- 5
նի մը անշահ անօրէն մարդիկ առած՝ բազմու-
թեամբ քաղաքը տակնուվրայ բրին . և Յասովնին
տանը առջևը դիմելնուվ՝ կուզէին անոնք ամբոխին
դիմացը բերել : Եւ երբոր անոնք չի գտան նէ 6
Յասովնը ու մէկ քանի եղբայրները քաղաքապետ-
ներուն դիմացը քաշեցին , կանչվըտելով ԹԷ
անոնք որ աշխարհը տակնուվրայ բրին իրենք հոս
ալ հասան . որ իրենք Յասովնը ընդուներ է , և 7
ասոնք ամէնը կայսրին հրամանին դէմ կգոր-
ծեն , Յիսուս մէկ Թագաւորմընէ կըսեն : Եւ 8
իրար անցուցին ժողովուրդը ու քաղաքապետնե-
րը , որ ասբաները կըլսէին : Հայց երբոր Յա- 9
սովնէն և ուրիշներէն երաշխաւորը առին՝ ետ
տրվին անոնք որ երթան : Յակայն եղբայրները 10
շուտ մը գիշերով Պօղոսը և Հ Իղան Ներիա
խրկեցին . անոնք երբոր հոն հասան՝ Հրէից ժո-
ղովարանը գացին : Ինչու որ՝ ասոնք ԹԱճառգոնի- 11
կեին մէջ եղողներէն շատ ազնիւ մարդիկ էին ,
որ Աստուծոյ խօսքը բոլոր սրտանց ընդունեցին .
ամէն օր գիրքերը կըքննէին ԹԷ՝ ասբաները ա-
սո՞նկ է մի : Եւ անոնցմէ շատերը հաւատացին , 12
և Յունաց պարկեշտ կիներէն՝ ու մարդիկներէն
քիչվոր չէ : Հայց երբոր իմացան ԹԱճառգոնիկեցի 13
եղող Հրէաները որ Ներիայի մէջ ալ Աստուծոյ
բանը քարոզվեցաւ Պօղոսէն՝ հոն ալ եկան ժո-
ղովուրդը դրդելու ու իրար անցուելու : Ընա- 14

տեղը եղբայրները շուտ մը Պօղոսը խրկեցին որ
մինչև ծովեզերքը երթայ. և Հ Հոգին ու Տիմո-
15 թէոսը հոն մնացին։ Եւ անոնք որ Պօղոսը կը-
տանէին մինչև Աթենք բերին անկից. և իրմէն
հրաման առին Հ Հոգւոյն ու Տիմոթէոսին՝ որ
շուտով իրեն գան. և գացին։
16 Եւ Պօղոս Աթենքի մէջ անոնց որ կրպասէր՝
իր հոգին կրտանջվէր ներսի դին, որ քաղաքը
17 կրռապաշտութեան մէջ կրտեսնար։ Եւ ժողո-
վարանին մէջը Հրեաներուն կրխօսէր ու բաթե-
պաշտ մարդոց, և ամէն օր շուկաներուն մէջը որի
18 որ պատահէր նէ։ Ա՛կ քահիները Եպիկուրեան
և Մտոյիկեան փիլիսոփաներէն իրեն դէմ հակա-
ճառութիւն կրբնէին և ամանք ալ կրսկսէին, Ա՛ս
սերմանաքաղը ի՞նչ ըսել կուզէ, ուրիշներն ալ
կրսէին Թէ Ակբևաց որ քանի մը օտար կուռքերու
քարոզիչ է. ինչու որ Յիսուսը ու յարութիւնը
19 կաւետարանէր։ Եւ առին անկիա Արիոպագոսը
տարին, և կրսէին. Կրնա՞նք մի իմանալ Թէ ի՞նչ
էատ նոր վարդապետութիւնը՝ որ դուն կրբարո-
20 զեսկոր։ Ա՛ր ականջին մէկ օտար բան մը կրբե-
րեսկոր. կուզենք դիտնալ Թէ ի՞նչ պիտի ըլլայ
21 ատ. (ինչու որ Աթենացիները ամէնքն ալ ու հոն
կեցող օտարականները ուրիշ բանի չէին պարա-
պեր, միայն Թէ նոր բան զրբցելու կամ լսելու.)
22 Պօղոս Արիոպագոսին մէջը կայնեցաւ՝ ու ըսաւ,
Ով Աթենացի մարդիկ՝ ամէն կողմանէ կրնայեր
23 մը կրտեսնամ ձեզ։ Որովհետև ես պրպտելով
ու ձեր պաշտամունքը տեսնալով՝ մէկ կուռքի սե-
ղան մը գտայ, որուն վրայ գրված էր՝ Անծանօթ
Աստուծոյն. ուրեմն անիկա որ դուք չի ճանչնալով
24 կրպաշտէք, ես նոյնը ձեզի կրքարոզեմ։ Աստ-
ուած՝ որ աս աշխարհը ըրաւ և անոր մէջի բոլոր
բաները, անիկա երկինքի և երկրի Տէրն է. ձե-
25 ձեռագործ տաճարներու մէջ կրբնակի, ոչ ալ
մարդոց ձեռքովը Կրպաշտըվի՝ բանի մը կարօտի

պէս · ինքը կուտայ ամէնուն կեանք ու շունչ՝ և
ամէն բան : Ազգը մարդոց ցեղը մէկի մը արիւնէն 26
ըրաւ՝ որ բոլոր երկրի երեսին վրայ բնակին · ա-
ռաջուց գրված ժամանակներ հաստատեց՝ և անոնց
բնակութեան սահմանները , Աստուած փնտրե-
լու · որ ըլլայ՝ թէ գինքը քննեն ու գտնան · թէ 27
պէտ մը ամէն մէկէս ալ հեռու չէ : Ինչու որ՝ 28
անով կապրինք և կըշարժինք ու կանք , ինչպէս
որ ձեր բանաստեղծներէն մէկ քանիներն ալ ըսին ,
թէ Մենք անոր ցեղէն ալ ենք : Ուստի՝ որով- 29
հետև Աստուծոյ ցեղէն ենք՝ պէտք չէ որ ա-
նանկ սեպենք , թէ Աստուածութիւնը նման ըլլայ
ոսկիի կամ արծաթի կամ քարի , որ մարդուս
վարպետութիւնովը և հնարքովը փորված շինված
է : Բայց Աստուած ազիտութեան ատենները 30
անտես ընդուն , հիմայ ան կըպատուիրէ մարդիկ-
ներուն՝ որ ամէն մէկը ապաշխարէ : Ինչու որ 31
ինքը մէկ օր մը դրաւ , որ անաստեն աշխարհս
արդարութիւնով պիտի դատէ՝ ան մարդուն ձեռ-
քովը , որ անոր ինքը սահմանեց անոնուն հաւա-
տացնելուս ատ բոլոն մեռելներէն անիկա յարու-
ցանելով :

Երբոր մեռելներուն յարութիւնը լսեցին՝ ոմ- 32
անք ծաղր կընէին . ևկեսերին ալ կըսէին՝ Աս
բանիդ համար ետքէն մէկ ընինք քեզի : Եւ ըսը 33
ալ Պողոս ելաւ անոնց մէջէն գնաց : Եւ քանի մը 34
մարդիկ ալ իրեն յարելով հաւատացին . որոնց
հետ էր Դիոնեսիոս Արիոպագացին , և Դամա-
րիս անունով կնիկ մը , ու անոնց հետ ուրիշներ
ալ :

ԳԼ · ԺԸ :

Ասկէ ետև Պողոս Աթենացիներէն զատվելով՝ 1
Կորնթոս եկաւ , և մէկ Հրէայ մը գտաւ Ա- 2
կիւղաս անունով ազգով Պոնտոսցի , որ նոր ե-
կեր էր Իտալիայէն՝ և իրեն Պրիսկիլա կնիկը ,

(Պաւղոսին հրամանին համար՝ որ բոլոր Հրեայ-
ները Հռովմայեցի դուրս հանեց) ալ անոնց քովը
3 կրկնեար ։ Եւ որովհետեւ ինքը նոյն արհեստէն
էր՝ անոնց քովը կեցաւ , և կրբաներ . ինչու որ՝
4 արհեստովնին վրան կարող էին ։ Եւ ամէն շա-
բաթ օրերը ժողովարանին մէջ կրխօսէր , և
Հրեաները ու Յունաններուն կրսեղևկացուներ ։
5 Երբոր Շիղա և Տիմոթէոս Մակեդոնիայէն ի-
ջան՝ Պօղոսին հոգին էվիրօք վառած ըլլալով ,
Հրեաներուն վկայութիւնով կրհաստատէր թէ
6 Յիսուսը Քրիստոսն է ։ Անոնք ալ երբոր դէմ
կեցան՝ ու կրհայհոյէին , ինքը լաթերը թօթվեց
և ըսաւ անոնց . Ձեր արիւնը՝ ձեր գլուխը , ես
անպարտ եմ , ասկէ ետև հեթանոսներուն կեր-
7 թամ ։ Եւ անկէց գնաց մտաւ մէկու մը տունը ,
որուն անունը Տիտոս Յուստոս էր՝ Աստուածա-
պաշտ հասկ ը . որ անոր տունը ժողովարանին
8 մօտ էր ։ Կրիսպոս՝ ան ժողովարանին մեծը բոլոր
իր տունովը հաւատաց Տէրոջը . և Կորնթացիներէն
9 շատերը լսելով՝ հաւատացին ու մկրտեցան ։ Եւ
գիշերը տեսիլքին մէջ Տէրը ըսաւ Պօղոսին ,
10 Մի վախնար՝ հապա խօսէ , և մի դադարիր . ին-
չու որ ես քեզի հետ եմ , և մէկը քեզի դէմ պի-
տի չելլայ՝ քեզի նեղութիւն տալու . պատճառն որ
11 ես քաղաքիս մէջը ես շատ ժողովուրդ ունիմ ։ Եւ
հոն տարի մը ու վեց ամիս նստաւ . Աստուծոյ
խօսքը անոնց սորվեցնելու ։
12 Աքայեցոց Կալիոն փոխանակ բռնեցնին ժամա-
նակը Հրեաները ամէնը մէկ եղած Պօղոսին վրայ
13 եկան , և զինքը դատաստանի քաշեցին . և կրսէին ,
թէ Ասկի կրնաբէ մարդիկը օրէնքէն դուրս
14 Աստուած պաշտելու ։ Եւ երբոր Պօղոս իր բե-
րանը բանալու պատրաստ էր , Կալիոն ըսաւ
Հրեաներուն . Թէ որ մէկ անիրաւ բանի մը կամ
չար գործքի մը համար ըլլար նէ՝ ով Հրեաներ ,
15 հարկ էր ինծի որ ձեզի մտիկ ընէի ։ Հապա թէ որ

կռիւնիդ բառի ու անուններու՝ և ձեր օրէնքին համար է նէ, դուք ձեզմէն տեսէք. ինչու որ ես առանկ բաներու դատաւոր ըլլալ չեմ ու-
16 զեր: Եւ վռնտեց անոնքատեանէն: Ընտանեաց
17 ըոլոր Ցոյները Սոսթենէս ժողովրդապետը առին հոն առեանին առջևը կրծեցէին. և անոր վրայ
18 Գաղիոնին քնաու հոգը չէր: Պօղոս ալ տակաւին նստել մը օրեր հոն մնալէն ետքը՝ եղբայրներուն մնաք բարով ըրաւ, նաւով դէպի Ասորեստան գնաց. ու իր հետն ալ Պրիս-
19 կիլլան և Ակիւղաս ատաղ կենչրիային մէջը իր գլուխը փոքրած, ինչու որ ուխտաւոր էր: Եւ
20 Եփեսոս որ հասաւ՝ անոնք հոն ձգեց, և ժողովարանը մտաւ՝ Հրէաներուն հետ կրխօսէր: Եւ
21 իրեն կաղաչէին՝ որ առեն մը հոն մնայ. բայց չանձնառաւ հեղաւ. հապա մնաք բարով ըրաւ իրենց՝ ու ըսաւ, Նորէն կրգառնամ ձեզի Աս-
22 տուածոյ կամքովը. ու Եփեսոսէն ելաւ, և կեսար որ հասաւ՝ ելաւ և եկեղեցին բարև տուաւ, յետ Անտրդ: Եւ առեն մը հոն ըլլալէն ետև՝
23 ելաւ կարգով Գաղատացոց երկիրը և Փռիգիայ պտտելու, բոլոր աշակերտները հաստատելու համար:

Ապեղէս անունով Հրէայ մը, ազգով Հղէք-
24 սանդրացի՝ Ճարտասան մարդ մը եկաւ Հասաւ Եփեսոս. որ ինքը գօրաւոր էր ու-ըէ գիրքերով:
25 Սիկա Տէրոջը ճամբան լաւ հասկըցեր էր, և հոգովը կեռիր. կրխօսէր և կրսորվեցուներ ճըշմարտութեամբ Յիսուսի վրայ. ինքը Յօհաննէսին մկրտութիւնը միայն գիտէր: Սիկա սկրսեց
26 ժողովարանին մէջը համարձակ խօսիլ. և երբոր Ակիւղաս ու Պրիսկիլլա անոր լսեցին՝ ալ անիկա իրենց քովը առին, և տեղնիտեղը Աստուծոյ ճամբան անոր հասկրցուցին: Երբոր անիկա ու-
27 զեց Աքայիա երթալ, եղբայրները յօժարելով գիր գրեցին առ պէղէ աշակերտներուն՝ որ զինքը

ընդունեն · որ երբոր հոն հասաւ՝ չատ օգուտ եղաւ
28 հաւատացեալներուն շնորհքով ։ Պատճառն որ՝
չատ քաջութեամբ ամենուն դիմացը Հրէաներուն
երեսը վար կառնէր , ասոնք գիրքերէն ցուցընե-
լով որ՝ Յիսուսը Քրիստոս է ։

ԴԱՐ · ՅԱԹ ։

1 Եւ եղաւ որ երբոր Ապողոս Կորնթոս էր , Պո-
ղոս վերի կողմերը պտրտեցաւ՝ ու Եփեսոս հ-
2 ջաւ · և քանի մը աշակերտներ գտնալով , ըսաւ
անոնց , Թէ՝ Երբոր հաւատացիք նէ Հոգին Սուրբ
առիք մի · անոնք ալ ըսին իրեն , Հայց մենք լը-
3 սած ալ չենք Թէ Հոգի Սուրբ կայ ։ Ան ալ ը-
սաւ · Հապա ինչով մկրտուեցաք · անոնք ալ ը-
4 սին , Յովհաննէսին մկրտութիւնովը ։ Պօղոս ալ
ըսաւ · Յովհաննէս ապաշխարութեան մկրտութիւն
քարոզեց բոլոր ժողովուրդներուն , և կըսեր Թէ՝
Ան որ իրմէ ետքը պիտի գայ՝ անոր հաւատան ,
5 այսինքն՝ Յիսուս Քրիստոսին ։ Եւ երբոր լսեցին՝
6 Տէր Յիսուսի անունովը մկրտեցան ։ Եւ Պօղոս
երբոր անոնց վրայ ձեռք դրաւ՝ Հոգին Սուրբ ա-
նոնց վրայ եկաւ · լեզուներ կրխօսէին՝ ու կրմար-
7 գարէանային ։ Եւ ան ամէն մարդիկը տասներ-
8 կու-քիւ չափ էին ։ Եւ ժողովարանը մտնալով իրեք
ամիս համարձակ էր , և Աստուծոյ Թագաւորու-
9 Թեանը վրայով կրտեղկացուներ ։ Երբոր մէկ
քանիները պինտ կրկենային՝ ու դէմ կրդնէին
բազմաբեման առջևը այն ճամբան բամբասելով ,
անոնցմէ զատվելով աշակերտները որոշեց · ամէն
օր Տիւրաննոս անուն մէկու մը դպրատանը մէջ
10 կրխօսէր ։ Եւ ասիկա երկու տարի քրչեց՝ մինչև որ
բոլոր Ասիայի բնակող Հրէաները և Հեթանոս-
11 ները Տէրոջը խօսքը լսեցին ։ Եւ քիչ հրաշքներ
12 չէր ըներ Աստուած Պօղոսին ձեռքովը · մինչև որ
անոր քրտինքէն թաշկինակներ ու կտաւներ կը-
տանէին հիւանդներուն , և իրենց ցաւերէն կը-

ուրնոյն, և չար գևերը կելլային։ Ասդին անդին պըտըտող Հրեաներէն, որ երդում ուտող էին, մէկ քանիները համարձակութիւն ըրին Տէր Յիսուսի անունը անոնց վրայ տալու, որոնք որ չար գևեր ունէին. և կըսէին, Ձեզի կերդվցնեմ Յիսուսով, որ Պօղոսը կըքարոզէ։ Սկևի- 14
ռաց մեկ Հրեայ քահանայի մը եօթը որդիքն էին՝ որ ասա բանը կընէին։ Պատասխան ուրուա- 15
չար գևը՝ և բսաւ անոնց, Յիսուսը գիտեմ՝ ու Պօղոսը կըճանչնամ, բայց դուք ով էք։ Եւ ան 16
մարդը որ իր մէջը չար գևը ունէր՝ վազից, և կուքն ալ բռնից տակը առաւ անոնք, մինչև որ մերկ ու վիրաւորված տունէն դուրս փախան։ Եւ սա բանը յայտնի եղաւ բոլոր Հրեաներուն 17
և Հեղինասներուն՝ որ Եփեսոսի մէջ կըբնակէին. և անոնց ամենուն վրայ վախ մը ինկաւ, և Տէր Յիսուսի անունը կըմեծնար։ Եւ ան հաւատա- 18
ցեալներէն շատերը կուգային ու կըխոստովանէին՝ և իրենց բրածները կըպատմէին։ Եւ կախարդա- 19
կան բանի հետեւողներուն շատերը գիրքերնին կըբերէին՝ ամենուն առջեւ կերէին. և անոնց գինը համրեցին՝ և յիսուն հազար արծաթի պահնեան գտան։ Եւ ասանկ Աստուծոյ խօսքը կաճէր և ուժ 20
կառնէր։

Եւ երբոր ասբանները բընցաւ՝ Պօղոս միտքը 21
դրաւ Մակեդոնիայի ու Աքայիայի վրայով պըտըտել և Երուսաղէմ գալ, կըսէր թէ Հոն երթալէս ետքը պէտք է ինծի որ Հռոմայ ալ տես- նամ։ Իրեն սպասաւորութիւն ընդունողներէն երկու- 22
քը Տիմոթէոսը ու Երաստոսը խրկեց Մակեդո- նիա, և ինքը ատեն մըն ալ Ասիայի մէջ կեցաւ։

Եւ ան ատենները քիչ խռովութիւն չեղաւ 23
Աստուծոյ ճանբուն համար։ Եւ Դեմետրիոս ա- 24
նուն արծաթագործ մը՝ արծաթեայ խորաններ կըշինէր Արտեմիս կուռքին, ու քիչ շատ չէր ըլլար վաստկանքնուն՝ որ ինքը բոլոր ան արհեստին 25

բանվորները մչտեղ ժողվեց՝ ու ըսաւ ։ Ո՛ա-
դիկ՝ գուբ ձեղմէ գիտեք որ , աս գործքէս է մեր
26 վաստակը ։ Եւ կըտեսնեք ու կըլսեք որ չէ թէ
միայն Եփեսացոց , հապա գրեթէ բոլոր Ասիացոց
շատ ժողովուրդները աս Պօղոսը համոզեց՝ խել-
վընին դարձուց , ըսելով թէ՝ Ձեռքով շինված
27 բաները աստուած չեն ։ Եւ աս բանը չէ թէ մի-
այն մեր բաժինը նախատինքը վտանգին մէջ կը-
ձգէ , հապա Արտեմիս մեծ աստուածուհւոյն տաճարն
ալ ոչինչ մը կըսեպվի ։ Մանաւանդ որ անոր մե-
ծութիւնը պիտի խափանվի , որ ան բոլոր Ասիա
28 ու աշխարհ կրպաշտեն ։ Եւ երբոր աս լսեցին՝
բարկութիւնով լեցան , կըկանչէ ըզտեղին ու կը-
29 ըսէին , Մեծ է Եփեսացիներուն Արտեմիսը ։ Եւ
քաղաքը խռովութիւնով լեցվեցաւ ։ ամէնքը մէկեն
ի մէտարանը վազեցին , և յաիշտակեցին Գայիոս
ու Արիստարքոս Մակեդոնացիները՝ Պօղոսին ձա-
30 նապարհորդակիցները ։ Ինչպ Պօղոս երբոր ու-
զեց ան բազմութեան մէջը մտնալ՝ աշակերտները
31 թոդղ չի տըվին զընքը ։ Նոյնպէս մեծերեն ալ ո-
մանք՝ որ իրեն բարեկամներն էին , Նպէք կրխնդ-
կէին իրեն և կաղաչէին՝ որ ինքզինքը ի մէտարո-
32 ընեն մէջը չի ձգէ ։ Ուրիշներն ալ ուրիշ կերպ
բան մը կըպաօռչըտէին ։ ինչու որ իրենց ժողովքը
իրաւ անցեր էր , և իրենցմէ շատերը չէին գի-
33 տեր՝ թէ ինչ բանի համար ժող վըված են ։ Եւ
ժողովուրդին բազմութեանը մէջէն Ալէքսանդ-
րոսը առաջ քշեցին ։ և երբոր Հրէաները առաջ
բերին անիկա , Ալէքսանդրոս ձեռքը շարժեց՝ և
34 ուզեց որ բազմութեանը պատասխան տայ ։ Եր-
բոր գիտցան թէ մարդը Հրէայ է , ամէնքը մէկ
բերան եղած՝ երկու ժամ չափ կըպօռչըտէին ,
35 թէ՝ Մեծ է Եփեսացիներուն Արտեմիսը ։ Մեծ
գրագիրը ան ժողովուրդը դադրեցուց՝ ու ըսաւ ։
Ով Եփեսացի մարդիկ , ո՞ր մարդն է որ չի գի-
նայ աս Եփեսացոց քաղաքը՝ մեծ Արտեմիս և Դի-

ոպիտէս կուռքերուն տաճարները զարդարողը :
Ուրեմն աս որ ասանկ է անշուշտ՝ պէտք է ձեղի 36
խաղաղ կենալ , և չափէ դուրս բան մը չընել :
Ասոնք որ մարդիկը հոս բերիք , ո՛չ տաճարները 37
կողոպտեր են՝ ո՛չ ալ մեր Աստուծոյն հայհոյանք
ըրեր են : Ուստի թէ որ Դեմետրիոս և իր հետը 38
եղած վարպետները մէկի մը հետ բան մը ունին
նէ՝ տեսեան ժող երթան , ու դատաւորներ կան ,
և թող իրարու վրայ ամբաստանութիւն ընեն :
Հապա թէ որ ուրիշ բանի համար է վէճը՝ օրի- 39
նաւոր ժողովքով թող լրջնցուներն :
Վասն որ 40
մենք ալ վտանգի մէջ ենք՝ աս օրուան կռիւս հա-
մար , առանց յանցանքի ըլլալուն՝ որ ան չկրնա-
նանք վրայով պատասխան մը չի պիտի կրնանք տալ
աս ժողովքին համար : Եւ ասանկ ըսելով ժո-
ղովքը արձկեց :

ԳԼ. Ի :

Եւ իրարանցումը դադրելէն ետև՝ Պօղոս ա- 1
շակերտները կանչեց՝ և մխիթարեց . մնաք
բարով բսաւ ու ելաւ Մակեդոնիա գնաց : Ըն 2
կոզմերը պտրտելով՝ և շատ խօսքերով անոնք
մխիթարելէն ետև Ելլադա եկաւ : Հոն երբ ա- 3
միս որ կեցաւ , Հրէաները իրեն որոգայթ լարե-
ցին՝ երբոր կուզէր Ասորեստան երթալ . անոր հա-
մար մտորեց Մակեդոնիայի վերայէն դառնալ :
Եւ մինչև Ասիա իր հետը կերթան Երիթայի 4
Պիւռա Սոսիպատրոսը , և Թեսաղոնիկեցիներէն
Արիստարքոսը և Սեկունդոսը՝ և Դերբացին Գայիոս Տիմոթէոսը , ու Ասիայէն Տիւքիկոսը և
Տրոփիմոսը : Ասոնք առաջ գացին՝ Տրովադայի 5
մէջ մեզի կրսպասէին : Մենք ալ բաղարջակերքին օրերէն ետև փիլիպպէէն նաւեցինք , և հինգ 6
օրուան մէջ Տրովադա եկանք անոնց քովը . հոն
եօթը օր կեցանք :
Եւ շաբաթի օրը երբոր ժող վրաիր էինք հացը 7

կարելով՝ Պօղոս անոնց կըըսարուղէր , ինչու որ ե-
տևի օրը պիտի երթար . և խօսքը երկրնդացաւ մին-
8 չև կէս գիշեր ։ Հ շատ լապտերներ կային ան վե-
9 րի սենեակը՝ ուր որ մենք ժող վըված էինք ։ Եւ
մէկ երիտասարդ մը Եւտիքոս անուն պատուհանին
վըայ նստած խորունկ կրընանարկուր . Պօղոս ալ
խօսքը որ երկրնդաց՝ խորունկ քունի մէջ ինկած՝
երրորդ դասիկանէն վար ինկաւ , և ինքը մեռած
10 վերցուցին ։ Եւ Պօղոս վար իջաւ անոր վըայ ին-
կաւ , և գրկեց անիկա՝ ու կըսէր , Ա՛ի շփոթիք .
11 ինչու որ ասոր Հոգին իր մէջն է ։ Եւ ելաւ Հացը
կարեց ու կերաւ . և մինչև առաւոտ շատ մըն ալ
12 խօսեցաւ , և ետքը ելաւ գնաց ։ Եւ ան պատանին
13 ողջ բերին , և էվելըաւ միխիթարվեցան ։ Ա՛ենք
ալ նաւը մտանք՝ ելանք Ճասոն . յոյս ունէինք
որ անկէց Պօղոսը նորէն առնենք . ինչու որ ինքը
ցամաքով որ պիտի երթար՝ անանկ ապրսպրըեր
14 էր ։ Եւ երբոր Ճասոնին մէջը մեզի Հանդըպե-
15 ցաւ՝ ինքը առինք Ա՛ետիլենէ եկանք ։ Ընկէց ալ
նաւով գացինք՝ հետևի օրը Քիխային դիմացը Հա-
սանք . և մէկալ օրը Միտոս Հասանք . և անոր ե-
16 տևի օրը Ա՛եղիտոն եկանք ։ Ինչու որ՝ Պօղոս
միտքը դրեր էր որ Եփեսոսին քովէն նաւով անց-
նի , որ ինքը ատեն մը Ասիայի մէջը չուշանայ .
որովհետև կարտորար որ եթէ կարելի է նէ իրեն՝
Պենտեկոստէին օրը Երուսաղէմ ըլլայ ։
17 Եւ Ա՛եղիտոսէն Եփեսոս խրկեց՝ եկեղեցիին
18 երէցները կանչեց ։ Եւ երբոր իրեն եկան՝ ըսաւ
անոնց . Դուք ձեզմէ գիտէք՝ որ ան առջի օրէն
հետե որ ես Ասիա եկայ , ինծի՛ր ձեր հետը վար-
19 վեցայ բոլոր ժամանակը . ամեն կերպ խոնարհու-
թիւնով Տէրոջը ծառայելով՝ և շատ արցունքով
ու փորձութիւններով , որ Հրէաներուն հնարք-
20 ներէն ինծի պատահեցան ։ Ինծի՛ր վանողով ես
չի կեցայ՝ օգտակար բաները ձեզի զուրցելէն և
սորվեցունելէն ձեզի հրապարակով և տանը մէջ .

վկայութիւն տալով Հրէաներուն ու հեթանոս- 21
ներուն ապաշխարութեան համար , և մեր Տէր Յիսուս Քրիստոսին
հաւատալու համար : Եւ հիմայ՝ ահա ես հոգով 22
կապված Երուսաղէմ կերթամ . և չեմ իմ վրայ-
ս ինչ որ պիտի անցնի չեմ գիտեր : Միայն թէ 23
Հոգին Սուրբ ամէն քաղաքի մէջ ինծի կըվկայէ
ու կըսէ , թէ՝ Կապեր և նեղութիւններ քեզի կըս-
պասենկոր : Այլ ես իմ անձս մէկ բանով մը 24
պատուական չեմ սեպեր , միայն թէ իմ ընթացքս
ուրախութեամբ լմընցունեմ և այն պաշտօնը , որ
Տէր Յիսուսէն առի՝ Աստուծոյ շնորհացը աւե-
տարանին վկայ ըլլալու : Եւ հիմայ՝ ահա ես գի- 25
տեմ որ ալ իմ երեսս պիտի չի տեսնաք դուք ա-
մէնքդ , որ մէջերնիդ պտըտեցայ Աստուծոյ թա-
գաւորութիւնը քարոզելու : Ուստի ա՛ս օրըս կը- 26
վկայեմ ձեզի , որ ես անպատրաստ եմ ամէնուն արիւ-
նէն : Ինչու որ՝ ետ չի կեցայ Աստուծոյ բոլոր 27
կամքը ձեզի պատմելէն : Ուրեմն զգուշացէք ինքզինքնիք- 28
ներնուդ և բոլոր հօտին , որ Հոգին Սուրբը ձեզ
անոնց վրայ նայող դրաւ՝ Տէրոջը ժողովուրդը
հովուելու , որ իր արիւնովը խալսեց : Ինչու որ 29
գիտեմ եմ որ իմ գնալէս ետքը ձեր մէջը յա-
փշտակող գայլեր պիտի գան , որ պիտի չի խնայեն
հօտին : Եւ ձեզմէ ալ անանկ մարդիկ պիտի ել- 30
լան՝ որ ծուռութիւն բաներ պիտի խօսին , աշա-
կերտները իրենց ետևէն քաշելու : Ընդ համար 31
արթուն կեցէք , և միտքերնիդ բերէք՝ որ երկու
տարի գիշեր ու ցորեկ չի դադրեցայ ամէն մէկը
արցունքով խրատելու : Եւ հիմայ ձեզ Աստու- 32
ծոյ կրկանձեմ և անոր շնորհացոյ խօսքին , որ ան
կարող է շինել՝ ու բոլոր սուրբերուն հետ ձեզի
ժառանգութիւն տալ : Ձեր մէկուն արծաթին 33
կամ ոսկիին՝ կամ լաթերուն չի ցանկացայ . դուք 34
ձեզմէ գիտէք՝ որ ինծի պէտք եղածը և անոնց որ
իմ հետս էին՝ ասոնք ձեռքերս դատեցան : Եւ ամէն 35

բան ձեզի ցուցցի · որ ասմնկ պէտք է աշխա-
տիլ , ու հիւանդներուն հոգ տանել , և Տէր Յի-
սուսի խօսքը միտք բերել , որ ինքը ըսաւ · Լաւ-
36ըք երանելի է տալը՝ քան թէ առնելը ։ Եւ ասոր
ըսաւ՝ ամէնուն հետը ծունկի վրայ գալով՝ աղօթք
37ըրաւ ։ Ամէնքն ալ սաստիկ կուլային , և Պօղոսին
38վիզը ինկած զինքը կըպագնէին ։ Մերաեըրնին էվի-
լի կըխոշորշար ան խօսքին վրայ , որ կըսէր թէ
Ա՛լ պիտի չի տեսնան իր երեսը · և անիկա ՃամՃ-
բայ դրին նաւը երթալու ։

ԳԼ · ԻԶ ։

1 Եւ եղաւ որ երբոր մենք ելանք ու անոնցմէ
զատվեցանք՝ դէպի դիմացի կողմը երթալով
Կոյ եկանք · և միւս օրը Հռոդոն , ու անկէց
2 Պատարա ։ Եւ նաւ մը գտանք որ Փիւնիկէ կեր-
3 թար , և անոր մէջը մտանք՝ գացինք ։ Եւ Կիպրոս
որ երևցաւ՝ անիկա ձախ կողմերնիս թողուցինք ,
դէպի Ասորեստան նաւեցինք , և Տիւրոս իջանք ·
4ինչու որ նաւը հոն պիտի թափէր բեռները ։ Եւ
աշակերտները գտնալով եօթը օր հոն կեցանք · որ
ասոնք Հոգւոյն Սրբոյ ձեռքովը կըսէին Պօղոսին
5որ Երուսաղէմ չելլայ ։ Եւ երբոր այն օրերը ան-
ցուցինք՝ ելանք գացինք , ամէնքն ալ կիներովը
ու տղաքներովը մինչև քաղաքէն դուրս մեզ Ճամ-
բայ դրին · և ծովին եզերքը ծունկի վրայ եկանք՝
6աղօթք ըրինք ։ Ա՛լ իրարմէ բաժնըվեցանք ու
նաւը ելանք · անոնք ալ իրենց տեղերնին դար-
7ձան ։ Եւ մենք նաւը Տիւրոսէն առաջ քշելով՝
Պտողէմայիդա հասանք · և եղբայրները բարևե-
8լով՝ մէկ օր մը քովերնին կեցանք ։ Եւ հետևի օրը
անկէց ելանք Կեսարիա եկանք · և Փիլիպպոս ա-
ւետարանիչին տունը մտանք , որ ինքը եօթնին
9մէն էր , անոր քովը կեցանք ։ Ինքը չորս հատ
10կոյս աղջիկ ունէր , որ մարգարէ էին ։ Հոն շատ
օրեր որ կեցանք՝ Հրէաստանէն մէկ մարգարէ մը

իջաւ անունը Ակաբոս . Եւ երբոր մեզի եկաւ ,11
Պօղոսին գօտին առաւ՝ իր ձեռքերը և ոտքերը
կապեց , ու ըսաւ . Այսպէս կըսէ Հոգին Սուրբ ,
ան մարդը՝ որ աս գօտին իրենն է , ասանկ պիտի
կապեն Հրէաները Երուսաղէմի մէջը , ու Հեթա-
նոսներուն ձեռքը պիտի մատնեն : Եւ երբոր աս 12
լսեցինք , մենք ալ և հոն եղողներն ալ աղաչեցինք
իրեն՝ որ Երուսաղէմ չելլայ : Ընտանը Պօղոս 13
պատասխան տուաւ . Ինչ կընէքդուք , ինչու կու-
լաք և իմ սիրտս կըձղձղուք . ինչու որ ես չէ թէ
միայն կապիլու՝ հապա Տէր Յիսուս Քրիստոսի
անունին համար Երուսաղէմի մէջ մեռնելու ալ
պատրաստ եմ : Եւ ինքը որ մտիկ չըրաւ՝ լուռ 14
կեցանք , ըսինք՝ Տէրոջը կամքը թող ըլլայ :
Եւ ան օրերէն ետև պատրաստուելցանք՝ Երու- 15
սաղէմ ելանք : Ան Կեսարացի աշակերտներէն 16
ալ Մնասոն մեր հետը եկան , և մեզ տարին
Կիպրոսցի Նասոնի մը՝ առջի աշակերտներէն մէ-
կը , որ անոր քովը պիտի կենայինք : Եւ երբոր 17
մենք Երուսաղէմ մտանք՝ եղբայրները ուրախու-
թիւնով մեզ ընդունեցին : Եւ հետևի օրը Պօղոս 18
մեզի հետ Յակոբոսին քովը գնաց , ու բոլոր երէց-
ներն ալ եկան : Եւ անոնք բարևելով մեկիկ մե- 19
կիկ կըպատմէր՝ ինչ որ Աստուած հեթանոսներուն
մէջը ըրաւ իր ծառայութիւնովը : Անոնք ալ լսե- 20
լով փառք կուտային Աստուծոյ . և ըսին իրեն ,
Պետեանո եղբայր՝ քանի՜ հազարաւոր հաւատա-
ցեալ Հրեաներ կան , ու ամէնքն ալ օրէնքին
նախանձով են : Հապա քու վրայովդ խնդրուն՝ որ 21
դուն բոլոր հեթանոսներուն մէջ եղած Հրեանե-
րուն Մովսեսէն ետ կենալ կըսորվեցուներս , ըսես
լավ որ՝ տղաքին չի թլփատեն , և կրօնքին պես
չի վարվին : Ուստի ինչ պիտի ըլլայ , ինչու ու- 22
պիտի լսեն թէ եկեր ես : Ուստի աս բանը ըրէ որ 23
քեզի կըսենք . Մեր քովը չորս մարդ կայ ինքնի-
րեննին ուխտ ըրած . անոնք առ՝ իրենց հետը մաք- 24

բրվէ , և ան ծախքն ալ բրէ որ իրենց գլուխը ա-
ծին են , որ ամէնքն ալ դիտեան թէ քու վրայդ
իմացած բաներին փուճ է . հապա դուն ալ միա-
25բան ես օրէնքը պահելու : Ւսայց հաւատքի եկող
հեթանոսներուն համար մենք իրկնցինք ինծի
որ սահմանեցինք նէ , որ անոնք անանկ բաներ չի
պահեն . միայն թէ կուռքերուն զոհածէն ետ կե-
նան՝ ու արիւնէն , և խըղդածէն , ու պոռնկու-
26թենէն : Ւնատոնը Պօղոս ան մարդիկը առաւ՝ և-
տևի օրը անոնց հետը մաքրված տաճարը մտաւ ,
մաքրութեան օրերը լըլլնալը յայտնելու համար՝
մինչև որ անոնց ամէն մէկուն համար պատարագ
եղաւ :
27 Եւ երբոր եօթը օրերը լըլլնալու վրայ էր , Ւ-
սիացի հրէաները զինքը տաճարին մէջը տեսնալով՝
բոլոր ժողովուրդը վրան թափեցին , և անոր ձեռք
28զարկած կրկանչ վըռտէին : Ւսրայէլացի մարդիկ՝
օգնութիւն հասէք . ասա ան մարդն է՝ որ հակա-
ռակ ժողովուրդին և օրէնքին՝ ու ասա տեղին , ա-
մէնուն ամէն տեղ բան կրսորվեցուցնէ . մինչև որ
տաճարին մէջը հեթանոսներ ալ խօթեց , ու
29սուրբ տեղը պղծեց . (ինչու որ առաջուց Եփեսա-
ցի Տրոփիմոսը իրեն հետ քաղաքին մէջը տեսեր
էին , որ կրկարծէին՝ թէ Պօղոս անիկա տաճարը
30խօթեց .) բոլոր քաղաքը ծնտաց , և ժողովուրդը
դիզվեցաւ՝ ու բռնեցին Պօղոսը տաճարէն դուրս
31քաշեցին . և շուտ մը դուռները դոզվեցաւ . և
կուզէին անիկա սպաննել . լուր հասաւ գունդին
հազարապետին՝ թէ բոլոր Երուսաղէմը իրար ան-
32ցեր է : Որ ան շուտ մը զինուորներ և հարիւրա-
պետներ առաւ՝ անոնց վրայ վազեց . անոնք ա-
հազարապետը ու զինուորները տեսնալով՝ Պօղո-
33սը ծեծելէն դադրեցան : Ւնատոնը հազարապե-
տը գնաց բռնեց անիկա , և շղթայով երկու կող
կու շղթայով կապեն . և կըհարցընէր թէ ան-
34կա ո՞վ է , ու ինչ ըրեր է : Խռովութեան մէջէն

ամէն մէկը անոր վրայ մէկմէկ բան կրկանչ վըռ-
տեին . և երբոր չէ կրցաւ ան իրարանցումէն շե-
տակը գիտնալ , հրաման ըրաւ որ ինքը բերդը
տանին : Եւ երբոր սանդուղքէն հասաւ՝ անանկ 35
պատահեցաւ որ զինուորները ինքը վերցունեն
ժողովուրդին բռնութեանը համար՝ անանկ բե-
րեն : Ինչու որ ժողովուրդին բազմութիւնը ե- 36
տևէն կերթար՝ ու կըսէին , Ա երցուր տիկա :
Երբոր Պօղոս բերդը մտնալու վրայ էր , հազա- 37
րապետին ըսաւ , Թէ՛ Կարելի՞ է ինձի որ քու հետդ
խօսիմ . ան ալ ըսաւ , Յունարէն գիտե՞ս . չըլլայ 38
որ դուն ան Եգիպտացին ըլլաս , որ աս օրերէս
առաջ գլուխ քաշել տըվիր՝ և չորս հազար սրի-
կայ մարդիկ անապատը հանեցիր : Պօղոս ալ ը- 39
սաւ , Ես Հրէայ մարդ մըն եմ՝ Կիլիկեցւոց Տար-
սոնեն , չէ Թէ մէկ պզտի քաղաքի մը քաղաքացի .
կաղաչեմ քեզի՝ ինծի հրաման տուր որ ատ ժողո-
վուրդին խօսիմ :

Եւ ան երբոր հրաման տըւաւ՝ Պօղոս սանդու- 40
ղին վրայ կայնելով ձեռքը շարժեց ժողովուրդին .
երբոր աղէկ մը լռութիւն ըրին՝ սկըսեց Եբրայե-
ցոց լեզուովը խօսիլ , ու ըսաւ :

ԳԼ . ԻՐ :

Ա՛ռաքեալք եղբայրներ և հայրեր՝ մտիկ ըրէք ին- 1
ձի որ հիմայ ձեզի պատասխան կուտամ .
(երբոր լսեցին Թէ Եբրայեցոց լեզուովը զըրցեց 2
իրենց , ալ էվելըք դադրեցան լուռ կեցած ,) և ան 3
ըսաւ . Ես մէկ Հրէայ մարդ մըն եմ Կիլիկիայի
Տարսոնին մէջը ծնած՝ աս քաղաքին մէջը մեծցած
Գամալիէլին ոտքը , ու մեր հայրենի օրէնքին
ճշմարտութեանը պէս խրատված , ջատագով էի
Աստուծոյ՝ ինչպէս որ այսօր դուք ամէնդ էք : Որ 4
ես աս ճամբան բռնեցի՝ մինչև մեռցունելու , կա-
պելու ; և բանտերը մատնելու էրիկ մարդիկ ու
կնիկ մարդիկ . ինչպէս որ քահանայապետն ալ 5

կրվիայէ ինծի համար՝ և բոլոր ծերակոյտը · որ ի-
րենցմէ Թուղթ ալ առնելով Վաամսակոս եղած
եղբայրներուն կերթայի՝ անկէց ալ կապվածներ
6 բերելու Երուսաղէմ , որ պատժվին : Եւ եղաւ
որ երբ կերթայի՝ ու Վաամսակոսին մօտեցայ , կէս
օրւան դէմ յանկարծակի երկինքէն մեծ լոյս մը
7 չորս կողմս ծագեց · և գետինը ինկայ , ու ձայն
մը լսեցի՝ որ ինծի կըսէր , Սաւուղ Սաւուղ՝ ինչո՞ւ
8 ինձ կը հալածես : Ես ալ պատասխան տըվի Թէ
Դուն ո՞վ ես Տէր · ան ալ ինծի ըսաւ , Ես Յի-
սուս Նազովրեցին եմ , որ դուն կը հալածեսկոր :
9 Ինձ հետ եղողները որ իմ հետս էին՝ լոյսը տեսան , սա-
կայն անոր ձայնը որ ինծի հետ կը խօսէր՝ չէին
10 լսեր : Եւ ըսի , Ի՞նչ պիտի ընեմ Տէր · և Տէրը
ըսաւ ինծի , Ելիր գնա Վաամսակոս · և հոն քեզի
կը զըրցվի ան ամէն բանին համար , որ քեզի
11 հրամայված է ընելու : Երբոր չէի տեսնար ան
լոյսին փառքէն , հետս եղողները ձեռքէս բռնած՝
12 Վաամսակոս մտայ : Ընանիա անուն մարդ մը՝
աստուածավախ՝ օրէնքին նայելով , Վաամսակոս
13 բնակած բոլոր Հրեաներէն քաջի վկայված · եկաւ
կայնեցաւ քովս՝ ու ըսաւ , Սաւուղ եղբայր վեր
14 նայէ : Ես ալ նոյն ժամուն վեր նայեցայ իրեն ·
և ան ըսաւ ինծի , Ա՛ստ հայրերուն Աստուածը
առաջմանէ քեզ ընտրեց , որ իր կամքը ճանչնաս՝
ու ան Արդարը տեսնաս , և անոր բերանէն ձայն
15 լսես · որ բոլոր մարդոց առջեւը իրեն վկայ ըլլաս՝
16 ան բաներուն համար , որ տեսար ու լսեցիր : Եւ
հիմայ ալ ինչ կուշանաս , ելիր մկրտվիէ՝ ու
17 մեղքերդ լըւա անոր անունին կանչելով : Եւ ե-
ղաւ որ երբոր Երուսաղէմ դարձայ՝ ու տաճարին
18 մէջը աղօթք կընէի , ազդութիւնի մը մէջ էի · և
զինքը տեսայ որ ինծի կըսէր , Արտօրցիր շուտով
Երուսաղէմէն ելիր · ինչու որ քու ըրած վկայու-
19 թիւնդ ինծի համար պիտի չընդունին : Ես ալ ը-
սի , Տէր՝ իրենք աղէկ գիտեն Թէ ես էի որ քեզի

հաւատացողները բանտը կուտային , և ժողովարաններուն մէջը կրծեցէի : Եւ երբոր քու Սան-
փանոս վկայիդ արիւնը կը թափվէր՝ ես էի որ հոն
մնա կայներ էի , և կամքս մէկ էր անոր սպաններվելուն . և անիկա սպանողներուն լաթերը ես
կը պահէի : Ան ալ ըսաւ ինծի , Գնա՛ . ինչու որ
ես քեզ հեռաւոր հեթանոսներուն պիտի խրկեմ :

Եւ անոնք ինչման ատ խօսքս ականջ դրին ի-
րեն . եաթը ձայներնին վերուցին՝ ու ըսին , Վե՛ր-
ցուր աշխարհէն ատանկ մարդը . ինչու որ չի
վայլեր ատանկին ողջ կենալ : Եւ երբոր կրկնէ-
վըռուէին՝ ու լաթերնին կընետէին , և փոչին դէ-
պի օդը կրցնէին , հազարապետը հրաման ըրաւ՝
որ զինքը բանակը խօթեն . կըհարցնէր ծեծով
հարցունելէ իրեն , որ գիտնայ թէ ինչ յանցան-
քի համար անոր դէմ անանկ կրկնէ վըռտունկոր :
Եւ երբոր կաշի կապերով զինքը կապեցին՝ Պօ-
ղոս վրան կայնող հարիւրապետին ըսաւ , Թէ
Հռոմայեցի մարդ մը՝ և ան ալ անմեղ՝ ձեզի կը-
վայլէ որ ծեծէք : Հարիւրապետը երբոր ասոր լսեց՝
գնաց հազարապետին պատմեց ու ըսաւ , Ին՞չ
կուզեսկոր ընել . ինչու որ ան մարդը Հռոմա-
յեցի է : Հազարապետն ալ գնաց՝ ըսաւ անոր ,
Ա՛սէ ինծի , դուն Հռոմայեցի՞ ես մի . ան ալ ը-
սաւ Այո՛ : Հազարապետը պատասխան տուաւ .
Ես շատ բսակով ձեռք բերի աս ապա՞ զինուո-
րութիւնը . Պօղոս ըսաւ , Ես բուն անոր մէջը
ծնած եմ : Եւ անոնք որ ինքը պիտի ծեծէին ,
շուտ մը ետ կեցան իրմէն . և հազարապետն ալ
վախցաւ , երբոր գիտցաւ թէ Հռոմայեցի է , և
որովհետև անիկա կապեր էր ալ :

Եւ հետևի օրը կուզէր որ շիտակը գիտնայ՝ թէ
ինչ է Հրէաներուն ըրած չարախօսութիւնը .
արձրկեց անիկա , և հրաման ըրաւ որ քահանա-
յապետները ու բոլոր ժողով քը կանչեն . և Պօ-
ղոսը իջեցուց անոնց դիմացը կանգնեցուց :

ԳՅ · ԻԿ ։

1 Եւ Պօղոս դէպի ատեանին նայելով ըսաւ . Ա՛րդիկ եղբայրներ , ես բոլորովին շիտակ
խղճմտանքով կեանքս վարեր եմ Ա՛ստուծոյ առ-
2 ջեւը՝ մինչեւ ասօր ։ Ա՛նանիա քահանայապետն ալ
հրաման ըրաւ սպասաւորներուն՝ որ անոր բերնին
3 զարնեն ։ Ա՛նատեղը Պօղոս ըսաւ անոր . Ա՛ստ-
ուածք պիտի զարնէ ծեփած պատ . որ դուն
նստեր ես օրէնքովը իս դատելու , և օրէնքէն
4 դուրս հրաման կընես որ ինծի զարնեն ։ Եւ բո-
լորտիքը կայնողները ըսին . Ա՛ստուծոյ քահանայ-
5 ապետին կ՚երդուըցես ։ Պօղոս ալ ըսաւ , Եղ-
բայրներ չէի գիտեր որ քահանայապետ է . Քա-
րոզ գրված է Ա՛ռ ժողովուրդիդ իշխանին կէշ մի՛
6 զուրցեր ։ Երբոր գիտցաւ Պօղոս՝ որ մէկ կողմը
Սադուկեցիներ են , և մէկալը՝ փարիսեցիներ ,
պօռալով կըսէր ան ատեանին մէջը . Ա՛րդիկ
եղբայրներ , ես փարիսեցի եմ՝ փարիսեցիի որդի ,
յոյսի ու մեռելներուն յարութեանը համար ա՛ն-
7 ես կը դատուիմիկոր ։ Եւ երբոր ասիկա ըսաւ՝ փարիսե-
ցիներուն և Սադուկեցիներուն մէջը երկպառա-
կութիւն ինկաւ , և բազմութիւնը բաժնըվեցաւ ։
8 Որովհետև Սադուկեցիք կըսեն՝ Յարութիւն չի
կայ , և ո՛չ հրեշտակ , ո՛չ ալ հոգի . բայց փարի-
9 սեցիները երկուքն ալ կը դաւանին ։ Եւ մեծ ձայն
մը եղաւ . փարիսեցիներուն կողմանէ կարդացող-
ներէն ոմանք ոտք ելան՝ դէմ կըկենային՝ ու կը-
սէին , Ա՛նք ասմարդուն վրայ մէկ գէշութիւն
մը չենք գտներ . Հապա որ հոգի մը կամ հրեշ-
10 տակ մը ատոր մէջը խօսեցաւ ։ Եւ երբոր բազմու-
թիւնը չատցաւ՝ հազարապետը վախնալով որ
չըլլայ թէ Պօղոս անոնցմէ փատառվի , զինուոր-
ներուն հրաման ըրաւ որ իջնան զինքը անոնց մէ-
11 ջէն յափշտակեն՝ ու բանակը բերեն ։ Եւ ետևի

գիշերը Տէրը իր քովը կայնեցաւ ու ըսաւ , Կրա-
բիճ կեցիր Պօղոս · վասն զի ինչպէս որ Երու-
զէմի մէջը ինծի համար վկայեցիր նէ , անանկ
պէտք է քեզի՛ որ Հռոմայ ալ վկայես :
Եւ երբոր առտու եղաւ՝ Հրեաները մէկտեղ 12
ժողվուեցան ինքզինքնին անէծքի տակ դրին ,
որ չուտեն և չի խմեն՝ մինչև Պօղոսը սպաննեն :
Եւ քառասունէն էվել էին որ աս երդումը իրարու 13
հետ ըրին : Ուր ասոնք քահանայապետներուն և 14
երէցներուն գացին՝ ու ըսին , Ինէծքով անիծե-
ցինք մենք մեզ՝ որ բան մը չուտենք մինչև որ Պօ-
ղոսը սպաննենք : Ուստի դուք ժողովքին հետ մէկ 15
ուղղ հաղարապետին խնացուցէք որ անկից ձեզի
իջեցունէ , որպէս թէ դուք տեղեկութիւնը բան մը
հասկընալ կուզէք անոր վրայով · և մենք անոր
մօտ գալէն առաջ պատրաստ ենք զինքը սպաննե-
լու : Եւ Պօղոսին քրոջը որդին երբոր աս որո- 16
գայթը լսեց՝ եկաւ բերդը մտաւ Պօղոսին պատ-
մեց : Պօղոս ալ հարիւրապետներուն մէկը իրեն 17
կանչելով՝ ըսաւ · Այս պատանին հազարապետին
տար , ինչու որ բան ունի անոր զուցելու : Ան 18
ալ առաւ անկից տարաւ հազարապետին՝ ու ը-
սաւ · Կապուած Պօղոսը իս կանչեց՝ և աղաչեց որ
աս պատանին քեզի բերեմ , քան մը ունի քեզի
խօսելու : Հազարապետը անոր ձեռքէն բռնեց 19
մէկ դի գնաց · հարցուց թէ ի՞նչ ունիս ինծի խօ-
սելու : Եւ ան ըսաւ · Հրեաները մէկտեղեցան 20
քեզի աղաչելու՝ որ վաղը Պօղոսը առաւ իջեցու-
նես , որպէս թէ կուզին տեղեկութիւնը քննութիւն
մը ընել անոր վրայ · բայց դուն անոնց մտիկ մի՛ 21
ըներ · ինչու որ անոնք ուրացայի լարեցին անոր
քառասուն մարդէն էվելի , որ ինքզինքնին անէծ-
քի տակ դրին՝ որ չուտեն ու չի խմեն մինչև անի-
ծ սպաննեն · ուստի պատրաստ են՝ և քու հրա-
մանիդ կրպասեն : Հնազանդը հազարապետը 22
պատանին ճամբեց , ապրսպրելով թէ մէկուն մի՛
ըսեր՝ որ աս բանը ինծի խնացուցիր :

23 Եւ հարիւրապետներէն երկուքը կանչեց՝ ու
բսաւ , Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք ,
և եօթանասուն ձիաւոր , և երկու հարիւր ալ գե-
զարդաւոր . որ մինչև Կեսարիա պիտի երթան գի-
24 շերվան ժամը իրեքին . և գրաստներ պատրաստե-
ցէք , որ Պօղոսը փոխեցնեն
25 ազատեն : Եւ թուղթ մը գրեց ասոնց օրինակին
26 պէս : Կղավդիոս Լիւսիաս պատուական փոխեցնո-
27 դատաւորիդ ողջոյն : Այս մարդը Հրեաներէն
բռնուելու էր , և անոնցմէ քիչ մնաց պիտի սպան-
նուէր . ես զինուորներով վրայ հասած խլեցնեցի ,
28 իմանալով որ Հռովմայեցի է : Ուզեցի յանցանքը
գիտնալ որ անոր համար ատոր վրայ ամբաստա-
նութիւն կընէին . իրենց ատիկա անոնց տուեցի :
29 Որ գտայ ամբաստանված իրենց օրէնքին վերա-
բերեալ վէճի մը համար . և մեղադրելու կամ
30 կապվելու արժանի յանցանք մը չունէր : Երբոր
իմացայ որ անոնք ատ մարդուն համար որոգայթ
լարեր են , քեզի խրկեցի , հրաման ընելով ամ-
բաստանողներուն ալ՝ որ քու առջևդ խօսին ա-
տոր վրայ . Ողջ եղիր :
31 Ուստի զինուորներն ալ անոր հրամանին պէս առին
32 Պօղոսը գիշերով Անտիպատրոսին տարին : Ու
ետևի օրը ձիաւորները ձգեցին անոր հետը եր-
33 թալու , իրենք դարձան : Անոնք Կեսա-
րիա մտան , ու թուղթը դատաւորին տվին , Պօ-
34 ղոսն ալ անոր առջևը կանգնեցուցին : Երբոր կար-
դաց՝ հարցուց թէ ո՞ր գաւառէն է . և իմանալով որ
35 Կիլիկիայէն է՝ բսաւ , Պիտի լսեմ քեզի՝ երբոր
քու ամբաստանողներդ ալ գան . և հրաման ը-
բաւ՝ որ ինքը Հերովդէսին պալատը պահեն :

ԻԱ · Ի՚ :

1 Ա Ե հինգ օրէն եկեր Անանիա քահանայապետը
քանի մը ծերերու հետ՝ և մէկ Տերտիղոս
անուն ճարտասանի մը հետ իջաւ . և ասոնք դա-

տաւորին իմացուցին Պօղոսին վրայով : Եւ երբոր 2
կանչեցին անիկա՝ Տէրտիւղոս սկսեց ամբաստա-
նութիւն բնել՝ ու ըսել . Մենք քեզմէ շատ խա-
ղաղութիւն ու քուկին խնամքովդ աս ազգին բա-
ները չիտակ երթալ գտեր ենք . ամէն կերպով՝ 3
և ամէն տեղ բոլորովին գոհ ըլլալով , շնորհա-
կալ ենք մեր պատուական Փելիքս : Բայց չըլլայ 4
որ էվելոք նեղութիւն տամ քեզի . կաղաչեմ որ
կարճրկեկ քու հեզութիւնովդ մեզի ականջ դնես :
Տնչու որ մենք աս մարդը գտանք աւերող և խր- 5
ովարար բոլոր Հրեաներուն՝ որ աշխարհիս մէջ
են , և Նազովրայեցիներուն ազանդին առաջնորդ :
Որ ինքը տաճարն ալ ուզեց պղծել . որ անիկա 6
բռնեցինք , և մեր օրէնքին պէս ուզեցինք դատաս-
տանը բնել : Բայց հարպատիոր եկաւ մեծ 7
բռնութիւնով մեր ձեռքէն հանեց : Հրաման ը- 8
րաւ՝ որ անոր վրայ ամբաստանողներն ալ քեզի
գան , որ նորէն դատաստան բնելով՝ դուն ալ
կարող ըլլաս ամէն բաներ հասկընալու , որոնցմով
մենք ամբաստանութիւն կրնենք ատոր վրայ :
Հրեաներն ալ ամէնը մէկ եղած՝ ըսին , Այսպէս 9
է : Պատասխան տուաւ Պօղոս՝ երբոր դատաւորը 10
իրեն աչք ըրաւ որ խօսի . Գիտնալով որ շատ տա-
րիներէ հետէ դուն աս ազգին դատաւորն ես ,
յօժար սիրտով ինծի վերաբերեալ բաներուն
համար պատասխան կուտամ : Որովհետև կրնաս 11
գիտնալ որ ես տասներկու օրէն աւելի չէ , քանի
որ Երուսաղէմ երթալ երկրպագութիւն բնելու :
Եւ ոչ հոն տաճարին մէջը գտան իս մէկու մը հետ 12
խօսած՝ կամ շատերը մէկտեղ ժողված , ոչ ժո-
ղովարաններուն մէջ՝ ոչ ալ քաղաքին մէջ . ոչ 13
ալ կրնան քու դիմացդ ցուցընել , ինչ բանի հա-
մար որ հիմայ ամբաստանութիւն կրնենկոր իմ
վրաս : Բայց աս կըխոստովանիմ քեզի՝ թէ ան 14
ճամբուն համար որ հերձուած կըսեն , ես անանկ
կըպաշտեմ իմ հայրենական Աստուածս , հաւա-

տարով ան ամէն բաներուն որ օրինաց և մարգա-
15 րէից մէջ գրված է : Այս ունիմ Աստուծոյ՝ որ
անոր առանք ալ կրնասան թէ արդարներուն և
մեղաւորներուն յարութիւն առնել պիտի ըլլայ :
16 Ասոր բանին համար ես ալ ամէն ժամու կըջանամ
մաքուր խղճմտանք ունենալ Աստուծոյ առջեւը ու
17 մարդոց առջեւը : Հապա տարիներէն ետև եկայ
իմ ազգիս ողորմութիւն ընելու , և պատարագուց
18 տրվի . ասանկով իս տաճարին մէջը մաքրըված
գտան՝ ոչ բազմութիւնով , ոչ ալ ամբոխով :
19 Ասիացի Հրէաներէն մէկ քանին , որ անոնց պէտք
էր առջեւդ գալ՝ ու ամբաստանութիւն ընել , թէ
20 որ իմ վրաս բան մը ունէին . կամ թէ ասոնք ի-
րենք ալ Թողբսեն՝ ինչ անիրաւութիւն գտան
21 իմ վրաս , երբոր առեանը կայներ էի : Այդ
թէ ես մէկ խօսքիս համար՝ որ երբ մէջերնին կայ-
ներ էի կանչեցի , թէ Յարութեան յարութեա-
22 նը համար ասօր ես ձեզմէ կրդատվիմ որ :
Փելիքս կալս Թողուց անոնք . ինչու որ աղէկ գի-
տէր ան ճանապարհին վրայ . րսաւ , Երբոր Լի-
սիաս հազարապետը հոս իջնայ՝ անոնք կրտեղեկա-
23 նամ ձեր վրայովը : Հարիւրապետին հրաման ը-
րաւ՝ որ անիկա պահէ , և ընդարձակութիւն
տայ , և իրենիներէն մէկը չարգիլէ անոր սպասա-
ւորութիւն ընելէն :
24 Եւ քանի մը օրէն ետև Փելիքս եկաւ իր Դրու-
սիլլա կնկանը հետ՝ որ Հրէայ էր , Պօղոսը կան-
չեց , և Յիսուս Քրիստոսի հաւատքին վրայով
25 անկէց լսեց : Եւ անիկա երբոր արդարութեան
ու ժուժկալութեան և գալու դատաստանին վրայ
կըխօսէր , Փելիքս զարհուրելով պատասխան տը-
ւաւ . Դուն հիմայ գնա , և երբոր տեղ ըլլայ՝
26 ես քեզ կրկանչեմ : Նաև յոյս ունէր՝ որ Պօղոս
իրեն բան մը տայ , անոր համար շատ անգամ ին-
27 քը կրկանչէր՝ հետը կրխօսէր : Երկու տա-
րին որ լմընցաւ՝ Փելիքսին տեղը Փեստոս Պորկի-

ոսը եկաւ . փեղկեաց ալ Երեսաներուն շնորհք մը
ընել ուզելով , Պօղոսը կապած թողուց :

ԻԸ :

Փեստոս երբոր ան գաւառը հասաւ՝ իրեք օրէն 1
ետև Կեսարիայէն Երուսաղէմ եկաւ : Եւ քա- 2
հանայապետները ու Երեսաներուն գլխաւորները
Պօղոսին վկայով իրեն իմացուցին , և կաղաչէին՝ 3
շնորհք կրնդրէին իրմէն , որ անիկա Երուսա-
ղէմ կանչէ . որովհետև դնելով ճամբան զինքը
սպաննելու : Բայց Փեստոս պատասխան տուաւ , 4
որ անիկա Կեսարիա պահեն . որ ինքն ալ շատ
չանցած հոն պիտի երթայ : Եւ ձեզմէ ով կրնայ 5
նէ՝ ըսաւ , իմ հետս թող իջնան . և թէ որ ան
մարդուն վրայ յանցանք մը կայ նէ՝ ամբաստա-
նութիւն թող բնեն անոր վրայ : Եւ հոն ութը 6
կամ տասը օրէն աւելի չի կեցած՝ եկաւ Կեսարիա
իջաւ . և ետևի օրը ատեան նստաւ՝ հրաման ըրաւ
որ Պօղոսը բերեն : Եւ երբոր եկաւ՝ Երուսաղէ- 7
մէն իջնող Երեսաները անոր չորս կողմը կայնեցան ,
շատ ու ծանր յանցանքներ կրդնէին վրան , որ
չէին կրնար ցուցընել : Ինչու որ Պօղոս պատաս- 8
խան կուտար , թէ Ես ո՛չ Երեսաներուն օրէնքին՝
և ո՛չ տաճարին՝ ո՛չ ալ Կայսրին դէմ բան մը ը-
րեր եմ : Բայց Փեստոս ուզելով որ Երեսաներուն 9
շնորհք ընէ՝ պատասխան տուաւ Պօղոսին ու ը-
սաւ , Կուզես Երուսաղէմ երթալ , և հոն ատ
բաներուն վրայով իմ առջեւս դատիլ : Պօղոս 10
ալ ըսաւ . Կայսրին ատեանը եկեր կայներ եմ ,
ուր որ պէտք է ինծի դատիլ . Երեսաներուն գէ-
շութիւն մը ըրած չեմ , ինչպէս որ դուն ալ ադէկ
գիտես : Ասպա թէ որ գէշութիւն մը ըրեր եմ՝ և 11
մեռնելու արժանի բան մը ըրի նէ , ես մեռնելէն
չեմ վախնար . բայց թէ որ ոչինչ բան մըն է՝ որ
ասոնք իմ վրաս ամբաստանութիւն կընեն , մէկը
չի կրնար իս ատոնց ձեռքը տալ . Կայսրին կըսո-

12 ղաքեմ ։ Ընտրեցաւ փեստոս խորհրդակցին հետ
խօսելով՝ պատասխան տուաւ՝ թէ կայսրին բողո-
քեցեր , կայսրին պիտի երթաս ։
13 Վերջին մը օրեր անցնելէն ետև Ագրիպպաս
թագաւորը և Բերենիկէն կեսարիա եկան՝ փես-
14 տոսը բարեւելու ։ Եւ շատ օրեր որ հոն անցուցին՝
փեստոս Պօղոսին համար թագաւորին իմացուց՝
ու ըսաւ . Հոս մէկ մարդ մը մնացեր է փելիքսէն
15 կապված ։ Որուն վրայով երբոր Երուսաղէմ
գացի՝ քահանայապետները ու Հրէից գլխաւոր-
ները իմացուցին ինծի , կուզէին որ ես անոր պա-
16 տիժ մը տամ ։ Որոնց պատասխան տըվի թէ՝
Հռոմայեցիներուն սովորութիւն չէ՝ որ մէկը
ուրիշն մը ձեռք տըվի , մինչև որ ամբաստանվածը
ամբաստանողները դիմացը չունենայ , ու ան ամ-
բաստանութեանը դէմ պատասխան տեղ գըտ-
17 նայ ։ Եւ երբոր հոս եկան՝ ամենևին չուշացուցի .
հապա ետևի օրը առտուն նստայ՝ հրաման ըսի որ
18 մարդը բերեն ։ Իր վրայ ամբաստանողներն ալ
եկան , մէկ գէշ յանցանք մը չէին կրնար ցուցը-
19 նել՝ ինչ որ ես կը կարծէի . հապա մէկ վէճ մը
ունէին անոր հետ իրենց կրօնքին վրայ , և մէկ
Յիսուս անունով մեռածի մը վրայ . որուն համար
20 Պօղոս կըսէր թէ ողջ է ։ Երբոր տարակուսանքի
մէջ մնայ սաանկ բաները քննելու համար՝ ըսի ,
թէ՝ Կուզե՞ս երուսաղէմ երթալ՝ և հոն ան բա-
21 ներուն համար դատվիլ ։ Բայց Պօղոս երբոր բո-
ղոքեց՝ որ պահվի քաջարանց Կայսրին դիմացը ել-
լալու , հրաման ըրի որ զինքը պահեն՝ մինչև որ
22 Կայսրին տանիլ տամ ։ Ագրիպպաս փեստոսին
ըսաւ . Ես ալ կուզէի ատ մարդը մտիկ ընել . ան
ալ ըսաւ , Վաղը կըլսես ։
23 Եւ ետևի օրը երբոր Ագրիպպաս ու Բերե-
նիկէն մեծ և փառաւոր հանդէսով եկան՝ ու ա-
տեան մտան հազարապետներով և քաղաքին պա-
տուաւոր մարդիկներովը մէկտեղ . փեստոս ալ .

հրաման ընելով՝ բերին Պօղոսը : Եւ ըսաւ փես- 24
տոս . Ագրիպպա արքայ՝ և դուք ալ ներկայ մար-
դիկ որ մեր հետ եք , տեսա՞ք զսա՝ որուն համար
վասն Հրէաներուն բոլոր ժողովուրդը ամբաստա-
նութիւն ըրին ինծի Երուսաղէմ և հոս ալ , կը-
գանչէին թէ պէտք չէ որ ատիկա ողջ մնայ :
Բայց ես հասկրցայ որ ինքը մեռնելու արժանի 25
բան մը ըրած չէ . և ինքը քաջարանց Կայսրին որ
բողոքեց , մտմըտացի որ ղրկեմ : Որուն համար 26
ինչ հաստատ բան մը չունիմ գրելու իմ տէրոջս .
անոր համար ատիկա ձեր առջևը բերի , և մա-
նաւանդ քու առջևդ՝ ով Ագրիպպա արքայ , որ
նորէն քննելով կարող ըլլամ բան մը գրելու :
Քանզի որ ինծի անվայել կերևայ որ մէկ կապած 27
մը ղրկեմ , և անոր վրայով մէկ յանցանք մը չե-
ցուցընեմ :

ԳԼ . ԻՕ .

Եւ Ագրիպպաս ըսաւ Պօղոսին . Քոյման է 1
քեզի՝ որ դուն քեզի համար խօսիս . անառնները
Պօղոս ձեռքը երկրնցուներով պատասխան տը-
ւաւ : Հրէաներուն իմ վրաս ըրած բոլոր ամբաս- 2
տանութեանը համար ով Ագրիպպա արքայ՝ ես
իս երանելի կրնամ , որ այսօր քու առջևդ պա-
տասխան պիտի տամ : Մանաւանդ որ դուն Հրէ- 3
աներուն բոլոր կրօնքի բաները և վիճմունքները
աղէկ գիտես . անոր համար կաղաչեմ որ համբե-
րութեամբ ինծի մտիկ ընես : Ինչու որ տղայու- 4
թենէս ի վեր իմ ինչպէս ապրիլս՝ սկիզբէն Հ-
րուսաղէմ իմ ազգիս մէջը ըլլալովս , բոլոր Հրէ-
աները գիտեն : Որ շատ առաջուց գիտեն (թէ որ 5
ուզեն վկայելու) որ մեր օրէնքին պինդ ստոգ
կարգին պէս՝ փարիսեցի կեցեր եմ : Եւ հիմայ 6
առեանը կեցեր կրգատվիմ որ Աստուծմէ մեր հայ-
րերուն եղած խոստմունքին յոյսին համար . որ 7
մեր տասներկու ցեղը անդադար գիշեր ու ցորեկ

պաշտելով կլսուսան անոր հասնիլ . ա՛ս յոյսին
համար Հրէաներէն կամաստանվ՚ինկոր՝ ո՛վ ար-
8քայ : Ինչո՞ւ չի հաւատալու բան պիտի երևայ ձե-
9զի՝ թէ Աստուած մեռելները կը յարուցանէ : Ես
ինքս արժան կըսեպի Յիսուս Նազովրեցիին ա-
10նունին դէմ շատ բաներ ընել : Որ ըրի ալ Ե-
րուսաղէմի մէջ . և սուրբերէն շատերը բանտը
դնել կուտայի քահանայապետներէն իշխանու-
թիւն առած , ու անոնց մեռածներուն համրանքը
11կըբերէի : Եւ բոլոր ժողովարաններուն մէջը շատ
անգամ անոնք պատժելով՝ կըբռնադատէի որ
հայհոյեն . և էվելը՛ անոնց վրայ կատղած՝ մինչև
12օտար քաղաքները կը հալածէի : Ասանկով երբոր
Դամասկոս կերթայի՝ քահանայապետներուն իշ-
13խանութիւնովը ու հրամանովը , կէսօրվան ատե-
նը ճամբուն վրայ՝ ո՛վ արքայ , երկինքէն լոյս մը
տեսայ արևին լուսաւորութենէն էվելի՛ բոլոր-
տիքս ծագած , ու անոնց բոլորտիքը որ իմ հետս
14կերթային : Եւ երբոր մենք ամենքս գետինը ին-
կանք՝ ձայն մը լսեցի որ Եբրայեցոց լեզուովը ին-
ձի կըսէր , Սաւուղ Սաւուղ՝ ինչո՞ւ իս կը հալա-
ծես , կարծր բան է քեզի՛ խթանին դէմ կից զար-
15նել : Ես ալ ըսի , Դուն ո՛վ ես Տէր . և Տէրը
բաւ , Ես Յիսուսն եմ՝ որուն դուն կը հալածես.
16կոր : Հայց ելիր ու կայնէ ոտքիդ վրայ . ինչու որ
անոր համար քեզի երևեցայ , որ քեզ ձեռք առ-
նեմ պաշտօնեայ և վկայ ընելո՛ ան բաներուն՝ որ
տեսար՝ ու ան բաներուն , որոնցմով պիտի երևամ
17քեզի . քեզ խալըսելով ատ ժողովուրդէն ու հե-
թանոսներէն . որ ես անոնց պիտի խրկեմ քեզ .
18անոնց աչքերը բանալու , խաւարէն լոյսի դար-
ձնելու , և Սատանայի իշխանութենէն Աստու-
ծոյ , որ անոնք մեղաց թողութիւն առնեն , և
սուրբերուն հետ մասնակից ըլլան՝ հնձի հաւատա-
19լով : Ուստի Ագրիպպաս արքայ՝ ան երկնային
20տեսիլքին անհնազանդ չեղայ ես . Հապա առաջ

Ղամասկոս և Երուսաղէմ եղողներուն՝ և բոլոր
Հրէաստանի գաւառները՝ ու հեթանոսներուն՝
քարոզեցի որ զեղջ գան , ու կենդանի Աստու-
ծոյ դառնան , ապաշխարութեան համար արժա-
նաւոր գործքեր գործեն : Ես պատճառին համար 21
Հրէաները իս տաճարին մէջը բռնեցին՝ կուզէին որ
սպաննեն : Աստուծմէ օգնութիւն հասնելով՝ մին- 22
չև աս օրս ողջ մնացի , պզտիկին ու մեծին վկայ-
ութիւն տալով . դուրսէն ոչինչ բան մը չի զուր-
ցելով՝ քան թէ ինչ որ մարգարէները և Մովսէս
խօսեցան ըլլալիք բաներուն վրայ . թէ Քրիստոս 23
պիտի չարչարվի , թէ անիկա պիտի առաջ մեռել-
ներէն յարութիւն առած՝ լոյս պիտի քարոզէ ժո-
ղովուրդին և հեթանոսներուն :

Եւ ասանկ որ ինքը պատասխան տուաւ՝ փես- 24
տոս ամբոր ձայնով մը ըսաւ , Կրնեղբոհկոր
Պօղոս . շատ կարդացողութիւնդ քեզ խենթ կը-
դարձնէ : Պօղոս ալ ըսաւ . Ես խենթ չեմ՝ ով 25
պատուական փեստոս , հապա խոնարհութեան և
ճշմարտութեան խօսքեր կըզրուցեմ : Ես քա- 26
ները թագաւորը գիտէ , որուն դիմացը համար-
ձակ կըխօսիմ . ինչու որ չեմ կարծեր թէ ա-
սոնցմէ մէկ բան մը քեզմէ ծածկուած ըլլայ . վասն
զի աս բաները չէ թէ մէկ անկիւնի մը մէջ եղած
է : Մարգարէներուն կըհաւատաս Հագրիպպաս 27
արքայ . գիտեմ որ կըհաւատաս : Եւ Հագրիպպաս 28
ըսաւ Պօղոսին , Քիչ մնաց որ իմ միտքս պա-
կեցուներս քրիստոնեայ ըլլալու : Պօղոս ալ ըսաւ . 29
Աստուծմէ կըխնդրեի որ թէ քիչով՝ թէ շատով
չէ թէ միայն դուն , հապա ամէնքն ալ՝ որ այսօր
ինծի կըլսենկոր , անանկ ըլլան ինծոր որ ես եմ ,
աս կապերէս՝ ի զատ :

Ոտքի վրայ ելաւ թագաւորը և դատաւորը՝ և 30
Բերնիկէն , ու անոնք ալ որ իրենց հետը նստեր
էին : Եւ երբոր կերթային՝ իրարու հետ կըխօ- 31
սէին ու կըսէին , թէ Այս մարդը մեռնելու կամ

32 կապվելու արժանի բան մը չընկերկոր ։ Գրիպպաս
ալ Փեստոսին ըսաւ . Կրնայ մարդը կարելի էր թող
տալ , թէ որ ինքը Կայսրին բողոքած չըլլար ։

ԳԼ . ԻԱ ։

1 Երբոր մեզի հրաման եղաւ նաւով Իտալիա
երթալ , Պօղոսը և ուրիշ քանի մը կապուած-
ներ տրուին Յարիւրապետի մը՝ որուն անունը
2 Յուլիոս էր , Աեբաստոսի գունդէն ։ Եւ մեկ
Ադրամիտտացի նաւ մը ելանք՝ գացինք , որ Ա-
սիացոց կողմերէն պիտի երթար . Արիստարքոս
3 Մակեդոն Թեսաղոնացին ալ մեր հետն էր ։ Եւ
ետեւի օրը Սիդոն իջանք . ու Յուլիոս Պօղոսին
մարդասիրութիւն ցուցընելով՝ հրաման ըրաւ որ
բարեկամներուն երթայ , ու օգնութիւն գտնայ ։
4 Անկէց ալ ելանք՝ Կիպրոսին վարի կողմէն նաւե-
5 ցինք հովին դէմ ըլլալուն համար ։ Ալնատեղը
Կիլիկիայի ու Պամփիլիայի ծովին մէջ տեղէն նա-
ւելով՝ Լիկացիներուն Միւռա քաղաքը իջանք ։
6 Եւ հարիւրապետը հոն մեկ Ադէքսանդրացի նաւ
մը գտաւ՝ որ Իտալիա կերթար , մեզ հոն խօ-
7 թեց ։ Եւ շատ օրեր կամաց կամաց նաւելով հա-
գիւ Կնիդոսին քովերը հասանք . և հովը որ մեզ
չէր թողուր , Կրետէին վարի կողմէն Սալմո-
8 նայի քովէն նաւեցինք ։ Հազիւ թէ անկէց ալ
անցնելով՝ մեկ տեղ մը եկանք , որ Կալեղեցիկ նա-
ւահանգիստ կըսուէր . որ Կասեա քաղաքը անոր
մօտ էր ։

9 Եւ երբոր շատ ժամանակ անցաւ՝ և նաւին
ճամբայ ելլալն ալ վտանգաւոր էր , ծովին ատենն
10 ալ որ նոր անցեր էր , Պօղոս խրատ կուտար , և
կըսէր անոնց , Ա՛րդիկ՝ ես կըտեսնամ որ աս
նաւիս ճամբայ ընելը տառապանքով ու շատ վնա-
սով պիտի ըլլայ , չէ թէ միայն բեռանը ու նա-
11 ւին՝ հապա մեր անձերնուս ալ ։ Հայց Յարիւրա-
պետը՝ նաւապետին և նաւավարին էվելի մտիկ

կընէր , քան թէ Պօղոսին խօսքերուն : Երբոր 12
ան նաւահանգիստը յարմար չէր ձմեռը
հոն անցուն ելու , շատերը մոմէտային անկէց եր-
թալ , որ կերպով մը կարող ըլլան Փիւնիկէ
հասնիլ , Կրետացոց նաւահանգիստը ձմեռը կե-
նալու , որ դէպի Հարաւ ու ցամաք կընայէր :
Եւ երբոր Հարաւ փչեց՝ սեպեցին որ երթալու 13
տեղերնին կրնան հասնին , և թող տալով կրետէին
քովերէն կանցնէին : Եւ շատ ատեն չանցած՝ մէկ 14
ուռեցնող հով մը ելաւ անոր դէմ , որ Եւրա-
կիկլոն կրսվէր : Երբոր նաւը մէկ դի խլեցաւ , և 15
հովին դէմը չի կրցաւ դիմանալ՝ թող տրուած
կերթայինք ու կուգայինք : Վերջին մէկ կղզի մը 16
չըտկրվելով՝ որ Կղաւդա կրսվէր , հազիւ կրցանք
մակոյկը բռնել : Որ անիկա առին՝ օգնութիւն 17
ըլլալու համար նաւին կապեցին . ու վախնալով
որ չըլլայ թէ աւազուտը խնան , առագաստը ի-
ջեցուցած անանկ կերթային ու կուգային : Եւ 18
սաստիկ նեղութեան մէջ որ ինկանք , նաև օր
քեռները դուրս նետեցին : Եւ երրորդ օրը նաւին 19
գործիքները իրենց ձեռքովը դուրս նետեցին :
Երբոր շատ օրեր ոչ արև՝ ոչ ալ աստղերը կե- 20
րևային , և փոթորիկը քիչ չէր վրանիս՝ ալ բո-
լորովին մեր ազատելու յոյսը վերցաւ : Եւ որով- 21
հետև շատ օրեր անօթի էին , անատեր Պօղոս
անոնց մէջը կայնելով՝ ըսաւ , Ով մարդիկ պէտք
էր ձեզի որ ինծի մտիկ ընէիք և Կրետէէն չել-
լայիք , ու աս տառապանքը և մնասը չի քաշէիք :
Եւ հիմայ ձեզ կըսդրդուիմ որ սիրտ առնէք , որ 22
ձեր մէկերուդ անձին վնաս մը պիտի չըլլայ՝ նա-
ւէն ի զատ : Ինչու որ աս գիշերս Աստուծոյ հը- 23
րեշտակը ինծի երևցաւ , որ ես անորն եմ՝ ու
զինքը կրպաշտեմ . և ըսաւ . Ա՛ի վախնար Պե- 24
դոս՝ կայսրին դիմացն ալ պէտք է որ ելաս դուն .
և ահա Աստուած ամեներ քեզի շնորհեց որ քու
հետդ նաւին մէջն են : Ուստի մարդիկ՝ կորիճ և- 25

ղնք · ինչու որ ես կըհաւատամ Աստուծոյ որ ա-
նանկ պիտի ըլլայ , ինչպէս որ ան իմ հետս խօ-
26 սեցաւ ։ Այսպէս թէ պէտք է մեզի որ մէկ կողմ զի-
27 մը խմանք ։ Երբոր տասնըչորսերորդ գիշերն էր
Ադրիական ծովին անդունդին մէջը որ կըթափը-
փայինք , կէս գիշերին նաւավարները կըկարծէին՝
28 թէ մէկ երկիրի մը մօտեցեր են ։ Եւ գնահատը
ձգեցին՝ քսան գրկաչափ գտան · ու քիչ մըն ալ
կեցան՝ նորէն ձգեցին , և տասնըհինգ գրկաչափ
29 գտան ։ Աստիկ վախնալով՝ որ չըլլայ թէ քարոտ
տեղվանք իյնան , ետևի կողմէն չորս երկաթ ձգե-
30 ցին , ատոտ ըլլալուն կըփափաքէին ։ Նայց նա-
ւավարները նաւէն փախչիլ կուզէին · ուստի մա-
կոյկը ծովը իջեցուցին , պատճառելով որպես թէ
31 առջի կողմէն ալ երկաթ պիտի ձգեն ։ Պօղոս ը-
սաւ հարիւրապետին ու զինուորներուն , Թէ որ
ատոնք նաւին մէջը չի կենան նէ՝ դուք չէք կրնար
32 ազատ մնալ ։ Այնատենը զինուորները մակոյկին
33 չուանները կտրեցին՝ և դուրս ձգեցին ։ Եւ երբոր
առտու ըլլալու վրայ էր Պօղոս կաղաչէր ամենուն
որ կերակուր առնեն · կըսէր , Այս տասնըչորս օր
է որ դուք ըսպասելով անօթի կեցեր մնացեր էք
34 ու բան մը չէք կերած ։ Ուստի կաղաչեմ ձեզի որ
կերակուր ուտէք · ինչու որ ասիկա ձեր ազատու-
թեանը համար է , որ ձեզմէ մէկուն գլխէն մազ
35 մը չի կորսրվի ։ Եւ ասոր որ ըսաւ՝ հացը առաւ ա-
մենուն դիմացը Աստուծմէ գոհացաւ , կտրեց՝ ու
36 սկրսեց ուտել ։ Եւ ամենն ալ սիրտ առին , իրենք
37 ալ կերակուր կերան ։ Եւ նաւին մէջը ամէնը եր-
38 կու հարիւր հոգաթասունըվեց հոգի էինք ։ Եր-
բոր կիշտացան կերակուրովը՝ նաւը թեթևցուցին
ցորենը ծովը թափելով ։
39 Եւ երբոր առտու եղաւ՝ ցամաքը չէին ճանչ-
նար , միայն թէ մէկ գոգ մը կըտեսնային որ ծովին
եզերքը պիտի ըլլար · կըմտմտային որ թէ կա-
40 րելի է նաւը հոն խաղցընել ։ Եւ խարխիները

կարելով ծովը ձգեցին , թևերուն կապերը թուլ-
ցուցին , և առագաստը մէկ դի առին , ու տըվին
հովին դէպի ան ծովեզերքը : Ա Այց երկու կողմը 41
ծով տեղ մը որ ինկան՝ նաւը ծռեցին . և նաւին
առջի կողմը խրելով անշարժ մնաց , և ետևի
կողմը ալեհեծուծ սաստկութենէն կըքակվէր :
Ը Ինուորներն ալ խորհուրդ կրնէին՝ որ կապված- 42
ները սպաննեն , որ չըլլայ թէ մէկը լողայ ու
փախչի : Ա Այց հարիւրապետը որ Պօղոսը խալը- 43
սել կուզէր՝ արգիլեց իրենք ան խորհուրդէն ,
հրաման ըրաւ թէ՝ Ա՛վ որ կրնայ լողալ , թող
անոնք առաջ նետվին ու ցամաքը ելլան . և ու- 44
րիշները՝ ոմր տախտակներով , և ոմր նաւին ու-
րիշ բաներով . ու եղաւ որ ասանկ բոլորն ալ
ազատ ցամաքը ելան :

ԳԼ . ԻՀ :

Ա Ե երբոր ազատեցանք՝ գիտցանք որ ան կղզի- 1
ին անունը Ա՛ելիտինէ էր . բայց բարբարոս-
ները քիչ մարդասիրութիւն չի ցուցցին մեզի :
Ինչու որ կրակ վառեցին և մեզ ամէնքս ալ ըն- 2
դունեցին ան սաստիկ անձրևին համար ու ցուր-
տին համար : Եւ երբոր Պօղոս շատ մը խոհ- 3
ովղվեց , և կրակին վրայ դրաւ , տաքութենէն
մէկ իժ օձ մը ելաւ՝ անոր ձեռքը բռնեց : Խարբա- 4
րոսներն ալ երբոր ան գազանը տեսան անոր
ձեռքէն կախված՝ իրարու կըսէին , Ւնանկ է նէ
աս մարդը սպանողը մըն է , որ թէպէտ ծովէն
ազատեցաւ՝ իրաւունքը թող չի տուաւ որ ապրի :
Եւ ինքը գազանը կրակին մէջը թօթվելով իրեն 5
մէկ վնաս մը չեղաւ : Ա Այց անոնք կըսպասէին որ 6
անկից ուռենայ կամ ինկնայ և յանկարծակի մեռ-
նի . երբոր շատ մը սպասեցին՝ և տեսան որ մէկ
վնաս մը չհդաւ իրեն , նորէն խօսքերնին փոխե-
լով կըսէին թէ , Ա՛ստուած մըն է : Եւ ան 7
տեղին բոլորտիքը կղզիին տէրոջը գեղերը կային ,

որուն անունը Պողղիոս էր · որ ինքը մեզ իրեք
8օր իր քովը առաւ , և սիրով ընդունեց : Եւ եղաւ
որ Պողղիոսին հայրը ջերմով և փոքրշտւքի ցա-
ւով հիւծնդացաւ · Պօղոս անոր քովը մտաւ՝ և ա-
ղօթք ըրաւ , ձեռքը վրան դրաւ՝ և բուժեցուց
9անիկա : Ա՛ս որ եղաւ՝ ուրիշ հիւանդները որ ան
կղզիին մէջն էին , կուգային ու կըբժշկըվէին ·
10որոնք ալ էվելի պատիւ ընելով մեզ մեծարեցին ·
և երթալու ատեննիս ալ՝ ինչ որ պէտք էր նէ
տըվին :

11 Եւ իրեք ամիսէն ետև մեկ Ալէքսանդրիայի
նաւ մը ելանք , որ ձմեռը ան կղզին անցու ցեր
12էր , Կիսկուրայի նշան ունէր : Եւ Սիրակուսա
13իջանք՝ իրեք օր հոն կեցանք : Ընկէց ալ գացինք
Հռեգիոն հասանք · և մէկ օրէն ետև Հարաւ որ
14փչեց՝ երկու աւուր մէջ Պատղոս եկանք : Ուր
հոն եղբայրներ գտանք · որոնք աղաչեցին որ եօ-
15թը օր հոն մնանք , ու ետքը Հռոմ ելանք : Եւ
անկէց եղբայրները երբոր մեր վրայով լսեցին՝ մեր
դիմացը ելան մինչև Ապիոսի վաճառանոցը՝ և
Իրեք Խանութները · Պօղոս որ անոնք տեսաւ՝
գոհութիւն տուաւ Աստուծոյ , և սիրտ առաւ :
16 Եւ երբոր Հռոմ մտանք՝ Պօղոսին հրաման
եղաւ որ իրեն պահապան զինուորին հետ զատ
17կենայ : Եւ եղաւ որ իրեք օրէն ետև անիկա
Հրէաներուն գլխաւորները կանչեց · ու երբոր
եկան՝ ըսաւ անոնց · Ա՛րդիկ եղբայրներ՝ ես ժո-
ղովուրդին կամ հայրենական կրօնքին դէմ բան
մը չըրած , Երուսաղէմ կապված՝ Հռոմայեցի-
18ներուն ձեռքը մատնըվեցայ : Որոնք երբոր իս
դատեցին՝ ուզեցին որ թողլ տան , ինչու որ վրաս
19մեկ մեռնելու մը յանցանք չի գտան : Հայց Հը-
րէաները որ հակառակ կեցան՝ պէտք եղաւ որ
Կայսրին բողոքեմ , չէ թէ ես իմ ազգիս վրայ
20չարախօսելիւն մը ունէի : Ա՛ս պատճառին հա-
մար ձեզի աղաչեցի՝ որ տեսնամ և խօսիմ . ինչու

որ Իսրայէլի յոյսին համար ես աս շղթաներուն
մէջն եմ : Անոնք ալ ըսին իրեն . Անիք քոյ- 21
վրայդ Հրէաստանէն ոչ թուղթ մը առեր ենք ,
և ոչ եկող եղբայրներէն քու վրադ գէշութիւն մը
պատմեց կամ խօսեցաւ : Հայց կաղաչենք որ՝ 22
քեզմէ լսենք թէ դուն ինչ միտքի վրայ ես . ինչու
որատ աղանդին համար մենք աղէկ իմացեր ենք՝
որ ամէն տեղ ներհակութիւն կըգտչէ : Ու- մկ 23
օր մը ատեն դնելով անոր՝ շատերը անոր բնակա-
րանը եկան , որոնց Աստուծոյ թագաւորութիւնը
կըպատմէր վկայութիւնով , և խել մըներին կը-
պահկեցուներէր Յիսուսի համար Առաւօտուընէ 24
ու մարգարէներէն՝ առտըմընէ մինչև իրիկուն :
Եւ ոմանք կըհաւատային ըսածներուն , և ոմն 25
մըն ալ չէին հաւատար : Եւ իրարու հետ չի մի-
աբանած գացին՝ երբոր Պօղոս մէկ խօսք մը ըսաւ ,
թէ՝ Հոգին Սուրբ ազէկ խօսեցաւ մեր հայրերուն
Եսայի մարգարէին ձեռքովը . և ըսաւ , Գնա՛ ան 26
ժողովուրդին ու ըսէ . Լսելով պիտի լսէք՝ ու չի-
մանաք . և տեսնալով պիտի տեսնաք՝ ու չի տես-
նաք : Ինչու որ ան ժողովուրդին սիրտը թանձ- 27
րըցաւ , և ականջնին ծանր լսեցին , ու աչքերնին
գոցեցին՝ որ չըլլայ թէ կրնան աչքովը տեսնան , և
ականջովը լսեն , և սրտովը իմանան , ու դարձի
գան՝ և ես բժշկեմ անոնք : Ուստի յայտնի ըլլայ 28
ձեզի՝ որ Աստուծոյ փրկութիւնը հեթանոսնե-
րուն խրկըվեցաւ , և անոնք պիտի լսեն : Եւ եր- 29
բոր ասը զըրցեց՝ Հրէաները իր քովէն դուրս գա-
ցին . որոնք շատ վիճաբանութիւն ունէին մէջեր-
նին :

Եւ լման երկու տարի իրեն վարձքով բնակած 30
տունը կեցաւ . և իր քովը եկողներուն ամէնը 31
կրնդունէր . կըքարոզէր Աստուծոյ թագաւորու-
թիւնը , և Տէր Յիսուս Քրիստոսի վրայով ա-
ռանց արգիլելու կըսորվեցուներէր բոլոր
համարձակութիւնով :

ՊՕՂՈՍ
ԱՌԱՔԵԼԻՆ ԹՈՒՂԹ
ԸՆ
ՀՌՈՎՄԵՑԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա։

1 Պօղոս Յիսուսի Քրիստոսի ծառայ՝ առաքեալ
ընտրեալ՝ կանչուած՝ Աստուծոյ աւետարանին
2 համար ընտրուած (ան որ առաջուց իր մարգա-
րէներուն ձեռքովը սուրբ գիրքերով խոստացաւ)
3իր Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսին հա-
մար՝ որ մարմնով կողմանէ Դաւիթի ցեղէն եղաւ.
4ան որ հանդերձ զօրութեամբ Որդի Աստուծոյ
յայտնուեցաւ Սուրբ Հոգիին կողմանէ, մեռե-
5նեռէն յարութիւն առնելով. որ անոր շնորհք
և առաքելութիւն առինք՝ հաւատքի հնազանդու-
թեան համար բոլոր ազգերուն մէջ, անոր ա-
6նունին համար. որ անոնց մէջը դուք ալ Յիսուս
7Քրիստոսի կանչուած էք. ձեր ամէնուն որ Հռո-
մայ էք՝ Աստուծոյ սիրելիներուդ, սուրբ ըն-
տրեալ կանչուածներուդ. Շնորհք և խաղաղու-
թիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն՝ ու Տէր Յի-
սուս Քրիստոսէն։
8 Գլխաւ առաջ՝ կը գոհանամ իմ Աստուծմէս Յի-
սուս Քրիստոսի ձեռքովը ձեր ամէնուն համար,
որ ձեր հաւատքը բոլոր աշխարհ զուրցուած է։

Ա կայ է ինձի Աստուած , ան որ ես կրպաշտեմ 9
իմ Հոգւովս անոր Ավետարանին մէջը ,
թէ ինչպէս ձեզ կլսիշեմ ամէն առեն իմ աղօթ- 10
քիս մէջ , ինդրելով՝ որ գոեւէ անգամ մը Աս-
տուծոյ կամքովը ինձի յայղողութիւն մը ըլլայ ձե-
զի գալու ։ Ինչու որ շատ փափաք ունիմ ձեզ 11
տեսնալու , որ ձեր վրայ մէկ հոգևոր շնորհք մը
դարձունեմ՝ ձեզ հաստատելու համար · այսինքն 12
է՝ ձեր հետ ես ալ միխիթարակից ըլլամ իմ՝ ձեր
փոխադարձ հաւատքին համար ։ Ձեմ ուզեր որ 13
չգիտցող ըլլաք ղեղայրներ , որ շատ հեղ ուզեցի
գալ ձեզի՝ (և մինչև հիմայ արգիլվեցայ) որ ձեր
մէջն ալ քիչ մը պտուղ գտնամ՝ ինչպես որ ու-
րիշ հեթանոսներուն մէջը ։ Ինչու որ՝ Հոյներուն 14
և Խարբարոսներուն , իմաստուններուն և ան-
միտներուն պարտըկան եմ , անանկ՝ հրքան որ
ձեռքէս կուգայ յօժարութիւնով ձեզի ալ որ
Հռոմա էք՝ աւետարանը քարոզելու ։
Ինչու որ ես ամօթ չեմ սեպեր աւետարանը · 16
վասն զի Աստուծոյ զօրութիւնն է ան՝ ամէն հա-
ւատացեալներուն փրկութեանը համար · առաջ
Հրէային՝ ու ետքը Հեթանոսին ։ Ինչու որ Աս- 17
տուծոյ արդարութիւնը հաւատքէն հաւատքին՝
անով յայտնի կըլլայ · ինչոր որ գրված է , թէ՝
Արդարը հաւատքէն պիտի ապրի ։
Ինչու որ Աստուծոյ բարկութիւնը երկինքէն 18
պիտի յայտնըվի մարդոց բոլոր ամբարշտութեա-
նը և անիրաւութեանը վրայ , անոնք որ ճշմար-
տութիւնը անիրաւութեամբ բռներ են ։ Պատ- 19
ճառն որ Աստուծոյ վրայով գիտնալու բաներ
իրենց մէջը յայտնի է · որովհետև Աստուած
իսկ անոնց յայտնեց ։ Ինչու որ՝ աչքի չերևցած 20
իր բաները աշխարհի սկիզբէն աս ստեղծուած-
ներովը կխմացվին կըտեսնըվին , այսինքն է՝ ի-
րեն մշտնջենաւոր ըլլալը , և զօրութիւնը , ու
Աստուածութիւնը · անանկ որ բնաւ ալ պատաս-

21 խան մը չէ գտնան տալու։ Ինչու որ իրենք Աստուած ճանչցան՝ և Աստուծոյ մը պէս չէ փառաւորեցին, կամ շնորհակալ չեղան. հապա իրենց ըսածे խորհուրդներովը փըճացան, և սիրտերին
22 անմտութիւնով խաւարեցաւ։ Իրենք զիրենք իմաստուններուն կարգը դրեր էին, յիմարեցան.
23 և չաւրըվելու Աստուծոյ փառքը փոխիրենց՝ նմանցունելով աւրըվելու մարդու, և թռչուններու, ու չորքոտանիներու, և սողուններու
24 պատկերին։ Ընդ համայն Աստուած ալ պղծութեան մատնեց անոնք իրենց սիրտին ցանկութիւնովը՝ իրենց մարմինները իրենց անձին մէջ խայ-
25 տառակելու. անոնք որ Աստուծոյ ճշմարտութիւնը սուտի հետ փոխեցին, հնազանդեցան ու երկրպագութիւն ըրին ստեղծուածներուն և չէ թէ Ստեղծողին. ան որ յաւիտեան օրհնեալ է. ա-
26 մէն։ Ընդ համայն Աստուած անոնք ցած կիրքերու մատնեց, որ իրենց էգերը անգամ բնական հարկը բնութեան դէմ հարկի հետ փոխեցին։
27 Նմանկ ալ արուները կնկան բնական պէտքը թողուցած՝ իրենց ցանկութիւնովը միմեանց հետ վառուեցան. արուները արուներուն հետ խայտառակութիւն կըգործէին, և իրենց անառակութեան վայրաց հատուցումը իրենց վրայ կընդու-
28 նէին։ Եւ որովհետև չուզեցին զԱստուած ընդունիլ գիտութեանը մէջ պահել, Աստուած ալ անոնք ցած մտածմունքներու մատնեց անվայել բաներ
29 ընելու. որոնք որ լեցուած էին ամէն կերպ անօրէնութիւնով, պոռնկութիւնով, անզգամութիւնով, ագահութիւնով, չարութիւնով, նախանձութիւնով լեցուն, մարդասպանութիւնով,
հակառակութիւնով, խաբեբայութիւնով,
30 չարսըրտութիւնով. Ե՛ն բամբասողներ, վատ խոսողներ, Աստուած ատողներ, թշնամութիւն ընդունողներ, հպարտներ, գոռոզներ, չար բաներ
31 հնարողներ, ծնողքին քամահրողներ. անմիտ-

ներ , խօսք չպահողներ , անգութներ , տմարդի-
ներ , անողորմներ ։ Որ իրենք Աստուծոյ դատաստանը , թէ՝ անոնք որ այսպէս 32
բաներ կընեն՝ մահուընէ արժանի են , և չէ թէ միայն ան ընողները , հապա անոնք ալ որ ան ը-
նողներուն հետ կամքերնին մէկ է ։

Գ Լ ։

Ուստի ով մարդ՝ դուն որ դատաստան կըտես- 1
նաս՝ պատասխան չունիս տալու . քանզի ինչ
բանով որ ընկերդ կըդատես , ասով քու անձդ
կըդատապարտես . ինչու որ դուն նոյն բանը
կընես՝ որով կըդատես ։ Որովհետև գիտենք՝ թէ 2
Աստուծոյ դատաստանը ճշմարտութիւնով կըլլայ
անոնց վրայ , որ անպէս բաներ կըգործեն ։ Ա՛րդ 3
ով մարդ՝ դուն որ անպէս բաներ ընողները կը-
դատես և դուն նոյն բանը կընես , ասո՞ւ միտքդ
կանցընե՞ս թէ դուն Աստուծոյ դատաստանէն
ազատ պիտի մնաս ։ Թէ որ անոր անչափ քաղց- 4
րութիւնը՝ և ներելը՝ ու համբերութիւնը կանար-
գես , չե՞ս գիտեր՝ որ Աստուծոյ անուշութիւնը
քեզ դէպի ապաշխարութիւն կառաջնորդէ . բայց 5
քու խստութիւնովդ և անզղջ սիրտովդ քու ան-
ձիդ բարկութիւն կըդիզես՝ բարկութեան և Աս-
տուծոյ արդար դատաստանին յայտնութիւնը օրվա-
նը համար ։ ան որ ամէն մէկուն իրենց գործքե- 6
րուն փոխարէնը կըվճարէ . յաւիտենական կեանք 7
անոնց որ բարի գործքերու մէջ համբերութեամբ
կըկենան , փառք ու պատիւ և անմահութիւն կը-
խնդրեն . բայց անոնց որ հակառակ են , և ճըշ- 8
մարտութենէ գլուխ քաշած՝ ու անիրաւութեան
հաւէ գացած , բարկութիւն և սրդողկութիւն՝
նեղութիւն և տառապանք ամէն մարդու վրայ՝ որ 9
չար կըգործէ , առաջ Հրէային՝ և յետը Հեթա-
նոսին ։ փառք ու պատիւ և խաղաղութիւն ան- 10
ամէնուն վրայ՝ որ բարի կըգործէ , առաջ Հրէ-

11 ային՝ նոքը Հեթանոսին : Ինչու որ Աստուծոյ
12 քով ակնառութիւն չի կայ : Ինչ որ առանց
օրէնքի մեղք գործեցին՝ առանց օրէնքի պիտի կոր-
սըվին . և անոնք որ օրէնքի տակ մեղք գործեցին՝
13 օրէնքովը պիտի դատապարտին . (ինչու որ չէ
թէ օրէնքը լսողները Աստուծոյ առջևը արդար
են , հապա օրէնքը կատարողները պիտի արդա-
14 րանան : Ուստի հեթանոսները որ օրէնք չունին՝
երբոր բնականաբար օրէնքին գործքերը որ կը-
գործեն , անոնք որ օրէնք չունին՝ իրենց անձեր-
15 նուն օրէնքը բուն իրենք են . որ կըցուցընեն օ-
րէնքին գործքերը իրենց սիրտին մէջ գրված՝ ի-
րենց խղճմտանքին վկայութեամբը , և իրենց միտ-
քին դատմամբը իրար յանդիմանելով կամ թէ
16 իրաւունք տալով) ան օրը որ Աստուած մարդոց
ծածուկ բաները պիտի դատէ Յիսուս Քրիստոսի
ձեռքովը՝ իմ Աւետարանիս պէս :
17 Ուրեմն դուն որ Հրէայ կոչվիր ես՝ և օրէնքին
18 կըռթըներ ես , ու Աստուծմով կըպարծենաս , և
անոր կամքը գիտես . ու ան որ աղէկն է՝ կընտ-
19 րես , և օրէնքէն խրատված ես . անձիդ վրայ յոյս
ունիս՝ կոյրերուն առաջնորդ ըլլալու , խաւարած-
20 ներուն՝ լոյս , անզգամներուն՝ խրատ տըվող , տը-
ղայոց վարժապետ . գիտութեան ու ճշմարտու-
21 թեան կերպարանքը օրէնքէն ունենալու : Ուրկ
արդ դուն որ ընկերիդ կըսօրվեցուներ , քու ան-
ձիդ չես սորվեցուներ . որ կըքարոզես գողութիւն
22 չընել , կըգողնաս . որ կըսես շնութիւն չընել ,
շնութիւն կընես . որ կըզզուիս կռատուններէն ,
23 սեղաններըը կըթալըես . որ օրէնքովը կըպարծե-
նաս , օրէնքէն դուրս ելլելով՝ Աստուած կանար-
24 գես : Ինչու որ՝ Աստուծոյ անունը ձեր պատճա-
ռովը հեթանոսաց մէջ կըհայհոյիկոր , ինչպէս որ
գրված է :
25 Թլփատութիւնը շահ կունենայ՝ թէ որ օրէնքը
պահես . հապա թէ որ օրէնքին դէմ յանցաւոր

ես՝ քու թլփատութիւնդ անթլփատութիւն եղաւ ։
Ուստի եթէ որ անթլփատութիւնը օրէնքին իրա- 26
ւունքը պահէ , չէ՞ որ անոր անթլփատութիւնը
թլփատութիւն կրնակվի . և բնականաբար և- 27
ղած անթլփատութիւնը օրէնքը կատարելով՝ քեզ
պիտի դատապարտէ , որ գիրով և թլփատութիւ-
նով օրէնքին յանցաւոր ես ։ Ինչու որ՝ Հրէայ 28
չէ ան՝ որ դրսէվանց է , և թլփատութիւն չէ ան՝
որ դրսէվանց մարմինով է . Հապա Հրէայ ան՝ է 29
որ ներսէվանց է , և թլփատութիւն սրտինը՝ հո-
գիով , ու չէ թէ գիրով . որ անոր գովութիւնը
չէ թէ մարդկներէն է , հապա՝ Աստուծմէ ։

Գ.

Ուրեմն՝ Հրէան ինչ էվելի բան ունի , կամ 1
ան թլփատութենէն ինչ շահ ։ Շատ բա- 2
ներ՝ ամէն կերպով . պիտի առաջ ան՝ որ Աստու-
ծոյ հրամանները անոնց հաւատացուեցաւ ։ Ուրեմն 3
թէ որ անոնցմէ ոմանք չի հաւատացին , արդեօք
անոնց անհաւատութիւնը Աստուծոյ հաւատքը
կրնաւոչնչէր . քաւ լիցի ։ Ակայն՝ Աստուած 4
ճշմարիտ թող ըլլայ , և բոլոր մարդիկ՝ սուտ .
ինչպէս որ գրված է , Որ քու խօսքերուդ մէջ
արդար ըլլաս , և դատաստան ընելու ատենդ դուն
յաղթես ։ Ուրեմն թէ որ մեր անիրաւութիւնը 5
Աստուծոյ արդարութիւնը յայտնի կերևցունէ ,
ինչ ըսենք . արդեօք անիրաւ է Աստուած՝ որ էր
բարկութիւնը վրանիս կրբերէ . (մարդկօրէն կը- 6
սեմ՝որ աս .) քաւ լիցի . Հապա թէ չէ ինչպէս Աս-
տուած կրդատէ աշխարհ ։ Ինչու որ եթէ Աս- 7
տուծոյ ճշմարտութիւնը իմ ստութիւնովս կէվկ-
նայ իր փառքին համար , ինչու ես դեռ մեղաւորի
մը պէս կրդատապարտըվիմ ։ Եւ կամ թէ ինչո- 8
չէս ըսէր՝ (ինչպէս որ գէշ կրխօսին մեր եաև էն ,
և ինտոր ոմանք մեզի համար կըսեն՝ որ կըսենք
թէ) Չարը գործենք՝ որ բարին գայ , որ անոնց
դատապարտութիւնը իրաւամբք են ։

9 Ուստի ալ ի՞նչ բանով հպարտի մարդն ենք հեթա-
նոսներէն . իրաւ որ մեկ բանով մարդն ալ չէ . որ ա-
ռաջ մեղադրեցինք Հրէաները և Հեթանոսները՝
10 թէ ամէնքը մեղաց տակ են ։ Ինչպէս որ գրված է ,
11 թէ Արդար մը չի կայ՝ ոչ մեկ չատ մը . և մեկը չի
կայ՝ որ հասկընայ , և մեկը չի կայ՝ որ Աստուած
12 փնտրէ ։ Ամէնքը մոլորեցան՝ մեկտեղ անշահցան .
մեկը չի կայ՝ որ բարի բան ընէ . և բնաւ մեկ հատ
13 մարդ ալ չի կայ ։ Անոնց կոկորդը բաց գերեզման
է . իրենց լեզուովնին խաբեբայութիւն կընեն .
14 իժերուն թոյնը անոնց պտկունքին տակն է ։ Ա-
նոնց բերանը անէծքով ու լեղիութիւնով լեցուն
15 է ։ Անոնց ոտքերը չաւտ են արիւն թափելու ։
16 Կործանում և թշուառութիւն իրենց ճամբանե-
17 րուն մէջն են . և խաղաղութեան ճամբան չի
18 ճանչցան ։ Աստուծոյ ահը անոնց աչքերնուն
19 առջևը չէ ։ Ակայն գիտենք որ օրէնքը ինչ բան
որ կըսէ նէ , անոնց կըսէ՝ որ օրէնքին տակը են .
որ ամէն բերան գոցվի , և բոլոր աշխարհ դատա-
20 պարտված ըլլայ Աստուծոյ առջևը ։ Որ անոր
առջևը մեկ մարմին մը արդարացած չըլլայ օրէն-
քին գործքերովը . ինչու որ՝ օրէնքովը է մեղք
ճանչնալը ։
21 Հայց հիմայ առանց օրէնքի Աստուծոյ արդա-
րութիւնը յայտնված է , օրէնքէն և մարգարէ-
22 ներէն վկայված ըլլալով ։ Պատճառն որ Աստու-
ծոյ արդարութիւնը Յիսուս Քրիստոսի հաւատ-
քէն՝ բոլոր հաւատացողներուն վրայ է . ու չի կայ
23 զանազանութիւն ։ Ինչու որ ամէնքը մեղք գոր-
24 ծեցին , և Աստուծոյ փառքէն պակսեցան ։ Եւ
անոր շնորհքովը ձրի կարդարանան Յիսուս
25 Քրիստոսով եղած փրկութիւնովը . որ անիկա
առաջուց սահմանեց Աստուած՝ հաւատքով քա-
ւութիւն ըլլալ անոր արիւնովը , իր արդարու-
թիւնը ցուցընելու համար՝ թողութիւն տալու ա-
26 ռաջուց գործվված մեղքերուն , ուր Աստուծոյ

երկայնմտութեան ժամանակին գոլթը վէցան . իբ
արդարութիւնը ցուցընելու համար կըսէ՝ ան ա-
տենիս , որ ինքը արդար ըլլայ , և արդարացունէ
ան՝ որ Յիսուսի հաւատքէն է : Ուրեմն ո՞ր մեաց 27
պարծենալը , խափանեցաւ . ո՛ր օրէնքէն , գործ-
քերուն օրէնքէն մի . չէ . հապա հաւատքի օրէն-
քէն : Ինչու որ կըսեպնենք՝ որ մարդը հաւատքով 28
կարդարանայ առանց օրէնքին գործքերուն : Մի՞ 29
թէ Աստուած միայն Հրէաներուն է մի , և Հե-
թանոսներուն չէ . այո , Հեթանոսներուն ալ :
Որովհետև Աստուած մէկ է՝ որ թլփատութիւնը 30
հաւատքէն կարդարացունէ , անանկ ալ անթլփ-
փատութիւնը նոյն հաւատքով : Ուստի մենք ան 31
օրէնքը հաւատքով կըխափանե՞նք մի , քան լեցի .
հապա օրէնքը կըհաստատենք :

Դ.

Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք թէ գտաւ Աբրա- 1
համ մեր նահապետը մարմնոյ կողմանէ : Ինչ- 2
ու որ եթէ Աբրահամ գործքով արդարացած
ըլլար , իրաւունէ պարծանք կունենար , բայց
չէ թէ Աստուծոյ առջևը : Հապա գիրքը ի՞նչ 3
կըսէ . Աբրահամ Աստուծոյ հաւատաց , և ան ի-
րեն արդարութիւն սեպվեցաւ : Հայց ան որ 4
գործք մը կընէ , վարձքը՝ շնորհքէ եղած չէ սեպ-
վիր անոր , հապա՝ պարտքէ : Եւ ան որ գործք մը 5
չընէր , բայց կըհաւատայ անոր՝ որ ամբարիշտները
կարդարացունէ , անոր հաւատքը իրեն արդարու-
թիւնի տեղ կըսեպվի : Ինչպէս որ Դաւիթ ալ 6
կըզրուցէ ան մարդուն երանութիւնը , որ Աս-
տուած անոր արդարութիւն կըսեպէ՝ առանց
գործքերու : Երանի՛կ անոնց՝ որ իրենց անօրէ- 7
նութիւնները ներվեցան , և անոնց՝ որ իրենց
մեղքերը ծածկվեցան : Երանելի է ան մարդը , 8
որ Տէրը անոր մեղքերը իրեն դէմ չի պիտի գրէ :
Ուստի աս երանութիւնը թլփատութեա՞ն վրայ 9

է , թէ անթլփատութեան վրայ · ան որ կըսենք
թէ՝ Հաւատքը Աբրահամին արդարութիւն սեպ-
10վեցաւ : Ինչպէ՞ս էր նէ՝ իսկոյն սեպվեցաւ · երբոր
թլփատութեա՞ն մէջ էր , թէ անթլփատութեան
մէջ · չէ թէ թլփատութեան մէջ , հապա ան-
11թլփատութեան : Եւ թլփատութիւնը նըշա-
նա՛ն առաւ՝ անթլփատութեան ատենէն ունեցած
հաւատքին արդարութեանը մէկ կնիք մը , որ ին-
քը հայր ըլլայ բոլոր հաւատացողներուն՝ որ ան-
թլփատութենէ կըլլան , (անոնց ալ արդարութիւն
12սեպվելու համար) և հայր թլփատութեան՝ չէ թէ
միայն թլփատութենէ եղողներուն , հապա անոնց
ալ որ մեր Աբրահամ՝ հօրը անթլփատութեան
13ոտքերէն հաւատքին ճամբովը կերթան : Ինչու որ՝
Աբրահամին և անոր զաւկին ըսուած խոստումնըն
աշխարհը ժառանգելու համար՝ չէ թէ օրէնքովը
14եղաւ , հապա հաւատքին արդարութիւնովը : Ին-
չու որ եթէ օրէնքէն եղողները ժառանգ պիտի
ըլլային , ուրեմն փուճ էր հաւատքը , և պարտա՝
15խոստումնըը : Որովհետև օրէնքը բարկութիւն
կըգործէ · բայց ուր որ օրէնք չի կայ՝ հոն մեղք
16ալ չի կայ : Ասոր համար ծառանգ ըլլըլը հա-
ւատքէն է , որ շնորհքով մը եղած կըլլայ , խոստ-
մունքը հաստատուն ըլլալու համար ամէն զաւ-
կին · չէ թէ միայն անոր որ օրէնքէն է , հապա
անոր ալ՝ որ Աբրահամի հաւատքէն է · որ ինքը
17մեր ամէնուս հայրն է · (ինչպէս որ գրված է , թէ՝
Զիս շատ ազգերու հայր պիտի ընեմ՝) Աստու-
ծոյ առջևը · որուն որ հաւատաց՝ թէ մեռելները
կող ջնդացունէ , և չեղած բանը եղածի պէս կըկան-
18չէ : Որ յուսալու բանին յուսով հաւատաց ինքը
շատ ազգերու հայր ըլլալու (ինչպէս որ ալ ըսվե-
19ցաւ , թէ՝ Ինանկ պիտի ըլլայ քու զաւակդ) և ին-
քը հաւատքէն չի տարակուսեցաւ · թէպէտ անկէ
եռաև մեռածի մը պէս նայեցաւ իր մարմինին , (ա-
րովհետև ինքը հարիւր տարեկանի մը չափ էր) և

Առաջին արգանդին մեռած ըլլալուն ալ ։ Այլ 20
անհաւատութիւնով չի տարակուսեցաւ Աստու-
ծոյ խոստմունքին · հապա հաւատքով ուժովցաւ ,
Աստուծոյ փառք տուաւ · և իր միտքին մէջ հաս- 21
տատ դրաւ թէ՝ ան որ խոսք տուաւ նէ , ինքը կա-
րող է ընելու ։ Ասոր համար իրեն արդարութիւն 22
սեպվեցաւ ։

Այլ չէ թէ միայ անոր համար գրվեցաւ՝ որ 23
առ իրեն սեպվեցաւ · հապա նաև մեզի համար ալ՝ 24
որոնց պիտի սեպվի , թէ որ հաւատանք անոր՝ որ
մեռևներէն յարուցց մեր Տէր Յիսուս · ան որ 25
մեր մեղացը համար մատնվեցաւ , և մեզ արդա-
րացունելու համար յարութիւն առաւ ։

ԴԻ · Ե։

Ա սկէ ետև ան հաւատքովը արդարացած ըլլա- 1
լով , խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ՝
մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով · որ իր- 2
մով ընդունեցինք հաւատքով առ շնորհքիս մէ-
տեղան ալ · որուն մէջը կեցեր ենք , և Աստու-
ծոյ փառաց յուսովը կրպարծինք ։ Եւ չէ թէ մի- 3
այն այսքան , հապա մեր նեղութիւններուն մէջն
ալ կրպարծինք · ինչու որ գիտենք թէ՝ նեղու-
թիւնները համբերութիւն կըգործեն , համբե- 4
րութիւնը՝ փորձառութիւն , փորձառութիւնը՝
յոյս · յոյսը բնաւ ամթոռիչ չի ձգեր · ինչու որ 5
Աստուծոյ սէրը մեր սիրտերուն մէջը տարածված
է՝ Հոգւոյն Սրբոյ ձեռքովը , որ մեզի տրվեցաւ ։
Ինչու որ երբ մենք տակաւ էինք , յաւուրս ժամա- 6
նակին Քրիստոս մեզի համար ամբարիշտներուս
վրայ մեռաւ ։ Ինչու որ արդարի մը համար հազիւ 7
կըլլայ՝ որ մէկը մեռնի · բայց մէկ բարի մար-
դու համար կարելի է որ մէկը համարձակի մեռնի-
լու ։ Այլ Աստուած իր սէրը որ մեր վրայ ունէր՝ 8
յայտնեց · որ երբ մենք մեղաւոր էինք՝ Քրիստոս
մեզի համար մեռաւ · հապա հիմայ որ իրեն արիւ-

նովը արդարացանք , որչափ էվելօք իրմով պիտի
10 ազատինք Աստուծոյ բարկութենէն ։ Այսպէս զի
թէ որ թշնամի եղած ատեննիս Աստուծոյ հետը
հաշտըվեցանք իր Որդւոյն մահովը , հապա որքան
էվելի մեր հաշտըված ատենը պիտի ապրինք անոր
11 կեանքովը ։ Եւ չէ թէ միանակ այս , հապա Աս-
տուածմով ալ կըպարծենանք մեր Տէրոջը Յիսուս
Քրիստոսին ձեռքովը , որ անով ևս ան հաշտու-
թիւնը ընդունեցինք ։
12 Այսպէս զի ինչպէս որ մէկ մարդէ մը մեղքը
աշխարհ մտաւ , և ան մեղքէն մահը . ու անանկ
ամէն մարդոց վրայ տարածվեցաւ մահը , որ անով
13 ամէնքը մեղանչեցին ։ (Որովհետև մինչև օրէնքին
ատենը աշխարհի մէջ մեղքը կար . բայց մեղքը
14 չի սեպվիր՝ ուր որ օրէնք չի կայ ։ Բայց մահը
Ադամէն սկսած մինչև Մովսէսը թագաւորեց ,
նաև Ադամայ մեղքին նման չի մեղանչողներուն
վրայ ալ . որ ան օրինակ էր անոր՝ որ ետքէն պի-
15 տի գար ։ Բայց չէ թէ ինչպէս մեղքը՝ անանկ ալ
շնորհքը է . ինչու որ եթէ մէկուն յանցանքովը
շատերը մեռան , ալ որքան էվելի Աստուծոյ
շնորհքը և պարգևը՝ Յիսուս Քրիստոս մէկ մար-
դուն շնորհքովը շատերուն վրայ տարածվեցաւ ։
16 Եւ չէ թէ ան պարգևը անանկ է ինչպէս մէկէ մը
որ մեղանչեց . ինչու որ դատաստանը մէկ մեղքէն
դատապարտութեան մէջ եկեր . բայց շնորհքը
17 շատ մեղքերէն արդարութիւնի պատճառ ։ Պատ-
ճառը՝ թէ որ մէկ մարդուն մեղքովը մահը թա-
գաւորեց ան մէկովը , հապա որքան աւելի անոնք
որ շնորհքի ու արդարութեան պարգևին առա-
տութիւնը կառնեն , կեանքով պիտի թագաւո-
18 րեն՝ մէկ Յիսուս Քրիստոսի ձեռքովը ։) Ինանկ
է նէ՝ ինչպէս որ մէկուն մեղքովը բոլոր մարդոց
դատապարտութիւն եղաւ , անանկ ալ մէկուն
արդարութիւնովը՝ բոլոր մարդոց կենաց արդա-
19 րութիւն եղաւ ։ Այսպէս զի ինչպէս որ մէկ մար-

դուն անհնազանդութիւնովը շատերը մեղաւոր
եղան, անանկ ալ մէկուն հնազանդութիւնովը
շատերը արդար պիտի ըլլան։ Սակայն օրէնքը 20
մէջ ինկաւ՝ որ մեղքերը շատնան. որ ուր աւելի
մեղք եղաւ՝ հոն էվելօք շնորհքը շատցաւ. որ 21
ինչպէս մեղքը թագաւորեց մինչև ի մահ, անանկ
ալ շնորհքը պիտի թագաւորէ արդարութեամբ՝
մինչև յաւիտենական կեանքը Յիսուս Քրիստոս
մեր Տէրոջը ձեռքովը։

Գ.Լ.Ա.Ծ.

Ը՞ւ հիմայ ի՞նչ պիտի ըսենք. մեղքերու մէջ 1
էվելօք կենա՞նք մի, որ շնորհքը շատնայ։
Չաւ լինի. մենք որ մեղքին մեռանք, ի՞նչպէս 2
դեռ անոր մէջը կենանք։ Չէ՞ք մի գիտեր, որ մենք 3
որ Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք, անոր
մահովը մկրտուեցանք։ Անոր հետ թաղուեցանք 4
մկրտութիւնով մահուան համար. որ ինչպէս
Քրիստոս Հօրը փառքովը յարութիւն առաւ մե-
ռելներէն, անանկ մենք ալ կենաց նորոգութեան
մէջ պըտրտինք։ Ինչու որ եթէ մենք անոր մահ- 5
ուանը նմանութիւնովը, իրեն հետ տնկակից ե-
ղանք նաև անոր յարութեանը նմանութիւնովն ալ
կ՚ըլլանք պիտի ըլլանք։ Ա՛ս գիտնա՛ք որ՝ մեր հին 6
մարդը անոր հետ խաչուեցաւ, որ մեղաց մարմինը
փճանայ, որ ասկէ ետև մեղքի չի ծառայենք։
Ինչու որ ան որ մեռնի՝ մեղքէն արդա- 7
րացած է։ Արդ թէ որ մենք Քրիստոսի հետ մե- 8
ռանք, կը հաւատանք որ՝ անոր հետն ալ պիտի
ապրինք։ Գիտենք որ Քրիստոս մեռելներէն 9
յարութիւն առած է. ասկէ ետև չի մեռնիր, և
մահը իր վրան տէրութիւն չունի։ Վա՛ն զի որ 10
մեռաւ նէ՝ մեղքի համար մեռաւ մէկ անգամ. և որ
կենդանի է՝ Աստուծոյ է կենդանի։ Անանկ ալ 11
դուք ձեր անձը մեղքին մեռած սեպեցէ՛ք, ու Աս-
տուծոյ կենդանի՝ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջը

12 ձեռքովը : Ա՛սկէտև մեղքը չի թագաւորէ ձեր
մահկանացու մարմինին վրայ , որ անոր գէշ ցան-
13 կութիւններուն հնազանդիք : Եւ մեղքի մի՛
պատրաստէք ձեր անդամները նենգութեան անիրաւու-
թեան գործիքներ . հապա ձեր անձերը Աստուծոյ
պատրաստեցէք՝ որպէս թէ մեռելներէն ողջացած .
և ձեր անդամները՝ Աստուծոյ , նենգութեան արդարու-
14 թեան գործիքներ . քանզի մեղքը վրանիդ չի
պիտի իշխէ . ինչու որ օրէնքի տակը չէք , հապա
շնորհաց տակը :
15 Ուրեմն ի՞նչպէս . մե՞ղք մի գործենք՝ որ օրէն-
քի տակը չենք , հապա՝ շնորհքին տակը . քա՛ւ լի-
16 ցի : Չէք մի գիտեր՝ թէ որուն որ անձերնիդ ծա-
ռայ կրպատրաստէք հնազանդելու , ծառայ էք ո-
րուն որ կըհնազանդիք . եթէ մեղքի՝ ո՛ղ դէպի
մահուան նըպաստ , և թէ որ հնազանդելու՝ ո՛ղ ար-
17 դարութեան : Այլ գոհութի՛ւն Աստուծոյ , որ
դուք մեղաց ծառայ էիք , սակայն սրտանց հնա-
զանդեցաք այն կերպ վարդապետութեան՝ որ անոր
18 յանձնըվեցաք : Ազատ դուք մեղքերէն ազատ ըլ-
19 լալով՝ արդարութեան ծառայ եղաք . (մարդու սո-
վորութեան պէս կըսեմ՝ ձեր մարմինին տկարու-
թեանը համար) ինչու որ ինչպէս ձեր անդամները
անօրէնութեան պատրաստեցիք պղծութեան և
անօրէնութեան ծառաներ (ըլլալու ,) անանկ ալ
հիմայ ձեր անդամները սրբութեան պատրաստեցէք
20 արդարութեան ծառաներ ըլլալու : Ինչու որ եր-
բոր դուք մեղաց ծառաներ էիք՝ արդարութենէն
21 ազատ էիք : Ուրեմն ան ժամանակը ի՞նչ պտուղ
ունէիք ան բաներովը՝ որոնցմով հիմայ կամչե-
նաք . ինչու որ ան բաներուն վերջը՝ մահ է :
22 Այլ հիմայ մեղքերէն ազատված՝ և Աստուծոյ
ծառաներ եղած , դուք ձեր պտուղը ունիք սրբու-
թիւնով . և անոր վերջն ալ յաւիտենական
23 կեանք : Վասնզի որ մեղաց հատուցումը մահ
է . բայց Աստուծոյ շնորհքը յաւիտենական կեանք
Յիսուս Քրիստոս մեր Տէրոջը ձեռքովը :

ԳԼ՛։ Ի՛։

1 ԵՂբ մի գիտեր եղբայրներ , (քանզի ես օրէնքը
գիտացողներուն հետը կը խօսիմ) որ օրէնքը
մարդուն վրայ կիշխէ՝ որչափ ատեն որ ողջ է ։
2 Ինչու որ էրիկ ունեցող կնիկը իր ողջ էրկանը
հետ օրէնքով կապված է . բայց թէ որ էրիկը
3 մեռնի՝ արձրկված է էրկանը օրէնքէն ։ Ընանկ է
նէ՝ քանի՛ որ էրիկը ողջ է , շուն կրսվի՝ թէ որ
ուրիշ էրիկ մը առնէ . և թէ որ էրիկը մեռնի՝ ան
օրէնքէն ազատ կըլլայ , Նշուն չէ սեպվիր՝ թէ
4 որ ուրիշ էրիկ մը առնէ ։ Ընչէ եւս դուք ալ
եղբայրնե՛ր՝ Քրիստոսի մարմինովը օրէնքին մե-
ռաք , որ ուրիշ մը առնէք , ան որ մեռելներէն յա-
րութիւն առեր է , որ Ընստուծոյ պտուղ բերող
5 ըլլաք ։ Ինչու որ երբ մենք մարմնաւոր էինք՝
մեղաց կիրքերը որ օրէնքով կըլլային , մեր ան-
դամներուն մէջը կուժովնային , որ մենք մահուան
6 պտուղ բերենք ։ Ընայց հիմայ ան օրէնքէն ար-
ձրկվեցանք . ինչու որ մեռանք անոր՝ որով բռնը-
ված էինք , որ մենք Ընստուծոյ ծառայենք Հոգիին
նորոգվելովը , և չէ թէ հին գրվածքովը ։
7 Ուրեմն ի՞նչ ըսենք . օրէնքը մեղք է մի՛ . քա-
նի՛ որ օրէնքը չըսեր . բայց ես մեղքը չէի գիտեր , թէ չէ՝ օրէն-
քով . և ցանկութիւնը չէի ճանչնար՝ թէ որ օ-
8 րէնքը ըսած չըլլար , Ո՛ր ցանկար ։ Ընայց մեղքը
պատուիրանքովը պատճառ առաւ , և իմ մէջս
բոլոր ցանկութիւնները գործեց . ինչու որ առանց
9 օրէնքին մեղքը մեռած էր ։ Ես ալ առանց օրէն-
քի ատեն մը կենդանի էի . բայց երբոր օրէնքին
պատուիրանքը վրաս հասաւ՝ մեղքը ողջընցաւ .
10 և ես մեռայ . ու ան պատուիրանքը որ կենաց հա-
11 մար էր՝ նոյնը ինծի մահուան համար եղաւ ։ Ընչ-
չու որ մեղքը պատուիրանքովը պատճառ առնե-
լով՝ իս խաբեց , ու անով մեռուցու ։
12 Ընստի օրէն-

քը սուրբ է, ու պատուիրանքը սուրբ՝ և արդար՝ ու բարի։
13 Ուրեմն բարին ինձի մա՞հ մի եղաւ. քա՛ւ լիցի. Հապա՝ մեղքը. որպէս զի երևայ մեղքը որ ան բարի բանովը ինձի մահ գործեց, որ մեղքը պատ-
14 ուիրանքով էվելօք մեղաւոր ըլլայ։ Վիտենք որ օրէնքը հոգևոր է, բայց ես մարմնաւոր եմ՝ մեղ-
15 քերուն տակը ծախված։ Ինչու որ ինչ որ կը-նեմ՝ չեմ ճանչնար. չէ թէ ինչ որ կուզեմ նէ՝ ան կընեմ, հապա ինչ որ կատեմ նէ՝ ան կընեմ։
16 Հապա թէ որ չուզածս կընեմ, օրէնքին համար
17 կըվկայեմ՝ որ ան բարի է։ Ընանկ է նէ՝ չէ թէ ես կընեմ անիկա, հապա մեղքը որ իմ ներսիդիս
18 կըբնակի։ Վիտեմ որ իմ ներսիդիս, այսինքն իմ մարմինիս մէջ մէկ բարի բան մը բնակված չէ. ինչու որ կամեցողութիւն կայ քովս, բայց բարին
19 ընելը չի կայ։ Ինչու որ չէ թէ բարին որ կու-զեմ՝ կընեմ, հապա չարը որ չեմ ուզեր՝ ան կը-
20 նեմ։ Հապա թէ չուզած բանս կընեմ՝ ալ չէ թէ ես կընեմ անիկա, հապա մեղքը որ իմ ներ-
21 սիդիս բնակված է։ Ուստի ես կըգտնամ անոր օրէնքը՝ որ ինծի բարին ընելը կըկամենայ, ու չա-
22 րը իմ քովս է։ Ներսի մարդովս Աստուծոյ օրէն-
23 քին կըհաւնիմ. բայց ուրիշ օրէնք մը կըտեսնամ իմ անդամներուս մէջը՝ իմ միտքիս օրէնքին դէմ զէնք վերուցած՝ ու իս գերի բռնած մեղքին օրէն-
24 քովը որ անդամներուս մէջն է։ Ես մէկ խղճալի մարդ մըն եմ. ա՛լ իս պիտի խլրսէ աս մահացու
25 մարմինէն։ Հայց գոհութիւն Աստուծոյ՝ Յիսուս Քրիստոս մեր Տէրոջը ձեռքովը. անանկ է նէ՝ ես ինքիրմէս իմ միտքովս Աստուծոյ օրէնքին կըծա-ռայեմ, ու մարմնովս՝ մեղաց օրէնքին։

ԳԼ· Բ·

1 Ա՛լ է որ անանկ է նէ՝ դատապարտութիւն չի կայ Քրիստոս Յիսուսով եղողներուն։

Ինչու որ Քրիստոս Յիսուսով կենաց հոգւոյն 2
օրէնքը իս խալըսեց մեղաց ու մահուան օրէնքէն ։
Ինչու որ ան որ անկարելի էր օրէնքին՝ որովհետև 3
տկար էր մարմինով , Աստուած իր Որդին խրկեց
մեղանչական մարմինի նմանու թեամբ , ու մեղքի
համար , և դատապարտեց մեղքը ան մարմինին
մէջ · որ օրէնքին արդարութիւնը կատարվի մեր 4
մէջը , որ մարմնի պէս չերթանք՝ հապա հոգւոյն
պէս ։ Ինչու որ մարմնաւոր եղողները մարմնին 5
բաները կըմտմըտան , ու հոգևոր եղողները՝ հո-
գւոյն բաները ։ Ինչու որ մարմնաւոր խորհուրդը 6
մահ է . և հոգևոր խորհուրդը կեանք ու խաղա-
ղութիւն ։ Պատճառն որ մարմնաւոր խորհուրդը 7
Աստուծոյ դէմ թշնամութիւն է . որ Աստուծոյ
օրէնքին չի հնազանդիր , մանաւանդ չի կրնար
ալ ։ Ա՛ան ալ մարմնով եղողները Աստուծոյ 8
հաճոյ չեն կրնար ըլլալ ։ Հայց դուք մարմնով 9
չէք , հապա հոգւով , թէ որ Աստուծոյ հոգին
ձեր մէջը բնակած է . հապա թէ որ մէկը Քրիս-
տոսի Հոգին չունի նէ՝ անիկա անոր չէ ։ Եւ թէ 10
որ Քրիստոս ձեր մէջն է՝ ալ մարմինը մեռած է
մեղքի համար , ու հոգին ոչ է արդարութեան
համար ։ Թէ որ Յիսուսը մեռելներէն յարուցա- 11
նողին Հոգին ձեր մէջը բնակած է նէ , ալ անի-
կա՝ որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուց ,
պիտի կենդանացունէ ձեր մահկանացու մարմին-
ները՝ ձեր մէջը բնակած իրեն Հոգւովը ։
Ա՛ռկէ եւս եղբայրներ՝ պարտապան ենք , չէ 12
թէ մարմինին՝ մարմնին ո՛րպէս պէս ապրիլ ։
Ինչու որ եթէ մարմնին պէս ապրելու ըլլաք 13
պիտի մեռնիք . հապա թէ որ Հոգւով մարմնին
գործքերը սպաննէք , պիտի ապրիք ։ Ինչու որ 14
անոնք որ Աստուծոյ Հոգւովը կառաջնորդվին՝
Աստուծոյ որդիքն են անոնք ։ Որովհետև դուք 15
ծառայութեան Հոգին չառիք կրկին վախնալու ,
հապա որդեգիր ըլլալու Հոգին առիք . որ անով

16 կըկանչենք Աբբայ՝ Հայր : Նոյն ան Հոգին
վկայութիւն կուտայ մեր հոգիին , որ մենք Աստու-
17 ծոյ որդիքն ենք : Եւ թէ որ որդիք , ուրեմն ժա-
ռանգներ . Աստուծոյ ժառանգներ՝ ու Քրիստոսի
ժառանգակիցներ . թէ որ իր չարչարանացը կցորդ
ըլլանք՝ անոր փառացն ալ հաղորդ պիտի ըլլանք :
18 Ինծի ասանկ կերեւայ որ՝ աս ժամանակիս չար-
չարանքները արժանի չեն քաղաքվելու գալու
19 փառքերուն , որ մեզի պիտի յայտնըվին : Ինչու
որ ստեղծուածներուն յոյսը Աստուծոյ Որդւոյն
20 յայտնըվելուն կըսպասէ : Ինչու որ փուճ բանե-
րուն հնազանդեցան ստեղծուածները՝ չէ թէ ի-
րենց կամքովը , հապա անոր համար՝ որ յոյսով
21 հնազանդեցուց . որ իրենք ան ստեղծուածներն
ալ ապականութեան ծառայութենէն ազատին՝
Աստուծոյ Որդւոյն փառաւոր ազատութիւնովը :
22 Ինչու որ գիտենք թէ ամէն ստեղծուածները
23 մինչև հիմայ կըհառաչեն՝ ու ցաւ կըքաշեն : Եւ
չէ թէ միայն այսքան , հապա մենք ալ որ Հոգիին
պտուղը ունինք՝ մենք մեզի մեր անձերուն մէջ
կըհառաչենք որդեգիր ըլլալու սպասելով՝ մեր
24 մարմինին ազատվելովը : Ինչու որ յուսով փըր-
կըվեցանք . բայց յոյսը որ կըտեսնըվի՝ յոյս չէ .
ինչու որ ան բանը որ կըտեսնայ մէկը ալ ինչու
25 պիտի յուսայ : Հապա թէ որ չի տեսած բաները
նուս կըյուսանք , ալ համբերութիւնով կըսպա-
26 սենք անոր : Նմանկ ալ Հոգին օգնութիւն կը-
հասնի մեր տկարութեանը . ինչու որ ինչ բանի
համար աղօթելու ենք , ըստ արժանոյն չենք գի-
տեր . բայց ինքը Հոգին բարեխօս կըլլայ մեզի
27 հառաչանքով մը՝ որ չի զուրցըվիր : Այց ան
սիրտերը քննողը գիտէ Հոգիին ինչ խորհիլը .
ինչու որ Աստուծոյ կամքին պէս բարեխօսութիւն
կընէ սուրբերուն համար :
28 Այց գիտենք որ ամէն բանի մէջ գործակից
կըլլայ բարի բաներու անոնց՝ որ Աստուած կըսի-

րեն , ոլոնք որ էր նախասահմանուԹիւնով կան-
չուված են ։ Ինչու որ անոնք որ առաջ կըճանչ- 29
նար՝ առաջուց ալ Հրաւիրեց իր Որդուըն պատ-
կերին կերպարանակից ըլլալու ։ որ անիկա անդ-
րանիկ ըլլայ շատ եղբայրներուն մէջը ։ Եւ որոնք 30
որ առաջուց Հրաւիրեց , նաև կանչեց անոնք ։ և
որոնք որ կանչեց՝ նաև արդարացուց անոնք ։ և ո-
րոնք որ արդարացուց՝ նաև փառաւորեց անոնք ։
Ուրեմն ի՞նչ բսենք աս բաներս ։ Թէ որ Աստուած 31
մեր կողմն է՝ ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ ։ Ան 32
որ իր որդուըն չի խնայեց , հապա մեր ամենուս
Համար մատնեց անիկա ։ ալ ինչպէս անոր Հետը
ամէն բաները մեզի չի պարգեւեր ։ Ո՞վ է որ Աս- 33
տուծոյ ընտրածներուն դէմ մեղադիր ըլլայ ։ Աս-
տուած է՝ որ կարդարացունէ ։ Ուրեմն ան ո՞վ է 34
որ կըդատապարտէ ։ Քրիստոս Յիսուս է որ մե-
ռաւ , մանաւանդ Թէ յարուԹիւն ալ առաւ , ու
Աստուծոյ աջ կողմն է ։ որ նաև մեզի Համար բա-
ղեւաւոր է ինքը ։ Ուստի ո՞վ պիտի Հեռացունէ 35
մեզ Քրիստոսի սիրոյն ։ նեղուԹիւնը մի , սրբա-
մաչուքը մի , Հալածանքը մի , սո՞վը մի , մերկու-
Թիւնը մի , վտիՀը մի , Թո՞ւրը մի ։ (ինչպէս որ 36
գրված է ։ Քեզի Համար ամէն օր կըմեռնինք ,
մորթելվելու ոչխարի պէս սեպվեցանք) Հապա աս 37
ամէն բաներուն մէջ Հպվելոջ կըյաղԹինք անով՝
որ սիրեց մեզ ։ Ինչու որ ես Հաստատ գիտեմ՝ որ 38
ո՛չ մա՛ռը , և ո՛չ կեանքը , ու ո՛չ Հրեշտակները ,
և ո՛չ իշխանուԹիւնները , ու ո՛չ ներկայ բաներ-
րը , և ո՛չ գալու բաներըը , ու ո՛չ զօրուԹիւննե- 39
րը , և ո՛չ բարձրուԹիւնը , ու ո՛չ խորունկու-
Թիւնը , և ո՛չ ուրիշ մէկ արարած մը կրնայ մեզ
բաժնել ան Աստուծոյ սիրոյն , որ Քրիստոս
Յիսուս մեր Տէրոջմով է ։

ԿՈ · ԹՈ։

1 Ա՛տչգը կըսեմ Ք՛րիստոսով , ու սուտ չեմ ը-
սեր · (իմ միտքս ալ ինծի կըվկայէ Հոգւով
2 Սրբով) որ մեծ տրտմութիւն է ինծի , ու իմ
3 սրտիս անպակաս ցաւ ։ Ինչու որ ուխտով պիտի
ուզէի ես ինքիրէս նզոված ըլլալ Ք՛րիստոսէն՝
իմ մարմնոյ կողմանէ եղբայրներուս ու ազգակից-
4 ներուս համար , որոնք Իսրայէլացիներ են · որ
իրենցն է որդեգիր ըլլալը , ու փառքը , և ուխ-
տերը , ու օրինադրութիւնը , և պաշտօնը , ու
5 խոստումները , իրենցն են նահապետները , իրենց-
մէ Ն՛ա՛ Ք՛րիստոս ալ մարմնոյ կողմանէ · որ ինքն
է ամէնուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս ·
6 ամէն ։ Կարելի չէ որ Աստուծոյ խօսքը գետինը
իյնայ · ինչու որ չէ թէ ամէն Իսրայէլէն եղողնե-
7 րը Իսրայէլացի են · և չէ թէ Աբրահամին ցեղը
եղողները՝ ամէնքը որդիք են · հապա Յա՛կոբով
8 քեզի ցեղ պիտի բսվի ։ Այսինքն չէ թէ անոնք
որ մարմինի որդիք են՝ Աստուծոյ որդիք ալ են ·
9 հապա խոստմանը որդիքը ցեղ կըսեպվին ։ Ինչու
որ՝ ա՛ւետմանքի է ա՛ս խօսքը , Թէ՝ Այս ատենըս
10 պիտի գամ , ու Սառա որդի պիտի ունենայ ։ Եւ
չէ թէ միայն այսքան , հապա Հոբեկայէն ալ
յայնմ է որ յղացաւ մէկէ մը , այսինքն մեր Հա-
11 կակ հօրմէն · ինչու որ տակաւին պատ՛ուը չէ ծը-
նած , և տակաւին մէկ աղէկ մը կամ գէշ մը չէ
գործած , (որ Աստուծոյ վճիռը հաստատ մնայ ը-
12 րած ընտրութեանը պէս՝ չէ թէ գործքերէն , հա-
13 պա անկէց որ կանչեց) իրեն բսվեցաւ՝ Թէ մեծը
պզտիկին պիտի ծառայէ · ինչպէս որ գրված է Թէ
Յակոբը սիրեցի , ու Եսաւըատեցի ։
14 Ուրեմն ի՛նչ բսենք · մի Թէ Աստուծոյ քով
15 անիրաւութիւն մի կայ · քա՛ւ լիցի ։ Ինչու որ ին-
քը Մովսէսին կըսէ · Որուն որ պիտի ողորմիմ

նէ՝ կողորմիմ , ու ո՛րուն վրայ որ պիտի գթամ
նէ՝ կըգթամ ։ Ընանկ է նէ՝ ո՛չ անկէց է որ կը- 16
կամի , ու ո՛չ անկէց՝ որ կըվազէ , հապա Ընտուծ-
մէն՝ որ կողորմի ։ Ինչու որ դիրքը Փարաւոնին 17
կըսէ թէ՝ անոր համար քեզ դրդեցի , որ քու
վրադ իմ զօրութիւնս ցուցընեմ , ու իմ անունըս
ամէն երկիր զուրցըվի ։ Ընանկ է նէ՝ ո՛րուն որ 18
կուզէ՝ կողորմի , և ո՛րը որ կուզէ՝ կըխստացունէ ։
Ուրեմն պիտի ըսես , թէ ալ ինչու մեղադիր կըլ- 19
ըլայ , որ անոր կամքին մէկը հակառակ չէ ։ Ընդ 20
դուն ո՞վ ես մարդ՝ որ Ընտուծոյ պատասխան
կուտաս . ստեղծուածը իր Ստեղծողին կրնա՞յ ար-
դեօք ըսել , թէ ինչու ատանկ շինեցիր ։ Կը- 21
րուտը իշխանութիւն չունի՞ մի ցեխին վրայ՝ նոյն
շաղուածքէն ման շինելու , մէկը՝ պատուի , ու
մէկալը՝ անարգանքի ։ Հապա ինչ ըսենք ու- 22
թէ որ ուզէր Ընտուած բարկութիւնը ցուցընել՝
ու իր զօրութիւնը յայտնել , շատ երկայնմտու-
թեամբ համբերելով կորսըվելու պատրաստըված
բարկութեան ամաններուն վրայ ։ Ե- 23
փառքին մեծութիւնը յայտնի՝ ընէ ողորմելու ա-
մաններուն վրայ , որոնք որ փառքի համար պատ-
րաստեց . մեզ՝ որ կանչեց , չէ թէ միայն Հրէա- 24
ներէն , հապա Հեթանոսներէն ալ . ինչպէս Ով- 25
սէին մէջ ալ կըսէ . Իմ ժողովուրդս չեղողները
ինծի ժողովուրդ պիտի կանչեմ , ու սիրելի չե-
ղածները՝ սիրելի ։ Ե պիտի ըլլայ ո՛ւր տեղ որ 26
իրենց ըսվեցաւ թէ՝ Դուք իմ ժողովուրդս չէք ,
ան տեղ անոնք կենդանի Ընտուծոյ որդիքը պի-
տի ըսվին ։ Եսայի՛ ալ Իսրայէլին համար կըկան- 27
չէ . Թէև Իսրայէլի որդոց համրանքը ծովի աւա-
զին պէս ըլլայ , միայն քիչ մը պիտի մնայ խալը-
ուածը ։ Ինչու որ մէկ բան մը կարճ և համառօտ 28
արդարութիւնով . վասն զի Տէրը կարճ բան մը
պիտի ընէ երկրի վրայ ։ Ե ինչպէս Եսային կը- 29
սէ . Թէ որ զօրութեանց Տէրը մեզի զաւակ թո-

զուցած չըլլար նէ՝ Սոդոմին պէս կըլլայինք մենք , ու Գոմորին կընմանէինք :
30 Ուրեմն ինչ պիտի ընենք , եթէ Հեթանոսները որ արդարութեան չէին հետեւէր՝ արդարութեան հասան . ան արդարութեանը՝ որ հաւատքէն է : Իսրայէլը արդարութեան օրէնքին ետեւէն եր , ու արդարութեան օրէնքին չի հասաւ : Ինչու համար . վասն զի չէ թէ հաւատքէն , հապա որպէս թէ օրինաց գործքերէն ուղիղ ըլլալով . ինչու որ գայթակղութեան քարին վրայ զըրեցան . ինչպէս որ գրված է . Ահա Սիոնին մէջը գայթակղութեան քար մը կըդնեմ , ու գլորելու ապառաժ մը . և ամէն ոք որ անոր կը հաւատայ՝ չի պիտի ամրնայ :

ԳԼ · Ժ :

1 Ա՛ղբայրնե՛ր իմ սիրտիս փափաքը ու աղօթքը առ Աստուած անոնց փրկըվելուն համար է :
2 Ինչու որ ես կըվկայեմ անոնց համար , որ Աստուծոյ նախանձաւորութիւնը ունին , բայց չէ գիտնար :
3 Թէ գիտնալով . Ինչու որ Աստուծոյ արդարութիւնը չեն գիտեր , ու իրենցը կուզեն հաստատել . անոր համար Աստուծոյ արդարութեանը չի հնազանդեցան :
4 Վա՛ան զի օրէնքին վախճանը Քրիստոս է՝ ամէն հաւատացողներուն արդարութեանը համար :
5 Մովսէս օրէնքէն եղած արդարութիւնը կըստորագրէ , Թէ որ մարդ անիկա կատարէ նէ՝ անով պիտի ապրի : Հայց հաւատքին արդարութեանը համար ասանկ կըսէ . Մի՛ ըսեր քու սրտիդ մէջը , ո՞վ պիտի երկինքը ելլայ (այսինքն Քրիստոս իջեցունելու) կամ թէ ո՞վ պիտի իջնայ անդունդը , (այսինքն Քրիստոս մեռելներէն հանելու) :
8 Հապա ի՞նչ կըսէ . Խօսքը մօտ է քու բերնիդ մէջը , և քու սրտիդ մէջն է , այսինքն՝ հաւատքին խօսքը որ մենք կըքարոզենք :

Ինչու որ՝ եթէ քու բերնովդ Տէր Յիսուսը խոս- 9
տովանիս , ու քու սրտիդ մէջը հաւատաս , որ
Աստուած անիկա մեռելներէն յարուց , պիտի
փրկըվիս ։ (ինչու որ սրտով կըհաւատաք արդա- 10
րանալու , ու բերնով կըխոստովանիք փրկըվելու)
վասն զի գիրքը կըսէ ։ Ամէն ով որ անոր կըհա- 11
ւատայ՝ չի պիտի ամչնայ ։ Ինչու որ տարբերու- 12
թիւն չի կայ Հրէային ու Յեթանոսին մէջը ։
վասն զի նոյն Տէրը է ամէնուն վրայ , բաւական
ամէնուն որ կըկանչեն անոր ։ Ինչու որ ով որ 13
Տէրոջը անունը կանչէ՝ պիտի փրկըվի ։

Ուրեմն ի՞նչպէս պիտի կանչեն անոր՝ որուն որ 14
չի հաւատացին ։ կամ ի՞նչպէս պիտի հաւատան
անոր՝ որուն վրայով չի լսեցին ։ կամ ինտո՞ր պիտի
լսեն առանց մէկուն քարոզելուն ։ կամ ի՞նչպէս 15
պիտի քարոզեն՝ թէ որ չի խրկըվին ։ Ինչպէս որ
գրված է , Ինտո՛ր գեղեցիկ են խաղաղութիւն ա-
ւետարանողներուն՝ ու բարի բաներու աւետիս
տըվողներուն ոտքերը ։ Հայց ամէնքը հնազանդ 16
չեղան աւետարանին ։ Եսայի կըսէ , Տէր՝ մեր
ձայնին ով հաւատաց ։ Ընանկ է նէ հաւատքը լսե- 17
լէն է , ու լսելը Քրիստոսի խօսքէն ։ Հայց կըսեմ , 18
Մի թէ չի լսեցի՞ն մի ։ մանաւանդ որ "բովանդակ
երկիր անոնց ձայնը ելաւ , ու անոնց խօսքը մինչև
աշխարհին ծայրերը" ։ Հայց կըսեմ ։ Մի թէ 19
Իսրայէլ չի լսեց մի ։ առաջ Մովսէս կըսէ ։ Ես
ձեզ նախանձի մէջ պիտի ձգեմ մէկ ոչինչ ժողո-
վուրդով մը , ու անխելք ազգով մը ձեզ պիտի
բարկացունեմ ։ Հայց Եսայի կըհամարձակի , ու 20
կըսէ ։ Ես անոնց գտնըվեցայ՝ որ իս չէին փնտը-
ռեր , յայտնի եղայ անոնց՝ որ իս չէին հարցու-
ներ ։ Հայց Իսրայէլին կըսէ ։ Ամէն օր ձեռքս եր- 21
կընցուցի ան մարիկ չընող ու դիմադարձ ժողո-
վուրդին վրայ ։

ԳԼ · ԺԸ ։

1 Ա ւրեմն կրաւեմ , Ա՛ի թէ Ա՛ստուած իր ժողո-
վուրդը մէկ դի՛ ձգեց մի · քա՛ւ լիցի · ինչու որ
ես ալ Իսրայէլացի եմ , Բ՛րքամէին զաւակէն՝
2 Ա՛ռնիամէնի ցեղէն ։ Ա՛ի՛մ դի՛ չձգեց Ա՛ստուած
իր ժողովուրդը՝ ան որ ինքը առա՛ջուց ճանչցաւ ·
չէ՞ք մի գիտեր Եղիային վրայօք գիրքը ի՞նչ կը-
սէ · ինտր անկիա ամբաստանութիւն կընէ Ա՛ս-
3 ուածոյ՝ Իսրայէլին դէմ՝ ըսելո՛վ · Տէ՛ր՝ քու մար-
գարէներդ կոտրտեցին , ու քու սեղաններդ կոր-
ծանեցին · մնա՛կ ես մնացի , և ի՛մ՝ անձս կրփըն-
4 տրեն ։ Ա՛յլ ի՞նչ կըսէ անոր Ա՛պո՛ծային
պատասխանը · Ինծի՛ թողացի կըսէ՝ եօթը հազար
մարդիկ , որ Բ՛ահաղին ծնրադրութիւն չըրին ։
5 Ա՛նանկ ալ աս ատենս կան մնացածներ՝ որ ընորհ-
6 քին ընտրութեամբը եղան ։ Եւ թէ որ ընորհքով ,
անանկ է՝ նէ՛ ալ գործքերէն չէ՛ · Հապա թէ չէ՝
7 ընորհքը ալ ընորհք չըլլար ։ Ուրեմն ի՞նչ · Ի՛սրա-
յէլը չի՛ հասաւ ան բանին որ կըփնտրեր , բայց
ընտրուածներուն հասաւ ա՛ն բանը · ու մնացեալ-
8 ները կուրցան · ինչպէս որ գրված է · Ա՛ստուած ա-
նոնց թմբրութեան հոգի տըւաւ · աչ՛ քներ՝ որ
անոնցմով չի պիտի տեսնան · ու ականջներ՝ որ
անոնցմով չի պիտի լսեն , մինչև աս ատենի օրս ։
9 Եւ Դաւիթ կըսէ · Ա՛նոնց սեղանները որոգայթ
թող ըլլայ , ու որս , և գայթակղութիւն , ու ի-
10 րենց հատուցում · աչ՛ քերնին խաւարի՛ որ չի
11 տեսնան , ու անոնց կռնակը միշտ վա՛ր ծռէ ։ Ա՛ւ-
րեմն կըսեմ · Ա՛նոր համա՛ր մի՛ անկը յանցանք
ըրին , որ կործանին · քա՛ւ լիցի · հապա իրենց
յանցանքը ընելո՛վը՝ Հեթանոսաց փրկութիւն Եղա՛ւ ·
12 որ զի՛րենք նախանձի՛ մէջ ձգէ ։ Ուստի թէ որ ա՛-
նոնց յանցանքը աշխարհի մեծութիւն Եղա՛ւ , ու
անոնց յաղթըվիլը Հեթանոսներուն մեծութիւն ,

ալ որքան էվելօք անոնց լըսութիւնը ։ Ասոյց ձեղի 13
կըսեմ Հեթանոսներուդ . Մըչափ ժամանակ որ
Հեթանոսներուն առաքեալ եմ՝ իմ պաշտօնըս
կըփառաւորեմ . որ գուցէ անոնք ոչ իմ մարմ- 14
նովս են անոնք նախանձի մը մէջ ձգեմ , ու ա-
նոնցմէ մէկ քանին ապրեցուցեմ ։ Վասն զի Թէ 15
որ անոնց մէկ դի ձգուիլը՝ աշխարհին հաշտութիւն
է , հապա անոնց ընդունուիլը ինչ պիտի ըլլայ ,
Թէ չէ մեռելներէն կենդանի ըլլալ ։ Ապրդ Թէ որ 16
առջի բերքը սուրբ է , նաև շաղ վըսկածքը , և Ընչ
արմատը՝ անանկ է նէ ճիւղերն ալ ։ Մէկ որ ան 17
ճիւղերէն մէկ քանին կոտրեցան , ու դուն որ վայ-
րենի ձիթենի էիր՝ անոնց մէջ պատուաստեցար ,
ու ձիթենիին արմատին և պարարտութեանը հա-
ղորդ եղար , ճիւղերուն դէմ մի՛ պարծենար ։ 18
Հապա Թէ որ պարծենաս՝ չէ Թէ դուն արմատը
վեր բռներ ես , հապա արմատը քեզ ։ Ուրեմն 19
պիտի ըսես , Ճիւղերը կոտրեցան՝ որ ես պատ-
ուաստիմ ։ Ըղձկ է , անհաւատութիւնով անոնք 20
կոտրեցան , ու դուն հաւատքով հաստատուեցար ,
մի՛ հպարտանար , հապա վախցիր . ինչու որ՝ և- 21
Թէ Ընտած բուն ճիւղերուն չի խնայեց , գէթ՝
ձեզի՛ որ չըլլայ Թէ քեզի ալ չի խնայէ ։ Ուստի՝ 22
նայէ Ընտութ ան անուշութիւնը , ու խըստութիւ-
նը . կործանվածներուն վրայ խստութիւնը՝ և
քեզի վրադ Ընտութ ան անուշութիւնը , Թէ որ
ան անուշութեան մէջ կենաս նէ . հապա Թէ չէ
դուն ալ կրկոտրըվիս ։ Ասև անոնք Թէ որ նոյն 23
անհաւատութեան մէջ չի կենան նէ՝ կըպատուա-
ստին . ինչու որ կարող է Ընտած անոնք նո-
րէն պատուաստելու ։ Ինչու որ եթէ դուն բնա- 24
կան լեռանը ձիթենիէն կտրըվեցար , ու ան ազէկ
ձիթենիին վրայ որ ձէրջ բնական չէր՝ պատուաս-
տեցար , ալ որքան էվելօք անոնք որ բնական
ճիւղէրջ են՝ կըպատուաստին իրենց ձիթենիին վրայ ։
Ղեմ ուզեր ես՝ եղբայրներ՝ որ տգէտ ըլլաք աս խոր- 25

հուրդիս , (որ ինքըզինքիդ իմաստուն չի սեպիք)
որ ըստ մասին կուրութիւն եղաւ Իսրայէլին ,
26 մինչև որ հեթանոսներուն լրութիւնը մտնայ . և
եսքը բոլոր Իսրայէլ պիտի փրկուին . ինչպես որ
գրուած է . Իհոնէն պիտի գայ փրկիչը , ու Յա-
կոբէն ամբարշտութիւնները մէկ դի պիտի դար-
27 ցունէ . և ա՛յս է իմ՝ ուխտս անոնց , երբոր անոնց
28 մեղքերը վերցուցեմ ։ Աւետարանին նայելով՝
անոնք Աստուծոյ թշնամիներն են ձեր պատճա-
ռովը . ընտրութեանը նայելով՝ սիրելի են հայ-
29 րերուն համար ։ Ինչու որ Աստուծոյ շնորհքը
30 ու կոչումը առանց զղջանալու է ։ Այսպէս դուք
պէս որ դուք ալ մէկ ատեն մը Աստուծմէ ապըս-
տամբ էիք , ու հիմայ ողորմութիւն գտաք ա-
31 նոնց ապստամբութեան պատճառովը . այսպէս ալ
անոնք հիմայ ապստամբ եղան , որ ձեզի եղած ո-
ղորմութեան պատճառովը անոնք ալ ողորմու-
32 թիւն գտնան ։ Ինչու որ Աստուած ամենն ալ
անհաւատութեան մէջ ալգիլեց , որ ամենուն ո-
ղորմի ։
33 Ո՜վ Աստուծոյ մեծութեան ու իմաստութեան
ու գիտութեան խորութիւնը . ինչպէս ան-
քննելի են իր դատաստանները , ու չհասկըց-
34 վելու են իր ճամբաները ։ Այսպէս ո՞վ գիտցաւ
Տէրոջը միտքը . կամ անոր հետ ո՞վ խորհրդակից
35 եղաւ . կամ ո՞վ անոր փոխ տըւաւ , ու փոխարէ-
36 նը անկէց պիտի առնէ ։ Ինչու որ ամէն բաները
անկէց՝ ու անո՛վ , և անոր համար են . իրեն փառք
յաւիտեանս . ամէն ։

ԳԼ ՝ ԺՀ ։

1 Ձեզի կաղաչեմ եղբայրներ՝ Աստուծոյ ողոր-
մութեամբը , որ ձեր մարմինները պատրաստեք
կենդանի զոհ մը՝ սուրբ , Աստուծոյ հաճելի , ու է
2 ձեր բանաւոր պաշտօնը . ու մի՛ կերպարանիք աս
աշխարհիս կերպարանքովը , հապա ձեր միտքին

նորոգութեամբը նորոգվեցէք՝ որ գուք լաւը քըն-
նէք , և թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը՝ ան որ բա-
րի ու հաճելի և կատարեալ ։ Ինծի տրված Աս- 3
տուծոյ շնորհքովը ամ կըսեմ բոլոր ձեր մէջը և-
ղողներուն , որ արժանի եղածը մտմըտալէն աւե-
լի բան չի մտմըտաք ։ հապա զգաստ կենալու մըտ-
մըտացեք ինչպես որ Աստուած ամէն մէկուն բաժ-
նեց հաւատքին չափը ։ Ինչպես որ մէկ մարմինի 4
մէջ շատ անդամներ ունինք , ու ան ամէն ան-
դամները մի և նոյն գործը չունին ։ ասանկ ալ մենք 5
շատովնիս մէկ մարմին մըն ենք Ի Քրիստոսով ,
բայց ամէն մէկերնիս իրարու անդամներ ենք ։
Ասոնի մենք կերպ կերպ պարգևներ ունինք՝ ան 6
շնորհքովը որ մեզի տրված է ։ թէ որ մարգարէու-
թիւն՝ հաւատքին չափովը գործածենք , թէ որ ծա- 7
ռայութիւն՝ ծառայութեան չափովը , թէ ան որ
կըսորվեցուն՝ վարդապետութեան չափովը , թէ 8
ան որ կըմխիթարէ՝ մխիթարութեան չափովը ։
ան որ առատ է՝ ուրախութեամբ ։ ան որ վերա-
կացու է՝ ջանքով ։ ան որ կողորմի՝ ուրախ սրտով ։
Սէրը՝ առանց կեղծաւորութեան ըլլայ , չարը ա- 9
տելով՝ բարիին եանէն երթալով ։ եղբայրսիրու- 10
թեան մէջ միմեանց վրայ գթած եղէք ։ պատվո-
լու մէջ միմեանց անցէք ։ չանգի մէջ՝ անձրկած 11
չըլլաք ։ հոգիով բորբոքեցէք , Տէրոջը ծառայեցէք ։
յոյսով ուրախ եղէք ։ նեղութեան համբերեցէք ։ 12
աղօթքի առեվ կեցէք ։ սուրբերուն պէտք եղածին 13
խառնըվեցէք ։ հիւրասիրութեան տանէ եղէք ։
Չնզ՝ հալածողները օրհնեցէք ։ օրհնեցէք՝ ու մի՛ 14
անիծէք ։ Ինդացողներուն հետ ինդացէք ։ լա- 15
ցողներուն հետ լացէք ։ Իրարու վրայ միևնոյն 16
խորհուրդ ունեցէք ։ ամբարտաւանութիւն մի՛ ը-
նէք , հապա խոնարհներուն հետ խոնարհեցէք ։
Ինքզինքնիդ խնամտուն տեղ մի՛ դնէք ։ Վնչու- 17
թեան փոխարէն մէկուն գէշութիւն մի՛ ընէք ։
ամէն մարդու աղէկ սեպած բաները մտմըտացէք ։

18 թէ որ կարելի է նէ ձեզի՝ ամէն մարդու հետ խա-
19 ղաղութիւն ունեցէք ։ Սիրելիք վրէժխնդրու-
թիւն մի՛ ընէք ձեր անձին համար · հապա բար-
կութեան տեղ տրվէք · ինչու որ գրված է ·
Վրէժխնդրութիւնը իմն է , ու ես պիտի հատու-
20 ցանեմ՝ կըսէ Տէրը ։ Հապա թէ որ քու թշնամիդ
անօթեցեր է , հաց տուր անոր , և թէ որ ծարաւ
է՝ ջուր տուր անոր · աս ընելով՝ կրակի կայծերը
21 անոր գլխուն վրայ կըդիզես ։ Չարէն մի՛ յաղթը-
վիր , հապա բարիով յաղթէ չարին ։

ԳԻ · ԺԹ ։

1 Ամէն մարդ որ իշխանութեան տակ է՝ հնազան-
դութեան մէջ թող կենայ · ինչու որ իշխա-
նութիւնը մէկ տեղէ մը չէ , միայն թէ Աստուծմէ · և անոնք որ կան՝ Աստուծմէ կարգըված են ։
2 Անանկ է նէ՝ ով որ իշխանութեան դէմ կըկենայ՝
Աստուծոյ հրամանին դէմ կըկենայ · և անոնք որ
դէմ կըկենան՝ իրենց վրայ դատապարտութիւն
3 կընդունին ։ Ինչու որ իշխանները բարի գործ-
քերուն վախ տըվող չեն , հապա չարերուն · կու-
զես չի վախնալ ան իշխանութենէն բարի գործէ ,
4 ու անկէց գովութիւն պիտի ընդունիս · ինչու որ
անիկա Աստուծոյ սպասաւորն է քեզի բարիի հա-
մար · հապա թէ որ դուն չար կըգործես՝ վախ-
ցիր · ինչու որ դատարկ տեղը անիկա մէջքը թուր
չէ կապեր · Աստուծոյ սպասաւորն է՝ վրէժխնդ-
րող բարկանալու անոր վրայ որ չար կըգործէ ։
5 Ասոր համար պէտք է հնազանդ ըլլալ , չէ թէ
միայնակ բարկութեանը համար՝ հապա խղճմտան-
6 քին համար ալ ։ Ասոր համար է որ տուրք ալ
կուտաք · ինչու որ Աստուծոյ սպասաւորներն են
7 միշտ ան բանին վրայ կենալու ։ Անանկ է նէ՝ հա-
տուցէք ձեր պարտքը ամէնուն · որուն որ տուրք
պետք է՝ տուրքը · որուն որ մաքս՝ մաքսը · որուն
որ վախ՝ վախնալը · որուն որ պատիւ՝ պատիւը ։

Եւ մէկուն պարտական մի՛ գտնըվիք , միայն թէ 8
մէկըզմէկ սիրելու . վասն զի ո՛վ որ ընկերը կըսի-
րէ , անիկա օրէնքը կըկատարէ . [քանզի] որ ան 9
մի՛ շնարը , ու մի՛ սպանաները , և մի՛ գողնա-
րը , ու մի՛ սուտ վկայութիւն ընեըը , և մի՛ ցան-
կարը . և թէ ուրիշ պատուէր մըն ալ կայ՝ աս
խօսքին մէջ ըսուըը կըբովանդակվի , թէ Դու ըն-
կերդ քու անձիդ պէս սիրես : Սէրը իր ընկերին 10
գէշութիւն չընէր . օրէնքին բովանդակութիւնը
սէրն է : Եւ ասիկա գիտցէք ատենիս համար , որ 11
հիմայ ժամանակ է մեզի քունէն արթննալու . ին-
չու որ հիմայ մօտ է մեզի փրկութիւնը քան թէ
ան ատենը՝ որ հաւատացինք : Գիշերը մէկ դի 12
գնաց , ու ցորեկը մօտեցաւ . ասկէ ետև մէկ դի ը-
ննենք խաւարին գործքերը , ու վրանիս հագնինք
լոյսին զէնքերը : Ուրպէս թէ ցորեկ ատեն զգաս- 13
տութեամբ պըտրտինք . չէ թէ անառակութիւն-
ներով՝ ու գինովութիւններով , և չէ թէ խառ-
նակ անկողիններով՝ ու պղծութիւններով , և չէ
թէ նախանձութիւնով ու հակառակութիւնով .
Հապա վրանիդ հագէք Տէր Յիսուս Քրիստոսը . 14
ու մարմինդ խնամք մի՛ տանիք ցանկութիւնով :

ԿԱ . ԺՊ ։

Բայց հաւատքին մէջը տկար եղողը ընդունեցէք՝ 1
չէ թէ տարակուսական որոշմունքներով :
Մէկը կըհաւատայ՝ որ ամէն բան կրնայ ուտել . 2
և ան որ տկար է՝ կանանչեղէն կուտէ : Ան որ 3
կուտէ՝ չուտողը թող չանարգէ . ու ան որ չու-
տէր՝ ուտողը թող չդատէ . [քանզի] որ Աստուած
անիկա ընդունեց : Դուն ո՞վ ես որ ուրիշին ծա- 4
ռան կըդատես . իրեն Տէրոջը կըկենայ՝ կամ կը-
նայ . բայց պիտի կենայ , [քանզի] որ Տէրը կարող
է անիկա հաստատել : Մէկը՝ մէկ օրը մէկալ օ- 5
րէն էվել կըսեպէ , ու մէկալը ամէն օր Տ՛ի կըսե-
պէ . թող ամէն մարդ իր միտքը հաճեցունէ : Ան 6

որ կը հոգայ օրը , Տէրոջը կը հոգայ · և ան որ չի
հոգար օրը , Տէրոջը չի հոգար · ու ան որ կուտէ
Տէրոջը կուտէ , ու Աստուծմե կը գոհանայ · և ան
որ չուտեր՝ Տէրոջը չուտեր , ու Աստուծմե կը-
7 գոհանայ ։ Ինչու որ մեզմե մեկը ինքզինքին հա-
մար չապրիր , ու ինքզինքին համար չի մեռնիր ։
8 Թէ որ ապրինք՝ Տէրոջը համար կապրինք · և թէ
որ մեռնինք՝ Տէրոջը համար կը մեռնինք · անանկ
է նէ՝ թէ որ ապրինք , և թէ որ մեռնինք՝ մենք
9 Տէրոջն ենք ։ Ինչու որ՝ Քրիստոս ալ անոր
համար մեռաւ՝ ու ապրեցաւ , որ առ հասարակ
10 մեռելներուն ու կենդանիներուն իշխէ ։ Դուն ին-
չու քու եղբայրդ կը դատես , կամ ինչու քու եղ-
բայրդ կը քամահրես · վասն զի ամենքնիս ալ
Քրիստոսի ատեանին առջևը պիտի կայնինք ։
11 Ինչու որ գրված է · Ես կենդանի եմ՝ կ'ըսէ Տէ-
րը , որ ամեն ծունկ ինծի պիտի ծռի , և ամեն
12 լեզու Աստուծոյ պիտի խոստովանի ։ Ուրեմն մեզ-
մե ամեն մեկը Աստուծոյ հաշիւ պիտի տայ իր ան-
13 ձին համար ։ Անանկ է նէ՝ մեկզմեկ չի դատենք ·
հապա էվելոք ան միտքնիդ դրէք՝ գայթակղու-
14 թիւն չի գնել եղբօրը ։ Ես գիտեմ՝ ու հաստատ-
ված եմ Յիսուս Քրիստոսով , որ ինքիրմէն մեկ
բան մը պիղծ չէ · բայց ան՝ որ պիղծ կը սեպէ մեկ
15 բան մը , անոր պիղծ է ան ։ Հապա թէ որ ձա կե-
րակուրիդ համար քու եղբայրդ տրտմի , ալ դուն
սիրով չի վարվեցար · քու կերակուրովդ մի՛ կոր-
սընցուներ անիկա , որուն համար որ Քրիստոս
16 մեռաւ ։ Ձեր բարիին վրայ չըլլայ որ չար խօսին ։
17 Ինչու որ Աստուծոյ արքայութիւնը կերակուր
ու խմելիք չէ , հապա՝ արդարութիւն ու խնդու-
18 թիւն և խաղաղութիւն Հոգւով Սրբով ։ Ան-
զի թէ որ մեկը աս բաներն մէջ Քրիստոսի կը ծա-
ռայէ , անիկա Աստուծոյ հաճելի է ու մարդիկ-
19 ներուն գովելի ։ Անանկ է նէ սակէ եւև խաղա-
ղութեան՝ ու մեկզմեկու օգտին եւևէն երթանք ։

Ընչայ որ կերակուրին պատճառովը Աստուծոյ 20
գործը քակես . ամէն բան սուրբ է . միայն թէ ան
մարդուն է գէշ՝ որ խղճմտանքով կուտէ : Աղէկ 21
է միս չուտել , և գինի չի խմել , ու ոչ ան բանը
ընել որ անով քու եղբայրդ կրգայթակղի՝ կամ
կրգլորի՝ կամ կրտկարանայ : Դուն հաւատք ու- 22
նիս մի . առանձին Աստուծոյ առջևը բռնէ . երանէկ
անոր՝ որ իր անձը չի՛ դատապարտեր անով՝ որով
ընկերը կրփորձէ : Հայց ան որ խղճմտանք կընէ՝ 23
թէ որ ուտէ նէ կրդատապարտուի . պատճառը
որ չէ թէ հաւատքով կ՚ուտէ . ինչու որ՝ ինչ բան
որ հաւատքով չէ նէ՝ ան մեղք է : Հայց ան որ 24
կարող է ձեզ հաստատել իմ աւետարանիս պէս ,
ու Յիսուս Քրիստոսի քարոզութեանը պէս , ան
խորհուրդին յայտնուելուն պէս , որ յաւիտենա-
կան ատեններէն ՚ի վեր ծածկուած էր , և հիմայ 25
յայտնուեցաւ մարգարէական գիրքերով , յաւի-
տենական Աստուծոյ հրամանովը՝ ամէն Հեթա-
նոսներուն ճանչցուելու հաւատքի հնազանդե-
լու համար . Ա՛ի միայն իմաստուն Աստուծոյն՝
Յիսուս Քրիստոսի ձեռքովը փառք յաւիտեանս .
ամէ՛ն :

ԿԻՆ . ԺԵ :

Պէտք է մեզի՝ որ կարող ենք , տկարներուն 1
տկարութիւնը վերցունել . և չէ թէ մինակ
մեր անձին հաճոյ ըլլալ : Հապա մեզմէ ամէն 2
մէկերնիս ընկերին հաճոյ թող ըլլայ բարի բա-
ներու մէջ անոր օգտին համար : Ինչու որ Քր- 3
իստոս ալ չէ թէ իր անձին հաճոյ եղաւ , հապա
ինչպէս որ գրված է . Քեզ նախատողներուն նա-
խատինքը իմ վրաս իննաւ : Սակայն ինչ որ 4
գրվեցաւ նէ՝ մեր սորվելուն համար գրվեցաւ , որ
համբերութիւնով ու գիրքերուն մխիթարելովը
յոյս ունենանք : Հայց համբերութեան և բոլոր 5
մխիթարութեան Աստուածը տայ ձեզի իրարու

հետ մի և նոյն խորհուրդ ունենալ Յիսուս Քրիստոսի Աստուածին պէս. որ միաբանեցնէ մեզ
6 բերան փառաւորէք Աստուած ու մեր Տէրոջը
7 Յիսուս Քրիստոսի Հայրը: Ասոր համար մեզ կըզմեզ ընդունեցէք, ինչպէս որ Քրիստոս ալ
8 ձեզ ընդունեց Աստուծոյ փառքին:
Ասոյց կըսեմ՝ թէ Քրիստոսի Թլփատութեան պաշտօնեայ ըլլալը Աստուծոյ ճշմարտութեանը համար էր, որ նախնեաց տրուած խոստմունքը
9 հաստատէ. սակայն Հեթանոսները ողորմութեան համար զԱստուած փառաւորեն, ինչպէս որ գրուած է. Ընոր համար քեզմէ կըգոհանամ Հեթանոսներուն մէջ, ու քու անունիդ սաղմոս կեր-
10 գամ: Եւ դարձեալ կըսէ թէ, Ուրախ եղէք
11 Հեթանոսնե՛ր՝ անոր ժողովրդեանը հետ: Եւ դարձեալ թէ, Օրհնեցէ՛ք Տէրը բոլո՛ր Հեթանոսներ, ու գովեցէ՛ք անիկա ամէն ժողովուրդ-
12 ներ: Եւ դարձեալ Եսային կըսէ. Յեսսէին արմատ մը պիտի ելլայ, ու ան որ Հեթանոսներուն իշխան պիտի կայնի, անոր Հեթանոսները պի-
13 տի յուսան: Հայց յուսոյ Աստուածը ձեզ լեցուցէ բոլոր ուրախութիւնով ու խաղաղութիւնով, որ առատանաք յուսով՝ Հոգւոյն Սրբոյ զօրութեամբը:
14 Ես ալ ինքնիրենս համոզուած եմ ձեզի համար՝ իմ եղբայրներս, որ դուք լեցուն էք բարութիւնով, լեցուն էք ամէն գիտութիւնով, և
15 կրնաք մէկզմէկ խրատել: Սակայն համարձակ գրեցի ձեզի իմ եղբայրներս՝ շատեն քիչը, որպէս թէ միտքերնիդ ձգեմ ան շնորհքին վրայ-
16 ով՝ որ Աստուածմէ ինծի տրուած է. Յիսուս Քրիստոսի սպասաւոր ըլլալուս Հեթանոսներուն մէջը՝ Աստուծոյ աւետարանը քահանայի ընելուս, որ Հեթանոսներուն ընծան ընդունելի ըլլայ՝
17 Հոգւով Սրբով սրբըվելով: Ասկէ եւս Յա-

սի ձեռքով ։ Ինչու որ չէմ համարձակիր խօսիլ 18
Քրիստոսի խին ձեռքովս չի գործած բաները
Հեթանոսները հնազանդեցուելու համար՝ խօս-
քով ու գործքով , նշաններու ու հրաշքներու 19
ուժով , Հոգւոյն Սրբոյ զօրութիւնով , անանկ
որ ես Երուսաղէմէն սկսած և շրջան ընելով մին-
չև Լիւրիկեցոց կողմերը Քրիստոս աւետարանե-
լը լեցուցի ։ Ասանկ ջանացի աւետարանը քարո- 20
զելու . չէ թէ ուր որ Քրիստոսի անունը լսուե-
ցաւ , որ չըլլայ՝ որպէս թէ մէկ ուրիշ հիմի վրայ
շինեմ . հապա ինչպէս որ գրված է , Թէ՛ Որոնց 21
որ չի պատմուեցաւ անոր համար՝ պիտի տեսնան .
ու որոնք որ չի լսեցին նէ՝ պիտի խմանան ։ Ասոր 22
համար շատ խափանուեցայ ձեզի գալու ։ Հայց 23
հիմայ աս կողմերը ինծի ալ տեղ չի կայ . ու շատ
տարիներէ ի վեր խիստ կրնայիմ՝ ձեզի գա-
լու . երբոր դէպի Սպանիա անցնիմ , կրնամ 24
անոնց երթալուատենս ձեզ տեսնալ , ու ձեզմէ
հոն ճարկըլլել , թէ որ առաջուց քիչ մը ձեզմով
լեցուիմ նէ ։ Հայց հիմայ Երուսաղէմ կերթամ 25
սուրբերուն սպասաւորելու ։ Վասն զի Մակե- 26
դոնացիները ու Աքայեցիները յօժարեցան որ՝
Երուսաղէմի մէջ եղած աղքատ սուրբերուն քիչ
մը հաղորդութիւն ընեն ։ Յօժարեցան , ինչու որ 27
անոնց պարտական ալ են . վասն զի թէ որ անոնց
հոգևոր բաներուն հաղորդ եղան Հեթանոսնե-
րը , կըպարտաւորին որ անոնց մարմնաւոր բանե-
րուն ալ կցորդ ըլլան ։ Ուրեմն ասիկա կատարե- 28
լով՝ ու կնքելով անոնց պտուղը , ձեզմէ Սպանիա
կանցնիմ ։ Ես գիտեմ , որ իմին ձեզի գալու ա- 29
տենս՝ Քրիստոսի աւետարանին լեցուն օրհնու-
թիւնովը պիտի գամ ։ Ձեզի կաղաչեմ եղբայր- 30
ներ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը , ու
Հոգւոյն սիրովը , որ ինծի հետ պատերազմակից
ըլլաք ձեր աղօթքներուն մէջ առ Աստուած ինծի
համար . որ Հրէաստանի մէջ եղող ապստամբնե- 31

բէն աղաւտիմ , ու իմ Երուսաղէմի համար ընե-
լը սպասաւորութիւնս սուրբերուն ընդունելի
32 ըլլայ · որ ուրախութիւնով Աստուծոյ կամքովը
33 ձեզի գալով՝ հանգչիմ ձեզի հետ : Եւ խաղաղու-
թեան Աստուածը ձեր ամենուդ հետ ըլլայ ·
ամէն :

ԳԼ · ՀՕ ·

1 Ձեզի կը յանձնեմ մեր փիբէ քոյրը , որ կենդ-
2 բացող եկեղեցիին սպասաւորն է · որ անիկա
ընդունիք Տէրոջմով՝ ինծոր որ սուրբերուն ար-
ժան է , և անոր ինամք տարէք՝ ինչ բանի պէտք
ըլլայու որ ձեզ կանչէ նէ · ինչու որ անիկա ալ
շատերուն վերակացու եղաւ , ու ինծի ալ բոլո-
3 րովին : Ներա տվիէք Պրիսկային ու Ակիւղասին
4 Քրիստոս Յիսուսով իմ գործակիցներուս · (ո-
րոնք իմ կեանքիս համար իրենց վիզերը տվին ·
որ անոնցմէ չէ թէ միայն ես շնորհակալ կըլլամ ,
հապա Հեթանոսներուն բոլոր եկեղեցիներն ալ ·)
5 և անոնց տանը մէջի եկեղեցիին ալ · Ներա տվիէք
Եպինետոս իմ սիրելիիս , որ Ասիացոց առջի պը-
6 տուղն է Քրիստոսով : Ներա տվիէք Մարիա-
7 յին , որ ձեր վրայ շատ աշխատեցաւ : Ներա տը-
վիէք Անդրոնիկոսին ու Յունիային իմ ազգական-
ներուս , և հետս գերի եղողներուն , անոնք որ
առաքեալներուն մէջը երևելիներ են · որոնք ինծ-
8 մէ՛ ալ առաջ Քրիստոսի եղան : Ներա տվիէք
9 Ամպղիոս իմ սիրելիիս՝ Տէրով : Ներա տվիէք
Ուրբանոս իմ գործակիցիս՝ Տէրով , ու Աստաքեոս
10 իմ սիրելիիս : Ներա տվիէք Ապելէսին՝ որ ընտ-
11 րեալ է Տէրով : Ներա տվիէք անոնց որ Երիս-
տաբուղոսի տունէն են · բարև տվիէք Հերովդիոն
իմ ազգականիս · բարև տվիէք անոնց՝ որ Նար-
12 կիսոսին տունէն են Տէրով : Ներա տվիէք Տը-
րիփոնէին ու Տրիփոսէին՝ որ կաշխատին Տէրով ·
բարև տվիէք Պերսիդէ սիրելիին , որ շատ աշխա-

տեցաւ Տէրով ։ Խարև տրվէք Աուսիոս Տէրով 13
ընտրվածին , ու անոր մերը՝ և իմին ։ Խարև 14
տրվէք Ըսինկրետէսին , Փղէգոնտէսին , Երմա-
սին , Պատրոբոսին , Երմէսին , ու անոնց հետ
եղող եղբայրներուն ։ Խարև տրվէք Փիլողոգո- 15
սին , ու Նուլիային , Նէրէոսին , ու անոր քրո-
ջը , և Ողիմպիային , ու անոնց հետ եղող բոլոր
սուրբերուն ։ Խարև տրվէք իրարու՝ սրբութեան 16
համբուրով . բարև կուտան ձեզի Քրիստոսի
բոլոր եկեղեցիները ։

Կաղաչեմ ձեզի եղբայրներ , որ գիտնաք ա- 17
նանկները՝ որ ձեր սորված վարդապետութենէն
դուրս հերձուածողութիւն ու գայթակղութիւն
կընեն . և անոնցմէ ետ կեցէք ։ Ինչու որ անանկ- 18
ները մեր Տէր Քրիստոսին չեն ծառայեր , հապա
իրենց որովայնին , ու անուշ խօսքերով և գո-
վասանքով անմեղներուն սիրտերը կրնաբեն ։
Որովհետև ձեր հնազանդութիւնը ամէնուն կա- 19
սած է . ուստի ձեր վրայ ուրախ եմ . բայց կու-
զեմ որ դուք իմաստուն ըլլաք բարիին , ու ան-
մեղ՝ չարին ։ Եւ խաղաղութեան Աստուածը 20
կարգդրդրդ ընէ Սատանան շուտով ձեր ոտքին
տակը . մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը
ձեր հետն ըլլայ ։

Խարև կընէ ձեզի Տիմոթէոս եղբայրը ու իմ 21
գործակիցս , և Ղուկիոս՝ ու Յասոն՝ և Սոսի-
պատրոս իմ ազգականներս ։ (Խարև կընեմ ձեզի 22
ես ալ Տերտիոս , որ սա թուղթը գրեցի՝ Տէ-
րով ։) Խարև կընէ ձեզի Գայիոս , իմ և բոլոր 23
եկեղեցիին վանտուրը . Խարև կընէ ձեզի Ե-
րաստոս քաղաքիս կառավարը , ու Կուարտոս եղ-
բայրը ։ Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը 24
ձեր ամէնուդ հետը . ամէն ։

Բայց ան որ կարող է ձեզ հաստատել իմ ա- 25
ւետարանիս պէս , ու Յիսուս Քրիստոսի քարո-
զութեանը պէս , ան խորհուրդին յայտնըվելուն

պէս , որ յաւիտենական ատեններէն ի վեր ծած-
26 կըված էր , և հիմայ յայտնըվեցաւ մարգարէա-
կան գիրքերով , յաւիտենական Աստուծոյ հրա-
մանովը՝ ամէն ազգեր հնազանդելու համար ,
27 հաւատքի հնազանդելու համար · մի միայն իմաստուն
Աստուծոյն՝ Յիսուս Քրիստոսի ձեռքովը ,
փառք յաւիտեանս յաւիտենից ·
ամէն :

Կորընթոսէն Հռոմայեցիներուն գրվեցաւ ,
ո՞ւ Փիլիպէ Սարկաւագին
ձեռքովը :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԸՆԹԱՑՔԱՆ ԹՈՒՂԹԸ ԸՆ

ԿՈՐՆԹԱՑԻՆ։

ԳԼՈՒԽ։

Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ ըլլալու- 1
կանչուած Աստուծոյ կամքովը, ու Սոսթե-
նէս եղբայրը, Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ 2
եկեղեցիին՝ Քրիստոս Յիսուսի ընծայուածներուն՝
սուրբեր ըլլալու կանչուածներուն, ան ամէնուն
հետ՝ որ ամէն տեղ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
անունը կը կանչեն, իրենց ու մերը։ Ձեզի 3
շնորհք՝ և խաղաղութիւն Աստուծմէ մեր Հօր-
մէն՝ ու Տէր Յիսուս Քրիստոսէն։

Ամէն ատեն իմ Աստուծմէս ձեզի համար կը- 4
գոհանամ՝ ան Աստուծոյ շնորհքներուն վրայ, որ
ձեզի տրուած են Քրիստոս Յիսուսով. (որ դուք 5
անով ամէն բանի մէջ հարուստցաք ամէն խօս-
քով՝ ու ամէն գիտութիւնով. ինչպէս Աստուծոյ 6
վկայութիւնն ալ ձեր վրան հաստատ եղաւ. որ 7

դուք չի նըւաղիք՝ ոչ մէկ շնորհքով մըն ալ , մեր
Տէր Յիսուս Քրիստոսի յայտնըվելուն սպասե-
8լով .) որ ձեզ նաև պիտի հաստատէ մինչև վեր-
ջը՝ ոչ անարատ ը[illegible]մեր Տէր Յիսուս Քրիստո-
9սի օրը : Հաւատարիմ է Աստուած , որ իրմով
դուք կանչըվեցաք հաղորդ ըլլալու իր Որդւոյն
մեր Տէր Յիսուս Քրիստոսին :
10 Ձեզի կաղաչեմ եղբայրներ՝ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի անունովը , որ ամէնքնիդ , և բաժանմունք չըլլայ ձեր մէջը .
հնչուս որ դուք մէկ միտքի ու մէկ խորհուրդի վրայ
11 հաստատուած էիք : Ձեզի համար իմծի յայտնը-
վեցաւ եղբայրներ՝ ան Քղոէացիներէն , որ ձեր
12 մէջը հակառակութիւն կայ : Ասիմայ ես կըզուր-
ցեմ , որ ձեզմէ ամէն մէկերնիդ կըսէ եղեր Թէ ,
Ես Պօղոսեան եմ , ու մէկալը՝ Թէ Ես Ապողոս-
եան , և ուրիշը՝ Թէ Ես Կեփասեան , ու միւսը՝
13 Թէ Ես Քրիստոսեան : Իսկ արդ Քրիստոս բա-
ժանուա՞ծ է մի . մի Թէ Պօղոս խաչը ելաւ ձեզի
համար , կամ Թէ Պօղոսի անունովը մկրտըվե-
14 ցաք : Գոհութիւն իմ Աստուծոյս , որ ձեզմէ մէ-
կը չի մկրտեցի , միայն Թէ Կրիսպոսը ու Գայիո-
15 սը . որ մէկը չըսէ , Թէ իմ անունովս մկրտըվե-
16 ցաք : Ստեփանէին ընտանիքն ալ մկրտեցի . ուրիշ
մէկը չեմ գիտեր Թէ ամենևին մկրտեցի :
17 Ինչուս որ Քրիստոս իս մկրտելու չէր խրկեց ,
հապա աւետարանը քարոզելու . չէ Թէ խոսքերու
ճարտարութիւնով , որ Քրիստոսի խաչը ոչինչ
18 չըլլայ : Ինչու որ խաչին քարոզութիւնը կորուս-
եալներուն յիմարութիւն է . բայց մեզի փրկը-
19 ւածներուս Աստուծոյ զօրութիւնն է : Վասն զի
գրված է . Յիմաստուններուն իմաստութիւնը պի-
տի կորսընդունիմ , ու խելացիներուն խորհուրդը
20 պիտի արհամարհեմ : Ո՞ւր է իմաստունը , ո՞ւր է
կարդացողը , ո՞ւր աս աշխարհիս քննողը . Աստ-
ուած յիմար չի ցուցուց մի աս աշխարհիս իմաս-

տուԹիւնը ։ Վ֊ասն ոչ որովհետև Աստուծոյ ի֊ 21
մաստուԹիւնովը աշխարհ չի ճանչցաւ զաստուած
իմաստուԹիւնով , Աստուած հաճեցաւ քարոզու֊
Թեան յիմարուԹիւնովը հաւատացեալները ապ֊
րեցուներ ։ Եւ որովհետև Հրէաները նշան կու֊ 22
զեն , ու Հեթանոսները իմաստուԹիւն կրփնտր֊
ուեն . մենք կըքարոզենք խաչեալ Քրիստոսը՝ 23
Հրէաներուն գայԹակղուԹիւն , ու Հեթանոս֊
ներուն յիմարուԹիւն . բայց անոնց՝ որ կանչը֊ 24
ված են , Հրէաներուն ու Հեթանոսներուն ,
Քրիստոսը՝ Աստուծոյ զօրուԹիւն , և Աստուծոյ
իմաստուԹիւն ։ Ինչու որ Աստուծոյ յիմարը 25
մարդիկներէն էվելի իմաստուն է . և Աստուծոյ
տկարը մարդիկներէն էվելի զօրաւոր է ։ Ուրեմն 26
ղուք ձեր կոչումը կըտեսնեք Ե՛ղբայրներ , որ
չէ Թէ մարմնոյ կողմանէ շատ իմաստուններ , և
չէ Թէ շատ զօրաւորներ , և չէ Թէ շատ ազնուա֊
կաններ կանչեցան . հապա Աստուած աշխար֊ 27
հիս յիմարները ընտրեց , որ ամօԹով ընէ իմաս֊
տունները . ու աշխարհիս տկարները ընտրեց
Աստուած , որ ամօԹով ընէ զօրաւորները . ու 28
աշխարհի ցածագիները և անարգեալները ընտրեց
Աստուած՝ և ոչինչները , որ բան մը եղողները
խափանէ . որ մէկ մարմին մը չի պարծի Աստուծոյ 29
առջեւն ։ Ինչու որ անկէց էք դուք Քրիստոս Յի֊ 30
սուսի ձեռքով , որ ան մեզի Աստուծմէ իմաստու֊
Թիւն՝ արդարուԹիւն ու սրբուԹիւն և փրկու֊
Թիւն եղաւ . որ ինչպէս գրված է , ԹԷ Ան որ 31
կըպարծենայ՝ Տէրոջմով Թող պարծենայ ։

Գ.

Եւ ես եղբայրներ՝ որ ձեզի եկայ , չէ Թէ խաս֊ 1
տուն խօսքերուն առատուԹիւնով մը Աստու֊
ծոյ վկայուԹիւնը ձեզի պատմելու ։ Ինչու որ ես 2
միտքս չի դրի ձեր մէջը ուրիշ բան մը գիտնալ ,
միայն Թէ Յիսուս Քրիստոսը , ու ան խաչը և֊

3լած : Եւ ես տկարութիւնով՝ ու վախով և շատ
4դողով ձեր քովը կեցայ · ու իմ խօսքս և քարո-
զութիւնս չէ թէ մարդկային իմաստութեան խա-
բեական խօսքերով էր , հապա Հոգիին գործքե-
5րովը ու զօրութիւնովը · որ ձեր հաւատքը մար-
դոց իմաստութիւնովը չըլլայ , հապա Աստուծոյ
6զօրութիւնովը : Բայց կատարեալներուն հետ ի-
մաստութիւն կը խօսինք · ոչ աս աշխարհիս իմաս-
տութիւնը , ու ոչ աս աշխարհիս ոչընչանալու
7իշխաններուն · հապա Աստուծոյ ծածուկ իմաս-
տութիւնը կը խօսինք խորհուրդով , որ աշխար-
հէն առաջ սահմանեց Աստուած մեր փառքին հա-
8մար · որ անիկա աս աշխարհիս իշխաններէն մէկը
չի ճանչցաւ · որ թէ ճանչցած ըլլային՝ ալ փա-
9ռաց Տէրը խաչը չէին հաներ · հապա ինտր որ
գրված է · Ան բանները որ աչք չէ տեսեր՝ և ա-
կանջ չէ լսեր , ու մարդու սրտին մէջ չէ բնկեր ,
10Աստուած իր սիրելիներուն պատրաստեց : Բայց
մեզի Աստուած յայտնի ըրաւ իր Հոգւովը · ին-
չու որ Հոգին ամէն բանը կրքննէ , Աստուծոյ
11խորունկ բաներն ալ : Վ՚ան զի մարդկիներէն
ո՞վ գիտէ մարդուն բաները , միայն թէ մարդուն
հոգին որ իր մէջն է · անանկ ալ Աստուծոյ բա-
ները մէկը չի գիտեր , միայն թէ Աստուծոյ Հո-
12գին : Բայց մենք չէ թէ աս աշխարհիս հոգին ա-
ռինք , հապա ան հոգին՝ որ Աստուծմէն է · որ
մենք ճանչնանք ան բաները՝ որ Աստուծմէ տրվե-
13ցաւ մեզի : Եւ ան բաները որ կրխօսինք՝ չէ թէ
մարդու սորվեցուցած վարպետաբան խօսքերո-
վը , հապա Հոգիին վարդապետութիւնովը հո-
գևոր բաները հոգևորի հետ կպարմարենք :
14Վ՚ան զի մամնաւոր շունչ ունեցող մարդը Աս-
տուծոյ Հոգիին բաները չի ընդունիր · ինչու որ
ան իրեն յիմարութիւն մըն է · ու չի կրնար ալ
գիտնալ՝ որ հոգևոր կերպով պիտի քննըվի :
15Բայց ան որ հոգևոր է՝ ամէն բան կրքննէ , ու

ինքը մեկէ մը չէ քննուիլը : Ուստի ոմէ գիտցաւ 16
Տէրոջը միտքը , որ անոր խրատ տալով ալ ըլլայ ·
բայց մենք Քրիստոսի միտքը ունինք :

Գ Լ · Գ ·

Եւ ես եղբայրնե՛ր՝ չէ կրցայ խօսիլ ձեր հետը 1
որպես թէ հոգեւորներու հետ , հապա որպես
թէ մարմնաւորներու հետ : Որպես թէ Քրիս- 2
տոսով տղայոց՝ ձեզի կաթ կերցուցի , և չէ թէ
կերակուր · ինչու որ դեռ կարող չէիք · որ հիմայ
ալ տակաւին կարող չէք · վասն զի դեռ մարմնա-
ւոր էք : Որովհետև տակաւին ձեր մէջը կռիւ ու 3
նախանձութիւն կայ · չէ՞ որ մարմնաւոր էք , ու
մարդկօրէն կը քալէք : Երբոր ձեզմէ մէկը կըսէ , 4
Ես Պօղոսեան եմ , և մէկայլը թէ , Ես Ապողոս-
եան · չէ՞ որ մարմնաւոր էք : Ընանկ է նէ ոմէ է 5
Պօղոսը՝ կամ ոմէ է Ապողոսը · պաշտօնեաներ են ,
որոնցմով հաւատացիք · և ինտոր որ Տէրը տուաւ
անոնց ամէն մէկուն : Ես անկեցի , Ապողոսը ջուր 6
տուաւ , բայց Աստուած աճեցուց : Ընչէ ոչ 7
ան անկողը մէկ բան մըն է , ու ոչ ան ջուր տըվո-
ղը , հապա Աստուած՝ որ աճեցուց : Տընկողը ու 8
ջուր տըվողը մէկ են · բայց ամէն մէկը իր վարձքը
պիտի առնէ իր աշխատութեանը չափովը : Ընչու- 9
որ մենք Աստուծոյ գործակից ենք , դուք Աս-
տուծոյ պտուղն էք , Աստուծոյ շինվածքն էք :
Աստուծոյ ինծի տրված շնորհաց չափովը՝ իմաս- 10
տուն ճարտարապետի մը պէս հիմը դրի · բայց շի-
նողը ուրիշ է · միայն թէ ամէն մէկը թող զգու-
շանայ՝ թէ ինտոր կըշինէ : Ընչու որ մէկը ալ 11
ուրիշ հիմ չի կրնար դնել դրվածէն՝ի զատ , որ
է Յիսուս Քրիստոս : Թէ որ մէկը աս հիմին 12
վրայ կըշինէ ոսկի , արծաթ , պատուական քա-
րեր , փայտ , խոտ , եղէգ , ամէն մէկուն գործը 13
յայտնի պիտի ըլլայ · ինչու որ օրը պիտի ընդրէ ,
ինչու որ կրակով պիտի յայտնըվի · և ամէն մէ-

կուն գործը ինչպէս որ ըլլայ՝ կրակը պիտի փոր-
14 ձէ : Թէ որ մէկուն շինած գործը ծնալու ըլլայ՝
15 ինքը վարձք պիտի առնէ . Եւ թէ որ մէկուն շինա-
ծը երելու ըլլայ՝ անիկա պիտի վնաս քաշէ . բայց
ինքը պիտի ապրի . սակայն անանկ՝ իբր թէ կրակին
16 միջը : Չէ՞ք գիտեր գուք՝ որ Աստուծոյ տաճար
էք , ու Աստուծոյ Հոգին ձեր միջը բնակած է :
17 Թէ որ մէկը Աստուծոյ տաճարը կապականէ՝
Աստուած անիկա պիտի ապականէ . ինչու որ
Աստուծոյ տաճարը սուրբ է , որ դուք էք :
18 Ըրլլայ որ մէկը ինքզինքը խաբէ . Թէ որ կու-
զէ ձեզմէ մէկը աս աշխարհիս մէջ իմաստուն ըլ-
լալ , թող յիմար ըլլայ՝ որ իմաստուն ըլլայ :
19 Ինչու որ աս աշխարհիս իմաստութիւնը Աստուծոյ
առջեւը յիմարութիւն է . վասն զի գրված է Թէ ,
Ան կ՚ինակա իմաստունները իրենց խորագիտութեանը
20 մէջ կըբռնէ : Եւ դարձեալ Թէ՝ Տէրը կը ճանչ-
նայ իմաստուններուն խորհուրդները , որ պարապ
21 են : Ուրեմն էնէ մէկը թող չի պարծենայ մար-
22 դոց վրայով : Ինչու որ ամէն բան ձերն է , Թէ
Պօղոսը՝ Թէ Ապողոսը՝ Թէ Կեփասը՝ Թէ աշխար-
հը՝ Թէ կեանքը՝ Թէ մահը՝ Թէ ներկայ բաները՝
23 Թէ գալիքները՝ ամէն բան ձերն է . դուք Քրիս-
տոսին , Քրիստոս՝ Աստուծոյ :

Գ Լ . Գ :

1 Ես՝ եղբարք՝ մարդիկներուն պէս խօսիլ չկրցայ
Քրիստոսի սպասաւորներուն , ու Աստուծոյ
2 խորհուրդներուն տնտեսներուն : Կաթ տուի ձեզի
բուն միջը կըմխիթարվի , Թէ մէկը հաւատար իմ
3 գտնըվի : Բայց ինծի համար աչքնէ բան մըն է ,
որ ձեզմէ դատվիմ՝ կամ թէ բնաւ մէկ մարդէ մը ,
մանաւանդ որ ես ալ իմ անձս չեմ քններ .
4 (վասն զի ես իմ անձիս մէկ բանը չեմ գիտեր ,
բայց չէ Թէ արդարացած եմ .) ինչու որ
5 ես քննողը Տէրն է : Ուրեմն էնէ ժամանակէն

առաջ գատողութիւն մի՛ ընէք, մինչև որ գայ Տէրը՝ որ խաւարին գաղտուկ բաները կը լուսաւորէ, ու սրտերուն խորհուրդները յայտնի կընէ. և անատեր ամէն մէկուն գովեստը Աստուծմէ պիտի ըլլայ:

Ես օրինակ բերի ի՛ղձայրները՝ իմ վրաս, ու Պողոսին վրայ ձեզի համար, որ դուք ձեզմէ սորվիք չափաւոր ըլլալ, գրուածէն աւելի բան մը չհամանալ, որ չըլլայ թէ ամէն մէկերնիդ հպարտանաք մէկ ընկերին վրայ մէկալ ընկերին դէմ: Ուստի ան ո՞վ է որ քեզ կը տարբերէ. ի՞նչ ունիս որ չես առեր դուն. և թէ որ առեր ես՝ ինչո՞ւ չառածի պէս կը պարծենաս:

Հիմակվընէ կըշտացաք, ու հիմակվընէ հարուստցաք, առանց մեզի թագաւորելու. և երանի՛ թէ թագաւորէիք, որ մենք ալ ձեր հետը թագաւորութիւն ընէինք: Կը ծի՛ առանկ կերևայ որ՝ Աստուած մեզ առաքեալները վերջին ըրաւ՝ մահապարտներու նման. ինչու որ տեսարան եղանք աշխարհի, ու հրեշտակներուն, ու մարդիկներուն: Մենք յիմարներ Քրիստոսի համար, և դուք խելացիներ Քրիստոսով. մենք տկար՝ և դուք զօրաւոր. դուք փառաւորեալ՝ ու մենք անարգեալ: Մինչև աս օրվան տակին՝ անօթեցանք ալ, ծարաւեցանք ալ, մերկ ալ պըտըտեցանք, ծեծվեցանք ալ, անհանգիստ ալ եղանք. ու մեր ձեռքովը աշխատեցանք. մեզ կը բամբասեին՝ մենք կօրհնեինք. կը չարչարէին՝ յանձնառու կըլլայինք. գէշ կը խօսէին՝ կաղաչէինք. խաւսք ու խայտառակի պէս եղանք բոլոր աշխարհի, ամէնուն չնչոցը ըլլալով մինչև այսօր: Ասիկա կը գրե՛մ չէ՛ թէ ձեզ ամչցունելու համար, հապա կը խրատեմ՝ իբ՛ր սիրելի որդիներու պէս: Թէպէտ դուք տասը հազար վարժապետներ ունենաք Քրիստոսով, բայց չէ՛ թէ շատ հայր ունի.

ինչու որ Քրիստոս Յիսուսով ես ձեզ ծնայ
16 աւետարանովը ։ Ընանկ է նէ կաղաչեմ ձեզի՝
ինծի նման եղիք, ինչպէս որ ես ալ Քրիստոսի ։
17 Ձեզ համար ձեզի խրկեցի Տիմոթէոսը, որ իմ
սիրելի որդիս է ու Տէրոջմով հաւատարիմ. որ
անիկա ձեր միտքը ձգել տայ իմ Քրիստոս Յի-
սուսով բռնած ճամբաներըս, ինչպէս որ ա-
մէն տեղ ամէն եկեղեցիներուն մէջը կըսորվեցու-
18 նեմ ։ Մէկ քանիները հպարտացան, որպէս
19 թէ ես պիտի չի գամ ձեզի. բայց շուտով կու-
գամ թէ որ Տէրը կամենայ, և պիտի հասկընամ
հպարտացողներուն չէ՛ թէ խօսքերը՝ հապա զօ-
20 րութիւնը ։ Վասն զի Աստուծոյ թագաւորու-
թիւնը չէ՛ թէ խօսքերով է, հապա՝ զօրութիւ-
21 նով ։ Ուստի ի՞նպէս կուզէք, գաւազանո՞վ
գամ ձեզի, թէ հեզութեան և արդարու-
թեան ու խոնարհութեան հոգիին սիրովը ։

ԳԼ · Ե ։

1 Լսնչո՞ւ աւս հասարակ կըզրուցվիկոր պոռնըկու-
թիւն ըլլալ ձեր մէջը. և անանկ պոռնըկու-
թիւն՝ որ հեթանոսներուն մէջ ալ չի կայ. որպէս
2 թէ իր հօրը կնիկը ունենալ ։ Եւ դուք
հպարտացեր էք, ու ոչ մանաւանդ սուգ ըրիք,
3 որ ձեր մէջէն վերցըվի ան բանը ընողը ։ Ին-
չու որ թէպէտ ես մարմինով հեռու եմ, բայց
հոգիով մօտ եմ. ուստի հիմայ ալ որպէս թէ
4 մօտէն վճռեցի, որ ան բանը ընողը՝ մեր Տէր
Յիսուս Քրիստոսի անունովը մէկտեղ ժողվը-
վիք դուք, ու իմ հոգիովս՝ մեր Տէր Յիսուս
5 Քրիստոսի զօրութիւնովը, անանկը Սատանային
մատնէք մարմինը սատկըվելու համար, որ հոգին
փրկըվի մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրը ։
6 Ձեր պարծանքը աղէկ չէ. չէ՞ք մի գիտեր՝
որ քիչ մը խմորը բոլոր շաղվըված գունտը կըխը-
7 մորէ ։ Սաքրեցէ՛ք ան հին խմորը մէկ դի, որ ըլ-

լաք նոր շաղվ ըլած գուներ , ինտոր որ անխմոր էք
նէ . ինչու որ Քրիստոս մեր զատիկը մորթըվե-
ցաւ : Ասկէ եաև տօն կատարենք , չէ թէ հին 8
խմորով , և չէ թէ չարութեան ու անզգամու-
թեան խմորովը , հապա հաւատարմութեան ու
ճշմարտութեան չխմորած հացովը : Գրեցի ձեզ 9
զի ատ թուղթին մէջ , որ պոռնիկներուն հետ
չի խառնըվիք : Եւ գրածս չէ թէ աս աշխար- 10
հիս պոռնիկներուն հետ կամ ագահներուն
հետ կամ յափշտակողներուն հետ կամ կամ
պաշտներուն հետը , հապա թէ չէ պէտք
էր որ դուք աշխարհէս դուրս ելլայիք :
Ա՛խայն թէ ձեզի գրեցի չի խառնըվիլ . այ- 11
սինքն , թէ որ մէկը եղբայր ըսուած՝ կամ պոռնիկ
ըլլայ , կամ կռապաշտ , կամ ագահ , կամ բամ-
բասող , կամ գինով , կամ յափրշտակող , ա-
նանկին հետ հաց ալ ուտելու չէ : Վ ան ալ զի 12
ի՞նչ պէտք է ինծի դուրսիններն ալ դատել . չէ՞
որ դուք ներսինները կը դատէք . ու դուրսիները 13
Աստուած կը դատէ . ո՛րպէս ան չարը ձեր մէջէն
վերցուցէք :

ԳԼ . Ա :

Ձեզմէ մէկը կը համարձակի՞ թէ որ մէկ բան 1
մը ունենայ իր ընկերին հետ , անիրաւնե-
րուն առջեւը դատաստան կտրել . ու չէ՞ թէ
սուրբերուն առջեւը : Ձէ՞ք ի գիտեր որ սուր- 2
բերը աշխարհ կը դատուին . ու թէ որ ձեզմով աշ-
խարհ կը դատուի , անանկ է նէ արժանի չէք
դուք ցած ատեաններու : Ձէ՞ք ի գիտեր որ 3
մենք հրեշտակները կը դատենք , ո՛ր մնաց հապա
աս երկրաւորները : Ուրեմն թէ որ երկրաւոր 4
դատաստաններ ունենաք՝ եկեղեցիին անարգեա-
րը ձեզի դատաւոր գրէ՞ք : Ձեզ ամչցունելու 5
համար կը զրուցեմ . այդպէս ձեր մէջ մէկ ի-
մաստուն մը չի կայ , որ կարող ըլլայ իրաւունքը

6 ընտրել իր եղբօրը մէջ ։ Հապա եղբայր եղ-
բօրը հետ դատի կը մտնայ , ան ալ անհաւատնե-
7 րուն մէջը ։ Բրդարև բոլորովին վատ բան մըն
ալ ան է ձեր մէջը , որ դատաստաններ կան ձեր
մէջը · ինչո՞ւ համաձայնութիւն դուք ըզկանք չէք քա-
շեր , ու ինչո՞ւ մանաւանդ դուք ընդունել չէք մտնար ։
8 Հապա դուք զկանք կրնէք՝ ու կը նեղէք , և ան
9 յէր եղբայրներն ալ ։ Չէ՞ք մի գիտեր , որ ա-
նիրաւները Աստուծոյ արքայութիւնը չեն ժա-
ռանգեր · մի՛ խաբվիք , ո՛չ պոռնիկները՝ ո՛չ կռա-
10 պաշտները՝ ո՛չ շնացողները , ո՛չ իգացեալները՝
ո՛չ արուագէտները՝ ո՛չ գողերը՝ ո՛չ ագահ-
ները՝ ո՛չ գինովցողները՝ ո՛չ բամբասողները՝ ու
ո՛չ յափշտակողները՝ Աստուծոյ թագաւորու-
11 թիւնը չեն ժառանգեր ։ Եւ դուք մէկ քա-
նիներդ 'անանկներ էիք · բայց լուացվեցաք ,
բայց սրբըվեցաք , բայց արդարացաք մեր Տէր
Յիսուս Քրիստոսի անունովը , ու մեր Աստուծոյ
Հոգւովը ։
12 Ամէն բան ինծի օրինաւոր է , բայց չէ՛ թէ ա-
մէն բան օգտակար · ամէն բան ինծի օրինաւոր
է , բայց ես մէկ բանի մը իշխանութեան տակ չե-
13 պիտի ըլլամ ։ Ուրուկները փորին համար է ,
փորն ալ կերակուրին · հապա Աստուած ան ալ՝
անոնք ալ պիտի վերջացունէ ։ Բայց մարմինը
պոռնկութեան չէ՛ , հապա՝ Տիառնը , ու Տէ-
14 րը՝ մարմնին ։ Եւ Աստուած որ Տէրը յարուց՝
ձեզ ալ պիտի յարուցանէ իր կարողութիւ-
15 նովը ։ Չէ՞ք մի գիտեր որ ձեր մարմինները
Քրիստոսի անդամներն են · ուստի Քրիստոսի
անդամները առնենք՝ պոռնիկի անդամներ մի
16 ընենք · քաւ լեցի ։ Չէ՞ք մի գիտեր , թէ ան
որ պոռնիկի կըմտնենայ՝ անոր հետ մէկ մարմին
կըլլայ · Պիտի ըլլան՝ կ՚ըսէ Գէրը՝ երկուքը մէկ
17 մարմին ։ Եւ ան որ Տէրոջը կըմտնիկնայ անոր
18 հետ մէկ հոգի կըլլայ ։ Պոռնկութենէն փա-

խէք · ամէն մեղքը որ մարդ կը գործէ՝ իր մարմինէն դուրս է · բայց ան որ կը պոռնկի՝ իր մարմինին դէմ կը մեղանչէ ։ 19 Չէք մի գիտեր՝ որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգիին որ ձեր մէջն է , որ անիկա Աստուծմէ ունիք · ու դուք ձեր անձին տէրը չէք · 20 ինչու որ սուղ գինով ծախու առնուիցաք · վասն այսորհիկ Աստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջը , որ Աստուծմէ է ։

Կ Ե Ր Ա Կ Ի Ա Ց

Բայց ան բաներն համար որ գուք ինծի գրեցիք , 1 ազէկ է մարդուս՝ որ կնիկան չի մօտենայ ։ Բայց պոռնկութիւնը պատճառաւ համար ամէն 2 մէկը իր կնիկը ունենայ , ու ամէն կնիկ իր էրիկը ունենայ ։ Կնիկանը իր էրիկը տայ 3 պարտքը վճարէ · նոյնպէս կնիկն ալ՝ իր էրկանը ։ Կնոջ որ կնիկը իր մարմինին չի՛ իշխեր , հապա 4 էրիկը · անոնկ ալ էրիկը իր մարմինին չի՛ իշխեր , հապա կնիկը ։ Ա՛ էրկըմէկ մի՛ զրկէք , միայն թէ 5 միաբանութենէն քիչ մը առեն պաշտամունքի հետ ըլլալու համար , ու նորէն իրարու դարձէք · որ Սատանան ձեզ չի փորձէ ձեր անժուժկալութեանը համար։ Ես կըսեցնեմ՝ թոյլ տալով , և չէ՛ թէ 6 հրամայելով ։ Ինչու որ կուզեմ՝ թէ ամէն մարդ 7 ինծի պէս ըլլայ · բայց ամէն մէկը իր պարգեւը ունի Աստուծմէ · մէկը ասանկ՝ ու մէկալը ասանկ ։ Բայց չի կարգադրածներուն ու որբևա- 8 րիներուն կըսեմ · Ազէկ է անոնց՝ թէ որ ինծի պէս կենան ։ Հապա թէ որ չհամբերութիւն 9 չունին՝ թոյլ կարգըվին · ինչու որ ազէկ է կարգըվիլը քան թէ բորբոքիլը ։ Բայց կնիկ ունե- 10 ցողներուն կըպատուիրեմ՝ չէ՛ թէ ես , հապա Տէրը · Իր կնիկը էրկընէն չի զատվի , (բայց 11 թէ որ զատվի նէ՝ առանց էրկան մնայ , կամ՝ նո՛ր էրկանը հետ հաշտվի ,) ու էրիկը իր

12 կնիկը թող չի ձգէ : Ասայ ուրիշներուն ես
կըպատուիրեմ՝ չէ թէ Տէրը . թէ որ մէկ եղ-
բայր մը անհաւատ կնիկ ունենայ , ու անոր
համձնլի ըլլայ իրեն հետ բնակիլը՝ թող չի ձգէ
13 անիկա : Եւ կնիկ մը որ անհաւատ էրիկ ունե-
նայ , ու անոր համձնլի ըլլայ իրեն հետ բնակիլը
14 թող չի ձգէ էրիկը : Ինչու որ անհաւատ է-
րիկը սրբըված է կնիկովը . և անհաւատ կնիկը
սրբըված է էրիկովը . հապա թէ չէ ձեր որդի-
15 քը պիղծ են . բայց հիմայ սուրբ են : Ասայ
թէ որ անհաւատը գատվի՝ թող գատվի . ինչու
որ հարկ մը չի կայ եղբօր կամ քրոջ անանկ բա-
նեորու մէջ . վասն զի Աստուած մեզ խաղաղու-
16 թեան կանչեց : Գուն ի՞նչ գիտես կնիկ՝ գու-
ցէ քու էրիկդ պիտի ապրեցնես . կամ գուն
17 ի՞նչ գիտես էրիկ՝ գուցէ քու կնիկդ պիտի ապ-
րեցնես : Այ՝ միայն թէ ամէն մէկուն ինչպէս որ
Տէրը բաժնեց , ամէն մէկը ինտրո որ Աստուած
կանչեց , անանկ թող երթայ . ու ասանկ ես ա-
մէն եկեղեցիներուն պատուէր կուտամ :
18 Թէ որ թլփատված մէկը կանչվեցաւ , թող
չի ցանկայ անթլփատութիւնի . չի թլփատված-
ներէն մէկը կանչվեցաւ , թող չի թլփատվի :
19 Ինչու որ թլփատութիւնը բան մը չէ , ու անթլ-
փատութիւնը բան մը չէ . հապա Աստուծոյ
պատուիրանքներուն պահպանութիւնը պէտք է :
20 Ասայ ամէն մէկը ինչ կոչումի մէջ որ կանչվե-
21 ցաւ , անոր մէջ թող կենայ : Ծառայ կան-
չվեցար՝ հոգ չըլլայ քեզի . բայց թէ որ կրնաս
22 ազատ ըլլալ , քեզի անանկը աղէկ է : Ինչու
որ ան ծառան որ Տէրոջմով կանչված է Տէ-
րոջը ազատ է անիկա . անանկ ալ ան ազատը որ
23 կանչված է Քրիստոսի ծառան է : Գնաք
սեղ ծախու առնվիլեցաք , մարդիկներուս ծառայ
24 մի՛ ըլլաք : Եղբայրներ ամէն մէկը որ կոչումի մէջ
կանչվեցաւ նէ , թող անոր մէջ կենայ Աս-
տուծոյ առջև :

Ասաց կռսերուն վրայով Տէրոջմէն մեկ հրա- 25
ման մը չունիմ , միայն թէ խրատ կուտամ՝ ինչ-
պէս որ Տէրոջմէն ողորմութիւն գտայ հաւատա-
լիմ ըլլալու : Ես կըսեպեմ որ անանկը աղեկ է : 26
Մանաւանդ ան հիմակուան եղած վտանգին համար
աղեկ է մարդուս որ անանկ ըլլայ : Կապված 27
ես կնկան , մի՛ փնտրեր արձըկվիլ . արձըկված
ես կնիկէ , մի՛ փնտրեր կնիկ : Թէ որ կարգը- 28
վիս՝ չի մեղանչեցիր . և թէ որ կոյսը կարգըվի՝
չի մեղանչեց . բայց անանկներուը մարմնոյ նեղու-
թիւն կունենան . սակայն ես ձեզի կրնայեմ :
Ասաց աս կըսեմ ղեզայրները , որ ասկէ ետև ժա- 29
մանակը կարճըցած է . ալ անոնք որ կնիկ ունին՝
որպէս թէ չունին . և անոնք որ կուլան՝ որպէս 30
թէ չեն լար . ու անոնք որ կրլսրնդան՝ որպէս թէ
չեն խնդար . և անոնք որ ծախու կառնեն՝ որ-
պէս թէ քան մը չունին . և անոնք որ աշխարհս 31
կրվարեն՝ որպէս թէ չի վայելեն անկից . ինչու
որ աս աշխարհիս վայելուելիքները անցած է :
Ասաց ես կուզեմ՝ որ դուք անհոգ ըլլաք . ան- 32
կի ան որ չի կարգըված է Տէրոջը բաները կը-
հոգայ , որ ինչպէս ինքը Տէրոջը հաճելի ըլլայ .
ու անի որ կարգըված է աշխարհիս բաները կը- 33
հոգայ , որ ինտոր իր կնկանը հաճելի ըլլայ :
Եւ ան կարգըված կնիկը ու կոյսը կըտարբեր- 34
ուին միկրնկնիկէ . ինչու որ կոյսը Տէրոջը բա-
ները կըհոգայ , որ ինքը սուրբ ըլլայ հոգւով ու
մարմնով . ու կարգըված կնիկը աշխարհիս բա-
ները կըհոգայ , որ ինչպէս իր էրկանը հաճելի
ըլլայ : Ասաց աս բանը ձեր օգուտին համար 35
կըզըուցեմ՝ չէ՛ թէ ձեր վրայ խըզդրվելու պա-
րան մը կրձգեմ՝ , հապա պարկեշտութեան հա-
մար՝ ու առանց ըզբաղանաց Տէրոջը ծառայելու
համար : Հապա թէ որ մէկը ամէն կրսեպէ իր 36
կոյսին համար՝ որ չափը անցեր է , ու ընէ որ ա-
նանկ պէտք է ըլլալ . ինչ որ կուզէ ընել , ընէ ,

37 մեղք չի՛ գործեր , թող կարգըվի ։ Բայց
ան որ իր սըրտին մէջ հաստատեր է , ու անոր
մէկ վճռագ մըն ալ չի կայ , Ա իր կամքին վրայ
իշխանութիւն ունի · ու անանկ ընտրեց իր սըր-
38 տին մէջ՝ որ իր կոյսը պահէ , աղէկ կընէ ։ Եւ
անոր հաւասր ան որ իր կոյսը կըկարգէ՝ աղէկ կը-
նէ · ու ան որ չի՛ կարգեր , էվելի աղէկ կընէ ։
39 Կնիկը կապված է՛ քանի ժամանակ որ իր էրիկը
ողջ է · Հապա թէ որ իր էրիկը մեռնի՛ ազատ է
կարգըվիլ որուս որ ուզէ , միայն թէ Տէրոջմով ։
40 Բայց իմ խրատիս նայելով էվելըք նըստելի է՛
թէ որ անանկ կենայ · ես ասանկ կըսեպեմ , ու
ալ Աստուծոյ Հոգին իմ մէջս ունիմ ։

ԳԼ. Ը։

1 Բայց կուռ զոհերուն վրայօք՝ գիտենք որ ա-
մէնս ալ գիտութիւն ունինք · գիտութիւնը
2 կըՀպարտացունէ , բայց սէրը կըշինէ ։ Թէ որ
մէկը կըկարծէ թէ բան մը գիտէ , դեռ չի գիտեր՝
3 ինչպես որ պէտք է գիտնալ ։ Հապա ան որ
զ Աստուած կըսիրէ , ինքը անկէց սորված է ։
4 Բայց ան կուռքերուն զոհված կերակուրնէրուն
համար , գիտենք որ ոչինչ են աս կուռքերը աշ-
խարհիս մէջ · ինչու որ մէկէն ի զատ չի կայ
5 ուրիշ Աստուած մը ։ Որ թէպէտ ըլլան ալ
անուններով աստուածներ՝ թէ երկինքը , ու թէ
երկրիս վրայ , (ինչպես որ կան շատ աստուած-
6 ներ , ու շատ տէրեր ·) բայց մեզի մէկ է Աստուածը՝
Հայրը , ուսկից են ամէն բաները , և մենք ալ
անով · ու մէկ Տէր Յիսուս Քրիստոս , որ ա-
նով են ամէն բաները , ու մենք ալ անով ։
7 Բայց ամէնուն քով ճանչցում չի կայ · ոմանք
կուռքերուն վրայով խղճմտանք ունենալով՝
մինչև հիմայ կուռքին նուիրուած զոհվածի պէս ·
և իրենց խղճմտանքը տկարվելուն տարի է կըպղծ-
8 ըվի ։ Սակայն կերակուրը մեզ Աստուծոյ

առջև չի՛ կեցուներ . չէ՛ թէ որ չուտենք՝ կը-
պակսինք , և չէ՛ թէ որ ուտենք՝ կէշնանք ։
Ահա գոյզ կեցիք , որ չըլլայ թէ ատ ձեր իշխա- 9
նութիւնը տկարնալուն գայթակղութիւն ըլլայ ։
Եթէ մէկը քեզ տեսնայ՝ որ ճանաչումի ունիս , 10
կատարնին մէջ սեղան նստած՝ չէ՞ որ անոր
խղճմտանքը որ տկարութեամբ ախտացեր է , նո-
ւրէն կրչատատուի կռահելուն զոհածը ուտելու .
ու ան տկար եղբայրը կըկորսըվի քու ճանաչու- 11
մովդ , որուն համար որ Քրիստոս մեռաւ ։ Եւ 12
ասանկ եղբայրներուն դէմ յանցանք ընելով՝ ու
տկարներուն խղճմտանքը վիրաւորելով , Քրիս-
տոսի դէմ մեղք կըգործէք ։ Ուստի՝ թէ որ 13
կերակուրը կըգայթակղեցունէ իմ եղբայրս , միս
չեմ ուտեր յաւիտեան՝ որ իմ եղբայրս չի գայ-
թակղեցունեմ ։

ԿՈՂ . Ը։

Չէ՞ որ ես ազատ եմ , չէ՞ որ ես առաքեալ 1
եմ , չէ՞ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը իմ
աչքովս տեսայ . չէ՞ որ դուք էք իմ գործս Տէրով-
մով ։ Թէպէտ ուրիշներուն առաքեալ չըլլամ 2
ալ նէ , բայց ձեզի եմ . ինչու որ իմ առաքելու-
թեան կնիքս դուք էք Տէրովմով ։ Իմ պա- 3
տասխանս անոնց որ իս հարցունեն՝ ասիկա է . Մի 4
թէ մենք իշխանութիւն չունինք ուտելու և խմե-
լու ։ Մի թէ մենք իշխանութիւն չունի՞նք քոյ- 5
րեր կնիկներ մեր հետ պտըտցունելու , ինչպէս
որ ուրիշ առաքեալները , ու Տէրոջը եղբայրնե-
րը , ու Կեփասը կընեն ։ Մի թէ ես ու Յառնա- 6
բասը միայն իշխանութիւն չունինք չի գործե-
լու ։ Ո՞վ իբրև զօրաստիպը զինուորութիւն 7
կընէ . ո՞վ այգի կըտնկէ , ու անոր պտուղէն
չուտեր . ո՞վ ոչխարներ կարածէ , ու ոչխար-
ներուն կաթէն չուտեր ։ Մարդկօրէն մի՞ ասիկա 8
կըզրուցեմ ես . կամ չէ՞ որ օրէնքն ալ նոյնը

9 կըզըուջէ : Ա՛ովսէսին օրէնքին մէջ գրված
է , Կալլին մէջի եղին դունչը չըլլայ որ կապես :
Ա՞ր Թէ եղերո՞ւն համար Աստուծոյ հոգն էր .
10 չէ՞ որ մանաւանդ մեզի համար կրսէ . վասն զի
մեզի համար գրվեցաւ . որովհետև ան որ կըսեր-
մանէ յուսով պէտք է սերմանել , և ան որ ցո-
րենը յարդէն կրզատէ՝ պէտք է որ յուսով վա-
11 յելէ : Թէ որ մենք ձեզի հոգևոր բաներըը ցա-
նեցինք նէ , մեծ բա՞ն մըն է՝ Թէ որ ձեզմէ մարմ-
12 նաւոր բաներըը քաղենք : Թէ որ ուրիշներըը ձեր
վրայ իշխանութիւն ունին նէ , չէ՞ որ մենք ալ
ևվելըը . բայց մենք աս իշխանութիւնը չի գոր-
ծածեցինք . հապա՞ ամեն բանի կըհամբերենք ,
որ Քրիստոսի աւետարանին արգելք մը չըլլանք :
13 Չէ՞ք մի գիտեր , որ տաճարին մէջ աշխատողը
ներըը տաճարէն կուտեն . ու անոնք որ սեղանին
պաշտօնեաներն են , ան սեղանէն կըվայելեն ;
14 Նմանկ ալ Տէրը հրաման տըւաւ . անոնք որ
աւետարանը կըքարոզեն՝ աւետարանէն պիտի
15 ապրին : Բայց ես աս բաներուն մէկը չի գոր-
ծածեցի . ոչ ալ ատ բաներըը գրեցի՝ որ ինծի ա-
նանկ ըլլըվի . ալ աղէկ է ինծի ևվելըը որ մեռ-
նիմ , և ոչ Թէ իմ պարծանքս մէկը պարապ սե-
16 պէ : Վ ան զի Թէ որ ես աւետարանը քարո-
զեմ , ինծի մէկ պարծանք մը չի կայ . ինչու որ
հարկ է ինծի . մանաւանդ վա՜յ է ինծի՝ Թէ
17 որ աւետարանը չի քարոզեմ նէ : Թէ որ ա-
նիկա կամաւ ընեմ նէ՝ ինծի վարձք կրլլայ , և Թէ
որ ակամայ՝ ան իմ վրաս յանձնըված տնտեսու-
18 թիւն մըն է : Ուրեմն ի՞նչ վարձք կայ ինծի .
որ՝ քարոզելու ատենս՝ Քրիստոսի աւետարանը
ձրի տամ , որ չըլլայ Թէ աւետարանին մէջ իմ
իշխանութիւնս կարգէ դուրս բանեցուցեմ :
19 Ինչու որ ես ամենէն ազատ էի , ու ամենուն իմ
անձս ծառայութեան մէջ կեցուցի , որ շատերը
20 շահիմ : Հրեաներուն հետ Հրեայի պես եղայ՝

որ Հրէաները շահիմ. օրէնքի տակ եղողնե- 21
րուն հետ՝ իբրեւց պէս օրէնքի տակ եղայ. չէ՛ թէ
որ ես օրէնքի տակը էի, հապա որ օրէնքի տակ
եղողներն ալ շահիմ. օրէնքի տակ չեղողներուն
հետ օրէնքի տակ չեղողի պէս եղայ, (չէ՛ թէ ես
Աստուծմէ օրէնք չունէի; հապա Քրիստոսի օ-
րէնքին տակն էի.) որ ան օրէնք չունեցողներն
ալ շահիմ. տկարներուն հետ տկարի պէս եղայ, 22
որ տկարները շահիմ. ամէնուն հետ ամէն բան
եղայ, որ ըլլայ թէ մէկ քանին ապրեցունեմ:
Ա՛ս ամէնը աւետարանին համար կընեմ, որ անոր 23
կցորդ ըլլամ ես: Չէ՞ք մի գիտեր՝ որ ասպարէ- 24
զին մէջ վազողները վազելով կըվազեն ամէնը,
բայց մէկը կառնէ յաղթութեան վարձքը. ա-
նանկ վազեցէք որ հասնիք: Ամէն ով որ կը- 25
մարտնչի՝ ամէն բանի մէջ չափաւոր կըլլայ. ա-
նոնք՝ եղծանելի պսակը առնելու համար, ու
մենք՝ անեղծանելին: Ուստի ես ալ անանկ կը- 26
վազեմ, չէ՛ թէ ինտոր անստուգութեամբ. ես
անանկ կըկռուիմ, չէ՛ թէ որպէս թէ հովերը ծե-
ծելով. հապա իմ մարմինս կընեղեմ՝ ու կը- 27
հնազանդեցունեմ, որ չըլլայ թէ ես ուրիշնե-
րուն քարոզեցի՝ ինքիրենս անպիտան գտնը-
վիմ:

ԺԱ. ՅԱ:

Ցեմ ուզեր որ չգիտցող ըլլաք եղբայրնե՛ր, որ 1
մեր հայրերը ամէնքն ալ ամպին տակն էին.
ու ամէնքն ալ ծովէն անցան, և ամէնքն ալ 2
Մովսէսով մկրտըվեցան ամպին ու ծովին մէջը.
Ու ամէնքն ալ նոյն հոգևոր կերակուրը կերան. 3
ու ամէնքն ալ նոյն հոգևոր խմելիքը խմեցին.
(ինչու որ կըխմէին ան հոգևոր քարէն որ անոնց 4
հետը կերթար. ու ան քարը Քրիստոս ինքն էր)
բայց չէ՛ թէ անոնցմէ շատերուն հաւնեցաւ 5
Աստուած. ինչու որ անապատին մէջ գետինը

6 ինկած մեռան : Ու ան բաները օրինակով մե-
զի համար կըլլար , որ չար բաներու ցանկացող
7 չըլլանք , ինտոր որ անոնք ցանկացան . Ա՛չ ալ
կռապաշտներ ըլլանք , ինչպէս որ անոնցմէ մէկ
քանին , ինտոր որ գրված է . ժողովուրդը նըս-
տաւ ուտելու ու խմելու , և ելան խաղալու :
8 Եւ պոռնկութիւն չընենք , ինտոր որ անոնցմէ
մէկ քանին պոռնկեցան , ու մէկ օրվան մէջ
9 քսանըչորս հազար հոգի ինկան : Եւ Տէրը չի
փորձենք , ինչպէս անոնցմէ մէկ քանիները փոր-
10 ձեցին՝ ու օձերէն սատկեցան : Եւ տրտունջ
չընենք . ինտոր որ անոնցմէ մէկ քանին տրտունջ
11 ըրին , ու սատակիչէն կորսըվեցան : Բայց ան
ամէնը օրինակով կըպատահէր անոնց . հապա
մեզի՝ որոնց դարերուն վերջը հասաւ , խրատ
12 ըլլալու համար գրվեցաւ : Ուստի ան որ կըսե-
պէ թէ հաստատուն կեցած է , թող զգուշանայ
13 որ չըլլայ թէ խնայ : Ձեր վրայ մարդկային
փորձութենէ չի գատ՝ ուրիշ չէ պատահած .
բայց Աստուած հաւատարիմ է , որ ձեզ փոր-
ձութեան մէջ չի՝ ձգեր ձեր կարողութենէն է-
վել . հապա ան փորձութեանը հետ հնարքն ալ
կընէ , որ կարող ըլլաք համբերել :
14 Ընոր հոմաք իմ՝ սիրելիներս՝ կռապաշտութե-
15 նէն փախէք : Որպէս թէ իմաստուններու հետ կը
խօսիմ . դուք ձեզմէ դատեցէք ինչ որ կըզըուցեմ :
16 Օրհնութեան գաւաթը որ մենք կօրհնենք՝ չէ՞
մի որ Քրիստոսի արիւնին հաղորդութիւնն է .
հացը՝ որ մենք կրկըտրենք՝ չէ՞ մի որ Քրիստոսի
17 մարմինին հաղորդութիւնն է : Ինչու որ մենք
շատերնիս մէկ հաց՝ մէկ մարմին ենք . վասն զի ա-
18 մէնքնիս ալ ան մէկ հացէն կրվայելենք : Նա-
յեցէք մարմնաւոր Իսրայէլը . չէ՞ մի որ ան զոհ-
19 վածները ուտողները սեղանին հաղորդ են : Ու-
րեմն ի՞նչ կսեմ , որ թէ զոհվածը բա՞ն մըն է .
20 կամ թէ կուռքերը բան մըն են : Բայց սա՛ կը-

ան՝ թէ ան բաները որ Հեթանոսները զոհ կը-
նեն դեւերուն , ու չէ թէ Աստուծոյ կըզոհեն .
չեմ ուզեր որ դուք դեւերուն հետ հաղորդու-
թիւն ունենաք . ինչու որ չէք կրնար գաւ-
խել Տէրոջը գաւաթը՝ ու դեւերուն գաւաթը .
չէք կրնար մասնակից ըլլալ Տէրոջը սեղանին ու դեւ- 21
րուն սեղանին : Նախանձեցնե՞նք մի՛ զարմիկնք 22
Տէրը , մի թէ մենք անկէց զօրաւո՞ր ենք : Ա- 23
մէն բան ինծի օրինաւոր է , բայց չէ թէ ամէն
բան օգտակար . ամէն բան ինծի օրինաւոր է ,
բայց չէ թէ ամէն բան շինուածիւն կընէ : Ոչ- 24
ոք որ միայն իր անձինը փնտռէ , հապա
իր ընկերին ըսպէնդ ալ : Ամէն ինչ որ սպան- 25
դանոցին մէջ կը ծախուի կերէք , ու հարցուփորձ
մի՛ ընէք խղճմտանքի համար . ինչու որ երկիրը իր 26
լեցուներովը Տէրոջն է : Թէ որ անհաւատ 27
ներէն մէկը ձեզ կանչելու ըլլայ և ուզէք եր-
թալ , ամէն ինչ բան որ առջեւնիդ դրուի կերէք ,
ու հարցուփորձ մի՛ ընէք խղճմտանքի համար :
Հապա թէ որ մէկը ձեզի ըսէ թէ Այսիկա նո՛ւէր 28
զոհած է , անոր պէնը իրեն համար՝ որ իմացուց ,
ու խղճմտանքի համար մի՛ ուտէք : Ես ակայն խղճ- 29
մտանք կըսեմ՝ ոչ թէ իրենը , հապա ընկե-
րինը : Ինչո՞ւ իմ ազատութիւնս պիտի
դատուի ուրիշին խղճմտանքէն . Թէ որ ես շնոր- 30
քով կըմասնակցիմ , ինչո՞ւ համար պիտի հայ-
հոյուիմ , որուն համար որ կըգոհանամ : Արդ՝ 31
թէ ուտէք թէ խմէք թէ ինչ գործ ալ որ ը-
նէք , ամէն բան Աստուծոյ փառքին համար
ըրէք : Առանց գայթակղութիւն տալու եղէք 32
Հրէաներուն ու Հեթանոսներուն և Աստուծոյ
եկեղեցիին : Ինչպէս որ ես ամէն կերպով ա- 33
մէնուն հաճոյ կըլլամ . չեմ փնտռեր իմ անձիս
օգուտը , հապա շատներուն՝ որ փրկուին :
Ինծի նման եղէք , ինչպէս ես ալ Քրիս- 1
տոսի :

ԳԼ· ԺԱ։

2 Ձեզ կը գովեմ, որ իմ ամէն բաներս կը յիշէք,
ու ապստամբեցաւ կը բռնէք՝ ինծոր որ ես
3 ձեզի աւանդեցի։ Կուզեմ որ դուք գիտնաք,
թէ ամէն մարդուն գլուխը Քրիստոս է. ու
կնկանը գլուխը՝ էրիկ մարդը. և Քրիստոսի
4 գլուխը Աստուած։ Ամէն մարդ երբոր աղօթ-
քի կը կայնի՝ կամ մարգարէութիւն կընէ՝ ու
գլուխը ծածկած կը պահէ, անպատիւ կընէ իր
5 գլուխը։ Եւ ամէն կնիկ երբոր աղօթքի կը կայ-
նի՝ կամ մարգարէութիւն կընէ բաց գլխով, ան-
պատիւ կընէ իր գլուխը. ինչու որ անանկ կրնայ-
6 ըլլ թէ՝ ածիլված է։ Վասն զի թէ որ կնիկը
չի ծածկըվիր նէ՝ թող իր մազերը ածիլէ. հա-
պա թէ որ անմայել է կնկան փոքրըվիլ՝ կամ
7 ածիլվիլ, թող ծածկըվի։ Էրիկ մարդու
պէտքը չէ իր գլուխը ծածկել, ինչու որ Աս-
տուծոյ պատկերը ու փառքն է. բայց կնիկը իր
8 էրկանը փառքն է։ Ինչու որ չէ թէ էրիկ
մարդը կնիկէն է, հապա կնիկը՝ էրիկ մարդէն։
9 Պատճառը որ էրիկ մարդը չի հաստատուեցաւ
կնկան համար, հապա կնիկը՝ էրիկ մարդուն
10 համար։ Ասոր համար պէտք է որ կնիկը շուք
11 ունի իր գլխուն՝ հրեշտակներուն համար։ Բայց
ոչ կնիկը առանց էրիկ մարդու է, ու ոչ էրիկ
12 մարդը առանց կնկան՝ Տէրոջմով։ Վասն զի
ինչպես որ կընիկը էրիկ մարդէն է անանկ ալ
էրիկ մարդը կնիկէն. բայց ամէնը Աստուծ-
13 մէն։ Իւր դուք ձեզմէն իրաւունքը տրուիք. կը
վայլէ կնիկ մարդու գլուխը բաց աղօթքի կայնիլ
14 Աստուծոյ առջև. չէ՞ որ բնութիւնն ալ կըսոր-
ւեցունէ ձեզի. որ էրիկ մարդ մը թէ որ մազով
15 է իրեն անարգանք է. բայց կնիկը թէ որ մա-
զով է իրեն փառք է. ինչու որ մազերը հա-
16 մատար տուր տրված են իրեն։ Սակայն թէ որ

մէկը հակառակող բլլալ կուգէ մենք անանկ
սովորութիւն չունինք, ոչ ալ Աստուծոյ եկե-
ղեցիները:
Ասոյց ան պատուիրելով ձեզ չեմ գովեր. ին- 17
չու որ չէ թէ աղէկին հապա գէշին կերթաք:
Պինդ առաջ երբոր մէկ տեղ կրժողովիլնիք եկեղե- 18
ցիին մէջ, կըլսեմ որ բաժանմունքներ կան ձեր
մէջը. ու քիչ մի ես հաւատացի: Ասոյց՝ ձեր 19
մէջը հերձուածողութիւններ ալ պիտի բլլայ,
որ ձեր մէջէն եղող ընտիրները երևան: Ուստի 20
դուք որ մէկտեղ կրժողովիլնիք՝ Տէրոջը տունը ձե-
զի հաց ուտելու տեղ չէ. Ինչու որ ամէն մէկը 21
առաջ կրվազէ իր ընթրիքը ուտելու. ու մէկը
անօթի կրմնայ, ու մէկալը՝ հարբած: Տուն 22
չունինք մի ուտելու ու խմելու համար. մի թէ
Աստուծոյ եկեղեցիին կանարգէք, և. ամօ-
թով կընէք չքաւորները. ի՞նչ ըսեմ. ձեզ գո-
վե՞մ մի. աս բանին մէջ չեմ գովեր: Ինչու 23
որ ես Տէրոջմէն ընդունեցի ան բանը, որ ձեզի
ալ աւանդեցի՝ թէ Տէր Յիսուսը իր մատնուած
գիշերը հացը առաւ. գոհացաւ, կտրեց ու ըսաւ, 24
Առէ՛ք ու կերէ՛ք. ան է իմ մարմինս՝ որ ձեզի
համար կրբաշխի. ասիկա բրէք իս յիշելու հա-
մար: Ընանկ ալ գաւաթը ընթրիքէն ետև 25
առաւ՝ ու ըսաւ. Ես գաւաթն է նոր ուխտ իմ
արիւնովս. ասիկա՛ բրէք քանի հետ որ խմելու
բլլաք՝ իս յիշելու համար: Վասն անգամ որ ան 26
հացը ուտէք, ու ան գաւաթը խմէք, Տէրոջը մահը
պատմեցէք, մինչև որ ինքը գայ: Ուստի ան որ ան 27
հացը կուտէ կամ Տէրոջը գաւաթը կրխմէ անար-
ժանութեամբ, պարտական պիտի բլլայ Տէրոջը
մարմինին ու արիւնին: Ածող փորձէ մարդ իր 28
անձը՝ ու հետը ան հացին թող ուտէ, և ան
գաւաթէն խըմէ: Վասն զի ան որ անարժա- 29
նութեամբ կուտէ ու կրխմէ, իր անձին դատա-
պարտութիւնը կուտէ՝ ու կրխմէ. Ինչու որ Տէ-

30 րոջը մարմինը չի որոշեր։ Ասոր համար ձեր
մէջը շատ հիւանդներ ու ցաւագարներ կան. և
31 շատերն ալ կան որ մեռած ալ են։ Ինչու որ
եթէ ինքզինքնիս քննելու ըլլայինք՝ չէինք դա-
32 տապարտվեր։ Եւ թէ որ դատվինք՝ Տէրոջ-
մէն կրնրատվինք, որ աշխարհի հետ չի դատա-
33 պարտվինք։ Ուստի եղբայրներ՝ երբոր մէկ
տեղ կրժողվվիք ուտելու, իրարու սպասեցէք։
34 Ասպա թէ որ մէկը անօթի է՝ թող իր տունը
ուտէ, որ չըլլայ թէ դատապարտութեան համար
35 ժողվվիք։ Ուրիշ բաները երբոր գալը ըլ-
լամ՝ անոնք կրպատրիլեմ։

ԳԼ. ԺՈՂ։

1 Ա Հայց հոգևոր պարգևներուն վրայօք չեմ ուզեր
2 եղբայրներ, որ չգիտցող ըլլաք։ Դուք գի-
տէք, որ երբ հեթանոս էիք՝ ինչպէս ան մունճ
3 կուռքերուն կերթայիք ու կուգայիք։ Ուստի
ձեզի կրցուցընեմ, որ Աստուծոյ Հոգիովը խօսո՛ղ ոեւէ Յիսուսը նզովեալ
կանչէ. և Աստուծոյ Հոգիովը խօսո՛ղ ոեւէ Յիսուսը Տէր
4 կանչել, միայն թէ Հոգւով Սրբով։ Եղ-
պէս պարգևները զանազան են, բայց նոյն
5 Հոգին է։ Եղ որ պաշտօնները զանազան են,
6 բայց նոյն Տէրն է։ Եղ որ գործոցներ զանազան են, բայց նոյն Աստուածն է՝ որ կը
7 գործէ ամէնը ամէն բանի մէջ։ Հայց ամէն
մէկուն Հոգւոյն յայտնութիւնը տրված է՝ ամէն
8 մէկ օգուտի համար։ Ա՛հկու մը Հոգւով՝ ո-
գիէն իմաստութեան խօսք տրված է. ուրիշին
գիտութեան խօսք՝ նոյն Հոգիին տրուած չա-
9 փով. մէկալին հաւատք՝ նոյն Հոգիովը. ու-
րիշին բժշկութեան պարգևներ՝ նոյն Հոգիո-
10 վը. ուրիշին՝ հրաշքներու յայտնութիւններ,
ուրիշին՝ մարգարէութիւն. ուրիշին՝ հոգիի
ընարութիւն. ուրիշին՝ զանազան լեզուներ,

ուրիշին՝ լեզուներու թարգմանութիւն ։ Այլ 11
ամ ամէնը մի և նոյն Հոգին կը գործէ, և ամէն
մէկուն կը բաժնէ՝ ինչպէս որ կուզէ ։
Մտածո որ մարմինը մէկ է ու շատ անդամներ 12
ունի, և ամէն ան մարմինին շատ անդամները մէկ
մարմին են. անանկ ալ Քրիստոսը ։ Մենք 13
որ մենք ամէնիս մէկ Հոգիով մէկ մարմին ըլ-
լալու մկրտուեցանք. թէ Հրեաներ, թէ Հե-
թանոսներ, թէ ծառաներ, թէ ազատներ, ա-
մէնքնիս ալ մէկ Հոգին խմեցինք ։ Մենք որ 14
մարմինը մէկ անդամ մը չէ, հապա շատ ։
Թէ որ ոտքը ըսէ, Որովհետև ես ձեռք չեմ՝ ան 15
մարմինէն չեմ, անով ան մարմինէն չէ՞ մի։ Եւ 16
թէ որ ականջը ըսէ, Որովհետև ես աչք չեմ՝
ան մարմինէն չեմ, անով ան մարմինէն չէ՞ մի ։
Թէ որ բոլոր մարմինը աչք ըլլար, ականջը ո՞ւր 17
էր. և թէ որ բոլորը ականջներ ըլլային, ո՞ւր
էին հոտոտելիքը ։ Այլ հիմա Աստուած ան 18
անդամները դրաւ անոնցմէ ամէն մէկը մարմինին
մէջ, ինչպէս որ ինքը ուզեց ։ Հապա թէ 19
որ ամէնը մէկ անդամ ըլլար, մարմինը ո՞ւր էր ։
Այլ հիմայ անդամները շատ են, ու մարմինը՝ 20
մէկ ։ Չի կրնար աչքը ըսել ձեռքին, Թէ 21
Դուն ինծի պէտք չես. և ոչ գլուխը
ոտքերուն կրնէ, Թէ Ինծի պէտք չէք ։ Այլ 22
մարմինին ան անդամները՝ որ շատ տկար կերե-
ւան, աւելի հարկաւոր են. ու մարմինին ան 23
անպատիւները՝ որոնք կը թուին թէ շատ անպատիւ
են, անոնց հմայքը պատիւ կրնենք. ու ատոնով
մեր ամօթներուը շատ աւելի պարկեշտութիւն
ունին ։ Իսկ մեր պարկեշտ անդամներուն բան 24
մը պէտք չէ. հապա Աստուած մարմինը յա-
րեկազմեց, ու ցածին շատ աւելի պատիւ տուաւ.
որ ան մարմինին մէջ երկպառակութիւն չըլլայ, 25
հապա անդամները իրարու վրայ մէկ հոգ ունե-
նան ։ Թէ որ մէկ անդամը նեղութիւն քաշէ, 26

ամէն անդամներըդ կընկղմին անոր հետը. և թէ
որ վառաւորի մէկ անդամը՝ ամէն անդամները
27 կընկղմին անոր հետ: Ասյց դուք Քրիստոսի
մարմինն էք, ու անոր անդամներէն անդամներ:
28 Եւ անոնք որ Աստուած եկեղեցիին մէջը դրաւ՝
առնք են. առաջ՝ առաքեալները, երկրորդ՝
մարգարէները, երրորդ՝ վարդապետները. ետ-
քը՝ հրաշքները, ետքը՝ բժշկութիւններու
պարգեւները, օգնութիւնները, կառավարնե-
րը, լեզուներուն տեսակները, լեզուներուն
29 թարգմանութիւնները: Ամէնքը առաքեա՞լ են
մի. ամէնքը մարգարէ՞ են մի. ամէնքը վար-
դապե՞տ են մի. ամէնքը հրաշագործնե՞ր են մի.
30 ամէնքը բժշկութեան շնորհ ունե՞ն մի. ամէն-
քը լեզուներ կրնա՞ն մի. ամէնքը թարգմա-
նութիւն կրնա՞ն մի:

ԳԼ. ԺԱ.

31 Ասյց դուք նախանձաւոր եղէք ան շնորհքնե-
րուն՝ որ ալ եկեղ ցոյց ձեզի ալ եկեղ:

1 Ճանապարհ մը ցուցընեմ ձեզի: Թէ որ մարդոց
ու հրեշտակներուն լեզուները խօսիմ, և սէր
չունենամ, ես պղինձի պես եղայ՝ որ ձայն կը
հանէ, կամ ծնծղաներուն պէս՝ որ կըզընկըռ-
2 տան: Եւ թէ որ մարգարէութիւն ունենամ,
ու ամէն խորհուրդները հասկընամ՝ և ամէն
գիտութիւն. և թէ որ ունենամ ամէն հաւատ-
քը՝ մինչև լեռները փոխիլընելու, ու սէր չու-
3 նենամ, ոչինչ եմ: Եւ թէ որ իմ ամէն
ստացուածքս աղքատներուն կերցունեմ, ու իմ
մարմինս երելու տամ, և սէր չունենամ, քան
4 չեմ շահիր: Սէրը՝ համբերող է, կըբաղցրա-
նայ. սէրը չի՝ նախանձիր, չի՝ գոռոզնար, չի՝
5 հպարտանար. Չի՝ յանդգնիր, իրենը չի՝ փնտը-
6 ռեր, չի՝ չարանար, գէշ չի՝ խորհիր. Անիրաւու-
թեան վրայ չի՝ խնդար, հապա ճշմարտու-

թեան վրայ կրնդդայ. Ա՛մէն բանի կրդի- 7
մանայ. ամէն բանի կրհաւատայ. բոլորովին
կրյուսայ. ամէն բանի կրհամբերէ: Սէրը 8
բնաւ չի՛կտար. թէ որ մարգարէութիւնները
ըլլան՝ կրխափանին. թէ որ լեզուներ՝ լռե-
կրլլան. թէ որ գիտութիւն՝ կրխափանվի: Ինչ 9
չոր որ շատին քիչը գիտենք՝ ու շատին քիչը կը
մարգարէանանք: Հայց երբոր կատարեալը գայ, 10
աս շատին քիչը պիտի խափանվի: Երբոր տղայ 11
էի՝ տղի պէս կրխօսէի, տղի պէս կրխորհէի, տղի
պէս համարում ունէի. բայց երբոր այր եղայ՝
տղայութեան բաներըը մէկդի դրի: Ա՛նկը հիմայ 12
կրտեսնանք որպես թէ հայելիին մէջը՝ օրինակով,
բայց անատեսը դիմացէ դիմաց. հիմայ շատին քիչ
մը տեղեակ եմ, բայց անատեսը անանկ պիտի
գիտնամ՝ ինչպես որ անիկա ալ իս ճանչցաւ:
Ուստի հիմայ կրմնայ հաւատք՝ յոյս՝ սէր՝ աս 13
իրեքս. ու սոսկայմ պիտի մեծը սէրն է:

ԳԼ. ԺՈՂ:

Սիրոյ ետևէն ՝գացէք, ու հոգևոր պարգևնե- 1
րուն նախանձաւոր եղէք, Բայց էվելըը որ
դուք մարգարէութիւն ընէք: Վասն զի՝ ան 2
որ օտար լեզուով կրխօսի՝ չէ թէ՝ մարդոց հետ
կրխօսի, հապա Աստուծոյ հետ. ինչու որ մէկը
չի կայ որ իմանայ, բայց անիկա հոգիովը խոր-
հուրդներ կրխօսի: Սակայն ան որ կրմարգա- 3
բեանայ՝ մարդիկներուն կրխօսի օգուտ ու մխի-
թարութիւն և քաջալերութիւն պատ: Ա՛ն որ 4
օտար լեզուներով կրխօսի՝ իր անձին օգուտ
կընէ. ու ան որ կրմարգարեանայ՝ եկեղեցիին
օգուտ կընէ: Կուզեմ՝ որ դուք ամէնդ լեզու- 5
ներ խօսիք, Բայց մանաւանդ որ մարգարէութիւն
ընէք. ինչու որ ալ աղէկ է ան՝ որ կրմարգա-
բեանայ, քան թէ անիկա որ լեզուներ կրխօսի,
միայն թէ որ թարգմանելու ըլլայ նէ, որ եկե-
ղեցին ալ օգուտ առնէ:

6 Խայց հիմայ եղբայրներ՝ թէ որ ես ձեզի գամ
լեզուներ խօսելով , ի՞նչ օգուտ կը լսեմ ձեզի՝
թէ որ չի խօսիմ կամ յայտնութիւնով , կամ
գիտութիւնով , կամ մարգարէութիւնով , կամ
7 վարդապետութիւնով ։ Նաեւ՝ ինչպէս որ ան-
շունչ բաները ձայն կուտան , թէ փող և թէ
քնար · որ եթէ ան ձայնին մէկ զանազանու-
մը չընեն նէ , ի՞նչպէս պիտի ճանչցուի փողին
8 չալուելը , կամ քնարին ձայն հանելը ։ Ինչու որ
եթէ փողը խառնուկ ձայնով չալուելու ըլայ ,
9 ո՞վ պիտի պատրաստուի պատերազմի ։ Նմանակ
ալ դուք՝ թէ որ լեզուներով յայտնի չընէք նէ
խօսածը , ինտո՞ր պիտի իմացվի ան խօսքը ·
ինչու որ ալ դուք որպէս թէ օդին խօսած պի-
10 տի ըլլաք ։ Վասն զի այնքան տեսակ ձայներ
կան աշխարհի մէջ , և առանց ձայնի բան մը
11 չի կայ ։ Ուստի թէ որ ես ան ձայնին զօրութիւ-
նը չի գիտնամ նէ՝ ինծի հետ խօսողին ես մէկ
բարբարոս մը պիտի ըլլամ , ու ինծի հետ խօսողն
12 ալ ինծի բարբարոս մը պիտի ըլլայ ։ Նմանկ դուք
ալ , որովհետև հոգւոց պարգեւներու նախանձ-
ձաւոր էք , եկեղեցիին օգուտին համար խնդրեա-
13 ցէք որ առաւելանաք նոյն պարգեւներուն ։ Վասն
համար ան որ օտար լեզուներով կը խօսի՝ աղօթք
14 թող ընէ , որ թարգմանէ ալ ։ Ասկէ որ ես ա-
ղօթք ընեմ օտար լեզուով՝ իմ հոգիս աղօթք
15 կընէ , բայց միտքս անպտուղ է ։ Ուրեմն ի՞նչ
է · Աղօթք ընեմ հոգիով , աղօթք ընեմ միտ-
քովս ալ · սաղմոս երգեմ հոգիով , սաղմոս երգեմ
16 միտքովս ալ ։ Ապա թէ չէ թէ որ դուն
հոգիով օրհնութիւն ընես նէ , անիկա որ տգէտի
տեղ կայներ է՝ ինտո՞ր Ամէն պիտի ըսէ քու գո-
հութիւնդ տալու առենդ · ինչու որ ան քու
17 ըսածդ չի՞մանար ։ Որ ձեզի գուն աղէկ
գոհութիւն կընես , բայց ընկերը չի շահիր ։
18 Աստուծմէ կը գոհանամ , որ ձեր ամէնէն երկար

լեզուներ կը խօսիմ . բայց եկեղեցիին մէջ կու- 19
զեմ հինգ խօսք միտքով խօսիլ , որ ուրիշներն
ալ իւրատեմ , քան թէ շատ խօսքեր օտար լե-
զուով ։

Եղբայրներ՝ միտքով տղաք մի՛ ըլլաք , հապա 20
չարութիւններէն տղաք եղէք , ու միտքով կա-
տարեալ եղէք ։ Որովհետև օրէնքին մէջն ալ 21
գրված է , թէ՝ Օտար լեզուներով՝ ու օտար
պէսներովք ատ ժողովուրդին հետ պիտի խօ-
սիմ՝ , բայց այնպէս ալ չէ պիտի լսեն ինծի .
կըսէ Տէրը ։ Ուրեմն լեզուները նշանի համար 22
են՝ չէ՝ հաւատացեալներուն , հապա անհաւատ-
ներուն . բայց մարգարէութիւնը չէ՝ թէ ան-
հաւատներուն , հապա՝ հաւատացեալներուն ։
Հապա թէ որ բոլոր եկեղեցին մէկտեղ գայ , 23
ու ամէնքն ալ օտար լեզուներով խօսելու ըլլան ,
և հոն մտնան տգէտներ կամ անհաւատներ .
չե՞ն մի ըսեր՝ թէ դուք ի՞նչ կրնաք ։ Հապա թէ որ ամէնքն ալ մարգարէանան , ու 24
հոն մէկ անհաւատ մը կամ տգէտ մը մտնայ՝ ա-
մէնէն ալ կը յանդիմանվի , ու ամէնէն ալ ինքը
կըքննըվի . և անոր սըրտին ծածուկ բանները 25
յայտնի կը ըլլան . ու նոքը երեսի վրայ ինկած՝ Աս-
տուածոյ երկրպագութիւն կընէ , ու կըխոստովա-
նի՝ թէ իրաւցնէ՝ Աստուած ձեր մէջն է ։

Ուստի ալ ի՞նչ պիտի ըլլայ եղբայրներ . երբոր 26
դուք մէկտեղ կը ժողվվիք , ձեզմէ ամէն մէկը
թէ սաղմոս ունենայ , թէ վարդապետութիւն
ունենայ , թէ յայտնութիւն ունենայ , թէ լե-
զուներ ունենայ , թէ թարգմանութիւն ու-
նենայ , ամէնը օգուտի համար թող ըլլայ ։
Եթէ որ մէկը օտար լեզուներ կը խօսի՝ երկու հոգի՝ 27
և թէ չատ ատենի՝ իրեք հատ՝ և ան ալ մէ-
կիկ մէկիկ . ու մէկը թող թարգմանէ ։ Հապա 28
թէ որ թարգմանող չըլլայ՝ եկեղեցիին մէջ լռու
թող կենայ , ինքը իր միտքին մէջ՝ ու Աստուծոյ

29 հետ թող խօսի : Հայց մարգարէները երկուքը կամ իրեքը թող խօսին , ու մնացածները
30 թող քննութիւն ընեն : Հապա թէ որ ան նըստողներէն ուրիշ մէկուն ալ բան յայտնվե-
31 լու ըլլայ՝ առջինը թող լռէ : Ինչու որ կարող էք ամէնքդիդ ալ մէկիկ մէկիկ մարգարէանալ ,
որ ամէնքն ալ սորվին , ու ամէնքն ալ մխիթա-
32 րին : Ա մարգարէներուն հոգիներն ալ
33 մարգարէներուն հնազանդ կըլլան : Ինչու որ Աստուած խռովութեան Հեղինակ չէ , հապա
խաղաղութեան , ինչպես որ սուրբերուն բոլոր
եկեղեցիներուն մէջը :
34 Կիներնիդ ամէն եկեղեցիներու մէջ լուռ կեանան . ինչու որ անոնց հրաման չի կայ խօսելու ,
հապա հնազանդ ըլլալու . ինչպես որ օրէնքն
35 ալ կըսէ : Հապա թէ որ բան մը սորվիլ կուզեն նէ , տունը իրենց էրկանը թող հարցունեն .
որովհետև կնկի մարդու անվայել է եկեղեցւոյ
36 մէջ խօսիլ : Աստուծոյ խօսքը մի թէ ձեզմէ՞ մի
ելաւ , կամ թէ միայն ձեզի՞ մի հասաւ :
37 Հայց թէ որ մէկը կրկարծէ մարգարէ ըլլալ կամ հոգևոր , թող գիտնայ թէ ինչ որ ձեզի
38 գրեցի նէ՝ Տէրոջը պատուիրներն են . բայց թէ
39 որ մէկը տգէտ է , թող տգէտ ըլլայ : Ուստի ղբայրնե՛ր , մարգարէութիւն ընելու նախանձեցէք , ու լեզուներ խօսիլն ալ մի արգիլէք :
40 Եւ ձեր ամէն բանը պարկեշտութեամբ ու կարգաւ թող ըլլայ :

ԳԼ · ԺԵ :

1 Ա ղբայրնե՛ր՝ ձեզի կըգուցեմ իմ աւետարանս , որ ես ձեզի քարոզեցի . որ դուք ալ
ընդունեցիք . ու անոր վրայ հաստատված էք .
2 որ անոր դուք փրկըվեցաք , թէ որ բռնէք նէ ինչ որ քարոզեցի ձեզի . միայն թէ գուցէ պա-
3 րապ տեղը հաւատացիք : Ինչու որ պինտ ա-

ուսՔ ես ձեզի ան աւանդեցի , ան որ ես ալ ընդունեցի՝ որ Քրիստոս մեր մեղքերուն համար մեռաւ դիրքերուն ըստ՝ ինչ պէս , որ թաղուեցաւ , 4
ու յարութիւն առաւ երրորդ օրը՝ դիրքերուն ըստ՝ պէս ։ ու որ երեւցաւ Կեփասին , ու ետ- 5
քը տասներկուքին ։ ետքը հինգ հարիւրէն է- 6
ւելի եղբայրներուն միանգամ երեւցաւ ։ որոնցմէ շատերը մինչև հիմայ կան , և ոմանք ալ նընջեցին ։ Ու ետքը երեւցաւ Յակոբին , ետքը 7
բոլոր առաքեալներուն ։ Ամենէն ետքը որպես 8
թէ մէկ անարգի մը ինծի ալ երեւցաւ ։ Վասն 9
զի ես առաքեալներուն պզտիկն եմ , որ արժա- նի ալ չեմ առաքեալ լսուելու ։ Ինչու որ Քրիս- տոսծոյ եկեղեցին հալածեցի ։ Այլայն թէ Քրիս- 10
տոսծոյ շնորհքն եմ՝ ինչ որ եմ՝ նէ ։ և անոր շնորհքը որ իմ վրաս է , պարապ բան մը չեղաւ , հապա անոնցմէ ամենէն աւելի ես աշխատեցայ ։ և չէ թէ ես , հապա Քրիստոսծոյ շնորհքը՝ որ ինծի հետ էր ։ Ուստի թէ ես և թէ անոնք 11
ասանկ քարոզեցինք , ու դուք ասանկ հաւատացիք ։

Ուրեմն թէ որ Քրիստոս կը քարոզվի՝ որ մե- 12
ռելներէն յարութիւն առած է , ի՞նչպէս ձեզմէ մէկ քանիները կըսեն , թէ Մեռելներուն յարու- 13
թիւն չի՛ կայ ։ Թէ որ մեռելներուն յարու- 14
թիւն չի կայ նէ , ուրեմն Քրիստոս ալ յարու- թիւն չէ՛ եաւեր ։ Եւ թէ որ Քրիստոս յարու- 15
թիւն չէ՛ եաւեր նէ մեր քարոզութիւնը պարապ է , ու ձեր հաւատքն ալ գատարկ է ։ և մենք ալ Քստուծոյ սուտ վկաները գտնըված կըլլանք , որովհետև Քստուծոյ համար վկայութիւն տը- վինք , թէ Յնքը յարուցաւ Քրիստոսը , որ իրաւ չի յարուցաւ անիկա , թէ որ մեռելները յարութիւն չառնեն ։ Ինչու որ մեռելները յարու- 16
թիւն չառնեն նէ , ուրեմն Քրիստոս ալ յարու- թիւն առած չէ՛ ։ Եւ թէ որ Քրիստոս յարու- 17

թիւն առած չէ՛ ձեր հաւատքը պարապ է , ու
18 տակաւին ան մեղքերուն մէջն էք : Ուրեմն
անոնք որ Քրիստոսով նընջեցին , կորսուեցա՛ն
19 մի : Թէ որ միայն աս կեանքիս մէջ Քրիստոսի
յուսացած ենք՝ մենք բոլոր մարդիկներէն ալ
խղճալի ենք :
20 Նայց հիմայ Քրիստոս մեռելներէն յարու-
թիւն առած է՝ նընջեցեալներուն առջի պտուղը :
21 Ընչու որ մարդով եղաւ մահը, ու մարդով ալ
22 մեռելներուն յարութիւնը : Ընչպես որ ադա-
մով ամէնքը կմեռնին , անանկ ալ Քրիստոսով
23 ամէնքը պիտի կենդանի ըլլան : Ամէն մէկը իր
կարգովը . առաջ՝ Քրիստոս , ետքը՝ Քրիստո-
24 սինները իր գալուստին : Ես անկէ ետև
կ՚գայ վախճանը , երբոր Թագաւորութիւնը
պիտի տայ Աստուծոյ ու Հօր ձեռքը . անատեն
որ պիտի խափանէ ամէն իշխանութիւնները ,
25 և ամէն պետութիւնը ու զօրութիւնը : Ընչու
որ անոր պէտք է Թագաւորութիւն ընել , մինչև
որ բոլոր թշնամիները իր ոտքերուն տակը դնէ :
26 Վերջին թշնամին՝ որ պիտի խափանի , մահն է .
27 և Գլխոց կոխ Ամէն բան անոր ոտքերուն տակը
Հնազանդեցուց : Նայց երբոր կըսէ , թէ Ամէն
բան անոր Հնազանդած է , յայտնի է թէ բաց Ի՛
28 անկէ՝ որ ամէնը անոր հնազանդեցուց : Նայց
երբոր ամէնը անոր հնազանդ ըլլայ , անատեն
ինքը Որդին ալ հնազանդի պիտի անոր , որ
իրեն ամէնը հնազանդեցուց . որ Աստուած
29 ըլլայ ամէնը՝ ամէն բանի մէջ : Ապա թէ չէ ,
ի՞նչ պիտի ընեն անոնք՝ որ մեռելներուն համար
կը մկրտուին . թէ որ իրաւցնէ մեռելները յա-
րութիւն չառնեն , ինչո՞ւ ուրեմն անոնց համար
30 կը մկրտուին . ինչո՞ւ համար մենք ալ ներու-
31 թիւն կը քաշենք ամէն ժամ՝ , և միշտ կը մեռնինք .
երդում կընեմ եղբայրներ՝ ձեր պարծանքովը
որ ես ունիմ մեր Տէր Յիսուս Քրիստոսով :

Թէ որ մարդու պատճառաւ Եփեսոսի մէջ գա- 32
ղանները կռիւ մէջ եղած էի , ի՞նչ օգուտ էր
ինծի , թէ որ մեռելները յարութիւն չառնեն .
ուտենք խմենք , ինչու որ վաղը կրնեռնինք ։
Մի՛ խաբվիք · գէշ խօսքերը՝ աղէկ բարքը կա- 33
պականեն ։ Արդարութիւնով արթընցէք , ու 34
մեղք մի՛ գործէք · ինչու որ չէ՛ղէ ոմանք Աստուծոյ
գիտութիւնը չունին · ձեզ ամչցնելու համար
կըզըօւցեմ ։

Հապց պիտի ըսէ մէկը , որ Ինտո՞ր մեռելները 35
յարութիւն կառնեն , կամ թէ ի՞նչ մարմնով
կուգան ։ Անխելք՝ դուն անիկա որ կըցանես , 36
չի՛ կենդանանար՝ թէ որ չի մեռնի ։ Ու ան որ 37
կըցանես , չի՛ թէ ան մարմինը որ պիտի ծնանի՝
կըցանես , հապա մերկ հատ մը՝ թէ ցորեկի եղ-
լայ , և թէ ուրիշ սերմերու ։ Ու Աստուած 38
անոր մարմին կուտայ ինչպես որ կուզէ , և ամէն
մէկ սերմերուն իր մարմինը ։ Ամէն մարմին 39
մէկ մարմին չէ՛ , հապա՝ մարդուն մարմինը ու-
րիշ է , ու անասուններուն մարմինը՝ ուրիշ ·
թռչուններուն մարմինը՝ ուրիշ , և ձուկերուն
մարմինը՝ ուրիշ ։ Երկնաւոր մարմիններ ալ 40
կան , երկրաւոր մարմիններ ալ · բայց երկնաւ-
որներուն փառքը ուրիշ է , ու երկրաւորնե-
րուն փառքը՝ ուրիշ ։ Արեւին փառքը ուրիշ 41
է , ու լուսինին փառքը՝ ուրիշ , և աստղե-
րուն փառքը՝ ուրիշ · ու Էն աստղը Էն աստ-
ղէն էվել է փառքով ։ Նոյնպէս ալ մեռելներուն 42
յարութիւնը · ապականութիւնով կըցանվի , ու
առանց ապականութեան յարութիւն կառնէ ·
անարգութիւնով կըցանվի , ու փառքով յա- 43
րութիւն կառնէ · տկարութիւնով կըցան-
վի , ու զօրութիւնով յարութիւն կառնէ ·
կըցանվի շնչաւոր մարմին , և յարութիւն կառ- 44
նէ հոգեւոր մարմին · Թէ որ շնչաւոր մարմին
կայ նէ՝ հոգեւոր ալ կայ ։ Ինչպես որ գրված 45

է · Ընչի մարդը Ադամ՝ կենդանի չունչ
եղաւ , երկրորդ Ադամը՝ կենդանի ընող հոգի ։
46 Նայց չէ թէ առաջ հոգեւորը , հապա շնա-
47 չաւորը · ու ետքը հոգեւորը ։ Ընչի մարդը ել-
կիրէն է հողեղէն · բայց երկրորդ մարդը
48 Տէրը է՝ երկինքէն ։ Ինչպես հողեղէնը էր , ա-
նանկ ալ մենք հողեղէնքս · ու ինչպես
երկնաւորը , անանկ ալ երկնաւորները ։
49 Եւ ինչպէս հողեղէնին կերպարանքը որ հա-
գեր ենք , երկնաւորին կերպարանքն ալ
50 պիտի հագնինք ։ Նայց աս կըսեմ՝ եղբայր-
ներ , որ մարմին ու արիւն Աստուծոյ թագա-
ւորութիւնը չեն կրնար ժառանգել · ոչ ալ
ապականութիւնը կրժառանգէ անապականու-
51 թիւնը ։ Ասա խորհուրդ մը ձեզի ցուցնեմ՝ ձեզի ·
Ամենքնիս չի պիտի ննջենք , բայց ամենքիս
52 ալ պիտի նորոգվինք , յանկարծակի աչք դոցել
լանալու մէջ՝ վերջին փողին չըլլալ ատենը ·
որովհետև փողը կըհնչվի , ու մեռելները յա-
րութիւն պիտի առնեն առանց ապականու-
53 թեան · և մենք ալ կընորոգվինք ։ Վասն զի
պէտք է որ աս ապականացու մարմինիս անա-
պականութիւն հագնի , ու աս մահկանացուս ան-
54 մահութիւն հագնի ։ Նայց երբոր աս մահկա-
նացուս անմահութիւնը հագնի , և աս ապակա-
նացուս անապականութիւնը հագնի , անատենը
պիտի ըլլայ ան խօսքը որ գրվեցաւ , թէ՝ Մահը
55 յաղթութեան մէջ ընկղմեցաւ ։ Որը է ո՛վ մահ
քու յաղթութիւնդ · ո՛ւր է ո՛վ գերեզման քու
56 կճեղը ։ Մահին կճեղը՝ մեղքն է , ու մեղքին
57 ուժը՝ օրէնքը ։ Նայց գոհութիւն Աստուծոյ ,
որ մեզի յաղթութիւն տըւաւ մեր Տէր Յիսուս
58 Քրիստոսի ձեռքովը ։ Ասոր իմ՝ սիրելի՛ եղ-
բայրներս՝ հաստատ եղէք , անշարժ կեցէք · ա-
մէն ատեն էվելցէք Տէրոջը գործին մէջ · գիտ-
նաք որ ձեր աշխատութիւնը պարապ չէ Տէրոջը
առջև ։

ԳԼ. Ժ.Ձ։

Բայց սուրբերուն համար ողջախոհութեան հաշիւին 1
վրայով , ինծոր որ պատուէր տրուի Վաղա-
տացոց եկեղեցիներուն , դուք ալ անանկ ըրէք ։
Ամէն Միշաբթի օրերը ձեզմէ ամէն մէկերնիդ 2
իր քովը խոզ դիզէ ինչ որ կրնայողի ։ Որ չըլ- 3
լայ թէ երբոր գամ նէ՝ անատնները ըլլայ ժող-
վողքը . Հապա երբոր գամ՝ ով որ դուք ընտրէք
նէ ձեր թուղթերովը , ես անոնք կրնթրկամ՝ ձեր
պարգեւները Երուսաղէմ տանելու ։ Բայց թէ 4
որ ինծի ալ պէտք ըլլայ երթալ , հետս պիտի
երթան ։ Մակայն ես ձեզի պիտի գամ՝ երբոր 5
դէպի Մակեդոնիա անցնելու ըլլամ . Հապա
երբոր Մակեդոնիայի կողմերը պտրտած ըլլամ ,
կարելի՛ է որ Եփէսը ձեր քովը մնամ , կամ ձմե- 6
ռը հոն կընեմ . որ դուք իս խրկէք , ուր որ ես
պիտի երթամ ։ Ինչու որ չեմ ուզեր ձեզ հի- 7
մայ հարևանցի մը տեսնալ . Յոյս ունիմ որ ա-
տեն մը ձեր քովը կենամ , թէ որ Տէրը հրաման
ընէ ։ Մակայն հիմայ ես Եփեսոս պիտի մնամ 8
մինչև Պինտեկոստէ . ինչու որ ինծի մեծ ու 9
հարկաւոր դուռ մը բացվեր է . ու շատ հակա-
ռակորդներ կան ։
Բայց թէ որ Տիմոթէոսը գայ՝ նայեցէք որ ձեր 10
քովը առանց վախի ըլլայ . ինչու որ անոր
գործը կրգործէ , ինչպէս ես ալ ։ Ըլլա- 11
լայ որ մէկը անոր արհամարհէ . ու խաղաղու-
թեամբ անոր ճամբայ դրէք , որ ինծի գայ . ին-
չու որ անոր կրսպասեմ եղբայրներով մէկ
տեղ ։ Բայց Ապողոս եղբօրը վրայ , շատ ա- 12
զէցի անոր՝ որ ձեզի գայ եղբայրներուն հետ
մէկտեղ , ու կամք չեղաւ իրեն որ հիմայ գար .
բայց պիտի գայ երբոր պարապ ըլլայ ։ Արթուն 13
կեցէք . հաւատքի մէջ հաստատ կեցէք , մի՛ր ե-
ղէք , զօրացէք ։ Ձեր ամէն բանը սիրով 14
ըլլայ ։

15 Կարաչնմ ձեզի եղբայրներ · գիտէք Յան-
թանէին ու Փորտունատոսին տունը · որոնք որ
Աքայացոց առաջն պտուղն են · ու անձերնին
16 սուրբերուն սպասաւորութեանը մէջ դրին · որ
դուք ալ հնազանդ ըլլաք անանկներուն , և ա-
մէն մէկուն՝ որ Ջեր հետը մէկտեղ կը գործէ ու
17 կ՚աշխատի : Ուրախացայ ես Յանթանէին ու
Փորտունատոսին ու Աքայիկոսին գալուն հա-
մար · որ ձեր պակսութիւնը անոնք լեցուցին ·
18 ինչու որ հանգիստ պահեցին իմ հոգիս ու ձե-
րը · ուստի անանկները պատուով ճանչցէք
դուք :
19 Ուրև կուտան ձեզի Աստուծոյ եկեղեցիները ·
շատ բարև կուտան ձեզի Տէրոջմով Ակիւղասը՝
ու Պրիսկիլլան՝ իրենց տանը մէջի եկեղեցիովը
20 մէկտեղ : Ուրև կուտան ձեզի ամէն եղբայր-
ները · բարև տուէք մէկզմէկու սուրբ համ-
բուրով :
21 Ես բարևը իմ ձեռքիս Պօղոսին է : Թէ որ
22 մէկը Տէր Յիսուսը չի սիրեր նէ , նզովեալ ըլ-
23 լայ՝ Եռթ մը Տէրը գայ : Ա՛ր Տէր Յիսուս
24 Քրիստոսի շնորհքը ձեր հետը : Ու իմ՝
սէրս ձեր ամէնուն հետը ըլլայ
Քրիստոս Յիսուսով ·
ամէն :

Ես՝ Յաջին Ճոռոգիք սա կոթղնեցայիս փիլիպ-
պէնե գրեցայ՝ Տիմոթէոսին ու փոր-
տունատոսին ու Աքայիկոսին
յետոյ :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱՑԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԱՌ

ԿՈՐՆԹԱՑԻՍ։

ԳԼ. Ա։

Պօղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի՝ Աս- 1
տուծոյ կամքովը, ու Տիմոթէոս մեր եղբայ-
րը· Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղե-
ցիին, Աքայացոց ամէն կողմերը եղող բոլոր
սուրբերովը։ Շնորհք և խաղաղութիւն ձեզի 2
Աստուծմէ մեր Հօրմէն ու Տէր Յիսուս Քրիս-
տոսէն։

Օրհնեալ է Աստուած՝ ու մեր Տէր Յիսուս 3
Քրիստոսի Հայրը, գթութիւններուն Հայրը՝
և ամէն մխիթարութեան Աստուածը. ան որ 4
մեզ կմխիթարէ մեր ամէն նեղութիւններուն
մէջը, որ մենք կարող ըլլանք մխիթարել անոնք՝
որ ամէն նեղութիւններու մէջ են, ան մխիթա-
րութիւնովը որով մենք Աստուծմէ կմխիթար-
վինք։ Ինչու որ ինչպէս Քրիստոսի չարչա- 5

բանքները մեր վրայ շատ եղան, անանկ ալ
Աբրիտոսի ձեռքովը մեր մխիթարութիւնն ալ
6 շատ կըլլայ: Ա ան պիտի որ նեղութիւն քա-
շենք՝ ձեր մխիթարութեանը ու փրկութեանը
համար է, և թէ որ մխիթարվինք՝ ձեր մխիթա-
րութեանը ու փրկութեանը համար է. որ կը
յայտըզվի համբերելով ան չարչարանքներուն՝
7 ան որ մենք ալ կըչարչարվինք. և մեր յոյսը
հաստատուն է ձեզի համար. ինչու որ գիտենք
թէ ինչոր որ չարչարանքներուն հաղորդ ենք
անանկ ալ մխիթարութեանը պիտի ըլլանք:
8 Ինչու որ չեմ՝ ուզեր եղբայրներ՝ որ չգիտցող
ըլլաք դուք մեր նեղութիւնը, որ Ասիայի մէջ
եղաւ. որ մեր կարողութենէն էվել ծանրըցանք,
մինչև որ կեանքերնուս ալ յոյս եղանք:
9 Հապա մահուան վճիռը մենք վրանիս առինք. որ
ինքիզինքնուս չապաւինինք, հապա Աստուծոյ՝
10 որ մեռելները կըյարուցանէ. որ ինքը անանկ մէկ
11 մահուանէն մեզ փրկեց, ու կըփրկէ. ինչու
որ յոյս ունինք՝ թէ տակաւին պիտի փրկէ,
մեզի համար ձեր ըլլած աղօթքին օգնականու-
թիւնովը. որ մեր վրայ եղած պանազան պարգև-
ներուն վրայով՝ շատերէն գոհութիւն տրվի
մեզի համար:
12 Ինչու որ մեր պարծանքը աս է՝ մեր խղճմտան-
քին վկայութիւնը, որ մենք սրբութիւնով ու
Աստուծոյ ճշմարտութիւնովը, և չէ՝ թէ մարմ-
նաւոր իմաստութիւնով մը, հապա Աստուծոյ
շնորհքովը աշխարհի մէջ վարվեցանք, բայց
13 էվելըզ դէպի ձեզի: Որովհետև ուրիշ բան
չենք գրեր ձեզի, հապա ան որ դուք կրկարդաք՝
ու կրձանչնաք. ևս կըյուսամ՝ թէ մինչև վեր-
14 ջը պիտի ձանչնաք. ինչպէս որ շատէն քիչ մը
ձանչցաք մեզ, որ ձեր պարծանքն ենք. ինտոր
որ դուք ալ մերը, մեր Տէր Յիսուս Քրիստոսի
օրը:

Եւ ասոր ապաւինելով՝ կուզէի առաջ ձեզի 15
գալ, որ դուք կրկին շնորհք ընդունիք. և 16
ձեզմէ երթալ դէպ ի Մակեդոնիա. ու նորէն
Մակեդոնիայէն ձեզի գալ, ու ձեզմէ ճամբայ
դրուիլ դէպ ի Հրէաստան։ Ուստի ասոր որ ես 17
մտադրացի՝ նէ՝ թեթեւութիւնո՞ւ մի չարժեցայ.
կամ թէ՝ ան որ ես կը մտադրեմ՝ նէ, մարմնա-
ւորի՞ մը պէս կը մտադրեմ, չէ՞. հապա որ իմ
կողմանէս, այո՝ այո՝ ըլլայ, ու չէն՝ չէ։
Ճշմարիտ է Աստուած, թէ մեր խօսքը ձեզի որ 18
հասաւ՝ այո՛ և ո՛չ չէ։ Ինչու որ Աստուծոյ 19
Որդին Յիսուս Քրիստոսը՝ որ մեզմով՝ ձեզի
քարոզուեցաւ, (ինծիմով և Սիղուանոսով՝ ու Տի-
մոթէոսով,) ան այո ու ո՛չ չեղաւ. հապա իր մէջը
եղաւ այոն. քանզի որչափ Աստուծոյ խոստ- 20
մունքները կան նէ, անոր մէջը այո՛ են. անոր
համար ալ անով Աստուծոյ փառքին մեր ձեռ-
քովը [ըլլայ] Ամէն։ Հայց ան որ մեզ ձեզմով 21
մէկտեղ՝ Քրիստոսով հաստատեց, ու մեզ օ-
ծեց նէ, Աստուած է. որ մեզ կնքեց ալ, 22
և Հոգւոյն Սբ՚ոյ գրաւը մեր սրտին մէջը
տուաւ։ Հայց ես իմ անձիս Աստուած վկայ 23
կրկանչեմ, որ ձեզ խնայելուս համար տակաւին
Կորնթոս չեկայ։ Ըէ թէ որ ձեր հաւատքին 24
վրայ տիրապետենք, հապա գործակից ենք ձեր
շնորհացը. ինչու որ դուք հաւատքով հաստատ-
ւած էք. սակայն ես ասիկա ընտրեցի, որ նորէն
տրտմութիւնով չի գամ ձեզի։ Ինչու որ թէ 2
ես ձեզ տրտմեցունեմ, ալ ո՞վ է որ իս ուրախ
պիտի ընէ, թէ չէ ան՝ որ ինծմէ տրտմեցաւ։
Ու ասիկա գրեցի որ չըլլայ թէ երբոր գամ՝ նէ՝ տրտ- 3
մութիւն մը քաշեմ՝ անոնցմէ, ուսկէց որ ինծի
պէտք է ուրախ ըլլալ. ձեր ամենուն վրայ այս
ունիմ՝ որ իմ ուրախութիւնս ձեր ամենուն է։
Ինչու որ շատ ցաւերէս և սրտիս նեղութիւնէն 4
ես ձեզի գրեցի շատ արցունքով. չէ թէ որ

դուք տրտմիք, հապա որ իմ սէրս գիտնաք՝ որ
ես ունիմ էվելօք ձեր վրայ:
5 Ըսպա թէ որ մէկը տրտմեցուց՝ չէ՛ թէ իս
տրտմեցուց, հապա շատէն քիչը, որ ծանրու-
6 թիւնը ձեր ամէնուն վրայ չի ձգեմ: Երիք
է անանկ մարդուն ան պատիժը, որ շատերէն
պոպծըվեցաւ: Ըսկէ ետև անոր հակառակը՝
7 էվելօք դուք ներեցէք անոր, ու մխիթարեցէք,
որ չըլլայ թէ անանկը աւելի տրտմութենէն ընկղ-
8 մի: Ուստի կաղաչեմ ձեզի, որ անոր վրայ
9 ձեր սէրը հաստատէք. (ասոր համար ալ գրեցի
ձեզի, որ ձեզ փորձեմ՝ թէ ամէն բանի մէջ
10 հնազանդ կըլլաք մի: Ով որ դուք մէկուն
կրներէք, ես ալ կներեմ. ինչու որ եթէ ես ալ
ներեմ, որուն ինչ որ ներեմ նէ՝ ձեզի համար
11 է Քրիստոսի դէմը.) որ չըլլայ թէ ղրկանք
մը կրենք սատանայէն. որովհետև անոր խոր-
հուրդները չգիտցող մը չենք:
12 Բայց երբոր Տրովադա հասայ ես Քրիստոսի
աւետարանը քարոզելու, և ինծի դուռ մը բաց
13 եր Տէրոջմով, իմ հոգիիս հանգիստ չըտրվի.
ինչու որ իմ Տիտոս եղբայրս ես հոն չի գտայ.
հապա անոնցմէ հրաժարելով Մակեդոնիա գա-
ցի:
14 Բայց գոհութիւն Ըստուծոյ որ ամէն բանի մէջ
մեզ հոչակաւոր կընէ Քրիստոս Յիսուսով, ու
գինքը ճանչնալուն հոտը մեզմով յայտնի կընէ
15 ամէն տեղ. ինչու որ մենք Ըստուծոյ առջև
Քրիստոսի անուշ հոտն ենք՝ փրկըվածներուն
16 մէջ և կորսըվածներուն մէջ. ոմանց մահուան
հոտ դէպ՝ ի մահ, և ոմանց կենդանութեան հոտ
դէպ՝ ի կեանս. և ասոր ո՞վ բաւական կըլլայ:
17 Ինչու որ մենք ուրիշներուն պէս չենք, որ Ը-
ստուծոյ խօսքը կըվաճառեն. հապա՝ որպէս թէ
հաւատարմութեամբ, հապա՝ որպէս թէ Ը-
ստուծմէ Ըստուծոյ առջևը՝ Քրիստոսով կըխո-

սինք ։ Աստի կըսկըսինք նորէն անձերնիս ընդ Վ.
ծայել . թէպէտ ուրիշներուն պէս պէտք չըլլար
մեզի յանձնարարութեան նամուղներ ձեզի , կամ՝
ձեզմէ ։ Հապա մեր թուղթերը դուք էք՝ մեր 2
սրտերուն մէջը գրված , ճանչցըված , ու կար-
գացված ամէն մարդիկներէն . յայտնված , 3
որ դուք Քրիստոսի թուղթերն էք մեր սպա-
սաւորութիւնովը . ու գրված՝ չէ թէ մուրով ,
հապա կենդանի Աստուծոյ Հոգիովը ։ չէ թէ քա-
րեղէն տախտակներու վրայ , հապա սրտին մար- 4
մնեղէն տախտակներուն վրայ ։ Այսպէս յոյս մը
ունինք մենք Աստուծոյ վրայ՝ Քրիստոսի ձեւ- 5
քովը . չէ թէ մենք ինքներնիս բաւական ենք
բան մը խորհելու՝ որպէս թէ մեզմէ . հապա մեր
բաւականութիւնը Աստուծմէ է . որ բաւական 6
ալ ըրաւ մեզի՝ նոր կտակարանին պաշտօնեաներ
ընելու՝ չէ թէ գրով , հապա՝ Հոգիով . ինչու
որ գիրը կըսպանէ , բայց Հոգին կապրեցունէ ։
Աստի թէ որ մահուան պաշտօնը գրով փոր- 7
ված քարեղէն տախտակներու վրայ՝ փառքով
եղաւ , որ Իսրայէլի որդիքը չկրնան
ատոմներէն երեսը նայելու՝ անոր երեսին փա-
ռացը համար , որ պիտի խափանվէր . օրքան 8
եվ՞լ ոք Հոգիին պաշտօնը փառքով պէտք է ըլ-
լալ ։ Ինչու որ եթէ դատապարտութեան 9
պաշտօնը փառքով էր , օրքան աւելի արդա-
րութեան պաշտօնը փառքով պէտ՞ է ըլլալ ։
Ա՛ան պ՞ ան որ փառաւոր էր՝ ասմասին փա- 10
ռաւոր չէ , փառքին առաւելութեանը պատճա-
ռովը ։ Ինչու որ եթէ ան որ պիտի խափան- 11
վէր՝ փառքով էր , օրքան աւելի ան որ կրկենայ՝
փառքով պարտի ըլլալ ։ Աստի ասանկ յոյս 12
որ ունինք , չատ համարձակութեամբ վարվինք
հէր խօսքին հէրք . և չէ թէ ինչպես Մովսէսը 13
իր երեսին վրայ ծածկոց կրնգէր , որ Իսրայէլին
որդիքը չի տեսնան ան խափանվելու ին վախ-

14 ձանը : Հապա անոնց միտքը կուրցան . որ
մինչև ասօրուան տանելու ան ծածկոցը ձգված է
Հին կտակարանին կարդացմունքին վրայ , ու չի՛
վերնար , (ինչու որ ՝ Քրիստոսով պիտի խա-
15 փանվի ։) Հապա մինչև այսօր երբոր Մովսէ-
սին գիրքը կկարդան , ան վարագոյրը անոնց
16 սրտին վրայ կեցած է : Սակայն երբոր
Տէրոջը դառնան , անտանելը պիտի վերնայ ան
17 ծածկոցը · վասն զի Տէրը Հոգին Պօղոսին հո-
գին է · ուր որ Տէրոջը Հոգին կայ , անտեղ
18 ազատութիւն կայ : Բայց մենք ամէնիս բաց
երեսով Տէրոջը փառքը որպես թէ հայելիի մէջ
տեսնալով , նոյն պատկերին կրնորոգվինք փառքէն
՚ի փառք , ինչպես Տէրոջը Հոգիէն ։

Գ Ի · Գ ։

1 Ասոր աս պաշտօնը ունինք , ինչպես որ ողոր-
մութիւն գտանք՝ ու չենք ձանձրանար .
2 հապա մեզի կեցանք ամօթալի ծածուկ բա-
ներէն , որ խորամանկութիւնով չի վարվինք ,
և խարդախութիւն չընենք Աստուծոյ խօսքին
մէջ · հապա ճշմարտութիւնը յայտնելով՝ ան-
ձնիս ամէն մարդոց միտքին ընդայնինք Աստու-
3 ծոյ առջևը : Հապա թէ որ մեր աւետարանը
ծածկված ալ է նէ՝ կորսվածներուն մէջը
4 ծածկված է ան , որ աս աշխարհիս աստուածը
ան անհաւատներուն սիրտերը կուրցուց , որ
Քրիստոսի փառաւորեալ աւետարանին լոյսը
անոնց վրայ չի ծագի · որ ինքն է անեղեայի
5 Աստուծոյ պատկերը : Ինչու որ չէ՛ թէ անձնիս
նիս կըքարոզենք , հապա Քրիստոս Յիսուս Տէ-
րը , ու մեզ՝ ձեր ծառաները Քրիստոսի համար :
6 Վասն զի Աստուած է որ հրաման ըրաւ խաւա-
րէն լոյս ծագել · որ ծագեց ալ մեր սրտին մէջ՝
Աստուծոյ փառքին գիտութեան լոյսը տալու
7 Յիսուս Քրիստոսի դիմաց : Բայց մենք աս

գանձը հողէ ամաններու մէջ ունինք , որ ան
զօրութեան չատութիւնը Աստուծմէ ըլլայ , ու
չ՚ ըլլ մեզմէ ։ Ամէն կողմանէ նեղուիր ենք , 8
բայց տկարացած չենք . կարօտեալ ենք , բայց
տարակուսած չենք . հալածուած ենք , բայց ե- 9
րեսէ ձգուած չենք . չարչարուած ենք , բայց
սպաւած չենք . ամէն ատեն Յիսուսի մահը մեր 10
մարմիններուն մէջը կրենք , որ Յիսուսի կեանքն
ալ մեր մարմիններուն մէջը յայտնուի ։
Վ ան զի մենք որ կենդանի ենք՝ Յիսուսի հա- 11
մար միշտ մահուան կըմատնուինք , որ Յիսուսի
կեանքն ալ մեր մահկանացու մարմիններուն
մէջը յայտնի ըլլայ ։ Ուստի մահը մեր մէջը կը 12
զօրանայ , և կեանքը՝ ձեր մէջը ։ Բայց հաւատ- 13
քին նոյն հոգին ունինք , ինչպէս որ գրուած է՝
Հաւատացի , անոր համար ալ խօսեցայ . մենք
ալ կը հաւատանք , անոր համար կը խօսինք ալ .
ասկ գիտնալով՝ թէ ան՝ որ Յիսուսը յարուց , 14
մեզ ալ Յիսուսին հետ պիտի յարուցանէ , ու
դիմացը պիտի կայնեցունէ ձեզմով մէկտեղ . ին- 15
չու որ ամէն բան ձեզի համար է . որ ան առատ
շնորհքը չատերուն գոհութիւն ընելէն էվելնայ
Աստուծոյ փառքին համար ։
Ընոր համար չենք ձանձրանար . բայց թէ- 16
պէտ ասկ մեր դուրսի մարդը կապականի , սակայն
մեր ներսի մարդը օրէ օր կընորոգվի ։ Ինչու 17
որ ասկ մեր թեթեւ նեղութեան ժամանակաւոր
չատութիւնը յաւիտենական առաւելութեամբ մեզ
փառքին մեծութիւնը կըգործէ մեր վրայ ։ Վ ան 18
զի մենք ասկ երևեցած բաներուն չենք նայիր ,
հապա չերևցածներուն . ինչու որ ասկ երևեցած
բաները ժամանակաւոր են , ու չերևցածները՝
յաւիտենական ։ Վ ան զի գիտենք՝ որ թէ մեր ե
ասկ երկրաւոր շինուածքնուս տունը քակվի նէ ,
մէկ շինուած մը ունինք Աստուծմէ ձեռքով չէ
շինված տուն մը , յաւիտենական՝ երկինքի մէջ ։

2 Եւ աս չինաձեւին մէջը կըշատաչենք. որով-
հետեւ երկինքի բնակութիւնը կուզենք հագ-
3 նել. անանկ որ՝ երբոր ան հագնելու ըլլանք
4 նէ, մերկ չի գտնըվինք։ Վասն զի մենք որ
աս չինուածքին տակն ենք՝ կըշատաչենք ծան-
րութիւն քաշելով. ինչու որ չենք ուզեր վրա-
նէրնուս հանել. հապա անոնց վրայ
նէրնուս հագնիլ, որ աս մահկանացութիւնը ընկղմի ան
5 կեանքէն։ Հայց ան որ մեզի յայտնութիւն
կուտայ աս բանին մէջը Աստուած է. որ մեզի
6 տըւաւ հոգիին գրաւը։ Ուստի ապահով ենք
ամէնատեն. և գիտենք՝ թէ երբոր աս մարմի-
նին մէջ ուշանալու որ ըլլանք, Տէրոջմէն օ-
7 տար կըլլանք. (ինչու որ հաւատքով կերթանք
8 մենք, ու չէ թէ կարծիքով.) ուստի կըհամար-
ձակինք՝ և հաճոյք ալ կուզենք աս մարմինէն
9 ելլել, ու Աստուծոյ քով մնանալ։ Ասոր հա-
մար կըյանանք ալ, որ թէ ուշանալու ըլլանք,
և թէ ելլելու ըլլանք, միայն թէ անոր հաճոյ
10 ըլլանք։ Վասն զի մենք ամէնիս ալ Քրիս-
տոսի առեւանին առջեւը պիտի կայնինք, որ ամէն
մէկը ատնէ իր մարմնով՝ ինչ որ առաջուց
գործեց նէ, թէ բարի՛ և թէ չար։
11 Ուստի Տէրոջը վախը գիտնալով՝ մարդոց
միտքը կըշահեցնենք. սակայն մենք Աստու-
ծոյ առջեւը յայտնըվելու ենք. բայց ես կը
յուսամ՝ որ ձեր խղճմտանքին մէջն ալ յայտնի
12 ենք։ Չէ՛ որ իբր թէ նորէն անձերնիս ձեզի
կրնծայենք, հապա պատճառ մը կուտանք ձեզի
մեր վրայով պարծենալու. որ բան մը ունենաք
պատասխանելու անոնց՝ որ աչքի երեսցածովը կը
13 պարծենան, ու չէ՛ թէ սրտով։ Ինչու որ
եթէ խելքէ դուրս բան մը ըրինք նէ՝ ան Աստու-
ծոյ համար է. և թէ որ զգաստ եղանք՝ ան ձեզի
14 համար է։ Վասն զի սէրը Քրիստոսի մեզ
կըստիպէ. աս բանը քննելու. որ թէ մեկը ա-

մէնուն տեղը որ մեռաւ , անանկ է նէ ամէնքն ալ
մեռած էին · և ամէնուն վրայ մեռաւ , որ կեն_ 15
դանի եղողները ալ իրենց անձերնուն կենդանի
չըլլան , հապա անոր՝ որ ինքը անոնց վրայ մե_
ռաւ , ու յարուԹիւն առաւ ։ Այսէհ եռև մենք 16
մէկ մը մարմինով չենք գիտեր · որ ԹէպէՀ գի_
տէինք Քրիստոսը մարմինով , բայց հիմայ՝ ալ
անանկ չենք գիտեր ։ Ասստի ԹէՀ որ մէկը 17
Քրիստոսի մէջ է , անիկա նոր ստեղծուած մըն
է · հինը որ հինը անցաւ , ու հիմայ ամէն բան
նոր եղաւ ։ Ամէն բան Աստուծմէ է · 18
ան որ մեզ իրեն հետ հաշտեցուց Քրիստոսի
ձեռքովը · ու տուաւ մեզի ասաՀելեբութ
հաշտուԹեան պաշտօնը ։ Եւ որով հետև Աստ_ 19
ուած էր , որ Քրիստոսին ձեռքովը աշխարՀս
իրեն հետ հաշտեցուց , և անոնց մեղքերը իրենց
չի սեպեց , ու հաշտուԹեան խօսքը մեր մէջը
դրաւ · ուրեմն Քրիստոսի կողմանէ դեսպա_ 20
նուԹիւն կընենք , իբրև ԹէՀ Աստուած կըլլար ևս
խօսէր մեզմով · կաղաչենք ՅԵսէ Քրիստոսի կող_
մանէ , հաշտուիլեցէք Աստուծոյ հետ ։ Վ ասն 21
զի Աստուած անիկա՝ որ մեղք չէր գիտեր , մեզի
համար մեղաւոր սեպեց · որ մենք անոր ձեռքովը
Աստուծոյ արդարութիւնը եղած ըլլանք ։ ՅԵր.Օ
հետը գործակից ենք , ու կաղաչենք , որ պա_
րապ տեղը Աստուծոյ շնորՀքը չընդունիք
դուք ։ Ասնէ որ Ասնդունելի ժամանակը՝ 2
խօսեր քեզի , կըսէ , և փրկուԹեան օրը օգնու_
Թիւն ըրի քեզի · ահա ընդունելի ժամանակ ,
ահա փրկուԹեան օր ։ ՅԸրլլայ որ գայԹակղու_ 3
Թիւն տաք մէկ բանով մը , որ չէր պաշտօնը
արատաւորի · հապա ամէն բանի մէջ ձեր անձը 4
ընծայեցէք Աստուծոյ սպասաւորներու պէս՝ շատ
համբերուԹիւնով նեղուԹիւններու մէջ , տա_
ռապանքի մէջ , չարչարանքի մէջ , ձեռվելու 5
մէջ , բանտերու մէջ , խռովուԹիւններու մէջ ,

աշխատութիւններու մէջ , հսկումներու մէջ ,
6 ծոմապահութիւններու մէջ , սրբութիւնով ,
պիտութիւնով , երկայնմտութիւնով , անու-
նեղութիւնով , Սուրբ Հոգիով , առանց կեղ-
7 ծաւորութեան սիրով , ճշմարտութեան խօս-
քովը , Աստուծոյ զօրութիւնովը , արդարու-
8 զէնքերովը՝ որ աջ կողմէն ու ձախ կողմէն է՝ փառ-
քով , ու անարգութիւնով , գովութիւնով , և
պարսաւանքով , մոլորցնողներու պէս՝ և
9 ճշմարիտներ , չի ճանչցուվածներու պէս՝ ու
ճանչցուվածներ . մահկանացուներու պէս , և
ահա կենդանի՛ ենք . պատժուվածներու պէս , ու
10 սպանուված չենք . տրտմածներու պէս , ու միշտ
ուրախ ենք . աղքատներու պէս , ու շատերը
կրմեծցունենք . որպես թէ բան մը չունենք , և
11 ամէն բանը ունինք : Մեր բերանները ձեզի
բացուած են Կորընթացիներ , և մեր սիրտերը
12 լայնցած : Դուք միտքէ չէք նեղուիր , հապա ձեր
13 ուներնուն գութերին մէջ կրնեղուիք . ուստի անոր
հատուցումը ընելու համար՝ (իբրև իմ զաւ-
կներս կրսեպեմ ձեզ ,) դուք ալ պէտք է ընդ
լայնցէք :
14 Մի անհաւատներուն հետ լուծի բնկեր մի՛ ըլ-
լաք . ինչու որ ինչ հաղորդութիւն ունի ար-
դարութիւնը անօրէնութեան հետ . կամ թէ
15 ինչ հաւասարութիւն ունի լոյսը խաւարին
հետ . և կամ ի՞նչ միաբանութիւն ունի Քրիս-
տոս բելիարին հետ : Կամ թէ ի՞նչ բաժին
16 ունի հաւատացեալը անհաւատին հետ . կամ թէ
ինչ նմանութիւն ունի Աստուծոյ տաճարը
կռատուններուն հետ . Քանզի դուք կենդա-
նի Աստուծոյ տաճարն էք . ինչպես որ Աստուած
ըսաւ , թէ Անոնց մէջը պիտի բնակիմ , ու ա-
նոնց մէջ պիտի քալեմ , և անոնց Աստուած
պիտի ըլլամ , ու անոնք իմ ժողովուրդս պիտի
17 ըլլան : Ասոր համար ելէք անոնց մէջէն , ու

զատվեցէք, կըսէ Տէրը. և պիղծ բաներու մի՛ մօտիկնաք. ու ես ձեզ պիտի ընդունիմ՝, և ես 18
ձեզի Հայր պիտի ըլլամ՝, ու դուք ինծի տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք՝ կըսէ ամենակալ Տէրը։ Ուստի սիրելիք՝ որովհետև ասոնք խոստմունքը մենք ունինք՝ մեր անձերը մարմինի ու հոգիի ամէն կերպ պղծութիւնէն մաքրենք, սրբութիւն գործելով Աստուծոյ վախովը։

Ընդունեցէք մեզ. ինչու որ մենք մէկու մը 2
վնաս չի տուինք, ու մէկը չի պղտորեցինք, և մէկը չի զրկեցինք։ Չէ՛ թէ ձեզ դատապարտելու 3
համար ասս կըզըսեցեմկոր. որովհետև ես առաջուց ըսեր եմ՝, որ դուք մեր սրտերուն մէջն էք՝ ապրելու ու մեռնելու ձեզի հետ։ Շատ է իմ 4
համարձակութիւնս ձեր վրայ. շատ է իմ պարծանքս ձեզի համար. լեցուն եմ մխիթարութիւնով, էվելցած եմ ուրախութիւնով մեր ամէն նեղութիւններուն մէջը։ Ա՛սան ալ երբոր 5
մենք Մակեդոնիա հասանք՝ մէկ կերպով մը մեր մարմիններուս հանգըստութիւն չեղաւ. հապա ամէն կողմանէ նեղութիւն կըքաշէինք. ինչու որ դուրսէն պատերազմներ կային, ու ներսէն՝ վախեր։ Այց Աստուած՝ որ խոնարհները 6
կըմխիթարէ, մեզ մխիթարեց Տիտոսի գալովը։ Չէ՛ թէ միայն անոր գալովը, հապա ան մխի- 7
թարութիւնովն ալ՝ որով ինքը մխիթարվեր էր ձեր մէջը, երբոր մեզի պատմեց նէ ձեր բաղձանքը, ձեր ողբը, ձեր ինծի համար ունեցած բոլբոջը, այնքան որ էվելըք ուրախ եղայ ես։ Ինչու 8
որ եթէ ձեզ տրտմեցուցի ան թուղթովը նէ չեմ զղջար, (թէպէտ զղջացեր էի.) որ տեսնամ՝ թէ ան թուղթը ձեզ տրտմեցուց թէ և քիչ մը ատեն. Բայց հիմայ ես ուրախ եմ, չէ՛ թէ որ 9
տրտմեցաք, հապա՝ որ ապաշխարութիւնով տրտմեցաք. որովհետև դուք Աստուծոյ ու-

զածին պէս տրամեցաք , անանկ որ մէկ բանի մը
10 մէջ մեզմէ զլկանք չի քաշէք ։ Ինչու որ Աս-
տուծոյ ուզածին պէս եղած տրամութիւնը՝
ապաշխարութիւն մը կը գործէ փրկութեան հա-
մար որ զղջանալու բան չէ · բայց աշխարհի
11 տրտմութիւնը մահ կը պատճառէ ։ Աստի
նայն բանը որ դուք Աստուծոյ ուզածին պէս
տրտմեցաք նէ , ձեր մէջը ջլչափ չանք գոր-
ծեց , կամ չատագոմութիւն , կամ սրդոզ-
կութիւն , կամ վախ , կամ բաղձանք ,
կամ նախանձաւորութիւն , կամ վրէժինդ-
րութիւն · որ ամէն կերպով ինքզինքնիդ
12 ցուցցիք՝ որ ատ բանին մէջ մաքուր էք ։ Ու-
նանկ է նէ՝ ան որ ես ձեզի գրեցի նէ , չէ՛ թէ
անոր համար՝ որ զըկանք մը ըրաւ , և չէ՛ թէ
անոր համար՝ որ զըկանք մը քաշեց , հապա՝ որ
ձեր վրայ մեր ունեցած հոգը յայտնի՛ ըլլայ
13 Աստուծոյ առջևը ։ Աստի ան մեր մխիթարու-
թեանը վրայ մենք մխիթարեցանք · շատ էվելըք
ալ խնդացինք Տիտոսի խընդութեանը համար ·
ինչու որ անոր հոգին ձեր ամէնէն հանգըստու-
14 թիւն գտեր էր ։ Վասն զի ինչ որ ես անոր
առջևը ձեզի համար պարծենցայ նէ՝ ամօթով
չելայ · հապա ինչպես ամէն բան ճշմարիտը խո-
սեցանք ձեզի նէ , անանկ ալ մեր պարծենալը
15 Տիտոսին քովը՝ ճշմարիտ եղաւ ։ ԵՒս անոր
դութը էվելըք է ձեր վրայ · ինչու որ ինքը մեր
միտքը կըբերէր ձեր ամէնուդ հնազանդութիւ-
նը , թէ ինչպես վախով ու դողով անիկա ըն-
16 դուներ էք ։ Աստի ալ ես ուրախ եմ , որ ա-
մէն բանի մէջ ձեր վրայ վստահութիւն
ունիմ ։

Գ. Ը։

Ա՛ղբայրնե՛ր՝ ձեզի ցուցընեմ Աստուծոյ շնորհք- 1
ները , որ Մակեդոնացոց եկեղեցիներուն
տրված է . որ նեղութեան մեծ փորձին մէջը՝ 2
իրենց ուրախութեան առատութիւնը եւ խո-
ր անունց ծայր աղքատութիւնը՝ շատցաւ իրենց
առատաձեռնութեան մեծութեանը . ինչու որ 3
(ես կըվկայեմ՝) իրենց կարողութեանը չափով՝
ու կարողութենէն ալ էվելի , անոնք իրենց 4
կամքովը շատ աղաչանքով կաղաչէին՝ որ մեզի
տան տուրքերը , ու սուրբերուն համար եղած
պաշտօնին մասնակցութիւնը : Ա՛հ թէ որչափ 5
որ մենք կրյուսայինք , հապա իրենց անձերնին
ալ տրվին , առաջ Տէրոջը՝ ու ետքը մեզի Աս-
տուծոյ կամքովը . որ Տիտոսին աղաչեցինք՝ թէ 6
ինչպէս որ անիկա առաջուց սկսեց նէ , անանկ
ալ ձեր մէջը կատարէ ատ շնորհքն ալ : Ինչպ 7
ինչպէս որ ամէն բանի մէջ աւելի էք դուք
հաւատքով՝ ու խօսքով՝ ու գիտութիւնով՝
եւ ամէն ջանքով՝ ու մենէ ձեր վրայ եղած
սիրովը , նայեցէ՛ք որ ատ շնորհքին մէջն ալ
աւելի՛ ըլլաք . (չէ՛ թէ հրամայելով մը կրզուս- 8
ցնեմ՝ հապա ուրիշներուն ջանքին պատճառովը՝
եւ որ փորձեմ ձեր սիրոյն հաւատարմութիւնը .
որովհետեւ դուք գիտէք մեր Տէր Յիսուս Քրիս- 9
տոսի շնորհքը . որ թէպէ ձեզի համար աղքատ
եղաւ՝ ան որ հարուստ էր . որ դուք անոր աղ-
քատանալովը հարուստ ըլլաք . եւ ես քանիս 10
մէջ խրատ մը կուտամ .) որ ան ձեզի շահաւոր
է . դուք որ չէ՛ թէ միայն ընելը , հապա կամե-
նալն ալ առաջուց սկսեցիք անցած տարվընէ
հետէ : Ուստի հիմայ ընէլն ալ կատարեցէք . որ 11
հնարոր յօժարութիւնը կամքին եղաւ նէ՝ ասանկ
ալ ընելը ունեցածներուդ չափովը ըլլայ :
Վ՛ասն զի թէ որ առաջ յօժարութիւնը ըլլայ 12

նէ՛ պակսը ունեցածին չափովը ընդունելի է, ու
13 չէ՛ թէ հունեցածին չափովը։ Քանզի որ չէ՛ թէ
ես ուրիշներուն հանգըստութիւն կուգամ, ու
14 ձեզի նեղութիւն. հապա հաւասարութիւնով՝
հիմակուան ատենս ձեր աւելին անոնց պակսու-
թեանը լեռ եղիայ. որ անոնց աւելին ալ օր
ի՛ օգնականէն ըլլայ ձեր պակսութեանը մէջ, որ
հաւասարութիւն ըլլայ. ինծի որ գըրված է.
15 թէ՝ Ո՛ւն որ շատ առաւ նէ, չէ՛ աւելցուց. ու ան որ
16 քիչ առաւ նէ, չի պակսեցաւ։ Հայց գոհութիւն
Աստուծոյ, որ նոյն չոգը ձեր վրայ Տիտոսին
17 սիրտը դնեց. որ չէ՛ ազաչանքը ընդունեց, և
յօժարութեամբ արտաքսօք ելաւ ձեզի գալու։
18 Ու անոր հետ խրկեցինք ան եղբայրը, որուն
գովաբանքը էր աւետարանելուն մէջն է՛ բոլոր
19 եկեղեցիներուն մէջ. և չէ՛ թէ միայն այսքան,
հապա նաև եկեղեցիներէն ձեռնադրըվելով՝ ճամ-
բորդութեան ընկեր եղաւ մեզի աս տուրքերուն
մէջ, որ մենք կրծառայենք Տէրոջը փառքին
20 համար, ու մեր յօժարութեամբը։ Հայց աս
խղճմտանք կընենքինք, որ չըլլայ թէ մէկը արատ
մը գըտնէ աս հաստատութիւնիս, որուն մենք
21 կրծառայենք։ Որովհետև մենք բարին կըմտմըտ-
անք է՛ թէ միայն Տէրոջը առջևը, հապա
22 մարդոց առջևն ալ։ Եւ անոնց հետ մեր եղ-
բայրը խրկեցինք, որ ինքը շատ բանի մէջ ընտ-
րած ենք մենք, շատ անգամ ժիր գտնըլով.
ու էվելըք ալ հիմայ ջանացող է ան մեծ յոյսովը՝
23 որ ձեր վրայ ունի։ Հայց թէ որ Տիտոսին հա-
մար խօսք մը ըլլայ՝ անիկա ինծի հետ հաւասար
է, և ձեր վըսլովը գործքի ընկերս. և թէ որ
Ղեկտ եղբայրները կ՚հարցունէ՝ անոնք եկեղե-
ցիին առաքեալներն են, ու Քրիստոսի փառքը։
24 Ուստի ձեր սիրոյն և մեր ձեր վրայօքը պարծե-
նալուն փորձը, ատոնց վրայ ցուցըցէ՛ք բոլոր
եկեղեցիներուն դիմացը։ Հայց սուրբերուն

ընելայու ծառայութիւնին վրայով՝ ինծի աւելորդ
է ձեզի գրել։ Ինչու որ գիտեմ ես ձեր յօ- 2
ժարութիւնը . որ ան պարծենցներ եմ ձեզի Հա-
մար Մակեդոնացիներուն մէջը , թէ Աքայեցի-
ները անցած տարվընէ հետէ պատրաստ են.
և ձեր ջերմ նախանձը շատերը յորդորեց ։
Ու ալ եղբայրները խրկեցինք , որ մեր ձեզի հա- 3
մար պարծենալը՝ ատ բանին մէջ պարապ չըլլայ .
Հապա ինչպես որ ըսի , պատրաստ գտնըվիք . որ 4
չըլլայ թէ երբոր Մակեդոնացիները մեզի հետ
գան՝ ու ձեզ անպատրաստ գտնեն , ալ մենք
(որ չըսենք թէ դուք) ամօթով մընանք ատ
պարծանքին մէջը ։ Ուստի՝ Հարկաւոր սեպեցի 5
եղբայրներուն ազաչելու , որ առաջուց ձեզի
գան , ու առաջուց կարգի դնեն ան ձեր առաջուց
խոստացած ընծաներդ պատրաստ ունենալ , ա-
նանկ որ պարգեւի պէս ըլլայ , ու չի՛ թէ ագա-
հութեան պէս ։ Մ ասն պի ան որ խնայելով 6
կը ցանէ՝ խնայելով կը հնձէ . ու ան որ առա-
տաձեռնութեամբ կը ցանէ՝ առատաձեռնութեամբ կը հնձէ ։
Իւրաքանչիւրը ինչպես որ իր սիրտովը կը ժամարի նէ, 7
անանկ թող տայ . չի՛ թէ ակամայ և հարկադրութիւ-
նով . ինչու որ Աստուած ուրախութեամբ տուողը
կը սիրէ ։ Հայց կարող է Աստուած բոլոր 8
շնորհքները ձեզի հասցընել առատ . որ ամէն բանի
մէջ ամէն ատեն բոլոր պէսպէս կարօտներդ առնելով ,
ամէն բարի գործերուն առատանաք . ինչպես որ 9
գրված է . Ցրուեց՝ ու աղքատներուն տուաւ .
անոր արդարութիւնը յաւիտեան կը մնայ ։ Հայց 10
անիկա՝ որ սերմնացողներուն սերմ կը պատրաստէ ,
և հաց՝ կերակուրի համար , ինքը պատրաստէ՝ ու
հասցընէ ձեր սերմանքը , ու ձեր արդարու-
թեան պտուղները հասցընէ . որ ամէն 11
բանի մէջ հարստանաք ամէն կերպ առատա-
ձեռնութեամբ , որ մեր ձեռքովը կրպատճառէ գոհու-
թիւն Աստուծոյ ։ Ինչու որ այս տուրքիս 12

ծառայութիւնը չէ՛ թէ միայն սուրբերուն պակասութիւնը լեցունելու համար է, հապա որ շա-
13 տերէն գոհութիւնը էվելնայ Աստուծոյ. ապ
յէր ծառայութեան փորձովը կըփառաւորեն
զ Աստուած ձեր Քրիստոսի աւետարանը խոստովանելուն հնազանդութեանը համար, և ձեր
առատութեամբ հաղորդութեանը՝ անոնց ու
14 ամենուն. և անոնց աղօթքը ձեզի համար է, որ
կըփափաքին ձեզի Աստուծոյ աւելի շնորհքնե-
15 րուն համար, որ ձեր մէջն է։ Ա՛լ գոհութիւն
Աստուծոյ՝ անոր չպատմըվելու պարգեւներուն
համար։

ԳԼ. Ժ։

1 Բայց ես Պօղոս ալ ձեզի կաղաչեմ Քրիս-
տոսի հեզութիւնովը ու հանդարտութիւ-
նովը, որ ես ձեր դիմացը խեղճի մը պէս եմ ձեր
մէջը. բայց հեռուէն կըհամարձակիմ ձեզի։
2 Կաղաչեմ՝ որ չըլլայ թէ ծօտէն ալ վստահ հա-
մարձակութիւն մը ունենամ. կամ անանկ
սեպվիմ որ ես ալ կըյանդգնիմիկոր մէկ քանի-
ներուն վրայ, անոնք որ մեզմէ անանկ կըկար-
3 ծեն՝ որ մարմնոյ ուղիէն պէս կերթանք։ Քան-
զի թէպէտ մարմնով կըվարվինք, բայց չէ՛ թէ
4 մարմնաւորի պէս զէնք կըբանեցունենք. (ինչու
որ մեր պինդութեան զէնքը մարմնաւոր չէ՛,
հապա Աստուծմէ զօրութիւն առած՝ բերդե-
րը քակելու.) մենք խորհուրդները կըքակենք,
5 և Աստուծոյ գիտութեանը դէմ բոլոր հպար-
տացած բարձր բաները. ու ամէն միտքերը
Քրիստոսի հնազանդութեանը կըծառայեցու-
6 նենք. և պատրաստ ունինք վրէժ առնելը ամէն
անհնազանդութենէ, երբոր ձեր հնազանդու-
7 թիւնը ևս կատարեալ ըլլայ։ Ամէն մէկուն
դուրսի երեւութին կընայիք. թէ որ մէկը
վստահ ըլլայ իր անձին վրայ՝ որ ինքը Քրիս-

տոսիկը է , ասնորէն Թող իր մասցը մէջ խօս-
հի որ ինչպէս անիկա Քրիստոսինը է , անանկ
ալ մենք : Որ Թէ հավիտեան ալ պարծենալու բա- 8
ւական ասմեր իշխանութիւնները համար՝ որ Տէրը
մեզի տուաւ շինելու , ու չէ Թէ քակելու ձեզ ,
բնաւ չեմ ամչնար : Որ անանկ չեն սեպիմ՝ 9
որպես Թէ ես Թուղթերովս ձեզի վախ մը կրձը-
գեմ . (կըսէք , որ ասԹուղթերը ծանր ու զօ- 10
բաւոր են , բայց կը մարմինին երևոյթը տկար է ,
ու խօսքն ալ անարգ .) անանկ մարդը Թող ասի 11
մտմըտայ , որ մենք Էհաուէն ինչպես ենք նէ
Թուղթերուն խօսքովը , մեռէն ալ անանկ ենք
գործքերով : Ինչու որ մենք չենք համարձակիր 12
մեր անձը ումանց հետը կշռադրի դնելու՝ և հաւա-
սարելու , որ իրենց անձերնին ձեղի կընծայեն .
բայց անոնք ինքնիրեննին իրենց անձերնին կը
չափեն , ու իրենք զիրենք կշռադրի դնելով՝ չեն
հասկրնար : Բայց մենք չափ դուրս չենք պար- 13
ծենար . հապա այն կանոնին չափովը , որն որ
չափով բաժնեց մեզի Աստուած՝ մինչև ձեզի
հասնելու : Ձի Թէ որպես Թէ մենք ձեզի հա- 14
սած չենք , ու ինքզինքնիս կերկրնցուննքիկոր .
ինչու որ Քրիստոսի աւետարանը քարոզելով
մինչև ձեզի հասանք մենք : Եւ չէ Թէ չափ 15
դուրս կըպարծենանք ուրիշին աշխատանքովը .
բայց յոյս մը ունինք ձեր հաւատքը կերևցնելուն ,
որ մենք ամ մեր կանոնին չափովը՝ ձեզմով մեծ-
նանք հավիտեան . ձեզմէ անդին գաւառներու 16
աւետարանը քարոզելու , ու չէ Թէ ուրիշին
կանոնովը պատրաստածներուն վրայ պարծենա-
լով : Ինչու որ՝ անիկա որ կըպարծի , Թող 17
Տէրոջմով պարծենայ : Վասն զի չէ Թէ ան- 18
որ իր անձը կընծայէ , անիկա է ընտրվածը .
հապա ան՝ որ Տէրը կընծայէ։

ԳԼ. ԺԲ:

1 Ա՛ւր էր թէ քիչ մը ներէիք իմ անխոհեմու-
թեանս , և իրաւցնէ համբերեցիք ինձի :
2 Զի վասն նախանձու որ ես Աստուծոյ նախանձ-
ամ , ինչու որ ես ձեզ մէկ մարդու մը նշանեցի՝
մաքուր կոյսի մը պէս Քրիստոսի դիմացը չեղ-
3 հանելու : Այլ կը վախնամ՝ չըլլայ թէ
ինչպէս օձը Եւան խաբեց իր խորամանկութիւ-
նովը , ձեր միտքերը ապականին Քրիստոսի
4 վրայ եղած միամտութենէն : Վասն զի թէ
որ մէկը գալու ըլլայ՝ ուրիշ Քրիստոս քարոզէ՝
որ մենք ան չենք քարոզեցինք , կամ ուրիշ Հոգի
ընդունիք որ չընդունեցիք , կամ ուրիշ աւետա-
րան որ ան չէք ընդունած , անանկներուն ա-
5 նեկ կը համբերեիք : Նայց ես ասանկ կրսեպէմ՝
որ մէկ բանով մը պակաս չեմ երևեր առա-
6 քեալներէն : Թէպէտ խօսքով տգէտ ալ եմ
նէ , բայց չէ՛ թէ դիտութիւնով . սակայն ա-
մէն բանի մէջ բոլորովին անձերնիս ձեզի յայտնի
7 ըրինք : Այի թէ վնաս մի գործած եղայ՝ որ
ես անձս խոնարհեցուցի , ան ալ՝ որ դուք
բարձրանաք , ինչու որ Աստուծոյ աւետարանը
8 ձրի՛ քարոզեցի ձեզի : Ուրիշ եկեղեցիները
կողոպտեցի՝ անոնցմէ վարձք առնելով ձեզի ծա-
9 ռայելու համար : Եւ երբոր ձեզի եկայ՝ թէ-
պէտ բան ալ պակսեցաւ , բայց ձեզմէ մէկուն
ձանձրութիւն չի տըվի , ինչու որ իմ պակսու-
թիւնս լեցուցին Մակեդոնացիներէն եկող եղ-
բայրները . և ամէն կերպով ձեզի ծանրութիւն
չի տալով իմ անձս պահեցի՛ , ու պիտի պահեմ
10 ալ : Քանզի Քրիստոսի ճշմարտութիւնը իմ
ներսի դիս կայ , թէ ասոր համար պարծենալը չի խա-
11 փանվի պիտի ինծմէ Աքայեցոց կողմերը : Ին-
չո՞ւ , որպէս թէ չե՞մ սիրեր ձեզ , ան Աստ-
12 ուած գիտէ : Նայց ան որ կընեմ՝ պիտի ընեմ ալ ,

որ կտրեմ անոնց պատճառը՝ որոնք որ պատճառ կըփնտրեն · որ ինչ բանով կրպարծենան նէ, իրենք ալ մեղի պէս գտնըվին : Ինչու որ ա- 13
նանկները սուտ առաքեալներ՝ խաբեբայ բան-
վորներ ըլլալով , Քրիստոսի առաքեալնե-
րուն կերպարանքովը կերևնան : Եւ զարմանք 14
մը չէ · ինչու որ ինքը սատանան ալ լու-
սաւոր հրեշտակի կերպարանքը վրան կառ-
նէ : Ուրեմն մեծ բան մը չէ , որ անոր պաշտօ- 15
նեաներն ալ՝ արդարութեան պաշտօնեանե-
րու նման կերպարանք կառնեն · որոնց վերջը
իրենց գործերուն պէս պիտի ըլլայ : Ծերէն 16
կըսեմ . Ըրլայ որ մեկը իս անխոհեմ սեպէ ·
հապա թէ չէ գոնէ անխոհեմի մը պէս իս ընդու-
նեցէք , որ ես ալ քիչ մը պարծենամ : Եւ ան 17
որ ես կըխօսիմ նէ չէ թէ Տէրոջը խօսքին պէս
կըխօսիմ , հապա որպէս թէ անխոհեմու թիւնով
մը աս պարծենալուն կարգովը : Որովհետև 18
շատերը մարմնոյ կողմանէ կրպարծենան , ես
ալ կրպարծենամ : Ձօժարութիւնով մը կը 19
համբերէք անխելքներուն ձեր իմաստութիւնո-
վը : Ինչու որ կը համբերէք թէ որ մեկը ձեզ 20
խաբէ , թէ որ մեկը յեղ ծառայեցունէ , թէ որ մե-
կը ձեր բանը ուտէ , թէ որ մեկը յեղքե բան մը
առնէ , թէ որ մեկը յեր ձերոյ հպարտանայ , թէ որ
մեկը ձեր երեսին զարնէ : Ամ քամահրանքին կեր- 21
պովը կըսեմ , որպես թէ մենք ակռի մի եղանք :
Ասոյց ինչ բանի որ մեկը կը համարձակի (անխո-
հեմութեամբ կըսեմ) ես ալ կը համարձակիմ :
Եբրայեցի՞ են նէ , ես ալ · Իսրայէլացի՞ են 22
նէ , ես ալ · Աբրահամի զաւակն են նէ , ես ալ ·
Քրիստոսի պաշտօնեաներն են նէ , (յանդգնու- 23
թեամբ) կըսեմ՝ որ ալ էվելօքը ես . թէ որ աշ-
խատանքով՝ էվելօքը , թէ որ ծեծով՝ շատ էվե-
լօքը . թէ որ բանտով՝ անոնցմէ էվելի . թէ որ
մեռցունելու նեղութիւններով՝ շատ անգամ .

24 Երէանելէն հինգ անգամ՝ քառասունէն մէկ մը
25 պակաս ձէձ կերայ. երեք հեղ ձաղկով ծեծ-
վեցայ. մէկ հեղ քարկոծվեցայ. երեք անգամ
նաւաբեկութեան հանդիպեցայ. յորեկ ու գիշեր
ծովին խորունկութեանը մէջը նեղութիւն քաշե-
26 ցի. շատ անգամ ճամբորդութեան մէջ լուլլը-
վեցայ, գետերէն նեղութիւն. աւազակներէն
նեղութիւն. ի՛մ ազգէս նեղութիւն. հեթանոս-
ներէն նեղութիւն. քաղաքի մէջ նեղութիւն.
անապատի մէջ նեղութիւն. ծովի վրայ նեղու-
27 թիւն. սուտ եղբայրներէն նեղութիւն. ջանքի
ու աշխատանքի մէջ. շատ անգամ քնահատու-
թեան մէջ, անօթութեան ու ծարաւութեան
մէջ. շատ անգամ ծոմապահութեան մէջ, ցուր-
28 տի ու մերկութեան մէջ. ձգէ՛ ուրիշ նեղու-
թիւնները. որ ամէն իմիր ոամիկ ժողովուրդը
վրաս կըդիպվէր, և բոլոր եկեղեցիներուն ա-
29 հոգը: Ո՞վ հիւանդ կըլլայ, ու ես չեմ հի-
ւանդ ըլլար. ո՞վ կըպայթակղի, ու ես չեմ է-
30 րիր: Եթէ որ պարծենալ պէտք ըլլայ՝ տկարու-
31 թեան բաներուս վրայ պարծենամ: Աստուած
և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հայրը, ան որ
ինքը յաւիտեան օրհնեալ է, գիտէ որ սուտ
32 չեմ ըսուցեր: Դամասկոսի մէջ Արետ թա-
գաւորին ազգապետը Դամասկացոց քաղաքը պահ
33 դրեր էր՝ իս բռնելու համար. և ես պատուհա-
նին մէջէն սակառով պարիսպէն վար կախվեցայ,
ու անոր ձեռքէն փախայ:

ԳԼ. ԺՀ:

1 Պատի պարծենալ պէտք ըլլայ նէ, թայց շահ
մը չունի. միայն թէ տեսիլքներուն ու Տէրոջը
2 յայտնութիւններուն գամ: Ճանչց մը գի-
տեմ Քրիստոսով տասներչորս տարի առաջ.
նէթէ մարմինով էր՝ չեմ գիտեր, և թէ ոչ ա-
ռանց մարմինի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ.

անանկը յափշտակուեցաւ մինչև երրորդ եր-
կինքը : Ու գիտեմ անանկ մարդ մը. եթէ 3
մարմինով՝ ու թէ առանց մարմինի, չեմ գի-
տեր, Աստուած գիտէ. որ դրախտը յափշտակ- 4
ուեցաւ՝ ու լսեց չպատմուելու խօսքեր, որ մար-
դու արժան չէ խօսել : Անանկին համար 5
պարծենամ ես. բայց իմ անձիս համար չի
պարծենամ, հապա միայն տկարութեանս վրայ:
Ար թէ պարծենալ ալ ուզեմ՝ անխոհեմ չի 6
պիտի ըլլամ. որովհետև ճշտիկը կրսեմ ցեմիկոր.
բայց կըխնայեմ խօսիլս որ չըլլայ թէ մէկը իմ
վրաս էվելի համարում ունենայ, որքան որ իմ
վրաս կրտեսնայ, կամ ինծմէն կը լսէ : Եւ որ չըլ- 7
լայ թէ ես չպարտանամ այնքան աւելի յայտնու-
թիւններուն վրայ, ինծի մարմինի խայծոց մը տըր-
ւեցաւ՝ Սատան հրեշտակ մը իմ նեղելու համար. որ
չըլլայ թէ ես չպարտանամ : Ու ասոր համար ի- 8
րեք հեղ աղաչեցի Տէրոջը, որ մէկ դի՛ ընէ ինծ-
մէն. ու ըսաւ ինծի. Իմ շնորհքերս ձերիք է 9
քեզի. ինչու որ իմ զօրութիւնս տկարութեան
մէջ կրկատարուի ուստի՝ շատ աղեկ է ինծի
տկարութեանս վրայ պարծենալ, որ Քրիստո-
սի զօրութիւնը իմ մէջս բնակի : Ընդոր հա- 10
մար հաճելի եմ ես տկարութեան, նախատին-
քի, տառապանքներուս, հալածանքի, ու Քրիս-
տոսի համար նեղութիւններուն վրայ. ինչու
որ երբոր կրտկարանամ, ան ատենը կրզօրանամ:
Ես անխոհեմ եղայ պարծենալով, որ դուք սիր- 11
պեցիք զս. որ ինծի պէտք էր ձեզմէ վկա-
յութիւն առնել, թէ ես երևելի առաքեալներ-
էն բանով մը պակաս չի գտնըվեցայ. որ թէ-
պէտ ես ոչինչ եմ. բայց առաքեալի նշաններ 12
ձեր մէջ գործըվեցան ամէն համբերութիւնով,
նշաններով, և սքանչելիքներով, ու զօրու-
թիւններով : Ուստի ալ ի՞նչ կայ, որ անով 13
պակաս գտնըվեցաք ուրիշ եկեղեցիներէն.

միայն թէ ան բանով՝ որ ես ձեզի ձանձրութիւն չի տըվի . ներեցէք ինծի այս յանցանքը :

14 Ահա ասիրեք անգամ է՝ որ կըպատրաստըվիմիկոր ձեզի գալու . և ես ձեզի բեռ չեմ ըլլար . ինչու որ ես ձեր ունեցածը չեմ փընտրեր , հապա ձեզ . որովհետև որդիները պարտաւոր չեն հօրերուն համար բան դիզել , հապա հայրերը՝

15 որդոց համար : Ես ես ամենայն յօժարութիւնով ծախք կընեմ , ու ծախք պիտի ընեմ ալ ձեր անձերուն համար . թէպէտ և ձեզ էվելօք սիրելով չէ՞ք սիրվիմ ալ :

16 Սակայն գրեթէ ես ձեզի ձանձրութիւն մը չի տըվի . բայց որովհետև խորագէտ էի , խել-

17 քով ձեզ բռնեցի : Ինծնէք որ ես ձեզի խրկեցի նէ՞ արդեօք անոնցմով ձեզմէ բան մը քաշելի՞

18 մի : Տիտոսին աղաչեցի , ու անոր հետը ան եղբայրը խրկեցի . Տիտոսը ձեր մէկ բանը քաշե՞ց մի , մենք նոյն հոգիով չի գացի՞նք մի , նոյն ճամբով չի պտրտեցա՞նք մի :

19 Նորէն կըկարծէք որ ես կակուղ խօսքերով ձեզի աղերսա՞նք մի կընեմ . Ինստուածոյ առջևը Քրիստոսով կըխօսիմ , որ ամէն բան սիրելե-

20 ներ՝ ձեր օգտին համար է . բայց կըվախնամ՝ որ ըլլայ թէ երբոր գամ նէ , ուզածիս պէս ձեզ չի գտնամ , և ես ալ ձեզի ձեր չուզածին պէս գտնըվիմ . ըլլայ թէ նորէն գո՞նդ ՝ նէր ֆէ-

ջը վիճմունք , նախանձութիւն , բարկացողութիւն , կռիւ , չարախօսութիւն , բանսարկութիւն , հպարտութիւն , ամբարտաւանութիւն ,

21 խռովութիւն : Ըրլայ թէ երբոր նորէն գամ՝ նէ իմ Ինստուածս իս խեղճուկ մը ընէ ձեր քովը . ու սուգ ընեմ ես շատերուն համար՝ որ առաջուց մեղք գործեցին , և չապաշխարեցին իրենց գործած պղծութեան՝ և պոռնկութեան ու գիշութեանը վրայ :

Գ. ՅՈՎ։

Ես իրեք անգամ Է՛ որ ձեզի կուգամիոր . որ 1
երկու ու իրեք վկայեսուն բերնէն կըհաս-
տատվի ամէն խօսքը : Ուրաջ բսերեմ՝ և նո- 2
րէն առաջ կրզուցեմ (ոբպէս ԵՆ երկրորդ ան-
գամ ձեր դիմացը) թէև հէմայ հեռուէն կըգրեմ)
առջի յանցաւորներուն՝ և ուրիշ ամենուն , որ
եթէ նորէն գամ՝ չէ խնայեմ պիտի : Ուր- 3
դեօք նշան մը կուզէք՝ որ Ք՛րիստոս խնծով
ձեզի հետ կրխօսի , ան որ ձեր վրայ զօրացած է ,
ու չէ թէ տկարացած : Որ թէպէտ խնքը 4
խաչվեցաւ մեր տկարութիւնովը , բայց կենդա-
նի է Աստուծոյ զօրութեամբը . մենք ալ թէ-
պէտ կրտկարանանք անոր համար , բայց կենդա-
նի կըլլանք անոր հետ Աստուծոյ զօրութեամբը :
Փորձեցէք ձեր անձը՝ թէ ան հաւատքին մէջն էք 5
մի . քննեցէք անձերնիդ . չէք մի գիտեր խնքը-
զինքիդ , որ Ք՛րիստոս Յիսուս ձեր մէջն է .
միայն թէ անպիտան որ ըլլաք : Բայց կը 6
յուսամ որ գիտէք թէ մենք անպիտան չենք :
Ուստի կրխնդրենք Աստուծմէ որ մէկ վնաս մը 7
ձեզի չընէ . չէ թէ մենք ընտիր երևինք , հապա
որ դուք բարի գործէք , ու մենք թող անպիտան
ըլլանք : Ինչու որ մենք չենք կրնար ճշմար- 8
տութեան դէմ կենալ , հապա վերկացու ենք
ճշմարտութեան : Ուրախ ենք՝ երբոր մենք 9
կրտկարանանք , ու դուք զօրաւոր կըլլաք , և
մենք ալ ատ ձեր հաստատութեանը համար կա-
ղթենք : Ասոր համար աս կրգրեմ ձեզի չե- 10
ռուէն , որ ըլլայ թէ երբոր գամ՝ չէ ստիպու-
թեամբ վարվիմ իշխանու թիւնովս , որ Տէրը
խնծի տուաւ շինելու՝ ու չէ թէ քակելու հա-
մար :

Վերջապէս եղբայրներ՝ ուրախ եղէք , հաստատ 11
կեցէք , միխիթարվեցէք , միտքերնիդ եղէք , խա-

պաղութիւն ըրէք. ու խաղաղութեան և սիրոյ
12 Աստուածը ձեր հետը ըլլայ: Նաև տըվէք
մէկզմէկու սըրբութեան համբուրով. բարև կը-
13 նեն ձեզի ամէն սուրբերը: Մեր Տէր Յիսուս
Քրիստոսի շնորհքը՝ և Աստուծոյ սէրը՝ ու
Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը
ձեր ամէնուն հետը.
ամէն:

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԱԼ

ԹՈՒՂԹԸ ԱՒ ԳԱՂԱՏԱՑՈՑ

ԳԼՈՒԽ Ա։

Պօղոս՝ առաքեալ Եղեռն չէ՛ թէ մարդիկներէն, 1
ու չէ՛ թէ մարդու ձեռքով. հապա Յիսուս
Քրիստոսի ձեռքովը, և Տէր Աստուծոյ՝ որ յա-
րուց զանիկա մեռելներէն. և բոլոր եղ- 2
բայրները որ իմ հետս են՝ Գաղատացոց
եկեղեցիներուդ։ Շնորհքը ձեր հետը ըլ- 3
լայ, ու խաղաղութիւնը Տէր Աստուծմէն՝
ու մեր Տէր Յիսուս Քրիստոսէն. ան որ իր 4
անձը տուաւ մեր մեղքին համար, որ մեզ փըր-
կէ ասչար աշխարհէն՝ Աստուծոյ ու մեր Հօրը
կամքին պէս. որուն փառք յաւիտեանս յաւի- 5
տենից. ամէն։

Կըզարմանամ՝ որ ատանկ շուտով մը ուրիշ 6
աւետարանի կըփոխվիքկոր անկէց՝ որ ինքը ձեզ
Քրիստոսէ շնորհացը կանչեց. որ չի կայ ու- 7
րիշ. միայն թէ ըլլան ոմանք որ ձեզ խռովե-
ցունեն, ու ուզեն Քրիստոսի աւետարանը խան-
գարել։ Հայց թէ որ մենք՝ կամ երկինքէն 8

հրեշտակ մը մեր քարոզածէն աւելի՝ աւետարանը
քարոզելու ըլլայ նէ ձեզի, նզովեա՛լ ըլլայ:
9 Ինչպէս որ առաջ ըսինք, հիմայ ալ նորէն կը
զըուցեմ. Թէ որ մէկը ձեր առածէն աւելի՝ աւե-
տարանը քարոզելու ըլլայ նէ ձեզի, նզովեա՛լ
10 ըլլայ: Հիմայ մարդիկներո՞ւն հաճելի ըլլա՞մ՝
թէ Աստուծոյ. կամ մարդիկներո՞ւն հաճելի ըլ-
լալ փընտրեմ. Թէ որ ես տակաւին մարդոց հա-
ճելի ըլլայի, ալ Քրիստոսի ծառայ չէի ըլլար:
11 Կը ցուցընեմ ձեզի եղբայրնե՛ր ան աւետարա-
նը՝ որ ինծմէ քարոզուեցաւ, Թէ ան մարդու
12 կերպով չէ՛. որովհետեւ ես ալ մարդէ մը չառի,
եւ մէկէ՛ն ալ չսորվեցայ. հապա Յիսուս
13 Քրիստոսի յայտնութենէն: Որովհետեւ լսած
էք դուք իմ վարքս՝ որ առաջուց Հրէութեան
մէջն էր, ինտո՛ր չափէ դուրս Աստուծոյ եկեղեցին
14 կը հալածէի՝ ու կը կործանէի անիկա: Եւ Հրէու-
թեան մէջը ես յառաջադէմ էի՝ իմ շատ հասա-
կակիցներէս էվել, որոնք որ իմ ազգիս մէջն էին.
խիստ էվելօք նախանձաւոր էի իմ հայրենի աւան-
15 դութիւններուս: Հայց երբոր Աստուած ուզեց՝
(ո՛վ որոշեց զիս իմ մօրս փորէն, եւ իր շնորհքովը
16 ի՛ կանչեց,) ինծմով իր Որդին յայտնի ընել,
որ անիկա ես Հեթանոսներուն մէջ քարոզեմ.
մէկէն՝ ի մէկ մարմինի ու արիւնի բան մը չխմա-
17 ցուցի. ո՛չ ալ Երուսաղէմ ելայ՝ ինծմէ առաջ
եղող առաքեալներուն քովը. հապա Արաբիա
18 գացի, ու նորէն Դամասկոս դարձայ: Ետքը
երեք տարիէն ետեւ Երուսաղէմ ելայ Պետրոսը
տեսնալու. և տասնըհինգ օր անոր քովը կեցայ:
19 Ուրիշ մէկը առաքեալներէն չի տեսայ, միայն
20 Յակոբոս՝ Տէրոջը եղբայրը: Հայց աս որ
կը գրեմ նէ ձեզի՝ ահա Աստուծոյ առջեւը, որ
21 սուտ չեմ զըուցեր: Ընկէ ետքը եկայ Սորի-
22 ներուն ու Կիլիկեցիներուն կողմերը: Եւ զիս
դէմ առ դէմ չէին ճանչնար ան եկեղեցիները՝

որ թլփատուածներէն էին՝ Պրիսկիոսով ։ Ա՛ի- 23
այն թէ անոնք լսած էին թէ , Ան որ ատենօք
մեզ կը հալածէր , հիմայ ինքը ան հաւատքը
կը քարոզէր՝ որ ատեն մը կը խախտէր ։ ու ինծ- 24
մով Աստուած կը փառաւորէին ։ Եւ երբ տես-
նը՛ջ տարիէն եւս՝ նորէն Երուսաղէմ գայ
Հառնաբասին հետ , Տիտոսն ալ հետս առնե-
լով ։ Ու եղայ յայտնութեամբ , եւ իմացուցի 2
անոնց աւետարանը՝ որ ես Հեթանոսներուն մէջը
կը քարոզէի , (Բայց առանձին՝ անոնց որ երեւելի-
ներ էին ,) որ չըլլայ թէ պարապ տեղը վազած եմ՝
կամ վազած ըլլամ : Հայց չէ՛ թէ Տիտոսն ալ՝ որ 3
ինծի հետ էր , Հեթանոսներէն ըլլալով պար-
տաւորեցաւ թլփատուիլ ։ Հապա ան նէրս սկզբը- 4
մով սուտ եղբայրներուն համար՝ որոնք որ սկզբը-
մէն ներս մտան մեր Պրիսկոս Յիսուսով ունե-
ցած ազատութիւնը տեսնելու համար ։ որ մեզ
ծառայացունեն ։ Որ անոնց մէկ ժամուն մըն ալ 5
մտիկ չըրինք հնազանդելու , որ աւետարանին
ճշմարտութիւնը հաստատուի ձեր մէջը ։ Հայց 6
անոնք որ կրկարծըվէին բան մը ըլլալ , որոնք որ
էին նէ՝ ան իմ հոգս չէ՛ . ինչու որ Աստուած
մարդոց երես չի՛ նայիր ։ վասն զի անոնք կար-
ծրվածները բան մը չեմացուցին ինծի ։ Հապա 7
անոր հակառակը՝ երբոր տեսան որ անթլփատ-
ներուն աւետարանը ինծի յանձնրված է , ինչ-
պես Պետրոսին ալ թլփատուածներուն ։ (վասն 8
զի ան որ Պետրոսին յաջողեց թլփատուածնե-
րուն առաքելութիւն ընելու , ինծի ալ յա-
ջողեց Հեթանոսներուն ։) երբոր ինծի արը- 9
ված շնորհքները գիտցան նէ , Յակոբոսը ու
Կեփասը և Յովհաննէսը՝ որոնք որ սիւներ սեպ-
ուած էին , հաւանութեան ձեռք տրվին ինծի ու
Հառնաբասին , որ մենք Հեթանոսներուն մէջը
երթանք , ու անոնք՝ թլփատուածներուն ։ միայն 10
թէ յիշեցինք որ աղքատները յիշենք , որ ես ալ

11 յօժարութիւն ունէի ան բանը ընելու : Բայց
երբոր Կեփասը Անտիոք եկաւ նէ՝ ես անոր ե-
րեսին դէմ՝ կեցայ · որովհետեւ ինքը իբր թէ մե-
12 ղադրվելու էր : Ինչու որ դեռ Յակոբին քո-
վէն մէկ քանին չեկած , ինքը Հեթանոսներուն
հետը անխտրաբար կուտէր · բայց երբոր եկան՝
կըպատվէր , ու ինքըզինքը մէկդի՛ կըքաշէր ,
վախնալով անոնցմէ՝ որ թլփատվածներէն էին :
13 Եւ անոր հետ կեղծաւորեցան մէկալ Հրէաներն
ալ , մինչեւ որ Բառնաբասն ալ անոնց կեղծա-
14 ւորութեանը խոնարհեցաւ : Բայց ես երբոր
տեսայ՝ որ աւետարանին ճշմարտութեանը մէջ
չիտակ չեն երթարկոր , ամէնուն առջին Կեփա-
սին ըսուցեցի , Եթէ դուն որ Հրէայ ես , Հե-
թանոսի պէս՝ ու չէ թէ Հրէայի պէս կըվարվիս ,
ինչպէս Հեթանոսներուն կըստիպես Հրէայի
15 պէս ըլլալ : Ինչու որ մենք բուն Հրէայ ենք ,
16 և չէ՛ թէ Հեթանոսներէն մեղաւորներ : Ա-
գիտենք՝ որ մարդ օրէնքին գործքերէն չի՛ կրնար
արդարանալ , միայն թէ Յիսուս Քրիստոսի
հաւատքէն . մենք ալ Յիսուս Քրիստոսի հա-
ւատացինք՝ որ արդարանանք Քրիստոսի հա-
ւատքէն , և չէ՛ թէ օրէնքին գործքերէն . որով-
հետեւ օրէնքին գործքերէն մէկ մարմին մը չի
17 պիտի արդարանայ : Հապա թէ որ երբ խնդ-
րելու ըլլանք Քրիստոսով արդարանալ , ալ
մեղաւոր գտնվինք . Քրիստոս անանկ է նէ
18 մեղքի պաշտօնեայ մի եղաւ . քաւ ըլլայ : Ինչու
որ թէ ես իմ քակած բանս նորէն շինելու ըլլամ
նէ , ուրեմն ես ինքիրմէս իմ անձս յանցանաւոր
19 կըցուցընեմ : Ինչու որ օրէնքովը մեռայ ես
օրէնքին , որ Աստուծոյ ապրիմ՝ ու Քրիստոսի
20 հետ խաչը ելլամ : Ու ալ ասկէետեւ կենդանի
եմ՝ , չէ՛ թէ ես՝ հապա Քրիստոս կենդանի է իմ
մէջս . Բայց ես որ հիմայ մարմինովս կապրիմ
նէ՝ Աստուծոյ Որդուն հաւատքովը կապրիմկոր ,

ան որ իս սիրեց, ու անձը ինծի համար մատնեց։
Եւ ես Աստուծոյ շնորհքները չեմ անարգեր. 21
ինչու որ եթէ արդարութիւնը օրէնքէն էր նէ,
ուրեմն Քրիստոս պարապ տեղը մեռաւ։

Գ.

Ով անմիտ Գաղատացիներ՝ ո՞վ ձեզ նա- 1
խանձեցուց ճշմարտութեանը չհնազան-
դիլ. որ գրեթէ ձեր աչքին առջեւը Յիսուս
Քրիստոսը խաչը եղած յայտնապէս գրվեցաւ։
Այն թէ աս կուզեմ ձեզմէ սորվիլ. Օրէն- 2
քի՞ն գործքերովը գուք Հոգին առիք՝ թէ հա-
ւատքին լսելովը։ Այնչափ անխելք էք. Հո- 3
գիով սկսեցիք, ու հիմայ մարմինով կվերջա-
նաք։ Ու այնչափ դիպուածներ պարա՞պ տեղը 4
ձեր վրայէն անցան, թէ որ պարապ ըլլայ ալ։
Ուստի ան որ ձեզի Հոգին կարշելեց, և ձեր մէջը 5
զօրութիւններ գործեց նէ, օրէնքին գործքովն
էր՝ թէ հաւատքին լսելովը։ Ինչպէս որ Աբրա- 6
համը Աստուծոյ հաւատաց՝ ու իրեն արդարու-
թիւն սեպվեցաւ։ Ա՛ս գիտցէք որ՝ անոնք որ 7
հաւատքէն են նէ՝ անոնք են Աբրահամի որդիքը։
Գիրքը՝ առաջուց գիտնալով թէ Աստուած Հե- 8
թանոսները հաւատքով կարդարացունէ, առա-
ջուց խօսք տուաւ Աբրահամին, թէ՝ Քեզմով
բոլոր ազգերը պիտի օրհնվին։ Ուստի ա- 9
նոնք որ հաւատքէն են նէ՝ կօրհնվին հա-
ւատացող Աբրահամին հետ։ Վասն զի ան- 10
ոնք որ օրէնքին գործքերէն են՝ անէծքի տակ
են. որովհետեւ գրված է թէ՝ Անիծեալ ըլլայ
ամէն մարդ՝ որ օրէնքին գիրքը գրվածներուն
ամէնուն մէջ չի՛ կենար բոլորը կատարելու։
Ասոր՝ որ օրէնքովը մէկը չի՛ կրնար արդարանալ 11
Աստուծոյ առջեւը, ան յայտնի է. ինչու որ
Վերջը կրսե թէ՝ Արդարը հաւատքէն պիտի ապ-
րի։ Հայց օրէնքը հաւատքէն չէ. հապա՝ ան 12

որ կըկատարէ ան բաները՝ անոնցմով պիտի
13 ապրի։ Քրիստոս մեզ ծախու առաւ օրէնքին
անէծքէն՝ մեզի համար անէծք ըլլալով· (ինչու
որ գրված է թէ՝ Անիծեալ է ան ամէնը որ փայ-
14 տէն կըկախվի,) որ Աբրահամին օրհնութիւնը
Յեթանոսներուն վրայ ըլլայ Քրիստոս Յիսուսով· որ մենք ալ Հոգւոյն Սրբոյ խոստ-
15 մունքը առնենք հաւատքով։ Ա՛րդու սո-
վորութեան պէս կըզրուցեմ եղբայրներ, որ
մարդու մը հաստատած կտակը ևս մէկը չի՛
կրնար անարգել, և ուրիշ հրաման մըն ալ ա-
16 նոր վրայ չի՛ կրնար դնել։ Հայց խոստմունք-
ները Աբրահամին ու անոր զաւկին եղան· ու
չըսաւ թէ Զաւակներուն որպէս թէ շատե-
րուն, հապա՝ որպէս թէ մէկի մը, թէ՝ Եւ քու-
17 կին զաւկիդ, որ ան Քրիստոսն է։ Հայց աս
կըզրուցեմ· Ան կտակը որ առաջուց Աստուծմէ
դրվեցաւ Քրիստոսով, օրէնքը չորս հարիւր
երսուն տարիէն ետև որ դրվեցաւ, չի՛ կրնար
խափտել ան խոստմունքը խափանելու համար։
18 Զի՝ որ ժառանգութիւնը օրէնքէն պիտի ըլ-
լայ նէ, ուրեմն ալ ան խոստմունքէն չէ՛·
Հայց Աստուած Աբրահամին խոստմունքով
շնորհեց։
19 Հապա ինչո՞ւ համար է օրէնքը· յանցանքի
համար վրայ եվեցաւ՝ (մինչև որ ան զաւակը գայ՝
որուն որ խոստացվեր էր,) հրեշտակներով
20 տրված միջնորդի մը ձեռքով։ Հայց միջնորդը
մէկումը միջնորդ չէ՛· սակայն Աստուած մէկ է։
21 Ուրեմն օրէնքը հակառակ բա՞ն մըն է Աստուծոյ
խոստմունքին· քա՛ւ լիցի· քանզի թէ որ տրված
ըլլար անանկ օրէնք՝ որ կարող ըլլար կենդա-
նացունելու, անատեն իրաւցունէ արդարու-
22 թիւնը օրէնքէն կըլլար։ Հայց ըզբոլոր դիրքը
ամէնը մեղքի տակ գոցեց, որ ան խոստմունքը
Յիսուս Քրիստոսի հաւատքէն տըրվին հա-

աստացողներուն : Քանի՛ որ Հաւատքը չէր 23
եկած , օրէնքին տակը գոցված կըպահվէինք ապա-
սեւալ ան հաքին գալու Հաւատքին որ մեր վրայ
պիտի յայտնի ըլլար : Ուրեմն օրէնքը մեզի 24
վարժապետ եղաւ Քրիստոս Յիսուսի քեզելը ,
որ մենք Հաւատքով արդարանանք : Հայց երբ 25
բոլոր Հաւատքը եկաւ , ալ վարժապետի տակ չենք :
Ինչու որ ամէնքնիդ ալ Աստուծոյ որդիք էք 26
Յիսուս Քրիստոսի Հաւատքովը : Քանի՛ ա- 27
մէնքդ որ Քրիստոսով մկրտվեցաք , Քրիստոսը
վրանիդ հագած . չի կայ մէկ դանազանութիւն .
ոչ Հրէային , ոչ ալ Հեթանոսին . ոչ ծառա- 28
յին , ոչ ալ ազատին . ոչ արուն , ոչ ալ էգ-
ին . ինչու որ դուք ամէնքնիդ ալ մէկ էք
Քրիստոս Յիսուսով : Ապա թէ որ դուք 29
Քրիստոսինն էք , անանկ է նէ Աբրահամին
զաւակն էք ու խոստմանքին նայելով ժառանգ-
ներ : Հայց ասկըզբնեմ Ա՛րչափ ժամանակ Գ.
ժառանգը տըղայ է նէ ծառային մէկ աւելի մը չէ ,
թեպետ ամէնուն ալ տէրը ըլլայ . Ապա խնա- 2
մակալներու ու գործակալներու տակն է մինչև
Հօրը դրած ժամանակը : Ասանկ ալ մենք եր- 3
բոր տղայ էինք՝ աշխարհիս գաղափարներուն
տակովը ծառայ եղած էինք : Հայց երբոր ժա- 4
մանակը լեցվեցաւ , խրկեց Աստուած իր Որդին՝
որ կինիկէ մը եղաւ , ու օրէնքին տակը մտաւ .
որ անոնք որ օրէնքին տակն էին նէ՝ ինքը ծախու 5
առնէ , որ մենք որդեգրութիւնը ընդունինք :
Եւ որովհետև դուք որդիք էք , Աստուած իր 6
Որդիին Հոգին մեր սիրտը խրկեց , որ կաղա-
ղակէ Երբա՝ Հայր : Ուրեմն ա՛լ ասկէ ետև ծառայ 7
չես , հապա՝ որդի . և թէ որ որդի՝ ալ Աստու-
ծոյ ժառանգը : Հայց անառենը երբոր չէիք 8
գիտեր Աստուած , կրծառայէիք անոնց որոնք
բնութեամբ Աստուածները չէին : Ասկայն հի- 9
մայ որ ճանչցաք Աստուած՝ մանաւանդ որ դուք

Աստուածմէ ճանչցրվեցաք , ինտրի նորէն կը
դառնաք ան տկար ու չքաւոր աշխարհի գա-
ղափարներուն , որոնց նորէն կուզէք անձերնիդ
10 ծառայ ընել : Օրերը կը գանազանէք , ու ա-
միսները , և ժամանակները ու տարիները :
11 Կը վախնամ ձեզմէ , որ գուցէ պարապ տեղը ես
ձեր վրայ աշխատած ըլլամ :
12 Ինծի պէս եղէք , ինչու որ ես ալ ձեզի պէս
եմ , եղբայրներ ձեզի կաղաչեմ . դուք ինծի
13 վնաս մը չտասուցած չէք : Գիտէք դուք՝ որ
մարմնոյս տկարութեամբը ես ձեզի առջի ան-
գամին աւետարանը քարոզեցի . և իմ մարմինիս
14 վրայ եկած փորձութիւնները , չանարգեցիք ու
չարհամարհեցիք . հապա Աստուծոյ հրեշտակի
պէս իս ընդունեցիք՝ Քրիստոս Յիսուսի պէս :
15 Ուրեմն ո՞ւր է ան ձեր երանութիւնը . ես վկայ
եմ ձեզի , թէ որ կարելի էր՝ ձեր աչքը կը հա-
16 նէիք ու ինծի կուտայիք : Ուստի ձեր թշնա-
17 մի՞ն մի եղայ ճշմարիտը խօսելուս համար : Նայց
ձեզ նախանձութեամբ կը գգուեն անոնք՝ չէ թէ
բարիին . և ձեզ կուզեն արգիլել , որ իրենց նա-
18 խանձաւոր ըլլաք : Սակայն աղէկ է ամէն ի-
ժիր աղէկին նախանձաւոր ըլլալ . ու չէ թէ
19 միայն երբոր ձեր մէջը ըլլամ : Իմ որդիներս՝
որ ձեզմով նորէն տղայութիւնը ցաւ կը քաշեմ ,
20 մինչև Քրիստոս ձեր մէջը նկարվի նէ : Կու-
զէի հիմայ ձեզի գալ , ու փոխել իմ խօսքս .
ինչու որ ես ձեր վրայով տարակուսած եմ :
21 Ըսէ՛ն մը ըսէք ինծի , դուք որ օրէնքին տակը
կուզէք ըլլալ . դուք չէ՞ք մի կարդացեր օրէն-
22 քը : Որ գրված է թէ՝ Աբրահամը երկու որդի
ունէր . մէկը՝ աղախինէն , ու մէկալը՝ ազատ կնի-
23 կէն : Նայց ան որ աղախինէն՝ մարմնոյ կոչուա-
նէ ծնած էր , ու ան որ ազատ կնիկէն՝ խոստա-
24 մունքին նայելով էր : Որ օրինակի նմանու-
թիւն մըն է . ինչու որ ասոնք են երկու կտա-

կարանները, մէկը՝ Ահնա լեռնէն պըղխած՝ որ ծա-
ռանեը կը ծնանի, ան՝ որ է Հագարը, (ինչու որ 25
Հագարը Արաբիայի մէջ Ահնա լեռն է,) հաւա-
սար է առ Երուսաղէմին՝ որ իր զաւկըներովը մէկ
տեղ կը ծառայէ։ Հայց վերի Երուսաղէմը՝ ա- 26
զատ է, որ մեր ամենուն մայրն է։ Ինչու որ 27
գրուած է, Ուրախ եղիր ամուլ՝ դուն որ չէիր
ծնաներ. կանչէ ու աղաղակէ՝ որ տղաբերքի ցաւ
չէիր քաշեր. վասն զի դուն մէկ դի ձգվածդ է-
րիկ ունեցողէն էվել զաւկրներ ունիս։ Ուստի 28
մենք Եղբայրներ՝ Սահակին պէս խոստումնքին
որդիներն ենք։ Հայց ինծոր անատեր ան որ 29
մարմնոյ կողմանէ ծնած էր նէ՝ կը հալածէր անիկա
որ հոգիին կողմանէ էր, անանկ ալ հիմայ։
Սակայն գիրքը ի՞նչ կըսէ. Ա՝էկ դի՛ հանէ ատ 30
աղախինը ու անոր տղան՝ որ չըլայ թէ աղախի-
նին զաւակը ժառանգութիւն ունենայ ազատ
կնկանը զաւկին հետ։ Ուստի եղբայրներ՝ մենք 31
աղախինին զաւկըները չենք, հապա ազատին՝ ան
ազատութիւնովը, որով մեզ Քրիստոս ազա-
տեց։

Գ Լ. Ե։

Ուստի ալ ամուր կեցէք, և նորէն ծառայու- 1
թեան լուծին տակը մի՛ մտնեք։ Ես՝ հա ես 2
Պօղոս կըզըուցեմ ձեզի. որ եթէ թլփատիք՝
Քրիստոս ձեզի օգուտ մը չընէր։ Այն մար- 3
դու կըվկայեմ, թէ որ թլփատվելու ըլլայ՝ պար-
տական է բոլոր օրէնքը կատարելու։ Խափա- 4
նած էք դուք Քրիստոսէն, որ օրէնքովը արդա-
րանալ կուզէք, ու շնորհքէն ինկած էք։ Ին- 5
չու որ մենք Հոգիէն ձեռքովը Հաւատ-
քով կըսպասենք՝ արդարութեան յոյսին։ Ին- 6
չու որ Քրիստոս Յիսուսի քով՝ ոչ թլփատու-
թիւնը բան մը կրնայ, ոչ ալ անթլփատութիւ-
նը. հապա հաւատքը՝ որ սիրով կըայծողե։

7 Հդէկ կերթայիքկոր , ո՞վ ձեզ ետ կեցուց՝
8 որ ճշմարտութեան չի հնազանդիք : Ինչու որ
ասա գրդմունքը անկեց չէ որ ձեզ կանչեց .
9 Փիչ մը խմորը ամէն շաղված գունդը կրխմորէ :
10 Ես այց յայս ունիմ՝ ձեր վրայ Տէրոջմով , որ
դուք ուրիշ կերպ բան մը չեք մտմտար . և ան
որ ձեզ կրխռովեցունկոր , ինքը դատապար-
11 տութիւն պիտի կրե՝ ով որ է նէ : Այսայն ես
եղբայրներ՝ թէ որ ես տակաւին թլփատութիւն
քարոզէի , ալ ինչո՞ւ կըհալածվիմ . ուրեմն խա-
12 չին գայթակղութիւնը վերցրված է : Երանի
թէ բոլորովին կըտրըվէին անոնք որ ձեզ կը
խռովեցունեն :
13 Ինչու որ դուք աղատ ըլլալու կանչըված էք՝
եղբայրներ . միայն ձեր ազատութիւնը մար-
մինի յորինութեանը պատճառ չըլլայ . հապա
14 սիրով ծկրզմկու ծառայութիւն րրէք : Ինչու
որ բոլոր օրէնքը մէկ խօսքի մը մէջ կըկատար-
վի , թէ՝ Ինչու ընկերդ քու անձիդ պէս սիրես :
15 Հապա թէ որ մէկզմէկ խածնէք ու ուտէք ,
զգոյշ կեցէք՝ որ չըլլայ թէ մէկդ մէկալը սատ-
16 կեցունէ : Այսայն թէ աս կըզըուցեմ՝ Հո-
գիով գացէք , ու մարմինին ցանկութիւնը մի՛
17 կատարէք : Ինչու որ մարմինը կըցանկայ հո-
գիին հակառակ , ու հոգին մարմինին հակառակ ,
և ասոնք որ մէկմէկու հակառակ են , էյ թէ ինչ
18 որ կուզէք նէ՝ ան ընէք : Այց թէ որ հոգիով
19 վարվիք՝ ալ օրէնքին տակը չէք : Ինչու որ
մարմինին գործքերը յայտնի են , որ ասոնք են՝
շնութիւն , պոռնըկութիւն , պղծութիւն , գի-
20 ձութիւն , կռապաշտութիւն , կախարդութիւն ,
թշնամութիւն , վիճմունք , նախանձութիւն ,
բարկութիւն , հակառակութիւններ , երկպառա-
21 կութիւններ , անմիաբանութիւններ , չար նա-
խածքներ , սպանութիւններ , գինովութիւններ ,
. անառակութիւններ , ու ինչ որ ասոց նման են .

որ հիմակուց ես ձեզի կըզըուցեմ , ինչպէս առաջուց ալ կըզըուցէի , որ աստուածոյ արքայութիւնը չեն ժառանգեր ։
Այլ հոգիին պտուղը սա է . սէր , ինդութիւն , 22
խաղաղութիւն , երկայնմտութիւն , քաղցրու- 23
թիւն , բարութիւն , հաւատք , հեզութիւն ,
ժուժկալութիւն . սանկ բաներուն վրայ օրէնքը
հակառակ չէ ։ Եւ անոնք որ Քրիստոսինները 24
են՝ իրենց մարմինը խաչ հանեցին ենոխան կիր-
քերով ու ցանկութիւններով մեկտեղ ։ Թէ որ 25
հոգիով կապրինք նէ՝ հոգիին հետ ալ միաբան
երթանք ։ Եւ մեզմէ պարծենկոտ չըլլանք՝ մէ- 26
կըզմէկ զրգռելով , ու իրարու վրայ նախան-
ձելով ։

Գ Լ . Ա ։

Ա ղբայրնե՛ր՝ թէ որ ձեզմէ մէկը պատահմամբ 1
ինչ և իցէ յանցանքով բռնըվիլու որ ըլլայ ,
դուք որ հոգևոր էք՝ անանկը հեզութեան հո-
գիով հաստատեցէք . զգոյշ կեցէք ինքըզինքնուդ ,
որ չըլլայ թէ դուք ալ փորձութեան մէջ իյնաք ։
Այ՛ հէրըզմէկու բեռ վերցուցէք , ու անանկ 2
Քրիստոսի օրէնքը կատարեցէք ։ Թէ որ մէկը 3
ինքըզինքը բան մը ըլլալ կըսեպէ՝ ու չէ նէ , ա-
նիկա իր անձը կըխաբէ ։ Այլ մարդ իր գոր- 4
ծը թող կիշտուէ , և ետքը աւանձին իր անձին
պարծանք ասյ , ու չէ՛ թէ ընկերին քովը ։ Ինչ- 5
ուս որ ամէն մէկը իր բեռը պիտի վերցունէ ։
Ուշակերտը իր վարդապետին յաժին թող 6
հանէ ամէն բարիքներու մէջ ։ Մի՛ խաբվիք՝ 7
Աստուած ծաղր չըլլար ։ Վասն զի՛ ինչ որ մէկ 8
մարդ մը կը ցանէ նէ՝ ալ նոյնը պիտի հընձէ . ան
որ իր մարմինին մէջ կը ցանէ՝ ան մարմինէն պիտի
ապականութիւն հնձէ . ու ան որ Հոգիին մէջ
կը ցանէ , ան Հոգիէն յաւիտենական կեանք
պիտի հընձէ ։ Այլ բարի գործելէն ետ չի կե- 9

նանք մենք, որ իր ժամանակին չի թուլնալով
10 հնձենք։ Ուստի քանի՛ որ ժամանակը ձեռքեր-
նիս է, աղէկութիւն ընենք ամէնուն՝ մանաւանդ
հաւատքին ընտանիներուն։
11 Նայեցէ՛ք ինտր գրով ձեզի գրեցի իմ ձեռ-
12 քովս։ Որովհետև ան ամէնքը որ մարդու սի-
րելի ըլլալ կուզեն մարմինով, անոնք ձեզ կըս-
տիպեն որ թլփատուիք. միայն թէ Քրիստոսի
13 խաչին ետևէն չերթան։ Ինչու որ անոնք ալ
որ թլփատուած են, իրենք օրէնքը չեն պահեր.
հապա կուզեն որ դուք թլփատուիք, որ իրենք
14 ձեր մարմինովը պարծենան։ Նայց ես՝ քա՜ւ
լիցի, որ պարծենամ. հապա միայն թէ մեր
Տէր Յիսուս Քրիստոսի խաչովը. որ անով աշ-
խարհ ինծի խաչը ելած է, ես ալ աշխարհի։
15 Ինչու որ Քրիստոս Յիսուսով ո՛չ թլփատու-
թիւնը բան մըն է, ո՛չ ալ անթլփատութիւնը.
16 հապա նոր ստեղծուած ըլլալն է բանը։ Եւ ան
ամէնը որ ասոր կանոնին կըհամաձայնին, խաղաղու-
թիւն ու ողորմութիւն անոնց վրայ, ու Աստու-
17 ծոյ Իսրայէլին վրայ։ Սկսէ ետև մէկը ինծի
նեղ չի յոքնեցունէ. ինչու որ ես Քրիստոսի
չարչարանքը իմ մարմինիս մէջ կըքաշեմ։
18 Ե՛ղբայրներ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
շնորհքը ձեր հոգիին հետ ըլլայ.
ամէն։

Առ Գաղատացիս Գրեցաւ Պաղատոցիներուն։

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԱԼԱՒՆ

ԹՈՒՂԹԸ ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼ. Ա։

Պօղոս Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստու- 1
ծոյ կամքովը, Եփեսոսի մէջ եղած սուրբե-
րուն՝ ու Քրիստոսի Յիսուսի հաւատացողնե-
րուն։ Շնորհք և խաղաղութիւն ձեզի Ա- 2
տուածմէ մեր Հօրմէն՝ ու Տէր Յիսուս Քրիստո-
սէն։

Օրհնեալ է Աստուած՝ և մեր Տէրոջը Յի- 3
սուս Քրիստոսի Հայրը, ան որ մեզ օրհնեց ա-
մէն հոգևոր օրհնութիւններով երկինքին մէջ
Քրիստոսի ձեռքովը, ինչպէս որ մեզ անոր ձեռ- 4
քովը աշխարհը ըլլալէն առաջ ընտրեց, որ մենք
սուրբ ու անարատ ըլլանք անոր առջևը սիրով.
առաջուց ինքը մեզ սահմանեց իրեն որդեգիր 5
ըլլալու Յիսուս Քրիստոսի ձեռքովը՝ իր կամքին
ուզելովը, իր շնորհաց փառքին գովութեանը 6
համար, որ անով մեզ ազատացուց սիրելիին
ձեռքովը, որ անով փրկութիւն ունինք մենք 7
իր արիւնին միջնորդութիւնովը, մեր մեղքին

թողութիւն՝ իր շնորհքին մեծութեանը չափովը.
8 որ մեր վրայ առելի եղաւ բոլոր իմաստութեամբ
9 ու գիտութիւնով. մեզի յայտնելով իր կամքին
խորհուրդը իր հաճութեամբը. որոնք առա-
10 ջուց զրաւ անոր ձեռքով. որ ժամանակին սահ-
մանադրութիւնը լրանալուն՝ ամէն բան բովան-
դակի Քրիստոսով՝ ինչ որ երկինքը ու ինչ որ
11 երկրի վրայ կայ անով՝ որով մենք ալ ժառանգ
եղանք՝ առաջուց հրաւիրուած ըլլալով՝ Աստու-
ծոյ նախասահմանութիւնովը. ան որ ամէն բան
12 իր կամքին խորհրդովը կերպդրէ. որ մենք ա-
նոր փառքին գովութիւն ըլլանք՝ առաջուց
13 Քրիստոսի վրայ յուսացողներըս. որով ալ
դուք (երբոր լսեցիք ճշմարտութեան խօսքը՝
ձեր փրկութեան աւետարանը,) որով ալ հա-
ւատացեալ՝ խոստացեալ Սուրբ Հոգիին կնքուեցաք
14 կընքուելեցաք. որ ան մեր ժառանգ ըլլալուն գրաւն
է՝ մինչև որ ստացուածներուն ԱՓՈՓԵԼ փրկու-
թիւնը, որ իր փառքին գովութիւն ըլլայ։
15 Ասոր համար ես ալ երբոր ձեր հաւատքը
լսեցի որ Տէր Յիսուսին վրայ է, ու ձեր սէրը
16 դէպի բոլոր սուրբերուն. ալ ետ չեմ՝ կենար
ձեզի համար գոհութիւն ընելէն՝ աղօթքիս մէ-
17 ջը ձեզ յիշելով. որ մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի Աստուածը՝ փառաց Հայրը ձեզի տայ ի-
մաստութեան ու յայտնութեան հոգին իրեն
18 գիտութիւնովը. սրտերնուս աչքը լուսաւոր ը-
նելու համար, որ գիտնանք թէ ինչ է անոր
հոպ կանչելուն յոյսը. ու ինչ է վինչքը ժա-
ռանգելու փառքին մեծութիւնը սուրբերուն
19 մէջ. և ինչ է իր զօրութեանը առաւել մե-
ծութիւնը դէպի մեզի հաւատացեալներուս՝ իր կա-
20 րող զօրութեանը յաղողութեամբը, որ Քրիս-
տոսով յաղողեց. որ անիկա մեռելներէն յա-
րուց, ու նստեցուց իր աջ կողմը երկինքին մէջ,
21 բոլոր իշխանութեան ու պետութեան և զօրու-

Թեան ու տէրութեան՝ և ամէն անունի վրայ որ
կանուանի, չէ՛ թէ միայն աս աշխարհիս մէջ,
հապա գալիքին մէջն ալ. և ամէն բան անոր ոտ- 22
քին տակը հնազանդեցուց. ու անիկա ամէն բա-
ներուն վրայ եկեղեցիին գլուխ դրաւ, որ ան 23
անոր մարմինն է, անոր կատարելութիւնը, որ ա-
մէն բան բոլորովին կըլեցունէ։ Եւ դուք որ 1
ձեր մեղքերուն և յանցանքներուն մէջ մեռած
էիք՝ ինձ յետ հնոպանացուց. որոնց մէջը ատե- 2
նօք կըքալէիք աս աշխարհիս բռնած ճամբովը,
աս օդուս իշխանութեանը իշխանին ուզածին
պէս, ան չար հոգիին՝ որ հիմայ ապստամբ որ-
դոցը ներսի դին մտեր է. որ ատենով մենք ա- 3
մէնքս ալ ան բաներուն մէջը կըպըտրտէինք մեր
մարմինին ցանկութիւնովը, ու մարմինին և
միտքին ուզածը կըկատարէինք. ու բուն բար-
կութեան որդիք էինք ինչպէս ուրիշները։ բայց 4
Աստուած որ մեծ է ողորմութիւնով՝ իր առատ
սիրոյն համար որով մեզ սիրեց. երբոր մեր 5
մեղքերուն մէջը մեռած էինք, Հիսուս Քրիստոսով
նացուց մեզ. (ինչու որ մենք
շնորհքով ապրեցանք,) ու մեզի հետ յարուց, 6
ու մեզի նստեցուց երկինքին մէջ Քրիստոս
Յիսուսով. որ գալու դարերուն մէջը ցուցընէ 7
իր շնորհքին էվելօք մեծութիւնը՝ մեր վրայ
ըրած անուշութիւնովը Քրիստոս Յիսուսով։
Վասն զի անոր շնորհքովը փրկըված էք դուք 8
հաւատքով. և աս չէ՛ թէ ձեզմէ է, հապա
Աստուծոյ պարգեւն է. չէ՛ թէ գործքերէն, որ 9
մէկը չի պարծի։ Ինչու որ անոր ստեղծուածն 10
ենք, Քրիստոս Յիսուսով հաստատված բարի
գործքերու համար՝ որոնց վրայով Աստուած ա-
ռաջուց պատրաստեց, որ անոնց մէջը քալենք։
Ուստի դուք ալ միտքերնիդ բերէք, որ 11
ատեն մը մարմինով հեթանոսներ էիք. (որոնք
որ չի թլփատված կըսվին անկէց՝ որ թլփատու-

12 [թիւն կրավի մարմնի մէջ ձեռքով եղած ։) որ
անատեր դուք առանց Քրիստոսի էիք, ու օ-
տարացած էիք Իսրայէլի ընկերութենէն, և
դուրս ձգված ան խոստումներէն ուխտին, ու յոյս
մրն ալ չունէիք, և աշխարհի մէջ անաստուած
13 էիք ։ Հայց հիմայ Յիսուս Քրիստոսի ձեռքո-
վը դուք որ առեն մը հեռաւոր էիք, մերձա-
14 ւոր եղաք Քրիստոսի արիւնովը ։ Վ ան ալ ա-
նիկա է մեր խաղաղութիւնը, որ երկուքը մէկ
ըրաւ, ու մէջ տեղի բաժանող պատը ոչնչա-
ցնելովը՝ հինհ թշնամութիւնը իր մարմնին
15 քակեց, և հրամաններով եղած պատուիրանք-
ներուն օրէնքը խափանեց, որ իրմով ան եր-
կուքը մէկ նոր մարդ մը հաստատէ, ու ասոնով
16 խաղաղութիւն ընէ, և երկուքն ալ մէկ մարմին
եղած Հաշտեցնէ Աստուծոյ հետ իր խաչովը,
ինչու որ թշնամութիւնը սպանեց իր անձին
17 մէջ ։ և եկաւ խաղաղութիւն քարոզեց ձեզի որ
հեռուն էիք, ու խաղաղութիւն անոնց որ մօտ
18 էին ։ Որ անոր ձեռքովը մենք երկուքնիս ալ
մէկ Հոգիով Հօր Աստուծոյ քովը մօտենանք ։
19 Ուրեմն է՛ն ալ ասկէետև դուք օտար ու պան-
դուխտ չէք, հապա սուրբերուն քաղաքակիցներ,
20 և Աստուծոյ ընտանիքը, առաքեալներուն ու
մարգարէներուն հիմին վրայ շինված, որ անոր
21 անկիւնին գլուխը Յիսուս Քրիստոսն է, որով
բոլոր շինվածքը մէկտեղ կապված ու յարմար-
ված՝ կամ՛ սուրբ տաճար մը կըլլայ Տէրով ։
22 որ անով դուք ալ մէկտեղ կըշինվիք Աստու-
ծոյ բնակարան ըլլալու Հոգիով Սրբով ։

ԳԼ· Գ ։

1 Ա ստի ես Պօղոս Յիսուս Քրիստոսի կապված
2 ձեզի Հեթանոսներուդ համար ։—Լուսե-
ցած էք դուք Աստուծոյ շնորհքին մասակարա-
3 րութիւնը, որ ինձի տրված է ձեր վրայով ։ որ

ինծի ան խորհուրդը յայտնութիւնով երեցաւ ։
(ինչպէս առաջուց ալ ձեզի քիչ մը գրեցի, որ
կարող ըլլաք կարդալու ու միտք առնելու իմ
տեղեակ ըլլալս Քրիստոսի խորհուրդին վրայո-
վը ։) որ ուրիշ դարերուն մէջ մարդոց զաւակը-
ներուն չի երեւցաւ, ինչպէս որ հիմայ Հոգւով
Աբբ Սուրբ առաքեալներուն ու մարգարէներուն ։ որ
ժառանգորդ ու մէկ մարմին ըլլան՝ և աւետարա-
նովը ան խոստմունքին հաղորդ՝ Քրիստոս Յի-
սուսով ։ որ անոր ես սպասաւոր եղայ՝ Աստուծոյ
շնորհքին պարգեւներովը, որ ինծի տրուեցաւ՝
իր զօրութեանը յայտնութիւնովը, (ինծի՝ որ
ամէն սուրբերուն պզտիկին իմ, աս շնորհքը
տրուեցաւ,) Հեթանոսներուն մէջ Քրիստոսի
անքննելի մեծութիւնը քարոզելու ։ և ամէնքը
լուսաւորելու, որ գիտնան թէ ի՞նչ է ան խոր-
հուրդին մատակարարութիւնը, որ բոլոր դարե-
րէն հետէ ծածկուած էր Աստուծոյ քով, ան որ
ամէն բանը ըրաւ ։ որ հիմայ Աստուծոյ բազմա-
տեսակ իմաստութիւնը յայտնի ըլլայ երկինքը
եղող իշխանութիւններուն և պետութիւննե-
րուն՝ եկեղեցիին միջոցովը ։ իր յաւիտենական
նախասահմանութեանը պէս, որ ըրաւ մեր Տէր
Յիսուս Քրիստոսի միջոցովը ։ որ անով մենք
ալ համարձակութիւն ու քովը մտնելու ու
նիմք յուսով՝ իրեն հաւատալով ։ Ուստի կա-
ղաչեմ որ չի ձանձրանաք մեր նեղութեանը
վրայ, որ ձեզի համար է, ան որ ձեզի փառք է ։
Ասոր համար ծունկ կրչռեմ ես մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի Հօրը ։ ուսկից որ բոլոր նահա-
պետութիւնները երկինքի մէջ ու երկրի վրայ
անուն կառնեն ։ որ տայ ձեզի իր փառքին մե-
ծութեանը չափովը՝ զօրութիւնով հաստատուիլ
իր Հոգիովը ներքին մարդուն մէջ ։ որ Քրիս-
տոս հաւատքով ձեր սրտին մէջը բնակի՝ սիրով

18 արմատ կապած ու հաստատված · որ կարող ըլ-
լաք հասկընալու ամէն սուրբերուն հետ մէկտեղ ,
ընչ ի՞նչ է լայնութիւնը և երկայնութիւնը՝ ու
19 բարձրութիւնը և խորունկութիւնը · այսինքն
ճանչնալ Քրիստոսի սիրոյն գիտութեանը
չափազանցութիւնը · որ լցվիք Աստուծոյ ամէն
20 լրութիւնովը : Հայց անոր որ կարող է առա-
տութեամբ ընել ամէն բաներէն էվել՝ որ մենք
կը խնդրենք ու կը մտածենք ան զօրութիւնովը՝
21 որ մեր մէջը յաղորդված է · իրեն փառք եկե-
ղեցիին մէջ՝ ու Քրիստոս Յիսուսով , բոլոր դա-
րերուն մէջ յաւիտենից յաւիտեանս · ամէն :
Գ ——Հետի կաղաչեմ ձեզի ես որ Տէրոջը համար
կապված եմ , որ գուք ան կոչումին պէս
2 երթալ որով կանչվեցաք · բոլոր խոնարհութիւ-
նով ու հեզութիւնով՝ և երկայնմտութիւնով՝
3 սիրով միդզմիդու մտիկ ընելով · ջանաք Հոգ-
ւոյն սքանչ միաբանութիւնը խաղաղութեան կա-
4 պովը պահել · Մէկ մարմին ու մէկ Հոգի , ինչպէս
որ կանչվեցաք ան ձեր կոչումին մէկ յոյսովը ·
5 Տէրը մէկ է , հաւատքը մէկ , մկրտութիւնը մէկ ·
6 մէկ Աստուած , և ամենուն Հայրը , որ ամե-
նուն վրայ՝ ու ամենուն հետ , և մեր ամենուս
7 մէջն է : Հայց մեր ամէն մէկուն ալ շնորհք
տրվված է Քրիստոսի պարգևներուն չափովը :
8 (Ընդ համար կըսէ , թէ՝ Վեր բարձրը ելաւ ,
գերութիւնը գերի բռնեց , ու մարդոց պարգև-
9 ներ տուաւ : Հն որ ելաւ նէ՝ ի՞նչ է , միայն թէ՝
10 որ ինքը առաջ երկրին վարի կողմը իջաւ : Հն
որ իջաւ նէ , ինքը անիկա է՝ որ ալ բոլոր երկինք-
11 ներէն վեր ելաւ , որ ամէն բան լեցնէ :) Եւ
ինքը մէկ քանին տուաւ առաքեալներ , մէկ քա-
նին մարգարէներ , մէկ քանին աւետարանիչներ ,
12 մէկ քանին հովիւներու վարդապետներ · սուր-
բերուն հաստատութեանը համար , պաշտամուն-
քին գործքին համար , Քրիստոսի մարմինին

շինութեանը համար. մինչև որ ամենեխս ալ 13
հասնինք հաւատքին միաբանութեանը ու Որ-
տուծոյ Որդին ճանչնալու. կատարեալ մարդ
լլլալու՝ Քրիստոսի լման հասակին չափը ունե- 14
նալու. որ ալ ասկէ ետև տղաք չըլլանք պղտոր-
ված ու վարդապետութեան ամէն հովերէն և
ըներտրկված՝ մարդոց խաբէութիւնովը, որ 15
հնարքով կըխաբեն մոլորցունելու. հապա սի-
րով ճշմարտութեան հետևելով՝ ամէն բանի մէջ
անով աճինք՝ որ գլուխ է՝ այսինքն Քրիստոս. որ 16
անկէ բոլոր մարմինը միտեղ կցված՝ և ամէն
խազերը միմիկու հաղորդութիւնով յարմարած՝
աճէն մէկ մասին չափով ներգործելով՝ ան մար-
մինին աճում կուտայ՝ իր անձին օգուտին համար
սիրով։

Ասսի աս կըսեմ՝ ու Տէրով դաշինք կըդնեմ՝ 17
որ դուք ալ այլևայլ ան կերպով չերթաք, ինչպես
որ ալ Հեթանոսները կերթան՝ իրենց փուճ
մտածմունքներովը. որ իրենց սրտերնին խաւա- 18
րած է, ու օտար են Աստուծոյ կեանքէն, անոնց
մէջը եղած տգիտութեան պատճառովը՝ իրենց
սրտերուն կուրութեանը համար. որոնք իրենց 19
անձին յոյսը կըտրեցին, և ինքզինքնին անա-
ռակութեան տըվին, ամէն կերպ պղծութիւն
գործելու՝ ագահութիւնով։ Հայդ դուք ա- 20
սանկ չի սորվեցաք Քրիստոսը. թէպէտ և անոր 21
վրայով լսեցիք՝ ու անկէց սորված էք, որ ինչպէս
է Յիսուսի ճշմարտութիւնը. որ վրանէրնուդ 22
մէկ դի հանէք՝ ան առջի յէր վարմունքին պէս ե-
ղած հին մարդը խաբեբայ ցանկութիւնով ա-
պականված. և ձեր միտքին հոգիովը նոր ը- 23
լլաք, և նոր մարդը վրանիդ հագնիք, ան որ Աս- 24
տուծոյ պատկերին պէս ստեղծված է, արդարու-
թիւնով ու ճշմարիտ սրբութիւնով։ Ուստի 25
ստութիւնը մէկ դի ձգեցէք. ճշմարտութիւն
խօսեցէք ամէն մէկերնիդ իր ընկերին հետ. ինչու-

26 որ մենք մկրտվեկու անդամներ ենք ։ Խարկա-
ցեք ու մեղք մի՛ գործէք . արևը ձեր բարկու-
27 թեանը վրայ մարը չի մտնայ ։ Ու Սատանային
28 տեղ մի՛ տաք ։ Ան որ գողնալիուն կընէր նէ ,
ալ թող չի գողնայ . հապա մանաւանդ թող աշ-
խատի իր ձեռքովը ազէկ բաներ գործելու , որ
29 կարող ըլլայ տալ որի՛ որ պէտք է նէ ։ Ամեն
գարշելի խօսք ձեր բերնէն թող չելլայ . հապա
որ բանն որ ազէկ է՝ շինուելեան պէտք եղածը ,
30 որ լսողներուն շնորհք տայ ։ Եւ Սուռբ Հոգին
Աստուծոյ մի՛ տրտմեցուներ , որ անով դուք
31 կընքըվեցաք փրկութեան օրը ։ Ամեն ըզգուա-
ցութիւն և բարկութիւն՝ ու սրտմտութիւն՝ և ա-
ղաղակ՝ ու հայհոյութիւն վերցրվին ձեզմէ բոլոր
32 չարութիւններով մէկտեղ ։ Այլ իրարու հետ
անուշ եղէք , գթած , ներելով իրարու ,
ինչպէս որ Աստուած Քրիստոսով մեզի ներեց ։
Ե Աստուծոյ նմանող եղէք՝ սիրելի զաւկներու
2 պէս . և սիրով վարվեցէք՝ ինչպես որ Քրիստոս
ալ մեզ սիրեց , և իր անձը մեզի համար մատ-
նեց՝ , պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ ա-
3 նուշ հոտի ։ Բայց պոռնկութիւն և ամեն
կէրպ պղծութիւն՝ կամ ագահութիւն չըսվի՛ ալ
ձեր մէջը , (ինչպես որ կըվայլէ սուրբերուն ,)
4 և գարշելի բաներ՝ կամ խենդութիւնի խօսքեր՝
կամ խեղկատակութիւն , որ չի վայլեր . հապա
5 հակառակը գոհութիւն ։ Այս համոզուած գիտնաք որ
ամեն պոռնիկ կամ պիղծ՝ կամ ագահ՝ որ կոա-
պաշտ է , Քրիստոսին ու Աստուծոյ թագա-
ւորութեանը մէջ ժառանգութիւն մը չունի ։
6 Ձըլլայ որ մեկը ձեզ խաբէ փուճ խօսքերով .
ինչու որ ասոր համար Աստուծոյ բարկութիւնը
7 կու գայ անհնազանդ զաւկներուն վրայ ։ Ուս-
8 տի անոնց հաղորդ մի՛ ըլլաք ։ Որ թէպէտ ա-
տեն մը դուք ալ խաւար էիք , բայց հիմայ լոյս
էք Տէրոջմով . լուսոյ որդիքներուն պէս քալե-

ցէք , ինչու որ լուսոյ պատուղը ամէն կերպ բա- 9
րութիւնով է , և արդարութիւնով՝ և ճշմար-
տութիւնով : Քննեցէք՝ ի՞նչ է Տէրոջը հա- 10
ճելին . ու կցորդ մի՛ ըլլաք խաւարին անպտուղ 11
գործքերուն , հապա եվիլօք յանդիմանեցէք :
Ինչու որ անոնց մէջը գաղտուկ գործուած բանը 12
խօսիլն ալ ամօթ է : Հայց ամէն բան լուսէն 13
յանդիմանած լայտնի կըլլայ . ինչու որ ամէն
բան որ լայտնի կըլլայ՝ լոյս է : Ընոր համար 14
կըսէ . Արթընցիր դուն որ կըքնանաս , և կանգ-
նէ՛ մեռելներէն , ու Քրիստոս քեզի լոյս պիտի
տայ :
Ուրեմն տեսէք ինչպես շիտակ պիտի երթաք , ան- 15
միտներու պէս չէ՛ , հապա իմաստուններու պէս . 16
ժամանակները գնեցէք , ինչու որ օրերս չար
են : Ընոր համար մի՛ ըլլաք անմիտ , հապա ի- 17
մացէք ի՞նչ է Տէրոջը կամքը : Եւ մի՛ գինով- 18
նաք գինիով , որուն մէջ որ անառակութիւն
կայ . հապա եվիլօք Հոգիով լեցուեցէք . սրբոց
նուագ մէջ սաղմոսներ ու օրհնութիւններ , և
հոգևոր տաղեր խօսելով . երգելով ու սաղմոս
ըսելով Տէրոջը՝ ձեր սրտին մէջ : Ամէն իժիր 20
ամէն բանի համար գոհութիւն տըվէք Հօրը ու
Աստուծոյ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունո-
վը :
Հնազանդ եղէք ակնկալ Քրիստոսի վախ- 21
վը : Ակնկալները իրենց էրիկներուն հնազանդ 22
ըլլան՝ որպես թէ Տէրոջը . ինչու որ էրիկ մար- 23
դը կնկանը գլուխն է , ինչպես որ Քրիստոս եկե-
ղեցիին գլուխն է , ու ինքը մարմնին փրկիչն է :
Ուստի ինչպես որ եկեղեցին հնազանդ կըլլայ 24
Քրիստոսին , անանկ ալ կնիկները ամէն բանի
մէջ իրենց էրկանը : Էրիկ մարդիկ՝ սիրեցէք 25
ձեր կնիկները . ինչպես որ Քրիստոս սիրեց եկե-
ղեցին , ու իր անձը մատնեց անոր համար . որ 26
անիկա սուրբ ընէ աւազանին մաքրութեամբ՝

27 խօսքով · որ ինքը իր փրկագը փառաւոր կեցուն-
եկեղեցին՝ որ մէկ արատ մը կամ աղտոտութիւն
կամ ուրիշ ասոր պէս բաներ չունենայ · հապա
28 որ սուրբ ու անարատ ըլլայ ։ Նմանկ ալ պէտք
է որ էրիկ մարդիկ իրենց կիներուն սիրեն իրենց
մարմիններուն պէս · ան որ իր կինը կը սիրէ՝ իր
29 անձը կը սիրէ · ինչու որ մէկը բնաւ իր անձը չի՛
ատեր , հապա կրկերակրէ՛ ու կը հոգայ անոր ,
30 ինչոր Քրիստոս ալ եկեղեցին · վասն զի մենք
անոր մարմինին անդամներն ենք , անոր մարմինէն
31 ու անոր ոսկորներէն ։ Ասոր համար էրիկ մար-
դը իր հայրը ու մայրը պիտի ձգէ , և իր
կնկանը հետ պիտի երթայ , ու երկուքը մէկ մար-
32 մին պիտի ըլլան ։ Այս խորհուրդը մեծ է ·
բայց ես կըզըուցեմ Քրիստոսի ու եկեղեցիին
33 վրայ ։ Ուստի դուք ալ անանկ ըրէ՛ ամէնդ ·
որ ամէն մէկը իր կնկիը անանկ պիտի սիրէ՛ որ-
պէս թէ իր անձը · ու կնիկը իր էրկընէն թող
Զ. վախնայ ։ Մ՛ըրիէ՛ ձեր ծնողացը հնազանդ ե-
2 ղէք Տէրոջմ , որ ան է արժանը ։ Պատուէ՛ քու
հայրդ ու մայրդ , (որ ան առջի պատուիրանքն
3 է խոստմունքով ,) որ քեզի աղէկ ըլլայ , ու եր-
4 կան ապրիս երկրի վրայ ։ Հայրե՛ր ձեր զաւ-
կըները մի՛ բարկացուներէք · հապա անոնք մեծցու-
ցէ՛ք Տէրոջը խրատովը՝ ու վարժութիւնովը ։
5 Ծառաներ՝ հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէ-
րերուն , ահով ու դողով և ձեր սրտին միամը-
6 տութիւնովը՝ որպես թէ Քրիստոսին ։ Ձէ՛ թէ
մարդահաճոյի պէս աչքի առջև ծառայելով , հա-
պա Քրիստոսի ծառաներու պէս Աստուծոյ կամ-
7 քը ընելով · սրտանց ծառայելով որպէս թէ
8 Տէրոջը · ու չէ՛ թէ մարդոց ։ Գիտենք որ՝ ա-
մէն մէկը ինչ բարիք որ ընէ , նոյնը Տէրոջմէն
պիտի ընդունի՝ թէ ծառայ ըլլայ և թէ ազատ ։
9 Դուք ալ տէրե՛ր նոյնը ըրէ՛ք անոնց , պատիժը
համբերութեամբ ընելով · գիտցէ՛ք որ անոնց ալ

ձերն ալ Տէրը երկինքն է. ու անոր առջևը ա-
չառութիւն չի կայ։
Եւ ասկէ ետև զօրացէք Տէրով, ու ա- 10
նոր զօրութեան կարողութիւնով։ Եւ զա- 11
նիդ հագէք Աստուծոյ զէնքերը, որ կա-
րող ըլլաք Սատանային հնարքներուն դէմ
դնել։ Ինչու որ մեր պատերազմը մարմինի ու 12
արիւնի հետ չէ. հապա իշխանութիւններու ու
պետութիւններու հետ, և աս խաւար աշխար-
հիս իշխաններուն հետ, երկինքին տակը եղած
չար հոգիներուն հետ։ Ասոր համար առէք 13
Աստուծոյ զէնքերը, որ կարող ըլլաք չարին դէմ
դնելու չարութեան օրը։ Եւ երբոր ամէն բան 14
կրկատարէք, հաստատուն կեցէք, կանչ առէք
ճշմարտութիւնով ու
արդարութեան զրահները հագնելով. ու ոտ- 15
քերնիդ հագցնելով խաղաղութեան աւետա-
րանին պատրաստութիւնովը։ Եւ ամէն բանին 16
վրայ առէք հաւատքին վահանը. որ անով կա-
րող ըլլաք չարին ամէն կրակոտ նետերը մարել-
լու։ Եւ փրկութեան սաղաւարտը առէք, ու 17
Հոգիին սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է. Ամէն ա- 18
ղօթքով ու խնդրվածքով ամէն ատեն աղօթք
ըրէք Հոգիով. ու ան բանին վրայ հսկեցէք բո-
լորովին համբերութիւնով ու աղաչանքով ա-
մէն սուրբերուն համար, ինծի համար ալ. որ 19
ինծի խօսք տրվին երբոր բերանս բանամ նէ,
համարձակ ցուցընեմ աւետարանին խորհուրդը.
որուն համար ես դեսպանութիւն կընեմ կապան- 20
քովս, որ անով համարձակութիւն մը ունենամ
ես ինչպէս որ պէտք է նէ խօսիլ։
Բայց որ դուք ալ գիտնաք իմ վրայովս՝ թէ 21
ինչ կընեմ ես, ամէն բանը պիտի ցուցընէ ձեզի
Տիւքիկոս սիրելի եղբայրը ու հաւատարիմ պաշ-
տօնեան Տէրոջմով. որ անիկա ատոր համար ձե- 22
զի խրկեցի, որ գիտնաք դուք մեր վրայովը, ու
ինքը ձեր սիրտերը մխիթարէ։

23 Խաղաղութիւն եղբայրներուն և սէր հաւատքով մէյտեղ Հօր Աստուծմէն, ու Տէր Յի-
24 սուս Քրիստոսէն: Շնորհք ամէնուն վրայ, որոնք որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ կըսիրեն.
ամէն:

Հռովմայէն գրվեցաւ Եփեսոսկիներուն՝ Տիւքիկոսին ձեռօվը:

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍ։

ԳԼ. Ա։

Պօղոս և Տիմոթէոս Յիսուս Ք֊րիստոսի ծա֊ 1
ռաները, Ք֊րիստոս Յիսուսով բոլոր սուրբ֊
ըերուն որ Փիլիպեցոց կողմերն են՝ եպիսկոպոս֊
ներով ու սարկաւագներով։ Շ֊նորհք ու 2
խաղաղութիւն ձեզի Աստուծմէ մեր Հօրմէն՝ ու
Տէր Յիսուս Ք֊րիստոսէն։

Իմ Աստուծմէս կը գոհանամ՝ ամէն անգամ՝ 3
ձեզ որ կը յիշեմ, (ամէն ատեն իմ՝ ամէն խնդրը֊ 4
վածքիս մէջ՝ ձեր ամէնուդ համար ուրախու֊
թեամբ աղօթք կընեմ,) ձեր՝ աւետարանին հա֊ 5
ղորդ ըլլալուն համար, առջի օրվընէ մինչև հի֊
մայ։ Աս բանին վրայ յոյս ունիմ՝ թէ ան որ 6
ձեր մէջը բարեգործութիւն սկսաւ նէ, մինչև
Յիսուս Ք֊րիստոսի օրը կրկատարէ. ինչպէս ին֊ 7
ծի ալ իրաւ կերևայ ձեր ամէնուդ վրայ ա֊ս բա֊
նը խորհիլ՝ ձեզ իմ սրտիս մէջը ունենալուս հա֊
մար իմ կապերուս մէջ, և իմ պատասխան տա֊
լուս, ու աւետարանը հաստատելուս մէջ, դուք

ամէնքդ հաղորդ էք ինծի ԵՂԾ շնորհքներուն ։
8 Վ կայ է ինծի Աստուած , որ ինչպէս փափաք ու-
նիմ ձեր ամէնուն վրայ Յիսուսի գու-
9 թովը ։ Եւ ան աղօթք կընեմ , որ ձեր սէրը
էվել էվելօք շատ ըլլայ գիտութիւնով ու բոլոր
10 իմաստութիւնով . որ դուք լաւը ընտրէք , որ ըլ-
լաք հաստատուն ու առանց դայթակղութեան
11 Քրիստոսի օրը . արգարութեան պտուղներով
լըցված Յիսուս Քրիստոսի ձեռքովը , Աստուծոյ
փառքին ու գովեստին համար ։
12 Կուզեմ որ գիտնաք ՚ղբայրներ , թէ իմ վրա-
յովս եղած բանները էվել էվելօք աւետարանին
13 յառաջդիմութեանը համար եկաւ . մինչև որ
իմ կապերս բոլոր պալատին մէջը՝ ու ուրիշ ա-
մէնուն ալ յայտնի եղան՝ ա՚ Քրիստոսի համար
14 են , և շատ ղբայրներուն Տէրոջմով . որոնք սիրտ
առին իմ կապերովս՝ էվելօք համարձակիլ Աս-
15 տուծոյ խօսքը խօսելու առանց վախի ։ Ոմանք
նախանձու ու հակառակութեան համար , ո-
մանք ալ յօժար կամքով Քրիստոս կը քարո-
16 զեն . ոմանք ալ սիրոյ համար . ինչու որ գիտեն
թէ ես աւետարանին համար պատասխան տալու
17 կեցեր եմ . ոմանք ալ հակառակութեան համար
Քրիստոս կըպատմեն , բայց չէ՚ թէ անկեղծու-
թիւնով . որ կրկարծեն նեղութիւններ բերել
18 իմ կապերուս վրայ ։ Ուայ ի՚նչ է աս . որ
կերպով ըլլայ նէ՚ թէ պատճառանքով մը և թէ
ճշմարտութիւնով , Քրիստոս կրպատմըվի . և ա-
սոր վրայ կրխնդամ , ու ուրախ ալ պիտի ըլ-
19 լամ ։ Ինչու որ գիտեմ թէ ասիկա իմ փրկու-
թիւնս պիտի ըլլայ ձեր խնդրուածքովը , ու Յի-
20 սուս Քրիստոսի Հոգիին պարգևովը , իմ ակն-
կալութեանս ու յոյսիս պէս , որ բանովի մը ա-
մօթ չըլլամ ես . հապա բոլորովին համարձա-
կութիւնով ինչպէս որ ամէն իիւրը անանկ հիմայ
ալ Քրիստոս իմ մարմինիս մէջ կըփառաւորի

թէ ապրելովս ու թէ մեռնելովս։ Ինչու որ 21
ինծի կեանք Քրիստոս է, ու մեռնիլը օգուտ։
Ըսպա թէ որ մարմինիս ապրիլը իմ գործիս 22
պտուղը ըլլալ է նէ, ալ ան չեմ գիտեր՝ որը ընտ-
րեմ։ Երկու կողմանէ ալ նեղութիւն ու- 23
նիմ. եւ լաւ ու Քրիստոսի հետ ըլլալու փա-
փաքիլը եվելօք ատկէ կրանպատ. և աս մարմինիս 24
մէջ կենալ մնալ՝ ձեզի համար շատ հար-
կաւոր։ Ու աս բանին վրայ յոյս ունենալով 25
գիտեմ՝ որ ես ձեր ամենուդ հետը պիտի կենամ
ու մնամ, որ դուք յառաջանաք և ուրախ ըլլաք
հաւատքով. որ ձեր պարծանքը իմ վրայովս
աւելի ըլլայ Քրիստոս Յիսուսով. երբոր ես 26
նորէն ձեզի գամ։

Միայն թէ Քրիստոսի աւետարանին իրաւը 27
կըվայլէ նէ անանկ գացէք. որ թէ գամ ու ձեզ
տեսնամ, և կամ հեռու ըլլամ, ալ ձեր
վրայով պիտի լսեմ, որ դուք հաստատուն կը
կենաքկոր մէկ հոգիով ու մէկ շունչով կրպա-
տերազմիքկոր աւետարանին հաւատքին համար.
և մէկ բանով մըն ալ մի՛ վախնաք ան հակառա- 28
կորդներէն, որ անոնց յայտնի նշան է կորըս-
տեան, ու ձեզի փրկութեան. և ատիկա Աստուծ- 29
մէն է, որ ձեզի տրվեցաւ Քրիստոսի համար՝ չէ՛
թէ միայն անոր հաւատալ, հապա անոր համար
չարչարվիլ ալ. ան պատերազմը ունենալով որ 30
իմ վրաս տեսաք, ու հիմայ ինծմէ կըլսէք։ Ուս- Ի
տի թէ որ Քրիստոսով մխիթարութիւն մը կայ,
թէ սիրոյ սիրտիանք մը, թէ Հոգիի հաղորդու- 2
թիւն մը, թէ գթութիւն և ողորմութիւն. իմ
ուրախութիւնս դուքլման ըրէք. նոյնը խորհեցէք,
մի և նոյն սէր ունենալ, մէկ շունչ, մէկ
միտածմունք. բան մը գրգռութիւնով ու բան մը 3
սնապարծութիւնով չ՛ ընէ. հապա խոնարհու-
թիւնով մէկերնիդ մէկալը ձեր անձէն եվել սե-
պեցէք. մինակ անձերնուդ շահը մի՛ նայիք, հա- 4

5 պա ամէն մէկը ընկերին ալ : Զեզմէ ամէն մէ-
կը նոյն միտքը թող ունենայ , որ Քրիստոս
6 Յիսուսի մէջն էր · որ Աստուծոյ կերպարանքը
ունենալով , չյափշտակելու բան մը չի սեպեց
7 Աստուծոյ հաւասար ըլլալը · հապա անձը ունայ-
նացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց
նման ըլլալով · և կերպարանքովը մարդու պէս
8 գտնուելով , ինքզինքը խոնարհեցուց՝ մինչև
մահուան հնազանդ եղաւ , ու՛ն ալ խաչին
9 մահուանը : Ասոր համար Աստուած ալ անիկա
էվելոք բարձրացուց , ու անոր անուն մը տուաւ՝
10 որ ամէն անուններէն վեր է · որ Յիսուս Քրիս-
տոսի անունին ամէն ծունկ չոքի , երկնաւորնե-
րուն ու երկրաւորներուն , և սանդարամետա-
11 կաններուն · և ամէն լեզու դաւանի թէ Յիսուս
Քրիստոս Տէր է՝ Հօր Աստուծոյ փառաւորու-
12 թեանը : Ալ ասկէ ետև իմ սիրելիներս՝ ինչպէս
ամէն կերպով հնազանդ եղաք՝ չէ թէ միայն իմ
ներկայիս եկած ատենս , հապա ալ էվելոք հիմայ
երբոր ձեզմէ հեռու եմ · աշխատ ու զգոյշ ան-
13 ձերնուդ փրկութիւնը գործեցէք · ինչու որ Աս-
տուած է որ ձեր մէջը կը յայտնէ կամելը ու ընե-
14 լը իր հաճութեանը համար : Ամէն բան առանց
15 տրտնջելու ու մրմնջալու ըրէք · որ ըլլաք ան-
բիծ ու անարատ Աստուծոյ որդիքը , առանց մե-
ղադրանքի կամապաշտ ու մոլորեալ ազգին մէջ ·
որոնց մէջը դուք լուսաւորներու պէս երևնաք
16 աշխարհիս մէջը · կենաց խօսքը վրանիդ ունենա-
լով՝ ինծի պարծանք ըլլալու համար Քրիստոսի
օրը , որ պարապ տեղը չի քալեցի , և դատարկ
17 տեղը չի աշխատեցայ : Հապց թէպէտ և ձեր
հաւատքին պատարագին ու պաշտօնին համար
ընծայուիմ , կրնդամ և ուրախ եմ ձեր ամէ-
18 նուն հետը · անանկ ալ դուք խնդացէք ու իմ
հետս ուրախ եղէք :
19 Միայն թէ կրնամ ես Տէր Յիսուսով , որ

Տիմոթէոսը չուտով ձեզի խրկեմ , որ իմ սիրտս
ալ հանգչի , երբոր ձեր վրայով բան մը իմա-
նալու ըլլամ : Ինչու որ անոր նման մէկ սիրտ
մէկը չունիմ , որ ընտանեաբար ձեզի համար
հոգ քաշէ : Ինչու որ ամէնը իրենցը կը փնտռե-
ուն , ու չէ թէ Յիսուս Քրիստոսինը : Բայց
անոր փորձը դուք ալ գիտէք , որ ինչպէս տղայ
մը հօրը՝ անոնք ինծի հետ ծառայութիւն ըրաւ
աւետարանին մէջ : Ուստի ասկէ կը յուսամ
խրկել , չուտ մը իմ ինչպես ըլլալս տեսնգածիս
պէս : Բայց յոյս ունիմ Տէրոջմով որ ես ալ
քիչ առնուեն պիտի գամ : Սիմայն թէ աղէկ
սեպեցի Հմայ ձեզի խրկել Եպափրոդիտոս եղ-
բայրը և գործիս ընկերը ու զինուորակիցս՝ ձեր
խրկածը ու իմ պէտք եղածիս ծառայողը :
Որովհետև ինքն ալ շատ փափաք ունի ձեր ա-
մէնուն ալ տեսնալու . ու հոգ կընէր , որ դուք
լսած էիք թէ ինքը հիւծընդացաւ : Եւ իրաւցնէ
ինքը հիւծընդացաւ մահուան մօտ , բայց Աստուած
ողորմեցաւ անոր . չէ թէ մինակ անոր՝ հապա ին-
ծի ալ , որ տրտմութիւն տրտմութիւնի վրայ չու-
նենամ : Ուստի արտապայտ խրկեցի անիկա , որ
դուք տեսնալով անիկա նորէն ուրախ ըլլաք . ու
ես աւանց տրտմութեան ըլլամ : Ընդունեցէք
անիկա Տէրոջմով ամէն խնդութիւնով , ու ա-
նանկները պատուականներու կարգը բռնեցէք . որ Տէրոջը գործին համար մինչև մահ
ուան մօտեցաւ իր կեանքը վտանգի դնելով , որ
ձեր ինծի ծառայելու պակսութիւնը ինքը լը-
ցունէ :

Գ.

Ուստի իմ եղբայրնե՛ր ուրախ եղէք Տէրոջ-
մով . ան նոյն բանը ձեզի գրել ինծի ձանձ-
րութիւն չէ , ու ձեզի շատ ապահովութիւն է :
Զգուշացէք ան շուներէն . զգուշացէք ան չար

մչակներէն. զգուշացէք ան կրճատատեղէն։
3 Ինչու որ թլփատութիւնը մենք ենք, որ Հո-
գիով Աստուած կըպաշտենք, ու կըպարծենանք
Քրիստոս Յիսուսով, և մարմինի վրայ չէ
4 պարծանքնիս։ Թէպէտ ես ալ ունի վստահու-
թիւնը ունիմ մարմինիս վրայ. թէ որ մէկը ու-
րիշ մը կարծէ թէ ուրիշ կերպ վստահութիւն ունենայ քան
5 մարմինին վրայ, ալ էվելօքը ես. ութ օրէն
թլփատված, Իսրայէլի ազգէն, Բենիամինի ցե-
ղէն, Եբրայեցի Եբրայեցիէ, օրէնքին նայելով
6 Փարիսեցի. նախանձաւոր ըլլալու կողմանէ ե-
կեղեցին կըհալածէի, օրէնքին արդարութեանը
7 կողմանէ անարատ ըլլալով։ Բայց ինչ որ ին-
ծի շահ էր նէ՝ անիկա Քրիստոսի համար վնաս
8 կրնեպեմ։ Այս ըսելը թանկն ալ վնաս կը
սեպեմ՝ Յիսուսի Քրիստոսի մեր Տէրոջը գե-
րազանց գիտութեանը համար. որուն համար
ամէն բանէն զրկուեցայ, և աղտեղութիւն կրսե-
9 պեմ, որ Ջայն Քրիստոս շահիմ, ու իր մէջը
գտնուիմ. չէ թէ օրէնքէ եղած իմ արդարու-
թիւնս ունենամ, հապա Քրիստոսի հաւատ-
10 քովը ան արդարութիւնը՝ որ Աստուծմէն է. հա-
ւատքով ճանչնալու անիկա և անոր յարութեան
զօրութիւնը՝ ու անոր չարչարանքին հաղորդ
ըլլալը, անոր մահուան կերպարանքը առնելու.
11 որ ըլլայ թէ մեռելներուն յարութեանը հաս-
12 նիմ։ Ոչ չէ իբր թէ ես հիմակուց ա-
ռեր եմ, կամ հիմակուց կատարեալ եղեր
եմ, հապա հաւէ ինկած եմ որ հաս-
նիմ. մանաւանդ թէ Յիսուս Քրիստոսէն ալ
13 բռնըված ըլլամ։ Եղբայրներ ես իմ անձս
չեմ սեպեր որ հասեր եմ. բայց մէկ բան մը կայ,
որ ետևի եղածներըը մոռցած եմ, ու առջևի ե-
14 ղածներուն ետևէն կերթամ. միտք դնելով
կրմագեմ դէպի Աստուծոյ կոչման կէտին հա-
15 ղիլը Յիսուս Քրիստոսով։ Ուստի զուբ ա-

մենք՝ որ կատարեալ էք, ասիկա մտմըտացէք,
և թէ որ ուրիշ մէկ բան մը խորհելու ըլլաք՝
անիկա ալ ձեզի պիտի յայտնէ Աստուած։
Սակայն թէ որ եանի որ մենք հասանք նէ՝ անիկա 16
մտմըտանք, ուսանկանոնին միաբանինք։ Նո- 17
ծին նմանող եղիք եղբայրներ, ու գիտեցէք ա-
նանկները որ ան ճամբովը կերթան, ինչպէս որ
մեզ ձեզի օրինակ ունիք։ Ինչու որ շատերը 18
կըքալեն, որ անոնց համար շատ անգամ ձեզի
կըսեի. և հիմայ լալով ալ կըզրուցեմ Քրիս-
տոսի խաչին թշնամիներուն համար. որ անոնց 19
վերջը կորուստ է. որոնց աստուածը իրենց փորն
է. ու անոնց փառքը իրենց ամօթն է. որոնք
միայն երկրաւոր բաներըը կըմտմտան։ Բայց 20
մեր կենցաղավարութիւնը երկինքն է. որ անկէց
Փրկիչին կըսպասենք՝ Տէր Յիսուս Քրիստոսին.
որ պիտի նորոգանէ մեր խոնարհ մարմինը իր 21
փառաւոր մարմինին կերպարանքին պէս ըլլալու,
ան զօրութիւնովը՝ որ կարող է իր տակը ա-
մենը հնազանդեցնելու։ Ուստի իմ սիրելի Ո-
ւ բաղձալի եղբայրնե՛րս, իմ ուրախութիւնս ու
պսակս. սանկ հաստատուն կեցէք Տէրոջմով
սիրելինե՛րս։

Եւոդիային կաղաչեմ ու Սինտիքին կաղա- 2
չեմ՝ որ խորհուրդնին մէկ ըլլայ Տէրոջմով։
Իրա՛ք քիզի ալ կաղաչեմ իմ հաւատարիմ՝ և 3
լուծի ընկերս, դուն ալ օգնական եղիր անոնց՝
որոնք որ իմ հետս աշխատեցան աւետարանին
մէջ Կղեմէսին ու ուրիշ իմ գործու ընկերնե-
րուս հետ, որոնց անուննները կենաց գրքին մէջն
է։ Ուրախ եղեք Տէրով ամէն ատեն. նորէն 4
կըսեմ՝ Ուրախ եղեք։ Ձեր հեզահոգի ըլլալը 5
ամէն մարդոց թող յայտնի ըլլայ. Տէրը մօտ է։
Ոչ մի՛ հոգաք. հապա ամէն աղօթքով ու 6
խնդրըվածքով՝ գոհութիւնով, ձեր խնդրված-
քը Աստուծոյ յայտնի ըլլայ։ Եւ Աստուծոյ 7

խաղաղութիւնը որ ամէն միտքէն վեր է՝ ձեր
սիրտերը ու միտքը Քրիստոս Յիսուսով պահ-
8 պանէ : Ուստի ալ եղբայրներ՝ ինչ որ ճշմար-
տութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով,
ինչ որ արդարութիւնով, ինչ որ սրբութիւ-
նով, ինչ որ սիրուն, ինչ որ բարի համբաւով,
ինչ որ քաջութիւնով, ինչ որ գովութիւնով,
9 ան բաները խորհեցէք : Ինչ որ սորվեցաք ու
առիք՝ և լսեցիք ու տեսաք իմ վրաս, ան ըրէք.
և խաղաղութեան Աստուածը ձեր հետն ըլլայ :
10 Շատ ուրախ եղայ ես Տէրոջմով, որ ալ
դուք մտմտացիք ինծի համար հոգ քաշելու. ինչ-
պես որ կը հոգայիք ալ, միայն թէ պատեհութիւն
11 չունէիք : Ո՛չ թէ կարօտութեան համար կը-
սեմ. ինչու որ ես սորվեցայ բաւական ըլլալ
12 անով որ կրնամ ունենալ : Գիտեմ պակսու-
թիւն քաշել, գիտեմ էվելօքը ըլլալ. ամէն տեղ
ամէն կերպով աղէկ հասկըցեր եմ, կըշտանալն
ալ, անօթեւնեան ալ, էվելօքը ըլլալն ալ, պակսու-
13 թիւն քաշելն ալ : Ամէն բանի կարող եմ անով՝
14 որ իս զօրացուց : Հայց աղէկ ըրիք, որ իմ նե-
15 ղութեանս մէջ ինծի հաղորդ եղաք : Գուք ալ
գիտէք Փիլիպեցիներ, որ աւետարանին սկիզբին
երբոր ես Մակեդոնիայէն ելայ, մէկ եկեղեցի
մըն ալ չհաս հաղորդութիւն չըրաւ տալու ու
16 առնելու համար. հապա մինակ դուք. որ Թես-
աղոնիկին մէջ ալ մէկ երկու հեղ ինծի պէտք
17 եղածը բերիք տըվիք : Ո՛չ թէ ես տուրք կըփըն-
տրեմ, հապա պտուղը կըփնտրեմ՝ որ ձեր
18 հաշիւին վրայ էվելնայ : Հայց ես ամէն բան
առած եմ ու էվելցած եմ. ընդունեցի Էպ-
ըփրոդիտոսին ձեռքովը՝ ու լըց-
վեցայ. որ ձեզմէ անուշ հոտ մըն է, ընդունելի
19 պատարագ՝ Աստուծոյ հաճելի : Եւ իմ Աստուածս
ձեր ամէն պիտոյքը լեցունէ՝ իր մեծութեան
չափովը՝ փառքով, Քրիստոսի Յիսուսի ձեռօո-

վը ։ Եւ Աստուծոյ ու մեր Հօրը փառք յաւի- 20
տեանս յաւիտենից . ամէն ։
Խարև տըվէք ամէն սուրբերուն՝ Քրիստոս 21
Յիսուսով ։ Ձեզի բարև կուտան իմ հետս և- 22
ղած եղբայրները ։ Ձեզի բարև կուտան բոլոր 23
սուրբերը . մանաւանդ անոնք որ կայսրին տու-
նէն են ։ Տէր Յիսուս Քրիստոսի շնորհ- 24
քը ձեր հոգիին հետ .
Ամէն ։

Լոռայէն գըվէցաս փիլիպեցիներուն՝ Եպաֆ-
րոդիտոսին յետովը ։

ՊՕՂՈՍ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ԹՈՒՂԹ ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼ. Ա.

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի առաքեալը Աստու-
2 ծոյ կամքով, և Տիմոթէոս եղբայրը. Կողո-
սացի սուրբ ու հաւատացեալ եղբայրներուն
3 Քրիստոսով. Շնորհք և խաղաղութիւն ձեզի
Աստուծմէ մեր Հօրմէն և Տէր Յիսուս Քրիս-
տոսէն.

Կը գոհանանք Աստուծմէ ու մեր Տէր Յի-
սուս Քրիստոսին Հօրմէն (ամէն իմիր ձեզի
4 համար աղօթքի կընեմ.) երբոր լսեցինք ձեր
հաւատքը՝ որ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջը
վրայ, և ան սէրը որ դէպի ամէն սուրբերուն
5 ունիք. ան յոյսին համար՝ որ երկինքը կրպահ-
ված ձեզի համար. որուն վրայով լսեցիք աւետա-
6 րանին ճշմարտութեան խօսքովը, որ ձեզի հա-
սաւ. ինչպէս որ բոլոր աշխարհի մէջ կաճիկոր՝
ու պտղաբեր կըլլայ, ինչպէս ձեր մէջն ալ. ան
օրվընէ որ դուք լսեցիք ու ճանչցաք Աստուծոյ
7 շնորհքը ճշմարտութիւնով. ինչպէս որ սոր-

վեցաք Եպափրաս սիրելիէն՝ մեր ծառայակրցին,
որ ձեզի համար հաւատարիմ պաշտօնեայ մըն է
Յիսուսի. որ ինքն ալ մեզի պատմեց ձեր սէրը 8
Հոգիով ։

Ասոր համար մենք ալ ան օրէնէն որ լսեցինք՝ 9
չենք դադարիր ձեզի համար աղօթք ընելէն
ու խնդրելէն զայն. որ կատարեալ
ունենաք անոր կամքը գիտնալը՝ բոլոր իմաստու-
թիւնով ու հոգևոր հանճարով. որ դուք Տէ- 10
րոյն արժանի ճանչնաք մէջ երթալ ամէն բանի
մէջ գնդուք համեցուելով, ամէն բարի գործքե-
րու մէջ պտղաբեր, ու աճեցնուն Աստուծոյ գի-
տութիւնովը. ամէն ուժով ուժացած՝ իր փա- 11
ռաւոր ուժին չափովը. ամէն բանի համբերելու
ու երկայնամիտ ըլլալու՝ ուրախութիւնով. գո- 12
հանալով Հօր Աստուծմէն, որ մեզ կանչեց լու-
սի մէջ ընտիր սուրբերուն վիճակին մասնակից
ըլլալու. որ մեզ խլեցնց խաւարին իշխանութե- 13
նէն, ու մեզ իր սիրելի Որդւոյն թագաւորու-
թեանը փոխեց. որ անով մենք փրկութիւն ու- 14
նինք իր արունովը, ու մեղաց թողութիւն իր
մարմինովը. որ ինքը աներևոյթ Աստուծոյ 15
պատկերն է՝ բոլոր ստեղծուածներուն առջինեկը.
ինչու որ անով ամէն բան հաստատուեցաւ, ինչ 16
որ երկինքը՝ ու ինչ որ երկրի վրայ, անոնք որ
կերևան՝ և անոնք որ չեն երևար, թէ աթոռնե-
րը՝ թէ տէրութիւնները՝ թէ պետութիւնները՝
թէ իշխանութիւնները, բոլոր բաները անով՝
ու անոր համար ստեղծվեցաւ. ու անիկա ամէն 17
բանէն առաջ է, և ամէն բանները անով կեցեր
է լլման. և անիկա է մարմնին այսինքն եկեղե- 18
ցիին գլուխը. որ ինքը սկիզբն է՝ մեռելներէն
առջինեկը, որ ինքը ըլլայ ամէն բանի մէջ նա-
խապատիւ. ինչու որ Հայրը ուզից որ Աստ- 19
ուածութեան բոլոր լեցուութիւնը անոր մէջը
բնակի. և անով ամէնը հաշտեցնել իրեն, 20

(խաղաղութիւն ընելով իր խաչին վրայ ջնջած արուեստովը,) անոնց որ երկրի վրայ են՝ ու ա-
նոնց որ երկինքն են :
21 Եւ ձեզ ալ՝ որ ատեն մը օտարական էիք, ու
22 չար գործքերով մտածմունքներ ձեր մտքովը. հի-
մայ ալ հաշտեցուց իր մարմինին անդամներովը՝
իր մահուամբը, որ ձեզ անոր դիմացը սուրբ
23 ու անբիծ և անարատ կայնեցունէ. թէ որ կե-
նաք հաւատքին մէջը արմատ կապած՝ ու հաս-
տատուած՝ և առանց խախտելու աւետարանին
յոյսէն՝ որ լսեցիք, որ երկինքին տակը եղած
բոլոր ստեղծուածներուն քարոզուեցաւ. որ ա-
24 նոր ես Պօղոս սպասաւոր եղայ: Ու ալ հի-
մայ ուրախ եմ իմ ձեզի համար չարչա-
րանքներուս վրայ, ու Քրիստոսի չաշած նե-
ղութիւններուն պակսութիւնը իմ մարմինիս
մէջը կըլեցունեմ՝ անոր մարմինին համար, որ է-
25 կեղեցին է. որուն ես Պօղոս սպասաւոր եղայ
Աստուծոյ տնտեսութիւնովը՝ որ ինծի տըրուեցաւ
ձեզի համար Աստուծոյ խօսքը կատարելու.
26 ան խորհուրդը որ ծածկուած էր յաւիտենական
դարերէն ու ազգերէն հետէ, որ հիմայ իր սուր-
27 բերուն յայտնըւեցաւ. որոնց ուզեց Աստուած
ցուցընել, թէ ի՞նչ է անոր խորհուրդին փառ-
քին մեծութիւնը հեթանոսներուն
մէջ. որ ան Քրիստոսն է ձեր մէջը՝ փառքին
28 յոյսը. որ անիկա մենք կըքարոզենք, ու ամէն
մարդիկ կըխրատենք, և կըսորվեցունենք ամէն
մարդիկ բոլոր հոգևոր իմաստութիւնով, որ
ամէն մարդ կատարեալ կեցունենք Քրիստոս
29 Յիսուսով. որուն համար կաշխատիմ ես պա-
տերազմ ընելով իր յաջողութիւնովը՝ որ զո-
րութիւնով ինծի կըյաջողուի :

Գ Լ. Ե.

Պ ուզեմ որ դիտնաք դուք՝ թէ ինչպէս նե- 1
ղութիւն ունիմ իմ վրաս ձեզի համար ու
Լաւոդիկեցոց համար , ու անոնց համար որ իմ
երեսս մարմինով չեն տեսեր , որ անոնց սիրտե- 2
րը միխիթարվին՝ սիրով տեղկանալով , ու կա-
տարեալ իմաստութեան բոլոր մեծութիւնովը
Հօր Աստուծոյ խորհուրդը գիտնալու Քրիս- 3
տոս Յիսուսով , որուն մէջը իմաստութեան ու
գիտութեան բոլոր գանձերը պահված են : Եւ 4
ասս կըսեմ , որ չըլլայ թէ մէկը խաբերայ խօս-
քերով ձեզ մոլորցունէ : Որ թէպէտ մարմնով 5
հեռու եմ՝ բայց հոգւով ձեզի հետ եմ . կըխընդ-
դամ երբոր ձեր կարգը կըտեսնամ , ու ձեր
հաւատքին հաստատութիւնը Քրիստոս Յի-
սուսի վըրայ : Ուստի ինչպէս որ ընդունեցիք 6
Քրիստոս Յիսուս Տէրը՝ անով գացէք . արմատ 7
կապած՝ ու անոր վրայ չինված՝ և հաւատքին
մէջ հաստատված՝ ինչպէս որ սորվեցաք , ասոր
մէջը եվըլցէք գոհութիւնով : Զգուշացէք՝ մէ- 8
կը չըլլայ որ ձեզ կողոպտէ փիլիսոփայու-
թիւնով ու փուճ խաբէութիւնով , որ մարդոց
աւանդութեան պէս է՝ ու աշխարհիս գաղա-
փարներուն պէս , և չէ՛ թէ Քրիստոսին
պէս . ինչու որ անոր մէջը կըբնակի Աստուա- 9
ծութեան բոլոր լեցնութիւնը՝ մարմնապէս :
Ու դուք ալ անով լցված էք . որ ինքը գլուխ է 10
բոլոր իշխանութեան ու պետութեան . ու անով 11
դուք հաւատքով թլփատվեցաք անձեռագործ
թլփատութիւնը , մարմնին անդամները մերկա-
նալով Քրիստոսի թլփատութիւնովը . թաղ- 12
վելով անոր հետը մկրտութիւնով , որ անով
ալ իր հետը յարութիւն առիք Աստուծոյ զո-
րութեանը հաւատալով , որ ինքը անիկա մեռել-
ներէն յարուց : Եւ ձեզ որ ատեն մէ մեղքի 13

մէջ ու ձեր մարմինին անթափառութեանը մէջ
մեռած էիք , կենդանացուց իր անձովը · մեր ա-
14 մէն յանցանքները ներեց մեզի · ու իր պատ-
ուհասնելովը եկած մեր հակառակութեան ձե-
ռագիրը , որ մեզի հակառակ կը կենար՝ ջնջեց ,
անիկա մէջ տեղէն վերցուց՝ ու խաչափայտին
15 վրայ գամեց : Իշխանութիւնները ու պետու-
թիւնները մերկացուց · բաց յայտնի խայտա-
ռակից յաղթելով անոնց իր անձովը՝ իր յա-
16 րութիւն առնելովը : Ուստի ալ մէկը ձեզ թող
չի դատէ ուտելու կամ խմելու՝ կամ տօներու
բաժանումնքներու , կամ ամսու գլուխներու
17 կամ շաբաթներու պատճառով · որ գալու բա-
ներուն շուքերն են · բայց մարմինը Քրիստոս
18 է : Ընդյայ որ մէկը ձեզ խաբէ · որ ուզէ խո-
նարհութիւնով ու հրեշտակներու կրօնքով չի
տեսած բաներուն ետևէն երթալ զուր տեղը , իր
մարմինին միտքովը փուճ տեղը հպարտանալով ·
19 և չի բռնէ ան գլուխը որմէն Քրիստոսը · ուս-
կից որ բոլոր մարմինը կապերով ու խաղերով
բաժնուված ու մէկ կապված Աստուծոյ աճու-
20 մովը կաճի : Եթէ որ դուք Քրիստոսի հետ աս
աշխարհիս սկզբունքներէն մեռաք նէ , ալ ին-
չո՞ւ համար աշխարհիս մէջը ողջերու պէս կրօ-
21 նաւորիք որ , ըսելով . Մի՛ մօտիկնար , մի՛ հա-
22 մը առնել , մի՛ դպչիր · (որ անոնց ամէնը աւեր-
մունք տալու համար են ,) մարդոց պատուիրան-
23 քին ու սորվեցուցածին պէս : Որ մէկ խնա-
յտութիւն մը կրսեպիսի իր կամքովը հնարված
կրօնքովը , ու խոնարհութիւնովը , և մարմինին
չի խնայելովը , ու պատիւ մը չի նայիլը մարմի-
նին պէտք եղածը լեցունելու :

ԳԼ. Գ։

ԹՈՒ ուր Քրիստոսի հետ յարութիւն առիք՝ անանկ է նէ վերի բաները փնտրեցէք, ուր որ Քրիստոս կը նստի Աստուծոյ աջ կողմը։ Վերի բաները մտածեցէք չէ՛ թէ ան որ աս երկրին վրայ է։ Ընչու որ դուք մեռաք ու ձեր կեանքը պահված է Աստուծոյ քովը Քրիստոսի հետ։ Հայց երբոր Քրիստոս ձեր կեանքը յայտնըվի, անատեներ դուք ալ անոր հետ փառքով պիտի յայտնըվիք։

Ուստի ձեր երկրաւոր անդամները սպանեցէք. մէկ դի ձգեցէք պոռնկութիւնը, պղծութիւնը, աղտեղութիւնը, չար բաներու ցանկութիւնը, ու ագահութիւնը՝ որ կռապաշտութիւն է. որ աս բաներուն համար Աստուծոյ բարկութիւնը անհաւատութեան որդիներուն վրայ կուգայ. որ անոնցմով կերթայիք դուք ալ մէկ ատեն մը, երբոր անոնց մէջը կապրէիք։ Ուստի մէկ դի թօթվեցէք դուք ալ ան ամէնը. բարկութիւնը, սրդողկութիւնը, չարութիւնը, հայհոյութիւնը, անպարկեշտ խօսքերը ձեր բերաններէն։ Իրարու սուտ մի՛ ըսուցէք. հին մարդը իր գործքերովը վրաններնուդ հանեցէք. և վրանիդ հագէք ան նորը որ գիտութիւնով նորոգված՝ իր Ստեղծողին պատկերին պէս. ուր ոչ Հրէան է, ոչ ալ Հեթանոսը, թլփատութիւնը, ու անթլփատութիւնը, բարբարոսը, Սկիւթացին, ծառան, ազատը. հապա Քրիստոս է ամէնը՝ և ամէնուն մէջը։ Ուստի ինչպէս Աստուծոյ ընտրեալները՝ սուրբերը ու սիրելիները՝ վրանիդ հագէք գութը, ողորմութիւնը, անուշութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, համբերութիւնը, իրարու ներելով, իրարու թողութիւն տալով՝ թէ որ մէկը մէկուն դէմ տրտունջ մը ունենայ. ինչպէս որ

Աստուած Քրիստոսով ձեզի թողութիւն տը-
14 ւաւ, անանկ ալ դուք: Եւ ասոնց ամէն բաներուն
վրայ սէրը հագէք, որ կատարելութեան կապն է.
15 ու Քրիստոսի խաղաղութիւնը ձեր սրտին մէջը
հաստատվի. որ դուք անոր կանչվեցաք մէկ
16 մարմինով. ու գոհացող եղիք. Որ Քրիստո-
սի խօսքը ձեր մէջը բնակի առատապէս՝ ամէն
իմաստութիւնով սորվեցունելու ու խրատելու
մէկզմէկ, սաղմոսներով և օրհնութիւններով,
ու հոգևոր երգերով և շնորհքով ձեր սրտին
17 մէջը Աստուած օրհնելու: Եւ բոլոր ինչ որ
կընէք խօսքով ու գործքով, ամէնը Տէր Յիսու-
սին անունովը ըրէք. գոհացող եղիք Աստուծմէ
ու Հօրմէն՝ անով:
18 Կնիկներ՝ հնազանդ եղիք ձեր էրիկներուն.
19 ինչպէս որ կըվայլէ Տէրոջմով: Էրիկներ՝
սիրեցէք ձեր կնիկները, ու հետերնին լեղի մի՛
20 վարվիք: Մըդիներ՝ ամէն բանի մէջ հնազանդ
եղիք ձեր ծնողքներուն. ինչու որ ան է Տէրոջը
21 առջևը հաճելի: Հայրեր՝ ձեր զաւկրները մի՛
22 բարկացունէք, որ չի տրտմին: Ծառաներ՝
ամէն բանի մէջ հնազանդ եղիք ձեր Տէրերուն.
չէ թէ աչքի առջև ծառայելով՝ մարդահաճո-
ներու պէս. հապա միամիտ սրտով Տէրոջմէն
23 վախնալով. ինչ որ կընէք՝ սրտանց ըրէք, որ-
24 պէս թէ Տէրոջը՝ ու չէ թէ մարդոց. գիտնաք որ
ձեր ժառանգութեան հատուցումը Տէրոջմէն
պիտի առնէք. ինչու որ Տէր Քրիստոսին կը
25 ծառայէք. բայց անօրէնը իր անօրէնութեանը
չափովը պիտի ընդունի. ինչու որ Աստուծոյ
Դառջևը աչառութիւն չի կայ: Տէրեր՝ ձեր ծա-
ռաներուն իրաւունքը ու հաւասարութիւնը
տըվէք. գիտցէք որ դուք ալ Տէր ունիք եր-
կինքը:
2 Աղօթքի նուիրէ եղիք. անոր մէջը արթուն
3 մնալով գոհութիւնով: Աղօթք ըրէք նաև մե-

զի համար . որ Աստուած խօսքի դուռ բանայ մեզի՝ Քրիստոսի խորհուրդը խօսելու համար . որուն համար որ ես կապված ալ եմ . որ յայտ- 4
նի ընեմ անիկա ինչպէս որ ինծի կըվայլէ խօ-
սել : Իմաստութեամբ վարվեցէք դուրսիններ- 5
ուն հետ , ժամանակը ծախու առնելով . Եւ 6
ձեր խօսքը ամէն իժիր Տէրոջը շնորհքովը լեցուն՝ որպէս թէ աղով համովցած ըլլայ . գիտնալով որ ինչպէս կըվայլէ ձեզի ամէն մէկուն պատաս-
խան տալ :

Ամէ ինչ որ իմ վրայօքս է բոլորը ձեզի կըցու- 7
ցընէ Տիւքիկոս սիրելի եղբայրը և հաւատարիմ պաշտօնեան ու ծառայակիցը Տէրոջմով . որ 8
զինքը անոր համար ձեզի խրկեցի , որ մեր վրա-
յովը գիտնաք , ու ձեր սիրտը մխիթարէ . Ընե- 9
սիմոս հաւատարիմ ու սիրելի եղբօրը հետ մէկ
ասեղ՝ որ ձեզմէ ՚ին է . իրենք ամէն բանը ձեզի
պիտի ցուցընեն՝ ինչ որ հոս կայ : Ներև կու- 10
տայ ձեզի Արիստարքոս՝ իմ գերուժիւնի ընկերս , և Մարկոսը Բառնաբասին եղբօրը տղան . (որուն համար պատուէր առիք՝ թէ ձեզի գալու ըլլայ նէ , ընդունեցէք անիկա .) և Յիսուսը՝ որ 11
Յուստոս ըսված է , որոնք որ թլփատվածներէն են . որ անոնք միայն ինծի գործակից եղան Աստուծոյ թագաւորութեանը մէջ . որոնք ինծի մխիթարանք ալ եղան : Ներև կուտայ ձեզի 12
Եպափրասը՝ Յիսուս Քրիստոսի ծառան , որ ձեզմէ ՚ին է . ամէն իժիր աղօթքի մէջ ձեզի համար պատերազմ ընելով , որ դուք կատարեալ ըլլաք՝ ու Աստուծոյ կամքին մէջ լման :
Իրեն համար ես կըվկայեմ , թէ շատ ջան- 13
ունի ձեզի համար՝ ու Լաւոդիկեցոց համար՝ և անոնց համար որ Յիերապոլիս են :
Ներև կուտայ ձեզի սիրելի Ղուկաս բժիշկն 14
ալ , ու Դեմասը : Ներև տըվէք եղբայրնե- 15
րուն՝ որ Լաւոդիկիա են , և Նիմփասին , ու ա-

16 նոր տանը մէջի եկեղեցիին : Եւ երբոր աս
թուղթը ձեր մէջը կարդացվի , լաւոդիկեացոց ե-
կեղեցիին մէջն ալ կարդացուցէք · և որ լա-
ւոդիկեցիներէն եկած ընդունիք դուք ալ կարդաք :
17 Եւ ըսէք Արքիպպոսին . Օգոյշ եղիր քու սպա-
սաւորութեանդ , որ Տէրոջմով առիր , որ ա-
18 նիկա կատարես : Ատ բարևը իմ ձեռքիս Պօ-
ղոսին է · իմ կապերըս միտքերնիդ թող
ըլլան : Շնորհքը ձեզի հետ .
Ամէն :

Առաքեալ գրեցաւ Կողոսացիներուն Տի-
քիոսին ու Ոնեսիմոսին
յԵրոմէ :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԼԻՆ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ՊԱՈՒ

ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ։

ԳԼ. Ա։

Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս . Թեսա- 1
ղոնիկեցւոց եկեղեցիին մեր Հայր Աստուծ-
մով՝ ու Տէր Յիսուս Քրիստոսով . Շնորհք 2
և խաղաղութիւն ձեզի .

Կըգոհանանք Աստուծմէ ամէն իժիր ձեր ամ-
նուն համար՝ անդադար յիշելով մեր ա-
ղօթքին մէջը . յիշելով ձեր հաւատքին գործը՝ ու 3
սիրոյ աշխատութիւնը և մեր Տէր Յիսուս
Քրիստոսի յոյսին համբերութիւնը , Աստուծոյ
ու մեր Հօրը առջևը : Գիտէք Աստուծմէ՛ սիր- 4
ւած եղբայրներ՝ ձեր ընտրութիւնը . որ մեր աւե- 5
տարանը չէ՛ թէ մինակ խօսքով եղաւ ձեզի , հա-
պա զօրութիւնով ալ՝ և Հոգւով Սրբով , ու
շատ կատարելութիւնով , ինչպէս որ գիտէք ալ ,
թէ ինտոր կեցանք ձեր մէջը ձեզի համար : Դուք 6
ալ մեզի ու Տէրոջը նմանելով՝ ընդունեցիք ան
խօսքը աւելի նեղութեան մէջ՝ Հոգւոյն Սրբոյ
ուրախութիւնովը . անանկ որ դուք օրինակ ե- 7

ղաք բոլոր հաւատացեալներուն՝ որոնք Մակե-
8 դոնիայի ու Աքայիայի մէջ են : Ինչու որ ձեզ-
մէ լսուեցաւ Աստուծոյ խօսքը . չէ թէ միայն
Մակեդոնիայի ու Աքայիայի մէջ , հապա ա-
մէն տեղ ձեր հաւատքը որ դէպի Աստուած է՝
տարածուեցաւ , անանկ որ ալ պէտք չէ մեզի
9 բան մը խօսիլ : Որ բուն անոնք կըպատմեն
մեզի համար , թէ ի՞նչպէս եղաւ մեր ձեր քովը
մտնալը , և ի՞նչպէս դուք ան կուռքերէն Աս-
տուծոյ դարձաք՝ կենդանի ու ճշմարիտ Աստու-
10 ծոյ ծառայելու . և սպասելու անոր Որդւոյն
երկինքէն . որ ինքը մեռելներէն յարուց անիկա՝
այսինքն Յիսուսը . որ պիտի խալըսէ մեզ գալու
բարկութենէն :

Գ·Ի·Ր :

1 Դուք ինքնիրենիդ գիտէք եղբայրներ մեր
մըտնալը ձեզի , թէ պարապ տեղը չեղաւ .
2 հապա առաջուց չարչարանք քաշելով ու անար-
գըվելով , ինչպէս որ դուք ալ գիտէք՝ Փիլիպե-
ցիներուն մէջ , համարձակութիւն ըրինք մեր
Աստուծովը՝ ձեզի պատմելու Աստուծոյ աւետա-
3 րանը մեծ պատերազմով : Ինչու որ մեր յոր-
դորանքը ո՛չ մոլորութենէ է , ու ոչ պղծութե-
4 նէ , և ոչ խաբեբայութիւնով . հապա ինչպէս
որ մենք Աստուծմէ ընտրըվելով հեզ աւետարա-
նը հաւատացուեցաւ նէ , անանկ ալ կըխօսինք , չէ՛
որ մարդոց հաճոյ ըլլանք , հապա Աստուծոյ՝ որ
5 մեր սիրտերը ինքը կըքննէ : Ինչու որ մենք
բնաւ շողոքորթելու խօսքեր չի գործածեցինք
ձեզի , ինչպէս դուք ալ գիտէք , և չէ՛ թէ ագա-
հութեան պատճառով՝ ինչպէս Աստուած ալ
6 կըվկայէ . և մարդոցմէ փառք չուզեցինք , ոչ ձեզ-
7 մէ , ոչ ալ ուրիշներէն : Կրնայինք՝ Քրիստոսի
առաքեալներու պէս ծանրութիւն տալ , բայց
մենք հեզ եղանք ձեր մէջը , ինտոր մէկ ծիծմայր

մը՝ որ իր զաւկըները կրմեծցունէ, անանկ ալ 8
մենք ձեր վրայ կրդթայինք. աղէկ կերևար մեզի
չէ՛ թէ միայն Աստուծոյ աւետարանը ձեզի տալ,
հապա մեր անձերն ալ. ինչու որ դուք մեր սի-
րելիները եղաք: Յիշեցէք եղբայրներ մեր աշ- 9
խատութիւնը ու ջանքը. որ գիշեր ու ցորեկ կը
գործէինք ձեզմէ մէկու մը ծանրութիւն չի տա-
լու համար, և ձեզի Աստուծոյ աւետարանը կը
քարոզէինք: Դուք ինքնիրեննիդ կրվկայէք, 10
Աստուած ալ, որ ինչպէս սրբութիւնով ու ար-
դարութիւնով և անարատութիւնով վարվե-
ցանք ձեզի հետ որ հաւատացիք. ինչպէս դուք 11
ալ գիտէք, որ ձեզմէ ամէն մէկդ՝ ինտոր հայր մը
իր զաւկըները՝ կըյորդորէինք ու կրմխի- 12
թարէինք. և վկայութիւն կրդնէինք որ դուք
Աստուծոյ վայլածին պէս երթաք, որ ինքը ձեզ
իր թագաւորութեանը ու փառքին կանչեց:
Ասոր համար մենք ալ Աստուծմէ կրդոհանանք 13
անպակաս, որ մեզմէ Աստուծոյ խօսքը լսելով
ընդունեցիք, չէ՛ թէ մարդոց խօսքին պէս, հա-
պա Աստուծոյ խօսքին պէս՝ ինչպէս որ ճշմարիտ
է, որ յաջողված ալ է ձեր մէջը որ հաւատացիք:
Ինչու որ դուք եղբայրներ նմանող եղաք Աս- 14
տուծոյ եկեղեցիներուն՝ որ Հրէաստանի մէջ
են Քրիստոս Յիսուսով. ինչու որ դուք
ալ չարչարվեցաք նոյն չարչարանքներովը
ձեր ազգականներէն, ինչպէս որ անոնք ալ
Հրէայներէն. որոնք որ Տէր Յիսուսն ալ 15
մեռուցին՝ մարգարէներն ալ. և մեզ հալա-
ծեցին, ու Աստուծոյ աչքէն ելան, ու բոլոր
մարդոց հակառակ եղան. և մեզ կարգիլէին Հե- 16
թանոսներուն խօսելու՝ որ փրկվին. որ իրենց
մեղքերը կատարեն ամէն ի՛ժիր. որովհետև բար-
կութիւնը անոնց վրայ հասեր է մինչև վերջը:
Բայց մենք եղբայրներ՝ իրաւ քիչ մը ատեն 17
ձեզմէ որբ մնացինք երեսով, ու չէ՛ թէ սիր-

տով · ալ Էվելոքը չանացինք ձեր երեսը տեսնա-
18 լու մեծ փափաքով : Այնոր համար ես Պօղոս
մէկ երկու անգամ՝ ուզեցի ձեզի գալ , բայց սա-
19 տանան մեզ արգիլեց : Ինչու որ ո՞վ է մեր
յոյսը , կամ ուրախութիւնը՝ կամ մեր պար-
ծանքին պսակը , թէ չէ՛ դուք Տէրոջմով՝ մեր
Տէր Յիսուս Քրիստոսի առկայ անոր գալուս ա-
20 տեն : Որովհետև դուք էք մեր փառքը և ու-
Գ րախութիւնը : Ուստի ալ չի կրնալով էվելի
համբերել , ադեկ երևցաւ մեզի միայնակ Աթէնքը
2 ձգել · Եւ Տիմոթէոս մեր եղբայրը ու Աս-
տուծոյ և Քրիստոսի Ջօրը աւետարանին գոր-
ծակիցը խրկեցինք ձեզ հաստատելու ու մխիթա-
3 րելու ձեր հաւատքին համար : Որ ասոնցմէ
թլիւններուն մէջ չի ձանձրանաք · ինչու որ
դուք ինքնիրենիդ գիտէք որ մենք ատոր յանձին
4 համար կեցեր ենք : Որովհետև երբոր մենք
ձեր քովն էինք՝ առաջուց ձեզի կըզուցէինք , թէ
նեղութիւններ պիտի հասնին մեր վրայ · ինչպէս
5 որ եղաւ ալ , ու գիտցաք : Ասոր համար ես
ալ որ չէի կրնար համբերել՝ խրկեցի ձեր
հաւատքը գիտնալու , որ չըլլայ թէ ան փորձո-
ղը ձեզ ալ փորձած ըլլայ · և մեր աշխատու-
6 թիւնը պարապ ըլլայ : Հայց հիմայ երբոր
Տիմոթէոս ձեզմէ մեզի եկաւ՝ ու ձեր հաւատքին
և սիրոյն աւետիսը մեզի տուաւ , որ ամէն ժամ
մեր բարի յիշատակը մնալընիդ ունիք · կրփա-
փաքիք մեզ տեսնալու՝ ինչպէս որ մենք ալ ձեզ ·
7 ասոր համար եղբայրներ՝ ձեր վրայ մխիթարվե-
ցանք բոլոր ձեր քաշած վիշտերուն ու նեղու-
8 թիւններուն վրայ՝ ձեր հաւատքովը · ինչու որ
հիմայ կենդանի ենք մենք · թէ որ դուք հաստա-
9 տուն կենաք Տէրոջմով : Ո՞նչ գոհութիւն
կրնանք մատուցանել Աստուծոյ ձեր վրայով՝ ան
ամէն ուրախութիւնին համար որ կուրախա-
նանք ձեզի համար մեր Աստուծոյ առջեւը ·

դիշեր ու ցորեկ էվելօք կաղաչեմ ձեր երեսը 10
տեսնալու, ու ձեր հաւատքին պակսութիւնը
հաստատելու։ Բայց ինքը Աստուած ու մեր 11
Հայրը՝ և մեր Տէրը Յիսուս Քրիստոս մեր
ճամբաները դէպի ձեզի յաջողէ։ Եւ ինքը 12
Տէրը աճեցունէ ու էվելցունէ ձեզ սիրով մէկ-
մէկու վրայ՝ ու ամէնուն վրայ, ինչպէս մենք ալ
ձեր վրայ. հաստատելով ձեր սիրտը անարատ՝ 13
սրբութեան մէջ Աստուծոյ և մեր Հօրը առջևը՝
մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի գալուն ատենը՝
իր բոլոր սուրբերուն հետ մէկտեղ։

Գ Լ. Գ։

Ասկէ ետև եղբայրնե՛ր, ձեզի կաղաչենք՝ ու 1
կըյորդորենք Քրիստոս Յիսուսով. որ ինչ-
պէս մեզմէ առիք՝ թէ ինտոր պէտք է ձեզի եր-
թալ ու Աստուծոյ հաճոյ ըլլալ. ինչպէս որ
կերթաքկոր ալ, որ անանկ ալ էվելօքը անոր
մէջը շատնաք։ Եւ գիտէք թէ ինչ պատուէր- 2
ներ տըվինք ձեզի Տէր Յիսուսով։ Ինչու որ 3
Աստուծոյ կամքը ա՛ս է այնինչ՝ ձեր սուրբ ըլ-
լալը, որ մէկ դի կենաք դուք պոռնըկութենէն.
ձեզմէ ամէն մէկերնիդ գիտնայ իր ամանը սրբու- 4
թիւնով ու պատիւով ստանալ. չէ՛ թէ ցան- 5
կութեան ախտերով՝ ինչպէս ուրիշ Հեթանոս-
ները՝ որոնք չեն ճանչնար Աստուած. չըլլայ որ 6
ատ բանին մէջը չափէ անցնի ու զրկանք ընէ Տէ-
րէ իր եղբօրը. ինչու որ Տէրը ատ բոլոր բանե-
րուն վրայ վրէժխնդիր է. ինչպէս առաչուց
ըսինք ձեզի, ու վկայութիւն դրինք։ Ինչու 7
որ Աստուած մեզ պղծութեան չի կանչեց, հա-
պա սուրբ ըլլալու։ Ուստի ան որ կանարգէ՛ չէ՛ 8
թէ անիկա մարդ մը կանարգէ, հապա Աստ-
ուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ ձեզի տըւաւ։
Բայց եղբայրսիրութեան համար պէտք չէ՛ 9
ձեզի դրելու. ինչու որ դուք ինքնիրենիդ

10 Աստուծմէ սորված էք մէկզմէկ սիրել · որով-
հետև ատ բանը կընէք դուք բոլոր եղբայրնե-
րուն՝ որոնք որ Մակեդոնացոց ամէն կողմերը
են : Կաղաչեմ՝ ձեզի եղբայրներ՝ որ ալ էվելօք
11 շատնաք ու առատ ըլլաք · խաղաղ կենաք , և
ամէն մէկը իր գործը բանի , ու ձեր ձեռքերովը
գործէք , ինչպէս որ ձեզի ապրսպըրեցինք , որ
դուրսիններուն հետը պարկեշտութեամբ վար-
վիք · ու ոչ մէկ բանով մը կարօտութիւն չի
քաշէք :
12 Ձեմ ուզեր եղբայրներ՝ որ տգէտ ըլլաք
ննջեցեալներուն վրայով · որ չի տրտմիք ինչ-
13 պէս ուրիշները՝ որոնք որ յոյս չունին : Ան որ
կրհաւատանք որ Յիսուսը մեռաւ ու յարու-
թիւն առաւ . անանկ ալ Աստուած Յիսուսով
14 ննջեցեալները պիտի բերէ անոր հետ : Ապց
ասկզըսուցենք Տէրոջը խօսքովը , թէ մենք որ
ողջ մնացած ենք Տէրոջը գալուն ատենը ննջե-
15 ցեալներուն չենք հասնիր : Ինչու որ ինքը
Տէրը հրամանով հրեշտակապետին ձայնովը ու
Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնայ , և
Քրիստոսով մեռելները առաջ յարութիւն
16 պիտի առնեն : Ետքը մենք ալ որ ողջ մնացած
ենք՝ անոնցմով միասին պիտի յափշտակինք
ամպով Տէրոջը առջևը օդին մէջը . և անանկ ա-
17 մէն իժիր Տէրոջը հետ պիտի ըլլանք : Ուստի
մէկզմէկ մխիթարեցէք ասխօսքերովը :

ԳԼ. Ե:

1 Բայց ան ժամերուն ու ժամանակներուն հա-
մար եղբայրներ , պէտք չէ՛ ձեզի բան մը
2 գրել · որ դուք ինքնիրէննիդ աղէկ գիտէք թէ
Տէրոջը օրը գիշերվան գողի պէս անանկ կը
3 հասնի : Երբոր ըսելու ըլլան թէ խաղաղու-
թիւն ու ապահովութիւն է , ան ատենը յան-
կարծակի անոնց վրայ պիտի հասնի սատկիլը ,

ինչպէս ծոցվորին ցաւը , ու չի պիտի խալըսին :
Հայց դուք եղբայրնե՛ր՝ խաւարի մէջ չէք , որ 4
ան օրը գողի մը պէս ձեր վրայ հասնի . ինչու որ 5
դուք ամէնքնիդ լուսոյ որդիք էք , ու ցորեկվան
որդիք . գիշերվան չենք , խաւարինը չենք : Ա- 6
նանկ է նէ քունի վրայ չկ՚ինանք՝ ինչպէս որ ու-
րիշները , հապա արթուն ու զուարթուն ըլ-
լանք : Ինչու որ անոնք որ կը քնանան՝ գիշերը 7
կը քնանան . և անոնք որ կ՚արբենան՝ գիշերը
կ՚արբենան : Հայց մենք որովհետև ցորեկվան 8
ենք՝ արթուն ըլլանք , և հաւատքին ու սիրոյն
զրահները վրանիս հագնինք , ու փրկութեան
յուսոյն սաղաւարտը գլուխնիս դընենք : Ինչու 9
որ Աստուած մեզ բարկութեան համար չի
դրաւ , հապա կենդանութեամբ փրկվելու մեր
Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը . որ ինքը մե- 10
զի համար մեռաւ . որ եթէ արթուն ըլլանք և ե-
թէ քնանանք , իր հետ միկտեղ ապրինք :
Ընոր համար միմեանց մխիթարեցէք , ու իրար 11
շինեցէք , ինչպէս որ կընէք ալ :
Կաղաչեմ ձեզի եղբայրնե՛ր . որ ճանչնաք ձեր 12
աշխատաւորները ու վերակացուները Տէրոջմով ,
ու ձեզի խրատ տրվողները . և անոնք էվելօք սի- 13
րելու արժանի սեպեցէք՝ իրենց գործքին հա-
մար . միմիկու հետ խաղաղութիւն ըրէք :
Կաղաչեմ ձեզի եղբայրնե՛ր՝ անառակները խրա- 14
տեցէք , անհամբերները մխիթարեցէք , տկա-
ներուն պաշտպան եղէք , ամէնուն ալ համ-
բերող եղէք : Ոչ-ոյ եղէք՝ չըլլայ որ մէկը 15
չարին փոխ չարիք հատուցանէ . հապա ամէն ա-
տեն բարի բաներուն նաևէն եղէք միմիկու հետ ,
ու ամէնուն հետ : Ամէն ժամ ուրախ եղէք : 16
Ընդհատ աղօթք ըրէք : Ամէն բանի մէջ գո- 17
հութիւն տրվէք . ինչու որ ա՛յս է Աստուծոյ 18
կամքը Քրիստոս Յիսուսով ձեր վրայ : Հո- 19
գին մի՛ մարէք : Մարգարէութիւնները մի՛ 20

21 անարգէք: Ամէն բան փորձեցէք, աղէկը
22 ընդունեցէք: Ամէն գէշ բաներէն նա կեցէք:
23 Եւ ինքը խաղաղութեան Աստուածը ձեզ բո-
լորովին սուրբ ընէ, ու ձեր բոլոր հոգին և
շունչը ու մարմինը անարատ պահվի մինչև մեր
24 Տէր Յիսուս Քրիստոսի գալուստը: Հա-
ւատարիմ է ան որ ձեզ կանչեց · որ ինքը պիտի
ընէ՛ ալ անիկա:
25 Եղբայրներ աղօթք ըրէք մեր վրայ ալ:
26 Ողջոյն տրվէք բոլոր եղբայրներուն սուրբ համ-
27 բուրով: Կերդմընցունեմ ձեզ Տէրոջը վրայ,
որ ատ թուղթը բոլոր սուրբ եղբայրներուն առ-
28 ջև կարդաք: Մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսի շնորհքը ձեր հետը ըլլայ ·
Ամէն:

Ա- ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ԱՂՈՒՆԻ
ԳՐՎԵՑԱՒ:

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԱՌ

ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ։

ԳԼ. Ա։

Պօղոս և Սիղուանոս ու Տիմոթէոս. Թեսա- 1
ղոնիկեցոց եկեղեցիվդ մեր Հայր Աստուծով՝
ու Տէր Յիսուս Քրիստոսով. Շնորհք և խա- 2
ղաղութիւն ձեզի Աստուածմէ մեր Հօրմէն ու
Տէր Յիսուս Քրիստոսէն։

Պէտք է որ ամէն ատեն Աստուածմէ գոհանանք 3
ձեզի համար՝ եղբայրնե՛ր, ինչո՛ր որ կրվայէ
ալ. ինչու որ ձեր հաւատքը շատ կվիւլք կաճի-
կոր, և ձեր ամէն մէկուն սէրը իրարու վրայ կը
շատնայկոր. անանկ որ մենք ալ ձեզմով կը 4
պարծենանք Աստուծոյ եկեղեցիներուն մէջը ձեր
համբերութեանը ու հաւատքին համար բոլոր
ձեր հալածանքներուն ու նեղութիւններուն
մէջ, որոնց որ դուք կրհամբերէք. որ է Աստու- 5
ծոյ արդար դատաստանին օրինակը. որ դուք
արժանի ըլլաք Աստուծոյ թագաւորութեանը,
որուն համար ատ նեղութիւնը կրքաշէքկոր. որ 6
Աստուծոյ առջևը իրաւունք է ձեզի նեղութիւն

7 տրվողներուն նեղութիւն հատուցանել. և ձեզի նեղութիւն քաշողներուդ մեզի հետ հանդիստ՝
մեր Տէր Յիսուսի երկինքէն յայտնըվելու
8 ատենը իր զօրաւոր հրեշտակներովը. բոլբոջած կրակով վըէժ առնելու անոնցմէ՝ որոնք Աստուած չեն ճանչնար, և որ մեր Տէր Յիսուս
9 Քրիստոսի աւետարանին չեն հնազանդիր. որոնք պիտի պատժըվին յաւիտենական սատակումով՝ Տէրոջը երեսէն ու անոր զօրութեան
10 փառքէն. երբոր ինքը պիտի գայ փառաւորվելու իր սուրբերուն մէջը, և հիանալի ըլլալու բոլոր հաւատացեալներուն մէջը՝ (ինչու որ մեր վկայութիւնը հաւատարիմ եղաւ ձեր վրայ) ան
11 օրը: Ուստի ալ ամէն իժիր ձեզի համար աղօթք կընենք. որ մեր Աստուածը ձեզ արժանի ընէ ձեր կոչումին, մինչև որ իր բարութեան բոլոր հաճութիւնը կատարէ, և հաւատքին գործքերը զօրութիւնով. որ մեր Տէր Յիսուս Քրիստոսին անունը փառաւորվի ձեր մէջը, և դուք ալ անոր մէջ մեր Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսին շնորհքովը:

ԳԼ. Բ:

1 Կաղաչեմ ձեզի եղբայրներ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալստեանը՝ ու մեր անոր քովը
2 ժողվըվելուն համար, չըլլայ որ դուք շուտ մը խախտիք ձեր միտքէն, ու չըլլայ որ զարհուրիք՝ ոչ հոգիով ու ոչ խօսքով, ոչ ալ թուղթերով իբր թէ մեզմէ գրված. որպէս թէ Տէրոջը օրը
3 եկած հասած ըլլայ: Չըլլայ որ մէկը ձեզ խաբէ մէկ բանով մըն ալ. ինչու որ ան օրը չի պիտի գայ թէ որ ապստամբութիւնը առաջ չի գայ, ու յայտնըվի անօրէնութեան Մարդը՝ կորըս-
4 տեան Որդին, ան Հակառակորդը հպարտացած ամէնուն վրայ՝ որ Աստուած կըսվի՝ կամ կըպաշտըվի, մինչև ինքը Աստուծոյ տաճարին մէջ

պիտի նըսեմ , և ինքըզինքը ցուցընէ Թէ Աստ-
ուած է : Ձեզ մի հիշեր՝ որ երբ ձեր քովն 5
էի ասիկա կըսէի : Եւ հիմայ դուք ինքներդն- 6
նիդ գիտէք ինչ է ան որ կըխափանէ , որ ինքը
իր ատենին յայտնըվի : Ինչու որ անօրէնու- 7
թեան խորհուրդը հիմակվընէ կըզօրանայկոր .
բայց ան որ հիմայ կըխափանէ՝ պիտի խոփանէ
մինչև ան ատենը որ միջ տեղէն վերնայ : Եւ 8
ետքը պիտի յայտնըվի ան անօրէնը . որ Տէր
Յիսուսը իր բերնին հոգւովը պիտի սատկեցունէ
անկա , ու իր գալուն յայտնըվելովը պիտի փը-
ճացունէ ան՝նիկ . որուն գալը սատանային ազդե- 9
ցութիւնովն է՝ բոլոր զօրութիւնով ու նշաններ-
ովը ու սուտ հրաշքներով , և կորուսեալներն- 10
րուն վրայ բոլոր անիրաւութեան խաբէութիւն-
ներով . անոր համար որ՝ անոնք ճշմարտու-
թեան սէրը չընդունեցին որ ապրին , ու ան 11
պատճառովը պիտի խրկէ անոնց Աստուած ու-
ժով մոլորութիւն մը՝ որ սըտութիւնէն հաւա-
տան . որ ամէնն ալ դատապարտըվին որոնք որ
չի հաւատացին ճշմարտութեան , հապա անօ-
րէնութեան յօժարեցան :
Բայց մեզի պէտք է ամէն ժամը Աստծմէ գո- 12
հանալ ձեզի համար՝ Տէրոջը սիրելի՛ եղբայրնե-
րը . ինչու որ Աստուած առաջուց մեզ ընտրեց
փրկըվելու Հոգիին սրբելովը ու ճշմարտու-
թեան հաւատքովը . որ անոր ձեզ կանչեց մեր 13
աւետարանելովը մեր Տէր Յիսուս Քրիստոսի
փառքը պաշտելվ փրկըվելու :
Ուստի եղբայրնե՛ր՝ հաստատ կեցէ՛ք , ու պինդ 14
բռնեցէ՛ք ան աւանդութիւնները որ սորվեցաք ,
Թէ խօսքով ու Թէ մեր Թուղթովը : Բայց ին- 15
քը մեր Տէր Յիսուս Քրիստոսը՝ ու Աստուած
մեր Հայրը , որ մեզ սիրեց՝ ու յաւիտենական
մխիթարութիւն տըւաւ մեզի՝ և բարի յոյս
շնորհըվ , ձեր սիրտերը մխիթարէ՛ ու հաստա- 16
տէ՛ ամէն բարի խօքերու և գործքերու մէջ :

ԳԼ · Գ։

1 Ասաի՛ եղբայրներ՝ աղօթք ըրէք մեր վրայ , որ
Տէրոջը խօսքը յառաջանայ , և ամէն տեղ
2 փառաւոր ըլլայ , ինչպէս որ ձեր մէջը · որ ա-
3 նօրէն ու անըզգամ մարդիկներէն խալսնինք ·
ինչու որ ամէնքը հաւատք չունին ։ Բայց Տէ-
4 րը հաւատարիմ է , որ ձեզ պիտի հաստատէ
ու չարէն ալ պահէ ։ Ձեր վրայ յոյս ունինք
5 Տէրոջմով , թէ ինչ որ ձեզի պատուիրեցինք
նէ կընէքկոր՝ ու պիտի ընէք ալ ։ Եւ Տէրը
ձեր սիրտերը չնոհէ՝ դէպ ի Աստուծոյ սիրոյն ու
Քրիստոսի համբերութեանը ։
6 Կպատուիրեմ՝ ձեզի եղբայրներ՝ մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի անունովը , որ հետ քաշուիք ան
ամէն եղբայրներէն՝ որոնք անկարգութիւ-
նով կերթան , ու չէ՝ թէ ան աւանդութեանը
7 պես որ մեզմէ առիք ։ Ինչու որ դուք ինքնի-
րենիդ գիտէք որ ձեզի ինչպէս պետք է մեզի
նման ըլլալ · ինչու որ մենք քնաւ ձեր հետը ան-
8 կարգութիւնով չի վարուեցանք · ոչ ալ մէկուն
հացը ձրի կերանք · հապա չանքով , և աշխա-
տանքով գիշեր ու ցորեկ կըզատեինք՝ ձեզմէ մէ-
9 կու մը ծանրութիւն չի տալու համար · չէ՝ թէ
որ մենք իշխանութիւն չունէինք , հապա որ ան-
ձերնիս ձեզի օրինակ ընենք՝ մեզի նման ըլլալու ։
10 Վ՞ասն զի երբոր մենք ձեր քովն էինք՝ աս ձեզի
կըպատուիրէինք , թէ ան որ չուզեր գործ գոր-
11 ծել , հաց ալ թող չուտէ ։ Բայց հիմայ կը լը-
սենքկոր ձեզմէ մէկքանիներուն համար՝ որ ան-
կարգութիւնով կերթան · գործ մը չեն գոր-
ծեր , հապա ծոյլ հետաքրքիր կըպըտրտին ։
12 Ընանկներուն պատուէր կուտանք՝ ու կաղա-
չենք Տէր Յիսուս Քրիստոսով , որ հանգարտու-
13 թեամբ գործեն , և իրենց հացը ուտեն ։ Բայց
դուք եղբայրներ՝ մի՛ ձանձրանաք բարիք գոր-

ձևէն : Բայց թէ որ մէկը չի հնազանդիր մեր 14
խօսքին ատ թուղթովը , դուք նշան դրէք անոր .
ու անոր հետը մի՛ խառնըվիք , որ ամչնայ :
Բայց չըլայ թէ թշնամի պէս սեպէք անիկա . 15
հապա եղբօր պէս խրատեցէք : Եւ ինքը խա- 16
ղաղու թեան Տէրը՝ ձեզի խաղաղու թիւն տայ ամէն
ատեն ամէն բաներու մէջ . Տէրը ձեր ամէնուդ
հետը :
Ես ողջոյնը իմ Պօղոսիս ձեռքինն է , որ ամէն 17
թուղթերուն մէջ նշան է . ասանկ կըգրեմ :
Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը 18
ձեր ամէնուն հետը .
Ամէն :

Ա- ԹԷՈՍԱՂՈՆԻԿԷՈՑ Երկրորդ (ԸՆԴՐԸ) ԸՆԴՀԱՆ
ԳՐՈՒԹԻՒՆ :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԱԼԻՆ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹԸ ԱՌ

ՏԻՄՈԹԷՈՍ։

ԳԼ. Ա։

Պօղոս Յիսուսի Քրիստոսի առաքեալ՝ մեր
Փրկիչ Աստուծոյ հրամանովը ու Յիսուս
2 Քրիստոսի՝ որ է մեր յոյսը. Տիմոթէոսի՝ իմ սի-
րելի որդիիս հաւատքով. շնորհք՝ ողորմու-
թիւն՝ խաղաղութիւն Հօր Աստուծմէն՝ և մեր
Տէր Յիսուս Քրիստոսէն։
3 Ինչպէս որ քեզի աղաչեցի Եփեսոս մնալու,
երբոր ես Մակեդոնիա կերթայի. որ պատուի-
րես մէկ քանիներուն օտար ուսմունք չի սոր-
4 վեցունել, և առասպել զրոյցներու չի նայել,
ու անթիւ ցեղահամարներուն. որոնք հվելօք
վէճեր կըհանեն, ու չէ թէ Աստուծոյ մատակա-
5 րարութիւնը որ կըլայ հաւատքով։ Ինչու որ
պատուիրանքին գլուխը սէրն է՝ սուրբ սրտով
6 ու բարի միտքով և անկեղծ հաւատքով. ո-
րոնցմէ մէկ քանիները մոլորեցան՝ փուճ բաներու
7 ետև գացին. օրէնքի վարդապետ ըլլալ կուզեն.
բայց իրենք չեն հասկընար ինչ որ կըխօսին, ոչ

ալ ան բաները՝ որոնց համար ոտք կը կոխեն :
Գիտենք որ օրէնքը աղէկ է , թէ որ մէկը անիկա 8
ըստ օրինաց գործածելու ըլլայ : Հայց աս 9
թող գիտնայ՝ որ արդարներուն համար չէ օ-
րէնքը , հապա անօրէններուն համար ու ան-
հնազանդներուն , ամբարիշտներուն և մեղաւոր-
ներուն , անմաքուրներուն և պիղծերուն ,
հայր ու մայր անարգողներուն , մարդասպաննե-
րուն , պոռնիկներուն , արուադէտներուն , 10
մարդգողցողներուն , սուտերդում ընողներուն , և թէ որ ուրիշ բան մը
կայ հակառակ ողջամիտ վարդապետութեանը . որ 11
երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանին պէս
է . որուն ինծի հաւտացուեցաւ : Շնորհակալ եմ 12
անոր՝ որ իս զօրացուց այսինքն մեր Տէր Յիսուս
Քրիստոսին . որ հաւատարիմ սեպեց զիս՝ սա-
սաւորութեանը դնելու . որ առաջուց հայհոյիչ 13
էի՝ ու հալածող ու վնաս տրվող . բայց ողոր-
մութիւն գտայ , ինչու որ անիկա չի գիտնալով
ու անհաւատութեան մէջ կրնէի : Եւ մեր Տէ- 14
րոջը շնորհքը եվելօք եղաւ ինծի հաւատքով ու
սիրով՝ որ Քրիստոս Յիսուսով է : Ա՛ս խօսքը 15
ճշմարիտ է՝ ու բոլորովին ընդունելութեան ար-
ժանի . որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մե-
ղաւորները փրկելու . որոնց գլուխը ես եմ :
Հայց անոր համար ողորմութիւն գտայ , որ 16
պինտ առաջ Յիսուս Քրիստոս իմ վրաս ցուցը-
նէ բոլոր համբերութիւնը՝ օրինակ ըլլալ ա-
նոնց որ պիտի հաւատային իրեն՝ յաւիտենական
կեանքին համար : Հայց ան յաւիտենական 17
թագաւորին՝ չաւրըվելու ու չի տեսնըվելու , ան
մէկ Աստուծոյ փառք ու պատիւ յաւիտեանս
յաւիտենից . ամէն :
Ա՛ս պատուէրը կուտամ քեզի իմ որդեակս Տի- 18
մոթէոս , քու վրայովդ առաջուց եղած մարգա-
րէութիւններուն պէս , որ դուն անոնցմով պա-

19 տերազմիս ան գովելի պատերազմը. հաւատք
ունենցիր մաքուր խղճմտանքով. որ մէկ քանին
ան հաւատքը իւրենցմէ մէկդի ձգելով՝ նաւակո-
20 ծուելիւն քաշեցին հաւատքին մէջը. որոնց համ-
բանքէն են Հիմենոսը ու Ալեքսանդրոսը. որոնք
ես Սատանային մատնեցի, որ սորվին հայհոյա-
լիւն չընել:

Գ.Ի. Ե.

1 Ուստի կաղաչեմ ամէն բանէն առաջ՝ աղօթք
ընել, խնդրուած, աղաչանք, գոհութիւն
2 ամէն մարդոց համար, մանաւանդ թագաւորնե-
րուն և բոլոր իշխանութեան համար. որ խաղա-
ղութիւնով ու հանդարտութիւնով վարենք մեր
կեանքը՝ բոլորովին աստուածպաշտութիւնով ու
3 սրբութիւնով: Ինչու որ ան է աղեկը ու ըն-
դունելին մեր Փրկիչ Աստուծոյն առջեւը. որ
4 կուզէ թէ ամէն մարդիկ փրկուին ու ճշմար-
5 տութիւնը ճանչնալու գան: Ինչու որ մէկ
Աստուած մը կայ, ու մէկ միջնորդ մը Աստու-
ծոյ ու մարդոց մէջը՝ Յիսուս Քրիստոս մարդը.
6 որ իր անձը ամէնուն տեղը ազատչէք տուաւ՝ իր
7 ատենին վկայութիւն ըլլալու: Ուր ես անոր
քարոզիչ ու առաքեալ դրուեցայ. ճշմարիտ կը-
սեմ Քրիստոսով՝ և սուտ չեմ խօսիր, Հեթա-
նոսներուն վարդապետ եղայ հաւատքով ու ճշըշ-
8 մարտութիւնով: Կուզեմ որ երիկ մարդիկ ա-
մէն տեղ աղօթք ընեն, սուրբ ձեռքերնին վեր վեր-
ցունելով առանց բարկութիւնի ու երկմտութիւ-
9 նի: Նմանկ ալ կընձիկները խոնարհութեան զար-
դով, ամօթխածութիւնով ու պարկեշտութիւ-
նով ինքզինքնին զարդարեն, չէ թէ ոսկիէ մանւ-
ածք՝ մարգարիտով շարված հուսամանեներով՝
10 կամ զարդարված հանդերձներով. հապա բարի
գործքերով՝ ինտոր որ կըվայլէ Աստուածպաշ-
տութիւնը անձերնին ունող կինիկներուն:

կնիկ մարդը թող սորվի՝ խոնարհութիւնով՝ ա- 11
մենայն հնազանդութիւնով ։ Ասայ կնիկ մար- 12
դու հրաման չեմ տար սորվեցունելու, ոչ ալ
երիկ մարդէն աւելի խօսքի տէր ըլլալ · հապա
լուռ կենալ ։ Պատճառն որ՝ առաջ Ադամը 13
ստեղծվեցաւ, ու ետքը Եւան ։ Եւ Ադամը չի 14
խաբվեցաւ, հապա կինը խաբվեցաւ՝ ու մեղք
գործեց · միայն թէ պիտի ապրի անիկա որդե- 15
ծնութեամբ, թէ որ կենան հաւատքի ու սիրոյ ու
սրբութեան մէջ պարկեշտութիւնով ։

Գ.

Ա խօսքը ճշմարիտ է, թէ որ մէկը եպիս- 1
կոպոսութեան կըցանկայ՝ աղէկ գործի կը
ցանկայ ։ Ա՛ռաջ պէտք է եպիսկոպոսին անարատ 2
ըլլալ, մէկ կնկան մը երիկ, հեզ, խոնարհ,
պարկեշտ, օտար սիրող, սորվեցունող · ոչ 3
նախատող, ոչ զարնող, հապա հանգարտ · ոչ
կռուող, ոչ արծաթասէր · որ իր տանն ալ աղէկ 4
վերակացու եղած ըլլայ · որ զաւկըներ ունեցած
ըլլայ՝ հնազանդութեան մէջ կեցած ամէն կերպ
պարկեշտութիւնով ։ (Հապա թէ որ մէկը իր 5
տանը վերակացու ըլլալը չի գիտնար՝ նէ ի՞նչպէս
Աստուծոյ եկեղեցիին հոգաբարձու պիտի ըլլայ ։)
Նորահաւատ չըլլայ · որ չըլլայ թէ հպարտա- 6
նալով Սատանային դատապարտութեանը մէջ
իյնայ ։ Հապա պէտք է անոր դուրսէն եղողնե- 7
րէն ալ բարի վկայութիւն ունենայ, որ չըլլայ
թէ նախատինքի մէջ ու Սատանային որոգայթին
մէջը իյնայ ։

Նմանակ ալ սարկաւագները պէտք է լինի պար- 8
կեշտ, ոչ երկու բերնէ, ոչ ա-
պահնեթեամբ տակի ժողվող · հապա հաւատ- 9
քին խորհուրդը ունենան մաքուր խղճմտան-
քով ։ Եւ նոքա առաջ թող փորձվին, և 10
ետքը ան պաշտօնին մօտենան՝ որ անարատ

11 եղած են : Ինանկ ալ անոնց կնիկները՝ պարկեշտ , ոչ դէշխօսողներ . հեզաշունչ , ա-
12 մէն բանի մէջ հաւատարիմ : Սարկաւագները մէկ կնկան մը էրկի ըլլան , որ իրենց զաւկըն-
13 բուն ու իրենց տանը աղէկ վերակացու եղած ըլլան : Վասնզի Սարկաւագներըը որ աղէկ կը պաշտեն , բարի աստիճան մը ինքզինքնուն կըշահին , ու Քրիստոս Յիսուսի վրայով հաւատքին մէջն ալ շատ համարձակութիւն :
14 Ես կը գրեմ քեզի , որ կրկուսամ մօտերս
15 գալ . բայց թէ որ ուշանալու ըլլամ՝ ալ գիտնաս որ ինչպէս պէտք է քեզի Աստուծոյ տա-նը մէջ պտրաիլ , որ ան կենդանի Աստուծոյ ե-կեղեցին է , ճշմարտութեան սիւնը ու հաստա-
16 տուվածը : Եւ յայտնապէս մեծ է աստուած-պաշտութեան խորհուրդը . որ Աստուած մար-մինով երեւցաւ , Հոգիով արդարացաւ , հրեշ-տակներուն յայտնըվեցաւ , Հեթանոսներուն քարոզվեցաւ , աշխարհի մէջ հաւատացվեցաւ , ու փառքով վեր ելաւ :

ԳԼ. Դ:

1 Բայց Հոգին Սուրբը յայտնի կըսէ , որ ետքի ատենները մէկ քանիները հաւատքէ պիտի ետնան , ու մոլորեցուցիչ չար ոգիներու պիտի
2 նային , և դեւերուն ուսմունքներուն , կեղ-ծաւորութիւնով սուտ խօսողներ , իրենց խըղճ-
3 մըտանքովը խանձըված . անոնք որ ամուսնանա-լէն պիտի արգիլեն , ու ետ պիտի պահեն կերա-կուրներէն՝ որ Աստուած հաստատեր է որ հաւատացեալները և անոնք որ ճշմարտութիւնը
4 կըճանչնան՝ վայելեն : Ինչու որ Աստուծոյ բոլոր ստեղծվածները բարի են՝ ու ետ ձգելու բան չի կայ . մանաւանդ թէ որ գոհանալով կընդ-
5 դունվին . ինչու որ Աստուծոյ խօսքովը ու ա-
6 ղօթքով կրսրբըվի : Այսկա որ խրատ տաս եղ-

բայրներուն՝ Պրիսկոս Յիսուսի աղէկ պաշտօ-
նեայ մը կըլլաս . սընոեալ հաւատքին խօսքերովը
ան աղէկ վարդապետութիւնովը , որ անոր հետ-
ւէն եղար : Ասոր պիտի խօսքերէն՝ ու պատաս- 7
ներուն առասպելներէն ետ կեցիր . հապա քու
անձդ աստուածպաշտութեան վարժեցո՛ր . ինչու 8
որ մարմնին վարժութիւնը քիչ բանի օգտակար
է , բայց աստուածպաշտութիւնը ամէն բանի օգ-
տակար է , և կենաց խոստումնըը ունի՝ հիմակ-
ւանին ու գալիքին : Ա՛ս խօսքը ճշմարիտ է՝ և 9
բոլորովին ընդունելու արժանի է : Ինչու որ 10
քուն ասոր համար կաշխատինք՝ ու նախատինք
կառնենք . վասն զի կենդանի Աստուծոյ յուսա-
ցեր ենք , որ ամէն մարդոյ Փրկիչն է , մա-
նաւանդ հաւատացեալներուն : Ա՛ս բաները 11
պատուիրէ ու սորվեցո՛ր . որ մէկը քու մանկու- 12
թիւնդ չանարգէ . հապա դուն օրինակ եղիր
հաւատացեալներուն՝ խօսքով , վարմունքով ,
սիրով , հաւատքով , մաքրութեամբ : Մինչև 13
որ ես գամ՝ նէ՝ միտք դիր կարդալու , յորդոր-
ելու , սորվեցունելու : Մի՛ անհոգ ըլլար քու 14
վրադ եղած շնորհքներուն վրայով , որ մար-
գարէութիւնով քեզի տրվեցաւ՝ երեցներէն որ
ձեռնադրվեցար : Ասոնց վրայ խորհէ՛ ու ա- 15
տոնց մէջը պարապէ՛ , որ քու յառաջադիմու-
թիւնդ ամենուն յայտնի ըլլայ : Զգուշ կեցիր 16
քու անձիդ ու վարդապետութեանդ՝ ու ատոնց
մէջը միշտ կեցիր . լեզ որ ատիկա ընես՝ քու անձդ
ալ կապրեցունես . ու անոնք ալ որ քեզի մտիկ
կընեն :

ԳԼՈՒԽ Ե .

Ա՛ՐԸը սաստիկ մի՛ յանդիմաներ , հապա 1
հօր պէս մխիթարէ՛ անիկա . երիտասարդ-
ները՝ եղբօր պէս . պառաւները՝ մօր պէս . դե- 2
ռատ կնիկները՝ քրոջ պէս ամէն կերպ մաքրու-

3 թիւնով։ Որբևարիները պատվէ՛ անունք որ
4 ստոյգ որբևարի են նէ։ Հապա թէ որ մէկ
որբևարի մը զաւկըներ ու թոռներ ունենայ,
թող առաջ սորվին իրենց տանը բարի լինել՝ ու
փոխարէնը հատուցանել իրենց ծնողացը. ինչու
որ անիկա է աղէկը՝ ու Աստուծոյ առջևը ընդու-
5 նելին։ Ասանկ ան որ ստոյգ որբևարի է՝ ալ
առանձնացած՝ Աստուծոյ վրայ յոյս դրած է, և
գիշեր ցորեկ աղօթքի ու աղաչանքի հետ է.
6 բայց փափուկ որբևարին կենդանուն մեռած
7 է։ Ըս պատուիրէ՛ որ անարատ ըլլան։
8 Հայց թէ որ մէկը իրեններուն ու մանաւանդ իր
տունվորներուն հոգ չի տանիր նէ անիկա հաւատ-
քէն ուրացած է, ու անհաւատներէն ալ գէշ է։
9 Ան որբևարին որբևարիներուն կարգը թող
սեպվի, որ վաթսուն տարվընէ պակաս չէ, մէկ
10 երկան մը կնիկ եղած. և բարի գործքերով
վկայված. որ զաւկըներ մեծցուցած ըլլայ, որ
հիւրեր ընդունած ըլլայ, որ սուրբերուն ոտքե-
րը լուացած ըլլայ, որ նեղեալներուն ձեռք տը-
ված ըլլայ, որ բոլոր բարի գործքերու ետևէ
11 գացած ըլլայ։ Հայց մանուչ որբևարիներէն
ետ կեցիր. որ երբ Քրիստոսի դէմ անձկանին
կըպարարտացունեն, ամուսնանալ կուզեն.
12 բայց դատապարտութիւն կընդունին. ինչու որ
13 առջի հաւատքնին մէկ դի ձգեցին։ Ասոնց ծոյլ
մնալ կըսորվին. տունէ տուն պըտրտողներ. և
չէ թէ միայն ծոյլ, հապա շատխօսներ, ու հի-
տաքրքիրներ. և ան բանը կըխօսին որ պէտքը
14 չէ։ Կուզեմ որ ատ դեռահաս կնիկները կար-
գըվին. զաւկըներ ծնանին, տնաչէն ըլլան, ու
մէկ պատճառ մը չի տան հակառակորդին՝ հայ-
15 հոյութիւնն խօսելու համար։ Ինչու որ ին-
մակվընէ մէկ քանիները Սատանային կողմը դար-
16 ձան։ Թէ որ մէկ հաւատացեալ մը որբևա-
րիներ ունենայ՝ թող օգնութիւն ընէ անոնց,

և եկեղեցիին բեռ չըլլայ , որ ճշմարիտ որբևա-
րիներուն օգնութիւն ընէ :

Ան երէցները որ աղէկ վերակացու կըլլան՝ 17
կրկին պատիւի արժանի թող ըլլան . մանաւանդ
անոնք՝ որ կաշխատին խօսքով ու վարդապետու-
թիւն ընելով : Ինչու որ գիրքը կըսէ . Կալին 18
մէջի եղին դունչը չի պիտի կապես . և բան-
ւորը իր վարձքին արժանի է : Երէցի 19
վրայ ամբաստանութիւն մի՛ ընդունիր , միայն
թէ երկու ու իրեք վկաներով : Հայց անոնք որ 20
մեղք կըգործեն՝ ամէնուն առջեւը չեխե՛ , որ ու-
րիշներն ալ վախնան : Ա կայութիւն կըդնեմ 21
Աստուծոյ առջեւը՝ և Յիսուս Քրիստոսի՝ ու ընտ-
րեալ հրեշտակներուն , որ աս բաները պահես
առանց Ճխո՛ւն միտքը հաճեցունելու , բան մը ա-
չառանձնաբար չընելով : Ձուտով մէկուն վրայ 22
ձեռք չի դնես , ու ուրիշներուն մեղացը հաղորդ
չըլլաս . դուն քեզ մաքուր պահէ՛ : Ասկէ ետեւ 23
լոկ ջուր չի խմես . հապա քիչ մըն ալ գինի
խառնէ՛ ստամոքսիդ ու յաճախ հիւանդու-
թիւններուդ համար : Կան մարդիկ՝ որ իրենց 24
մեղքը յայտնի է , ու առաջուց դատաստանի հա-
սած . և կան՝ որ իրենց ետեւէն կերթան : Նանկ 15
ալ սխանց բարի գործքերը յայտնի են . ու անոնք
որ ուրիշ կերպ բան մըն են՝ չեն կրնար պահ-
վիլ :

ԳԼՈՒԽ Զ :

Ան ամէնքը որ ծառայութեան լուծի տակ են , 1
ամէն մէկը իրենց տէրերը պատիւի արժանի
սեպեն . որ Աստուծոյ անունը ու վարդապե-
տութիւնը չի հայհոյվի : Եւ անոնք որ հաւա- 2
տացեալ տէրեր ունին՝ թող չանարգեն անոնք ,
եղբայրներ ըլլալնուն պատճառաւը . հապա էվե-
լըք ծառայութիւն ընեն . ինչու որ հաւատացեալ
են ու սիրուն . որոնք բարերարութիւն ունենան

անձերնուն . Ես բաները սորվեցուր ու յորդո-
3 րէ : Ասայ թէ որ մէկը ուրիշ կերպ բան մը
սորվեցունէ , ու մտիկ չընէ անիկա մեր Տէր Յի-
սուս Քրիստոսին ողջամիտ խօսքերուն , և ան
վարդապետութեանը որ աստուածպաշտութեան
4 պէս է . անանկը հպարտացած է ու բան մը չի
գիտեր , հապա վէճերու մէջ ու հակառակու-
թեան մէջ կըտրտըտքի . ուսկէց որ կըլլայ նա-
խանձութիւն , կռիւ , հայհոյութիւններ , կէղ
5 կարծիքներ . խարդախ բաներ մարդոց ապակա-
նած մրտքովը ու ճշմարտութենէն հեռացողնե-
րուն . որոնք որ աստուածպաշտութիւնը շա-
հելու վաճառ մը կըսեպեն . բայց դուն անանկ-
6 ներէն մէկ դի կեցիր : Սակայն աստուածպաշ-
տութիւնը բաւականութեամբ մէկ տեղ մեծ շա-
7 հելու վաճառ մըն է : Ինչու որ բան մը չի բե-
րինք աշխարհ , ու բան մը չենք կրնար տանիլ :
8 Հապա ունինք կերակուր ու հանդերձ , և ա-
9 նով բաւականանք : Ասայ անոնք որ մեծ-
նալ կուզեն՝ փորձութեան մէջ կիյնան՝ ու որո-
գայթի՝ և շատ անխելք ու վնասակար ցանկու-
թիւններու . որոնք որ սատակումի ու կորըստեան
10 մէջ կընկղմեն մարդիկ : Ինչու որ ամէն չարիք-
ներուն արմատը արծաթի սէրն է . որ՝ ասոր
փափաքելով մէկ քանիները՝ հաւատքէն մոլորե-
ցան , ու ինքզինքնին շատ ցաւերու մէջ ձգե-
ցին :
11 Ասայ դուն ով մարդ Աստուծոյ փախիր ա-
նոնցմէ , ու գնա արդարութեան՝ աստուածպաշ-
տութեան՝ հաւատքի՝ սիրոյ՝ համբերութեան՝
12 հեզութեան եռանդին . Եւ պատերազմէ հաւատ-
քին աղէկ պատերազմը . ու ձեռք զարկ յաւիտե-
նական կեանքին՝ որ անոր կանչըվեցար , և
դաւանեցար ան աղէկ դաւանանքը շատ վկանե-
13 րու առջև : Կըպատուիրեմ քեզի Աստուծոյ
առջևը՝ որ կենդանի կընէ բոլորը , ու Յիսուս

Ք՝րիստոսի առՋԼԵԼ՝ որ Պօնտացի Պիղատոսին
առՋևը վկայեց աղեկ դաւանութիւն մը · որ 14
դուն ան պատուիրանը անբիծ անարատ պահես ,
մինչև մեր Տէր Յիսուս Ք՝րիստոսի յայտնութիւնը ·
որ անիկա իր ատենին պիտի ցուցընէ Երանելին 15
ու մի միայն Կարողը՝ Թագաւորներուն Թա-
գաւորը ու տէրերուն Տէրը · որ ինքը միայնակ ու- 16
նի անմահութիւն՝ չի մօտիկնալու լոյսի մէջ
բնակած : որ անիկա մարդիկներէն մէկը չի
տեսաւ , ու տեսնալու կարող չէ · որուն պատիւ
ու զօրութիւն յաւիտեանս · ամէն :

Ես աշխարհիս մէջ եղած հարուստներուն 17
պատուէր տուր՝ որ չի հպարտանան , և փոՁ
մեծութեան վրայ յոյսերնին չի դնեն · հապա
Աստուծոյ վրայ՝ որ ամէն բանը մեզի առատօրէն
կուտայ վայելելու , բարիք գործեն , բարի գործ- 18
քերով հարուստանան , առատ , սիրուն , ԱՌՔԵՂԵՆ
պատրաստ հաղորդ ըլլան · բարի հիմ գան- 19
ձեն անձերնուն հանդերձեալին համար , որ
Ճշմարիտ կեանքը ձեռք ձգեն :

Ով Տիմոթէոս ՛ՒՆՁ տրուած աւանդը պահէ՝ 20
փախչելով պիղծ ու նորաձայն խօսքերէն , և
հակառակութիւնէ , և սուտ անուն ԱՌԵՑԿՈՂ գի-
տութենէ : Որ ան մէկ քանիները վրանին առ- 21
նելով՝ հաւատքէն մոլորեցան : Ձ՝նորհ-
քը քեզ հետդ ·
Ամէն :

Ի ԱՌՔԵՒՆԵՆ ԳՐՈՂՅԱՆ ՏԻՄՈԹԷՈՍԻ ԱՌԱՋԻՆ ԼՈՒԾ-
ԻՆ · որ Պաղատիանոսցոց Մայրաքաղաքն
է :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹԸ ԸՆԴ

ՏԻՄՈԹԷՈՍ

ԳԼ. Ա։

1 Պօղոս Յիսուս Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովը՝ կենաց խոստմունքին պէս, որ
2 Յիսուս Քրիստոսով է. Տիմոթէոս իմ սիրելի որդիիս շնորհք՝ ողորմութիւն և խաղաղութիւն Հօր Աստուծմէն, ու Յիսուս Քրիստոս մեր
3 Տէրոջմէն։ Շնորհակալ եմ Աստուծոյ՝ որ անոր կը պաշտեմ իմ նախնիքներէս մաքուր խղճմտանքով, որ անպակաս քեզ իմ աղօթքիս մէջ կը
4 յիշեմ գիշեր ու ցորեկ կրցանկամ քեզ տեսնելու՝ միտք բերելով քու արցունքներդ, որ
5 ուրախութիւնով լեցվիմ. Ա՛տածելով ան զուտ հաւատքը որ դուն ունիս, որ առաջ քու Լաւոդիա մայրիկիդ վրայ բնակեցաւ՝ ու քու Եւնիկէ մօրդ, հաստատուն գիտեմ՝ որ ան քու
6 վրադ ալ կայ։ Ասոր համար քու միտքդ կը բերեմ գեմ որ Աստուծոյ շնորհքը հրահրես, որ քու
7 վրադ է իմ ձեռնադրելէս։ Ինչու որ Աստ-

ուած մեզի վախնալու հոգի չի տալու, հապա
զօրութիւնի՝ ու սիրոյ՝ ու զգաստ ըլլալու։
Ուստի ամէն մի սեպեր մեր Տէրոջը վկայու- 8
թիւնը, ոչ ալ իս անոր համար կապուածս. հապա
մասնակից եղիր աւետարանին չարչարանքնե- 9
րուն՝ Աստուծոյ զօրութեանը պէս, որ մեզ
փրկեց, ու սուրբ կոչումի մը կանչեց՝ չէ թէ մեր
գործքերուն նայելով, հապա իր կամքին ու
շնորհքին նայելով, որ Յիսուս Քրիստոս
մեզի տրուեցաւ յաւիտենական գաղտնիքէն առաջ.
Բայց հիմայ յայտնեցաւ մեր Փրկիչ Յիսուս 10
Քրիստոսին երեւնալովը, որ մահը խափանեց,
և լոյսին դէմը բերաւ կեանքը ու անմահութիւ-
նը՝ աւետարանին ձեռքովը. որ ես անոր քա- 11
րոզիչ ու առաքեալ դրուեցայ՝ ու հեթանոսնե-
րուն վարդապետ։ Ընոր համար ասս չարչա- 12
րանքներն ալ կրքաշեմ, բայց ամօթ մը չեմ
սեպեր. ինչու որ գիտեմ թէ որի՛ եմ հաւատա-
ցեր, և հաստատուած եմ՝ որ իմ ներդն աւանդած
բանս կրնայ պահել մինչեւ ան օրը։ Ուներ 13
բունէ՝ ան ողջամիտ խօսքերուն օրինակը՝ որ ինձ-
մէ լսեցիր, հաւատքով ու սիրով որ Քրիստոս
Յիսուսով է։
Ան աղէկ աւանդը պահէ՛ Հոգւոյն Սրբոյ 14
ձեռքովը որ մեր մէջը բնակած է։ Ասիա գիտես՝ 15
որ մեզմէ պատճառն ան ամէնքը որ Ասիա էին,
որոնց համրանքէն են Փիգեղոսը ու Հերմոգե-
նէսը։ Աստուած ողորմութիւն տայ Ընեսի- 16
փորին տանը, որ շատ անգամ իս հանգըստա-
ցուց, ու իմ կապերս ամօթ չի սեպեց. հապա 17
երբոր Հռոմ եկաւ, շատ ջանքով փնտրեց
իս՝ ու գտաւ։ Տէրը իրեն տայ՝ որ ան օրը Տէ- 18
րոջմէն ողորմութիւն գտնայ. և Եփեսոսի մէջ ալ
որչափ որ սպասաւորութիւն ըրաւ նէ ինձի՝ ա-
նիկա դուն քեզի աղէկ գիտես։

ԳԼ· Բ:

1 Բայց դուն իմ որդեակս՝ զօրացիր ան շնորհ-
2 քովը որ Քրիստոս Յիսուսով է: Եւ ան
որ ինծմէ լսեցիր շատ վկաներով՝ անիկա հաւա-
տարիմ մարդոց տուր, որոնք կարող ըլլան ու-
3 րիշներն ալ սորվեցունելու: Նեղութիւննե-
րու կցորդ եղիր Քրիստոս Յիսուսի աղէկ զին-
4 ուորի մը պէս: Ո՛էկ զինուորեալ մը՝ հոս
աշխարհիս կեանքին բանէրովը չի պատաղիր, որ
5 զօրավարին հաճոյ ըլլայ: Եւ թէ որ պատե-
րազմող մէկը ըլլայ՝ չի պսակվիր թէ որ ըստ օ-
6 րինաց չի պատերազմի: Ու աշխատող հողա-
գործին ալ պէտք է առաջ պտուղէն վայելել:
7 Ինծացիր ինչ կըզրուցեմկոր. Տէրը քեզի
8 իմաստութիւն տայ ամէն բանի մէջ: Ո՛իտդ
բեր Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարու-
թիւն առած՝ Դաւիթին ցեղէն իմ աւետարանիս
9 պէս. որուն մէջը չարագործի մը պէս կըչարչա-
րիմկոր կապերով. բայց Աստուծոյ խօսքը չէ՛
10 թէ կապված է: Ընոր համար ամէն բանի կը
համբերեմ՝ ընտրեալներուն համար. որ անոնք
ալ փրկութեան հասնին, որ Քրիստոս Յիսու-
11 սով է Երկնաւոր փառքով: Ա՛ս խօսքը ճշմա-
րիտ է. ինչու որ թէ որ անոր հետը մեռանք՝
12 անոր հետն ալ պիտի ապրինք. որ թէ համբե-
րենք՝ անոր հետն ալ պիտի թագաւորենք. ու
թէ որ ջնդրէ ուրանանք՝ անիկա ալ մեզ կուրա-
13 նայ. և թէ որ չի հաւատանք՝ ինքը հաւատա-
րիմ կըմնայ, իր անձը չի կրնար ուրանալ:
14 Ա՛ս բանը անոնց միտքը ձգէ՝ Աստուծոյ առջևը
վկայութիւն դնելով, անպէտ խօսքերու վրայ
վիճաբանութիւն չընել՝ լսողներուն կործանու-
15 մին համար: Ջանացիր քու անձդ ընտիր ցու-
ցընել Աստուծոյ առջևը, մէկ բանվոր մը ա-
ռանց ամչնալու, ճշմարտութեան խօսքը շի-

տակ համառօտելով ։ Ասյց պիղծ ու փուճ 16
խօսքերէն մէկ դի կեցէք . որ անոնք էվէրգ ա-
ռաջ կերթան ամբարշտութիւններու մէջ , և 17
անոնց խօսքերը քաղցկեղի պէս կուտեն . որոնց
կարգն են Հիմենոսը՝ ու Փիլետոսը , որոնք 18
ճշմարտութենէն մոլորեցան , ու կըսեն թէ Ս՛Ե-
ռելներուն յարութիւնը արդէն եղած է , և կը
կործանեն մէկ քանիներուն հաւատքը ։ Ասյց 19
Աստուծոյ հիմը հաստատուն կըկենայ՝ ու աս կնի-
քը ունի , որ Տէրը կրճանչնայ անոնք որ իրենն
են . և անիրաւութենէ մէկ դի թող կենայ ան ա-
մէնը՝ որ Տէրոջը անունը կանուանէ ։ Ասյց մեկ 20
մեծ տան մը մէջ չէ թէ միայն ոսկիէ ու արծա-
թէ անօթներ կան , հապա փայտէ ու հողէ ալ
կան . ոմանք պատուական բանի համար են , ու
ոմանք՝ ցած բանի ։ Թէ որ մէկը իր անձը ա- 21
նանկներէն մաքրէ՝ անիկա մէկ պատուական ա-
նօթ մը պիտի ըլլայ՝ սրբըրված ու իրեն Տէրոջը
պիտանի՝ ամէն բարի գործքերու համար պատ-
րաստված ։ Հիւ երիտասարդական ցանկու- 22
թիւններէն փախիր , ու գնա արդարութեան՝
հաւատքի՝ սիրոյ՝ խաղաղութեան՝ սրբութեան
հետէն , անոնց հետ որ Տէրոջը անունը կըկան-
չեն մաքուր սրտով ։ Ասյց յիմար ու անիմաստ 23
վէճերէն մէկ դի քաշուիլ . գիտցիր որ անկէց
կռիւներ կրծնանին ։ Ասյց Տէրոջը ծառային 24
պէտք չէ կռիւ ընել , հապա հեզաշոգի ըլլալ
ամենուն , սորվեցունող , ոչ ալ պահող . չան- 25
դարտութիւնով խրատել հակառակ կեցողները .
որ ըլլայ թէ Աստուած ապաշխարութիւն տայ
անոնց՝ ճշմարտութիւնը ճանչնալու . և Ասատա- 26
նային որոգայթներէն զգաստանան , որ իրմէն
բռնըլված են իր կամքին ծառայելու ։

ԳԼ · Գ ·

1 Ա՛ս գիտցիր՝ որ եղքի օրերը չար ժամանակներ
2 պիտի գան . ինչու որ մարդիկ պիտի լլլան
անձնասէր , արծաթասէր , հպարտ , ամբար-
տաւան , հայհոյիչ , ծնողաց անհնազան , ա-
3 պերախտ , անսուրբ , ամարդինեք , անգութ-
նեք , բանսարկուներ , անհամբերներ , բարձրա-
4 միտներ , բարին չի սիրողներ , մատնիչներ ,
յանդուգներ , գոռոզներ , հեվեօք ցանկալիքեն
5 սիրողներ՝ քան թէ Աստուած սիրողներ . որոնք
աստուածապաշտութեան կերպարանքը պիտի ու-
նենան , ու անոր զօրութենէն ուրացած են .
6 և դուն անոնցմէ մէկ դի կեցիր : Ինչու որ ա-
նոնցմէն են որ տուներ կը մտնեն , ու գերի
կընեն մեղքով բեռնած կնիկները՝ զանազան
7 յանկութիւններով վարված . որ ամէն իմիր
կըսորվին , ու բնաւ ճշմարտութիւնը ճանչնա-
8 լու չեն կրնար : Հապա ինչպես Յանէսը ու
Յամբէսը Մովսէսի հակառակ կեցան , անանկ
ալասոնք ճշմարտութեանը հակառակ կըկե-
նան . ապականած միտքով մարդիկները , հաւատ-
9 քի մէջ անպիտանները : Բայց բնաւ աղեկ մը
չի պիտի կրնան յառաջանալ . ինչու որ ասոնց
անմտութիւնը ամենուն յայտնի պիտի ըլլայ ,
10 ինչպես որ անոնցը եղաւ : Իմիայն թէ դուն իմ
վարդապետութեանս եւ կեցուածքո-
դութեանս , յօժարութեանս , հաւատքիս ,
երկայնմտութեանս , սիրոյս , համբերութեանս .
11 հալածանքներուս , չարչարանքներուս , ինչ-
պէս որ ինծի եղան Անտիոքի եւ Իկոնիոնի
ու Լիւստրայի մէջ , ինծի հալածանքներու
համբերեցի , ու ամենէն ի նոսցանէ Տէրը :
12 Եւ ամէնքն ալ որ կուզեն աստուածապաշ-
տութեամբ ապրիլ Քրիստոս Յիսուսով՝
13 հալածանքի մէջ պիտի կենան : Բայց չար

ու կախարդ մարդիկները չարութեան մէջ
պիտի յառաջանան . մոլորեալներ եւ , ու
կրմոլորցունեն ։ Ասյց դուն Տաստատուն 14
կեցիր ան բաներուն մէջը որ սորվեցար՝ ու
հաւատացիր . գիտես ուսկից սորվեցար . ին- 15
չու որ դուն մանկութենէ սուրբ գիրքերը
գիտես , որոնք կրնան իմաստուն ընել քեզ
փրկութեան՝ Յիսուսի Քրիստոս վրայ եղած
հաւատքովը ։ Ամէն գիրքերը Աստու- 16
ծոյ շունչն են , և շահաւոր սորվեցունե-
լու համար , յանդիմանելու համար , շըտ-
կելու համար , ու արդարութեան խրատելու
համար . որ Աստուծոյ մարդը կատարեալ 17
ըլլայ՝ ամէն բարի գործքերու մէջ հա-
տուած ։

Կ Ա · Գ ։

Ես վկայութիւնը կընդեմ Աստուծոյ առջեւը՝ 1
և Յիսուս Քրիստոսի , որ պիտի դատէ կեն-
դանիները ու մեռեալները իր Յայտնվելուն ու
թագաւորութեանը ատենը . դուն ալ խօսքը 2
քարոզես . վրայ հասիր ատենին ու ատենէ
դուրս , յանդիմանէ , չեմէ , մխիթարէ՝ ամէն
կերպ համբերութիւնով ու վարդապետութիւ-
նով ։ Ինչու որ ժամանակ պիտի գայ՝ որ ոչ 3
քամիտ վարդապետութեանը մտիկ չի պիտի գնեն .
հապա ամէն մէկուն ցանկութիւններուն պէս ի-
րենց վարդապետներ պիտի դիզեն՝ իրենց ականջ-
ներուն եռքին յարմար . և ան ճշմարտութենէն 4
ականջներնին պիտի դարձունեն , ու սուտութեան
խօսքերու մէջ պիտի իյնան ։ Ասյց դուն ա- 5
մէն բանի մէջ արթուն կեցիր , չանք ըրէ ,
աւետարանիչի գործ գործէ . քու պաշ-
տօնդ կատարեալ ըրէ ։ Ինչու որ ես ասկէց 6
նուէ պահ ըլլալու նըւիրված եմ , ու իմ
դառնալուս ատենը հասեր է ։ Ես աղէկ 7

պատերազմէ պատերազմեցայ · վազելքս լման
8 ըրի · հաւատքը պահեցի · Ասկէ ետև կայ
կը մընայ ինծի արդարութեան պսակը, որ Տէ-
ր ը ան արդար Դատաւորը պիտի հատուցա-
նէ ինծի ան օրը · ու՝ չէ թէ միւսոյ ինծի, հա-
սպ ան ամենուն ալ՝ որ անոր յայտնութիւնը
սիրեցին ։
9 Աշտապա՛ շուտով ինծի գալու · ինչու որ Դե-
մասը իս թողուց՝ ու աշխարհը սիրեց, և գնաց
10 Թեսաղոնիկէ · Կրեսկէսը Գաղատիա, Տի-
11 տոս՝ Դաղմատիա · միմիայն Ղուկասը իմ հետս
է · Առիկոսը առնես քու հետդ՝ բերես · ինչու որ
12 ինծի պէտք է անիկա սպասաւորելու համար ։ Տիւ-
13 քիկոսը Եփեսոս խրկեցի · Ս երթալուն Տրո-
ադա Թողուցի Կարպոսին քովը · երբոր գաս
նէ բերես՝ գիրքերն ալ, մանաւանդ մաուեան-
14 ները ։ Դարբին Ալեքսանդրոսը շատ նեղու-
թիւն տըւաւ ինծի · Տէրը անոր հատուցանէ իր
15 գործքերուն փոխարէնը ։ Ընկէց գուն ալ ին-
քըզինքդ պահես · ինչու որ մեր խօսքերուն
16 շատ դէմ կեցաւ ։ Առջի առեանին մէջը
մէկը ինծի կանգնակ չեղաւ · հապա ամէնն
ալ իս թողուցին · ներեցէ՛ Աստուծմէ որ
17 ան իրենց չի սեպվի ։ Բայց Տէրը ինծի
օգնեց՝ ու իս զօրացուց, որ ինծմով քա-
րոզութիւնը հատատուի, ու բոլոր Հեթա-
նոսները լսեն · և ես ան առիւծին բեր-
18 նէն խլըեցայ ։ Տէրը իս խլըեսէ ամէն
չար գործքերէն, ու իս ապահե իր Թագա-
ւորութեանը մէջ որ երկինքն է · իրեն փառք
յաւիտեանս յաւիտենից · ամէն ։
19 Ղարև տուր Պրիսկային և Աքիւղասին ու
20 Ընեսիփորոսին տանը ։ Երաստոս Կորընթ-
թոս մնաց · Տրիփիմոսը Ս՝ ղէտոս Թողուցի
21 տիւրդած ։ Աշտապա՛ ձմեռէն առաջ գալ ·
բարև կուտան քեզի Եւբուղոսը ու Պու-

դեսք և Վ յիտոսք ու Կղաւզիան՝ և քո-
22 լոր եղբայրնեսրը ։ Տէր Յիսուս Քրիս-
տոսք քոյ հոգիով հետ ։ Շնորհք
քոյ քեզի հետ ։
Ամէն ։

Երկրորդ Եպիստոլէ Տիմոթեոսին՝ որ Եփեսացոց եղե-
ւոյ Եպիսկոպոս առաջ քան զառաքելոյն Պաւղոս երկրորդ
անգամ գրեալ նէ ի Հռոմայ
Առ Եբրայեցիս
սաղմոս ։

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ ԱՒՏՈՒՄ

ԳԼՈՒԽ Ա.

1 Պօղոս Աստուծոյ ծառայ՝ և Յիսուս Քրիստո-
սի առաքեալ, Աստուծոյ ընտրեալներուն
հաւատքին պէս՝ ու ճշմարտութեան գիտութիւ-
2 նովը որ աստուածապաշտութեան հետն է, յաւի-
տենական կեանքին յոյսովը, որ ինքը անսուտ
Աստուածը խոսք տըւաւ յաւիտենական դարե-
3 րէն առաջ, բայց իր ժամանակներովը իր
խոսքը յայտնեց քարոզութիւնով, որ ինծի
հաւատացուեցաւ մեր Փրկիչ Աստուծոյ հրամա-
4 նովը. Տիտոսի իմ սիրելի որդիին հաւատակից
հաւատքովը՝ շնորհք և խաղաղութիւն Հօր Աս-
տուծմէն ու Քրիստոս Յիսուս մեր Փրկի-
չէն։
5 Ընոր համար քեզ Կրետէ թողուցի, որ ինչ-
պակաս բան կայ նէ՝ շտկես, ու ամէն մէկ քա-
ղաքներուն համար երէցներ կարգես, ինչպէս
6 որ ես քեզի պատուիրեցի. թէ որ մէկը անարատ
ըլլայ՝ մէկ կնկան մը երիկ, հաւատացեալ զաւ-

կրներ ունենայ , որ անառակութեան համար առ
բաստանված չեն՝ կամ անհնազանդ : Ինչու 7
որ եպիսկոպոսին պէտք է անարատ ըլլալ՝ Աս
տուծոյ անտեսին պէս . ոչ յանդուգն , ոչ բար
կացող , ոչ նախատող , ոչ զարնող , ոչ ագա
հութեամբ ստակ ժողվող . հապա օտար սիրող , 8
բարին սիրող , խոնարհ , արդար , սուրբ ,
ժուժկալ . վերակացու ըլլալ վարդապետու 9
թեան հաւատարիմ խօսքին . որ կարող ըլլայ
ողջամիտ վարդապետութիւնով յորդորել , և
հակառակ կեցողները յանդիմանել : Որով 10
հետև շատ են անհնազանդները , պարապ խօ
սողները , ու միտք խաբողները . էվելօք անոնք՝
որ ան թլփատութենէն են . որոնք պէտք է պա 11
պանձեցունել . որ ամբողջ տուները կըկործա
նեն՝ ու կրսորվեցունեն ան բանները որ պէտք չէ ,
ագահութեամբ ստակ ժողվելու համար : Ա 12
նոնցմէ մէկը զրուցեց՝ իրենց բուն մարգարէն ,
Կրետացիները միշտ սուտզրուց էն , չար ճճիներ ,
դատարկ պորտեր : Եւ աս վկայութիւնը շի 13
տակ է . անոր համար սաստիկ կշտամբէ՛ անոնք ,
որ առողջանան հաւատքին մէջը . ու չի նպին 14
Հրէական առասպելներուն , և ճշմարտու
թենէ դուրս ելած մարդոց պատուէրներուն :
Ամէն բան մաքուր է մաքուրներուն , բայց 15
պիղծերուն ու անհաւատներուն մէկ բան մի
մաքուր չէ՛ . հապա անոնց միտքն ալ ու խոր
հուրդներն ալ պղծըված են : Կըխոստանան 16
որ Աստուած կրճանչնան , և իրենց գործքո
վը կուրանան . պիղծեր ու անհնազանդներ ,
և անպիտաններ բոլոր բարի գործքերու
մէջ :

ԳԼ· Բ։

1 Բայց խօսէ դուն՝ ինչ որ կը վայլէ ողջամիտ
2 վարդապետութեանը . ծերերուն զգաստ ըլ-
լալ , պարկեշտ , խոնարհ , ողջամիտ հաւատ-
քով , սիրով , համբերութիւնով , ժուժկա-
3 լութիւնով : Ընդնայ ալ պառաւներուն զգաս-
տութեան մէջ ըլլալ ինչպէս որ սրբութեան
կը վայլէ , ոչ բանսարկուներ , ոչ գինիի ինկած-
4 ներ . հապա բարի խրատ տրվողներ : Որ խրա-
տեն մատղաշ կիներըն՝ էրիկներն սիրող , զա-
5 ւակներն սիրող ըլլալ , խոնարհ , սուրբ , տնա-
շէն , բարեգործ , իրենց էրիկներուն հնազանդ .
որ չըլլայ թէ Աստուծոյ խօսքը ու վարդապե-
6 տութիւնը հայհոյվի : Ընդնայ ալ երիտա-
7 սարդներուն աղաչէ՝ խոնարհ ըլլալ . Ամենուն
բարի գործքերու օրինակ ընելով անդ , վար-
դապետութիւնով անեղծութիւն ունենալ ,
8 մաքրութիւն , պարկեշտութիւն , ողջամիտ խօսք՝
մեղադրելի չըլլալու . որ հակառակ կեցողը ա-
մչնայ , ու մեր վրայով գէշ բան մը չունենայ
9 ըսելու : Ծառաներուն ապրչեցուր իրենց տէ-
րերուն հնազանդ ըլլալ , և ամէն բանի մէջ
10 հաճելի . ոչ հակառակողներ , ոչ խորովներ .
հապա աղէկութիւնով բոլորովին հաւատար-
մութիւն ցուցընեն , որ մեր Փրկիչ Աստուծոյ
վարդապետութիւնը ամէն բանի մէջ զարդա-
11 րեն : Ինչու որ Աստուծոյ շնորհքը՝ որ փրկող
12 է , բոլոր մարդոց երեւցաւ . որ մեզ կրկսատէ՝
որ ամբարշտութիւնը ու աշխարհային ցան-
կութիւնները ուրանանք . զգաստութիւնով և
արդարութիւնով ու աստուածապաշտութիւնով
13 ապրինք աշխարհիս մէջ . և սպասենք ան երջա-
նիկ յոյսին , և Մեծ Աստուծոյ ու մեր Փրկիչ
Յիսուս Քրիստոսի փառքին յայտնվելուն .
14 որ ինքզինքը մեզի համար տրւաւ , որ մեզ բո-

լոր անօրէնութիւններէն ազատած , ու մաքրե ի-
րեն յատուկ ժողովուրդ՝ բարի գործքերու
նախանձաւոր : Այս բաները խօսէ և յորդորէ
ու յանդիմանէ լիակրաւորէն սաստելով , որ ոչ ոք
թէ մեկը քեզ անարգէ :

Գ Լ . Գ ։

Ա ւ անոնց միտքը ձգէ՝ իշխանութիւններուն 1
և կառավարութիւններուն հնազանդ ըլլալ ,
ու հպատակ մընալ , ու ամէն բարի գործքե-
րու պատրաստ գտնուիլ . մեկուն դէմ չար 2
չի խօսիլ , կռիւ ընող չըլլալ . հապա հեզ ,
ամէն կերպ խոնարհութիւնը բոլոր մարդոց
ցուցընել : Ինչու որ մենք ալ մեկ ատեն 3
մը անմիտներ էինք , անհնազանդներ , մոլորեալ-
ներ , զանազան ցանկութիւններու ու անա-
ռակութիւններու կրծառայէինք . չարութիւ-
նով ու նախանձութիւնով կըվարվէինք , ա-
տելի էինք , և մեկզմեկ կատէինք : Երբ 4
որ մեր Փրկիչ Աստուծոյն քաղցրութիւնը
ու մարդասիրութիւնը յայտնի եղաւ , չէ 5
թէ արդարութեան գործքերէն որ մենք ըրինք ,
հապա իր ողորմութիւնովը մեզ փրկեց նո-
րէն ծնանելու աւազանին ձեռքովը՝ ու սուրբ
Հոգիին նորոգելովը . որ մեր վրայ լերուց 6
առատօրէն Յիսուս Քրիստոս մեր Փրկիչին
ձեռքովը . որ շնորհքով արդարացած՝ յու-
տենական կեանքին յուսովը ժառանգ ըլլանք :
Այս խօսքը ճշմարիտ է . և ասոր մէջը կու- 8
զեմ՝ որ դուն հաստատուն ըլլաս , որ Աստու-
ծոյ հաւատացողները ջանք ընեն բարի գործ-
քեր բնելու վրայ ըլլալ . որ ան է բարին ու
օգտակարը մարդոց : Հայց դուն ան յիմարա- 9
կան վէճերը ու ճիւղաշաւարութիւնները ու
հակառակութիւնները՝ և օրէնքի վրայ կռիւ-
ները մէկ դի ձգէ , ինչու որ անօգուտ են ու

10 սնոտի : Երձուածող մարդէն՝ մէկ երկու ան-
11 գամ խրատելէն ետև ետ քաշվէ՛. գիտցիր որ
անանկը ծռած է, և մեղք կըգործէ ինքըզինքը
դատապարտելով :
12 Ել երբոր Ղրտեման կամ Տիւքիկոսը քեզի
խրկելու ըլլամ, արտորա ինծի գալու Նիկոպո-
լիս. ինչու որ միտքս դրի ձմեռը հոն ընելու :
13 Եւ Զենոն օրինական դպիրը՝ ու Ապողոսը շու-
տով ճամբայ դիր, որ անոնց բան մը չի պակսի :
14 Եւ մերիններն ալ թող սորվին բարի գործքեր
ընելու վրայ ըլլալ հարկաւոր պէտք եղածին
15 համար, որ անպտուղ չըլլան : Ինձի հետ եղող
քեզի ամէնքն ալ որ իմ հետս են. բարև
տուր մեր սիրելիներուն հաւատքով.
շնորհքը ձեր ամէնուն հետը.
Ամէն :

Արեւտացոց Եպիստոլին ատեն յետնադրուած էպի-
կոպոս Տիտոսին գրելէ՝ Աւետարանիչ
Նիկոպոլիսէն :

ՊՕՂՈՍ

ԱՌԱՔԵԼԱԼԻՆ

ԹՈՒՂԹԸ ԱՌ ՓԻԼԻՄՈՆ։

ԳԼ. Ա։

Պօղոս Յիսուս Քրիստոսի կապեալը՝ և Տիմո- 1
թէոս եղբայրը, Փիլիմոն սիրելիին ու մեր
գործակիցին, և Ապփիա ծէր քրոջը, ու Ար քիպ- 2
պոս մեր ընկեր զնուորին, ու քոյ տանդ եկեղե-
ցիին։ Շնորհք և խաղաղութիւն ձեզի Աս- 3
տուծմէ մեր Հօրմէն և Տէր Յիսուս Քրիստո-
սէն։

Կըգոհանամ՝ ամէն իժիր իմ Աստուծմէս, քե- 4
զի համար յիշելով աղօթքիս մէջը. Լսրնոր կը 5
լսեմ քու հաւատքդ ու սէրդ՝ որ Տէր Յիսուսին
վրայ ունիս՝ և բոլոր սուրբերուն վրայ. որ 6
քու հաւատքիդ հաղորդակցութիւնը պտղաբեր
ըլլայ բոլոր բարիներուն ճանաչմունքովը, որ
ձեր վրայ է Քրիստոս Յիսուսով։ Շատ ու- 7
րախութիւն ունեցայ, և մխիթարութիւն քու
սիրոյդ վրայ, որ սուրբերուն սիրտը քեզմով
հանդըստացած են՝ եղբայր։

Ասոր համար շատ համարձակութիւն ունիմ 8

ես Յիսուսով Քրիստոսով հրաման ընդունել քեզի վայե-
9 ծը. սիրոյ համար՝ մանաւանդ թէ կաղաչեմ՝
անանկ ըլլալ ինծոր որ ես Պօղոս ծերացած, ու
10 հիմայ ալ կապված Յիսուս Քրիստոսի։ Կա-
ղաչեմ քեզի իմ որդիիս Ընեսիմոսին համար՝ որ
11 ես իմ կապանքիս մէջը ծնայ. որ ան մէկ ա-
տեն մը անպիտան էր քեզի. բայց հիմայ քե-
12 զի ալ ինծի ալ պիտանի է. անիկա քեզի
խրկեցի. ալ ընդունէ ատիկա՝ որ է իմ ա-
13 զիքներս։ Ընիկա կուզէի ես իմ քովս պահել.
որ քու տեղդ ինծի սպասաւորութիւն ընէ
14 աւետարանին կապանքներուն մէջը։ Բայց
առանց քու կամքիդ չուզեցի բան մը ընել,
որ քու բարիքդ ի հարկէ եղած չըլլայ, կա-
15 պա կամաւոր։ Եւ կարելի է, որ անոր հա-
մար անիկա քիչ մը ատեն զատվեցաւ, որ ին-
16 քը յաւիտեան ունենաս. չէ որ ալ ծառայի
մը պէս, հապա ծառայէն վեր՝ սիրելի եղբօր
պէս. թէ որ ինծի ասանկ, որքա՜ն աւելի
քեզի՝ թէ մարմինի կողմանէ ու թէ Տէրոջը։
17 Ուրեմն որ իս քու հետդ մէկ կըսեպես նէ, ընդու-
18 նէ՛ անիկա՝ որպէս թէ իս։ Եւ թէ որ չան-
ցանք մը ըրած է՛ կամ բան մը պարտք ունի
19 նէ, ան իմ վրաս սեպէ՛։ Ես Պօղոս իմ
ձեռքովս ա՛ գրեցի. ես կըվճարեմ, ան չեմ
ըսեր քեզի՝ որ դուն ալ քու անձդ ինծի
20 պարտական ես։ Այո՛ եղբայր՝ ես քու տեղդ
պիտի ըլլամ Տէրով. հանգչեցուր ատ իմ
21 ազիքներս Քրիստոսով։ Ուստի հնազանդ ըլ-
լալուդ վրայ ապահով եղած՝ քեզի գրեցի.
որ գիտեմ թէ ըսածէս ալ էվելի կընես։
22 Ասկէ ի զատ ինծի բնակարան մըն ալ
պատրաստէ՛. ինչու որ կըյուսամ թէ ձեր ա-
23 ղօթքով ձեզի պիտի տրվիմ։ Խարև կու-
տայ ձեզի Եպափրասը՝ իմ գերութեանս ըն-
24 կերը Քրիստոս Յիսուսով. և Մարկո-

սր , ու Աբիատարքոսը և Դաւիթ՝ ու
25 Դաւիթ իմ գործքի բնկերներս : Ա՛ր
Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը
ձեր հոգիին հետ .
Ամէն :

Փիլիմոնին ու Աղեքսիոյն՝ Հեղինեան պերճաստղը ,
ու Կողոսացոց եկեղեցին Երիտասա ոսբ-
նա-ւագին՝ Հռոմայեն գրչեցո-
Հեղինեա ձառոյնն
ջեռոմը :

ՊՕՂՈՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԹՈՒՂԹՔ ԸՆԵՐՑՅԵՑԻՍ։

ԳԼ. Ը։

1 Շատ կերպերով ու շատ օրինակներով ա-
ռաջուց Աստուած խօսեցաւ մեր Հայրերուն
2 հետ մարգարէներով. ասկէ ետքի օրերուս իր
Որդովը մեր հետը խօսեցաւ, որ անկէ ամէն
չառի ժառանգ դրաւ. որ անով աշխարհքն ալ
3 ըրաւ. որ ինքը անոր փառքին լոյսն է, ու անոր
էութեանը բուն պատկերը. որ ամէն բան իր
զօրութեան խօսքովը կը բռնէ. ինքը մեր մեղք-
ը սրբելով՝ վերը Մեծութեան աջ
4 կողմը նըստաւ։ Հրեշտակներէն աւելի եղաւ հրեշ-
տակներէն, որքան որ անոնցմէ ալ աղէկ անուն
5 ժառանգեց։ Ինչու որ հրեշտակներէն որի՞ն
եղաւ որ ըսաւ, Կուն իմ Որդիս ես, ես քեզ
այսօր ծընայ. և դարձեալ թէ Ես անոր Հայր
պիտի ըլլամ, ու ան ինծի որդի պիտի ըլլայ։
6 Եւ դարձեալ՝ երբոր ան առջինեկը աշխարհ
խօսքէ, կըսէ. Աստուծոյ բոլոր հրեշտակները
7 երկրպագութիւն թող ընեն անոր։ Հայց

հրեշտակներուն վրայով կըսէ · Որ ինքը իր հրեշտակները հոգիներ ըրաւ , ու իր պաշտօնեաները կրակի բոց ։ Սակայն Որդիին կըսէ , 8
Աթոռ աթոռդ ո՛վ Աստուած՝ յաւիտեանս յաւիտենից է · քու թագաւորութեան գաւազանը՝ արդարութեան գաւազան է ։ Արդարու- 9
թիւնը սիրեցիր՝ ու անօրէնութիւնը ատեցիր · անոր համար ո՛վ Աստուած՝ քու Աստուածդ ուրախութեան եղով օծեց քեզ՝ քու ընկերներէդ աւելի ։ Եւ դուն ո՛վ Տէր՝ սկիզբէն երկիրը 10
հաստատեցիր , ու երկինքը քու ձեռքիդ գործն է ։ Անոնք կըկորսըվին՝ և դուն կաս ու կը 11
մնաս · ամէնը լաթերու պէս պիտի մաշին , ու 12
վերարկուի պէս · հանդերձի մը պէս պիտի պըրես անոնք՝ և պիտի պըլըվին · բայց դուն նոյն ես , ու քու տարիներդ չի պիտի պակսին ։ Հրեշտակներէն որի՞ն եղաւ 13
ըսաւ , Իմ աջ կողմն նըստէ՝ մինչև որ քու թշնամիներդ քու ոտքիդ կոխակը դնեմ ։ Չէ՞ որ անոնք ամէնը սպասաւորող հոգիներ 13
են , որ կըխրկըվին սպասաւորութեան անոնց համար՝ որոնք որ փրկութիւն պիտի ժառանգեն ։

Գ.

Անոր համար պէտք է մեզի էվելըը ականջ 1
դնել ան բաներուն , որ չըլլայ թէ ընաւ պակսինք ։ Վասն զի թէ որ ան խօսքը՝ 2
որ հրեշտակներուն ձեռքովը զուրցըվեցաւ , հաստատուն եղաւ , և ամէն յանցաւորութիւն ու անհնազանդութիւն պատիժ պատուհաս առաւ · մենք ինծո՞ պիտի խալըսինք՝ թէ որ ան- 3
հոգ ըլլանք անանկ փրկութենէն , որ խօսելուն սկիզբը Տէրոջմէն առաւ , ու լսողներուն ձեռքովը մեր վրայ հաստատվեցաւ · Աստուած ալ 4
վկայից նշաններով ու հրաշքներով՝ և զանազան

զօրութիւններով՝ ու Սուրբ Հոգիին պարգևներովը՝ ինծոր որ ինքը կամեցաւ :

5 Ինչու որ չէ՛ թէ հրեշտակներուն հնազանդեցաւ ան գալու աշխարհը , որուն համար որ
6 մենք կը խօսինք որ . Ա՛կը մէկ տեղ մը վկայեց՝ ու ըսաւ . Ա՛րդը ի՞նչ է՝ որ դուն կը յիշես անիկա , կամ մարդու որդին՝ որ տես կեր-
7 թաս անոր : Ա՛նոյն ըն քիչ մը վար բրիր անիկա հրեշտակներէն . փառքով և պատիւով պսակեցիր անիկա , ու քու ձեռքիդ գործքերուն
8 վրայ դրիր անիկա : Ա՛մեն բան անոր ոտքին տակը հնազանդ բրիր . ուստի ամենը որ հնազանդեցուց՝ մէկ բան մը անհնազանդ չի ձգեց անկէց . բայց հիմայ դեռ չենք տեսներկոր ա-
9 մենը անոր հնազանդած : Հապա Յիսուսը փառքով ու պատիւով պսակված կրտեսնանք՝ որ հրեշտակներէն քիչ մը վար եղած էր՝ մահուան չարչարանքին համար , որ Աստուծոյ շնորհքովը ամենուն համար մահը ճաշակէ : Որով-
10 հետև անոր կրվայէր , որուն համար ամենը՝ և անով ամեն բաները են , շատ որդիներ փառքին մէջ մտցունելու , անոնց փրկութեան Առաջնորդն ալ չարչարանքով կատարել :
11 Վ՛ասն զի ան որ կրսրբէ ու ան որ կրսրբըվի , ամենքն ալ մէկէ մրն են . անոր համար ինքը ամօթ չի սեպեր եղբայր կանչել անոնք՝ ու
12 ըսել . Կ՛ուս անունդ իմ եղբայրներուս պիտի զրուցեմ , և եկեղեցիին մէջը քեզ պիտի օրհ-
13 նեմ : Եւ դարձեալ թէ՛ Ես անոր պիտի յուսամ . ու դարձեալ՝ Ա՛յս ես ու իմ զաւակներս
14 որ ը , որ Աստուած ինծի տուաւ : Ուստի որով-հետև զաւակները արեւնին ու մարմնին հաղորդ եղան , ինքն ալ միեւնոյնովը ա-
նոնց հետ կրցմնցաւ . որ իր մահովը իշխանութիւնը ունէր ,
15 այսինքն է՛ Սատանան , և խալըսէ անոնք որ մահ-

ուան վախտը միշտ ծառայութեան մէջ կենած-
էին : Պանդ ընաւ հրեշտակներուն ձեռք չի 16
բռներ , հապա Աբրահամի զաւկին ձեռք կը
բռնէ : Ինոր համար ալ պէտք էր անոր բոլո- 17
րովին եղբայրներուն նման ըլլալ , որ ինքը ո-
ղորմած ըլլայ՝ ու հաւատարիմ քահանայապետ
Աստուծոյ կողմէն , ժողովուրդին մեղքերը
քաւելու համար : Ինչու որ ինչ բանով ինքը 18
չարչարվեցաւ նէ՝ փորձր առնելով , կրնայ փոր-
ձանաւորներուն ալ օգնական ըլլալ :

Գ Լ . Գ ։

Ասոր համար սուրբ եղբայրնե՛ր՝ երկնային կոչումին 1
մասնակիցներ , նայեցէ՛ք մեր դաւանութեանը
Առաքեալին ու Քահանայապետին՝ Յիսուս
Քրիստոսին . որ հաւատարիմ է անոր որ զինքը 2
դրաւ , ինչպէս որ Մովսէս ալ անոր բոլոր տանը
մէջ : Ինչու որ ինքը Մովսէսէն ալ էվելի 3
փառքի արժանի եղաւ . որչափ որ աւելի պատիւ
կունենայ տանը շինողը՝ քան թէ տունը :
Որովհետև ամէն տուն որ կըշինվի՝ մէկ 4
մը կըշինվի . բայց ան որ ամէն բաները
շինեց՝ Աստուած է : Մովսէս անոր բո- 5
լոր տանը մէջ հաւատարիմ է մէկ ծառայի մը
պէս՝ զուցցվելու խօսքերուն վկայ ըլլալու հա-
մար . բայց Քրիստոս որդիի մը պէս իր տանը 6
վրայ . որ անոր տունը մենք ենք . միայն
թէ ան համարձակութիւնը և յոյսին պարծանքը
մինչև վերջը հաստատ բռնենք :

Ինոր համար ասանկ կըսէ Հոգին Սուրբ . Այ- 7
սօր թէ որ անոր ձայնին կըլսէք , ձեր սիրտերը 8
մի՛ ամուրցուներ՝ ան սրդոդելու տեղին պէս
անապատին մէջ փորձութեան օրը . ուր որ ձեր 9
հայրերը իս փորձեցին . քննեցին իս՝ թէպէտև
քառասուն տարի իմ գործերս տեսան . անոր 10
համար զըղվեցայ ան ազգին , ու ըսի , Անիշտ միշտ-

րած են սիրտովնին· և իմ ճամբաներս չի ճանչ-
11 ցան անոնք· անանկ որ երդուայ իմ բարկու-
թեանս ատենը՝ որ Իմ հանգիստս չի պիտի
12 մտնան: Տեսեցէք եղբայրներ, չըլլայ որ ձեզ-
մէ մէկուն ներսի դին անհաւատութեան չար
սիրտ ըլլայ՝ ապստամբ ըլլալու կենդանի Աս-
13 տուծմէն: Հապա ամէն իժիր մէկըզմէկ յոր-
դորեցէք՝ քանի որ աս օրը առջևնիդ կայ· որ
չըլլայ թէ ձեզմէ մէկը ամուրնայ՝ մեղքին խա-
14 բէութիւնովը: Ինչու որ մենք Քրիստոսի
մասնակից եղանք· միայն թէ ան հաստատու-
15 թեան սկիզբը մինչև վերջը պինտ բռնենք· որ
ատեն որ կըսվի, Այսօր թէ որ անոր ձայնին
կը լսէք՝ ձեր սիրտերը մի՛ ամուրցունէք ան
16 սրդողելու ատենին պէս: Ինչու որ մէկքանի-
ները լսեցին ու սրդողցուցին· բայց չէ՛ թէ ան
ամէնը որ Եգիպտոսէն ելած էին Մովսէսի ձեռ-
17 քովը: Ասկէց զըզվեցաւ ան քառսուն տարին·
չէ՞ որ յանցանաւորներէն· որ անոնց ոսկոր-
18 ները անապատին մէջը ինկան: Որի՞ համար
երդուաւ ըրաւ իր հանգիստը չի մտնալու, թէ
19 չէ՝ անհաւատներուն: Եւ կըտեսնանք, որ չի
կրցան մտնալ իրենց անհաւատութեանը հա-
մար:

ԳԼ· Դ:

1 Վնանկ է նէ ալ վախնանք, որ չըլլայ թէ ա-
նոր հանգիստը մտնալու խոստմունքը մէկ դի
2 ձգելով՝ ձեզմէ մէկը զրկըված գտնըվի: Որով-
հետև մենք ան խոստմունքը առինք՝ ինչպէս որ
անոնք· բայց անոնց շահ մը չըրաւ ան խօսքը
լսելը՝ որ հաւատքին հնազանդելու չի կակղցան:
3 Բայց մենք՝ որ հաւատացինք, ան հանգիստը
կըմտնանք· ինչպէս որ ըսաւ թէ՝ Ինտր որ եր-
դում ըրի իմ բարկութեանս ատենը, որ իմ
հանգիստս չի պիտի մտնան· որ իրաւ ան գործ-

քերը աշխարհի սկիզբէն եղած էին ։ Ինչու որ 4
Դէյրը ասանկ կըսէ մէկ տեղ մը հօթներորդ
օրվան համար . Եւ Յաւուած հօթներորդ օրը
Հանգչեցաւ իր ամէն գործքերէն . ու հոս նորէն 5
կըսէ որ Իմ Հանգիստըս չի պիտի մտնան ։
Ուստի՝ որովհետև ոմանք արդիլվեցան հոն 6
մտնալու , և անոնք որ առաջուց խոստմունքը
առեր էին՝ անհաւատութեան համար չի մտան .
նորէն ուրիշ օր մը կըսաչմանէ՝ ու կըսէ Այ- 7
սօրը Դաւիթին բերնովը այնքան ժամանակներէն
ետքը , ինչպէս առաջուց ըսաւ . Այսօր թէ որ
անոր ձայնին կը լսէք՝ սիրտերնիդ մի՛ ամրացու-
նէք ։ Ինչու որ թէ որ Յեսու անոնք Հանգչե- 8
ցուցած ըլլար , ալ անկէ ետքը ուրիշ օրվան հա-
մար չէր զրուցեր ։ Ընդունկ է նէ Յաւուածոյ ժո- 9
ղովուրդոցը գեռ պահաս կըմնայ Հանգիստը ։
Վասն զի ան որ անոր Հանգիստը մտաւ , ալ 10
ինքը Հանգչեցաւ իր գործքերէն , ինչպէս որ
Յաւուած ալ իրմէններէն ։ Ուրեմն ջանանք ան 11
Հանգիստը մտնալու . որ չըլլայ թէ մէկը նոյն ան-
հաւատութեան օրինակին պէս իյնայ ։ Ինչու 12
որ Յաւուածոյ խօսքը կենդանի է ու զօրեղ՝ և ա-
մէն երկու բերնէ դանակէ կտրուկ , որ կանցնի
մինչև շունչը ու ոգին բաժնելու և յօդուածները
և ըղեղը . և կըքննէ միտքը՝ ու սրբտին խոր-
հուրդները . և չի կայ մէկ արարած մը անոր 13
դիմացը չերևցած . Հապա ամէն բան բաց ու
յայտնի է անոր աչքին առջևը , որուն հետ որ
մեր հաշիւը է ։

Ուստի ան մեծ Քահանայապետը որ ունինք 14
մենք՝ երկինքը անցած , Յիսուսը Յաւուածոյ Որ-
դին , ամուր բռնենք մեր դաւանութիւնը ։ Ին- 15
չու որ չէ թէ քահանայապետ մը ունինք՝ որ կա-
րող չըլլայ մեր տկարութեանը հետ ակտեղ չար-
չարվիլ . Հապա ինքը ամէն կերպով փորձը ա-
ռած է մեզի նման բայց առանց մեղքի ։ Ուստի 16

ալ համարձակութիւնով մնախկնանք անոր շնորհացը աղօտին առջեւը, որ ողորմութիւն ընդունենք ու շնորհք գտնանք պէտք եղած ատենը
Ե օգնելու։ Ինչու որ ամէն քահանայապետ մարդոց մէջէն առնուելած՝ մարդկիներուն համար կը կենայ Աստուծոյ կողմը, որ պատարագներ ու
2 զոհեր մատուցանէ մեղքերուն համար, չափով կրնայ չարչարուիլ անոնց հետ որ տգէտ ու մոլորեալ են, ինչու որ ինքն ալ տկարութիւնով
3 պաշարուած է, անոր համար չարկ է ինչպէս որ ժողովուրդին համար՝ անանկ ալ իր անձին համար պատարագ մատուցանել մեղքերուն համար։
4 Ե՛ւ չէ թէ մէկը ինքզինքով ՚ից պատիւը կառնէ, հապա ան որ Աստուծմէ կը կանչուի՝ ինչ-
5 պէս որ Ահարոնը։ Ընանկ ալ Քրիստոս չէ թէ իր անձը մեծարեց քահանայապետ ըլլալու, հապա ան որ իրեն ըսաւ՝ թէ Դուն իմ Որ-
6 դիս ես, ես քեզ ասօր ծնայ։ Ինչպէս ուրիշ տեղ մըն ալ կըսէ, Դուն յաւիտեան քահա-
7 նայ ես Մելքիսեդեկի կարգին պէս։ Ան որ իր մարմնին օրերը սաստիկ գոչումով ու արցունքով աղօթք և աղաչանք կրմատուցանէր անոր՝ որ կարող էր զինքը մահուանէ խլուըսել,
8 ու կըլսուէր իր ակնկալութեանը համար, թէպէտ ինքը Որդի է, բայց ան չարչարանքներովը
9 հնազանդութիւն սորվեցաւ, և երբոր կատարեցաւ՝ բոլոր իրեն հնազանդողներուն յաւիտե-
10 նական փրկութեանը պատճառ եղաւ, ու Աստուծմէ յաւիտենական Քահանայապետ ըսուեցաւ Մելքիսեդեկին կարգին պէս։
11 Մեզի վրայ կան մեկի շատ խօսքեր՝ ու դժուարին՝ մեկնելու, ինչու որ դուք անանջ-
12 նեղութիւններ քաշեցիք։ Որ պէտք էր ձեզի այլեւս ժամանակին մէջ սորվեցնող ըլլալ, բայց նորէն պէտք է ձեզի սորվիլ թէ ի՞նչ է Աստուծոյ պատգամներուն առաջին սկզբունքը։

ու դուք կաթի կարօտ եղաք , և չէ՛ թէ հաստա-
տուն կերակուր ։ Ինչու որ ան ամէնը որ 13
կաթնկոտ է՝ արդարութեան խօսքին տգէտ է ,
որովհետև տղայ է ։ Հայց հաստատուն կերա- 14
կուրը կատարեալներուն է , որ անոնց՝ չափահաս
բլլալնուն համար , ուսնելու զգայարանքը սորված
է աղէկը ու գէշը ընտրելու ։ Եւ Քրիստոսի Ը
վրայով առչի սորվելիքները ձգելով՝ կատար-
եալին գանք , առանց նորէն հիմ ձգելու ան
մեռած գործքերէն ապաշխարելու՝ ու դէպ՛ի
Աստուծոյ հաւատք ունենալու , և մկրտութիւն- 2
ներուն վարդապետութեանը , ու ձեռքի ձեռնա-
դրութեանը , և մեռելներուն յարութեանը ,
ու յաւիտենական դատաստանին ։ Եւ պիտի 3
բնենք ան , թէ որ Աստուած չթամպէ նէ ։
Ինչու որ անհնար է մէկ անգամ մկրտեալնե- 4
րուն՝ որ երկնաւոր պարգևներուն համը առին ,
ու Հոգւոյն Սրբոյ հաղորդ եղան , և Աստու- 5
ծոյ աղուոր խօսքին համը առին՝ ու գալու աշ-
խարհին զօրութիւնները , և կրծանավին ։ նորէն 6
ապաշխարութիւնով նորոգելու ։ որովհետև
կրկին Աստուծոյ Որդին խաչը կրհանեն ի-
րենց անձին , ու նորէն կրնայտառակեն ։ Ին- 7
չու որ ան երկիրը՝ որ իր վրայ շատ հեղ եկած
անձրևը կխմէ , և շահաւոր բերքեր կբերէ
անոնց՝ որ անոր համար իրենք աշխատեցան ,
Աստուծմէ օրհնութիւն կընդունի ։ բայց ան որ 8
փուշ ու տատասկ կբերէ՝ անպիտան է ու ա-
նէծքի մօտ , և անոր վերջը երկիլ է ։ Հայց ես 9
ձեր վրայ հաստատած եմ սիրելինե՛ր՝ ան աղէկ
կոյսը , և ան որ փրկութիւնով լիցուն է , որ
ձեզի՛ս ասանկ կըխօսինք ։ Զի՛ թէ Աստուած 10
անիրաւ է , որ ձեր գործքերը մոռնայ՝ ու ան
սէրը , որ իր անունին համար ցուցուցիք , որ
սուրբերուն ծառայեցիք՝ ու կըծառայէք ։
Ա՛նենք ալ կըփաղձանք որ ձեզմէ ամէն մէկը 11

նոյն չանքը ցուցընէ ի յոյսին հաստատվելուն
12 մինչև վերջը · որ դուք տկարամիտ չըլլաք · հապա նմանող եղի՛ք անոնց որ հաւատքով ու համբերութիւնով ան խոստմունքները ժառանգեցին:
13 Ինչու որ երբոր Աստուած Աբրահամին ան խոստմունքը ըրաւ, որովհետև ուրիշ մէկ մեծ
14 մը չի կար՝ որ անոր վրայ երդում ընէր, իր անձին վրայ երդում ըրաւ՝ ու ըսաւ. Իրա՛ւ՝ օրհնելով պիտի օրհնեմ քեզ, ու շատցունելով
15 պիտի շատցունեմ քեզ: Եւ անանկ երկայնամիտ ըլլալով՝ ան խոստմունքին հասաւ: Ինչպէս որ մարդիկ՝ ինչ որ իրենցմէ վեր է, անոր վրայ երդում կընեն, ու անոնց բոլոր հակառակութիւնը հաստատելու վճիռը
17 երդումն է: Ա՛ր անով Աստուած ուզելով էվելօքը ցուցընել խոստմունքին ժառանգաւորներուն իր խորհուրդին հաստատուն
18 թիւնը՝ երդումը մէջ ձգեց. որ ան երկու անփոփոխելի բաներովը՝ որոնցմով անկարելի է Աստուծոյ սուտ ըլուցել, մենք՝ որ ապաւինեցանք, հաստատուն մխիթարութիւն ունենանք ան
19 հանդերձեալ յոյսը ամուր բռնելու. որ ան յոյսը ունենանք իբրև մէկ հաստատ ու անշարժ խարիսխ մը մեր անձին. որ՝ ան վարագուրին ներսի կող-
20 մը կըմտնայ. ուր որ մեր Առաջնորդը Յիսուս մեզի համար մտաւ՝ յաւիտենական Քահանայապետ եղած՝ Մելքիսեդեկի կարգին պէս:

ԳԼ· Ի:

1 Որովհետև սա Մելքիսեդեկը Սաղիմայ թագաւորն էր՝ Քահանայ Աստուծոյ քահանան. որ ինքը Աբրահամին դիմացը ելաւ՝ երբոր անիկա թագաւորներուն կոտրտելէն ետ դար-
2 ձեր կուգարկոր, ու օրհնեց անիկա. որ անոր Աբրահամն ալ տասանորդ տուաւ բոլոր բաներ-

րէն. առաջ՝ արդարութեան Թագաւոր կը[լ]մարգ-
մանվի, եւ[ր]ը Սաղեմայ Թագաւոր՝ որ է խաղա-
ղութեան Թագաւոր. առանց հօր՝ առանց մօր՝ 3
ազգաշնաւոր չունենցող, որ ոչ օրերու սկիզբ
ունի՝ ոչ ալ կեանքին վերջը. Աստուծոյ Որ-
դիին նման ըլլալով՝ կայ ու կը մնայ միշտ քահա-
նայ։

Ուստի նայեցէք՝ ինչո՛ր մէկ մարդ մըն էր ասի- 4
կա. որ անոր Աբրահամ նահապետն ալ տասա-
նորդ տուաւ ան կողոպուտէն։ Եւ Ղևիին 5
որդիքներէն անոնք որ քահանայութիւն կառա-
նեն՝ պատուէր ունին որ ժողովուրդէն տասա-
նորդ առնեն՝ ան օրէնքին պէս, այսինքն է ի-
րենց եղբայրներէն. թէպէտ Աբրահամին մէջ-
քէն ելեր են. բայց ան որ անոնցմէ ազգի մէջ 6
չէր սեպված՝ Աբրահամէն տասանորդ առաւ.
ու ինքը օրհնեց անիկա՝ որ խոստմունքը առած
էր։ Ինչու որ առանց մէկ հակառակութիւնի 7
մը պզտիկը լաւէն կօրհնվի։

Եւ հոս մահկանացու մարդիկ տասանորդ 8
կառնեն. բայց հոն վկայեցաւ որ ապրող ա-
նոր կենդանի է. Եւ ինչպէս խօսքին կարգն
է ըսել. թէ՝ Ղևին ալ՝ որ ինքը տասանորդ 9
կառնէր, Աբրահամին ձեռքովը տասանորդ
տուաւ. ինչու որ տակաւին իր հօրը մէջքն էր՝ 10
երբոր Մելքիսեդեկ անոր առջևը ելաւ։

Ուստի թէ որ կատարվելը Ղևացոց քահա- 11
նայութեան ձեռքովը էր, (որովհետև ժողո-
վուրդը անոր ատենը Օրէնքին տակը դրվեցաւ,)
ինչ պէտք էր որ Մելքիսեդեկին կարգին պէս
ուրիշ քահանայ մը ելլայ, ու չըսվի թէ Ահա-
րոնին կարգին պէս։ Հապա թէ որ քահանա- 12
յութիւնը փոխվի, հարկ էր որ օրէնքին ալ
փոփոխմունք ըլլայ։ Եւ[ք]սո՛ գործեցաւ ինչ- 13
ու՛ որ ան, որուն համար ասանկ կրսվի, ուրիշ
ցեղի հաշտարարութիւն ունեցաւ. որ ան զեղէն

14 մէկը բնաւ սեղանին հաղորդ չեղաւ. որով-
հետև յայտնի է որ Յուդային ցեղէն առաջ
եկաւ մեր Տէրը. որ ան ցեղին վրայով Մովսէս
բան մը չի պատուիրեց քահանայից համար:
15 Ու ալ էվելօքը յայտնի է ու փոխվեցաւ, թէ որ
Մելքիսեդեկին նման ուրիշ քահանայ մը ել-
16 լաւ ըլլայ՝ որ ան չէ՛ թէ մարմնաւոր պատուէ-
րին պէս եղաւ, հապա անվախճան կենաց
17 զօրութեանը պէս: Ինչու որ վկայվեցաւ թէ՝
Դուն յաւիտեանս քահանայ ես Մելքիսեդեկին
18 կարգին պէս: Ընդարձակութիւն եղաւ առջի
պատուիրանքին իր տկարութեանը ու ան-
19 շահութեանը համար. (ինչու որ օրէնքը մէկ
բան մը կատարեալ չըրաւ,) և մէկ աղէկ յոյսի
մը մտնալը նոյ՝ որ անով Աստուծոյ կըմօտիկ-
նանք:
20 Եւ այնքան՝ որ չէ՛ թէ առանց երդումի քահանայ
եղաւ. (ինչու որ մէկ քանիները կան՝ որ առանց
21 երդումի քահանայ եղած են. բայց ասիկա եր-
դումով՝ անոր ձեռքովը, որ իրեն ըսաւ. Տէրը
երդում ըրաւ, ու ալ չի պիտի զղջայ. դուն
22 յաւիտեանս քահանայ ես.) և այնքան էվելօք
աղէկ ուխտի մը երաշխաւոր եղաւ Յիսուս:
23 Ու եղած քահանաները շատ են, իրենց միշտ
24 մնալուն մահը արգելք ըլլալուն համար. բայց
ասիկա յաւիտեան կենալուն համար անանցանե-
25 լի ունի քահանայութիւնը. ուստի բոլորովին
կրնդանի՛ ալ ընելու կարող է անոնք՝ որ իրմով
Աստուծոյ կուգան. որովհետև ինքը միշտ կեն-
դանի է անոնց համար բարեխօս ըլլալու:
26 Վասն զի մեզի ճիշտ ասանկ մէկ քահանայա-
պետ մը կըվայելէր, սուրբ՝ անմեղ՝ անարատ՝
մեղաւորներէն զատված՝ ու երկինքէն ալ բարձ-
27 րըցած. որ անոր ամէն իժիր հարկ չէ՛ ինչպէս
ուրիշ քահանաներուն՝ առաջ իրենց մեղքին
համար պատարագ մատուցանել, ու ետքը ժո-

դովութիւն համար · հապա ասիկա մէկ անգամ մը ըրաւ ան , իր անձը պատարագ մատուցանելով : Օրէնքը սակաւութիւնով պաշարած մարդիկը քահանայապետ կրկեցուներ , բայց երդումին խօսքը որ օրէնքէն ետեւ էր , Որդին՝ որ յաւիտեան կատարեալ :

Գ.

Ե ւ զրուցած խօսքերուս գլուխը ա՛ն է · անանկ քահանայապետ մը ունինք մենք՝ որ ինքը երկինքը Մեծութեանը աթոռին աջ կողմը նստաւ · սրբութիւն ըրածի պէսին պաշտօնեայ , ու ճշմարիտ խորանին՝ որ Տէրը կայնեցուց և չէ թէ մարդ : Որովհետև ամէն քահանայապետ զոհեր ու պատարագներ մատուցանելու համար կրկենայ · ուստի հարկ է անոր ալ բան մը ունենալ՝ որ մատուցանէ : Որ թէ երկրի վրայ ըլլար , ալ ինքը քահանայ չէր ըլլար · ինչու որ կային օրէնքին պէս · (որ անոնք երկնային բաներուն նմանութիւնովը ու օրինակովը կը ծառայեին · ինչպէս որ Մովսէսին ազդարարվեցաւ՝ երբոր խորանը պիտի շինէր · Տեսէ՛ ըսաւ , ամէնը ան օրինակին պէս ընես որ լեռը ցուցեալ քեզի ·) սակայն Յիսուս էվելօք աղնիւ պաշտօնի մը հասաւ , որչափ որ էվելօք աղէկ դաշինքը մը միջնորդ է · որ գեղարդանց խոստումներով կարգադրեցաւ :

Ինչու որ եթէ առջինը անարատ էր նէ , ուրեմն երկրորդին տեղ չէր փնտրուիր : Որովհետև կը բամբասէ անոնք ու կըսէ · Ահա օրերը պիտի գան՝ կըսէ Տէրը , և ես Իսրայէլի տանը հետ ու Յուդայի տանը հետ նոր դաշինք մը պիտի ընեմ · չէ թէ ան դաշինքին պէս որ անոնց հայրերուն հետ զրի ան օրը՝ երբոր ձեռքերնուն բունցի Եգիպտացոց երկիրէն անոնք

հանելու · քանզի անունք իմ դաշինքիս մէջը չի
կեցան , ես ալ անհոգ եղայ անոնց վրայով՝
10 կրսէ Ա՛մենակալ Տէրը : Ա՛յդ աս է ան դա-
շինքը՝ որ Իսրայէլի տանը հետ պիտի գնեմ՝ ան
օրերէն ետքը՝ կրսէ Տէրը · Իմ օրէնքըս անոնց
միտքին մէջը պիտի դնեմ , ու անոնք իրենց
սրտին մէջը գրեմ · ու ես անոնց Աստուած պի-
տի ըլլամ , անոնք ալ ինծի ժողովուրդ պիտի
11 ըլլան : Եւ ալ չի պիտի սորվեցունեն ամէն մէ-
կը իր քաղաքացին , ու ամէն մէկը՝ իր եղբայրը ,
ու ըսեն թէ՝ Ա՛նչցիր Տէրը · ինչու որ ամէնքն
ալ ինձ պիտի ճանչնան անոնց պզտիկներէն
12 մինչև մեծերը : Վասն զի ես անոնց անի-
րաւութիւնները պիտի ներեմ , և իրենց մեղքերը ու անօրէնութիւնները ալ չի
պիտի յիշեմ :
13 Ասսի նոր ըսելովը՝ առջինը հինցուց · ու ան
որ կը հինանայ և կը ծերանայ՝ ալ մօտ է ապակա-
նելու :

ԳԼ· Ի·

1 Արաւցանէ առաջին պաշինքն ալ ունէր պաշ-
տամունքին արարողութիւնը , ու ան աստեղ
2 աշխարհային սուրբ տեղը : Ինչու որ առաջին
խորանը որ Սուրբ տեղ կըսվէր՝ սասանկ պատ-
րաստեցաւ · որուն մէջը կար աշտանակը՝ ու սե-
3 ղանը՝ և ընծայվելու հացը : Եւ երկրորդ վա-
րագուրին ետին ան խորանը՝ որ Սրբութիւն
4 սրբութեանց կըսվէր · որուն մէջը կար ոսկի
բուրվառը , ու կտակարաններուն պատուկը՝ ներ-
սէն ու դուրսէն ոսկիով պատած · որուն մէջը ոս-
կիէ սափորը մանանայով լեցուն , և Ահարոնին
գաւազանը՝ որ կանչըցաւ , ու ան կտակարաննե-
5 րուն տախտակները · և անոր վրայ փառաց քերու-
բէները՝ որ քաւութիւնին վրայ շուք կընէին ·
որուն համար չըլլար հիմայ մէկիկ մէկիկ զրուցել :

Եւ ան ամէնը որ անանկ պատրաստուած էր , 6
առջի խորանը ամէն իժիր կըմտնային քահանա-
ները պաշտամունքը կատարելու . բայց երկրոր- 7
դը՝ տարին մէկ անգամ մը Ղեւի քահանայապե-
տը կըմտնար . ան ալ չէ՛ թէ առանց արիւնի , որ
իրեն համար՝ ու ժողովուրդին սխալմունքներուն
համար կըմատուցանէր . Հոգին Սուրբ աս ցու- 8
ցընելով՝ որ դեռ սրբարանից ճանապարհը
յայտնի եղած չէր . քանզի տակաւին ան առջի
խորանը հաստատուն կեցեր էր . որ ան օրինակ 9
մըն էր հիմակու ատենիս . որուն համեմատ
պատարագներ և զոհեր կըմատուցվէին . որոնք չէին
կրնար կատարել պաշտօնեաներուն խղճմտանքը .
Հապա միայն կերակուրներով՝ ըմպելիքներով ,
և կերպ կերպ լուացմունքներով՝ մարմինի արդա- 10
րութիւնները էին , որոնք մինչև բարեկարգու-
թեան ատենը դրված էին : Բայց Քրիստոս՝ 11
որ եկաւ գալու բարիքներուն քահանայապետը՝
մեծ ու կատարեալ և անձեռագործ խորանովը ,
այսինքն՝ ան որ աս ստեղծուածներէն չէ՛ , ոչ 12
ալ նոխազներուն ու զուարակներուն արիւնո-
վը , հապա իր արիւնովը մէկ անգամ մը
սուրբ տեղերը մտաւ՝ յաւիտենական փրկու-
թիւն գտնելով : Վասն զի թէ որ ցուլերուն 13
ու նոխազներուն արիւնը՝ և երինջներուն մոխիրը
ցանվելով պղծեալները կըսրբէր մարմինի մաք-
րութեան կողմանէ . ալ որքան էվելօք Քրիստոսի 14
արիւնը՝ որ յաւիտենական Հոգիին ձեռքովը իր
անձը անարատ պատարագ մատուց Աստուծոյ ,
կըսրբէ ձեր խղճմտանքը ան մեռած գործքերէն՝
կենդանի Աստուածը պաշտելու :

Եւ անոր համար ինքը աս նոր դաշինքին 15
միջնորդ է . որ էր մահը առջի դաշինքին յանցանք-
ներուն քաւութեանը համար եղած ըլլալով ,
յաւիտենական ժառանգութեան հրաւիրվածները
ան խոստմունքը առնեն : Ինչու որ ուր 16

որ կասկ մը ըլլայ՝ Հարկաւոր է որ ան կասկը
17 գրոցին մեռած ըլլալը ցուցնի · ինչու որ կասկը
մեռնելէն ետեւ Հաստատ է Հապա թէ չէ ինչպէս
Հաստատ կրնայ՝ քանի որ կասկը գրողը ողջ է ։
18 Ընդ Համար առչի պաշինա ալ առանց արիւնի
19 էէր Հաստատուէր ։ Ա՝ասն ալ երբոր օրէնքին
ամէն պատուէրները Ա՝ոլսէս ժողովուրդոյը
պատմեց , ցուլերուն ու նոխազներուն արիւնը
առնելով՝ ջուրով՝ ու բուրդով , կարմիրով՝ և
զոպայով բուն կասկարաններուն և բոլոր ժո-
20 ղովուրդոյը վրայ ցանեց , և ըսաւ ՝ Ա՝սիկա է ան
կտակին արիւնը , որ Ա՝ստուած ձեզի պատուի-
21 րեց ։ Եւ խորանին վրայ , ու սպասին բոլոր
22 կարասիքին վրայ անանկ ցանեց արիւնը ։ Եւ
գրեթէ ամէն բան արիւնով կրմաքրըվէր օ-
րէնքին Նայելով , ու արիւն չի թափվելով Թո-
ղութիւն չէր ըլլար ։
23 Ա՝ւստի Հարկ էր որ օրէնքով Եղած բաները
սանակ պաթպոճներով սրբըվին · բայց բուն
երկնաւորները անոնցմէ էվելի աղէկ պատարագ-
24 ներով ։ Որովհետև Ա՝բրիատոս չէ մէկ ձեռքով
շինած սուրբ տեղերը մտաւ , որ ճշմարիտին
օրինակներ էին · Հապա բուն երկինքը մեզի Հա-
25 մար Ա՝ստուծոյ երեսին առչիւ ըլլալու · չէ մէկ
որ շատ անգամ իր անձը պատարագ մատուցա-
նէ , ինչպէս քահանայապետը որ տարիէ տարի
սրբութիւն սրբութեանցը կրմտնար օտար ա-
26 րիւնով · Հապա մէկ չէ պէտք էր իրեն աշխար-
հի սկիզբէն Հետ շատ անգամ չարչարվիլ ·
բայց ասա Հիմայ մէկ անգամ մը ան դարերուն
վերջը իր անձին պատարագովը յայտնըվեցաւ՝
27 մեղքը մէկ դի ձգելու Համար ։ Եւ ինչպէս որ
մարդոց սահմանված է մէկ անգամ մը մեռնիլ ,
28 ու անկէ ետքը դատաստան · անանկ ալ Ա՝բրիս-
տոս մէկ անգամ մը պատարագ մատուցվեցաւ՝
շատերուն մեղքերը վերցունելու Համար · բայց

երկրորդ անգամին առանց մեղքի պիտի յայտնը-
վի անոնք փրկելու համար՝ որոնք հաւատքով
անոր կը սպասեն :

Իրովհետեւ օրէնքը գալու ժ.
բարիքներուն շուքը ունէր , ու չէ թէ ան
քաներուն բուն կերպարանքը . տարի տարի
նոյն պատարագները միշտ կրմատուցանեն , որ
կարող չէ ան մատուցողները կատարել :
Ապա թէ չէ կը դադրէին մատուցանելէն , մէկ 2
անգամ մաքրըված պաշտօնեաները ալ անկէ
ետեւ մեղքի խղճմտանք մը չունենային հա-
մար . բայց ան պատարագներուն մէջը տար- 3
ւէ տարի նորէն մեղքերը կյիշեցին : Ինչու 4
որ ան նոխազներուն ու ցուլերուն արիւնը չէր
կրնար մեղքերը մէկ դի վերցուցնել : Ընդ 5
համար իր աշխարհ մտնելու առեն՝ կըսէ ,
Օ՛հերը ու պատարագները չուզեցիր դուն . հապա
ինծի մարմին մը հատուցեցիր . ողջակէզներուն 6
և մեղքի համար պէղեռնա չի հաւնեցար : Ընդ- 7
տեղը ըսի որ՝ Ընդ եկայ ես , գրոց պատմեցեան
մէջը ինծի համար գրված է՝ քու կամքդ ընելու
համ Ընտուած : Վերը կըսէ թէ , Օ՛հերուն 8
ու պատարագներուն և ողջակէզներուն ու մեղ-
քի համար պէղեռնա չի հաւնեցար ու չուզեցիր ,
անոնք որ օրէնքին պէս կրմատուցվէին : Ետ- 9
քը կըսէ , Ընդ ես կու գամ որ քու կամքդ ընելու
համ Ընտուած . առջեւը մէկ դի կրձգէ , որ երկ-
րորդը հաստատէ : Ուր ան կամքով մենք ալ 10
սրբըվեցանք՝ Յիսուս Քրիստոսի մարմինին մէկ
անգամ պատարագվելովը :

Եւ ամէն քահանայապետ ամէն իրիկուն ան պաշ- 11
տօնին մէջ կը կենայ , և նոյն պատարագները
շատ անգամ կրմատուցանէ , որոնք բնաւ չեն
կրնար մեղքերը մէկ դի վերցուցնել . բայց ասիկա 12
մէկ պատարագ մը մատուց մեղքերու համար , ու
յաւիտենական որպէս Ընտուծոյ աջ կողմը նստաւ .
և ասկէ ետեւ ինքը կը սպասէ՝ մինչեւ որ իր թշնա- 13

14 միները իր ոտքին տակը գրվին : Ինչու որ
մէկ պատարագով մը մշտնջենաւորապէս կա-
տարեց ան սրբըվածները :
15 Նայց Հոգին Սուրբ ալ կըվկայե մեզի .
16 առաջուց ըսելէն ետև , Թէ Այսիկա է դաշինքը որ
ես անոնց հայրերուն հետ պիտի դնեմ ան օրե-
րէն ետքը , (կըսե Տէրը) Իմ օրէնքներս անոնց
սըրտին մէջը պիտի դնեմ , ու իրենց միտքին մէ-
17 ջը պիտի գրեմ անոնք . ետքը կըսե Թէ Ընդոց
մեղքերը և անոնց անօրէնութիւնները ալ չի
18 պիտի յիշեմ : Ուստի ուր որ Թողութիւն է ,
ալ մեղքի համար պատարագ պէտքը չէ :
19 Ուստի ղեղբայրներ՝ համարձակութիւն ունինք
20 սուրբ տեղը մտնալու Յիսուսի արիւնովը . ան
նոր ու կենդանի ճամբովը՝ որ նոր բացաւ մեզի
վարագուրին ձեռքովը՝ այսինքն իր մարմինովը .
21 և մեծ քահանայ մը ունենալով Աստուծոյ տանը
22 վրայ , մօտենանք ճշմարիտ սրտով՝ լեցուն
հաւատքով , սիրտերնիս չար խիղճէրէն լըւանա-
լով , ու մարմիններս սուրբ ջուրով լըւանալով :
23 Չմուռը բռնենք ան յոյսին դաւանութիւնը ա-
ւանց շարժելու . ինչու որ ինքը հաւատարիմ է՝
24 որ խոսք տըւաւ : Եւ մեկզմեկու հոգ տանինք՝
յորդորելով սիրելու ու բարի գործքեր ընելու .
25 և մեկտեղ ժողվմվիլը չի թողունք , ինտոյ մեկ
քանիները սովորութիւն ունին . հապա միւսնե-
յորդորենք , ու այնքան աւելիօք՝ որքան որ ան
օրը մօտեցած կըտեսնանք :
26 Վասն զի թէ որ ճշմարտութիւնին գիտու-
թիւնը ընդունելէն ետև ուզելով մեղք գործելու
ըլլանք՝ ալ անկէ ետև մեղքերու համար պատա-
27 րագ պէտք չէ . հապա մեկ զարհուրելի սպասել
մը դատաստանին ու բարկութեան կրակին , որ
28 պիտի լափե հակառակորդները : Ով
Մովսէսին օրէնքը անարգէր , առանց ողորմա-
թիւնի երկու կամ իրեք վկաներով կըմեռնէր .

ալ որչափ սաստիկ պատիժի արժանի կըսեպէք 29
անիկա , որ Աստուծոյ Որդին ոտքի տակ առաւ .
ու նոր դաշինքին արիւնը խառնակ սեպեց , որ
անով ինքը սրբըվեցաւ , և շնորհքին Հոգին ա-
նարգեց : Հայց գիտենք անիկա որ ըսաւ , Իմն 30
է վըճիռն դրուելիքը , ու հատուցումը ես պիտի
ընեմ՝ կըսէ Տէրը . և դարձեալ թէ՝ Տէրը կը
դատէ իր ժողովուրդը : Սիրտ վախնալու բան 31
է կենդանի Աստուծոյ ձեռքը խմելը :

Ուստի միտք բերէք ան առջի օրերը՝ երբոր 32
լուսաւորուած շատ վիշտերու ու չարչարանքնե-
րու համբերեցիք . երբեմն նախատինքներով
ու նեղութիւններով խայտառակուած , երբեմն
ալ անոնք աշխատութիւն քաշողներուն կցորդ
ըլլալով : Ինչու որ կապեալներուն հետ 34
չարչարուեցաք՝ ու ձեր ստացուածքին կողոպտիլը
խնդութիւնով ընդունեցիք . որովհետև գիտէք
որ ալ էվելի աղէկ ստացուածներ ունիք ձեզի
երկինքը , ուր կըմնան ու կըմնան : Ուստի 35
ձեզմէ մի՛ ձգէք ան ձեր վստահութիւնը . որ ան
մեծ վարձքի հատուցում ունի : Պէտք է ձեզի 36
համբերութիւն , որ Աստուծոյ կամքը ընելով՝
խոստմունքին հասնիք . ինչու որ ալ ասկէց քիչ
մը ատենէն ան որ պիտի գայ՝ կուգայ , ու չի 37
ուշնար : Պատճառն որ իմ արդարս հաւատ- 38
քէն պիտի ապրի . և թէ որ ետկը երկու մտքով է
իմ անձս անոր չի հաւնիր : Հայց մենք չենք թէ 39
երկու միտքով կորսըվելու վրայ ենք . հապա
հաւատքով Ոչ հոգիներուն փրկըվելուն :

ԺԱ. ԿԱՒ :

Հաւատքը ի՞նչ է , թէ չէ յուսացուած բանե- 1
ներուն հաստատութիւնը՝ ու չերեւցած բա-
ներուն յայտնի ցուցմունքը . Վասն զի անով 2
առջինները վկայութիւն ունեցան :

Հաւատքով կիմանանք որ աշխարհքը Աս- 3

տուածոյ խօսքովը հաստատվեցաւ , անկեւոյթ բա-
ներէն ասկ եկեւցածները եղան :
4 Հաւատքով Աբելը Կայենէն աղեկ պատա-
րագ կըմատուցանէր Աստուծոյ . որ անով վկայ-
վեցաւ արդար ըլլալը . ինչու որ էր պատարագ-
ներուն վրայ Աստուծմէ վկայութիւն եղաւ իրեն .
որ թէպէտ ինքը անով մեռաւ , բայց տակաւին
կըխօսի :
5 Հաւատքով Ենովք Երկինք փոխվեցաւ , որ
մեռնելու համը չառնէ . ու մէկ տեղ մը չէր
գտնըվէր , ինչու որ Աստուած փոխեց անիկա .
և անոր փոխվելէն առաջ՝ ինքը վկայվեցաւ որ
6 Աստուծոյ հաճոյ է : Բայց առանց հաւատքի
անհնարին է Աստուծոյ հաճոյ ըլլալ . հապա
ան որ Աստուծոյ կըմօտիկնայ՝ պէտք է որ
հաւատայ թէ Աստուած կայ , ու պարգև կը
հատուցանէ անոնց որ ինքը կըփնտռեն :
7 Հաւատքով Նոյ հրաման մը առնելով Աս-
պուածմէ՝ դեռ չերևցած բաներուն համար , վախ-
նալով ան տապանը կըշինէր իր տանը փրկու-
թեանը համար . որ անով աշխարհքս դատա-
պարտեց , և ժառանգաւորը եղաւ ան արդարու-
թեանը որ հաւատքով կըլլայ :
8 Հաւատքով երբոր Աբրահամ կանչվեցաւ՝
մտիկ դրաւ ան տեղը ելլալու , որ անիկա պիտի
ժառանգեր . ելաւ գնաց , ու չէր գիտեր ուր
9 կերթար : Հաւատքով պանդխտութիւն քա-
շեց աւետեաց երկիրը՝ որպես թէ օտարութեան
մէջ . վրաններով բնակեցաւ Իսահակին ու Յա-
կոբին հետ մեկտեղ , որ իր հետը ժառանգորդ
10 էին ան խոստումնքին . ինչու որ ինքը կըսպասէր
ան հիմերով հաստատված քաղաքին . որուն
ճարտարապետը ու արարիչը Աստուած է :
11 Հաւատքով ինքը Սառան ալ՝ որ ամուլ էր , որ-
դեծնութեան սերմ առնելու զօրութիւն ընդու-
նեց , և ատենը անցած հասակին մէջը պտուղ

ծնաւ . ինչու որ Հաւատարիմ սեպեց անիկա որ
էրեն խօսք տալաւ : Ուստի ան մէկ հատէն 12
կըծնանէին . ան ալ անցած ժամանակի մէջ՝
երկինքի աստղերուն պէս շատ , ու ծովին քովի
եղած աւազին պէս առանց համրանքի :

Ասոնք ամէնն ալ Հաւատքով մեռան , և դեռ 13
ան խոստմունքը չառած . հապա հեռուէն անոնք
զանոնք ու ուրախացան , և խոստովանեցան որ
օտարներ ու պանդուխտներ են երկրի վրայ :
Ինչու որ անոնք որ անանկ բաներ կըխօսին՝ 14
յայտնի կըլնեն որ մէկ գաւառ մը կըփնտռեն :
Ու եթէ անիկա յիշէին ուսկէից որ ելան նէ՝ 15
ժամանակ կար հոն դառնալու : Հապց մէկ աղ- 16
նիւ գաւառի մը կըփափաքէին , այսինքն երկ-
նաւորին . ուստի ամօթ չի՛ սեպեր Աստուած՝ ա-
նոնց Աստուածը ըսվելու . ինչու որ հնքը ա-
նոնց քաղաք մը պատրաստեց :

Հաւատքով Աբրահամ՝ իր փորձըվելու ա- 17
տեն Իսահակը պատարագ մատուց . և ան որ
խոստմունքը առեր էր՝ իր մէկհատիկ ծառիկը կը
մատուցանէր . որուն ըսվեցաւ որ Սահակով քու 18
ցեղդ պիտի կանչըվի . իր միտքին մէջը դրաւ , որ 19
Աստուած մեռելներէն ալ կարող է յարուցա-
նել անիկա . ուսկից օրինակով մը ընդունեց ա-
նիկա :

Հաւատքով գալու բաներուն համար Իսա- 20
հակ Յակոբը ու Եսաւը օրհնեց : Հաւատքով 21
Յակոբ իր մեռած ատենը Յովսէփին որդոցմէ
ամէն մէկը օրհնեց և երկրպագաւ ձեռիին ծրաւ
իր գաւազանին գլխուն վրայ : Հաւատքով 22
Յովսէփ իր վախճանած ատենը յիշատակեց
Իսրայէլի որդոցը Եգիպտոսէն ելլալը , ու իր ոս-
կորներուն համար ապրպրեց :

Հաւատքով Մովսէսը՝ երբոր ծնաւ , իր 23
ծնողքներէն իրեք ամիս գաղտուկ պահվեցաւ .
ինչու որ տղան գեղեցիկ տեսան , ու չի վախցան

24 Թագաւորին հրամանէն ։ Հաւատքով Մովսէս երբոր մեծցաւ՝ չուզեց Փարաւոնի աղջկանը
25 որդի ըսվիլ · աղէկ սեպեց Աստուծոյ ժողովրդոյը հետ չարչարվիլ , քան թէ մէկ ժամանակ մը
26 մեղքի մէջ վայելել · Քրիստոսի նախատինքները , քան թէ Եգիպտացոց գանձերուն մեծութիւնը · ինչու որ աչքը դրեր
27 կըսպասէր վարձքերուն հատուցմունքին ։ Հաւատքով Եգիպտացոց երկիրը թողուց , ու չէր վախնար թագաւորին բարկութենէն · ինչու որ համբերութիւնով չերևցած բանները տեսածի
28 պէս սեպեց ։ Հաւատքով զատիկը՝ և արիւն ցանելը , որ անդրանիկները սատկեցունողը իրենց չի մօտիկնայ ։
29 Հաւատքով կարմիր ծովէն անցան՝ որպէս թէ ցամաք երկիրէ մը · որ անոր փորձը ընելով
30 Եգիպտացիները ընկղմեցան ։ Հաւատքով Երիքովին պարիսպները իննսան՝ եօթը օր անոնց շրջապատիքը պըտըտելով ։
31 Հաւատքով Պահաբ պոռնիկը անհաւատներուն հետ չի կորսըվեցաւ · որ ինքը ան լրտեսները խաղաղութեամբ ընդուներ էր ։
32 Ուստի ալ ի՞նչ ըսեմ · ինչու որ ժամանակը բաւական չէ պատմելու Գեդէոնին՝ Բարակին՝ Սամփսոնին՝ Յեփթայէին՝ Դաւիթին՝ ու Սամուէլին՝ և ուրիշ մարգարէներուն համար · ո-
33 րոնք հաւատքով թագաւորութիւնները յաղթեցին · արդարութիւն գործեցին · խոստմունքներուն հասան · առիւծներուն բերանը գոցեցին ·
34 կրակին զօրութիւնը մարեցին · սուրին բերնէն խալըսեցան · տկարութենէն ուժովցան պատերազմի մէջ զօրաւոր եղան · օտարներուն բա-
35 նակները առին · կնիկները իրենց մեռելները ըն-դունեցին յարութիւն առած · ոմանք չարչարվեցան՝ և չընդունեցին ազատվիլ , որ ան լաւագոյն
36 յարութեանը հասնին · ոմանք ալ տանջանքնե-

րու ու ծնծերու փորձը առին , կապիրու ու
բանտերու · քարկոծվեցան՝ սղոցվեցան , փոր- 37
ձանքի մէջ ինկան , սուրով սպանըվելով մե-
ռան , ոչխարի կաշիներով ու այծի կաշիներով
պըտրտեցան · կարօտութիւն քաշած , նեղը ին-
կած , չարչարված · որ անոնց աս աշխարհը ար- 38
ժանի չէ · անապատի մէջ մոլորած , ու լեռները՝
և պրլերը՝ ու երկրի խուռները :

Եւ ասոնք ամէնը հաւատովվկայված դեռ 39
ան խոստումնըը չառին : Աստուած ալ ազէկ սե- 40
պեց մեզի համար , որ անոնք առանց մեզի չի կա-
տարվին : Ուստի մենք՝ ալ որ այսքան վկաներուն 1
բազմութիւնը մեր չորսդիքը պատած ունինք ,
բոլոր հպարտութիւնները մէկդի ձգենք՝ և
կարևոր մեղքը · Համբերութիւնով վազենք
մեր առջևը եղած ասպարէզին · Յիսուսի նա- 2
յինք դէպ հաւատքին առաջնորդին ու կատա-
րողին · որ ինքը ան ուրախութեանը համար՝
որ իր առջևը կեցած էր՝ խաչը չամչն առաւ , ա-
մաչելը բանի չի սեպեց՝ ու Աստուծոյ աթոռին ակ
կողմը նստաւ :

Ուրեմն միտք բերէք անիկա , որ ասանկ համ- 3
բերութիւն կրեց մեղաւորներուն իրեն դէմ հա-
կառակ կենալէն · որ չըլլայ թէ ձեր անձովը աչ-
խատիք ու թուլնաք · Որ տակաւին արիւն թափելու 4
չափ պատերազմելով հակառակ չի կեցաք մեղքին ·
և մոռցաք ան յորդորանքը որ ձեր հետը որպես 5
թէ զաւկներու հետ կըխօսի · Իմ տղա՝ Տէրոջը
պատիժին մի՛ թուշնար , ու անկէց չինի լսելով
մի՛ ակարանար : Ինչու որ Տէրը ան որ կըսի- 6
րէ նէ՝ կըպատժէ · կըծնծէ ամէն որդի՝ որ ին-
քը կընդունի : Պատիժին մէջը համբերութիւ- 7
նով որ կենաք , Աստուած որպես թէ որդիներու
ձեղի՝ կըմօտիկնայ · Որ որդին է ան՝ որ հայրը
չի պատժէ անիկա : Որ եթէ դուք առանց պա- 8
տիժի ըլլաք , որ անոր ամէնքը մասնակից եղան ·

անանկ է նէ խորհ էք դուք՝ ու չէ՛ թէ որդիներ ։
9 Վ ասն զի թէ որ մեր մարմնաւոր Հայրերնէն՝
որոնք մեղի պատժող ունէինք , կամիչնանք , ալ
ո՛րչափ աւելի Հոգիներուն Հօրը պիտի Հնազան-
10 դինք՝ ու ապրինք : Ինչու որ ատոնք քիչ մը
ժամանակ իրենց կամքին պէս կըպատժեն մեզ ·
բայց անիկա Ի՛ր օգուտին համար՝ որ անոր
11 սրբութեանը հաղորդ ըլլանք : Ե՛ւ իրա՛ւ ա-
մէն պատիժ նդին ատեՙն ուրախարար չի թուիր ,
Հապա տրտմական · բայց ետքը արդարութիւ-
նով խաղաղութեան պտուղ կըՀատուցանէ ա-
նով վարժըվածներուն ։
12 Ուստի թուլցած ձեռքերը ու տկար ծունր-
13 կերը Հաստատեցէ՛ք · և շիտակ ճամբաներ ըրէ՛ք
ձեր ոտքերուն · որ չըլլայ թէ ան որ կաղ
է նէ՛ դըրի , Հապա մանաւանդ բժշկըվի ։
14 Խաղաղութեան հետևէ եղէ՛ք ամենուն Հետ՝
և սրբութեան · որ առանց ասոր մէկը չի
15 կրնար տեսնալ Տ՛էրը ։ Ջգուշ եղի՛ք , չըլ-
լայ որ մէկը Ի՛ստուծոյ շնորՀքէն ետ մնայ · չըլ-
լայ որ մէկ լեղի արմատ մը վեր երևնալով՝ չեղ-
16 նեղէ , ու անով շատերը պղծըվին ։ Ազըլայ որ
մէկը պոռնիկ ըլլայ՝ ու անսուրբ Եսաւին պէս ·
որ կերակուրի մը Համար անդրանկութիւնը
17 ծախեց ։ Գիտէք որ թէպէտ ետքը ուզեց օրՀ-
նութիւնը ժառանգել , Բայց անարգըվեցաւ ·
ինչու որ ապաշխարութեան տեղ չի գտաւ Հօքը
չըլայ , թէպէտ արցունքով փրնտրեց անիկա ։
18 Ինչու որ դուք չօշափելի լեռը չէք եկեր , որ
ան կրակով կրվառէր , ու մէգով և մառախու-
19 ղով ու խաւարով և մրրիկով պոռոթ էր · ուր
տեղ որ փողը կըՀնչվէր , ու խօսքերուն ձայնը
կըլսըվէր · որ անիկա լսողները ետ կեցան , որ
20 մի՛յնայն խօսքը չըսվի իրենց · ինչու որ չէին
կրնար դիմանալ ան տրամանին · որ թէև գա-
զան մըն ալ մօտիկնար լեռանը՝ քարկոծ կըլլայ ·

և անանկ ահագին էր ան երեսդիթը՝ որ Մովսէս 21
ալ կրնար թէ Աստուծմով կրնայնաւ՝ ու կրդողամ-
կոր ։ Ուայց դուք Սիոն լեռը եկեր էք՝ ու կեն- 22
դանի Աստուծոյ քաղաքը Երկնային Երուսաղէ-
մը, և հրեշտակներուն բիւրաւոր խումբին, ու 23
երկինքը գրված անդրանիկներուն ժողովին, և
Աստուծոյ՝ որ ամենուն դատաւորն է, ու ար-
դարներուն հոգիներուն՝ որ կատարվեր են. և 24
Յիսուսի՝ որ նոր դաշինքին միջնորդն է, ու ա-
նոր արիւնին ցաժիվելուն՝ որ Աբէլին ապէնէ
ալ աղէկ կըլոսի ։

Օգոյշ եղէք՝ չըլլայ որ ետ քաշվիք ան- 25
կէց ով չէնէ հնար կըլոսի. ինչու որ եթէ ա-
նոնք չի կրնացին խալըսիլ ետ կենալով ան-
կէց՝ որ երկրի վրայ հրաման կուտար. հապա
ոչչափ աւելի մենք թէ որ երկնաւորին կռնակ
դարձունենք. որ անոր ձայնը անատնեը երկիրը 26
շարժեց. և հիմայ խոստացեր է ու կրսէ. Ուրէն
մէկ շարժեմ չէ թէ միայն երկիրը՝ հապա
նաև երկինքը։ Եւ ան Ուրէն խօսքը կը ցու- 27
նէ՝ չարժըլած բաներուն փոխոխմունքը եղած
բաներուն պէս, որ անշարժ բաները հաստա-
տուն կենան։ Ասոնի չի շարժելու թագաւորու- 28
թիւնը որ առինք՝ ամէնը բունենք ան շնորհքը.
որ անով Աստուած կրպաշտունք հաճոյ ըլլալու
վախով ու դողով. որովհետև մեր Աստուածը 29
մաշող կրլոսկ է ։

ԳԼ. ԺԳ։

Աղբայրսիրու թիւնը ձեր մէջը հաստատվի։ 1
Օտարսիրութիւնը մի՛ մոռնաք. ինչու որ 2
անով ոմանք հրեշտակները ընդունեցին չի գի-
տնալով։ Միտքերիդ ըլլան կապվածները. որ- 3
պէս թէ անոնց հետ դուք ալ կապված էք. և
չարչարվածները, որպէս թէ դուք ալ մարմին
ունեցող էք։ Մեսնութիւնը բոլորովին ադէկ 4

բան է , ու սուրբ անկողինը · բայց չունները ու
5 պոռնիկները կըդատէ Աստուած ։ Խարբերներդ
արծաթասեր չըլլայ · բաւական սեպեցէք որչափ
բան որ ձեռքերնիդ կայ · ինչու որ ինքը պըտռ-
ցեց թէ Չըձգեմ չի պիտի թողում , ու երեսէ չի
6 պիտի ձգեմ · անանկ որ համարձակ ըլլանք ըսե-
լու , Տէրը իմ օգնականս է՝ ու ես չի պիտի
վախնամ , մարդը ինծի ի՞նչ պիտի ընէ ։
7 Յիշեցէք ձեր առաջնորդները՝ որ Աստուծոյ
խօսքը ձեզի խօսեցան · անոնց վարմունքին վեր-
ջը նայելով՝ կրճնդ հաւատքին նմանող եղէք ։
8 Յիսուս Քրիստոսը նոյն է երէկ ու այսօր , և
յաւիտեանս ։
9 Օձանաձան ու ուրիշ կերպ ուսմունքներու մէջ
մի՛ մոլորիք · ինչու որ աղէկ է շնորհքով սիր-
տը հաստատել՝ և չէ՛ թէ կերակուրով · որ ա-
նոնցմով օգուտ մը չըլլին անոնք որ անանկ գա-
10 յին ։ Մեզան մը ունինք մենք՝ ուսկից իշխա-
նութիւն չունին ուտելու անոնք որ խորանը
11 կրպաշտեն ։ Ինչու որ՝ որ անասուններուն ա-
րիւնը որ սուրբ տեղին մէջը կըմտցուցվէր մե-
ղաց համար քահանայապետին ձեռքովը , անոնց
12 մարմինները բանակէն դուրս կըվրէին ։ Ընդ
համար Յիսուս ալ՝ որ իր արիւնովը ժողովուր-
դը պիտի սրբէր , դուռնէն դուրս չարչարվեցաւ ։
13 Ուստի եկէք իրեն երթանք բանակէն դուրս ,
14 վրանիս առնելով անոր նախատինքը ։ Ինչու
որ մենք հոս մնալու քաղաք չունինք , հապա ան
15 գալիքը կրփնտրենք ։ Ուստի անոր ձեռքովը
ամէն իժիր Աստուծոյ օրհնութեան պատա-
րագ մատուցանենք , այսինքն՝ շրթ պտուղները-
ըուն պատուղը՝ որ իր անունը կրդաւանեն ։
16 Բարերարութիւնը ու ապաշխարութիւնը չըմո-
ռնցուիր մի՛ մոռնաք · ինչու որ Աստ-
ուած անանկ պատարագներուն կըհաճի ։
17 Ձեր առաջնորդներուն մտիկ դրէք , ու անոնց

Հնազանդ կեցէք · ինչու որ անոնք ձեր Տոգինե-
րուն համար արթուն կըմնան , որպես թէ իրենք
ձեզի համար Հաշիւ տալու են · որ ինդութիւ-
նով ընեն անիկա , և չէ՛ թէ հառաչանք բ-
նելով , որ ան ձեզի օգտակար չէր : Ա՛նկի 18
համար աղօթք ըրէք · ինչու որ մենք Հաստատ
գիտենք՝ թէ աղէկ խղճմտանք ունինք · ամէն
բանի մէջ կուզենք աղէկ վարմունք ցուցը-
նել : Եւ Էվելօք կաղաչեմ՝ որ ան ընէք , 19
որ շուտով ձեզի գամ պատրկվիմ :

Եւ խաղաղութեան Աստուածը՝ որ մեռելնե- 20
րէն Հանեց ոչխարներուն մեծ Հովիւը՝ մեր Տէր
Յիսուսը յաւիտենական դաշինքին արիւնո-
վը , ձեզ բարի գործերու մէջ Հաստատէ իր 21
կամքը ընելու · և մեր մէջը իր դիմացը Հաճոյ
եղածը ընէ Յիսուս Քրիստոսի ձեռքովը · որուն
փառք յաւիտեանս · ամէն :

Կաղաչեմ ձեզի ե՛ղբայրնե՛ր՝ աս յորդորական 22
խօսքս ընդունիլ · ինչու որ քիչ գրեցի ես ձե-
զի : Եւ կը Հասկնանք մեր Տիմոթէոս Եղբայրը՝ 23
ձեզի Հետ արձակը , որուն Հետ թէ որ շուտով
գայ՝ պիտի տեսնամ ձեզ : Խարև ըրէք ձեր 24
բոլոր առաջնորդներուն ու բոլոր սուրբերուն ·
բարև կուտան ձեզի անոնք որ Իտալացոց կող-
մերն են : Շ նորՀքը ձեր 25
ամենուն Հետը ·

Ա՛մէն :

Ի տալէյեն գրվեցաւ Եբրայեցիներուն Տի-
ընէսին յետոյը :

ՅԱԿՈԲՈՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ։

ԳԼ. Ա։

1 Յակոբոս՝ Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիս-
տոսի ծառան, տասներկու ցեղերուդ՝ որ
ցիրուցան եղած էք, ողջոյն։
2 Ե՛ղբայրներ՝ բոլորովին ուրախ ըլլալու արժանի
բան սեպեցէք, երբոր կերպ կերպ փորձանքներու
3 մէջ կ՚ինկնաք։ Վստահաք որ ձեր հաւատքին փոր-
ձառութիւնը աղէկ կարգի դրած համբերութիւն
4 կը գործէ։ Ձայց համբերութիւնը կատարեալ
գործ թող ունենայ, որ ամբողջ ու կատարեալ
ըլլաք, ու բանի մը պակսութիւն չունե-
նաք։
5 Ձապա թէ որ ձեզմէ մէկը իմաստութենէ
պակսած ըլլայ, թող խնդրէ Աստուծմէ՝ որ
ամէնուն առատապէս կուտայ՝ ու չի նախատեր,
6 և պիտի տըրվի իրեն։ Մ՚ինչն թէ հաւատքով
թող խնդրէ՝ ու չի երկմտիր. վասն զի ան որ
երկմիտ է՝ ծովին հողմակոծեալ ու տատանեալ
7 ալիքներուն նման է։ Ան մարդը թող չյոյս

չունենայ Աստուծմէ բան մը առնելու . ինչու 8
որ երկմիտ մարդը անհաստատ է իր բոլոր ճամ-
բաներուն մէջը :
Խոնարհ եղբայրը իր բարձրութեանը վրայ 9
թող պարծենայ , և ան որ հարուստ է՝ իր խո- 10
նարհ ըլլալուն վրայ . ինչու որ՝ անկիա խոտի
ծաղկի մը պէս պիտի անցնի . ինչու որ արեւը 11
խարող տաքութիւնով մը կրծագէ՝ ու կրցայքե-
ցուներ խոտը , և անոր ծաղիկը կրձոափրփրի , ու
իր եղեգնեին աղվորութիւնն ալ կրկորսրվի . ա-
նանկ ալ հարուստը իր վաստրկածներուն մէ-
ջի թռուի :
Երանելի է ան մարդը որ փորձութիւններու 12
կրհամբերի . ինչու որ եթէ անոնց փորձուած ըլ-
նայր գանրվի՝ կենաց թագը պիտի առնէ , որ ա-
նիկա Տէրը իր սիրելիներուն խոստացաւ :
Ընչլայ որ մէկը որ փորձութեան մէջ է՝ ըսէ թէ 13
Աստուծմէ կըփորձրվիկայր . ինչու որ Աստ-
ուած չար բաներով չի փորձրվիր . ոչ ալ ինքը
մէկը կրփորձէ : Մէն մէկը կրփորձրվի՝ իր 14
ցանկութիւններէն քաշվուած ու խաբված . ան- 15
կէ ետև ցանկութիւնը որ կրյղանայ՝ մեղք կրծը-
նի . և մեղքը որ կատարվի՝ մահ կրծնի : Մի՛ 16
խաբվիք իմ սիրելի եղբայրներս . ինչու որ 17
բոլոր բարի տուրքերը՝ ու բոլոր կատարեալ
պարգեւները վերէն են՝ լուսոց Հօրմէն կիջ-
նան . որ անոր մէջ բնաւ փոփոխութիւն՝ և
կամ դառնալու շուք մը չի կայ : Իր 18
ուզելովը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքո-
վը՝ որ մենք իր ստացուածքներուն առջի պտուղը
ըլլանք : Կիտեք իմ սիրելի եղբայրներս . ա- 19
մէն մարդ թող շուտ ըլլայ լսելու , ու ծանր՝ խօ-
սելու , և ծանր՝ բարկանալու : Ինչու որ մարդ- 20
կան բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը
չի գործեր : Ուր անով բոլոր աղտոտութիւն- 21
ները ու չարութիւններուն ևվկցուքները մէկ

դի ձգելով՝ հեզութիւնով ընդունեցէք ան յԵղ
ջանված խօսքը, որ կրնայ ձեր հոգիները
փրկել։
22 Բայց խօսքը ընողներ եղէք, և չէ թէ միայն
23 լսողներ սեպվելիք անձերնուդ մէջ։ Ինչու որ՝
թէ որ մէկը միայն լսող ըլլայ խօսքին՝ ու կա-
տարող չըլլայ նէ, անիկա նման է մարդու մը՝
որ աչքը տընկած իր երեսը նայի որ հայելին
24 մէջը կերևայ· ինչու որ նայելով տեսաւ ինքը-
կինքը՝ ու անցաւ գնաց, և շուտ մը մոռցաւ թէ
25 ինսո՛ր մէկ մըն էր։ Բայց ան որ աղատու-
թեան կատարեալ օրէնքին աչք անկելով նայի,
և անոր մէջը որ կենայ՝ անիկա խօսքը լսող ո-
մոռցող չըլլալո, հապա գործքը ընող· որ ինքը
26 ան ընելով երանելի կրլլայ։ Եթէ որ մէկը ուզէ
կրօնաւոր ըլլալ՝ ու իր լեզուին սանձ չի դնէ,
հապա իր սիրտը խաբէ, անանկին կրօնաւորու-
27 թիւնը փուճ է։ Սուրբ ու անարատ կրօ-
նաւորութիւնը Աստուծմէ ու Հօրմէն՝ ան է,
Որբերուն ու որբևայրիներուն տես երթալ ի-
րենց նեղութեանը մէջ· անձերնին անարատ
պահել աշխարհէն։

Գ·Ի· Ե։

1 Ա՛մ եղբայրներս՝ չըլլայ որ աշառութեամբ
ընէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի հաւատ-
2 քը, որ ինքը փառաց Տէրն է։ Եթէ որ ձեր ժո-
ղովքին մէջ մէկ մարդ մը մտնելու ըլլայ՝ որ
ունենայ ոսկի մատնի և փառաւոր լաթեր, հոն
մէկ աղքատ մըն ալ մտնելու ըլլայ ապտոտ լա-
3 թերով· կրնայիք անոր վրայ որ փառաւոր լա-
թեր ունի, ու ըսէք թէ Դուն հոս նըստէ պա-
տիւով, և ան աղքատին ըսէք թէ Դուն հոս
ոտքի վրայ կայնէ, կամ թէ՝ եկող նստէ ոտքիս
4 գնելուքին քովը· ձեր մէջը խորհրդածութիւն չէք մի-
ըներ, ու չար մտածմունքներու դատաւոր կըլ-

լաք : Ինձի ասանդ գրէք սիրելի եղբայրներս. 5
չէ՞ մի որ Աստուած աշխարհիս աղքատները
ընտրեց, որոնք որ հաւատքով հարուստ են, ու
արքայութեանը ժառանգաւորք. որ անիկա իր
սիրելիներուն խոստացաւ : Եւ դուք աղքատ- 6
նեքը կանարգէք. հարուստները չէ՞ն մի՝ որ ձեզ
կընեղեն, ու իրենք ձեզ դատաստան կը քաշեն :
Անոնք չէ՞ն մի՝ որ կը հայհոյեն ան բարի անուն 7
նը՝ որ ձեր վրայ կանչըված է : Թէ որ դուք 8
արքունական օրէնքը կատարէք գիրքին համա-
պատ՝ թէ Դրուս ընկերդ քու անձիդ պէս սիրես,
աղէկ կընէք. բայց թէ որ աչառութիւն ընէք՝ 9
մեղք կը գործէք, ու օրէնքէն կը յանդիմանուիք
օրինազանցի պէս : Որ որ բոլոր օրէնքը պա- 10
հէ, ու մէկ բանով մը ծռրի, անիկա բոլոր օ-
րէնքներուն դէմ՝ գործող կըլլայ : Որ ասն ալ 11
ան որ բսաւ թէ Մի՛ սպաններ, բսաւ ը-
նէ՝ թէ մի սպաններ. եւ թէ որ սպան-
նութիւն չընես՝ բայց ընութիւն ընես, օրէնքին
դէմ գործող եղար : Անանկ խօսեցէք՝ եւ ա- 12
նանկ ըրէք, որպէս թէ ազատութեան օրէնքովը
պիտի դատուիք : Որ ասն ալ անողորմ դատաս- 13
տան պիտի ըլլայ անոր, որ ողորմութիւն չընէր.
ինչու որ ողորմութիւնը երեսը բաց կը պարծենայ
դատաստանին դիմացը :
Ի՞նչ օգուտ է եղբայրներս, թէ որ մէկը ըսէ 14
թէ հաւատք ունի, ու գործք չունենայ, արդ-
եօք հաւատքը կրնա՞յ մի փրկել անիկա : Թէ 15
որ մէկ եղբայր մը կամ քոյր մը մերկ ըլլայ՝ կամ
օրուան կերակուրին կարօտ, ձեզմէ մէկը անոնց
ըսէ, Գացէք խաղաղութեամբ՝ տաքցէք, ու
կիշտացէք. և մայրմինին պէտք եղածը անոնց չի
տաք նէ, ի՞նչ օգուտ է : Անանկ ալ հաւատքը՝ 17
թէ որ գործք չունենայ, ինքը մինակ մե-
ռած է : Հապա ալ ըլլայ մէկը որ ըսէ թէ՝ 18
Դուն հաւատք ունիս, ես ալ գործք ունիմ.

դուն քու հաւատքդ ցուցուր ինծի առանց գործ-
քերու, ու ես քեզի ցուցընեմ իմ հաւատքս իմ
19 գործքերէս: Դուն կը հաւատաս որ մէկ Աստ-
ուած մը կայ, աղէկ կընես. դեւերն ալ կը հաւա-
20 տան՝ և կրսոսափին: Կուզե՞ս գիտնալ դուն
ով սնոտի մարդ, որ հաւատքը առանց գործքե-
21 րու փուճ է: Աբրահամ մեր հայրը գործքե-
րովը չի արդարացա՞ւ մի՝ երբոր իր որդին Իսա-
22 հակը սեղանը հանեց զոհ ընելու: Կըտեսնաս
մի՝ որ հաւատքը անոր գործքերուն հետ միաւ
տեղ գործեց, ու անոր գործքերովը հաւատքը
23 կատարեալ եղաւ: Եւ գիրքին խօսքը կատար-
վեցաւ՝ որ կրսէ, Աբրահամ Աստուծոյ հաւա-
տաց, ու ան իրեն արդարութիւն սեպվեցաւ.
24 և ինքը Աստուծոյ բարեկամ րսվեցաւ: Կը
տեսնաք՝ որ մարդ գործքերովը կարդարանայ,
25 ու չէ թէ միայն հաւատքովը: Նմանի՛ալ Ռա-
խաբ պոռնիկը չէ՞ որ գործքերով արդա-
րացաւ, երբոր ան լրտեսները ջոկ առաւ,
ու ուրիշ ճամբայով արձակեց անոնք:
26 Ինչպէս որ մարմինը առանց հոգիի մե-
ռած է, ասանկ ալ հաւատքը առանց գործ-
քերու մեռած է:

Գ.

1 Ա՛դբայրներս՝ շատ վարդապետներ մի ըլլաք.
գիտնաք որ մեծ դատապարտութիւն պիտի
2 ընդունինք. ինչու որ շատ սխալմունքներ կը-
նենք ամէնքս ալ. թէ որ մէկը խօսքով սխալ-
մունք չընէ նէ՝ անիկա կատարեալ մարդ է, որ
կարող է իր բոլոր մարմինը սանձի տակ գնել:
3 Տե՛ս որ ձիերուն բերանը սանձ կը դնինք որ մեզի
հնազանդին, ու անոնց բոլոր մարմինը իշխա-
4 նութեան տակ կառնենք: Նայէ նաւերն ալ
ինչպէս բաներ են, և զօրաւոր հովերով կեր-
թան. բայց ան պզտիկ ղեկովը կդարձնան՝ կառա-

վարողն միտքը որ կողմը ուզէ նէ։ Այսանկ 5
ալ լեզուն մէկ պզտիկ անդամ մըն է՝ ու մեծ
բաներ կրնօսի. ահա քիչ մը կրակը ինտոր ան-
տառները բոցի կուտայ։ Լեզուն ալ կրակ մըն 6
է՝ անիրաւութեան զարդ. լեզուն անանկ մեր ան-
դամներուն մէջ դրված է, որ բոլոր մարմինը
կապականէ՝ և բնութեան շրջանը կրակով կըվա-
ռէ, ու գեհենին մէջը բորբոքած կերի։ Որովը 7
գազաններուն ու թռչուններուն և սողացող
կենդանիներուն՝ ու ծովի մէջ եղածներուն
բնութիւնը հնազանդած է՝ և կըհնազանդի
մարդկային բնութեան. բայց մարդոց լեզուն մե- 8
կը չի կրնար հնազանդեցնել՝ ան չարը ու
անկարգը՝ և մահացու թոյնով լեցուն։ Ա- 9
նով կօրհնենք Տէրը ու Հայրը, և անով կա-
նիծենք մարդիկ որոնք որ Աստուծոյ նմանու-
թեանը պէս ստեղծված են։ Ան նոյն բերնէն 10
կելլան օրհնութիւն ու անէծք. եղբայրնե՛ր
պէտք չէ որ ասիկա ասանկ ըլլայ։ Արդեօք 11
աղբիւր մը ան մի և նոյն բերնէն անուշ ու լեղի
կրբղխէ՞ մի։ Կարելի է մի արդեօք եղբայր- 12
ներս՝ որ թուզին ծառը ձէթ բերէ, կամ որթը՝
թուզ, ոչ ալ աղի գետին անուշ ջուր կու-
տայ։ Ձեր մէջը իմաստուն ու խելացի ոմն 13
կայ՝ թող անիկա արդէկ վարքերովը ցուցընէ իր
գործքերը իմաստութեան հեզութիւնով։ Բա- 14
պա թէ որ նախանձութիւն ու դաժանութիւն՝
և հակառակութիւն ունենաք սրտերնուդ մէջը,
մի՛ պարծենաք՝ ու ճշմարտութիւնը սուտ հանէք։
Այս իմաստութիւնը վերէն ինջած չէ՝ հապա 15
երկրաւոր՝ շնչաւոր՝ ու դիւական։ Որովհետև ու 16
ուր տեղ հակառակութիւն ու նախանձութիւն
կայ, հոն է անկարգութիւնը՝ և ամէն չար բա-
ները։ Բայց վերին իմաստութիւնը՝ պիտի 17
առաջ որ սուրբ է, ու երկրորդ խաղաղարար,
հեզ, դիւրահաւան, ողորմութիւնով ու բարի

պտուղներով լեցուն , անխիղճ , առանց կեղ֊
18 ծաւորութեան : Ընդարութեան պտուղը խա֊
ղաղութիւնով կըցանվի անոնց՝ որոնք որ խաղա֊
ղութիւն կընեն :

Գ֊Ի֊ · Դ։

1 Ուսկէց կուգան պատերազմները , և ուսկէց
կռիւները ձեր մէջը . չէ՞ որ ձեր ատանկ ցան֊
կութիւններէն , որ ձեր անդամներուն մէջ
2 զօրացեր են : Կըցանկաք՝ ու չունիք . կըս֊
պաննէք , ու կընախանձիք՝ և չէք կրնար
յեր ուլածին հասնիլ . կըպատերազմիք՝ կը
կուռիք , ու չունիք . ինչու որ չէք խնդրեր .
3 կըխնդրէք՝ ու չէք առներ , ինչու որ չա֊
րաչար կըխնդրէք . որ ան ձեր ցանկութիւն֊
4 ներուն բանեցուներէք : Շ՚նացողներ չէք մի
գիտեր՝ որ աս աշխարհիս սէրը Աստուծոյ դէմ
թշնամութիւն է . ուստի ան որ կուզէ աշխար֊
հը սիրել՝ ինքզինքը Աստուծոյ թշնամի կընէ :
5 Կամ թէ պարապ կըսեպէք ան որ գիրքը կըսէ , ան
նախանձութեանը վրայով՝ որուն մեր մէջը բնա֊
6 կած հոգին կըփափաքի , թէ էվելի շնորհք պիտի
տայ . անոր համար կըսէ , Տէրը ամբարտաւաններ֊
րուն հակառակ կըկենայ . խոնարհներուն շնորհք
7 կուտայ : Ուստի հնազանդեցէք Աստուծոյ , ու
չարախօսին հակառակ կեցէք . և անիկա ձեր մէ֊
8 չէն կըփախչի : Աստուծոյ մօտեցէք , ու ան
ձեղի կըմօտենայ . սրբեցէք ձեռվընիդ մեղաւոր֊
ներ , և շիտակ ըրէք սրտերնիդ երկմիտներ :
9 Տառապանք քաշեցէք , սուգ ըրէք ու լացէք .
ձեր խնդուումը սուգի դառնայ , ու ձեր ուրախու֊
10 թիւնը՝ տրտմութեան : Տէրոջը առջևը խո֊
նարհեցէք , ու ան ձեզ կըբարձրացունէ :
11 Ա՚էկըմէկ մի՛ բամբասէք եղբայրներ . ան որ
իր եղբայրը կըբամբասէ՝ կամ իր եղբայրը կը
դատէ , օրէնքը կըբամբասէ՝ ու օրէնքը կըդա֊

ատ. Հապա թէ որ օրէնքը դատես, ալ դուն
օրէնքը ընող չես՝ հապա դատաւոր։ Մէկ 12
մըն է օրէնսդիրը ու դատաւորը, որ ինքը
կարող է փրկել ու կորսընցնել. դուն ո՞վ
ես՝ որ ընկերդ կըդատես։

Նայ կան որ կըսեն, Այսօր ու վաղը 13
երթանք ասանուն քաղաքը. անտեղը տարի մը
կենանք, ծախենք ու վաստկինք. (դուք որ 14
վաղը չէք գիտեր, ինտո՞ր բան է ձեր կեանքը.
ինչու որ շոգիի նման էք, որ քիչ մը ատեն 15
կերեւայ և կրոչնչանայ.) անոր տեղը ըսելու է
իբ, Թէ որ Տէրը կամենայ՝ ապրինք ու ընենք
ասկամ ան բանը։ Նայց հիմայ ձեր ամ- 16
բարտաւանութեանը մէջ կըպարծենաք. բոլոր
անանկ պարծանքները չարութիւն են։ Ով 17
որ բարին գիտնայ՝ ու չընէ, ան մեղք է
անոր։

Գ Լ. Ե։

Ասատ ասկե ետև Հարուստներ՝ լացէք և ող- 1
բացէք ան թշուառութիւններուն վրայ որ
ձեր վրայ պիտի գան։ Ինչու որ ատ ձեր 2
չարտասութիւնը ոչինչ է, ու ձեր լաթերը ցե-
ցի կերակուր։ Ձեր արծաթը ու ոսկին ժան- 3
կոտ. և անոնց ժանկը ձեզի դէմ վկայ պիտի
ըլլայ, ու ձեր մսերիդ պիտի ուտէ. կրակի
պէս անոնք հաւքի օրերուն համար դուք դիզե-
ցիք։ Նայ բանվորներուն վարձքը՝ որ ձեր 4
արտերը բանեցան, ձեր քովէն են. ձեռնի
դրկըվածը կրպոռակոր, ու հնձողներուն աղա-
ղակը զօրութիւններուն Տէրոջը ականջներուն
հասաւ։ Երկրի վրայ փափուկ ապրեցաք՝ և 5
զուարճացաք. սրտերնիդ անուցիք՝ որպէս թէ
մորթվելու օրվան համար։ Օրկեցիք սպան- 6
նեցիք՝ արդարը, որ ձեզի հակառակ չէր կե-
նար։

7 Համբերող եղիք եղբայրներս՝ մինչև Տէրոջը գալը· ահա հողագործը համբերութիւն ընե-
լով կըսպասէ՝ դետնին պատուական պըտուղին,
մինչև որ կանուխ ու ուշ անձրևը առնէ.
8 դուք ալ համբերութիւն ըրէք, սրտերնիդ
հաստատ բռնեցէք· ինչու որ Տէրոջը գալը մօտ
9 է: Մէկըզմէկ մի՛ տրտմեցունէք եղբայրներ,
որ չի դատապարտըվիք· ահա դատաւորը դուռնը
10 քով կայներ է: Եղբայրներ՝ մարգարէները
օրինակ առէք չարչարանքներու ու համբերու-
թեան· որոնք որ Տէրոջը անունովը խօսեցան:
11 Ահա համբերողներուն երանի կուտանք· Յոբին
համբերութիւնը լսեցիք դուք, և Տէրոջը անոր
ըրած վախճանը տեսաք· որ Տէրը բազմագութ
ու ողորմած է:
12 Մէն բանէն առաջ եղբայրներս՝ երդում չը-
նէք, ոչ երկինքի վրայ՝ ոչ երկրի վրայ, ոչ
մէկ ուրիշ երդում մը· հապա ձեր այոն՝ այո
ըլլայ, և ոչը՝ ոչ· որ չըլլայ թէ կեղծաւորու-
թեան մէջ իյնաք:
13 Ձեզմէ մէկը որ նեղութիւն քաշէ՝ աղօթք
թող ընէ· մէկը որ ուրախութիւն ունենայ՝
14 սաղմոս թող երգէ: Ձեզմէ մէկը որ հիւան-
դանայ՝ եկեղեցիին երէցները թող կանչէ՝ ու
անոր վրայ աղօթք ընեն, Տէրոջը անունովը ե-
15 ղով թող օծեն· և հաւատքով եղած աղօթքը
պիտի փրկէ հիւանդը, ու Տէրը անկա ոտ
կըհանէ· և թէ որ մեղք ալ գործեր է նէ՝ պիտի
16 ներվի անոր: Մեղքերնիդ մէկըզմէկու խոս-
տովանեցէք, ու աղօթք ըրէք մէկզմէկու վրայ՝
որ բժշկըվիք· ինչու որ արդարներուն ա-
ղօթքը շատ զօրաւոր են օգնական ըլլալու:
17 Եղիան մեզի պէս կիրքի տակ ինկած մարդ մըն
էր· ու աղօթք ըրաւ, և իրեք տարի ու
18 վեց ամիս երկրի վրայ անձրև չեկաւ· և նորէն
աղօթք ըրաւ՝ ու երկինքը անձրև տըւաւ,
և երկիր իր պտուղը բուսցուց:

Եւ՛ մղեայրներս՝ թէ որ ձեզմէ մէկը ճշմար- 19
տութեան ճամբայէն մոլորի, ու մէկը անի-
կա դարձի բերէ նէ՝ գիտցած ըլլայ, թէ ան 20
որ մեղաւորը իր մոլորութեան ճամբայէն կը
դարձունէ՝ անոր հոգին մեռնելէն կրնայըսկ,
ու մեղաց շատութիւնը
կրծածկէ։

ՊԵՏՐՈՍ

Ա ՈՒՐՈՒԱԿԱՆ

ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ԹՈՒՂԹ։

ԳԼ. Ա։

1 Պետրոս Յիսուս Քրիստոսի առաքեալ, օ-
տարականներուդ որ ցիրուցան եղած էք
Պոնտացոց, Գաղատացոց, ու Կապադովկացոց,
և Ասիացոց, ու Բիւթանացոց մէջ, որ ընտրը-
2 ված էք, ըստ Աստուծոյ նախագիտութիւնովը,
Հոգւոյն սրբացունելովը՝ Յիսուս Քրիստոսի
հնազանդելովը՝ ու յէր վրայ էր արիւնը թափելո-
վը. շնորհք և խաղաղութիւն ձեր վրայ շատնայ։
3 Օրհնեալ է Աստուած՝ ու մեր Տէր Յիսուս
Քրիստոսին Հայրը. որ իր առատ ողորմու-
թիւնովը մեզ նորէն ծնաւ ան կենդանի յոյսին
համար՝ Յիսուս Քրիստոսի մեռելներէն յա-
4 րութիւն առնելովը, անեղծ ու անարատ և ան-
թառամ՝ ժառանգութեանը համար՝ որ երկինքը
5 ձեզի պահված է. որ Աստուծոյ զօրութիւնովը
պահված էք հաւատքով ան փրկութեանը հա-
մար՝ որ պատրաստըված է ետքի ժամանակները
6 յայտնըվելու. որ անով ուրախ պիտի ըլլաք, որ

հիմայ քիչ մը՝ (ինչպէս քանը կրբերէ) տրտմած
էք զանազան փորձութիւններով . որ ձեր 7
հաւատքին փորձառութիւնը կորստական ոս-
կիէն աւելի պատուական է , որ կրակով փորձը-
ւած՝ կրգտնըվի գովութիւնով ու փառքով և պա-
տիւով Յիսուս Քրիստոսի յայտնըվելու առե-
նը : Զն որ դուք չէ տեսաք՝ ու սիրեցիք . որ 8
անիկա հիմայ չէք տեսնար , բայց հաւատացիք ,
և ուրախ էք անպատմելի ու փառաւորեալ խընդ-
դութիւնով . ձեր հաւատքին վախճանը ընդու- 9
նելով , այսինքն հոգիներնուդ փրկութիւնը :
Որ ան փրկութեանը համար մարգարէները 10
փնտռեցին ու քննեցին . որոնք մարգարեցան
ձեզի ըլլալու շնորհքին համար . կրքննէին ԹԷ 11
կամ ինծի ատեն որ կիմացուներ իրենց մէջը եղած
Քրիստոսի Հոգին՝ որ առաջ կրվկայէր Քրիս-
տոսի չարչարվիլը , ու անկէ ետև փառաւորվիլը :
Որոնց յայտնըվեցաւ ալ . որ չէ ԹԷ իրենց՝ 12
հապա մեզի մատակարարեցին ան բաները , որոնք
հիմայ պատմըվեցան անոնց ձեռքովը՝ որ աւե-
տարանը քարոզեցին ձեզի Հոգւով Սրբով
որ երկինքէն խրկըվեցաւ . որ ան բաներէն հրեշ-
տակները կրցանկային գինէ շուքի մը պէս տես-
նալու :
Ուստի ձեր միտքերուն մէջը պինդ կապած՝ 13
արթուն կեցած , կատարեալապէս սպասեցէք ան
ձեր վրայ հասնելու շնորհացը՝ Յիսուս Քրիս-
տոսի յայտնըվելու առենը . հնազանդ զաւկրնե- 14
րու պէս . չէ ԹԷ ձեր ագիտութեան առենին
առջի ցանկութիւններովը վարվելով . հապա ձեզ 15
կանչող Սուրբին պէս , դուք ալ սուրբ եղէք բո-
լոր ձեր վարմունքներուն մէջ . ինչու որ գրված 16
է ԹԷ Սուրբ եղէք , քանզի ես սուրբ եմ : Եւ 17
ԹԷ որ Հայր կրկոչէք անիկա՝ որ առանց աչա-
ռութեան կրգատէ ամէն մէկուն գործքին նայե-
լով , անանկ է նէ վախնալով ձեր աշխարհիս ըլայ

18 պանդխտութեան ատենը անցուցէք : Գիտնաք
որ՝ չէ թէ դուք ապականացու արծաթով կամ
ոսկիով փրկըվեցաք ձեր հօրերնուդ աւանդըված
19 դատարկ ճամբաներէն . հապա Քրիստոսի պատ-
ուական արիւնով՝ որպէս թէ անբիծ ու անա-
20 րատ գառինը . որ առաջուց սահմանված էր աշ-
խարհիս սկիզբէն առաջ . ու ետքի ատեններըս
21 երևցաւ ձեզի համար . որ անով Աստուծոյ
հաւատացիք , որ անիկա մեռելներէն յարուց ,
և անոր փառաւորութիւն տուաւ . որ ձեր հա-
ւատքը ու յոյսը Աստուծոյ վրայ ըլլայ :
22 Ձեր անձերը մաքրելով՝ ճշմարտութեանը հնա-
զանդելով , եղբայրսիրութեան մէջ կեղծաւո-
րութիւն չունենալով , լանապէ՛ս սուրբ սրտով
23 մէկըմէկ պինդ սիրել . նորէն ծնած ըլլալով չէ՛
թէ ապականացու սերմէն , հապա անապական-
նացուէն՝ Աստուծոյ կենդանի ու յաւիտենա-
24 կան խօսքովը : Վասն զի ամէն մարմին խոտի
պէս է , և մարդուն բոլոր փառաւորութիւնը
խոտի ծաղիկի պէս . խոտը կըցամքի , ու ծաղիկը
25 կըթափըթփի : Բայց Տէրոջը խօսքը յաւի-
տեան կըմնայ . այսինքն ան խօսքը՝ որ ա-
Ր րանովը ձեզի քարոզվեցաւ : Ուրեմն ամէն չարութիւնը ու բոլոր նենգութիւնը՝ ու կեղծաւորութիւնները , և նախանձութիւնը , ու բոլոր գէշ խօսքերը ,
2 նոր ծընած երեխաներու պէս բանական ու անխաբէբայ կաթին փափաքեցէք , (որ անով մեծնաք մինչև
3 փրկութիւնը) թէ որ Տէրոջը անուշ ըլլալուն հա-
4 մը առիք նէ : Որուն մօտեցեր էք դուք ան կեն-
դանի վէմին , որ թէպէտ մարդիկներէն անարգըված է , բայց Աստուծոյ առջևը ընտրըված
5 ու պատուական է . դուք ալ կենդանի քարերու պէս շինված էք հոգևոր տաճար մը , անարատ քահանայութիւն , Յիսուս Քրիստոսի ձեռքովը Աստուծոյ հաճոյ հոգևոր պատարագներ մատու-

ցանելու : Որովհետև գիրքին մէջն ալ կայ՝ թէ 6
Աստուած Իսրայէլի վրայ մը կըդնեմ՝ ըսելու, անկիւնի գլուխ պատուական . ու ան որ անոր հաւատայ՝ չի պիտի ամչնայ : Աւետի ձեզի 7
հաւատացեալներուդ պատուական քար մըն է ան . բայց անհաւատներուն՝ ան քարը որուն շինողները անարգեցին , անիկա անկիւնի գլուխ եղաւ . և գլորցունելու քար ու գայթակղեցուցիչ 8
ելու քար անոնց՝ որ ապստամբելով ան խօսքէն կըգայթակղին՝ որուն ալ սահմանադրված էին : Բայց դուք մէկ ազնիւ ցեղ մըն էք . 9
թագաւորութիւն , քահանայութիւն , սուրբ ազգ , սեպհական ժողովուրդ մը . որ ձեր առաքինութիւնները անոր ընծայեցիք , որ ձեզ 10
խաւարէն իր զարմանալի լոյսին կանչեց . որ առեն մը ժողովուրդ չէիք , բայց հիմայ Աստուծոյ ժողովուրդն էք . որ առանց ողորմութեան էիք , հիմայ ողորմութիւն գտաք :

Սիրելիներ կաղաչեմ , օտարականներու ու 11
պանդուխտներու պէս մէկ դի կեցէք մարմնաւոր ցանկութիւններէն , որ հոգիներուն դէմ կը
պատերազմին . ձեր վարքը հեթանոսներուն մէջը 12
պարկեշտ ցուցընելով , որ ինչ բանով ձեզ չարագործներու պէս բամբասեցին նէ , ձեր բարի գործքերը տեսնալով՝ փառաւորեն Աստուած տես գալու օրը : Հնազանդ եղէք ամէն մարդ- 13
կային սահմանված ներու Տէրոջը համար . թէ որ թագաւորին՝ մեծ մէկու մը պէս . թէ որ դա- 14
տաւորներու՝ որպես թէ անոր կողմէն խրկըված ներու պէս չարագործները պատժելու , ու բարեգործները գովելու : Վասն որ Աստուծոյ 15
կամքը ասանկ է . որ բարեգործութիւն ընելով անխելք մարդոց տգիտութիւնը պապանձեցունէք :
Ազատ պէս ըլլալով , և չէ թէ չէք ազատու- 16
թիւնը չարութեան ծածկոցի մը պէս ունենաք . հապա Աստուծոյ ծառաներու պէս : Զամենքը 17

պատուեցէք. եղբայրսիրութիւնը սիրեցէք. Աստուածմէ վախցէք, թագաւորները պատուեցէք։
18 Ծառաները ամէն բանի մէջ վախով հնազանդ ըլլան իրենց տէրերուն, է՛ն թէ մինակ բարերարներուն ու հեզերուն, հապա խիստերուն ալ։
19 Որ ասիկա Աստուածմէ շնորհք մըն է, թէ որ մէկը բարի միտքով անիրաւ տեղը նեղութիւններուն համբերելու ըլլայ նէ։
20 Ա՛սն ալ ի՞նչ բարիք կըլլայ, թէ որ մեղք գործելնուդ համար տանջըվիք՝ ու համբերէք. հապա թէ որ բարիք գործելու ըլլաք, չարչարվիք ու համբերէք նէ՝ ան Աստուածմէ շնորհք մըն է։
21 Որովհետեւ դուք ասոր բանին համար կանչըվեցաք. որ Քրիստոս ալ ձեզի համար մեռաւ, ու ձեզի օրինակ թողուց՝ որ անոր ոտացը քայլերուն
22 հետեւիք. որ ինքը մեղք մը չի գործեց, ու անոր բերանը խաբէբայութիւն մը չի գտնըվեցաւ.
23 որ կըբամբասվէր, և փոխարէնը չէր բամբասեր. կըչարչարվէր՝ ու սպառնալիք չէր ըներ. հապա ինքզինքը իրաւունք ունեցող դատաւորին կը
24 յանձնէր. որ մեր մեղքերը իր մարմինովը խաչափայտին վրայ վերցուց. որ մենք ան մեղքերէն ազատինք, ու արդարութեան հետը ապրինք. որ իր խոցերովը մենք բժշկըվեցանք։
25 Ինչու որ դուք մոլորեալ ոչխարներու պէս էիք, բայց հիմայ ձեր հոգիներուն Հովիւին ու Տեսուչին դարձաք։

Գ԰. Դ։

1 Ա՛սանկ ալ կիներկները հնազանդ պիտի ըլլան իրենց էրիկներուն. որ թէ անոնք խօսքի հնազանդ չըլլան նէ՝ ալ առանց խօսքի շահվին
2 կիներուն վարմունքովը, տեսնալով ձեր երկիւղած պարկեշտ վարքը։
3 Որ իրենց զարդարանքը չըլլայ դրսըվանց հագնելու հուսկածքներով՝ և ոսկիէ մանուածք մազկապներով՝ կամ

զարդարված հագուստներով . հապա սըրտին 4
մէջի ծածուկ մարդը՝ անեղծութիւնով հնազանդ
ու հանդարտ հոգիին գեղեցիկ ըլլայ . որ
Աստուծոյ առջև շատ պէտիւ է : Այսն զի ասանկ 5
տեսնօք ան կիները՝ որ իրենց յոյսը Աստուծոյ
վրայ դրած էին , անձերնին կզարդարէին՝ ի-
րենց էրիկներուն հնազանդ ըլլալով . (ինչպէս 6
Սարրան ալ՝ որ Աբրահամին հնազանդ էր , և
անիկա իրեն տէր կրկանչէր . որուն որ դուք
զաւկրնելն եղաք ,) բարեգործ էին , ու չէին
կասկածեր ոչ ալ մէկ երկիւղէ մը :

Ասանկ էրիկ մարդիկ ալ խոհեմութիւնով ա- 7
նոնց հետը կենան . տկար ամանի պէս պատիւ ը-
նեն կիներուն , և որպէս թէ կենաց շնորհքին
ժառանգորդներու . որ ձեր աղօթքներուն խա-
փանում չըլլայ :

Եւ ամէն բանին գլուխը , որ մէկ միտքի վրայ 8
ըլլաք , մէկ յոժարութիւնով , եղբայրասէր ,
քաղցրասիրտ , խոնարհ : Չըլլայ որ չարին տեղը 9
չար հատուցանէք . կամ՝ բամբասանքին դէմ՝
բամբասանք . հապա անոր ներհակը՝ օրհնեցէք .
ինչու որ ասոր համար կանչըվեցաք դուք ,
որ օրհնութիւն ժառանգէք : Այսն զի ան որ 10
կուզէ կեանքը սիրել՝ ու աղէկութեան օրը
տեսնալ , իր լեզուն թող դադրեցունէ չարու-
թենէն , ու իր պրուկունքները խաբեպայութիւն
խօսելէն . չարէն հետ քաշվի՝ ու բարին ընէ . խա- 11
ղաղութիւնը փընտրէ , և անոր ետևէն երթայ :
Ինչու որ Տէրոջը աչքը արդարներուն վրայ է , 12
ու իր ականջները անոնց աղօթքին կըդնէ . Տէ-
րոջը երեսը չարագործներուն վրայ է :
Եւ ով է ան՝ որ ձեզ պիտի չարչարէ՝ թէ որ 13
դուք բարիին ցանկացող ըլլաք : Հապց թէ ար- 14
դարութեան համար չարչարվիք ալ նէ՝ երանելի
էք . և անոնց վախ տալէն մի՛ վախնաք՝ ու մի՛
տակնուվրայ ըլլաք . հապա նոյն Տէրը Քրիս- 15
տոսը սրտերնուդ մէջը սուրբ պահեցէք :

Պատրաստ եղիք պատասխան տալու ամէնուն,
որ ձեր ոնձեցած յոյսին պատճառը կըհարցունէ։
16 Հայց հեզութիւնով ու երկիւղածութիւնով
անուշ վարք ունենալք, որ ինչ բանով ձեր
վրայ վատ կրսօսին նէ՝ ամօթով մնան անոնք որ
ձեր բարի վարմունքը Քրիստոսով Էջած կը
17 բամբասեն։ Ինչու որ՝ ալ ազէկ է բարեգործե-
նէրուն՝ թէ որ կամենան նէ Աստուծոյ կամքին
պէս չարչարուիլ, քան թէ չարագործներուն։
18 Վ ասն զի Քրիստոս ալ մեղքի համար մէկ ան-
գամ ձեր վրայ մեռաւ, Արդարը անարդարնե-
րուն վրայ, որ ձեզ Աստուծոյ մօտեցունէ. որ
թէպէտ մեռաւ մարմինով, բայց կենդանի է
19 Հոգիով. որ անով բանտին մէջը եղած Հոգինե-
20 րուն գնաց քարոզեց ալ. որոնք մէկ ատեն մը
ապստամբ էին, երբոր Աստուծոյ երկայնմտու-
թիւնը թող կուտար անոնց՝ Նոյի օրերը՝ երբոր
տապանը կըշինուէր. որուն մէջը քիչերը՝ այսինքն
21 ութի Հոգի էսի ջուրէն խալսուեցան. որ ձեզ
ալ այն օրինակին պէս մկրտութիւնը պիտի ապ-
րեցունէ՝ չէ թէ մարմինին աղտը մէկ դի ընելով,
հապա բարի խղճմտանքին վկայութիւնը առ
Աստուած՝ Յիսուս Քրիստոսի յարութիւնովը.
22 որ երկինքը գացած Աստուծոյ աջ կողմն է՝ հրեշ-
տակները ու իշխանութիւնները և զօրութիւն-
ները իրեն հնազանդած։

ԳԼ. Դ։

1 Քրիստոս որ մեղի համար չարչարուեցաւ մար-
մինով, դուք ալ այն միտքովը զէնք առէք.
վասն զի ան որ մարմինով կըչարչարուի՝ մեղք
2 ընելէն կըդադրի. որ ոչ ալ մարդոցը ցանկու-
թիւններուն պէս, հապա Աստուծոյ կամքին
3 պէս ապրի մնացած տարին։ Ինչու որ անցած
ժամանակը հերիք է ձեր կամքովը հեթանոսնե-
րուն կամքին պէս ըլլալու. որոնք որ գիճու-

թիւններով՝ ցանկութիւններով, գինեմոլու-
թիւններով՝ անառակութիւններով՝ արբեցու-
թիւններով, անօրէն կռապաշտութիւնով վար-
վեցան. որ ան անկարգ անառակութեան մէջ օ-
տարական եղած ձեզի հետ չեն վարուիր, ու հայ-
հոյութիւն ալ կրնեն. որոնք պատասխան պիտի
տան անոր՝ որ ինքը պատրաստ է դատելու կեն-
դանիները ու մեռելները։ Որ սուրբ համար մե-
ռելներուն ալ խօսք տրված է, որ ընչ ի դատ-
վին մարգու կողմանէ մարմինով, բայց կենդանի
ըլլան Աստուծոյ կողմանէ հոգիով։

Ամէն բանին վախճանը մօտեցեր է. ասկէ ետև
խելքերնիդ գլուխնիդ բերէք՝ ու աղօթքի մէջ
արթուն եղէք։ Ամէն բանէն առաջ մէկմէկու
հետ սրտանց սէր ունեցէք, ինչու որ սէրը մեղ-
քերուն շատութիւնը կրծածկէ։ Իրարու օտա-
բասիրութիւն ցուցը ջէք՝ առանց տրտունջ ընե-
լու։ Ամէն մէկը ինչ կերպ շնորհք որ առաւ՝
անիկա մէկզմէկու մատակարարեցէք, ինչպէս
աղէկ անտեսներ Աստուծոյ կերպ կերպ շնորհք-
ներուն։ Թէ որ մէկը խօսի նէ՝ Աստուծոյ
պատգամներուն պէս խօսի. թէ որ մէկը
մատակարարութիւն ընէ նէ՝ որպէս թէ Աստու-
ծոյ շնորհած զօրութենէն ընէ, որ ամէն
բանի մէջ Աստուած փառաւորվի Յիսուս
Քրիստոսէ ձեռքովը. որուն փառք և զօրութիւն
յաւիտեանս. ամէն։

Սիրելիներ՝ օտար բան մը մի՛ սեպէք ան ներս-
ընէն որ ձեզ փորձելու համար կըլ-
լայ, որպէս թէ օտար բան մը ձեզի հանդիպած.
հապա ուրախ եղէք՝ որպէս թէ Քրիստոսի չար-
չարանքներուն հաղորդ ըլլայիք, որ անոր փառ-
քին յայտնըվելուն ատենն ալ ցնծութիւնով
զմայլիք։ Եւ թէ որ Քրիստոսի անունին հա-
մար նախատիք ալ նէ երանելի էք. որ փառքին
ու զօրութեան անունը՝ ու Աստուծոյ Հոգին

15 ձեր վրայ հանգչած է։ Ձեզմէ մէկը չի չար-
չարվի սպանողի մը պէս՝ կամ գողի մը պէս՝
կամ չարագործի մը պէս, կամ ուրիշին բանին
16 խառնվողի մը պէս։ բայց թէ որ քրիստոնեայի
մը պէս պատճառէ՝ թող չամչնայ. հապա աս ա-
17 նունովը թող Աստուծոյ փառք տայ։ Ինչու
որ՝ ժամանակ է որ դատաստանը Աստուծոյ տու-
նէն սկսի. և թէ որ առաջ մեզմէ կսկսի, հապա
անոնց վերջը ի՞նչ պիտի ըլլայ՝ որոնք որ Աս-
18 տուծոյ աւետարանին չեն հնազանդեցան։ Եւ թէ
որ արդարը դժուարաւ պիտի փրկվի, հապա
ամբարիշտը ու մեղաւորը ո՞ւր պիտի գտնվին։
19 Ուստի անոնք՝ որ Աստուծոյ կամքին պէս կը
չարչարվին, իրենց հոգիները հաւատարիմ
Ստեղծողին թող յանձնեն բարիք գործելով։

Գ· Ե։

1 Ուստի ալ երէցներուն կաղաչեմ՝ ես ալ ա-
նոնց պէս երէց ըլլալուս ու Քրիստոսի չար-
չարանացը վկայ, և յայտնվելու հանդերձեալ
2 փառքին մասնակից. Աստուծոյ հօտը որ ձեր
մէջն է՝ արածեցէք, վերակացու ըլլալով չէ՛
թէ ակամայ՝ հապա կամաւ Աստուծոյ ուզածին
պէս. չէ՛ թէ կաշառակրծութեամբ, հապա յօ-
3 ժարութիւնով. չէ՛ թէ վիճակներուն վրայ տի-
4 րելով, հապա հօտին օրինակ ըլլալով. որ երե-
ւոպետին երեւցած ատեները անթառամ փառ-
քին պսակը ընդունիք։
5 Նմանկ ալ երիտասարդները հնազանդ ըլլան
ծերերուն. ամէնքն ալ մէկզմէկու հետ խոնար-
հութիւն թող ունենան. ինչու որ Աստուած
ամբարտաւաններուն դէմ կրկենայ, խոնարհ-
6 ներուն շնորհք կուտայ։ Աստուծոյ կարող
ձեռքին տակը խոնարհեցէք, որ ձեզ ժամանա-
7 կին բարձրացունէ։ Ձեր ամէն հոգը անոր ձգե-
ցէք ինչու որ անիկա է որ ձեզի համար կըհո-
գայ։

Ա՛րթուն կեցէ՛ք , հսկեցէ՛ք , ինչու որ ձեր հա- 8
կառակորդը Սատանան գոռացող առիւծի մը
պէս կըպըտրտի ու կըփընտրէ թէ ով կրնայ
կլլել · որուն դէմ կեցէ՛ք հաւատքով հաս- 9
տատած · գիտնա՛ք որ ձեր եղբայրներն ալ աշ-
խարհի մէջ նոյն չարչարանքները կըքաշեն ։
Բայց ամէն շնորհքներուն Աստուածը՝ որ ձեզ 10
իր յաւիտենական փառքին կանչեց Ք՛րիստոս
Յիսուսի ձեռքովը , որուն չարչարանքներուն
քիչ մը կցորդ եղա՛ք , ինքը յե՛ղէ ուժ տայ՝ կարո-
ղութիւն տայ՝ հիմընդի հաստատ ընէ ։
Ընոր իշխանութիւն և փառք՝ յաւիտեանս , 11
ամէն ։

Սիղուանոս հաւատարիմ եղբօր ձեռքովը՝ ինչ- 12
պէս ես կըկարծեմ , համառօտ մը ձեզի գրեցի ,
մխիթարանք տալով՝ ու աս բանիս վրայ վկայե-
լով , թէ ա՛ս ալ Աստուծոյ ճշմարիտ շնորհքն է ,
որուն մէջը հաստատ կեցեր էք ։ Ձարև կուտայ 13
ձեզի Բաբելոնը եղած եկեղեցին որ յե՛ղէ հետ
ընտրուած է . ու Մարկոս իմ որդիս ալ ։
Ձարև տըվէ՛ք միկրզմիկու սուրբ համբուրով · 14
խաղաղութիւն ձեր ամէնուն հետ՝ որ Ք՛րիս-
տոս Յիսուսի մէջ էք ·

Ամէն ։

ՊԵՏՐՈՍ

Ա ՈՒՐԱՐԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ։

ԳԼ. Ա։

1 Շ մաւոն Պետրոս՝ Յիսուս Քրիստոսի ծառայ
և առաքեալ. ձեզի՝ որ մեր հետ նոյն պատ-
ուական հաւատքին հասաք մեր Աստուծոյ ու
Յիսուս Քրիստոս փրկիչին արդարութիւնովը.
2 շնորհք և խաղաղութիւն ձեր վրայ էվելցայ՝
Աստուծոյ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի գի-
տութիւնովը։
3 Ինչպէս որ իր Աստուածային կարողութիւ-
նովը բոլոր կենաց և աստուածպաշտութեան
ՀԷՈՔԵՔԵԼ բաները մեզի տուաւ անոր գիտու-
թիւնովը՝ որ մեզ իր փառքին ու վայելմանը
4 հրաւիրեց. որ անով մեծ ու պատուական խոստ-
մունքներ տրված են մեզի, որ անոնցմով Աս-
ուածային բնութեանը հաղորդ ըլլանք հաւատ-
քով՝ աշխարհի ցանկութիւններէն ու ապակա-
5 նութիւններէն փախչելով։ Եւ ասոր բանիս վրայ
բոլոր ջանքերնիդ դրած՝ ձեր հաւատքովը առա-
քինութիւն էվելցուցէք, ու առաքինութիւնով

պիտութիւն . և գիտութիւնով ժուժկալութիւն , 6
ու ժուժկալութիւնով համբերութիւն , և համ- 7
բերութիւնով աստուածպաշտութիւն . ու աստ-
ուածպաշտութիւնով եղբայրսիրութիւն , և եղ- 8
բայրսիրութիւնով սէր : Այս բաներըս վրա-
նիդ ունենալով , ու աճանց մէջը միշտ ըլլալով ,
պարապ ու անպտուղ չեն ըլներ ձեզ անոնք մեր
Տէր Յիսուս Քրիստոսի ճանչնալուն մէջը :
Հայց որու քով որ աս բաներս չեն կայ , կոյր է և 9
կարճատես . որ մոռցեր է իր առջի մեղքերէն
մաքրուիլը : Ասոր համար եղբայրներ էվելօք 10
ջանք ըրէք՝ որ բարի գործքերով ձեր կոչումը
ու ընտրութիւնը հաստատ պահէք . աս որ ընէք՝
բնաւ յանցանք մը չէք գործեր . ինչու որ ասանկ 11
ձեզի առատապէս մէկ մուտք մը պիտի շնորհվի
մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի յաւիտե-
նական թագաւորութեանը :

Ուստի ես միշտ պատրաստ եմ աս բաներուս 12
վրայովը մտիկներ ձգելու . Ընչ Է էվելօքը գիտ-
նաք՝ և հաստատուն ըլլաք ներկայ ճշմարտու-
թեանը վրայ : Ինչու որ իրաւունք կըսեպեմ , 13
որ քանի աս մարմինիս մէջն եմ՝ մտիկներ ձգե-
լով ձեզ արթնցնելնէ : Վախտամ որ ես շու- 14
տով աս մարմինս պիտի մերկանամ , ինչպէս որ
մեր Տէր Յիսուս Քրիստոսը ցուցուց ինծի :
Աւետի կըջանամ կարողրամ միշտ ձեզ յորդո- 15
րելու , որ իմ աշխարհէն ելլալէս ետքը աս բա-
ներըս միտք բերէք : Ինչու որ չէ թէ մենք սուտ 16
ուռուցած հնարած բաներու նայէ երթալով՝
մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնը ու
գալուստը ձեզի ցուցըցինք . հապա բուն մեր
աչքովը տեսնալով անոր մեծութիւնը : Վասն 17
զի ինքը Հօր Աստուծմէն փառք ու պատիւ ա-
ռաւ , ան մեծ վայելչութեան փառքէն անանկ
ձայն մը գալով , թէ Ասիկա է իմ սիրական որ-
դի՝ որ իրմէն հաճոյ եմ : Եւ աս երկինքէն 18

եկած ձայնը մենք լսեցինք , որ անոր հետ էինք
19 ան սուրբ լեռանը վրայ : Եւ հաստա-
տուն ունինք մարգարէական խօսքերն ալ , որ
ադեկ կընէք թէ որ անոր տաք խելքնիդ , որպէս
թէ մէկ ճրագի մը՝ որ խաւարային տեղը լոյս
կուտայ , մինչև յորելկը լուսաւորէ ու արուսեակ
20 կը սրտերնուդ մէջը ծագէ : Նայց առաջ ա-
պահաք , որ ամէն մարգարէութիւն իր գրուած-
21 քին մեկնութիւնը չունի : Ինչու որ չէ թէ
քնաւ մարգարէութիւնը մարդոց կամքին պէս
տրուեցաւ . հապա Սուրբ Հոգիէն շարժուած
Աստուծմէ եղած մարդիկները խօսեցան :

ԳԼ· Բ:

1 Սուտ մարգարէներ ալ կըլլային ան ժողովուր-
դը մէջը , ինչպէս որ հիմայ ալ ձեր մէջը սուտ
վարդապետները պիտի ըլլան . որ գաղտուկ պի-
տի բերեն կորըստական հերձուածողութիւնները
խօթելեն . ու զիրենք ծախող տէրը ուրա-
նալով՝ իրենց վրայ կրբերեն շուտով հասնելու
2 կորուստը . և շատերն ալ անոնց անառակու-
թեանը նեռէ ետևէ պիտի երթան . որ անոր
համար ճշմարտութեան ճամբան պիտի արհա-
3 մարհըվի . և ագահութիւնով մտքէ հնարած
խօսքերով ձեզ գերի պիտի ընեն . որոնց դա-
տապարտութիւնը քնաւ պատարկ չըլլար , ու
անոնց կորուստը չի մրափեր :
4 Վ՚ասն զի թէ որ Աստուած չխնայեց գործող
հրեշտակներուն չի խնայեց , հապա խաւար կա-
պերով տարտարոսը ձգած դատաստանի պահել
5 տըւաւ . ու առջի աշխարհին ալ չի խնայեց . միայն
թէ Նոյը ութերորդ անձը՝ արդարութիւնը քա-
րոզողը պահեց ջրհեղեղէն , որ ամբարիշտներուն
6 աշխարհին վրայ բերվեցաւ . և Սոդոմացիներուն
ու Գոմորացիներուն քաղաքները մոխիր դար-
ձունելով դատեց , եռքէն ամբարշտութիւն ըսե-

լու մարդոցը օրինակ ընելով անոնց . և արդար 7
Պ ողոսը՝ որ ձանձրացեր էր անոնց անկարգ ամո-
ԹԱլի վարմունքներէն , խալըսեց . (ինչու որ ան 8
արդարը անոնց մէջը կենալով՝ աչքովը տեսնա-
լով ու ականջովը լսելով , օրէ օր իր մաքուր
հոգին կը տանջէր անոնց անօրէն վարմունքովը .)
Տէրը գիտէ աստուածապաշտները փորձութենէ 9
խալըսելը , և անօրէնները տանջանքի համար
դատաստանին օրվան պահելը :
Ա՛նաւանդ անոնք որ մարմնոյ պղծութիւ- 10
նով լեցուն ցանկութիւններուն ետևէ կերթան ,
տէրութիւնը կանարգեն , դիմադարձ , յան-
դուգն , չեն վախնար փառաւորներուն դէմ
հայհոյանք ընել : Երբոր հրեշտակները՝ որ ա- 11
նոնցմէ շատ մեծ են զօրութիւնով ու կարողու-
թիւնով , հայհոյութեան դատապարտութիւնը
Տէրոջմէն վրանին չեն բերեր : Իսայցասոնք ան- 12
խօս անասուններու պէս (ոչ բնականաբար ածր-
վելու ու ապականելու համար եղած են ,) չէ
դիտցած բաներնուն դէմ կըհայհոյեն , և իրենց
ապականութիւնովը պիտի ապականին , անի- 13
րաւութեան վարձքերովը տանջըվելով . որ օր-
վան հար ցանկութիւնը երջանկութիւն կըսե-
պեն . աղտոտ , արատաւոր , իրենց խաբեբայու-
թիւններով փափկացած , ձեր հետ կերուխումի
ընկեր ըլլալով : Պոռնիկներու նման աչք ու- 14
նին , որ մեղքէ չեն դադրիր . անհաստատներուն
միտքը կրխաբեն . որոնք ագահութեան սրտեր
են սերտերնին , անիծեալ զաւակներ : Հի- 15
տակ ձամբան ձգելով մոլորեցան . Խեովրեան
Խաղատին ճամբուն ետևէն երթալով՝ անի-
րաւութեան վարձքերը սիրեցին . որ իր անօրէ- 16
նութեանը յանդիմանող եղաւ անխօս էշը ,
մարդկային ձայնով խօսելովը՝ մարգարէին ա-
նօրէնութիւնը արգիլեց : Ըսանկները չուր չու- 17
նեցող աղբիւրներ են , ու փոթորիկէ չարժըված

ամպեր· որ իրենց համար ան թանձր մոլեր
18 պահված է յաւիտեանս: Խոշոր խոշոր ունայ-
նութեան խօսքեր ընելով գիճութիւններով՝
մարմինին անառակ ցանկութիւններովը կրկա-
բեն անոնք որ իրաւցունէ կրփախչին անոնցմէ՝
19 որ մոլորութեան մէջ կրպտրտին· անոնց ազա-
տութիւն կրխոստանան, և իրենք ապականու-
թեան ծառաներ են· վասն զի որ բանով որ
մէկը յաղթվի՝ ան բանին ինքը ծառայ կրլլայ:
20 Ինչու որ եթէ աշխարհիս պղծութիւններէն
ետ կեցած էն՝ Ս՝եր Տէր ու փրկիչ Յիսուս
Քրիստոսը ճանչնալով, և նորէն ան բաներուն
հետը շաղվրված փաթթվին նէ՝ անոնց վերջը
21 առջինէն գէշ կրլլայ: Ինչու որ աղէկ էր ա-
նոնց՝ որ բնաւ արդարութեան ճամբան ճանչցած
չըլլային, քան թէ ճանչցան՝ ու ետ կեցան ան
սուրբ պատուիրանքէն՝ որ իրենց տրվեցաւ:
22 Ինոնց յարմար կուգայ ան ճշմարիտ խնաստուն
առակը, թէ՝ Շունը նորէն իր փսխածին
կրդառնայ, ու լըւացված խոզը ցեխին մէջը կը
թապըլտրկի:

Գ[Ի]· Գ·

1 Սիրելիներ՝ աս երկրորդ թուղթը ձեզի կրգը-
րեմ՝ որով ձեր հաստատ միտքը կարթըն-
2 ցունեմ՝ յիշելու· որ միտքերնիդ բերէք սուրբ
մարգարէներէն ու ձեր առաքեալներէն առա-
ջուց ըսված խօսքերը՝ Տէրոջը ու փրկիչին
3 պատուէրները: Նայց առաջ աս գիտնաք, որ
եաքի օրերը արհամարհողներ և ծաղը ընողներ
պիտի գան, որ իրենց ցանկութիւններուին պիտի
4 վարվին· և պիտի ըսեն· Ո՞ւր է անոր գալուն
խոստմունքը· վասն զի քանի որ հայրերը
քնացան, ամէն բան անանկ կայ կրմնայ ստեղծ-
5 ուածներուն սկիզբէն հետէ: Ալ անոնք (որ
իրենց ուզածը աս է) ան բանը մոռցեր են, թէ

երկինքը առաջուց եղաւ . ու՝ երկիրը ջուրերէն ,
ջուրերն ալ՝ հաստատ կեցեր են Աստուծոյ խօս-
քովը . ուստի առջի աշխարհը ջրհեղեղով ապա- 6
կանած կորսրվեցաւ . և հիմակուան երկինքը ու 7
երկիրը նոյն խօսքովը պահված են . մինչև գա-
տաստանին օրը կրակի համար պահված , ու ամ-
բարիշտ մարդոցը կորսրվելուն ։ Եւ ասկից ալ 8
ձեզմէ ծածուկ չըլլայ սիրելիներ . որ Տէրոջը մէկ
օրը հազար տարուան պէս է , ու հազար տարին
մէկ օրուան պէս ։ Տէրը չի ուշացուներ իր խոստ- 9
մունքը . ինտոր ոմանք ուշ կըսեպեն , հապա
ձեզի երկայնամիտ կըլլայ . ինչու որ չուզեր որ
մէկը կորսրվի , հապա որ ամէնը ապաշխարանքի
գան ։ Սիրոյն թէ Տէրոջը օրը գողի պէս կու- 10
գայ . որ անատնները երկինքը ահռելի կերպով
պիտի անցնի , ու տարերքները կրակով երված
պիտի հալին , երկիրս ալ՝ ու ինչ գործքեր որ
անոր մէջը կըգտնըվին նէ ։ Եւ ասս ամէն բանե- 11
րը ասանկ որ պիտի քակվին՝ ձեզի ինչպէս պէտք
է որ գտնըվիք . միայն թէ սուրբ ու աստուածա-
պաշտ վարքով՝ սպասել , և չանք ընել հասնե- 12
լու Տէրոջը օրվանը գալուն . որ անատնները եր-
կինքը կրակով երված պիտի քակվի , ու տարերք-
ները բուրնկրված պիտի հալին ։ Իսպայ նոր եր- 13
կինքի մը ու նոր երկիրի մը իր խոստմունքին
պէս կրնայինք կրպասանք , ուր տեղ որ արդա-
րութիւն կըբնակի ։

Ուստի սիրելիներ ասոնց սպասելով չանացէք , 14
որ ան չէք անբիծ ու անարատ գտնայ խաղաղու-
թիւնով . և Տէրոջը երկայնամտութիւնը փրկու- 15
թիւն սեպեցէք . ինչպէս որ մեր սիրելի եղբայրը
Պօղոս ալ Աստուծմէ իրեն տրված իմաստու-
թիւնովը գրեց ձեզի . ինչպէս որ ամէն թուղ- 16
թերուն մէջն ալ՝ ասս բաներուն համար կրխօսի .
որոնց մէջ քանի մը գժուարիմաց խօսքեր կըգտ-
նըվին , որ զանոնք տգէտները ու խախուտները

ծուռ կողմը կըդարձունեն , ինտոր լոլոր գիր-
քերն ալ՝ ինքըզինքներուն կորըստեանը համար :
17 Ընանկ է նէ դուք սիրելիներ՝ առաջուց գիտ-
ցողներու պէս զգոյշ եղէք , որ չըլլայ թէ անա-
ւակ մոլորութիւնով պըլըշտըկված՝ ասս հաստա-
18 տութենէն խնաք : Աճեցէք մեր Տէր և Փրկիչ
Յիսուս Քրիստոսի շնորհքովը ու գիտութիւ-
նով . անոր փառք հիմայ ալ , ու միշտ
յաւիտենական օրն ալ .
Ամէն :

ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ։

ԳԼ. Ա։

Կենաց Բանին վերայով՝ որ սկիզբէն էր՝ որուն 1
վերայ լսեցինք՝ որ գինքը աչքովնիս ալ տե-
սանք՝ որուն նայեցանք, ու մեր ձեռքերը շօշա-
փեցին՝ (և կեանքը յայտնվեցաւ, ու տեսանք՝ 2
և կրկին կենք, ու ձեզի կը պատմենք ան յաւի-
տենական կեանքին վերայ, որ Հօրը քովն էր՝ ու
մեզի երեւցաւ.) ան որ տեսանք ու լսեցինք՝ ձեզի 3
ալ կը պատմենք, որ դուք ալ մեր հետը հաղոր-
դութիւն ունենաք՝ և մեր հաղորդութիւնը
Հօրը հետ ըլլայ՝ ու իր Որդւոյն Յիսուս Քրիս-
տոսի հետ։ Եւ ձեզի ասոնք կը գրենք, որ ձեր ու- 4
րախութիւնը կատարեալ ըլլայ։

Եւ ասիկա է ան լուրտունքը որ իրմէն լսեցինք՝ 5
ու ձեզի կը պատմենք՝ որ Աստուած լոյս է, ու ա-
նոր մէջ բնաւ խաւար չի կայ։ Եթէ որ ըսենք որ՝ 6
Անոր հետը հաղորդութիւն ունինք, ու խաւարի
մէջ պըտրտինք, սուտ կը գործացնենք՝ և ճշմար-
տութիւնը չենք ըներ։ Հապա եթէ որ լոյսի 7

մէջ պտըտինք, ինչպէս անիկա լոյսի մէջ է, մէկզմէկու հետ հաղորդութիւն կունենանք. ու անոր Որդւոյն Յիսուսի արիւնը մեզ ամէն մեղքերէն կըսըրբէ: 8 Թէ որ ըսենք՝ թէ Ա՛նք մեղք մը չունինք, ինքզինքնիս կըխաբենք, 9 ու մեր մէջը ճշմարտութիւն չի կայ: Ապա թէ որ խոստովանինք մեղքերնիս, հաւատարիմ ու արդար է անիկա մեր մեղքերը թող տալու, 10 և մեզ բոլոր անիրաւութենէ սրբելու: Եւ թէ որ ըսենք՝ թէ Ա՛նք մը չըրինք, սուտցուց կընենք անիկա, ու անոր խօսքը մեր մէջը չէ:

ԳԼ· Բ:

1 Իմ որդիներս՝ աս ձեզի կըգրեմ որ մեղք չի գործէք. և թէ որ մէկը մեղք գործելու ըլլայ, Աստուծոյ քով Հարեւթս ունինք Յիսուս 2 Քրիստոս արդարը ու անարատը. և անիկա մեր մեղքերուն քաւութիւն է. և չէ՛ թէ միայն մերիններուն, հապա բոլոր աշխարհի:

3 Ու ասով գիտենք՝ որ անիկա ճանչցանք, թէ որ 4 անոր պատուիրանքները պահենք: Ան որ կըսէ թէ Ես անիկա ճանչցայ, ու անոր պատուիրանքները չի պահէ նէ՝ սուտ է, և անոր մէջը ճշմարտութիւն չի կայ: 5 Հապց ան որ անոր խօսքը կըպահէ՝ իրաւցունէ անոր մէջը կատարեալ է Աստուծոյ սէրը. ասով կըճանչնանք՝ որ անոր 6 մէջն ենք: Ան որ կըսէ Ընդ անոր մէջը կըբնակի, անանկ պէտք է երթայ՝ ինտոր որ ան գնաց:

7 Սիրելիներ՝ չէ՛ թէ մէկ նոր պատուիրանք մը ձեզի կըգրեմ, հապա ան հին պատուիրանքը որ առաջուց ունէիք. և հին պատուիրանքը ան 8 խօսքն է՝ որ դուք լսեցիք: Դարձեալ նոր պատուիրան կըգրեմ ձեզի, ան որ ճշմարիտ է անոր մէջը ու ձեր մէջը. ինչու որ խաւարը անցաւ, ու ճշմարիտ լոյսը հիմայ կերեւակոր:

Ան որ կըսէ Թէ լոյսին մէջն է , ու իր եղբայրը 9
կատէ , սուտ է , և անիկա տակաւին խաւարին
մէջն է ։ Ան որ իր եղբայրը կըսիրէ , լոյսի մէջ 10
կըբնակի՝ ու անոր մէջը գայթակղութիւն չի կայ ։
Բայց ան որ իր եղբայրը կատ՝ խաւարի մէջ է , 11
ու խաւարի մէջ կըպտըտի , և չի գիտեր ուր
կերթայ , ինչու որ խաւարը անոր աչքը կուրցու-
ցեր է ։ Կըգրեմ ձեզի որդեակներ , ինչու որ ձեր 12
մեղքերը ձեզի թողուած են անոր անունին հա-
մար ։ Կըգրեմ ձեզի հայրեր , որ դուք ճանչ- 13
ցաք անիկա որ սկիզբէն է . կըգրեմ ձեզի երի-
տասարդներ , որ դուք յաղթեցիք չարին ։
Կըգրեցի ձեզի տղաքներ , որ դուք ճանչցաք Հայ- 14
րը . գրեցի ձեզի հայրեր , որ դուք ճանչ-
ցաք անիկա որ սկիզբէն է . գրեցի ձեզի երի-
տասարդներ , որ դուք ուժով էք , և Աստու-
ծոյ խօսքը ձեր մէջը կըբնակի . ու չա-
րին յաղթեցիք ։ Մի՛ սիրէք աշխարհս , ոչ 15
ալ ան որ աշխարհիս մէջ է ։ Եթէ որ մէկը աշ- 16
խարհը սիրէ , անոր մէջը Հօրը սէրը չի կայ ,
ինչու որ ան ամէն բաները որ աշխարհի մէջ է՝
մարմնոյ ցանկութիւն է , ու աչքի ցանկութիւն է ,
և աս կեանքիս հպարտութիւնը . որ ան Հօրմէն
չէ , հապա աս աշխարհէս է ։ Աշխարհս ալ 17
կանցնի՝ անոր ցանկութիւնն ալ . բայց ան որ
Աստուծոյ կամքը կընէ՝ յաւիտեան կըմնայ ։
Մանուկներս՝ վերջին ժամանակն է . ու ինչ- 18
պէս լսեցիք՝ որ Նեռը պիտի գայ , և հիմակուց
ալ շատ նեռներ եկեր են . որ անով կըգնանք ի-
մանալ Թէ վերջին ժամանակ է ։ Անոնք ելան 19
անոնք , բայց մեզմէ չէին . ինչու որ եթէ մեզմէ
ըլլային՝ ուրեմն մեր քովը կրմնային . հապա ել-
ան որ յայտնի ըլլան Թէ անոնք ամէնը մեզ-
մէ չէին ։ Բայց դուք օծումէն ունիք Սուր- 20
բէն , ու ամէն բան գիտէք ։ Չի գրեցի ձեզի՝ որ 21
ճշմարտութիւնը չէք գիտեր , հապա որ գիտէք

անիկա , ու նաև որ բոլոր ստութիւնը ճշմար-
22 տութենէ չէ : Ո՞վ է սուտ . ան որ կու-
րանայ թէ Յիսուս Քրիստոս չէ . անիկա է
քուն Հակառ որ կուրանայ Հայրը ու Որդին :
23 Ամէն ով որ կուրանայ Որդին , անիկա չունի
Հայրն ալ . բայց ան որ կը խոստովանի Որ-
24 դին , անիկա Հայրն ալ կ'ունենայ : Ձեր որ
դուք սկիզբէն լսեցիք , ձեր մէջը թող բնակի .
որ եթէ ան սկիզբէն լսածնիդ ձեր մէջը բնակի
նէ դուք ալ Որդիին ու Հօրը մէջը պիտի բնա-
25 կիք : Եւ ասիկա է ան խոստումնը որ ինքը
մեզի խոստացաւ , այսինքն յաւիտենական կեան-
26 քը : Ասիկա ձեզի գրեցի որ մեզ չի մոլոր-
27 ցունէ : Եւ ան օծումնիդ որ դուք իրմէն ըն-
դունեցիք , ձեր մէջը մնայ , ու պէտք չէ որ մեզի
ձեզի սորվեցունէ . հապա ինչպէս որ անոր օ-
ծումնիդ ձեզի կը սորվեցունէ ամէն բանի վրա-
յով , և ճշմարիտ է ու սուտ չէ , և ինչպէս որ
անիկա ձեզի սորվեցուց , անոր մէջը կեցէք :
28 Ու հիմայ որդեակներս՝ անոր մէջ կեցէք . որ
երբ յայտնուելու ըլլայ Ն. համարձակու-
նենանք , ու անկէց չամչնանք իր գալուստը :
29 Եթէ գիտէք թէ արդար է , կը գիտէք թէ անիկա
արդար է , նմանապէս՝ թէ ամէն ով որ արդարու-
Գ թիւն կը գործէ , անկէց ծնած է : Տեսէք՝ Հայ-
րը ինչ տեսակ սէր շնորհեց մեզի , որ մենք Աստուծոյ
որդիք կոչուինք . ասոր համար աշխարհ մեզ չի
ճանչնար , որովհետև անիկա չի ճանչցաւ :
2 Սիրելինե՛ր հիմայ մենք Աստուծոյ որդիքն ենք ,
և տակաւին յայտնի չէ թէ ինչ պիտի ըլլանք .
գիտենք որ երբ անիկա յայտնուի նէ անոր պէս
պիտի ըլլանք . վասն զի անիկա պիտի տեսնանք՝
ինչպէս որ է նէ :
3 Եւ ամէն ով որ ան յոյսը իր անձին մէջը ու-
նի՝ ինքզինքը կը մաքրէ , ինչպէս որ անիկա մա-
4 քուր է : Ամէն ով՝ որ մեղք կը գործէ՝ անիկա

օրէնքի դէմ ալ կրնէ , ու բուն ինքն մեղքը օ-
րէնքին դէմ է : Եւ գիտենք որ անիկա անոր 5
համար յայտնուեցաւ , որ Ցէր մեղքերը վեր-
ցունէ , ու իր մէջը մեղք չի կայ : Ամեն ով որ 6
անոր վրայ հաստատուած է՝ մեղք չի գործեր . և
ամեն ով որ մեղք կրգործէ՝ չի տեսաւ անիկա , ու
չի ճանչցաւ անիկա : Տղաքներ՝ մեկը ձեզ չի խա- 7
բէ . ան որ արդարութիւն կրգործէ՝ արդար է ,
ինչպէս որ Անիկա արդար է : Եւ ան որ մեղք 8
կրգործէ՝ Սատանային է . ինչու որ Սատանան
սկիզբէն հետէ կրմեղանչէ . ասոր համար Աստու-
ծոյ Որդին յայտնուեցաւ , որ Սատանային գոր-
ծերը քակէ : Ամեն ով որ Աստուծմէ ծնած է՝ 9
մեղք չընէր . ինչու որ անոր սերմը իր մէջը կը
մնայ , ու չի կրրնար մեղք գործել . պատճառն
որ Աստուծմէ ծնած է : Ասով յայտնի են մե- 10
կրզմեկէ Աստուծոյ որդիքը՝ ու Սատանայի որդիքը :
Ամեն ով որ արդարութիւն չի գործեր՝ անի-
կա Աստուծմէ չէ . և ան ալ որ իր եղբայրը
չի սիրեր : Ինչու որ աս ան պատուիրանքն է 11
որ դուք սկիզբէն լսեցիք , որ մեկզմեկ սիրենք :
Այլեւնին պէս չէ որ ինքը չարէն էր , ու իր եղ- 12
բայրը սպաննեց . և ինչու համար անիկա սպաննեց ,
անոր համար որ իր գործքերը չար էին , ու եղբօ-
րը՝ բարի : Եւ մի՛ զարմանաք եղբայրնե՛ր՝ թէ 13
որ աշխարհ ձեզ ատէ : Մենք գիտենք որ մա- 14
հէն կեանքի փոխուեցանք . ինչու որ եղբայրները
կրսիրենք . բայց ան որ չի սիրեր՝ մահին մէջը
կրմնայ : Ամեն ով որ իր եղբայրը կատէ՝ մար- 15
դասպան է . ու գիտէք որ ամեն մարդասպան իր
մէջը յաւիտենական կեանք հաստատուած չունի :
Ասով գիտցանք Աստուծոյ սէրը . որ անիկա իր 16
անձը մեր վրայ դրաւ . մենք ալ մեր եղբայրնե-
րուն համար անձերնիս պարտաւոր ենք դնել :
Ումն որ աս աշխարհիս բարիքը ունի , և իր եղ- 17
բայրը բանալ մը կարօտ կրտեսնայ՝ ու իր գութը

անկէց կը գոյէ, ինտոր Աստուծոյ սէրը անոր մէջը
18 բնակած կը լլայ։ Որդեակներս՝ չէ՛ թէ խօս-
քով ու լեզուով սիրենք, հապա գործքով ու
ճշմարտութիւնով։
19 Եւ ասով ճանչցուինք թէ ճշմարտութենէն
ենք մի. ու մեր սրտերնուս ինչ ըլլալը իր
20 առջեւը կըցուցընենք։ Ամէ որ մեր սիրտերը
մեզ մեղադրեն նէ՝ ալ Աստուած մեր սիրտերէն
21 մեծ է՝ և ամէն բան գիտէ։ Սիրելիներ՝ թէ որ
մեր սիրտերը մեզ չի մեղադրեն, համարձակու-
22 թիւն կունենանք դէպի Աստուած. և ինչ որ
ուզենք՝ կառնենք անկէց. ինչու որ իր պատ-
ուիրանքները կըպահենք, ու իր առջին հա-
23 ճոյ եղած բաները կընենք։ Եւ ասիկա է ա-
նոր պատուիրանքը, որ իր Որդւոյն Յիսուս
Քրիստոսի անունին հաւատանք՝ ու մէկզմէկ
սիրենք, ինչպէս որ մեզի պատուէր տըւաւ։
24 Եւ ան որ անոր պատուիրանքները կըպահէ՝ ա-
նոր մէջը հաստատուած կը լլայ. ու անիկա ալ ա-
նոր մէջ. և ասկից գիտենք որ մեր մէջը կըբնա-
կի՝ այսինքն Հոգիէն որ մեզի տըւաւ։

ԳԼ. Գ։

1 Սիրելիներ՝ ամէն հոգիի մի՛ հաւատաք. հապա
հոգիները փորձեցէք թէ Աստուծմէ՛ են մի.
ինչու որ աշխարհիս վրայ շատ սուտ մարգարէ-
2 ներ ելած են։ Ու մենք ասով կըճանչնանք
Աստուծոյ Հոգին. ամէն հոգի որ Յիսուս
Քրիստոսը մարմինով եկած կըխոստովանի՝ ա-
3 նիկա Աստուծմէն է. և ամէն հոգի որ Յի-
սուս Քրիստոսը մարմինով եկած չի խոս-
տովանիր, անիկա Աստուծմէ չէ. ու ասիկա
Անտիքրիստոսին հոգին է, որուն համար լսեցիք թէ պիտի
գայ. ու հիմակվընէ ալ աշխարհիս մէջն է։
4 Դուք Աստուծմէ էք ո՛րդեակներ, ու անոնց
յաղթեցիք. ինչու որ մեծ է անիկա որ ձեր մէջն

է , քան անիկա որ աշխարհիս մէջն է : Ընոնք 5
աշխարհէ են . անոր համար աշխարհի վրայ կը
խօսին , և աշխարհ անոնց կը լսէ : Մ՚ենք Աս- 6
տուծմէ ենք , ան որ Աստուած կը ճանչնայ՝ մեզի
կը լսէ . ու ան որ Աստուծմէ չէ՝ մեզի չի՛ լսեր .
ասով կը ճանչնանք ճշմարտութեան Հոգին ու
խաբէութեան Հոգին :

Սիրելիներ՝ միկզմիկ սիրենք , ինչու որ սէրը 7
Աստուծմէն է . ու ամէն ով որ կը սիրէ Աստուծ-
մէ ծնած է , ու կը ճանչնայ Աստուած : Եւ ան 8
որ չի սիրեր՝ Աստուած չի ճանչնար . ինչու որ
Աստուած սէր է : Եւ նաև աս բանին մէջ Աս- 9
տուծոյ սէրը մեր վրայ երևցաւ , որ Աստուած իր
միածին Որդին աշխարհ խրկեց , որ անով կեն-
դանի ըլլանք : Աս բանին մէջն է սէրը . որ չէ՛ 10
թէ մենք Աստուած սիրեցինք , հապա որ անիկա
մեզ սիրեց , ու իր Որդին խրկեց մեր մեղացը
քաւութեան համար : Սիրելիներ՝ թէ որ Աստ- 11
ուած մեզ ասանկ սիրեց , մենք ալ կրպար-
տաւորինք միկզմիկ սիրել : Մ՚էկը բնաւ Աստ- 12
ուած տեսած չէ՛ . թէ որ միկզմիկ սիրենք՝
Աստուած մեր մէջը կը բնակի , ու անոր սէրը մեր
մէջը կատարեալ է : Ասով գիտենք որ մենք 13
անոր մէջ բնակած ենք , ու ան մեր մէջը՝ որ իր
Հոգիէն մեզի տրաւ : Եւ մենք տեսանք ու կը վը- 14
կայենք՝ որ Հայր իր Որդին խրկեց աշխարհի
Փրկիչը ըլլալու : Ով որ կը խոստովանի թէ 15
Յիսուսը Որդի Աստուծոյ է , Աստուած անոր
մէջը կը բնակի՝ ու ան Աստուծոյ մէջը : Եւ մենք 16
հաւատացինք՝ ու ճանչցանք Աստուծոյ սէրը՝ որ
մեր վրայ ունի . Աստուած սէր է , և ան որ սիրոյ
մէջ կը կենայ՝ Աստուծոյ մէջ բնակած է , ու
Աստուած անոր մէջը կը բնակի : Աս բանին մէջ 17
անոր սէրը մեր վրայ կատարեալ է , որ Համար-
ձակութիւն ունինք դատաստանին օրը . ինչու որ
ինքը ինչպես է նէ՝ մենք ալ անանկ ենք աս աշ-

18 խարհիս մէջ ։ Սիրոյ մէջը վախ չի կայ , հապա
կատարեալ սէրը վախը մէկ դի կընէ . ինչու որ
վախը տանջանքին տակը է . ուստի ան որ կըվախ-
19 նայ՝ սիրոյ մէջ կատարեալ չէ ։ Մենք Աստ-
ուած սիրենք . ինչու որ առաջ անիկա մեզ սի-
20 րեց ։ Եթէ որ մէկը ըսուցէ Թէ ես Աստուած
կըսիրեմ , ու իր եղբայրը ատէ՝ անիկա սուտ է .
ան որ իր եղբայրը չի սիրեր որ կըտեսնայ , Աստ-
ուած որ չի տեսնար՝ ինտո՞ր կրնայ սիրել ։
21 Եւ ասոր պատուէրը անկէց ունինք , Թէ ան որ
Աստուած կըսիրէ՝ անիկա իր եղբայրն ալ Թող
սիրէ ։

ԳԼ. Ե։

1 Ամէն ով որ կըհաւատայ Թէ Յիսուսը Քրիս-
տոսն է , Աստուծմէ ծնած է . և ամէն ով
որ ծնողը կըսիրէ , անկէց ծնածն ալ կըսիրէ ։
2 Այսով կըճանչնանք որ Աստուծոյ Որդին կըսի-
րենք , երբոր Աստուած սիրենք՝ ու անոր պատ-
3 ուիրանքները ընենք ։ Ինչու որ ասիկա է
Աստուծոյ սէրը՝ որ իր պատուիրանքները պա-
հենք . և անոր պատուիրանքները ծանր բան մը
4 չեն ։ Ինչու որ ան ամէնը որ Աստուծմէ ծնած
է՝ աշխարհին կրյաղթէ . և ասիկա է յաղթու-
Թիւնը՝ որ աշխարհին կրյաղթէ , այսինքն մեր
5 հաւատքը ։ Եւ ո՞վ է որ աշխարհին յաղթէ ,
Թէ չէ անիկա՝ որ կըհաւատայ Թէ Յիսուս Որ-
դի Աստուծոյ է ։
6 Այս է՝ որ եկաւ ջուրով ու հոգւով և արիւ-
նով այսինքն Յիսուս Քրիստոս . չէ Թէ միայն
ջրով , հապա արիւնով ու ջուրով ալ , և Հոգին
է որ կըվկայէ . ինչու որ Հոգին ճշմարտութիւն է ։
7 Վասն զի երեք են որ երկինքի մէջ կըվկայեն ,
Հայր՝ Բանը՝ ու Հոգին Սուրբ . և ասոնք երեքը
8 մէկ են ։ Ու երեք են որ երկրի վրայ կըվկայեն ,
Հոգին՝ ջուրը ու արիւնը . և իրեքը մէկ են ։

ԹԷ որ մարդոց վկայութիւն ընդունինք, ալ 9
Աստուծոյ վկայութիւնը մեծ է. ասիկա է Աս-
տուծոյ վկայութիւնը, որ իր Որդուն վրայ
վկայեց։ Ան որ Աստուծոյ Որդիին կը հաւատայ, 10
աս վկայութիւնը իր վրան ունի. ան որ Աստու-
ծոյ Որդիին չի հաւատար՝ սուտզրուց կրնէ ա-
նիկա. ինչու որ չի հաւատար ան վկայութեանը՝
որ Աստուած իր Որդուն վրայ վկայեց։ Եւ 11
ասիկա է ան վկայութիւնը, որ Աստուած
մեզի յաւիտենական կեանք տըւաւ. ու աս ան
կեանքն է՝ որ իր Որդուն մէջն է։ Ան որ Որ- 12
դին կընդունի՝ կեանքն ալ կընդունի. և ան որ
Աստուծոյ Որդին չընդունիր, կեանքն ալ չըն-
դունիր։

Աս գրեցի ձեզի որ գիտնաք թէ յաւիտենա- 13
կան կեանք ունիք. ու որ Աստուծոյ Որդուն
անունին հաւատաք։ Եւ ան համարձակու- 14
թիւնը որ մենք անոր քովը ունինք՝ աս է, որ ինչ
որ խնդրելու ըլլանք իր կամքին պէս՝ կըլըսէ
մեզի։ Եւ թէ որ գիտնանք թէ մեր խնդիրքնե- 15
րուն կըլըսէ, անանկ է նէ կըգիտնանք թէ՝
խնդիրքնիս կառնենք, որնոր կըխնդրենք իր-
մէն։

ԹԷ որ մէկը տեսնայ՝ որ իր եղբայրը մեղք մը 16
գործեց չէ՛ թէ մահացու, թող խնդրէ՝ ու Աս-
տուած անոր կեանք պիտի տայ ան մահացու չէ-
ղած մեղքը գործողին. մեղք կայ որ մահացու է,
անոր համար չեմ ըսեր որ խնդրես։ Ամէն ա- 17
նիրաւութիւն մեղք է. և մեղք կայ որ մահացու
է։

Գիտենք որ ան ամէնը որ Աստուծմէ ծնած է՝ 18
մեղք չի գործեր. հապա ան որ Աստուծմէ ծնած
է՝ ինքզինքը կըպահէ, ու չարը իրեն չի մօտե-
նար։ Գիտենք որ մենք Աստուծմէ ենք, ու 19
բոլոր աշխարհ չարի մէջ է։ Եւ գիտենք որ 20
Աստուծոյ Որդին եկաւ՝ ու մեզի միտք տըւաւ,

որ ճշմարիտը ճանչնանք. և ան ճշմարիտին մէջն
ենք իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի մէջը. ինչ-
որ անիկա ճշմարիտ Աստուած է՝ ու յաւիտե-
21 նական կեանք։ Որդիներ ինքզինք-
նիդ կռապաշտութենէ
պահեցէք։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ԹՈՒՂԹ։

Արեգէն ընտրեալ Կիւրիային՝ ու իր որ- 1
դիներուն, որ ես ճշմարտութեամբ կըսի-
րեմ. և չէ՛ թէ միւնակ ես, հապա ամէնն ալ՝ որ
ճշմարտութիւնը կըճանչնան. ան ճշմարտու- 2
թեանը վրայով՝ որ մեր մէջը հաստատված է, որ
ձեր հետ ալ ըլլայ. ու դուք յաւիտեան մեր
հետը ըլլաք։ Շնորհք՝ ողորմութիւն՝ խաղա- 3
ղութիւն Հօր Աստուծմէն, և Տէր Յիսուս
Քրիստոս Հօրը Որդիէն ձեր հետը ըլլայ ճշմար-
տութեանով ու սիրով։

Հատ ուրախ եղայ ես, որ քու որդիներէդ 4
գտայ՝ որ ճշմարտութեամբ կերթան ան պատ-
ուիրանքին պէս, որ Հօրմէն առինք։ Եւ հի- 5
մայ քեզի կաղաչեմ՝ Կիւրիա. չէ թէ մէկ նոր
պատուիրանք մը քեզի կգրեմ, հապա ան որ
առաջուց ունէինք, որ միկզմիկ սիրենք։ Եւ 6
սէրը ասկէ է որ անոր պատուիրանքին պէս կեր-
թանք. ու պատուիրանքը ասկէ է որ ինչպէս ա-

7 ռաջուց լսեցիք՝ անոր պէս երթաք։ Ինչու որ
շատ մոլորեցուցիչներ ելան աշխարհ· ով որ Յի-
սուս Քրիստոսը մարմինով եկած չի խոստովա-
8 նիր նէ՝ անիկա մոլորեցուցիչ է՝ ու Հակառ։ Ին-
քըզինքնիդ զգոյշ կեցէք, որ ըրած աշխա-
տանքնիդ չի կորսընցունէք· հապա որ լման
9 վարձք առնէք։ Ամէն ով որ յառաջանք կընէ՝
ու Քրիստոսի վարդապետութեանը մէջ չի կե-
նար, զԱստուած չի՛ ճանչնար· ան որ վարդա-
պետութեանը մէջ կըկենայ, անիկա Որդին ալ
10 կընդունի՝ Հայրն ալ։ Եթէ որ մէկը ձեզի գայ՝
ու աս վարդապետութիւնը չունենայ՝ անիկա
տուներնիդ մի՛ ընդունիք, և բարև մի՛ տաք
11 անոր։ Ով որ անոր բարև կըսէ՝ անոր չար
գործքերուն հաղորդ կըլլայ։
12 Շատ բան ունէի ձեզի գրելու· բայց չուզեցի
թուղթով ու մելանով գրել· ինչու որ յոյս
ունիմ՝ որ ես ինքս ձեզի պիտի գամ· ու բերան
բերնի պիտի խօսիմ· որ մեր ուրախութիւնը
13 կատարեալ ըլլայ։ Կարև կուտան քեզի քու-
կին ընտրեալ քրոջդ զաւկը-
ները· շնորհք ձեր
վրայ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ԹՈՒՂԹԸ։

Ա ՌԱՔԵՑԷՆ Վայիոս սիրելիին, որ ես ճշմարտութեամբ կը սիրեմ։ Սիրելի՛ քու ամէն բաներուդ յաջողութեանը ու առողջութեանը համար աղօթք կընեմ. ինչպէս քու անձդ ալ յաջողութեան մէջ է։ Հա՛ստ ուրախ եղայ երբ որ եղբայրները եկան ու քու ճշմարտութեանդ վրայ վկայեցին, ինչպէս որ դուն ճշմարտութեամբ կերթաս։ Աւելի մեծ ուրախութիւն մըն ալ չունիմ, որ կը լսեմ թէ իմ զաւկներս ճշմարտութեան մէջ կը քալեն։ Սիրելի՛ դուն հաւատարմաբար կընես ինչ որ կընես եղբայրներուն՝ նոյնը օտարներուն ալ. որոնք եկեղեցիին առջեւը վկայեցին քու սիրոյդ համար. որ Աստուծոյ հնտոր կերվայլէ նէ՝ անոնց բարի ընելով ճամբու կրընես։ Ինչու որ Անո՛ւնին համար ելան, ու հեթանոսներուն մէկէն բան մը չեն առներ։ Մենք ասկէ ետեւ պարտաւոր ենք անանկները ընդունելու, որ ճշմարտութեանը գործակից ըլլանք։

9 Եկեղեցիին բան մը գրեցի. բայց Դիոտրիփէսը՝
որ մէջերնին առաջին ըլլալ կուզէ, մեզ չըն-
10 դունիր։ Ընոր համար թէ որ գամ՝ անոր
գործքերը պիտի միտքը ձգեմ՝ որ կընէ, մեզ
կըսոգնեցուընէ չատխօսութեան չար խօսքերով.
և ասոնցմով ալ չերիք չեղած՝ ինքը չընդունիր
եղբայրները, ու անոնք որ կընդունին նէ՝ թող
11 չիտար, ու եկեղեցիէն ալ կըհանէ։ Սիրելի՝
չարին նմանող մի՛ ըլլար, հապա բարիին. վասն
զի ան որ բարի կընէ՝ Աստուծմէն է. և ան որ
չարիք կգործէ՝ անիկա բնաւ Աստուած չի տե-
12 սաւ։ Դիմեթրոսին համար ամէնն ալ կըվկայէ,
եկեղեցին ալ, ճշմարտութիւնն ալ. մենք ալ
կըվկայենք. և դուն գիտես որ մեր վկայութիւնը
ճշմարիտ է։
13 Շատ բան ունէի քեզի գրելու. բայց չեմ
14 ուզեր թանղթով ու մելանով գրել։ Յուսամ որ
շուտ մը քեզ տեսնալու, ու բերան
15 բերնի խօսելու։ Խաղաղութիւն քեզի. բարե-
կուտան քեզի Դէպ սիրելիները. բարե տուր
մեր սիրելիներուն ամէն մէկուն՝
անունովը։

ՅՈՒԴԱ

ԱՌԱՔԵԱԼԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ։

Յուդա՝ Յիսուս Քրիստոսի ծառայ ու Յակո- 1
բին եղբայրը. հեթանոսներնուդ՝ որ Հօր Աս-
տուածմէն սիրված էք և Յիսուս Քրիստոսի պահ-
ված ու ընտրված։ Ողորմութիւնը ու խաղա- 2
ղութիւնը և սէրը ձեր վրայ շատնայ։

Սիրելիներ՝ բոլոր ջանքը վրաս առնելով ձեզի 3
գրելու մեր հասարակութեան փրկութեանը
համար, իմ անձիս հարկ սեպեցի ձեզի գրել ու
աղաչել, որ պինդ կենաք ան հաւատքին վրայ՝
որ անգամ մը սուրբերուն տրվեցաւ։ Որով- 4
հետև մէկ քանիները սկզբվեցան մտան, ա-
նոնք որ առաջուց աս դատապարտութեանը հա-
մար պատրաստված էին. ամբարիշտները, որ
մեր Աստուծոյ շնորհքը անկարգութեան դար-
ձուցին, և ան մի միայն Իշխանը ու մեր Տէր
Յիսուս Քրիստոսը ուրացան։ Ուստի կուզեմ 5
միտքերնիդ բերել, թէպէտ ամէն բան գիտէք,
թէ Աստուած առջի բերանը ժողովուրդը Եգիպ-

տոսէն խալըսեց , ետքը անհաւատները կորսըն-
6 ցուց : Եւ հրեշտակները՝ որ իրենց իշխանու-
թիւնը չի պահեցին . հապա իրենց բնակութիւ-
նը որ ձգեցին , մշտնջենաւոր կապերով խաւարի
7 ներքեւ պահեց ան մեծ օրվան դատաստանին : Ինչ-
պէս Սոդոմ ու Գոմոր՝ և անոնց բոլորտիքը եղած
քաղաքները նոյն օրինակին պէս պոռնըկեցան ըն-
կերներուն մարմիններուն հետ , առջևնիս օրինակ
կեցեր են՝ յաւիտենական կրակին դատապարտու-
8 թիւնը ընդունելով : Ընոր պէս ասոնք ալ քու-
նով խելըռածի պէս՝ մարմինը կըպղծեն , տէրու-
թիւնները կը քամահրեն , փառաւորներուն գէշ
9 կըզրուցեն : Բ՚ն որ Միքայէլ հրեշտակապետը՝
երբոր բանսարկու Սատանային հետ վէճ ընելով
պատասխան կուտար Մովսէսին մարմինին հա-
մար , չի համարձակեցաւ ան հայհոյութեան
դատապարտութիւնը ինքը տալու . հապա ըսաւ ,
10 Տէրը թող յանդիմանէ քեզ : Հայց ասոնք՝
ան բաներուն որ չեն հասկընար , գէշ կըզրու-
ցեն . և ուրիշ բաներն ալ որ բնապէս անբան
անասուններուն պէս գիտեն՝ ինչ ընենին անոնց
11 մէջ կապականեն : Ա՛յ է անոնց՝ որ Կայէնին
ճամբովը գացին , ու Բաղաամին մոլորութեանը
պէս վարձքի ետևէ գացին , և Կորխին հակառա-
12 կելուն պէս կորսըվեցան : Բ՚սոնք ատելի երես-
պաշտներ են երթալով իրենց ցանկութեանը
ետևէն , խաբեբայութիւնով ձեզի սէր ցուցը-
նելով՝ հետերնիդ կեղտ-կոտ-մով կըխնդան , ա-
ռանց վախի ինքզինքնին կըկերակրեն . անջուր
ամպեր հովերով ծեծկըւտած . պտուղնին կոր-
սընցուցած ծառեր՝ բերք չունեցող , երկու ան-
13 գամ մեռած արմատէն խըլած . ծովու կատղած
ալիքներ , որ իրենց անձերնուն ամօթը միշտ
կըփրփուրցունեն . մոլորած աստղեր , որ յաւի-
տենական խաւարին անդունդը իրենց պահված
14 է : Բ՚նոնց համար մարգարէացաւ Ենովքն ալ՝

որ եօթներորդ էր Ադամէն, ու ըսաւ. Ահա
Տէրը տասը հազար սուրբ հրեշտակներով եկաւ,
ամենուն դատաստանը ընելու, ու բոլոր ամ- 15
բարիշտները յանդիմանելու իրենց գործքերուն
համար՝ որ ամբարշտութիւն ըրին, և բոլոր
ծանրը խօսքերուն համար՝ որ մեղաւորները
ու ամբարիշտները անոր համար խօսեցան։
Սոսնք տրտունջացողներ ու գանգատողներ են, 16
իրենց անձերնուն ցանկութեանը պէս ը-
նթալով. և իրենց բերանը ամբարտաւան խօս-
քեր կը զրուցէ, երեսպաշտութիւն կընեն վաստա-
կի համար։ Հայց դուք սիրելիներ՝ մի՛ոք բերէք 17
ան առաջուց զուրցուած խօսքերը մեր Տէր Յի-
սուս Քրիստոսի առաքեալներէն. որ ձեզի կըզու- 18
րուցէին թէ՝ Ետքի ատեններուը արհամարհող
մարդիկներ պիտի ըլլան իրենց ամբարիշտ ցան-
կութիւնունուն պէս երթալով։
Սոսնք ինքզինքնին զատած հնչաւորներ են, 19
որ Հոգին չունին։ Հայց մենք սիրելիներ՝ 20
անձերնիս շինենք սուրբ հաւատքի վրայ Հո-
գւով Սրբով. աղօթք ընենք, անձերնիս պահ- 21
լու Աստուծոյ սիրոյը, մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսին ողորմութեանը սպասելու յաւիտենական
կենացը համար։ Եւ ոմանց որ դատապար- 22
տելու են, խրատ տուէք. և ոմանք ալ խալըսե- 23
ցէք կրակէն դուրս քաշելով, և ոմանց վրայ
գութ ունեցէք վախով դատելով, մարմինէն
աղտոտված լաթն ալ ատելով։
Եւ անոր՝ որ ինքը կարող է ձեզ անարատ ու 24
անբիծ պահել, իր փառքին առջևը անխար-
դախ ցնծութիւնով հաստատել, մի միայն
Աստուծոյ՝ մեր փրկիչին մեր Տէր Յիսուս Քրիս- 25
տոսին փառք՝ մեծութիւն, զօրութիւն ու իշխա-
նութիւն բոլոր դարերէն առաջ, և հիմայ
ու բոլոր դարերու մէջ.
Ամէն։

ՅՐՑՏՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

ՈՒ

ԸՍՏՈՒՆՕՐԻՆ ԱՒԵՏԱՐԱՆԻՉՆԵՐՈՒ

ԳԼ. Ա.

1 Յիսուս Քրիստոսին յայտնութիւնը, որ Աստուած անոր ձեռքը տուաւ իր ծառաներուն ցուցընելու ան բաներըւ որ շուտով պիտի ըլլայ. և խրկեց ցուցուց իր հրեշտակին ձեռքովը իր
2 Յոհաննէս ծառային. որ Աստուծոյ խօսքին վկայութիւնը ըրաւ, ու Յիսուս Քրիստոսի վկայութիւնը, որ տեսաւ, և որ եղաւ՝ և որ
3 անկէ ետև պիտի ըլլար: Երնեկ անոր որ կը կարդայ կամ կրլսէ աս մարգարէութեան խօսքերը, և կրպահէ ինչ որ ասոր մէջը գրած է. ինչու որ ժամանակը մօտ է:
4 Յոհաննէսէն եօթը եկեղեցիներուն որ Ասիոյ մէջն են, շնորհք և խաղաղութիւն ձեր Հետը Աստուծմէ Որ էն և ան որ էր, և ան որ պիտի գայ. ու Հոգիին եօթը զօրութիւններէն որ իր
5 աթոռին առջևն են. և Յիսուս Քրիստոս հաւատարիմ վկայէն, որ մեռելներուն մէջը առջինն է, և երկրի թագաւորութիւններուն

իշխանն է · որ մեզ սիրեց , ու մեր մեղքին կա-
պերը արձրկեց իր արիւնովը · և մեզ թա- 6
գաւորներ ու քահանաներ ըրաւ Աստուծոյ ու
իր Հօրը · որուն փառք և զօրութիւն հիմայ ու
ամէն իմիր , և յաւիտեանս յաւիտենից · ա-
մէն :

Ահա ամպերով պիտի գայ · ու ամէն աչք պի- 7
տի տեսնայ անիկա , ու երկրի ծայրերը պիտի
տեսնան անիկա , և երկրի վրայ ան ամէնքը որ
անիկա վիրաւորեցին , ու անոր վրայ պիտի ողբան · անանկ է , ամէն : Ես այլ եմ , ու ես քէ 8
եմ՝ կըսէ Տէր Աստուած , ան որ է՝ ու էր , և ան
որ պիտի գայ Ամենակալը :

Ես Յովհաննէս ձեր եղբայրը՝ և նեղութեան , 9
ու արքայութեան՝ և Յիսուսի համար
համբերութեան հետևակիցը՝ եղայ ես կղզին
Հին՝ որ անունով Պատմոս կըսվի , Աստուծոյ խօս-
քին համար՝ ու Յիսուս Քրիստոսի վրայ վկայե-
լու համար : Ես կիրակի օրը Հոգիին իմ՝ վրաս 10
եղաւ , ու ետևէս մեծ ձայն մը լսեցի փողի ձայնի
պէս , որ ինծի կըսէր · Ես եմ՝ առջև ու ով , ա-
ռաջին և վերջին · ինչ որ կըտեսնաս գրքի մէջ 11
գրէ՝ ու ղրկէ եօթը եկեղեցիներուն , Եփեսո-
սին , Զմիւռնիային , Պէրգամային ու Թիւատ-
իրային և Սարդիկէին՝ ու Փիլադելփիային և
Լաւոդիկեայի : Ես դարձայ ան ձայնը տեսնա- 12
լու որ ինծի կըխօսէր · ու երբոր դարձայ՝ եօթը
ոսկիէ աշտանակներ տեսայ · և եօթը աշտանակ- 13
ներուն մէջը Որդւոյ մարդոյ նման , կապայ
մը հագած՝ որ մինչև ոտքին պճղունքը կըհաս-
նէր , ու ծիծերուն վրայօքը ոսկի գօտի մը կա-
պած · և իր գլուխը ու մազերը ձիրմանի՝ բուրդի 14
պէս ու ձունի պէս · ու իր աչքերը՝ կրակի
բոցի պէս · և իր ոտքերը փալատ պղինձի նման 15
արևէ Ընէ փոսի մէջը կրակ դարձած , ու իր
ձայնը շատ ջուրերու ձայնի պէս · և իր աջ ձեռ- 16

քին մէջ եօթը աստղ ունէր , ու իր բերնէն եր-
կսւբերնէ սուր մը կելլար , և իր երեսը արեւի
17 պէս ճառագայթած կերևար : Եւ երբոր տե-
սայ անիկա՝ մեռելի պէս իր ոտքը ինկայ . ու իր
աջ ձեռքը իմ վրաս դրաւ , ու ըսաւ ինծի , Մի՛
18 վախնար . ես եմ առջինը՝ ու ես եմ ետքինը . և
ես եմ կեանք , ու ես ան եմ որ մեռայ՝ ու կեն-
դանի եմ հիմայ՝ և ամէն իշխ , ու յաւիտեանս
յաւիտենից . ամէն . և ես ունիմ մահուան ու
19 դժոխքին բանալիքները : Գրէ՛ ինչ որ կրտես-
նաս՝ ան որ կայ , ու ան որ ետքը պիտի ըլլայ , և
20 անիկա որ պատրաստ է ըլլալու . եօթը աստղե-
րուն խորհուրդը՝ որ իմ աջ ձեռքիս մէջը տե-
սար , և եօթը ոսկիէ աշտանակները . ան եօթը
աստղերը՝ եօթը եկեղեցիներուն հրեշտակներն
են . և եօթը ճրագարանները եօթը եկեղեցի-
ներն են :

ԿԱ. Ը։

1 Ա փեսացոյ եկեղեցիին հրեշտակին գրէ . ա-
սանկ կըսէ ան կարողը , որ իր աջ ձեռքին
մէջ եօթը աստղեր ունի , ու եօթը ոսկիէ աշ-
2 տանակներուն մէջը կըպըտրտի : Գիտեմ քու
գործքերդ և քու աշխատութիւններդ ու քու
համբերութիւնդ . և որ չարերուն չես համբե-
րեր , ու փորձեցիր անոնք որ կըսեն Ընչ իրենք
առաքեալ են՝ ու չեն , և Եբրայեցիներ , ու
3 սուտ կրզրուցեն . և համբերեցիր , ու իմ անու-
նիս համար նեղութիւն քաշեցիր , ու աշխատե-
4 ցար : Սակայն քեզի կըսեմ , որ քու առջի սէրդ
5 ձգեցիր : Ա՛րդ յիշէ ուսկից որ ինկար ,
ու ապաշխարէ , և քու առջի գործքերդ ըրէ .
հապա թէ չէ՝ շուտով կուգամ , ու քու աշտա-
նակդ իր տեղէն պիտի շարժեմ՝ թէ որ չապաշ-
6 խարես : Աստի ասիկա ըրէ , որ Նիկողայոսին
7 գործքերը ատես , որ ես ալ կատեմ : Ան որ

լսելու ականջ ունի՝ նէ թող լսէ ինչ կըսէ
Հոգին Աստը եկեղեցիներուն . Ին որ կը յաղ-
թէ կ՚ուզեմ ծառէն ուտել պիտի տամ՝ անոր ,
որ Աստուծոյ դրախտին մէջն է :

Եւ Զմիւռնացոց եկեղեցիին գրէ . Ա- 8
յսանկ կըսէ Նախիւրը ու Վերջնանը , որ մե-
ռաւ՝ ու ողջ ընցաւ : Գնաց քու գործերդ ու 9
նեղութիւնդ՝ և աղքատութիւնդ . բայց քու ա-
քաստութիւնդ հարըստութիւն պիտի ըլլայ . ու
քեզմէ ան հայհոյութիւնը որ կըսեն թէ Իրենք
Հրեայ են՝ ու չէին , հապա Սատանայի ժողովը
մը : Ահ վախնար ան բաներուն համար որ 10
պիտի չարչարվիս . ահա բանսարկուն ձեզմէ մէկ
ոմանները բանտը ձգելու վրայ է , որ փորձվիք ,
և տասը օր նեղութիւն պիտի ունենաք . մինչև
ի մահ հաւատարիմ եղիր , ու քեզի կենաց պսա-
կը պիտի տամ : Ին որ լսելու ականջ ունի՝ 11
թող լսէ ինչ կըսէ Հոգին Աստը եկեղեցինե-
րուն . ան որ կը յաղթէ երկրորդ մահէն վնաս չի
քաշեր :

Եւ Պերկամոնի եկեղեցիին գրէ՝ . 12
Այսանկ կըզրուցէ ան որ երկու բերնէ սրած սու-
րը ունի : Ահա գործերդ տեսայ , և որ հոն 13
կըբնակիս՝ ուր որ Սատանային աթոռն է . ու իմ
անունս ունիս , և իմ հաւատքս չուրացար ան
օրը որ երբ Անթիպաս իմ վկաս հաւատարիմ
դանըվեցաւ . ինչու որ անիկա իմ հաւատարիմ
վկաս է բոլորովին հաւատացեալ , որ ձեր մէջէն
սպանըվեցաւ , որ կեցեր էք ուր տեղ որ Սա-
տանան կը բնակի : Բայց քեզի դէմ քիչ մը բան 14
ունիմ՝ որ քու քովդ Նաղաամին վարդապետու-
թիւնը բռնող կայ , որ Նաղակին սովրեցուց
Իսրայէլի որդոցը տալը գայթակղութիւն գնել ,
որ անոնք խորթերու զոհված ուտեն ու պոռնի-
կութիւն ընեն : Այսանկ դուն Նիկողայտանա- 15
ներուն վարդապետութիւնը բռնող ունիս , որ

16 անիկա ես կատեմ։ Ուստի ապաշխարէ՛, հա-
պա թէ չէ չուտով կուգամ, ու իմ բերնիս
թուրովը պիտի պատերազմիմ անոնց հետ։
17 Ան որ լսելու ականջ ունի նէ՝ թող լսէ՛ ինչ
կըսէ Հոգին եկեղեցիներուն. ով որ կըյաղթէ՝
պահված մանանայէն ուտել պիտի տամ անոր.
ու սուրբ գիրք մը պիտի տամ անոր, և ան
գրքին մէջ նոր անուն մը գրված, որ անիկա
մէկը չի գիտեր, միայն թէ ան որ կառնէ։
18 Եւ Թիւատիրայի եկեղեցիին հրեշտակին գրէ՛.
Ասանկ կըսէ Աստուծոյ Որդին, որ իր աչքե-
ները կրակի բոցի, ու իր ոտքները ղուտ պղին-
19 ձի նման են։ Ես գործերդ տեսայ, և հա-
ւատքդ ու ծառայութիւնդ ու քու պաշտօնդ համ-
բերութիւնով. որ քու վերջին աշխատութիւնդ
20 առջինէն շատ է։ Հայց քեզի շատ բան կըզգե-
ցուցեմ, որ ան Յեզաբէլ կնիկը թող տալիր,
որ ինքը զինքը մարգարէ կըսէր, ու իմ ծառա-
ներուս մոլորութիւն կըսորվեցուներ, որ պոռ-
նկութիւն ընեն՝ և ⁂ զոհված ուտեն։
21 Եւ ես անոնց ժամանակ տուի իրենց պոռնկու-
թիւնը ապաշխարելու, ու չապաշխարեցին։
22 Ահա ես անիկա հիւանդ պիտի ձգեմ, ու իր գո-
ծակիցները՝ որոնց հետը շնութիւն ըրաւ, մեծ
մեծ նեղութիւններու մէջ, թէ որ իրենց գործ-
23 քերուն վրայ չապաշխարեն։ Եւ անոնց զաւ-
կները մահով պիտի սպաննեմ. և բոլոր եկե-
ղեցիները պիտի ճանչնան թէ ես ան եմ՝ որ ե-
րիկամունքները ու սիրտերը կըքննեմ. և ձեզի
ամէն մէկերնուդ իրենց գործքերուն պէս կը
24 հատուցանեմ։ Հայց ձեզի կըսեմ որ Թիւա-
տիրին մէջն էք, ու ան վարդապետութիւնը չու-
նիք. որ չի ճանչցած Սատանային խորունկու-
թիւնը (ինչպես որ կըսեն). ձեր վրայ ուրիշ
25 ծանրութիւն չեմ ձգեր. հապա ան որ ունիք
26 պահեցէք մինչև որ ես գամ։ Եւ ան որ կը

յաղթէ՝ ու իմ գործքերս մինչև վերջը կըպահէ,
անոր իշխանութիւն պիտի տամ ազգերուն վրայ.
և պիտի հովուէ զանոնք երկաթէ գաւազանով, 27
ու անոնք պիտի փշրէ բրուտի ամանի պէս, ինտոր 28
որ ես ալ իմ Հօրմէս առի. ու անոնց պիտի
տամ առաւօտեան աստղը: Ան որ լսելու ա- 29
կանջ ունի նէ՝ թող լսէ՛ ինչ կըսէ Հոգին
Եկեղեցիներուն:

ԿԻ. Կ:

Եւ Սարդիացոց եկեղեցիին հրեշտակին գրէ՛. 1
Ասանկ կըսէ ան որ Աստուծոյ եօթը Հոգին ունի՝
ու եօթը աստղերը. քու գործքերդ տեսայ որ
դուն կենդանիի անուն ունիս՝ ու մեռած ես:
Արթնցուն կեցիր՝ և հաստատուն եղիր ասկէ ետև՝ 2
որ մեռնելու վրայ ես. ինչու որ քու գործքերդ
Աստուծոյ առջևը կատարեալ չի գտայ: Ուրա- 3
ցընէ՛ միտքդ լսեր թէ ինչպէս լսեցիր, ու պահէ՛,
և ապաշխարէ. Հապա թէ որ արթննալու չըլ-
լաս նէ՝ գողի պէս կուգամ, ու մէկը չիմանար
իմ քեզի գալըս: Սանի մը Սարդիացիներու 4
անձինք ունիս, որոնք որ իրենց լաթերնին չաղ-
տոտցուցին. և ճերմակներով պիտի պըտըտին,
որ անոր արժանի եղան: Ան որ կըյաղթէ՝ 5
ասանկ ճերմակներ պիտի հագնի, ու անոր ա-
նունը կենաց գիրքէն չի պիտի աւըրվի. և անոր
անունը պիտի խոստովանիմ ես իմ Հօրս առջևը՝
ու հրեշտակներուն առջևը: Ան որ լսելու ա- 6
կանջ ունի՝ թող լսէ՛ ինչ կըսէ Հոգին եկեղե-
ցիներուն:

Եւ Փիլադելփիացոց եկեղեցիին հրեշտակին 7
գրէ՛. Ասանկ կըսէ ան Սուրբը՝ ան Ճշմարիտը՝
որ Դաւիթի բանալիքները ունի. Կըբանայ՝ ու մէ-
կը չի կայ որ գոցէ. և կըգոցէ՝ ու մէկը չի կայ
որ բանայ: Գործքերդ տեսայ. ահա քու 8
դիմացդ բացված դուռ մը դրի, որ ան մէկը չի՛

կրնալ գոցել. ինչու որ դուն քիչ մը կարողու-
թիւն ունիս՝ և իմ խօսքս պահեցիր, ու իմ ա-
9 նունըս չուրացար: Ահա ես քեզի կուտամ ան
Սատանային ժողովը՝ որոնք կըսեն թէ Հրեայք
ենք՝ ու չեն, հապա սուտ կըսեն. ահա
ընեմ անոնք՝ որ գան ու երկիրպագուին ըլ-
նեն քու ոտքիդ առջևը, և ճանչնան՝ որ ես քեզ
10 սիրեցի: Ինչու որ իմ համբերութեան խօսքս
պահեցիր. ես ալ քեզ պիտի պահեմ քու փոր-
ձութեանդ ատենը, որ պատրաստ է գալու բո-
լոր աշխարհի վրայ՝ երկրիս երեսը բոլոր քնա-
11 կողները փորձելու համար: Ահա ես շուտով
կուգամ. ունեցածդ ամուր բռնէ՝ որ մէկը չառ-
12 նէ քու թագդ: Ան որ կըյաղթէ՝ անիկա իմ
Աստուծոյս տաճարին սիւն մը պիտի ընեմ, ու
ալ դուրս չէ պիտի ելլայ. և անոր վրայ իմ
Աստուծոյս անունը պիտի գրեմ, ու իմ Աս-
տուծոյս քաղաքին անունը, որ նոր Երուսաղէմն
է՝ որ երկինքէն իմ Աստուծմէս պիտի իջնայ, և
13 իմ նոր անունըս: Ան որ ականջ ունի՝ թող
լսէ՝ ինչ կըսէ Հոգին եկեղեցիներուն:
14 Եւ Լաւոդիկէի եկեղեցիին հրեշտակին գրէ.
Ամէն կըսէ Ամէնը՝ հաւատարիմ ու ճշմարիտ
վկան, Աստուծոյ ստեղծուածներուն սկիզբին
15 Սկիզբը: Ես գործքերդ գիտեմ՝ որ ոչ պաղ
ես՝ ու ոչ տաք. պէտք էր քեզի պաղ ըլլալ՝ և
16 կամ տաք: Հայց դուն գաղջ ես, ու ոչ տաք՝
ոչ ալ պաղ. քեզ բերնէս դուրս փրսխելու վրայ
17 եմ: Որ կըսես, Ես հարուստ եմ՝ ու մեծցայ,
և բանի մը կարօտ չեմ. ու չես գիտեր որ դուն
խեղճ ու թշուառական ես՝ և աղքատ՝ մերկ ու
18 կոյր: Խորհուրդ կուտամ քեզի որ ինձմէ
ոսկի ծախու առ կրակի մէջ փորձուած,
որ հարըստանաս, ու ճերմակ լաթերը որ հագ-
նիս, որ քու անշնորհք մերկութիւնդ չերևայ.
19 և աչքիդ դեղ դիր՝ որ տեսնաս: Ես իմ սի-

բանս կըչեմ՝ ու կըխրատեմ . ուստի նախանձ
ձէ՛ ու ապաշխարէ ։ Ա՛յս ես գուցը կայներ ու 20
կըչալեմկոր . թէ որ մէկը իմ ձայնս լսէ՝ ու ան
դուռը բանայ , անոր քովը կըմտնամ՝ , և անոր
հետը հացկերոյթ կընեմ՝ , ան ալ իմ՝ հետս ։
Ա՛ն որ կըյաղթէ՝ անոր կուտամ՝ որ իմ՝ հետս 21
իմ՝ աթոռս նըստի . ինծոր որ ես ալ յաղթեցի՛
ու իմ՝ Հօրս աթոռը նըստայ ։ Ա՛ն որ ականջ 22
ունի՝ թող լըսէ՝ ինչ կըսէ Հոգին եկեղեցինե-
րուն ։

ԳԼ . Գ ։

Ե՛ւ ասկէ ետքը տեսայ , և ահա բերկին- 1
քին դուռնըը բացվըր էին , ու առջի փողին
ձայնը որ լսեցի՝ կըխօսէր ինծի՛ ու կըսէր . Հո՛ս
ելլը՝ և քեզի ցուցընեմ՝ ինչ որ ետքի առեններըը
պիտի ըլլայ ։ Եւ Հոգին ինծի՛ հասաւ , ու ա- 2
թոռ մը տեսայ՝ որ երկինքը կեցեր էր ։ Եւ ան 3
աթոռին վրայ Ա՛ն նստեր էր , յասպիս ու սար-
պիոն քարերուն երևոյթին նման ։ Եւ ան ա- 4
թոռին բոլորտիքը քահանաներ գ՛ինուլատի երևոյ-
թի նման . ու աթոռին չորս կողմը քսանըչորս
աթոռներ , և ան աթոռներուն վրայ քսանըչորս
երէցներ նստեր էին՝ ձերմակ լաներ հագած , ու
իրենց գլուխը ոսկիէ թագեր ուներին ։ Եւ ան 5
աթոռէն կածկրտուքներ ու ձայներ և որո-
տումներ կելլային . ու եօթը հատ բորբոքած
կրակի ջամբարներ կային աթոռին առջին , որ
Աստուծոյ եօթը Հոգիներն են ։ Եւ ան աթո- 6
ռին առջևը ապակիէ ծով մը սարին ձերմակու-
թեանը նման , ու աթոռին մէջ տեղը չորս կեն-
դանիներ , որ աչքերով լեցուն էին առջևէն ու
ետևէն ։ Եւ առջի կենդանին նման էր առիւ- 7
ծի , ու երկրորդ կենդանին՝ զուարակի , և եր-
րորդ կենդանին մարդու երես ուներ , ու չորրորդ
կենդանին թռչող արծիւի նման ։ Եւ չորս 8

կենդանիներուն անոնցմէ ամէն մէկը վեց թեւեր
ունէր , բոլորտիքին ու ատկէն աչքերով լեցուն
էին · չէին հանդչէր ոչ ցորկը՝ ոչ ալ գիշերը՝
ըսելով , Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ՝ Տէր Աստուած
Ամենակալ , որ էր՝ և է , և ան որ պիտի գայ :
9 Եւ երբոր ան կենդանիները փառք ու պատիւ և
գոհութիւն կուտային աթոռին վրայ նստողին՝
10 որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից , քա-
նըչորս երէցները ան աթոռին վրայ նստողին
առջեւ կիյնային՝ ու երկրպագութիւն կընէին
յաւիտեանս յաւիտենից կենդանիին , և իրենց
թագերը աթոռին առջեւ կընդնէին՝ ըսելով ,
11 Արժանի ես մեր սուրբ Տէր Աստուածը փառք
ու պատիւ և զօրութիւն առնելու · ինչու որ
ամէն բան դուն ստեղծեցիր , ու քուկին ուզե-
լովդ ստեղծվեցան , և հաստատուն կեցեր են :

ԻԳ· Ե·

1 Եւ ան աթոռին վրայ նստողին աջ ձեռքը մէկ
գիրք մը տեսայ՝ ներսէն ու դուրսէն գրված ,
2 և եօթը կնիքով գրոհած : Ու մէկ զօրաւոր
հրեշտակ մը տեսայ՝ որ մեծ ձայնով կըկանչէր ·
Ո՞վ արժանի է աս գիրքը բանալու՝ ու անոր
3 կնիքը քակելու : Եւ մէկը չէր կրնար ան գիր-
քը բանալ՝ ոչ երկինքը՝ ոչ երկրիս վրայ՝ ու ոչ
երկրիս տակը , ոչ ալ անոր նայելու կըմաը :
4 Ես ալ սաստիկ կուլայի՝ որ մէկը արժանի չի
գտնվեցաւ ան գիրքը բանալու , ու ոչ ալ ա-
5 նոր նայելու : Եւ երէցներէն մէկը բսաւ ինծի ,
Մի՛ լար · տես ահա արիացը որ Յուդայի ցեղէն՝
Դաւիթի արմատէն է , յաղթեց ան գիրքը բա-
6 նալու՝ ու անոր եօթը կնիքները քակելու : Եւ
տեսայ ան աթոռին մէջ տեղը՝ ու չորս կենդանի-
ներուն մէջը՝ և ան երէցներուն մէջը մէկ գառ մը
կար պրպէս ԼԸ մորթված · որ եօթը եղջիւր ու
եօթը աչք ունէր , որոնք Աստուծոյ եօթը հո-

գիներն են՝ որ լցոր երկիր խրկուած են ։ Եւ 7
անկա եկաւ աշխուժն վրայ նստողին աչ ձեռքն
էլլոջ առաւ ։ Եւ երկոր գիրքը առաւ՝ չորս 8
կենդանիները ու քսանչորս երէցները գառին
առջեւը կկոյնային , և ամէն մէկը քնար ունէին ու
ոսկի բուրվառ խունկով լեցուն , որ սուրբերուն
աղօթքն է ։ Եւ նոր երգեր կերգէին՝ ու կը- 9
սէին ։ Արժանի ես դուն առ գիրքը առնելու՝ ու
առոր կնիքները բանալու ։ ինչու որ մորթուեցար , ու մեզ Աստուծոյ քու արիւ-
նովդ բոլոր ազգերէն և լեզուներէն , ու հեթա-
նոսներուն ժողովուրդներէն , և մեզ մեր Աս- 10
տուծոյ թագաւորները ու քահանաները ըրիր՝
երկրի վրայ թագաւորութիւն ընելու ։ Ու նա- 11
յեցայ՝ և շատ հրեշտակներու ձայն լսեցի , որոնք
ան աթոռին՝ ու չորս կենդանիներուն և քահա-
նաներուն բոլորտիքը կեցեր էին ։ ու անոնց
համրանքն էր բիւրք բիւրուց՝ և հազարք հազա-
րաց ։ մեծ ձայնով մը կըսէին , Արժանի է մորթուած 12
գառնը առնուելի և մեծութիւն առնել՝ ու իմաս-
տութիւն և զօրութիւն՝ ու պատիւ և փառք ու
օրհնութիւն ։ Եւ բոլոր արարածները՝ որ եր- 13
կինքը ու երկրիս վրայ են , և ծովու մէջ , ու
ինչ որ անոնց մէջ կայ նէ՝ լսեցի որ կըսէին , Ան
որ աթոռը նստած է՝ և ան գառնուկը՝ օրհնեալ
բարձրացեալ ու փառաւորեալ ըլլայ յաւի-
տեանս յաւիտենից ։ Եւ չորս կենդանիները 14
կըսէին՝ Ամէն ։ ու երէցները անոր առջեւը կիյ-
նային՝ և երկրպագութիւն կընէին ։

Գ Լ Ո Ւ Խ Ը ։

Եւ տեսայ՝ որ գառնուկը ան կնիքներուն մէկը 1
բացաւ , ու չորս կենդանիներուն մէկէն որոտու-
մի պէս ձայն մը լսեցի՝ որ կըսէր թէ Կաւգամարի ։
Եւ նայեցայ՝ ու մէկմալ մէկ ճերմակ ձի մը տես- 2
այ ։ և անոր վրայ հեծնողը աղեղ մը ունէր , ու

թագ մը տրվեցաւ անոր . և ան յաղթողը եկաւ որ յաղթէ :

3 Եւ երբոր ան երկրորդ կնիքը բացաւ՝ երկրորդ կենդանիէն լսեցի , որ կըսէր՝ Ելո՛ւգամկոր :
4 Եւ ուրիշ ձի մը ելաւ կարմիր , ու անոր վրայ հեծնողին իշխանո՛ւ-թի՛ւն տրվեցաւ որ երկիրէս խաղաղութիւնը առնէ , որ մէկզմէկ մեռցունեն . ու անոր մէկ մեծ թուր մը տրվեցաւ :

5 Եւ երբոր երրորդ կնիքը բացաւ , երրորդ կենդանիէն լսեցի՝ որ կըսէր թէ Ելո՛ւգամկոր . և տեսայ՝ ու միյմալ մէկ սև ձի մը , և անոր վրայ
6 հեծնողը իր ձեռքը կշռաք մը ունէր : Ու ան չորս կենդանիներուն մէջէն ձայն մը լսեցի . Կապիճ մը ցորենը մէկ դենարի , ու իրեք կապիճ գարին մէկ դենարի . և ձէթին ու գինիին չզնես :

7 Եւ երբոր չորրորդ կնիքը բացաւ՝ չորրորդ կենդանիէն ձայն մը լսեցի , որ կըսէր թէ Ելո՛ւ-
8 գամկոր : Եւ տեսայ միյմալ մէկ դեղին ձի մը . ու անոր վրայ հեծնողը Ո՛ահ անո՛ւն ունէր , և դժոխքը անոր հետէն կերթար . ու անոր իշխանո՛ւթիւն տրվեցաւ աշխարհի չորրորդ մասին վրայ , որ թուրով ու սովով և մահով՝ ու երկրի գազաններով սատկեցունէ :

9 Եւ երբոր հինգերորդ կնիքը բացաւ՝ սեղանին տակը ան ամէն մարդոց հոգիները տեսայ , որ զենված էին Աստուծոյ բանին համար՝ ու անոր
10 վկայութեանը համար՝ որ իրենք ունէին . որոնք մեծ ձայնով կըսէին , Ո՛վ սուրբ ու ճշմարիտ Տէր՝ մինչև երբ չես դատեր , ու մեր արիւնին
11 վրէժը երկրի բնակիչներուէն հաներ : Եւ ճերմակ հագուստներ տրվեցաւ անոնց ու ըսվեցաւ անոնց , որ քիչ մը ատեն հանգչին , մինչև ա-նոնց ծառայակիցները ու անոնց եղբայրները լման ըլլան , որոնք որ իրենց պէս կատարվելու վրայ են :

Եւ տեսայ որ երբ վեցերորդ կնիքը բացաւ՝ 12
մեկ մեծ շարժում մը եղաւ , ու արեւը սեւցաւ՝
այծոտ մազէ լաթի մը պէս , ու լուսինը բոլորովին
արիւնի պէս եղաւ : Եւ երկինքին աստղերը 13
գետինը թափթըփեցան թուզի տերեւի պէս՝ որ
հովէն սաստիկ կըշարժըվի : Եւ երկինքը մա- 14
գաղաթեայ գիրքի պէս կոլըվկէր . ու բոլոր լեռ-
ները և կղզիները իրենց տեղէն շարժեցան :
Եւ երկրի թագաւորները ու իշխանները՝ հա- 15
զարապետները ու մեծամեծները և զօրաւորներ
ու բոլոր ծառաները և բոլոր ազատները այրե-
րուն ու քարերուն խուզնելուն մէջ ինքզինք-
նին պահվռտցուցին . և լեռներուն կըսեին թէ՝ 16
Ա՛յրանիս ինկէք , ու բլուրներուն թէ՝ Ա՛ծ
ծածկեցէք ինձ՝ ու անոր բարկութեան մեծ օրը 17
եկաւ . ու ո՞վ կրնայ անոր առջեւը կենալ :

ԳԼ . Ի :

Եւ անկէ ետև տեսայ չորս հրեշտակներ՝ որ երկ- 1
րի չորս անկիւնը կեցեր էին , ու երկրի չորս
հովերը բռներ էին , որ երկրի վրայ հով չի
փըչէ . ու ոչ ծովի վրայ , ոչ ալ ծառերու վրայ :
Եւ մէկ ուրիշ հրեշտակ մը տեսայ՝ որ արեւելքէն 2
եկաւ , ու Կենդանի Աստուծոյ կնիքը ունէր . և
մեծ ձայնով մը կանչեց ան չորս հրեշտակնե-
րուն , որոնք որ իշխանութիւն տուր էին երկի-
րը ու ծովը ապականելու . Ու կըսէր , Երկրին 3
վնաս մի՛ ընէք , ոչ ծովին , ոչ ծառերուն . դադ-
րեցէք՝ մինչև որ իմ Աստուծոյս ծառաներուն
իրենց ճակատները կնքեմ : Եւ կնքվածներուն 4
համրանքը լսեցի՝ ու էր հարիւր քառասուն չորս
հազար Իսրայէլի որդոցը ցեղէն կնքված :
Յուդայի ցեղէն տասներկու հազար կնքված : 5
Ռուբենի ցեղէն տասներկու հազար կնքված .
Գադի ցեղէն տասներկու հազար կնքված :
Ասերի ցեղէն տասներկու հազար կնքված . 6

Ասեմ աղեմի ցեղէն տասներկու հազար կնքըված.
Ռաանասէի ցեղէն տասներկու հազար կնքըված։
7 Հմաւոնի ցեղէն տասներկու հազար կնքըված.
Գադի ցեղէն տասներկու հազար կնքըված.
Նեփթաղիմի ցեղէն տասներկու հազար կնքըված։
8 Մանասէի ցեղէն տասներկու հազար կնքըված.
Շմէոնի ցեղէն տասներկու հազար կնքըված.
Լեւիի ցեղէն տասներկու հազար կնքըված։
9 Եւ ասկէ ետքը տեսայ՝ և ահա շատ ժողովուրդներ որոնց համրանքը չի կար, բոլոր հեթանոսներէն ու բոլոր ազգերէն և բոլոր լեզուներէն ու բոլոր ժողովուրդներէն, որոնք աթոռին առջևը ու գառնուկին առջևը կեցեր էին՝ վրանին ճերմակ լաթեր ձրգած,
10 և ձեռքերնին արմաւենիներ. մեծ ձայնով կըկանչէին՝ ու կըսէին, Փրկութիւնը մեր Աստուծոյ՝ որ աթոռին վրայ կրնըստի, ու
11 ան գառնուկին։ Եւ բոլոր հրեշտակները աթոռին ու երէցներուն և չորս կենդանիներուն բոլորտիքը կեցեր էին, և երեսնուն վրայ աթոռին առջևը կիյնային՝ ու Աստուծոյ երկրպա-
12 գութիւն կընէին, ըսելով, Ամէն. օրհնութիւն ու փառք և իմաստութիւն ու գոհութիւն՝ և պատիւ ու զօրութիւն և շնորհակալութիւն մեր Տէր Աստուծոյն՝ յաւիտեանս յաւիտենից.
13 Ամէն։ Եւ ան երէցներէն մէկը ինծի ըսաւ, Ասոնք որ ճերմակ լաթեր հագեր են՝ ո՞վ են
14 կամ՝ ուրկից կուգան։ Ես ալ ըսի անոր, Տէր դուն գիտես. ու ըսաւ ինծի, Ասոնք անոնք են՝ որ մեծ նեղութիւններէն կուգան. որ իրենց լաթերը լըւացին՝ ու գառին արիւնովը ճերմկցու-
15 ցին։ Անոր համար Աստուծոյ աթոռին առջևն են, և իրեն կըծառայեն ցորեկ ու գիշեր իր տաճարին մէջը. և աթոռին վրայ նըստողը
16 անոնց մէջը կըբնակի։ Ալ կանօթենան՝ ու ոչ կըծարաւին. և մէկը չի վնասեր անոնց. ոչ արևը՝

ոչ ալ տաքը։ Եւ ան աթոռին մէջը ելլէ 17
գառնուկը անոնք կըհովուէ, ու անոնց կենդանի
ջուրին կենացը աղբիւրը կառաջնորդէ. որովհետև
Աստուած բոլոր արցունքները անոնց երեսէն
սրբեց։

Գ.Լ.Ը։

Եւ երբոր եօթներորդ կնիքը բացաւ՝ լռութիւն 1
եղաւ երկինքը կէս ժամի չափ։

Ու եօթը հրեշտակ տեսայ, որ Աստուծոյ 2
առջևը կեցեր էին. ու անոնց եօթը փող տրվե-
ցաւ։ Եւ ուրիշ հրեշտակ մը եկաւ սեղանին 3
առջևը կայնեցաւ, ու ոսկիէ խնկանոց մը ունէր.
և իրեն շատ խունկ տրվեցաւ, որ բոլոր սրբոց
աղօթքը ոսկեղէն սեղանին վրայ մատուցանէ ա-
թոռին առջևը։ Եւ խունկերուն մուխը սրբոց 4
սուրբերուն աղօթքը հրեշտակներուն ձեռքովը
Աստուծոյ առջևը ելաւ։ Ու հրեշտակը խուն- 5
կին ամանը սեղանին կրակէն լեցուց, և թափեց
անիկա երկրին վրայ, ու եղաւ որոտում և ձայ-
ներ ու կածկլտուք՝ և մեծ շարժում։ Եւ եօ- 6
թը հրեշտակները որ եօթը փողերը ունէին՝
պատրաստեցին ինքզինքնին որ չալեն։

Եւ առջի հրեշտակը փողը չալեց՝ ու եղաւ 7
կարկուտ ու կրակ և խառնըված արիւն, ու
երկրի վրայ ինկաւ, ու երկրի երրորդ մասը է-
րեց, և ծառերուն երրորդ մասը էրեց, ու բոլոր
կանաչ խոտերը էրեց։

Եւ երկրորդ հրեշտակը փողը չալեց, ու որ- 8
պէս թէ մէկ մեծ կրակի բոցով վառած լեռ մը
ծովը ինկաւ, ու ծովին երրորդ մասը արիւն ե-
ղաւ. և լոլացող կենդանիներուն երրորդ մասը 9
սատկեցաւ. և ան որ կենդանի շունչ ունէր՝ ա-
պականեցաւ, ու նաւերուն երրորդ մասը ընկղ-
մեցաւ։

Եւ երրորդ հրեշտակը փողը չալեց, ու երկին- 10

քէն մէկ մեծ աստղ մը ինկաւ վառած ճրագի պէս
լոյրբերած . և ինկաւ գետերուն ու աղբիւրնե-
11 րուն երրորդ մասին վրայ : Եւ ան աստղին ա-
նունը | եղուկիւն էր . ու շատերը մեռան ջու-
րերուն լեղուելնէնէն :
12 Եւ չորրորդ հրեշտակը փողը չխեց , ու
արևին երրորդ մասը ու լուսինին երրորդ
մասը և աստղերուն երրորդ մասը զարնուեցաւ .
ու անոնց երրորդ մասը խաւարեցաւ , և օրվան
երրորդ մասը չէր լուսաւորեր և անանկ ալ գի-
շերվանը :
13 Եւ նայեցայ՝ ու երկինքին մէջը թռչող
հրեշտակի մը ձայն լսեցի , որ մեծ ձայնով կըսէր ,
Ո՛ւ՜յ վա՛յ վա՛յ՝ երկրի վրայ բնակողներուն՝ երբոր
մէկալ իրեք փողերուն ձայնը կըլլայ , որ հրեշ-
տակները պիտի չխեն :

ԺԱ. ԺԹ։

1 Եւ հինգերորդ հրեշտակը փողը չխեց . ու տե-
սայ՝ որ երկինքէն աստղ մը ինկաւ , և անդուն-
2 դին գուբրին բանալիքը անոր տրվեցաւ . ու ան
գուբրէն մուխ կելլար մեծ հնոցի մը մուխի պէս .
ու խաւարեցաւ արևը ու օդը :
3 Եւ ան գուբրէն մարախ կելլար երկրի վրայ . ու
անոնց զօրութիւն տրվեցաւ կարիճի խայթոցին
4 զօրութեանը պէս . և անոնց ըսվեցաւ՝ որ չի
վնասեն երկրի խոտին , ոչ ալ մէկ ծառի մը .
հապա միայն երկրաւոր մարդուն , որ իրենց ճա-
5 կատին վրայ կնիք չունին : Եւ հրաման տրվե-
ցաւ անոնց , որ չըսպաննեն անոնք : հապա ա-
նոնք չարչարեն հինգ ամիս , ու անոնց չարչա-
րանքը կարիճի խայթոցներու պէս՝ որ մարդը
6 կըզարնէ : Եւ ան օրերը մարդիկները մահը
պիտի փընտրեն՝ ու չի պիտի գտնան . և պիտի
ուզեն մեռնիլ , ու մահը անոնցմէ պիտի փախչի :
7 Եւ ան մարախին նմանութիւնը պատերազմի

պատրաստված ձիին նմանութեանը պէս, ու
անոնց գլուխներուն վրայ թագի պէս ոսկիի
նման, և անոնց երեսները մարդու երեսի պէս։ 8
ու անոնց մազերը կընկան մազերու պէս, ու ա-
նոնց ակռաները առիւծի ակռայի պէս էին։ Եւ 9
զրահներ ունէին երկաթէ զրահներու պէս։ ու
անոնց թևերուն ձայնը շատ ձիերուն քաշած
կառքին ձայնին պէս, որ պատերազմի կը վազեն։
Եւ կարճի նման պոչեր ունէին, ու պոչերնուն 10
վրայ խայթոց։ որ իշխանութիւն ունէին մար-
դիկները չորս ամիս։ Եւ իրենց 11
վրայ թագաւոր ունէին դժոխքին հրեշտակը։ ու
անոր անունը Եբրայեցերէն Աբադոն։ որ Յոյն
լեզուով կըսվի Կորուստ։ Մէկ վայը ան- 12
ցաւ։ ու երկու վայեր ալ պիտի գան։

Եւ վեցերորդ հրեշտակը փողը հնչեց։ ու 13
ձայն մը լսեցի չորս կենդանիներէն որ Աստուծոյ
սեղանին առջև էին։ որ կըսէր վեցերորդ հրեշ- 14
տակին որ փող ունէր։ քակէ՛ ան Եփրատ գե-
տին վրայ կապված չորս հրեշտակները։ Եւ 15
ան չորս հրեշտակները քակվեցան, որ պատրաս-
տված էին ժամի՝ ու օրվան՝ և ամիսի՝ ու տարիի,
որ մարդոց երրորդ մասը մեռցունեն։ Եւ ա- 16
նոնց ձիաւոր զօրքերուն համրանքը բիւրք բիւ-
րուց ու հազարք հազարաց էր, ու լսեցի անոնց
համրանքը։ Եւ տեսիլքի մէջ ձիեր տեսայ, ու 17
անոնց վրայ հեծնողներ։ որ ունէին հրեղէն ու յա-
կինթի նման զրահներ ծծումբով վառված։ և ան
ձիերուն գլուխները առիւծներու գլուխներու
պէս։ ու անոնց բերնէն կրակ կելլար, ու մուխ և
ծծումբ։ Եւ աս պատուհասներէն մարդոց եր- 18
րորդ մասը մեռաւ ան կրակէն ու մուխէն ու
ծծումբէն, որ անոնց բերնէն կելլար։ Քանզի 19
որ իշխանութիւնը բերաններուն մէջն է, ու
իրենց պոչերուն վրայ։ և անոնց պոչերը օձի
նման էին, ու գլուխներ ունէին որ անով ա-

20 նիրաւները կըսաստկըցունէին : Եւ ուրիշ մար-
գիկները որ աս պատուհասներէն չի մեռան , չա-
պաշխարեցին՝ ու իրենց ձեռքի գործքերէն ետ
չի կեցան , դեւերուն՝ ու ոսկիէ և արծաթէ ու
պղինձէ՝ և քարէ ու փայտէ շինված կուռքերէն
երկիրպագութիւն ընելէն . որ ոչ կրնան տես-
21 նար՝ ոչ ալ լսեր , ու ոչ քալեր . և չապաշխա-
րեցին իրենց ըրած մարդասպանութենէն ու
նախըպոհան դեղեր տալէն , և պոռնըկութենէն՝
ու գողութենէն :

Գ. Ժ.

1 Եւ տեսայ ուրիշ զօրաւոր հրեշտակ մը՝ որ եր-
կինքէն կիջնար , ու վրան ամպ հագած էր , և իր
գլուխը ծիրանի գօտի ուներ . ու իր երեսը
արևի պես . և իր ոտքը կրակի սիւնի պես .
2 և իր ձեռքը մէկ պզտիկ գիրք մը ուներ
բաց . ու իր աջ ոտքը ծովին վրայ դրաւ .
3 և ձախը՝ երկրի վրայ . և մեծ ձայնով
կանչեց՝ առիւծի մը պես պոռաց . ու երբոր
կանչեց՝ ան եօթը որոտմունքն ալ իրենց
4 ձայնովը խօսեցան : Եւ երբոր ան եօթը որոտ-
մունքները խօսեցան՝ կուզէի գրել . ու երկինքէն
ձայն մը լսեցի որ կըսէր , Կնքէ՛ ան բաները որ
եօթը որոտմունքը խօսեցան , ու մի՛ գրեր :
5 Եւ ան հրեշտակը որ տեսայ՝ որ իր ոտքը ծովին
վրայ դրաւ , ու մէկալը ցամաքին վրայ , իր աջ
6 ձեռքը երկինքը վերցուց . և երդում՝ ըրաւ
Յաւիտենական Կենդանիին վրայ , որ ստեղ-
ծեց երկինքը՝ ու անոր մէջինները , ու երկիրը
և անոր մէջիններըը , թէ ալ ուրիշ ժամանակ
7 չի կայ . հապա եօթներորդ հրեշտակին ձայնին
օրերը՝ երբոր փողը չալէ , Աստուծոյ խորհուրդը
պիտի կատարվի , որ իր ծառաներէն մարգարէ-
ներէն քարոզվեցաւ :
8 Եւ ան ձայնը որ երկինքէն լսեցի՝ նորէն խօ-

սեցաւ ինծի՝ ու ըսաւ , Կնա՛ առ ան պզտիկ գիր-
քը՝ որ հրեշտակը իր ձեռքը բաց ունի , և կեցեր
է ծովին ու ցամաքին վրայ ։ Ես ալ հրեշտա- 9
կին գացի ։ ուզեցի անկէց՝ ու ըսաւ ինծի , Ա՛ռ
ասիկա ու կե՛րատ , և քու փորդ մէջ կրկեղծե-
նայ , բայց բերնիդ մէջ մեղրի պէս անուշ կըե-
լայ ։ Ես ան բաց պզտիկ գիրքը հրեշտակէն ա- 10
ռի՛ ու կրկեցի անիկա ։ և իմ բերնիս մէջը մեղրի
պէս էր ։ և երբոր կերայ՝ փորիս մէջը կեղ եղաւ ։
Ու ըսաւ ինծի ։ Պէտք է որ դուն նորէն մարգա- 11
բեւութիւն ընես ժողովուրդներուն և հեթանոս-
ներուն ու լեզուներուն և երկրի թագաւորնե-
րուն առջեւ ։

ԺԱ. ՅԱՒ ։

Եւ ինծի մէկ եղէգ մը տրվեցաւ գաւազանի պէս , 1
և հրեշտակը կեցեր էր՝ ու կըսէր ինծի ։ Ե՛լ ու
չափէ՛ Աստուծոյ տաճարը ու սեղանը՝ ու անոր
մէջը երկրպագուներուն ընողները ։ Ու գաւի- 2
թը՝ որ տաճարին դուրսն է , անիկա ձգէ՛ և մի՛
չափեր ։ ինչու որ անիկա հեթանոսներուն
տրված է ։ ու սուրբ քաղաքը պիտի կոխկրտեն
քառասուներկու ամիս ։ Ես իմ երկու վկանե- 3
րուս զգեստներ պիտի տամ՝ , և չորեքտա-
հարիւր ու վաթսուն օր մարգարեութիւն ընեն՝
վրանին քուրձ հագած ։ Աստոնք ան երկու ձի- 4
թենիները ու երկու ճրագները են , որ երկրի
վրայ Աստուծոյ առջևը կըկենան ։ Եւ անոնք 5
որ կուզեն անոնց վնաս ընել , անոնց բերնէն
կրակ պիտի ելլայ՝ ու անոնց թշնամիները պիտի
ուտէ ։ և որոնք որ կուզեն անոնց վատ բան մը
ընել՝ սասանկ պիտի սատկին ։ Աստոնք իշխանու- 6
թիւն ունին երկինքը գոցելու՝ որ իրենց մարգա-
բեւութեան օրերը անձրև չի գայ , ու ջուրերուն
վրայ իշխանութիւն ունին՝ անոնք արիւն դար-
ձնելու , և ամէն կերպ պատուհասներով եր-

7 կիրը զարնելու՝ քանի անգամ՝ որ ուզեն : Եւ
երբոր իրենց վկայութեան բոլոր օրերը կատա-
րեն՝ անատենը ան գազանը՝ որ անդունդէն կել-
լայ , անոնց հետ պատերազմ՝ պիտի ընէ՝ և ա-
նոնց պիտի յաղթէ , ու պիտի սպաննէ անոնք :
8 Եւ անոնց մեռած մարմինը ինկած պիտի կենայ
իրենց մեծ քաղաքին փողոցներուն մէջը , որ հո-
գևորապէս կըսվի՝ Սոդոմ՝ ու Եգիպտոս , ուր որ
9 իրենց Տէրն ալ խաչվեցաւ : Ու պիտի տեսնան
զանոնք բոլոր ցեղերը ու ժողովուրդները՝ և
բոլոր լեզուները ու հեթանոսները , ինչու որ
անոնց մեռած մարմինը իրեք օր ու կէս ինկած
պիտի կենայ . ու թող չի պիտի տան անոնց
10 ոսկորները գերեզմաններու մէջ թաղելու : Եւ
անոնք որ երկրի վրայ կըբնակին՝ ուրախ պիտի
ըլլան ու խնդան անոնց վրայ , մինչև որ մեկը-
մեկու ընծաներ ու պատարագներ պիտի խրկեն .
ինչու որ աս երկու մարգարէները երկրի բնա-
11 կիչները պիտի չարչարեն : Եւ իրեք ու կէս օ-
րէն ետև Աստուծմէ կենդանի հոգի պիտի մտնայ
անոնց մէջ . ու պիտի ելլան կայնին իրենց ոտքին
վրայ . և մեծ ահ ու վախ ինկաւ ան ամենուն
12 վրայ որ անոնք մեռցուցին : Եւ մեծ ձայն մը
լսեցի՝ որ կըսէր անոնց . Ա՛ եր ելէք հոս եկէք .
ու վերցան ամպերով երկինքը ելան . և իրենց
13 թշնամիները զանոնք տեսան : Եւ ան ժամին
մեծ շարժում մը եղաւ , ու քաղաքին տասնե-
րորդ մասը կործանեցաւ , և ան շարժումէն եօթը
հազար մարդիկ մեռան . ու անկէց ետքը ամենուն
վրայ մեծ վախ ինկաւ , ու փառք կուտային երկ-
14 նաւոր Աստուծոյ : Ահա երկրորդ վայը անցաւ ,
ու երրորդ վայը շուտով պիտի գայ :
15 Եւ երբոր եօթներորդ հրեշտակը կըշալէր
փողը , երկինքը ձայն մը եղաւ որ կըսէր . Աշ-
խարհին թագաւորութիւնը մեր Տէրոջը ու իր
Քրիստոսինը եղաւ . և ինքը պիտի թա-

գաւորէ ամէնուն վրայ յաւիտեանս յաւիտենից։
Եւ ան քսանըչորս երէցները որ իրենց աթոռնե- 16
րուն վրայ կընստէին Աստուծոյ առջևը՝ իրենց
երեսին վրայ կիյնային, և Տէր Աստուծոյ երկրը-
պագութիւն կընէին՝ ու կըսէին. Կըգոհանանք 17
քեզմէ Ամենակալ Տէր Աստուած՝ որ էր, ու ես,
ինչու որ քու մեծ զօրութիւնդ առիր ու թա-
գաւորեցիր։ Եւ հեթանոսները բարկացան. 18
ու քու բարկութիւնդ եկաւ՝ և մեռելներուն ժա-
մանակը, որ դատվին, ու վարձք տաս քու ծա-
ռաներուդ մարգարէներուն՝ ու քուկին անունէդ
վախցող սուրբերուն՝ պզտիկին ու մեծին, և
երկրի ապականիչները ապականես։
Եւ երկինքին մէջի Աստուծոյ տաճարը բաց- 19
վեցաւ, ու Աստուծոյ տապանակը իր տաճարին
մէջը երևցաւ. և եղան կածկլտուքներ՝ ու ձայ-
ներ՝ և որոտումներ, ու շարժում՝ և խոշոր
կարկուտ։

ԻԲ. ԺԲ։

Ու երկինքը մեծ նշան մը երևցաւ. մէկ կնիկ 1
մը արևը իր վրայովը առած, ու լուսինը իր
ոտքին տակը. և իր գլխուն վրայ տասներկու
աստղէ թագ մը. և ծոցվոր էր, ու ցաւ քաշելու 2
ատենը կըպօռար, և շատ նեղութիւններով
ծնանելու մօտ էր։
Ու երկինքը ուրիշ նշան մը երևցաւ, և ահա 3
մէկ մեծ հրեղէն վիշապ մը. որ եօթը գլուխ ու
տասը եղջիւր ունէր. և անոր գլուխներուն
վրայ եօթը թագ։ Եւ անոր պոչը երկինքի 4
աստղերուն երրորդ մասը կըքաշէր, ու անոնք
երկրի վրայ ձգեց. և վիշապը կեցեր էր ան կըն-
կանը առջևը՝ որ ծնանելու վրայ էր. որ երբ ան
կնիկը իր որդին ծնանի, վիշապը կըլլէ անիկա։
Ու կնիկը մանչ զաւակ մը ծնաւ, որ երկաթէ 5
գաւազանով պիտի հովուէր բոլոր աղգերը. և

անոր զաւակը յափշտակեցաւ Աստուծոյ քով ,
6 ու անոր աթոռին քով : Եւ կինկը անապատը
փախաւ . ուր որ անոր տեղ պատրաստուած էր
Աստուծմէ , որ անտեղ կերակրուին հազար եր-
կու հարիւր ու վաթսուն օր :
7 Եւ երկինքը պատերազմ մը եղաւ . Միքա-
էլը ու իր հրեշտակները ան վիշապին հետ
կըկռուէին . վիշապն ալ իր զօրքերովը կը
8 պատերազմէր , ու չի կրցան դէմ կենալ . և երբ
9 կինկը տեղ չի գտնըվեցաւ անոնց : Եւ ինկաւ
մեծ վիշապը ան առվի օձը որ Սկեզբնեւղ ու
Սատանայ կըսվի , որ բոլոր աշխարհ մոլորցուց .
ու իր հրեշտակները երեն հետ ալ ինկան :
10 Եւ մեծ ձայն մը լսեցի երկինքէն որ կըսէր .
Հիմայ եղաւ մեր Աստուծոյ զօրութիւնը ու
փրկութիւնը և թագաւորութիւնը , ու անոր
Օծեալին իշխանութիւնը . ինչու որ մեր եղ-
բայրներուն դէմ չար խօսողը ինկաւ , որ անոնց
վայ չարախօսութիւն կընէր Աստուծոյ առջեւ
11 ցորեկ ու գիշեր : Եւ անոնք անոր յաղթեցին
գառին արիւնովը , ու անոր վկայութեանը խօս-
քով . և ան վիշապին չի յաձնեցան մինչև ’ի
12 մահ : Ասոր համար ուրախ թող ըլլայ երկինք՝
ու անոր մէջը բնակողները . վայ երկիրին ու
ծովուն՝ որ բանսարկուն ձեզի ինկաւ , որ շատ
բարկութիւն ունի , ինչու որ քիչ ժամանակ պիտի կենայ :
13 Ու վիշապը երբոր տեսաւ թէ երկրի վրայ
ինկաւ , ան մանչ զաւակ ծնող կնկանը եաւէն
14 ինկաւ : Եւ ան կնկանը մեծ արծիւի երկու
թեւեր տրվեցաւ , որ անապատ իր տեղը թռչի .
ուր որ կրկերակրըվէր ժամանակ ու ժամանակ
15 ներ՝ ու կէս ժամանակ՝ օձին երեսէն : Եւ օձը
իր բերնէն ջուր վազցուց կնկանը եաւէն , որ
16 անիկա ընկրծէ : Եւ երկիրը ան կնկանը օգ-
նեց , ու երկիրը իր բերանը բացաւ և կըլլեց

ան ջուրը , որ վիշապը իր բերնէն վազցուց ։
Ու վիշապը խիստ բարկացաւ կնկանը վրայ , և 17
գնաց պատերազմելու անոր ուրիշ զաւկըներուն
հետ , որոնք որ Աստուծոյ պատուիրանքները
կըպահէին , ու Յիսուսի վկայութիւնը ունէին ։
Եւ կայնեցայ ծովին աւազին վրայ , Եւ տե- 1
սայ որ ծովէն գազան մը կելլար , և ունէր եօթը
գլուխ ու տասը եղջիւր . և անոր եղջիւրներուն
վրայ տասը սաղաւարտ , ու անոր գլխուն վրայ
հայհոյութեան անուն ։ Եւ ան գազանը որ 2
տեսայ՝ ինձի նման էր , ու իր ոտքերը արջու
պէս , և իր բերանը առիւծի պէս . ու վիշապը իր
զօրութիւնը և իր աթոռը ու մեծ իշխանութիւնը
անոր տըւաւ ։ Եւ անոր գլուխներուն մէկը 3
մեռնելու չափ վիրաւորված էր . ու իր մեռնելու
խոցը կըռընտնարկոր . և բոլոր երկիր ան գազա-
նին վրայ զարմացաւ , որ վիշապը իր թագաւո-
րութիւնը անոր տըւաւ ։ Եւ երկիրպագու- 4
թիւն ըրին վիշապին՝ որ գազանին իշխանու-
թիւն տըւաւ , ու կըսէին . Ո՞վ է աս գազանին
նման . կամ ո՞վ կրնայ անոր հետը պատերազմ
ընել ։ Եւ անոր բերան տըրվեցաւ մեծ բաներ 5
խօսելու ու հայհոյութիւն . և քառսուն երկու
ամիս իշխանութիւն տրվեցաւ անոր ։ Ու իր 6
բերանը հայհոյութեամբ Աստուծոյ դէմ բացաւ ,
և հայհոյեց անոր անունը ու անոր խորանը՝ և
երկնային բնակութիւնը ։ Եւ իշխանութիւն 7
տրվեցաւ իրեն սուրբերուն հետ պատերազմ ը-
նելու ու անոնց յաղթելու . և իշխանութիւն
տրվեցաւ իրեն բոլոր ազգերուն ու լեզուներուն
և ժողովուրդներուն վրայ . Ու անոր երկիրպա- 8
գութիւն ընեն երկրի երեսը բոլոր բնակողները .
որ իրենց անունները աշխարհիս սկիզբէն հետէ
մորթըված գառնուկին կենաց գիրքին մէջը
գրված չեն ։ Որոնք որ լսելու ականջ ունին՝ 9
թող լսեն ։ Ինչու որ կան ոմանք որ գերու- 10

թեան պիտի քշվին . ոմանք ալ կան՝ որ սուրով պիտի մեռնին . ոմանք ալ կան՝ որ ինքզինքնին պիտի սպաննեն . ասիկա է սուրբերուն համբերութիւնը ու հաւատքը :

11 Եւ մէկ ուրիշ գազան մը տեսայ՝ որ երկրէն կելլար , ու գառի նման երկու եղջիւր ունէր ,
12 ու կը խօսէր վիշապին պէս : Եւ առջի գազանին բոլոր իշխանութիւնը անոր առջևը կը գործէր , ու երկիր և բոլոր անոր բնակիչները կը ներ որ երկիրպագութիւն ընեն առջի գազանին մինչև որ անոր մահուան խոցը առողջանայ :
13 Եւ շատ նշաններ կընէր , ու երկինքէն կրակ կի-
14 ջեցունէր երկրի վրայ մարդոց առջևը , Եւ երկրի վրայ բնակողները կը մոլորցունէր ան նշաններովը , որ իր ձեռքը տրված էր գազանին առջևը ընելու . երկրի բնակողները ըսին իրեն՝ Հի-
նէ՛ ան գազանին պատկերը , որ սուրին խոցէն
15 ողջ մնաց : Ու իշխանութիւն տրվեցաւ անոր , որ ան գազանին պատկերին հոգի տայ . որ խօսի պատկերը , ու երկրի բոլոր բնակիչները անոր երկիրպագութիւն ընեն . և ով որ ան գազանին պատկերին երկիրպագութիւն չընէր նէ՝ ա-
16 նիկա մեռցունէ : Եւ բոլոր պզտիկները ու մեծերը և հարուստները և աղատները ու աղքատները ու ծառաները անոնք պիտի ընէ , որ անոնց նշան մը տայ աջ ձեռքին մէջ , ու անոնց ճակա-
17 տին . և որ մէկը չի կրնայ գնել ու ծախել՝ թէ որ չունենայ գիրին նշանը՝ ու գազանին անունը ,
18 և անոր անունին համրանքը : Ասա տեղն է իմաստութիւնը . ով որ միտք ունի՝ թող համրէ ան գազանին թիւը . մարդու մը համրանք է , ու անոր անունին համրանքը ասիկա է . Վեց հարիւր վաթսուն ու վեց :

ԳԼ. ԺԴ։

1 Եւ տեսայ՝ և ահա գառնուկը կեցեր էր Սիոն
լեռանը վրայ. ու անոր հետը հարիւր քառասուն
ու չորս հազարը, որոնք ունէին անոր անունը ու
անոր Հօրը անունը իրենց ճակատներուն վրայ
2 գրված։ Եւ երկինքէն ձայն մը լսեցի՝ շատ ջու-
րերու ձայնի պէս, ու մեծ որոտումի ձայն մը. ու
լսեցի քնար չալողներու ձայնի պէս՝ որ կըզարնէ-
3 ին իրենց քնարները. և նոր երգեր կերգէին ա-
թոռին առջևը՝ ու չորս կենդանիներուն առջևը՝
և երէցներուն առջևը. ու մէկը չէր կրնար ա-
նոնց երգերը գիտնալ, միայն թէ ան հարիւր
քառասունըչորս հազարը, որոնք որ երկիրէն խա-
4 լըսեցան։ Ասոնք անոնք են՝ որ կնիկներու հետ
չէ խառնակեցան, ու կոյս են. ասոնք գառնու-
կին ետևէն կերթան ուր որ ան երթայ. ասոնք
մարդոց մէջէն ընտրըվեցան Աստուծոյ ու Գառին
5 առջևը ներկայ. և անոնց բերանը սուտ չի
գտնըվեցաւ. ինչու որ անբիծ են։

6 Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ՝ որ կըթռչէր
երկինքին մէջ. և ունէր յաւիտենական աւետի-
սը՝ քարոզելու բոլոր ազգերուն ու լեզուներուն
7 որ երկրի վրայ կըբնակին. և մեծ ձայնով կըսէր.
Աստուծմէ վախցէք՝ ու փառք տրվէք անոր. ին-
չու որ անոր դատաստանին ժամը եկաւ. և եր-
կիրպագուեցէք անոր որ ստեղծեց երկին-
քը ու երկիրը և ծովը՝ ու ջուրերուն աղբիւրնե-
րը։

8 Եւ ուրիշ երկրորդ հրեշտակ մը կուգար ա-
նոր ետևէն՝ ու կըսէր. Ինկաւ ինկաւ ան մեծ
Բաբելոնը՝ որ բոլոր հեթանոսները արբեցուց
կատաղի իր պոռնըկութեանը արբեցնող գի-
նիէն։ Եւ ուրիշ երրորդ հրեշտակ մը անոնց 9
ետևէն կուգար՝ ու մեծ ձայնով կըսէր. Ո՛վ որ
գազանին ու անոր պատկերին երկրպագու-

թիւն ըրաւ , կամ՝ թէ անոր նշանին գրոշմը իր ճակատին վրայ կամ՝ իր աջ ձեռքին վրայ առաւ ,
10 անիկա Աստուծոյ բարկութեան գինիէն պիտի խմէ՝ որ առանց խառնուկի լեցուցած է բարկութեան գաւաթին մէջը . և կրակով ու ծծումբով պիտի տանջուի Աստուծոյ ու Գառնին առջեւը :
11 Եւ անոնց մուխը պիտի ելլայ յաւիտեանս յաւիտեններից . և ցորեկ ու գիշեր չունենան հանգստութիւն անոնք որ կը պաշտեն գազանին ու անոր պատկերին , ու եթէ մէկը ընդունի անոր անունին նշանը :
12 Ահա հոս է համբերութիւնը սրբերուն որ կը պահեն պատուիրանները Յիսուսի եւ հաւատքը Յիսուսի :
13 Եւ լսեցի ձայն մը երկինքէն որ կ՚ըսէր ինծի , Գրէ՛ . երանելի են մեռելները որ այսուհետեւ կը մեռնին Տէրոջմով : Այո՛ , կ՚ըսէ Հոգին , որպէս զի հանգչին իրենց աշխատութիւններէն . որովհետեւ իրենց գործերը կ՚երթան անոնց հետ :
14 Եւ տեսայ՝ և ահա սպիտակ ամպ մը , ու ամպին վրայ նստեր էր մէկը որ նման էր Որդի մարդոյ . անոր գլխուն վրայ ոսկի թագ մը ունէր , ու իր ձեռքը մէկ սուր մանգաղ մը :
15 Եւ ուրիշ հրեշտակ մը ելաւ տաճարէն , մեծ ձայնով կը կանչէր ամպին վրայ նստողին՝ ըսելով . Ձգէ՛ քու մանգաղդ ու հնձէ՛ , որովհետեւ հունձքի ժամանակը եկաւ , ու երկրի հունձքը հասած է :
16 Եւ ան որ ամպին վրայ նստեր էր իր մանգաղը գետինը ձգեց , ու երկրի բոլոր բնակիչները կը հնձուէր :
17 Եւ երկինքին մէջի տաճարէն ուրիշ հրեշտակ մը ելաւ , ու անիկա ալ սուր մանգաղ մը ունէր :
18 Եւ ուրիշ հրեշտակ մը ելաւ սեղանէն՝ որ կրակի վրայ իշխանութիւն ունէր , ու մեծ ձայնով կանչեց ան հրեշտակին՝ որ սուր մանգաղը ունէր՝ ըսելով . Ձգէ՛ քու սուր մանգաղդ ու հաւաքէ՛ երկրի որթատունկը , որովհետեւ անոր խաղողները հասած են :

գաղը ունէր, ու ըսաւ. Երկրի այգիէն ողկոյզնե-
րը կրճէ՛. ինչու որ ատոր մէջի խաղողը հասած
է։ Եւ ան հրեշտակը իր մանգաղը գետինը 19
երկնցուց, ու անոր խաղողը կրկրճէր, ու Աստու-
ծոյ մեծ հնձանին մէջ կրձգէր։ Եւ ան հնձա- 20
նը քաղաքին դուրսը կոխվեցաւ. ու ան հնձանէն
արիւն կելլար մինչև ձիին սանձը. և անոր եր-
կայնութիւնը հազար վեց հարիւր ասպա-
րէզ։

ԿԱ. ԺԵ։

Եւ ուրիշ մեծ ու զարմանալի նշան մը տեսայ 1
երկինքը. եօթը հրեշտակներ՝ որոնք եօթը վեր-
ջին պատուհասները ունէին. որովհետև անոնց-
մով կրկատարվէր Աստուծոյ բարկութիւնը։
Ու տեսայ ապակեղէն ծովի պէս բան մը կրակով 2
խառնած. և անոնք որ յաղթեցին գազանին՝ ու
անոր անունին թիւին՝ և անոր պատկերին՝ ու ա-
նոր նշանին, անոնք ան ապակեղէն ծովին վրայ
կեցեր էին, ու Աստուծոյ քնարը ունէին. և 3
Մովսէսին Աստուծոյ ծառային երգը կեր-
գէին, ու ան գառին երգը՝ ըսելով թէ, Տէր
Աստուած Ամենակալ՝ քու գործքերդ շատ մեծ
ու զարմանալի են, քու ճանապարհներդ ար-
դար ու ճշմարիտ են՝ ով ազգերուն ամէն
ազգերուն. և ով չի վախնար, ու քու սուրբ 4
անունդ փառաւորեր. ինչու որ դուն միայն
սուրբ ես՝ և երկիրպագութիւն ընդունելու ար-
ժանի. որ բոլոր Հեթանոսները պիտի գան՝ ու
քու առջիդ երկիրպագութիւն պիտի ընեն ով
Տէր, երբոր քու արդարութիւնդ յայտնվի։
Եւ ասկէ ետև տեսայ՝ ու բացվեցաւ վկայու- 5
թեան խորանին տաճարը, որ երկինքն էր. և 6
ելան ան եօթը հրեշտակները՝ որ եօթը պատու-
հասները ունէին, ու տաճարին մէջը մաքուր ու
պայծառ կտաւներ հագեր էին. և իրենց ծիծե-

7 րուն վրայովը ոսկեղէն գօտի կապած : Եւ ան
ջորս կենդանիներէն եօթը հրեշտակներուն եօ-
թը սկաւառակ տրվեցաւ Աստուծոյ բարկու-
թիւնովը լեցուն , որ կենդանի է յաւիտեանս
8 յաւիտենից : Եւ տաճարը Աստուծոյ փառքին
ու անոր զօրութենեանը մուխովը լեցվեցաւ . ու մէ-
կը չի կրնար ան տաճարը մտնալ՝ մինչև որ կա-
տարվին եօթը պատուհասները ան եօթը հրեշ-
տակներէն :

ԳԼ. ԺՕ.

1 Եւ տաճարէն մեծ ձայն մը լսեցի՝ որ ան եօթը
հրեշտակներուն կըսէր . Գացէք ատ Աս-
տուծոյ բարկութենեանը եօթը սկաւառակները
երկրի վրայ թափեցէք :
2 Ու առջի հրեշտակը գնաց , և իր սկաւառակը
երկրի վրայ թափեց . ու չարաչար պատուհաս ե-
ղաւ մարդոց վրայ , որոնք գազանին նշանը ու-
նէին՝ ու անոր պատկերին երկիրպագութիւն ը-
րին :
3 Եւ երկրորդ հրեշտակը իր սկաւառակը ծո-
վին վրայ թափեց , ու ջուրերը մեռած Տղուս-
արիւն դարձան , ու ծովին մէջի բոլոր շնչաւոր
կենդանիները սատկեցան :
4 Եւ երրորդ հրեշտակը իր սկաւառակը գետե-
րուն ու ջուրերուն աղբիւրներուն վրայ թափեց ,
5 և անոնք արիւն դարձան : Ու ան հրեշտակէն
լսեցի՝ որ կըսէր , Արդար է՝ ան որ է՝ ու էր , և
սուրբ է իր գործքերուն մէջ , որ ասանկ դա-
6 տաստան ըրաւ . ինչու որ սրբասրիշները սուր-
բերուն արիւնը ու մարգարէներուն արիւնը
թափեցին . անոր համար զանոնք արժանւոյն
7 անոնց արիւն խմել տըւաւ : Եւ ան սեղա-
նէն լսեցի՝ որ կըսէր , Այո՛ Ամենակալ Տէր
Աստուած , քու դատաստաններդ արդար ու
ճշմարիտ են :

Եւ չորրորդ հրեշտակը իր սկաւառակէն արե- 8
ւին վրայ թափեց ։ Ու անոր պօռնկեցաւ տրվեցաւ 9
որ խորշակահար ընէ մարդիկները կրակով . և
սաստիկ տաքով տաքցան մարդիկ , ու հայհոյե-
ցին Աստուծոյ , որ աս պատուհասներուն վրայ
ինքը իշխանութիւն ունի . ու չապաշխարեցին
Աստուծոյ փառքին համար ։

Եւ հինգերորդ հրեշտակը իր սկաւառակէն 10
գազանին աթոռին վրայ թափեց , ու անոր թա-
գաւորութիւնը խաւարեցաւ . և ցաւին նեղու-
թենէն լեզուներնին կրծամէին . ու երկնից 11
Աստուծոյն հայհոյեցին իրենց ցաւէն՝ և գառն
նեղութենէն , ու իրենց գործքերէն չապաշխա-
րեցին ։

Եւ վեցերորդ հրեշտակը իր սկաւառակէն մեծ 12
Եփրատ գետին վրայ թափեց , ու անոր ջուր-
րը ցամքեցան , որ արևելքին թագաւորին ճամ-
բան պատրաստըվի ։ Եւ տեսայ որ վիշապին 13
բերնէն ու գազանին բերնէն՝ և սուտ մարգա-
րէին բերնէն իրեք պիղծ ոգիներ կելլային գոր-
տերու նման ։ Ինչու որ անոնք դիւական ոգի- 14
ներ էին՝ որ նշաններ կընէին , ու բոլոր երկրի
թագաւորներուն կերթային՝ անոնք պատերազ-
մի ժողվելու համար Ամենակալ Տէրոջը մեծ օրը .
վասն զի Տէրը ասանկ ըսաւ ։ Ահա գողի պես 15
կուգամ . երանէկ անոնց որ արթուն են , ու ի-
րենց լաթերնին կըպահեն , որ մերկ չի պըտըտին ,
ու իրենց ամօթը երևի ։ Եւ անոնք մէկ տեղ 16
մը պիտի ժողվեմ , որ Եբրայեցերէն Արմագե-
դոն կըսվի ։

Ու եօթներորդ հրեշտակը իր սկաւառակէն 17
օդին վրայ թափեց . և երկինքէն ու ան աթոռէն
մեծ ձայն մը ելաւ՝ ըսելով , Եղաւ ։ Եւ կած- 18
կըլտուքներ ու ձայներ և որոտումներ եղան . ու
մեծ շարժ մը եղաւ՝ անանկ որ սկիզբէն հետէ
քանի որ մարդը երկրի վրայ եղաւ , անանկ մեծ

19 շարժում եղած չէր: Եւ մեծ քաղաքը իրեք
մաս եղաւ, ու ազգերուն քաղաքները կործանե-
ցան, և մեծ Բաբելոնը Աստուծոյ առջևը յիշ-
վեցաւ, որ իր սաստիկ բարկութեանը գինիին
20 գաւաթը անոր տայ: Եւ բոլոր կղզիները փա-
21 խան ու լեռները բնաջինջ եղան: Եւ խոշոր
կարկուտ մէկ տաղանդի մը կշռադով երկինքէն
մարդոց վրայ կիջնար. ու մարդիկ հայհոյեցին
Աստուծոյ որ երկինքն է՝ ան կարկուտին պա-
տուհասին համար. ինչու որ մեծ ու սաստիկ էր
ան պատուհասը:

ԻԸ. ԻԹ:

1 Եւ եօթը հրեշտակներէն՝ որոնք եօթը սկաւա-
ռակները ունէին, մէկը եկաւ. խօսեցաւ ինծի
հետ՝ ու ըսաւ, Ելո՛ եկո՛ ու քեզի ցուցընեմ
ան մեծ պոռնիկին դատաստանը, որ շատ ջուրե-
2 րուն վրայ կընստի. որուն հետը երկրի թա-
գաւորները պոռնկեցան, ու երկրի բնակիչնե-
րը անոր պոռնկութեան արբեցուցող գինիէն
3 խմեցին: Եւ ինք առաւ անապատը տարաւ Հո-
գիով. ու տեսայ մէկ կնիկ մը որ կարմիր գա-
զանի մը վրայ նստեր էր. և անիկա լեցուն էր
հայհոյութեան անունով. և գազանը որ տեսայ՝
4 եօթը գլուխ ունէր ու տասը եղջիւր: Եւ ան
կնիկը ծիրանիներ ու կարմիրներ հագեր էր. և
զարդարված էր ոսկիով ու մարգարիտով և
պատուական քարերով, իր ձեռքը մէկ ոսկիէ
գաւաթ մը բռնած, որ գարշելի ու պիղծ պոռ-
5 նկութիւնով լեցուն էր. և իր ճակատը ա-
նուն գրված էր՝ Խորհուրդ. Մեծ Բաբելոն՝
պոռնիկներուն ու երկրի գարշելիներուն մայրը:
6 Եւ տեսայ ան կնիկը որ սուրբերուն արիւնովը
ու բոլոր վկաներուն արիւնովը գինովցած էր.
և երբոր տեսայ անիկա՝ մեծ զարմանքով զար-
7 մացայ: Եւ ան հրեշտակը ինծի ըսաւ. Ինչու

զարմացար, ես քեզի պիտի ըսեմ ան կնկանը խորհուրդը, ու ան գազանին՝ որ անիկա վրան առած է. ան որ եօթը գլուխը ու տասը եղջիւրը ունի: 8 Ես ատ գազանը որ տեսար՝ ան որ կար, ու չէր, և դժոխքէն ելլալու՝ ու կորուստը երթալու վրայ է. և երկրի վրայ բնակողներուն բոլորը՝ որոնց անուննները աշխարհի սկիզբէն հետէ կենաց գիրքը գրված չէր, զարմացան ան գազանին վրայ որ դուն կըտեսնայիր՝ թէ կար, ու չէր, ու մօտ է: 9 Հոս է իմաստութիւնը՝ ան որ միտք ունի, և ան եօթը գլուխը եօթը լեռներ են, ուր որ կինիկը անոնց վրայ նըստեր էր. և անոնք եօթը թագաւորներ են. և եօթը թագաւորներ ըլլալով, հինգը ինկաւ՝ ու մէկը 10 մնաց. և մէկը եկած չէ՛. և երբոր գայ՝ քիչ ատեն ունի: 11 Ու ան գազանը որ կար ու չէր, անիկա ալ ուրիշ ըրդ է. և ան եօթներէն է, ու կորսըվելու պիտի երթայ: 12 Ես տասը եղջիւրը որ տեսար՝ տասը թագաւորներ են, որոնք դեռ թագաւորութիւն առած չեն. հապա կառնեն՝ ու մէկ ժամի չափ իշխաններ կըլլան. և անոնք գազանին հետը իշխանութիւն կառնեն: 13 Անոնք մէկ կամք մը ունին, ու իրենց զօրութիւնը և իշխանութիւնը գազանին կուտան: 14 Անոնք գառին հետը կըպատերազմին, և գառը կըյաղթէ անոնց. ինչու որ անոնց Տէրն է՝ ու թագաւորներուն Թագաւորը. և անոր հետը եղողները կանչըված են՝ ընտրըված՝ ու հաւատացեալ: 15 Ես ըսաւ ինծի. Ան ջուրը որ տեսար՝ որուն վրայ պոռնիկը նստեր էր, ժողովուրդներն են՝ ու բազմութիւնները և ազգերը ու լեզուները: 16 Ես տասը եղջիւրները՝ որ տեսար գազանին վրայ, անոնք պիտի տեսնան ան պոռնիկը ու ատեն անիկա, և անոր մարմինը պիտի ուտեն՝ ու անիկա կրակով պիտի էրեն: 17 Ինչու որ Աստուած անոնց սըրտերնուն մէջ դրաւ որ ա-

Նոնք մէկ կամք ըլլան՝ ու թագաւորութիւնը
գազանին տան, մինչեւ որ Աստուծոյ խօսքը կա-
18 տարվի։ Եւ ան կինկը որ տեսար՝ մեծ քաղաքն
է, որ ինքը կըթագաւորէ երկրի թագաւորնե-
րուն վրայ։

ԳԼ. ԺՐ։

1 Եւ ասկէ ետքը ուրիշ հրեշտակ մը տեսայ եր-
կինքէն իջած՝ որ մեծ իշխանութիւն ունէր, ու
2 երկիրը անոր փառքէն լուսաւորեցաւ։ Եւ մեծ
ձայնով կանչեց՝ ըսելով, Ինկաւ մեծ Նաբելոնը՝
որ դեւերուն բնակարան էր եղեր, ու բոլոր
պիղծ դեւերուն կենալու տեղ, և բոլոր պիղծ ու
ատելի հոգիներուն պահպանութեան բանտ.
3 ինչու որ անոր պոռնկութեան բարկութիւնին
գինիէն հարբեցան բոլոր ազգերը ու երկրի
թագաւորները՝ որ անոր հետ պոռնկեցան. և
երկրի վաճառականները անոր եվելքը փափկու-
4 թենէն հարստացան։ Ու երկինքէն ձայն մը
լսեցի որ կըսէր. Ելէք ատոր միջէն իմ ժողո-
վուրդս, որ ատոր մեղքին հաղորդ չըլլաք՝ ու ա-
5 տոր պատուհասները չունենաք. ինչու որ ա-
տոնց մեղքերը մինչեւ երկինքը հասան կցվեցան.
ու Աստուած ատոր ամբարշտութիւնները միտք
6 բերաւ։ Եւ կըհատուցանէ ատոր ինչպէս որ
մեզի հատուց. ու ատիկա երկուապատիկ իր գործ-
քերուն փոխարէնը պիտի առնէ. և ան գաւաթը
7 որ լեցուց՝ երկուապատիկ լեցուցէք իրեն։ Եւ
որչափ որ փառաւորեց ինքզինքը ու ուրախացաւ,
այնչափ ալ սուգ հատուցէք անոր. ինչու որ իր
սրտին մէջը կըսէր թէ՝ Ես աթոռ ես թագու-
հի պիտի նստիմ, ու քնաւ որբեվարի չի պիտի
8 ըլլամ։ Անոր համար մէկ օրվան մէջ պիտի
գան ատոր վրայ պատուհասները՝ մահ, ու սուգ,
և սով, ու կրակով պիտի էրի. ինչու որ կարող
9 է Տէր Աստուածը՝ որ անիկա դատեց։ Եւ պի-

տի լան ու ծեծկրվին ատոր վրայ երկրի թա-
գաւորները՝ որոնք որ անոր հետ պոռնկեցան ու
խաղացին , և պիտի ողբան երբոր ատոր տան-
ջանքով երվելուն մուխը տեսնան ։ ատոր տան- 10
ջանքին վախէն հեռուէն պիտի կանգնին՝ ու ըսեն ,
Վա՛յ քեզի մեծ Բաբելոն քաղաք ։ զօրաւոր քա-
ղաք ։ ինչու որ մէկ ժամու մէջ եկաւ հասաւ քու
դատաստանդ ։ Եւ երկրի վաճառականները պի- 11
տի ողբան ու սուգ ընեն քու վրադ ։ ինչու որ
անոնց վաճառքը ալ մեկը ծախու չառներ ։ ու 12
ալ շահ մը չի պիտի ըլլայ քեզմէ , ոսկիի ու ար-
ծաթի , և պատուական քարերու ու մարգրիտ-
տի և բեհեզի ու ծիրանիի և ոսկեթելի՝ ու կար-
միր արդի՝ և ամեն խունկի փայտերու՝ ու բոլոր
փղոսկրեայ ամաններու և ամեն պատուական
փայտէ՝ ու պղինձէ՝ և երկաթէ՝ ու կիճէ աման-
ները ։ և կինամոն՝ ու բոլոր խունկերը՝ և եղը ու 13
կնդրուկը՝ և գինին ու ձէթը՝ և բարակ ալուրը
ու ցորեան՝ և բոլոր ստացուածները՝ արջառը ու
ոչխարը՝ և ձիերը ու կառքերը , որ մարդոց մար-
միններուն ու հոգիներուն վաճառքն են ։ Եւ 14
քու անձիդ բոլոր ցանկութիւնը քեզմէ գնաց , ու
բոլոր լուսափայլ վայելչութիւնը՝ պարպուած ու
գերը ու սպիտակը քեզմէ գնաց , և ալ չի պիտի
գտնաս ատոնք ։ Ու ատ բաներով հարբեցած 15
բոլոր առուտուր ընողները քեզմէ հեռու պիտի
կենան քու տանջանքիդ վախէն լալով ու սուգ
առնելով , պիտի ըսեն ։ Վա՛յ վա՛յ մեծ քաղաք 16
որ հագած էիր բեհեզներ ու ծիրանիներ և որդի
կարմիր՝ ոսկեզէն բաներ ու ազնիւ քարեր և
մարգրիտներ ։ ինչու որ քու այնքան հարստու- 17
թիւնդ մէկ ժամու մէջ փճացաւ ։ ու ամեն
նաւավարները՝ և ան ամենը որ տեղ տեղ
նաւարդութիւն կընեն , ու նաւաստիները , և
որոնք որ ուռկանով կբռնին , հեռուն պիտի
կենան լալով ։ և տեսնալով անոր երվելուն 18

մուխը՝ պիտի կանչեն ըսելով , Ո՞վ նման է աս
19 մեծ քաղաքիս · ու իրենց գլխուն վրայ հող պիտի
ձգեն , ու մեծ ձայնով կոծելով՝ լալով և սգալով
պիտի ըսեն · Ա՛յ վայ մեծ քաղաք , որով ամէնք-
նիս կը հարուստնայինք , որ նաւեր բռնած էինք
ծովերու մէջ քու պատուականութեանդ համար ·
ինչու որ մէկ ժամին մէջը ապականած կործան-
20 ցար : Ուրախացէ՛ք անոր վրայ երկինք՝ ու
սո՛ւրբ առաքեալներ և մարգարէներ , որ Աստ-
ուած ձեր վրէժը անկէց հանեց :
21 Եւ մէկ զօրաւոր հրեշտակ մը քար մը առաւ
չաղացքի մեծ քարի նման , ու ծովը ձգեց՝ ըսելով ,
Ասանկ սաստիկ պիտի խնայ Բաբելոն մեծ քա-
22 ղաքը՝ ու ալ չի պիտի գտնըվի : Եւ քնար եր-
գողներուն ու վարպետ երաժիշտներուն և փող
չալողներուն ու թմբուկին ձայնը ալ չի պիտի
23 լըսվի քու մէջդ · և ճրագին լոյսը ու չաղացքի
քարին ձայնը ալ չի պիտի երևայ քու մէջդ ·
ու փեսային ձայնը և հարսին ձայնը ալ չի պիտի
լըսվի քու մէջդ · ոչ ալ քու վաճառականներդ՝
երկրի փառաւորները ու մեծամեծները , որ քեզ-
մով կըզուարճանային · ինչու որ քու դեղ տըվող
կախարդութիւնովդ բոլոր ազգերը մոլորեցան :
24 Եւ բոլոր մարգարէներուն ու սուրբերուն ա-
րիւնը քու մէջդ գտնըվեցաւ , և ան ամէնուն՝
որ կենդանիներուն երկիրը գըրված են :

ԿԻ. ԺԱ.

1 Ե՛տ անկէ ետքը երկինքը մէկ բազմութեան մը
մեծ ձայն լսեցի՝ ըսվելով , Ալէլուիա · փրկու-
թիւն ու փառք և պատիւ ու զօրութիւն մեր
2 Աստուծոյն · ինչու որ ճշմարիտ ու արդար են
անոր դատաստանները , որ ան մեծ պոռնիկը իր
պոռնըկութեան մէջ դատեց , ու իր ծառաներուն
3 արիւնին վրէժը անոր ձեռքէն հանեց : Եւ
կրկին անգամ օրհնեցին ու ըսին , Ալէլուիա ·

ու անոր մուխը յաւիտեանս յաւիտենից կելլար ։
Եւ քսան եւ չորս երէցները ու չորս կենդանիները
իյնան , ու երկրպագութիւն ըրին Աստուծոյ
որ փառաց ամոռը նստած էր , բսելով՝ Ամէն ,
Ալէլուիա ։ Եւ ամոռէն ձայն մը կելլար՝ բսե-
լով , Մեր Աստուծոյ օրհնութիւն տըվէք բոլոր իր
ծառաները , ու զուք որ անկէց կրսախնաք՝
պզտիկներ ու մեծեր ։ Եւ մեծ բազմութեան
ձայն մը լսեցի՝ շատ չուրերու ձայնի պէս ,
ու խոտ որոտումի ձայնի պէս՝ նորէն բսելով ,
Ալէլուիա . ինչու որ Ամենակալ մեր Տէր Աստ-
ուածը թագաւորեց։ Կրնեղնանք՝ և կու-
բանանք ու փառք կուտանք անոր , որ գառին
հարսնիքը եկաւ , ու կնիկը իր հարսը ինքզինքը
պատրաստեց . և իրեն տրվեցաւ՝ որ բեհեղները
հագնի՝ ճերմակ մաքուր ու փայլուն . (որ ան
բեհեղը սուրբերուն արդարութիւնն է) ։ Եւ
ան երէցներէն մէկը կըսէր ինծի . Կրէ՛ գտիկա .
երանելի են անոնք որ գառին հարսնիքի
ընթրիքին կանչըված են ։ Եւ ալ անոր ոտքին
առջեւ իյնայ . երկրպագութիւն ըրի անոր , ու
ըսաւ ինծի . Ո՛տիկ ըրէ՛ իմ առջիս մի՛ եղար .
ինչու որ ես ալ քու ծառայակիցդ եմ՝ ու քու
եղբայրներուդ , որոնք որ Յիսուս Քրիստոսի
վկայութիւնը ունին . միայն Տէր Աստուծոյ եր-
կրպագութիւն ըրէ՛ . ինչու որ Յիսուսին հաս-
տատութիւնովն է ատ տեսիլքդ՝ ու մարգարէու-
թեան հոգին . պատճառն որ Յիսուսի վկայու-
թիւնն է Հոգւով սրբով՝ որ մարգարէներուն
վրայ էր ։

Եւ տեսայ երկինքը բացված , ու միյմալ մէկ
ճերմակ ձի մը , ու ան որ անոր վրայ հեծեր էր՝
հաւատարիմ ու ճշմարիտ կոչվէ . և արդարու-
թեամբ դատաստան կըտեսնայ՝ ու կըպատերազ-
մի . և անոր աչքը կրակի բոցի պէս , ու անոր
գլխուն վրայ շատ թագեր , ու գրված անուն մը

13 ունէր՝ որ մէկը չի գիտէր, միայն թէ ինքը. և արիւնով ներկուած լաթ մը հագեր էր. ու ա-
14 նոր անունը Հան Աստուծոյ կըսուէր։ Եւ երկինքին զօրաւարները՝ ու երկինքին զօրքերը ա-
նոր ետևէն կերթային ճերմակ ձիերով մաքուր
15 ու ճերմակ բեհեզներ հագած։ Եւ անոր բերնէն սրած թուր մը կելլար, որ անով ազգերը զարնէ, ու ինքը երկաթէ գաւազանով պիտի հովուէ անոնք. ու Ամենակալ Աստուծոյ սաստիկ բարկութեան գինիին հնձանը ինքը պիտի կոխէ։
16 Եւ իր վերարկուին վրայ ու իր անգամներուն վրայ գրուած գիր մը ունէր, Թագաւորներուն Թագաւորը՝ ու Տէրերուն Տէրը։
17 Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ որ արևին վրայ կեցեր էր, ու մեծ ձայնով կանչեց երկինքին մէջը թռչող բոլոր հաւերուն՝ ըսելով, Եկէք
18 մեծ Աստուծոյ ընթրիքին ժողվըվեցէք. ու կերէք թագաւորներուն մարմինները՝ ու զօրաւորներուն մարմինները՝ ու ձիերուն մարմինները, և բոլոր անոնց վրայ նստողներուն, ու ազատներուն և ծառաներուն՝ մեծին ու պզտիկին մարմինները։
19 Եւ տեսայ գազանը ու երկրի թագաւորները ու անոնց զօրքերը մէկ տեղ ժողվըված պատերազմ ընելու անոր հետ, որ ճերմակ ձիին վրայ
20 նստեր էր, ու անոր զօրքերուն հետ։ Եւ գազանը բռնըվեցաւ, ու անոր հետ սուտ մարգարէն՝ որ անոր առջևը նշաններ կընէր, և անոնք որ մոլորցուց՝ ու գազանին նշանը առնել տըւաւ, և անոր պատկերին երկրպագութիւն ընողները. ու անոնք ողջ ողջ ծծումբով վառված կրակին
21 լիճը ձգեցին։ Եւ ուրիշները ալ սպաննըվեցան ձիին վրայ նստողին թուրէն, որուն բերնէն կելլար ան թուրը, ու բոլոր թռչունները անոնց մարմիններէն կիշտացան։

ԳԼ. Ի։

Եւ ուրիշ հրեշտակ մը տեսայ՝ որ երկինքէն կիջ- 1
նար, ու դժոխքին բանալիքները. և մեծ շղթայ-
ները ունէր իր ձեռքը։ Ու բռնեց ան վիշապը 2
առջի օձը՝ որ Սատանան ու Սատանան է, և
կապեց անիկա հազար տարի։ ու անիկա դժոխ- 3
քին անդունդը ձգեց՝ և գոցեց ու կնքեց անիկա
որ ալ չի մոլորցունէ ազգերը մինչև որ հազար
տարին լմննայ. և անկէ ետքը պէտք է որ քակվի
անիկա քիչ մը ժամանակ։

Եւ աթոռներ տեսայ, ու նստան անոնց վրայ. 4
և անոնց դատաւորութիւն տրվեցաւ՝ ընտրելու
Յիսուսի վկայութեանը համար ու Աստուծոյ
խօսքին համար չարչարվողներուն հոգիները. և
անոնք որ գազանին երկրպագութիւն չըրին, ու
անոր նշանը իրենց ճակատներուն վրայ ու ի-
րենց աջ ձեռքին վրայ չառին. և ապրեցան՝ ու
Քրիստոսի հետ հազար տարի թագաւորութիւն
ըրին։ Եւ ասկէ ետև մեռելներէն մէկը չապ- 5
րեցաւ, մինչև հազար տարին որ կատարվեցաւ.
ասիկա է առջի յարութիւնը։ Երանէկ ան 6
սուրբերուն, որոնք առջի յարութեան մէջ բա-
ժին ունին. ասոնց վրայ երկրորդ մահը իշխա-
նութիւն չունի. հապա անոնք Աստուծոյ՝ ու Տէր
Յիսուս Քրիստոսին քահանաները պիտի ըլլան.
ու անոր հետ հազար տարի պիտի թագաւորեն։

Եւ հազար տարիէն ետքը պիտի արձրկէ Սա- 7
տանան՝ ու բանտէն հանէ. ան ալ պիտի ելլայ ու
մոլորցունէ բոլոր ազգերը երկրի չորս կողմերը.
և ձեռք պիտի առնէ Գոգը ու Մագոգը՝ անոնց-
մով բոլոր զօրքերը պատերազմի ժողվելու.
որոնց համրանքը ծովին աւազին չափ է։ Եւ 8
երկրի ընդարձակութեան մէջը պիտի ելլան, ու
սուրբերուն բանակները չորս կողմէն պիտի պա-
տեն, ու սիրելի քաղաքն ալ։ Եւ երկինքէն 9

Ա՛ստուածմէ կրակ պիտի ինջնայ՝ ու պիտի ուտէ անոնք՝ և անոնց ջօրագլուխը Սատանան՝ որ անոնք մոլորցուց · ու պիտի ձգէ անոնք կրակին ու ծծումբին ծովին մէջ , ուր տեղ որ ան
10 գազանն է , և ան սուտ մարգարէն · ու պիտի չարչարվին ցորեկ ու գիշեր :
11 Եւ մեծ ճերմակ աթոռ մը տեսայ · ու անոր վրայ Ո՛ւղղ նստած էր , որուն երեսէն երկինք ու երկիր կըվախնային ու կրփախչէին , և տեղ չի
12 գըտնըվեցաւ անոնց : Եւ տեսայ մեծ ու պզտիկ մեռելներ՝ որ աթոռին առջևը կեցեր էին · ու գիրքերը կըբացվէին , և մէկ ուրիշ կենաց գիրք մը բացվեցաւ · ու անոր Ո՛ղջ գրվածներէն մեռելները դատվեցան անդ Ո՛ղջ իրենց գործքե-
13 րուն պէս : Եւ ծովը իր Ո՛ղջ մեռելները տըւաւ , ու մահը և գերեզմանը իրենց մեռելները · ու ա-մէն մէկը իրենց գործքերուն պէս դատվեցան :
14 Մա՛հն ու գերեզմանը կրակին լիճին մէջ ձգվե-
15 ցաւ · ասիկա է երկրորդ մահը : Ու ով որ կե-նաց գիրքին մէջը գրված չի գտնըվեցաւ՝ կրակին լիճին մէջը ձգվեցաւ :

ԻԴ. ԻԸ:

1 Եւ մէկ նոր երկինք մը ու նոր երկիր մը տե-սայ · ինչու որ առջի երկինքը ու երկիրը ան-
2 ցաւ · ու ծով չի կար : Եւ սուրբ քաղաքը նոր Երուսաղէմը տեսայ՝ որ Ա՛ստուածմէ կիջնար ու երկինքէն , իր էրկանը համար զարդարված ու
3 պատրաստըված հարսի մը պէս : Եւ երկինքէն ձայն մը լսեցի՝ որ կըսէր · Ա՛հա Ա՛ստուծոյ խո-րանը մարդիկներուն մէջը , ու անիկա անոնց հետ պիտի բնակի · և անոնք անոր ժողովուրդը ,
4 ու ասիկա անոնց Ա՛ստուածը պիտի ըլլայ · և ին-քը անոնց աչքէն բոլոր արցունքները պիտի սըր-բէ · ու ալ մահ չի կայ , ոչ սուգ՝ և ոչ աղաղակ , ոչ ցաւեր և ոչ աշխատանք՝ ալ մէյ մըն ալ չի

կայ · ինչու որ ան առջինը անցաւ ։ Եւ ան որ 5
աթոռին վրայ նստեր էր՝ ըսաւ ինծի · Ահա ա-
մէն բանը նոր կընեմկոր · ու ըսաւ ինծի , Գրէ՛ ·
քանի- որ ան խօսքերը ճշմարիտ ու հաւատարիմ
են ։ Եւ ըսաւ ինծի , Եղաւ՝ ես եմ ալֆա ու ով՝ 6
սկիզբ ու վերջը · ես ծարաւներուն ձրի կուտամ
կենաց ջուրին աղբիւրէն ։ Ան որ յաղթուելիւն 7
կընէ՝ ան ամէնը պիտի ժառանգէ · ու ես անոնց
Աստուած կըլլամ՝ , անոնք ալ ինծի որդիք կըլ-
լան ։ Եւ ծոյլերուն ու անհաւատներուն՝ սպա- 8
նողներուն ու պոռնիկներուն և կախարդներուն
ու կռապաշտներուն՝ ու դեղ տրվողներուն՝ և
բոլոր սուտզրուց ամբարիշտներուն բաժինը՝
կրակով ու ծծումբով էրված ան լիճին մէջն է ·
որ է երկրորդ մահը ։

Եւ եօթը հրեշտակներէն մէկը ինծի եկաւ · 9
որոնք ունէին եօթը սկաւառակներ որ լեցուն
էին վերջին եօթը պատուհասներով · խօսեցաւ
իմ հետս՝ ու ըսաւ · Եկո՛ ցուցընեմ քեզի հար-
սը ու Գառին կնիկը ։ Եւ հոգիով առաւ մէկ 10
բարձր ու մեծ լեռան մը վրայ իս տարաւ · և ցու-
ցուց ինծի ան մեծ ու սուրբ Երուսաղէմ քաղա-
քը , որ երկինքէն իջած էր Աստուծմէ · ու Աս- 11
տուծոյ փառքը ունէր · և անոր մէջը լուսաւո-
րութիւն կար՝ որ պատուական քարերու կընմա-
նէր , ինպէս յասպիս քարը սառի նման ու կենդա-
նի ։ Եւ անոր պարիսպները մեծ ու բարձր էին , 12
և տասներկու դուռներ ունէր · ու տասներկու
դուռները տասներկու հրեշտակներ · և ամէն մէ-
կուն անուններըը դուռներուն վրայ գրվածէր՝
Իսրայէլի տասներկու ցեղերուն նայելով ։
Արևելքի կողմէն իրեք դուռ · ու Հիւսիսային 13
կողմէն իրեք դուռ · և Արաւային կողմէն իրեք
դուռ · ու Արևմուտքին կողմէն իրեք դուռ ։
Եւ ան քաղաքին պարիսպը տասներկու 14
հիմ ունէր , ու անոնց վրայ գառին տաս-

ներկու առաքեալներուն տասներկու անուն-
15 ները գրված էր։ Եւ ան որ իմ հետս
կը խօսէր՝ իր ձեռքը ոսկիէ եղէգ մը ունէր,
որ անով քաղաքը չափէ՝ ու անոր դուռնե-
16 րը ու անոր պարիսպները։ Եւ ան քաղաքը
քառակուսի էր. ու իր երկայնութիւնը որչափ
որ էր՝ այնչափ լայնութիւնն ալ ու բարձրու-
թիւնն ալ հաւասար. ու անոր երկայնութեան
չափը տասներկու հազար ասպարէզ. և անոր
լայնութիւնը ու բարձրութիւնը մէկ չափ՝
17 հաւասար։ Ու անոր պարիսպը հարիւր քառա-
սունչորս ասպարէզ չափեց՝ մարդու չափով,
18 այսինքն՝ հրեշտակին չափովը։ Եւ քաղաքին
պարիսպներուն շինուածքը յասպիս քար էր. ու
քաղաքը զուտ ոսկի էր՝ մաքուր ու ճերմակ ապա-
19 կիի նման։ Եւ քաղաքին հիմերը բոլոր թանկա-
գին քարերէ էին. պարիսպին առջի հիմը յասպիս
էր. երկրորդը շափիղայ. երրորդը պղինձի
20 գոյն. չորրորդը՝ զմրուխտ. հինգերորդը՝ ե-
ղեգնաքար. վեցերորդը՝ սարդիոն. եօթներորդը՝
ոսկեքար. ութերորդը՝ բիւրեղ. իններորդը՝
տպազիոն. տասներորդը՝ քրիսոպրասոս. տասը-
մէկերորդը՝ յակինթ. տասներկուերորդը՝ ամե-
21 թիստ։ Եւ տասներկու դուռներն ալ տասներ-
կու մարգարիտէ էին մէկ ձևով. ու ամէն մէկ
դռները մէյմէկ ամբողջ մարգարիտէ մէյմէկ դուռ
էին. ու քաղաքին փողոցները մաքուր ոսկի էր՝
22 ապակիի նման պայծառ։ Եւ անոր մէջը տա-
ճար չի տեսայ. ինչու որ Տէր Աստուած Ամե-
23 նակալը ու Գառը անոր մէջը տաճար էր։ Եւ
քաղաքին արև ու լուսին պէտք չէր, որ անիկա
լուսաւորեն. ինչու որ Աստուծոյ փառքը անիկա
ամէն տեսն կը լուսաւորէր, ու Գառնուկը ճրագ
24 էր անոր մէջ։ Եւ փրկված ազգերը անոր լու-
սովը կերթային, ու երկրի թագաւորները անոր
25 փառքովը կը լուսաւորվէին։ Եւ անոր դուռնե-

րը ցորեկ ու գիշեր չէին գոցվեր , Տապա ամէն
ասեն բաց կըկենային · և անոր մէջը բնաւ գի-
շեր չէր ըլլար · Տապա ազգերուն փառքը ու պա- 26
տիւը : Եւ Հոն չի մտնար ան ամէնը՝ որ 27
կամքերնին չար է , ու պիղծ ու սուտ
ղբուց (էն) . Տապա միայն անոնք՝ որ գա-
ռին կենաց գիրքին մէջը գրված են : Եւ Ի՛Ս
ինծի ցոյց տուր մը ջուր կենդա-
նի ջուրի՝ սառի պէս , որ կելլար Աստու-
ծոյ ու Գառին աթոռէն : Եւ քաղաքին փո- 2
ղոցներուն մէջէն կերթար · ու ան գե-
տին եզերքը ցոյց տուր մը կենաց
ծառը կաթ որ տասներկու ՝երբ պտուղ կը
բերէր · որ ամէն ամիս իրենց պտուղ-
նին կուտային · ու ան ծառին տերևը հե-
թանոսներուն բժշկութիւն կըլլար : Եւ Հոն 3
նզովք չի կար · ու անոր մէջն էր Աստուծոյ
ու անոր Գառին աթոռը · և անոր ծառանե-
րը կըպաշտէին անիկա · և անոր երեսը 4
կըտեսնային · ու անոր անունը իրենց ճա-
կատին վրայ գրված էր : Եւ Հոն գիշեր չի 5
կար , ու Հոն ճրագի ու արևի լոյս պէտք չէր ·
ինչու որ Տէր Աստուած անոնք կըլուսաւո-
րէր · և յաւիտեանս յաւիտենից պիտի թա-
գաւորեն :


Ու ըսաւ ինծի · Այս խօսքերը հաւատարիմ է 6
ու ճշմարիտ · և սուրբ մարգարէներուն Տէր
Աստուածը իր հրեշտակը խրկեց՝ իր ծառային
ցուցընելու ինչ որ շուտով պիտի ըլլայ : Ահա 7
շուտով կու կուգամ · երանէկ անոր՝ որ կըպահէ
այս մարգարէութեան խօսքը :

Ու ես Յովհաննէս լսեցի՛ և այս ամէնը տեսայ · 8
և երբ լսեցի ու տեսայ՝ ինկայ ու երկրպագութիւն
ըրի այն հրեշտակին՝ որ այս ամէնը ինծի կըցուցը-
նէր : Եւ ըսաւ ինծի , Տես՝ առէլս մի՛ ըներ ու 9
երկրպագութիւն ըներ · ինչու որ ես ալ քու ծա-

ռայակիցդ եմ ու քոյ եղբայրներուդ, որ աս
գիրքին մարգարէութեան խօսքը կրպահեն .
10 Աստուծոյ երկիւղած լիներ ։ Եւ ետքէն
ըսաւ ինծի . Աս գիրքին մարգարէական խօսքե-
11 րը մի՛ կնքեր . ինչու որ ժամանակս մօտ է ։ Ան
որ ամբարշտութիւն կընէ՝ թող ամբարիշտ ըլ-
լայ . ու ան որ աղտոտ է՝ թող աղտոտ մնայ . և
ան որ արդար է՝ թող արդար մնայ . ու ան որ
12 մաքուր է՝ թող մաքուր մնայ ։ Ահա ես շուտով
կուգամ . և իմ վարձքս իմ հետս է՝ ամէն մէ-
կուն իրենց գործքերուն փոխարէնը հատուցա-
13 նելու ։ Ես եմ ալֆա ու օմէգա՝ սկիզբ ու վախճան ,
14 առաջին ու վերջին ։ Երանելի են անոնք՝ որ
անոր պատուիրանքները կրպահեն . անոնք իշ-
խանութիւն ունին կեանքին ծառէն ուտելու ,
15 և քաղաքին դուռներէն ներս մտնելու ։ Այլ
դուրս պիտի ելլան շնացողները ու խոպոպչաճ
դեղ ածողները և պոռնկութիւն ընողները ու
կռապաշտները , և ամէնքը որ ստութիւնը կըսի-
րեն ։
16 Ես Յիսուս իմ հրեշտակս խրկեցի՝ ձեզի սկս-
ղեցիներուդ աս բաները վկայելու . ես Դաւիթի
արմատը ու ցեղը եմ , ու առաւօտեան պայծառ
17 աստղը ։ Եւ Հոգին ու հիւսան՝ որ պիտի գամ .
և ան որ կըլսէ՝ թող ըսէ թէ Եկո՛ր . ու ան որ
ծարաւ է՝ ու ան որ կուզէ կենաց ջուրը ձրի առ-
նել՝ թող գայ ։
18 Եւ ես կրվկայեմ ամէնուն , որ աս գիրքին
մարգարէական խօսքերը կրլսէ . Թէ որ մէկը
ասոր վրայ բան մը կէւելցունէ , Աստուած ալ
անոր վրայ կէւելցունէ ան եօթը պատուհասնե-
19 րը՝ որ աս գիրքին մէջը գրված է . և թէ որ մէ-
կը աս գիրքին մարգարէական խօսքերէն բան մը
կրպակսեցունէ , Աստուած ալ անոր բաժինը
կրպակսեցունէ ու կրկտրէ կեանքին ծառէն ու
սուրբերուն քաղաքէն՝ որ աս գիրքին մէջը

20 գրված է։ Ան որ աս բաները վկայեց՝ ըսաւ, Շուտով կուգամ ես. ամէն. Եկո՛ր Տէր
21 Յիսուս Քրիստոս։ Ա՛ր Տէր Յիսուս Քրիստոսին շնորհքը բոլոր սուրբերուն վրայ.
Ամէն։





Տպագրութեան սխալները։

Եր.	Տող	Սխալ	Ուղիղ
1	1	ԸՒԵՏԸՐԸՆ	ԸՒԵՏԸՐԸՆ
4	17	Ձռամայի ձայն	Ձռմի մէջ ձայն
10	16	մէջն	մէջը
11	27	տաք . ինչ	տաք՝ ինչ
20	26	մինչև ալ	ալ մինչև
21	14	անոր այծ	անոր՝ Այծ
	26	կըսէին ատիկա	կըսէին . Ատիկա
25	15	քարոզութիւն	քարոզութիւն
43	25	չարվարվի	չարչարվի
45	23	գեհենը	գեհեանը
60	32	մարդարէներուն	մարգարէներուն
67	35	ըսին	ըսեն
69	15	ըրան	ըրաւ
70	15	, քեզի	քեզի ,
74	8	Ձրէանու	Ձրէանե
81	3	Հոգին	Ձոգին
106	30	, Ուստի	. ուստի
120	31	պաարաստեցէք	պատրաստեցէք
131	9	Տէրովը	Տէրոջը
134	34	ըոլոը	բոլոը
137	14	ժոզովուր	ժողովուր
137	24	փանուէլի	փանուէլի
139	10	Յորդանան ու	Յորդանանու
150	36	ու	Լու
162	29	սուրդ	սուրբ
168	13	Մարդա	Մարթա
176	15	օրը	օր
179	29	ըլան	ըլլան
189	16	անարդըվի	անարդըվի
192	3	թիւնը	րութիւնը
197	16	սպաննեցին ուստի	սպաննեցին .
216	35	Ֆրեն	Իրեն
223	11	ճաբայ	ճաւբայ
235	12	գատուկ	գաղտուկ
247	24	Հոն	ու Հոն

Էջ.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
259	33	որդը	որթը
261	4	խարհէ	խարհէ
271	26	ուրբաթի	շաբաթի
272	11	Յիսուսին	Յիսուսին
277	1	ԼՈՒՔԵԼՅԱՅ	ԼՈՒՔԵԼՅԱՅ
279	24	որ	ու
307	26	եկած	եկան
334	20	ձեղ	ձեզ
340	25	աւ	սաւ
351	11	(Ա)նատոլիացի	(Ա)նատոլիկեցի
368	21	նմանութիւմը, էջեն	նմանութիւմը էջեն
	22	եղանք նաև	եղանք, նաև
369	25	(ըլլալու)	ըլլալու–
380	10	,և ինչ	. և թէ որ
382	3	կատարեալ	կատարեալ է
	31	ցոյնեբուն	ցոյնեբուն
400	34	մէջ	մէջ
412	8	մի	մը
425	3	առջև	առջի
446	21	կըկատարվի	կըկատարվի .
462	8	Հաւատացողնե,	Հաւատացողնե–
480	31	է	են
488	18	կուգայ	կուգայ
497	20	Հրամանով	Հրամանով՝
502	20	ամէքն	ամէնքն
	37	խօսքերու	խօսքերու
545	3	է Հապա	է . Հապա
551	31	ուժովյան	ուժովյան .
556	5	էէր	էէ
573	19	ուլթի	ուլթը
592	26	չէղած	չեղած
623	14	կրի	րի
632	28	պիտի	ու պիտի

